Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Лиссак
Чайтер
Дидерихс 1905

891.99
П-35

Avedis Ahigian
52 Lowell St.
Somerville, Mass. 02143

Octavia Robbins
Green Springs, Ohio

13 APR 2011

ԽԵՆԹԸ

891·99
Ռ-35

498
135 886

ՐԱՖՖԻ

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

ՋԱԼԱԼԷԴԴԻՆ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ՆՐԱ ԱՐՇԱԽԱՆՔԻՑ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1905.

ԳԷՐԳԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
HARRY G. BERBERIAN
837 WASHINGTON ST.
BOSTON MASS.

24 .08. 2013

59.267

1123-98



ԽԵՆԹԸ

ԸՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խենթը մի քար գլորեց փոսը,
հարիւր խելօքներ հաւաքուեցան,
չկարողացան դուրս հանել:
Մինչեւ խելացին կը մտածէ,
խենթը գետից անց կը կենայ:
Խենթից – ուղիղ պատասխան:

ԱԶԳ. ԱՌԱԾՆԵՐ

Ա.

Հայաստանը պաշարուած էր:

Թուրք, քիւրդ, բոշայ, ջուլօ եւ աւելի քան քսան հազար խառնիճաղանճ բաշիբոզուկներ, խառն տաճկաց կանոնաւոր զօրքերի հետ շրջապատել էին կիսաւեր քաղաքը: Նա ծխում էր կրակի մէջ, որպէս մի ընդարձակ խարոյկի տարածութիւն: Քրիստոնեայ հայերի տները դատարկուել էին բնակիչներից: Բարբարոսի սուրը եւ գերութիւնը սպառել էր նրանց: Հայերից մի փոքրիկ մաս միայն ազատուել էր, կանխապէս փախչելով սահմանակից Մագու քաղաքի կողմերը, որ պարսից հողի վրայ է գտնվում:

Բայազէդի միջնաբերդը դեռ մնացել էր անառիկ։ Փոքրաթիւ ռուս զինուորներ, հայ եւ թուրք կամաւոր միլիցիայի հետ, ամրացել էին այնտեղ, եւ օրհասական յուսահատութեամբ, սպասում էին մի սարսափելի վախճանի։ Բերդը չորեք կողմից սեղմուած էր, կարծես, մի երկաթի օղակի մէջ, որը հետզհետէ նեղանալով, կամենում էր միանգամից խեղդել եւ մահացնել յուսաբեկ պաշարուածներին։ Ցարաբերութիւնը դրսի հետ բոլորովին կտրուած էր։

Պաշարումը պատահեց 1877 թուի յունիսի 6-ին եւ տեւեց ամբողջ 23 օր։ Դա այն ժամանակն էր, երբ ռուսաց յաջողակ սրի բախտը Հայաստանում յանկարծ փոխուեցաւ։ Տեղային մահմեդականութիւնը, որ սկզբում այնքան յօժարութեամբ ընդունեց ռուսաց տիրապետութիւնը, կրկին ապստամբուեցաւ եւ միացաւ Սմայիլ փաշայի զօրքերի հետ։ Գեներալ Տէր-Ղուկասովը, երեւանեան զօրաբաժնի հրամանատարը, այդ միջոցում գտնվում էր Զէյդեգանի եւ Դալի-Բաբայի մէջ, եւ իր փոքրաթիւ գունդերով քաջութեամբ պատերազմում էր Մուխթար փաշայի հինգ անգամ աւելի ուժի դէմ։ Նա, երեւի, տեղեկութիւն չունէր, թէ ինչ էր պատահել դժբախտ Բայազէդի հետ, որին թողել էր բերդապահ (կոմենդանտ) Ըշտոկվիչի պահպանութեան ներքոյ։

Գիշեր էր։

Կիսալուսնի եղջիւրը դեռ նոր չքացել էր հորիզոնից, թողնելով իր ետեւից մթին խաւար։ Կարծես, այդ խաւարը, այդ մութը աւելի ախորժ լինէր պաշարուածների համար։ Կարծես, լուսինը, տիեզերքի սիրելին, իր արծաթափայլ ճառագայթներով մատնում լինէր նրանց։ Բայց գիշերի մթութիւնը դարձեալ չը կարողացաւ արգելք լինել բարբարոսների կատաղի յարձակմանը։ Բայազէդի միջնաբերդը, որպէս

մի մեայլ կէտ, անորոշ կերպով նկարուած էր բլուրների բարձրաւանդակի վրայ։ Եւ ամեն կողմից կրակը մաղվում էր այդ կէտի վրայ, եւ ամեն կողմից թնդանօթների ռումբները ու հրազէնների գնդակները կարկտի նման թափվում էին այնտեղ։ Բերդը մռնչում էր, որպէս մի վիթխարի գազան, որին ամեն կողմից հարուածում էին։ Նա դեռ եւս յամառութեամբ մաքառում էր օրհասի եւ մահուան դէմ։ Նա վճռել էր մեռնել, բայց փառքով մեռնել։ Մօտ 1000 ռուս զինուորներ, նոյն չափով հայ եւ թուրք կամաւորների հետ, կռվում էին Սմայիլ փաշայի քսան հազարի դէմ։ Բերդից խիստ սակաւ էին պատասխանում, որովհետեւ հրազէնների պաշարը խնայում էին, որը սպառուելու մօտ էր։ Միայն երբեմն արձակում էին մի կամ երկու թնդանօթ, որի բերանը դարձնում էին դէպի այն կողմը, ուսկից յայտնվում էր թշնամու կրակը։

Նոյն գիշերը, բերդի խարխուլ շինուածքներից մէկի մէջ, որ մի ժամանակ ծառայում էր որպէս զինուորանոց, եւ ռուսների տիրելուց յետոյ, օսմանցիները թողել էին կիսաւեր եւ հեռացել, — նոյն գիշերը այստեղ գետնի վրայ տարածուած էր մի բազմութիւն, որ սարսափելի տագնապի մէջ ներկայացնում էր կատաղութեան բոլոր զարհուրանքը։

— Մի կաթիլ ջրի... նուաղեցայ ծարաւից... լսվում էին զանազան դառն հառաչանքներ։

— Մի պատառ հաց... մեռնում եմ սովից... աղաղակում էին զանազան խուլ ձայներ։

Այդ ողորմելիները մի ամբողջ շաբաթ համարեա ոչինչ չէին կերել, ոչինչ չէին խմել։ Պաշարումը այն աստիճան շուտափոյթ եւ անակնկալ կերպով կատարուեցաւ, որ բերդի մէջ բաւական պաշար վեր առնելու ժա-

մանակ չը գոան։ Այժմ պաշարուածները սիպուած էին պատերազմել երեք հզօր ոսոխների դէմ, ներսից՝ — սովի եւ ծարաւի դէմ, իսկ դրսից՝ — թշնամու կրակի դէմ։

Ամսի 8-ից զինուորները զրկուեցան տաք կերակրից։ Բերդապահի ձին եւ արտիլերիայի ձիաները բոլորը մորթել եւ կերել էին։ Ձիաների դարին մնաց զինուորների համար, որը նոյնպէս սպառուեցաւ։ Վերջապէս ուտեստը այն աստիճան նուազեցաւ, որ իւրաքանչիւր զինուորին տալիս էին օրական $^1/_8$ ֆունտ կամ 4 լօտ պաքսիմաթ եւ մի-մի գդալ ջուր։ Իսկ յունիսի տօթը այդ ժամանակ անտանելի էր։ Հիւանդանոցում հիւանդների վիճակը, ուտելու եւ խմելու կողմից, շատ չէր զանազանվում առողջներից։

Բերդի մէջ ջուր չը կար։ Բերդից դուրս, 300 քայլ հեռաւորութեան վրայ գտնվում էր մի աղբիւր, որը փակել էին թուրքերը։ Ամեն գիշեր փորձում էին ցած իջնել բերդից ջուր բերելու համար, բայց 20—30 գնացողներից շատ անգամ մէկն էլ չէր վերադառնում։

— Հայ... ջուր... կրկին լսելի եղան օրհասական հառաչանքները։

Ահա կրկին եւ կրկին որոտաց թնդանօթի բոմբիւնը եւ խլացրեց թշուառականների ձայները...

Այդ այն բոպէներից մէկն էր, որ մարդը կորցնում է իր կարեկցութիւնը դէպի ընկերը, — կորցնում է, որովհետեւ ոչինչով օգնելու հնար չունի։ Այդ պատճառով, ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում սովեալների վրայ, ոչ ոք հոգ չէր տանում ծարաւիներին։ Ամեն մարդ, ընդհանուր խառվութեան մէջ, սպասում էր մի վճռական բոպէի, երբ թշնամին հեղեղ նման ներս կը թափուէր, եւ սուրը ձեռքում կը հանդիպէին իրանց պատուաւոր վախճանին։

Միջնաբերդի ներսից, պատսպարուած վերնապարսպի եռեւում, շուրջանակի շարուած էին պահապան զինուորներ, եւ հրացանների համար բացուած ծակերից դիտում էին թշնամու շարժումը։ Նրանք չէին համարձակվում գլուխները վեր բարձրացնել պարսպից։ Բերդի չորս կողմի բարձրաւանդակներից անխնայ նետում էին, եւ գնդակները շվշուալով սլանում էին աջ ու ձախ, զարկելով պահապանների երեսին մի անախորժ տաք օդ։

Այստեղից տեսնվում էր քաղաքը, որ ներկայացնում էր մի սոսկալի տեսարան։ Նա լուսաւորուած էր, կարծես, մի մեծ տօնախմբութեան համար։ Լուսաւորուած էին եւ քաղաքի շրջակայ բարձրութիւնները։ Կատարվում էր մարդկային անգթութեան եղեռնական տօնը։ Դա գազանների մի տօն էր, որ հանդիսացնում էին մուսուլմանները։ Ցարտարոսը, միայն տարտարոսը, իր կրակի բոցերով, իր չար ոգիներով եւ իր բոլոր զարհուրանքով կարող էր պարծենալ մի այսպիսի անգթութեան առջեւ։ Այրվում էին հայերի տները։ Իւրաքանչիւր տան լուսամուտներից եւ դռներից հոսում էին, կարծես, հրեղէն գետեր, եւ խառն ծխային թանձրութեան հետ, բարձրանում էին օդի մէջ, սփռելով դէպի ամեն կողմ կայծերի յորդ եւ առատ հեղեղ։ Հրդեհը հետզհետէ աստիանում էր, ճարակելով հայերի ամբողջ թաղը։ Այժմ տների կտուրներից դուրս էին ցայտում հրեղէն լեզուներ։ Վառուած գերանները խորտակվում էին, եւ ամբողջ կտուրը դղրդալով, գոռգռալով, փուլ էր գալիս, եւ հրակէզ վերմակով ծածկում էր բնակիչներին, որոնք ամեն կողմից կրակով փակուած լինելով, դուրս գալու հնար չունէին։ Թշուառ զոհերի աղաղակների եւ հառաչանքների ձայները խառնվում էին բոցերի որոտմունքի հետ, որոնք վեթիարի

վեշապների նման գալարվում էին եւ պտըտվում էին օդի մէջ, տարածելով դէպի ամէն կողմ մի սարսափելի լուսաւորութիւն։ Այդ լուսաւորութեան մէջ, որպէս մի հսկայ պանորամայի մէջ, մինը միւսի ետեւից հանդիսանում էին աւելի եւ աւելի զարհուրելի պատկերներ։ Մուսուլմանները կոտորում էին հայերին... կոտորում էին կրակից դուրս փախչողներին, չը խնայելով ոչ սեռի եւ ոչ հասակի... Մանկահասակ աղջիկներին, ծամերից բռնած քարշ էին տալիս տներից... Ամէն կողմից լսելի էին լինում ցաւալի աղաղակներ... Բայց թշուառների լացը եւ արտասուքը չէր կարողանում ամոքել գազանների սիրտը...

Այս բարբարոսութիւնների մէջ մասնակցում էին ոչ միայն քրդերը, այլ եւ տաճկաց կանոնաւոր զօրքը, եւ որ աւելի սարսափելին է՝ — քրդերի կանայքը... Այդ վերջինները, կատաղի Ֆուրիաների նման, մոռացած կնոջ գութը եւ սէրը, խլում էին երեխաներին մօր գրկից եւ ձգում էին կրակի մէջ... մի փոքրիկ ընդվզմունքութիւնն անգամ պատժվում էր սրով...

Մի քանի հայ կամաւոր զինուորներ, բերդից նայելով այդ դժոխային տեսարանին, լայ էին լինում... Կոտորածը շարունակվում էր ամբողջ երեք օր եւ երեք գիշեր։

— Ա՛խ, ինչպէս մորթում են... ասում էին նրանք հառաչելով։

Դրանց մօտ կանգնած էր մի ուրիշ հայ երիտասարդ, որ նոյնպէս նայում էր քաղաքում կատարուող բարբարոսութիւնների վրայ։ Նրա աչքերում արտասուք չէր երեւում։ Տխրութեան մի նշոյլ անգամ չէր կարելի տեսնել նրա զայրացած դէմքի վրայ։ Նրա սիրտը նոյն րոպէում լցուած էր մի դառն ատելութեամբ՝ ոչ դէպի այն գազանները, որ այրում էին, որ մորթում էին, այլ դէպի այն վախկոտները, որ ոչխարի նման թոյլ էին տալիս իրանց մորթել։

— Նայեցէք, նայեցէք, ասաց նա, — այսքան բազմութեան մէջ մի մարդ էլ չէք տեսնի, որ ձեռք բարձրացնէր իր սպանողի վրայ... Էլ դրանից աւելի ինչ կարող է լինել, որ շարժէր մարդու կատաղութիւնը, որ բորբոքէր մարդու վրէժխնդրութիւնը։ — Տունը աչքի առջեւ այրում են, զաւակները կրակի մէջ խորովում են, կինը, աղջիկը քաշում տանում են... Տղամարդը տեսնում է այդ բոլորը եւ ինքը ամենայն խոնարհութեամբ պարանոցը դէմ է անում թշնամու սրին... Տօ, անիծեալ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, յետոյ մեռիր...

— Վարդան, դու միշտ այսպէս անգութ ես... նկատեց նրան ընկերներից մէկը։

Վարդանը ոչինչ չը պատասխանեց եւ հեռացաւ։ Կարծես, նրան խիստ ծանր էր նայել այն տեսարանին, որի մէջ տեսնում էր հայի ամօթալի պատկերը... "Այդ ազգը պատուով մեռնել չը գիտէ,,... մտածում էր նա։

Դրանցից փոքր ինչ հեռու, բերդի մի խուլ անկիւնում, մի ուրիշ խումբ հայ կամաւորների մէջ, անց էր կենում հետեւեալ խօսակցութիւնը.

— Եթէ Պետրոսն էլ յետ չը դառնայ, այս գիշեր հինգ հոգի կը կորցնենք...

— Շատ ուշացաւ, երեւի, խեղճ տղան։

— Հէ՛, ականջ դրէք, այդ նրա սիգնալն է, — լսում է՞ք ագռաւի կռնչիւնը...

— Նա է, իջեցնենք թոկի սանդուղքը։

Սանդուղքը ցած թողեցին եւ քանի րոպէից յետոյ բերդի վերնապատշգի վրայ յայտնուեցաւ մի երիտասարդ,

բեռնաւորուած մի ահագին տիկ ջրով։ Ընկերները օգնեցին ջրբերին եւ նա վեր եկաւ բերդի մէջ։ Բոլորը դրկեցին եւ նրա երեսը սփռեցին համբոյրներով։ Մէկը զարհուրելով յետ քաշուեց եւ ասաց.

— Այդ ի՞նչու է երեսդ թաց, Պետրոս։

Այդ միջոցին հրդեհի բոցերը աւելի բարձրանալով, լուսաւորեցին Պետրոսի ներկուած դէմքը։

— Արիւն է հոսում... գոչեցին բոլորը։

— Վնաս չունի... պատասխանեց Պետրոսը ծիծաղելով, — քանի օր էր, որ երեսս չէի լուացել. այս գիշեր մի լաւ լուացուեցայ...

Պետրոսը կարճ կերպով պատմեց, թէ հասնելով ջրի աղբիւրի մօտ, դտաւ այնտեղ մի քանի քուրդ պահապաններ, որոնք հսկում էին, չիցէ թէ պաշարուածները, բերդից իջնելով, ջուր տանէին։ Նրանք յարձակուեցան իր վրայ, եւ մինչեւ կարողացաւ բոլորի "ձայնը կտրել,, ինքը գլխից վէրք ստացաւ։

— Ի՞նչ եղան Յանէսը, Թոմասը, Ադամը, Ներսէն, հարցրին նրանից։

— Գրո՞ղը տանէ նրանց, պատասխանեց Պետրոսը իր սովորական հեգնական եղանակով։ — Կարծես, այդ անիծեալները մէկ մէկու խօսք էին տուել, որ հէնց այս գիշեր շնորհք տանէին իրանց հանգուցեալ պապերի մօտ։ Մէկը պարսպի նեղքեւ ընկած էր, երեւի, հէնց ցած իջնելու միջոցին գնդակ էր կերել... միւսը կէս ճանապարհի վրայ թաւալվում էր, խեղճը դեռ չէր հանգստացել... մէկը աղբիւրի մօտ գերանի նման անշարժ պառկած էր... բայց խեղճ Թոմասը, նրանցից մի փոքր հեռու, կողքի վէրքը բռնած, անիծում էր քրդերին.. իսկ ես նրանց ջիգրը աւեցի...

Այս չորս հայ երիտասարդները, որոնց մասին խօսում էր Պետրոսը, մինը միւսի ետեւից ուղարկուած էին ջուր բերելու, բայց եւ ոչ մէկը չը վերադարձաւ։ Այսպիսի դէպքեր այնքան յաճախ էին կրկնվում, որ մահը, սպանութիւնը դարձել էր նրանց համար մի սովորական բան։ Այս պատճառով Պետրոսի պատմութիւնը մի առանձին տպաւորութիւն չը գործեց ընկերների վրայ։ Նրանք մինչեւ անգամ չէին մտածում շուտով փաթաթել Պետրոսի գլխի վէրքը, որից արիւնը անդադար հոսում էր։ Ինքը Պետրոսն էլ չէր մտածում այդ մասին։

— Ստատնան տանէ այդ քրդերին, շարունակեց նա, — կարծես, այդ անիրաւների աչքերը գայլի նման մթնում էլ տեսնելիս լինեն։ Որ կողմից որ մի շշնջոց են լսում, խսկոյն գնդակը հասցնում են. տեսար, զոհը դողդողաց եւ գլորուեցաւ դետին...

Այսպէս խօսում էին խաւարի մէջ, յետոյ մտաբերեցին փաթաթել Պետրոսի գլխի վէրքը, եւ տպա վեր առնելով ջրի տիկը, որ պարունակում էր իր մէջ հաղարաւոր անձինքների կեանքը, նրանք սկսեցին դիմել դէպի բերդի բակը։

— Տղերք, ասաց նրանցից մէկը, — թուրքերին մի կաթիլ անգամ պէտք չէ տալ. հանաք բան չէ, այս գիշեր մենք չորս հոգի կորցրինք այս մի տիկ ջրի համար, բայց նրանցից ոչ մէկը չուզեց բերդից դուրս գալ։

— Հէ՛, լաւ բան չէ, ասաց Պետրոսը, — պէտք է նրանց էլ տալ։

— Ի՞նչ վատ բան է, պատասխանեց առաջինը, — մի քանի օր առաջ նրանք էլ ջուր բերեցին, բայց գողի նման թագցրին եւ իրանք միայն խմեցին։

— Նրանք վատ վարուեցան, բայց մենք պէտք է ցոյց տանք, թէ ինչ բան է զինուորական եղբայրութիւնը։

— Նրանք մտան զինուորանոցի բակը։

— Ջո՛ւր... Ջո՛ւր.. լսելի եղան ամեն կողմից ուրախութեան աղաղակներ, եւ բազմութիւնը հաւաքուեցաւ մեր երիտասարդների շուրջը։

Անկարելի է նկարագրել այն հոգեկան բերկրանքը, այն կատաղի ուրախութիւնը, որով այդ ծարաւի բազմութիւնը դիմեց դէպի ջրի տիկը։ Բոլորը իրար խառնուեցան, եւ մինը միւսի գլխովն էր ուզում թռչել, որ առաջ հնքը խմէ։

— Մի ճրագ վառեցէք եւ մեզ մի խանդարէք, ամենքիդ բաժին կը հասնի, ասաց ջուր շալակող երիտասարդը եւ տիկը դրեց դեռին։

Վառեցին մի ջահ, որի գունատ կապտագոյն լոյսը տարածուեցաւ խռովուած, եւ ուրախութիւնից իրան կորցրած, բազմութեան վրայ։

Հայ երիտասարդը առեց իր ձեռքը ապտի մի ամենափոքրիկ բաժակ եւ սկսեց նրանով բաժանել ջուրը։ Նա խիստ սաստիկ զզուելի հոտ ունէր, իսկ համը չափազանց անախորժ էր։ Մի քանիսը խմեցին եւ ոչինչ չը նկատեցին։ Մէկը բացականչեց.

— Այդ ինչ գոյն ունի ջուրը։

— Խմիր, խօսեց Պետրոսը, որ այնտեղ կանգնած էր.

— քրդերը հիմայ ջուրը այսպէս ներկած են տալիս մեզ...

— Ի՞նչպէս ներկած... ձայն տուեցին ամեն կողմից։

— Ներկում են մեր արիւնով... դուք մի տեսնէիք, թէ քանի դիակներ էին ընկած այն աղբիւրի մէջ, որտեղից ես դոզացայ այդ ջուրը։

Բազմութիւնը սոսկաց, բայց դարձեալ ուշադրութիւն չը դարձնելով, խմեցին պղտոր կարմրագոյն հեղուկը, որի մէջ թափուած էր այնքան մարդկային արիւն... որի մէջ լուծուած էին այնքան մարդկային մարմիններ... Մէկը մինչեւ անգամ իրան թոյլ տուեց ասել մի այսպիսի բարբարոսական սրախօսութիւն.

— Դա շատ լաւ է... ջուրը կը պարարտանայ եւ աւելի ուժ կը տայ։

Ուրախացած զինուորների կատակները շուտով ընդհատուեցան։ Թնդանօթների խուլ որոտը կրկին լսելի եղաւ հեռուից, եւ կրկին ռումբերը սկսեցին մռնչելով պտնալ բերդի վրայից։ Նրանցից մէկը ընկաւ զինուորներից մի փոքր հեռու, եւ պայթելով, տարածեց դէպի ամեն կողմ իր մահաբեր հատուածները...

Այդ միջոցին ամրոցի սենեակներից մէկի մէջ, ուր մի ժամանակ կենում էր օսմանցի բերդապահը, այժմ ռուս բերդապահը, Ըշտոկվիչը, մի քանի օֆիցերների հետ կազմել էին զինուորական խորհուրդ։ Խորհրդին մասնակցում էին հայ եւ թուրք միլեցիայի գլխաւորները։ Փոքրիկ սեղանի վրայ վառվում էր լամպայ եւ աղօտ կերպով լուսաւորում էր նրանց տխուր եւ բաղմահոգ դէմքերը։

Վերջին օրերում անդադար նամակներ էին ստացվում Թշնամի բանակից, որոնցմով յայտնում էին անձնատուր լինել։ Նամակները գրում էր ռուսաց հին ոխերիմ, երեւելի, Շամիլի որդի Գեներալ-Լէյտենանտ Շամիլը, որ այժմ Թշնամու բանակի մէջն էր գտնվում եւ նորին մեծութեան սուլթանի սվիտայի համհարզ էր։ Վերջին նամակը լի էր սպառնալիքներով եւ խոստումներով։ Զինուորական խորհրդի առարկան այդ նամակն էր. մտածում էին, թէ ինչ պէտք է պատասխանել։

— Անձնատուր չենք լինի, խօսեց բերդապահը, — քանի որ դեռ կենդանի ենք։

— Եթէ մի քանի օր եւս կը տեւէ պաշարումը, մեզ անհնարին կը լինի դիմանալ, խօսեց մի օֆիցէր։

— Մեր դրութիւնը հէնց այս օրից անտանելի է, խօսեց մի ուրիշը, — ոչ ուտելու հայ ունենք եւ ոչ կռուելու պատրաստութիւն։ — Չը գիտեմ ինչու այդ յիմար քրդերը միանգամով վրայ չեն տալիս, ինչով կարող ենք պաշտպանուել, աւելացրեց նա մի փոքր վրդովուած ձայնով։

— Այո՛, շատ անխոհեմ վարուեցանք... ասաց մի այլ օֆիցէր։

— Անցեալը ուղղել չենք կարող, խօսենք ներկայի վրայ, նկատեց բերդապահը, որ նախագահում էր խորհրդին, եւ զինուորական օրէնքի համեմատ, պաշարման ժամանակ՝ էր բոլորի բարձրագոյն հրամանատարը, խիստ ընդարձակ իրաւունքներով։

— Անձնատուր չենք լինի, քանի դեռ կենդանի ենք, կրկնեց նա իր առաջին խօսքը։

— Եթէ դրսից մեզ օգնութիւն չը հասնէ, կորած ենք, պատասխանեց մի խան, որ Թուրք կամաւորների գլխաւորն էր։

— Օգնութիւն սպասելու ղօրութիւն չէ մնացել, խօսեց մի բէգ. — իմ կարծիքով, պէտք է բայց անել բերդի դռները, պատառել մեզ շրջապատող Թշնամու շղթան եւ անց կենալ. կամ կը յաջողուի մեզ ազատուել, կամ կ'ընկնենք Թշնամու ձեռքը։

— Վերջինը աւելի հաւանական է, պատասխանեց հայ կամաւորների գլխաւորը, — բայց հետեւանքը սարսափելի կը լինի։ Այս բերդը այժմ, դոնէ որպէս պատնէշ,

պահում է օսմանցի զօրքերի առաջ գնալը. երբ սրան կորցնենք, այն ժամանակ բաց կ'անենք Սմայլ փաշայի բաշիբոզուկների ճանապարհը, եւ նրանք մի քանի օրուայ մէջ անարգել կերպով կը տիրեն Երեւանը, Նախիջեւանը եւ դուցէ շատ հեռու կը գնայ։ Տեղային մահմեդականութիւնը, որքան ինձ յայտնի է, անհամբեր սպասում է այդ ինքնակոչ հիւրերին. իսկ քրիստոնեայ հայերի ձեռքում զէնք չը կայ։ Մեր երկիրը պահպանելու համար խիստ աննշան թւով զօրք է թողած, որովհետեւ մեր գլխաւոր ուժերը այժմ կենդրոնացած են Ղարսի մօտակայքում։ Մինչեւ նրանց հասնելը, օսմանցիք ամեն ինչ ոչնչացրած կը լինեն։

Հայ աստիճանաւորի խօսքերը գրգռեցին Թուրք խանի բարկութիւնը, եւ նա խօսեց խռովուած կերպով.

— Դուք մահմեդականների մասին կասկած էք յայտնում։

— Իմ կասկածը անտեղի չէ, որովհետեւ ինձ յայտնի են փաստեր, որ հաստատում են ասածս։ Հէնց այս րոպէիս մեզ պաշարող քրդերի թւում գտնվում են շատ զէլանցիներ, որոնք պատերազմից առաջ ռուսաց հպատակներ էին։ Իսկ Նախիջեւանի կողմերում մի ցնորուած մոլայ ամեն գիշեր երազներ է տեսնում, թէ շուտով խալամը կը տիրէ այդ երկրին։

Նախագահը դադարեցրեց վիճաբանութիւնը, ասելով.

— Պէտք է սպասել եւ մինչեւ վերջին շունչը դիմադրել։ Ես յուսով եմ, որ շուտով օգնութիւն կը ստանանք։ Գեներալ Տէր-Ղուկասովը շատ հեռու չէ մեզանից։ Նա հէնց որ իմացաւ մեր դրութիւնը, կը շտապէ Բայազէտը ազատելու։ Միայն պէտք է շուտով նրան իմացում տալ։

— Ի՞նչ միջոցով, հարցրի նրանից։

— Նամակով, պատասխանեց նա։

— Ո՞վ կը տանէ։

— Կարծեմ, մեր այսքան բազմութեան մէջ կը գտնուի մի սիրտ ունեցող տղամարդ։

— Դիցուք թէ գտնուեցաւ, բայց ի՞նչպէս կարող է անցկենալ. թշնամին մեր բոլոր կողմերը բռնել է։

— Կը փորձենք։

Խորհուրդը վճռեց նամակ գրել Տէր-Ղուկասովին, եւ քառորդ ժամից յետոյ բերդապահը, պատրաստ նամակը ձեռին, միւսների հետ դուրս եկաւ խորհրդարանից։

Թմբուկի թեթեւ ձայնը հաւաքեց զինուորներին բերդի հրապարակի վրայ։ Բերդապահը բարձր ձայնով խօսեց.

— Տղերք, ձեզ յայտնի է մեր դրութիւնը, այդ մասին խօսալը աւելորդ է։ Այժմ մեր յոյսը մնացել է Աստուծոյ վրայ եւ Նրա յաջողութեամբ դրսից գալու օգնութեան վրայ։ Եթէ օգնութիւնը ուշացաւ, մենք կորած ենք։ Ուրեմն պէտք է շտապենք մեր վիճակի մասին շուտով իմացում տալ, ուր որ հարկն է։ Ահա այդ նամակը պէտք է հասցնել գեներալ Տէր-Ղուկասովին, որը մեզանից շատ հեռու չէ գտանվում։ Նա այդ նամակը ստացածին պէս, կը շտապէ մեզ աղատելու։ Հիմա ո՞վ կը լինի ձեզնից այն քաջը, որ յանձն կ'առնէ կատարել այդ մեծ ծառայութիւնը, — թող մնաենայ եւ ընդունէ նամակը։ Ես խոստանում եմ, որ նա կը ստանայ մի այնպիսի պարգեւ, որը վայել է մի անձնաղոհ տղամարդի, որ այսքան բազմութեան ազատութեան պատճառ է լինելու։ — Թող ձայն տայ, ով որ յանկանում է տանել նամակը։

Տիրեց ընդհանուր լռութիւն եւ բազմութեան միջից ոչ մի ձայն լսելի չեղաւ։

— Կրկնում եմ, շարունակեց բերդապահը աւելի զգալի ձայնով, — որ այս նամակի հետ կապուած է մեր ամենի փրկութիւնը. ո՞վ է ցանկանում վայելել այդ փառքը եւ մեր բոլորի ազատիչը լինել։

Դարձեալ ոչ մի ձայն լսելի չեղաւ։

— Մի՞թէ ձեր մէջ չը կայ սիրտ ունեցող մի տղամարդ, կոչեց նա դողդոջուն ձայնով. — ո՞վ է յանձն առնում տանել նամակը։

— Ես, լսելի եղաւ բազմութեան միջից մի ձայն, եւ մի հայ երիտասարդ մօտեցաւ, ընդունեց նամակը։

Այս երիտասարդը Վարդանն էր[1]։

Բ.

Հետեւեալ աւուր առաւօտեան պահուն, երբ արեւդակի առաջին ճառագայթները տարածուեցան երկրի վրայ, Բայազէդի մէջ եւ նրա շրջակայքում բացուեցաւ մի սարսափելի տեսարան։ Այժմ պարզ տեսնվում էր հեռանքը այն կոտորածի, որ ամբողջ երեք օր եւ երեք գիշեր կատարուել էր բարբարոսի ձեռքով։ Քաղաքում տիրում էր գերեզմանական լռութիւն, որ երբեմն ընդհատվում էր ագռաւների կռնչիւնով, որոնք խումբերով սաւառնում էին այստեղ եւ այնտեղ՝ մեռելոտիք ուտելու համար։ Փողոցները այդ դժբախտ քաղաքի ներկայացնում էին խիստ տխուր եւ սրտաշարժ պատկեր, — տները

[1] Երիտասարդի անունը Սամփսոն էր, բայց ես իմ վէպի հերոսից ստեղծեցի մի առանձին տիպ. դրանով թէ եւ փոքր ինչ շեղուեցայ պատմական ճշտութիւնից, բայց թող ներուի ինձ, եթէ ես իսկութիւնը մասն

դարձել էին մոխրի կոյտ... տեղ-տեղ ծխլտում էին դեռ չը վառուած նիւթերը... համարեա ամեն մէկ տան մօտ ընկած էին ծերերի, երիտասարդների, կնիկների եւ երեխաների դիակներ... սոված շները ագահութեամբ քարշ էին տալիս դիակները, եւ մրմրթալով, գռմռալով աշխատում էին վանել խումբերով ցած իջնող ագռաւներին... Ամեն կողմից, ամեն անկից, ամեն բակից եւ շուկայից փչում էր լուծուող դիակների խեղդիչ գարշահոտութիւնը...

Այսպիսի մեռեալ քաղաքի մէջ կանգնած էր Բայազէդի միջնաբերդը եւ սպասում էր իր ցաւալի օրհասին...

Պաշարումը հետզհետէ սաստկանում էր: Սար, ձոր, բլուր, դաշտ եւ տափարակ պատած էին բաշիբոզուկների բաղմաթիւ, մի եւ նոյն ժամանակ խառնափնթոր հրոսակներով: Բանակները զետեղուած էին առանձին խումբերով, եւ իւրաքանչիւր խումբի մէջ տեսնվում էր շարժում, իրարանցում եւ աղմուկ: Կրօնական մոլեռանդութիւնը, խառնուած զինուորական անգթութեան. հետ, անցնում էր բարբարոսութեան ամէն չափից եւ սահմանից: Մարդը, գազան դարձած, կեղեքում էր, մահացնում էր իր նմաններին:

Արիւնից կշտանալուց յետոյ, նրանք սկսել էին այժմ յաղեցնել իրանց ընչասիրութեան ծարաւը: Մի տեղ գետնի վրայ տարածել էին քաղաքումը հարուստ համարուած հայերին եւ զանազան տանջանքներով չարչարում էին, որ նրանք յայտնեն, թէ որտեղ են թագցրել իրանց փողերը: Թշուառները լացում էին, աղաղակում էին, ասելով, թէ ինչ որ ունէին՝ տուէցին, այլ եւս ոչինչ չէ մնացել: Նրանց չէին հաւատում, եւ հօր առջեւ երեխաներին մորթում էին, որ ստիպեցնեն յայտնել

իրանց պահեստը: Մի այլ տեղ քրդերը բաժանում էին դիզուած աւարը. նրանց կնիկները ուրախ-ուրախ բառնում էին ձիաների վրայ, որ տանեն իրանց տները: Մի փոքր հեռու բաժանում էին հայ գերիներին, բայց մի գեղեցիկ կնոջ կամ աղջկայ վրայ չէին համաձայնում, վիճում էին եւ սպառնում էին միմեանց սրերով: Մի ուրիշ տեղում գայլերը, վայրենի կատուները, գիշատիչների հետ, հաւաքուած անթաղ դիակների վրայ, իրանց առաւօտեան նախաճաշին էին անում: Դրանցից ոչ այնքան հեռու, կրօնասէր մահմետական զինուորները, խորին ջերմեռանդութեամբ իրանց վաղորդեան նամազն էին անում, եւ արիւնոտ ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, փառաբանում էին իսլամի Ալլահին...

Այդ բոլորը կատարվում էր վառոդից եւ խարոյկներից բարձրացած ծխի ու մխի մէջ, որ թանձր մառախուղի նման պատել էին հորիզոնը, եւ արգելում էին արեգակի ճառագայթների թափանցելուն: Թնդանօթները որոտում էին, վիթխարի բերդի կողքերը ռմբակոծում էին, բայց նա անշարժ, բլուրների բարձրութեան վրայ նստած, տակաւին արհամարհում էր թշնամու անդադար հարուածները:

Բայց մի տեղ ամբողջ բանակի ուշադրութիւնը գրաւել էր մի մարդ: Նա երբեմն թռչկոտելով, երբեմն ծափ տալով, անցնում էր բանակի միջից, եւ մի եւ նոյն ժամանակ երգում էր մի այսպիսի յիմար քրդերէն երգ.

"Պառաւ տատը գորտ դարձաւ,
Գորտ դարձաւ, ծովը մտաւ,
Ծովից աւազ դուրս հանեց,
Աւազը ոսկի դարձաւ,

Ոսկին տուեց մի այծ առեց,
Կաղլիկ, քոսոտ այծ առեց.
— Այծիկ, այծիկ ջան այծիկ,
Ջանս քեզ ղուրբան, այծիկ,
Ասա, ի՞նչու դու եղար
Այսպէս քոսոտ ու կաղլիկ»...

Խենթը... ձայն էին տալիս ամեն կողմից քրդերը եւ հաւաքուելով նրա շուրջը սաիպում էին կրկնել իր երգը:

Եւ իրաւ, այդ մարդը խենթ էր, կամ գոնէ այսպէս ձեւացնում էր իրան: Նա հագնուած էր այն կերպով, որպէս հագնվում են մեղ մօտ լարախաղացների օգնականները, որոնց կոչում են «տակի մասխարայ» եւ որոնք լարի ներքեւում զանազան տեսակ խեղկատակութիւններով ծիծաղեցնում են հանդիսականներին: Նոյնը անում էր եւ այդ խենթը: Նա մի բարձրահասակ երիտասարդ էր վայրենի դէմքով. գլխին դրած ունէր հին թաղիքի կտորից անշնորհք կերպով կարած մի երկայն գդակ, որ վերջանում էր քառանկիւնի ձեւով, եւ իւրաքանչիւր անկիւնից քարշ էին ընկած մի-մի փոքրիկ զանգակներ, որոնք նրա ամեն մի շարժմունքից զընգզընգում էին եւ աներդաշնակ ձայներ էին հանում: Նրեսը մրոտած էր կօշկաներկով, որի վրայ զանազան ուղղութեամբ քաշուած էին զանազան գոյներով գծեր, — կարմիր, դեղին, կապոյտ եւ այլն: Բայց գդակից ամբողջ հագուստը մի կտորից էր բաղկացած. դա զինուորի քրքրուած մի վերարկու էր, որի մէջ փաթաթուած էր նա բոլորովին մերկ մարմնով: Մէջքը պնդած էր մի թոկի կտորով, որ գօտիի տեղ էր ծառայում: Ոտքերը բոբիկ էին, ոտնամաններ չունէր:

— Ապա էշի նման մէկ զռա, ասում էին նրան:

Խենթը մատները կախում էր ականջների մէջ, կռանում էր, բերանը լայն բաց էր անում եւ որքան ձայն ունէր, սկսում էր էշի նման զռալ: Բազմութիւնը ծիծաղում էր եւ ամեն կողմից ձգում էին նրան պղնձէ դրամներ: Նա վեր էր առնում դրամները, զարմացած նայում էր նրանց վրայ, եւ մի կողմ էր ձգում, ասելով, թէ ինձ հաց տուեցէք: Նրան տալիս էին հաց, առնում էր, եւ ահագին պատառներով բերանը դնելով, առանց ծամելու կուլ էր տալիս:

— Դու երեւի, արջի նման պարել եւս գիտես, ասում էին նրան, — ապա տեսնենք քո հունարը:

Խենթը սկսում էր զանազան անճոռնի շարժմունքներ անել, չորս թաթիկների վրայ սողալ, ոտները բարձրացնել, ձեռքերի վրայ կանգնել, եւ ուրիշ տեսակ-տեսակ յիմարութիւններ անել:

Մի ամբողջ օր խենթը մնաց քրդերի բանակի մէջ. զուարճացնում էր բոլորին, խօսում էր քրդերէն, որպէս մի քուրդ հայհոյում էր, անիծում էր ռուսներին. գոռում եւ գոչում էր, թէ բոլոր «գեաւուրներին» պէտք է կոտորել: Մինչեւ կէս գիշեր նրա ձայնը ամեն կողմից լսելի էր լինում: Բայց միւս առաւօտեան խենթին բանակի մէջ էլ ոչ ոք չը տեսաւ...

Գ.

Միջօրէի արեգակը սաստիկ այրում էր, տօթը խեղդելու չափ անտանելի էր: Օրվայ այն ժամն էր, երբ ճանապարհները դատարկվում են ուղեւորներից, եւ ամեն մարդ քաշվում է մի հովանաւոր տեղ զովանալու, եւ փոքր ազատ շունչ առնելու համար:

Նոյն ժամուն Բայազէդից դէպի Ալաշկերտի կողմերը տանող ճանապարհով միայնակ գնում էր մի մարդ։ Ճանապարհը ողը-մոլոր պտոյտներով անցնում էր լեռների միջով, եւ բարձրութիւնների անդադար ելեւէջները սաստիկ դժուարացնում էին նրան։ Բայց ուղեւորը, երեւի յոգնութիւն չէր զգում, թէեւ առանց երիվարի էր, թէեւ հետի էր գնում եւ հագին ոտնամաններ անգամ չունէր։ Նա գնում էր շտապ քայլերով, առանց կանգ առնելու, առանց իր շուրջը նայելու, կարծես թէ, մի սաստիկ պահանջ մղում էր նրան դէպի առաջ, կարծես թէ, ամեն մի կորցրած րոպէն նրա համար շատ թանգ լինէր։

Ուղեւորը մի երիտասարդ էր, համարեա մի եւ նոյն կերպարանքով, որպէս հագնուած էր նախընթաց գիշերում խենթը։ Մի եւ նոյն քրքրուած զինուորի վերարկուն ծածկում էր նրա բոլորովին մերկ անդամները, միեւնոյն թոկի կտորով սնդած ունէր իր մէջքը։ Միայն պակաս էր բոժոժներով զարդարած թաղկեայ գդակը, եւ կօշկաներկով սեւացրած դէմքը, որի վրայ այժմ գոյնզգոյն գծեր չէին երեւում։ Երա գլուխը, արեգակի կիզող ճառագայթներից պահպանուելու համար, այժմ ծածկուած էր բոլորովին թարմ, եւ դեռ տերեւները չը թառամած պրտուներից հիւսած գլխարկով, որի նմանը իրանց ձեռքով հիւսելով, կրում են մշակները ամառը խոտ հնձելու ժամանակ։ Այդ նոհապետական պարզ գլխարկը հովանաւորում էր նրա այրական, բայց նոյն ժամու տխուր դէմքը, որի վրայ նկարուած էր խորին յուսահատութիւն, խառնուած ներքին վրդովմունքի հետ... Թէեւ իր օտարոտի հագուստի մէջ անգամ նա երեւում էր խիստ տարապայման մի բնաւորութիւն։

Նրա ականջներին զարկեց մի ձայն, որ աւելի նման էր ձիու խրխնջալու ձայնին։ Նա կանգնեց եւ ուշադրութեամբ սկսեց նայել իր շուրջը։ Ձայնը կրկնուեցաւ։ Նա ստուգեց, որ ձայնը լսւում էր մերձակայ ձորից, եւ բոպէական մտածութիւնից յետոյ իր քայլերը ուղղեց դէպի այն կողմը, որ շեղվում էր ուղիղ ճանապարհից։ Փոքր ինչ առաջ գնալուց յետոյ, նա բարձրացաւ մի բլուրի վրայ, եւ արծուի սրատեսութեամբ սկսեց դիտել ձորի խորքը։ Այնտեղ շռայլաբար աճել էին զանազան տեսակ խոտաբուսեր, որոնց մէջ արածում էր մի թամքած ձի. երեւում էին մի խումբ թուփեր, եւ ուրիշ ոչինչ։ — Ուղեւորն աւելի ուշադրութեամբ նայելով, նկատեց, որ թուփերի մօտ ցցուած էր մի երկայն նիզակ, որի ծայրը փայլում էր արեգակի ճառագայթներից։ «Ուրեմն այստեղ մարդ կայ, մտածեց նա, — եւ այդ մարդը մենակ պիտի լինի, որովհետեւ արածող միակ ձին նորան է պատկանում. եւ այդ մարդը պէտք է քուրդ լինի, որովհետեւ նիզակը քրդի է, բացի դրանից, ձիու սապաշկինքը նոյնպէս քրդական են, եւ այդ քուրդը պէտք է քնած լինի, որովհետեւ ձիու ոտները շղթայած են, որ հեռու չը գնայ»։ — Իսկոյն նորա գլխում ծագեց մի միտք եւ նա իջաւ բլուրի գագաթից ձորի մէջ։

Ձորի միջով վազում էր մի փոքրիկ վտակ, որի եզերքը հովանաւորուած էին խիտ եղեգնաբոյսերով։ Նա թաղնուեց եղեգների մէջ։ Այժմ սկսեց նա աննկատելի կերպով սողալ դէպի այն թուփերը, որոնց մօտ ցցուած էր նիզակը։ Օձը իր բոլոր առուձգական դիւրաթեքութեամբ չէր կարող այնպէս սողալ որպէս այդ համարձակ եւ ճապուկ մարմինը գալարում էր խիտ եղեգնաբոյսերի մէջ։ Մեղմիկ քամին այն ժամուն օրօրում էր բոյսերի

գլխիկները, եւ նրանցից առաջ եկած սօսափիւնը խլացնում էր թագուած դարանակալի սողալուց պատճառուած խշխշոցը, երբ նա անում էր մի անզգոյշ շարժում։ Ամեն ինչ յաջողութիւն էր խոստանում...

Նա արդէն մօտեցաւ թուփերին, որոնց մօտ ցցուած էր նիզակը։ Այնտեղ նա մի քանի քայլ հեռաւորութեան վրայ կանգ առեց, եւ պահպանելով իր առաջին դիրքը, սկսեց եղեգների միջից նայել։ Եւ իրաւ, թուփերի հովանու տակ պառկած էր մի մարդ, որ կիսով չափ երեւում էր։ Նրա հագուստը ցոյց էր տալիս որ քուրդ է։ Միջօրէի տօթը քշել էր նրան այստեղ հանգստանալու համար։ Արդեօք քնած էր նա, թէ արթուն, — դժուար էր դիտենալ, որովհետեւ քրդի երեսը դարձրած էր դէպի հակառակ կողմը, իսկ թիկունքը դէպի ուղեւորի կողմը։ Նա ամբողջ մարմնով տարածուել էր խոտերի վրայ, որոնք ծալուելով նրա ծանրութեան ներքոյ, կազմել էին խիստ փափուկ օթոց։

Ուղեւորը դեռ իր դարանից դիտում էր։ Քրդի արթուն, թէ քնած լինելը հետաքրքրում էր նրան։ Եթէ պառկած մարդու երեսը դէպի իր կողմը դարձրած լինէր, նա կարող էր տեսնել, արդեօք աչքերը փակած էին, թէ ոչ։ Ներքին վրդովմունքը սկսեց խռովել նրան եւ աչքերի մէջ յայտնուեցաւ կատաղի բարկութիւն։ Մտատանջութիւնը ալէկոծում էր նրան, չը գիտէր թէ ինչ պէտք էր վճռել։ Ինքը անզէն եւ մերկ գործ պիտի ունենար մի ոտքից ցգլուխ զինուած գաղանի հետ։ Բայց պէտք էր վերջացնել... Ժամանակը թռչում էր... Ամեն լոպէ թանդ է նրա համար... Բայց ինչով եւ ի՞նչպէս վերջացնել...

Մինչ նա այդ մտատանջութեան մէջ էր, նկատեց, որ քուրդը գլուխը վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը, նայեց իւր ձիու վրայ, եւ երբ տեսաւ, որ նա շատ հեռու չէր գնացել, կրկին գլուխը դրեց իր խուրջինի վրայ, որ բարձի տեղ էր ծառայում, եւ պառկեց։ Ուրեմն նա քնած չէր եւ եթէ քնած էր, այժմ զարթեցաւ։ Խռովութեան նման մի բան կրկին ցնցեց ուղեւորի դէմքը. նրա պնչերը սկսեցին լայնանալ եւ շրթունքը դողդողալ։ Բայց երբ նրա աչքը ընկաւ նիզակի վրայ, տեսաւ, որ նիզակը բաւական հեռու ցցած էր գետնի մէջ, եւ ուղիղ դէպի այն կողմի վրայ, որտեղ թագնուած էր ինքը։ Այդ առիթը, կարծես, նրան մի փոքր հանգստացրեց. նրա դէմքը այժմ խաղաղ կերպարանք ընդունեց եւ աչքերի մէջ փայլեց ուրախութեան նման մի բան։ Զէնք — այդ էր հարկաւոր նրան իր դիտաւորութիւնը կատարելու համար... Ցանկարծ, որպէս մի դարանակալ վագր, նա դուրս թռաւ եղեգնաբոյսերի միջից, խլեց նիզակը եւ արձանացաւ պառկած քրդի առջեւը։

— Տուր զէնքերդ, եղաւ նրա առաջին խօսքը։

Քուրդը տեսնելով այդ այլանդակ կերպարանքը, զինուորի քրքրուած վերարկուի մէջ եւ իր ծաղրական դէմքով, մի արհամարհական հայեացք ձգեց նրա երեսին, եւ առանց փոխելու իր պառկած դիրքը, ձեռքը տարաւ առրճանակին, եւ ուղղելով դէպի խենթը, ասաց.

— Ա՛ռ, ահա՛...

Առրճանակը որոտաց եւ գնտակը անցաւ խենթի կողքի մօտից։

— Անիրա՜, դու ընդդիմանում ես գոչեց նա եւ նիզակի ծայրը ուղիղ խրեց քրդի կոկորդի մէջ։ Տաք արիւնը դուրս ցայտեց վէրքից, նրա գլուխը դողդողաց եւ ընկաւ գետին։

Կրկին բարձրացաւ քուրդը եւ մի երկրորդ անօգուտ փորձ փորձեց, ձեռքը տարաւ դէպի իր սուրը, կիսով

չափ դուրս քաշեց պատենից, բայց ձեռքը թուլացաւ եւ սուրը մնաց իր տեղում։

— Շո՜ւն, ինչո՞ւ ես սպանում ինձ... հարցրեց նա մահուան տագնապի մէջ։

— Դու շատ ես սպանել իմ ազգից... դու շատ ես յափշտակել... ես ձեզանից սովրեցայ սպանելը... ձեզանից սովրեցայ յափշտակելը... ես հեռու ճանապարհ պիտի գնամ... տեսնում ես, ոչ հագուստ ունեմ, ոչ զէնքեր եւ ոչ ձի։ Քո հագուստը, քո զէնքերը եւ այդ գեղեցիկ ձին, որ արածում է խոտերի մէջ, ինձ պէտք էին... Ես գիտէի, որ քանի շունչդ բերնումդ է, ոչինչ չես տալ, դրա համար քեզ հանդստացրի... Գուցէ դու ղրկուեցար Բայազէդի կողմերից, բայց փոյթ չէ, քո եղբայրները այնտեղ եռանդով գործում են...

Քուրդը ոչինչ չը լսեց. նրա աչքերը արդէն փակուել էին... եւ անշունչ դիակը տարածուել էր գետնի վրայ։

Այդ բոլորը կատարուեցաւ մի քանի րոպէի մէջ։ Ուղեւորը մերկացրեց իր զոհին, նրա դիակը քաշեց, տարաւ եւ թաղցրեց եղէգների մէջ, ծածկեց իր քրքրուած վերարկուով, եւ ինքը հագնելով նրա զգեստը, կրելով նրա զէնքերը, — թռաւ գեղեցիկ ձիու վրայ, եւ շարունակեց իր ճանապարհը...

Դ.

Այդ անցքից մի օր յետոյ, մի ձիաւոր, քրդի ձեւով հագնուած, ծտի նման սլանալով, մտաւ Տէր-Ղուկասովի բանակը։ Նա յայտնեց, թէ գեներալի անունով շատ կարեւոր նամակ ունի բերած։ Նրան տարան դէպի գեներալի վրանը։ Մի օֆիցերի ձեռքով նամակը ներս ուղարկեց նա, իսկ ինքը վրանի դրսումը սպասում էր, հոգ տանելով իր ձիուն, որ շատ քրտնած էր։ Մի քանի րոպէից յետոյ նրան ներս կանչեցին։

Վրանի մէջ նստած էր միջահասակ մի զինուորական, լեռը կազմուածքով եւ առիւծի խրոխտ դէմքով։ Դա ինքը՝ Տէր-Ղուկասովն էր։ Նա ալեւոր գլուխը թեքած ունէր դրասեղանի վրայ, ուր ածած էին շատ նամակներ, որ նոր էին բացուած։ Նա կրկին վեր առեց նրանցից մէկը, կարդոտում էր եւ անդադար ծխում էր։ Նրա անհանգիստ դէմքը արտայայտում էր ներքին խռովութիւն եւ խորին ցաւակցութիւն։ Նա դարձաւ դէպի նամակաբերը, հարցնելով.

— Դու հա՞յ ես։

— Բացի հայ լինելս, տէրտէրի տղայ եմ, պատասխանեց երիտասարդը։

Գեներալը մի սուր հայեացք ձգեց նրա համարձակ դէմքի վրայ եւ շարունակեց իր հարց ու փորձը։

— Բերդում հա՞յ կար։

— Մի քանի օրից յետոյ կը սկսեն մէկմէկու միս ուտել, եթէ չէին ցանկանայ քաղցած մեռնել։

— Ջուր ի՞նչպէս։

— Չը կայ։ Պէտք է դրսից բերել տալ. յերեկով դուրս գալու հնար չը կայ. իսկ գիշերը երբ մթնում է, հերթով տասը քսան մարդ իջեցնում են պարիսպներից, որ գնան ջուր բերեն. քրդերը այդ լաւ են իմանում, հեռուից հրացանի են բռնում, եւ գնացողներից շատ անգամ մէկն էլ չէ վերադառնում։

— Հրազէնների պաշարը ի՞նչպէս է, — վառօդ, գնտակ ունի՞ն։

— Սպառուել էր։ Բայց մի հայ — էլի մեր հայերի երեսը թող սիպտակ լինի — գտաւ բերդի մէջ թուրքերից թաղցրած բաւական զէնքեր, վառօդ եւ գնտակ. հիմա նրանցով եօլա են գնում։

— Դու ինչպէս կարողացար դուրս գալ բերդից։

— Առաւօտեան, դեռ արեւը չը ծագած, պարսպից ցած իջայ եւ ուղիղ մտայ քրդերի բանակի մէջ։ Մի ամբողջ օր նրանց ծիծաղացրի, ուրախացրի, երգեցի, պար եկայ եւ հաղար տեսակ օյիններ հանեցի, եւ այսպէս ամեն տեղ մտայ, ամեն բան իմացայ, յետոյ մնաք բարով ասելով, հեռացայ։

Գեներալը զարմացած նայեց երիտասարդի երեսին, հարցնելով.

— Դու խե՞նթ ես, ինչա՞, այդ ինչե՞ր ես խօսում։

— Այո՛, տէր, պատասխանեց երիտասարդը հանդիստ կերպով. — ինձ վիճակուած է իմ ամբողջ կեանքում խենթի դեր կատարել... Վատ չէ, դա ազատում է շատ փորձանքներից... Ես հէնց ինձ խենթի տեղ էի դրել եւ այնպէս մտայ քրդերի բանակը։

Եւ նա սկսեց նկարագրել իր հագուստը եւ այն բոլոր ծաղրական ձեւերը, որով յայտնուեցաւ քրդերի բանակի մէջ։

Գեներալի սառն դէմքի վրայ անցաւ մի թեթեւ ժպիտ, եւ նա ընկերաբար հարցրեց.

— Իսկ այդ հագուստը դու որտեղից գտար։

— Աստուած հայրուց։ Ճանապարհին մի քուրդ գտայ, այդ հագուստը, այդ զէնքերը եւ այն սիրուն ձին, որ դրսումը կանգնած է, նրանից խլեցի, պատասխանեց երիտասարդը, իր սովորական եղանակով պատմելով, թէ ինչ հնարքով կարողացաւ սպանել քրդին։

— Դու քաջ տղայ ես երեւում, ասաց գեներալը, եւ կրկին ընդունելով իր առաջուայ մտախոհ կերպարանքը, շարունակեց հարց ու փորձը։

— Շատ են քրդերը։

— Ասում են, քսան հազարից աւել են, բայց բոլորը քրդեր չեն, նրանց մէջ խառն են ամեն տեսակ մահմեդական ցեղեր, ով որ մի քանի կտոր զէնք է ունեցել եւ մի ձի, վազ է տուել դէպի Բայազէդ, եւ այսպէս կազմուել է մի ահագին բազմութիւն։ Ես ճանապարհին տեսնում էի, թէ ինչպէս դիմում են այնտեղ միշտ նոր եւ նոր խումբեր։

— Թնդանօթներ ունե՞ն։

— Ունեն։

— Ի՞նչ դիտաւորութիւն ունեն։

— Շտապում են Բայազէդի բերդը առնել, յետոյ անցնել Երեւան եւ մի շաբթից յետոյ Թիֆլիսում լինել, որովհետեւ սիրուն վրացուհիները եւ հայոց աղջիկ-պարոնները սաստիկ հետաքրքրում են նրանց։

Գեներալի դէմքի վրայ դարձեալ երեւաց ժպտի նման մի բան, եւ նա արհամարհական կերպով հարցրեց.

— Քսան հազարո՞վ պիտի Թիֆլիս գնան։ Այդ լինել չէ կարող...

— Քսան հազարը քիչ չէ, տէր, երբ առջեւում հազար հատ սպդաթ չը կայ. բացի դրանից, շուտով կը միանան նրանց հետ Սմայիլ փաշայի բոլոր զօրքերը։ Իսկ մեր կողմերի մահմեդականները գրկերը բացած, անհամբերութեամբ սպասում են իրանց կրօնակից հիւրերին։

Կրկին մուայլ տխրութիւնը սեւ ամպի նման անցաւ գեներալի դէմքի վրայ, եւ նրա սիրտը, որ բախտի ձախողակի փոփոխութիւնից երբէք խռովել չը գիտէր, այժմ

սկսեց ալէկոծուիլ։ Նա ձեռքը տարաւ դէպի ճակատը, սկսեց անգիտակցաբար շփել նրան, կարծես աշխատում էր վանել նրա վրայ դիզուած թախծութիւնը։ Եւ բոպէական մտածութիւնից յետոյ, ալեւոր գլուխը վեր բարձրացրեց, հարցրուց.

— Բայազէդի քաղաքը մնա՞ր։

— Մնայ։ Հայ-քրիստոնեայի մի շունչ անգամ չէ մնացել. ծերերին, պառաւներին եւ երեխաներին կոտորեցին. լաւ-լաւ ջահել կնիկներին, աղջիկներին եւ պատանիներին գերի տարան. տները այրեցին, եւ ինչ որ ունէին կողոպտեցին։ Մի հարիւրի չափ ընտանիք միայն, որոնք առաջուց գիտէին, թէ ինչ վտանգ է սպառնում Բայազէդին, դեռ քրդերը չեկած, փախան դնային սահմանակից պարսից Մագու քաղաքը։ Բայց դրանք էլ միայն իրանց գլուխը կարողացան ազատել, կայքերը թողեցին թշնամու ձեռքը։ Ա՛խ, այդ մահմետականները ո՞րքան անդութ, ո՞րքան անաղնիւ կերպով վարուեցան հայերի հետ...

— Ո՞րպէս։

— Երբ պատերազմի սկզբներում ռուսները մօտեցան Բայազէդին, տեղային մահմետականները սաստիկ երկիւղի մէջ էին, կարծում էին, թէ ռուսները կը դան, եւ թուրքերի նման նրանց կը կողոպտեն, եւ կայքը կը յափշտակեն։ Այս մտքով իրանց ունեցածը թաղցրին հարեւան հայերի տներում, ասելով, թէ "դուք քրիստոնեաներ էք, ռուսները ձեզ չեն դպչի, եւ մեր կայքը ձեր տներում ապահով կը մնայ"։ Ռուսները եկան, ի հարկէ, ոչինչ չարեցին, թէ մահմետականի եւ թէ քրիստոնեայի հետ վարուեցան առանց խտրութեան։ Եւ մահմետականները այդ տեսնելով, հանգստացան, եւ իրանց պահ տուած իրեղէնները ամբողջութեամբ յետ ստացան հայերից։ —

Հիմայ էլ, երբ ձայն դուրս եկաւ, թէ քրդերը գալիս են, թուրքերը ասացին իրանց հարեւան հայերին. "դուք մեզ լաւութիւն էք արել, մենք էլ պէտք է փոխարէնը ձեզ անենք. քրդերը գալիս են ձեզ կը կողոպտեն, տուեցէք ձեր իրեղէնները, մենք կը պահենք"։ Հայերը հաւատացին եւ ինչ որ ունէին, նրանց պահ տուեցին, եւ ոմանք իրանց կնիկներով ու աղջիկներով թաղնուեցան հարեւան թուրքերի տներում։ Իսկ երբ քրդերը մտան քաղաքը, թուրքերը ասացին հայերին. "դուրս եկէք մեր տներից, եթէ քրդերը կը հասկանան, որ մեր տներում հայեր կան պահուած, մեզ էլ ձեզ հետ կը կոտորեն"։ Եւ այսպէս, խեղճ հայերին տուեցին թշնամու ձեռքը, եւ նրանց հարստութեանը իրանք տիրացան։ Բայց երբ սկսուեցաւ կոտորածը, տեղային թուրքերը առաջինը եղան, որ բաց արեցին իրանց տներից կրակը... այն թուրքերը, որ մի եւ կէս ամիս առաջ ձեզ մօտ երդուեցան, գեներալ, հաւատարիմ մնալ ռուսաց իշխանութեանը... հրացանները արձակում էին ամեն կողմից, արձակում էին մինչեւ անգամ թուրքերի կնիկները...

Գեներալը լուռ լսում էր։ Երիտասարդը շարունակեց.

— Ա՛խ, եթէ գիտենայիք, տէր, թէ որքան լաւ աղամարդիկ փչացան այն կռուի մէջ, որ մենք ունեցանք քրդերի հետ նախ քան Բայազէդը նրանց ձեռքը տալը։ Որպէս ձեզ յայտնի է, տէր, բերդի պահպանութեան համար թողած էին խիստ փոքր թուով ռուս զինուորներ, հայ եւ թուրք միլիցիայի հետ։ Շտաբսկիչը, Բայազէդի այդ հերոսը, ռուս զինուորներով պահպանում էր բերդը, իսկ միլիցիան պահպանում էր քաղաքը։ Մեզ վաղուց լուրեր էին հասնում, թէ ահագին բազմութիւն քուրդերի, Շէյխ-Ջալալէդդինի եւ Շէյխ-Ռեզա-ուլլահի գլխաւորութեամբ,

դիմում են դէպի Բայազէդ։ Այդ լուրերը հաղորդում էին մեզ վանեցի հայերը։ Մենք շտապեցինք, պահանջելով, որ վաղօրօք բերդը ամրացնէին, եւ մեզ մօտ պատրաստուէին բաւականաչափ ուժեր Թշնամու առաջն առնելու համար։ Բայց գոնուեցան այնպիսիները, որ աշխատում էին հաւատացնել, թէ այդ բոլոր լուրերը սուտ են, թէ ոչինչ պատրաստութիւն պէտք չէ։ Թէ ի՞նչ նպատակով այդ դաւաճանները աշխատում էին մեզ անպատրաստ վիճակի մէջ պահել Թշնամուն հանդիպելու ժամանակ, — այդ ես չեմ կարող ասել, դուք, ի հարկէ, վերջը կը տեղեկանաք, գեներալ. — միայն այսքանը կ'ասեմ, որ հայը եղել է միշտ հաւատարիմ եւ կը լինի։

Որպէս երեւում էր, երիտասարդի պատմութեան մէջ կային այնպիսի կէտեր, որ նա դժուարանում էր պարզապէս արտայայտել։ Գեներալը ընդմիջեց նրա խօսքը, ասելով.

— Դու այն պատմիր, թէ ի՞նչ արեցիք քրդերի դալուց յետոյ։

— Երբ քրդերը եկան, Շտօկվիչը մի քանի անգամ անյաջող կռիւներից յետոյ, շտապեց ամրանալ բերդի մէջ, նրան պահպանելու համար։ Միլիցիայի մի մասը մնաց դրսում, որովհետեւ բերդի մէջ ոչ այնքան տեղ կար եւ ոչ պաշար բոլորի համար։ Մեր ընկեր Թուրք կամաւորներից ոմանք փախան Իգդիրի եւ ոմանք Պարսկաստանի կողմերը։ Իսկ մենք, հայերս, վճռեցինք կամ կոտորուել, կամ քաղաքը չտալ Թշնամու ձեռքը։ Թէեւ մենք փոքր էինք Թուրք, բայց քաղաքի հայ բնակիչներից շատերը պատրաստ էին միանալ մեզ հետ։ Այդ խեղճերը գիտէին, թէ ի՞նչ վիճակ է սպասում իրանց, երբ Թուրքերը կրկին կը տիրէին Բայազէդին։ Ձեզ յայտնի է, գեներալ, թէ հայերը ռուսի ուրախութեամբ ընդունեցին ռուսաց յաղթական զօրքերին, երբ նրանք առաջին անգամ մտան այդ քաղաքը։ Հայերի մի այսպիսի համակրութիւնը չէին կարող մոռանալ օսմանցիք, եւ իրանց վրէժխնդրութիւնը պէտք է թափէին այդ ժողովրդի վրայ, որ աւելի բարոյք էր համարում հպատակել ռուսաց արծուին, քան օսմանցոց կիսալուսնին...

— Դու դարձեալ հեռանում ես հարցից. երիտասարդի խօսքը կտրեց գեներալը, — դու այն ասա, թէ ի՞նչպէս վերջացաւ գործը։

Երիտասարդը զսպելով իր շտապօսութիւնը, որ յառաջ էր գալիս նրա սրտի վրայ ծանրացած, տխուր անցքերի տպաւորութիւններից, շարունակեց.

— Գուցէ մեզ կը յաջողուէր, տեղային բոլոր հայերի հետ միանալով, ազատել քաղաքը, եթէ առաջուց կը տային նրանց բաւականաչափ զէնքեր։ Բայց զէնքեր չը ստացան նրանք։ Այսուամենայնիւ, շատերը միացան մեզ հետ։ Կռիւը սկզբում, ճշմարիտ ասած, փառաւոր էր։ Մի փոքրիկ խումբ պատերազմում էր Թուով անհամեմատ ուժի դէմ։ Մեզ հետ մասնակցում էին կռւում եւ մի քանի հարիւր Թուրք կամաւորներ։ Բայց յանկարծ տեսանք, որ մեր մահմեդական ընկերները Թողեցին կռուի դաշտը եւ սկսեցին փախչել։ Կարծես նրանց շատ ախորժելի չէր գնդակներ արձակել իրանց կրօնակիցների դէմ... Մենք, հայերս, մնացինք մենակ եւ երկար յամառութեամբ պաշտպանվում էինք։ Այդ տեւեց մի քանի ժամ մինչեւ մեր հրաձիգների պաշարը սպառուեցաւ։ Այն ժամանակ սկսուեցաւ ձեռնամերձ կռիւը։ Շատերը ընկան, շատերը գերի բռնուեցան, եւ մնացածները, տեսնելով, որ ամեն ջանքեր իզուր են, Թողեցին եւ փախան։ Այն ժամանակ Թշնամին տիրեց քաղաքին։

— Հասկանալի է... ասաց ինքն իրան գեներալը եւ վերկենալով, մօտեցաւ մի փոքրիկ արկղիկի, եւ նրա միջից դուրս բերելով մի խաչ, իր ձեռքով կախեց երիտասարդի կուրծքի վրայ, ասելով.

— Դու արժանի ես դրան, ես կ'առաջարկեմ իշխանութեանը, բացի դրանից, քեզ համար աստիճան եւ ռոճիկ: Դու այսուհետեւ կը մնաս ինձ մօտ, քեզ նման քաջերը պէտք են ինձ:

Երիտասարդը շնորհակալութեամբ գլուխ տալով, պատասխանեց.

— Այդ խաչը բաւական է ինձ, գեներալ, դուք մեծ շնորհ արած կը լինէիք, եթէ հէնց այս րոպէիս թոյլ տայիք ինձ գնալ, ուր որ ես ցանկանում եմ:

Գեներալը զարմանալով երիտասարդի անփառասիրութեան վրայ, հարցրեց.

— Ո՞ւր պէտք է գնաս:

— Աղատելու մէ կ ի կեանքը, որ ամեն բանից թանգ է ինձ համար...

— Դու, երեւի մի գաղտնիք ունես, ընկեր, հարցրեց գեներալը բարեսրտութեամբ:

— Այո՛, այդ իմ սրտի գաղտնիքն է...

— Ուրեմն, ընդունիր այդ փոքրիկ ընծան, դուցէ պէտք կը լինի քեզ, ասաց գեներալը, տալով նրան թղթի մէջ փաթաթած ոսկիների մի ծրար:

— Ես մեծ պարգեւ կը համարէի, եթէ շուտով կ'արձակէիք ինձ, պատասխանեց երիտասարդը հրաժարուելով:

— Գնա՛, Տէրը թող քեզ հետ լինի, ասաց գեներալը եւ սեղմեց երիտասարդի ձեռքը:

Նա գլուխ տուեց եւ հեռացաւ:

Ե.

Անցնենք պատերազմից մի քանի տարի առաջ:

Բագրեւանդի գաւառում, Ս. Յովհաննու (Ուչ-Քիլիսայի) վանքից ոչ այնքան հեռու, Եփրատի վերին վտակներից մէկի ափի մօտ, գտնվում էր Օ... հայաբնակ գիւղը: Նա դրուած էր մի բաւական ընդարձակ հովտի մէջ, ուր բնութիւնը չէր խնայած այն բոլոր նկարները, ինչ որ պէտք էին նրան գեղազարդելու համար: Հովիտը տարածուել էր երկու լեռնաշղթաների մէջ, որոնք ալիքաւոր բարձրութիւններով շուրջանակի սեղմել էին նրան իրանց գրկում, տալով նրա տարածութեանը ձուաձեւ կերպարանք: Մէջ տեղից ոլոր-մոլոր պտոյտներով անցնում էր Եփրատի վտակը, որին տեղացիք կոչում էին Աղ-սու, այսինքն սպիտակ ջուր: Նա այնքան մաքուր էր, որ արժանի էր այդ կոչմանը: Հովիտի չորս կողմի սարերը պատած էին ճոխ արօտամարգերով, որոնք առատ սնունդ էին տալիս այնտեղ արածող բազմաթիւ անասունների հօտերին, իսկ տափարակի ամրողջ հարթութիւնը պատած էր ցորենի, գարու, կտաւհատի եւ զանազան ընդեղէնների արտերով: Այստեղ երկրագործի աշխատող ձեռքը չէր թողել ոչ մի կտոր հող անմշակ: Հովիտի մէջ, մինը միւսից հեռու, գտանվում էին մի քանի հայաբնակ գիւղեր, որոնք թաղնուած էին այգիների եւ ձեռատունկ ծառերի մէջ, եւ հեռուից նայողի աչքին ներկայանում էին որպէս կանաչազարդ անտառիկներ, որոնք առանձին խումբերով որոշվում էին տափարակի մերկութիւնից, որ զուրկ էր ծառերից:

Հովիտի բոլորովին ծայրումն էր դրած Օ... գիւղը եւ գոգաւորուած ձորակի մէջ: Տանուտէր Խաչոի բնա-

կարանը — նրա իսկական անունը Խաչատուր էր — էր այն տներից մէկը, որ թէ իր մեծութեամբ եւ թէ հարստութեամբ որոշվում էր միւսներից։ Այս տնից ամեն առաւօտ քշում էին դէպի նախիրը հարիւրի չափ անասուններ։ Նրա կովերը, գոմէշները, եզները եւ ձիաները էին ամենաընտիրները ամբողջ գիւղի մէջ։ Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ, որոնք սեփական հովիւների հսկողութեան ներքոյ արածում էին մերձակայ լեռների վրայ։ Այդ տանն էր պատկանում այն ահագին ձիթհանը — ձէթ դուրս բերելու գործարանը, — որ գտանվում էր գիւղի մէջ։ Այս տանն էր պատկանում այն գեղեցիկ ջրաղացը, որ գտանվում էր գիւղից դուրս, որի անիւները տարուայ բոլոր եղանակներում անդադար բանում էին։ Բայց այն, որ աւելի նշանաւոր էր Խաչօի հարստութեան մէջ, — դրանք էին նրա եօթն որդիները, որոնք մինը միւսի ետեւից հասած, ներկայացնում էին նրա տան հարստութեան սիւները։ Որդիները բոլորը ամուսնացած էին եւ տունը լցուած էր ամեն հասակի երեխաներով։ Ամուսնացած էին եւ նրա թոռներից մի քանիսը. նրանք նոյնպէս զաւակներ ունէին։ Եւ ծերունի Խաչօն իր աչքի առջեւ տեսնում էր մի քանի սերունդ որ ապրում էին միասին, որ կազմում էին մի փոքրիկ աշխարհ։ Գիւղում առակի ձեւ էր ստացել այն խօսքը թէ "Խաչօն այնքան զաւակներ ունի, որքան անասուններ"։

Խաչօի եօթն որդիներից առանց ամուսնանալու մնացել էր ամենակրտսերը, մանկահասակ Ստեփանիկը, որը դեռ նոր էր մտել իր տասն եւ վեց տարեկան հասակի մէջ։ Բայց նրա դէմքին նայելով, կարելի էր իսկոյն նկատել, որ տարիները դեռ չէին տուել նրան այն պատանեկական հասունութիւնը, որ յատուկ էր այդ հասակին, մանաւանդ մի այնպիսի տաք երկրում, ուր պատանիները խիստ վաղ այրանում են։ Ստեփանիկի դէմքը դեռ կրում էր իր վրայ մանկական նուրբ քնքշութիւններ իրանց հրապուրիչ թարմութեամբ։ Խաչօի բոլոր որդիները դրսում իրանց առանձին պարապմունքները ունէին, թէ հողերի մշակութեան մէջ եւ թէ անասունների դարմանելու մէջ, եւ խիստ հազիւ էին տանը գտնվում։ Միայն Ստեփանիկն էր, որ շատ փոքր էր մասնակցում նրանց աշխատութիւններին։ Նա Խաչօի Յովսէփ գեղեցիկն էր, որին ծերունի նահապետը չէր հեռացնում իր աչքից։

Ստեփանիկի եւ Յովսէփ-գեղեցկի մէջ կային շատ նմանութիւններ, ոչ այն պատճառով միայն, որ նա Իսրայէլի որդու պէս սիրուն էր, հեզ էր, խելացի էր եւ համակրական էր, — այլ եւ այն պատճառով, որ ինչպէս Յովսէփի, այնպէս էլ Ստեփանիկի հագուստի եւ զարդարանքի վրայ առանձին ուշադրութիւն էին դարձնում։ Նրա հագին միշտ կարելի էր տեսնել Հալէբի ծաղկաւոր բեհեզից գոյնզգոյն զօլերով կարած պատմուճանը, որի վրայ հագած ունէր ծիրանի մահուդից պատրաստած թիկնոցը, որ զարդարած էր ոսկի թելերով։ Մէջքը պնդած էր Քիրմանի շալէ գօտիով։ Լայն շալվարը պատրաստուած էր Վանայ նուրբ կերպասից։ Ոտներին հագած ունէր Արզրումի կարմիր կօշիկներ։ Գլխին ծածկած ունէր կարմիր ֆէս մետաքսեայ սեւ փունջով, որ փաթաթած էր գունաւոր տուրբանով, նոյնպէս մետաքսեայ նուրբ գործուածներից։ Ֆէսի տակից թափուել էին նրա շագանակի գոյն մազերը, որ սփռուել էին ուսերի վրայ։ Մի բանով միայն որոշվում էր Յովսէփ-գեղեցկից, որ Յովսէփի եղբայրները նախանձվում էին հօրից սիրուած որ-

դու վրայ, բայց Ստեփանիկի եղբայրները բոլորը սիրում էին նրան։

Ծերունի Խաչօի տունը հեռուից բոլորովին հին եւ նախնական ամրոցի տպաւորութիւն էր գործում։ Նա գտնվում էր մի բարձրաւանդակի վրայ, եւ թէ իր շինուածքով, թէ դիրքով, ունէր այն բլոր յարմարութիւնները, որ պէտք էին մի բնակութիւն ազատ պահելու համար արտաքին թշնամիներից։ Այդ ամրոցը պատած էր չորս ահագին պարիսպներով, որոնք քառակուսի ձեւով միմեանց հետ միանալով, թողնում էին իրանց միջնավայրում բաւական ընդարձակ տարածութիւն, որի վրայ կառուցուած էին զանազան շինութիւններ։ Դրսից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակներից, որոնք միացնում էին պարիսպների չորս անկիւնները։ Ամրոցի շրջապարսպի մէջ զետեղուած էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծածկոցները, որ պէտք էին մի կանոնաւոր տնտեսութեան համար։ Այստեղ էր ոչխարների գեղանախոր դոմը, այստեղ էր ձիերի, կովերի եւ դոմէշների փարախը, որ, անասունների տեսակի համեմատ, առանձին-առանձին բաժանմունքներ ունէր։ Այստեղ էր սարայը երկրագործական անօթները պահելու համար. այստեղ էր մարագը, յարդանոցը, խոտանոցը, որոնց մէջ պահվում էր անասունները դարմանելու պաշարը. այստեղ կային զանազան մառաններ, զանազան ամբարներ մշակութեան բերքերի համար։ Այստեղ կային եւ մի քանի խուզեր, որոնց մէջ բնակվում էին Ծերունի Խաչօի հովիւները եւ ծառաները իրանց ընտանիքներով. դրանք բոլորն ազգով քուրդ էին, կնիկները ծառայում էին որպէս աղախիններ, իսկ տղամարդիկը որպէս նախարարներ, հովիւներ կամ երկրագործական մշակներ։ Մի խօսքով,

այդ ամրոցի մէջ բովանդակում էր մի փոքրիկ գիւղ, որի միակ տէրը եւ պետը Ծերունի Խաչօն էր։

Նրա գերդաստանի համար որոշուած բնակարանները իրանց շինուածքով եւ բաժանումներով այնքան բազմատեսակ եւ բաղադրեալ չէին, որպէս այդ յօրինել է մեր նոր քաղաքակրթուած աշխարհը։ Այլ դեռ եւս պահպանել էին այն նախնական պարզութիւնը եւ ձեւը, երբ մի ամբողջ ընտանիք ապրում էր մի վրանի տակ, այն զանազանութեամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղէն շինուածքը։ Նրա բազմաթիւ որդիների համար, որոնց իւրաքանչիւրը իր զաւակներով մի մեծ ընտանիք կարող էր կազմել, առանձին սենեակներ չը կային, այլ բոլորը ապրում էին մի եւ նոյն յարկի տակ, մի եւ նոյն սենեակում, որ ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ չորս պատ, ծածկած ահագին գերաններով։ Այստեղ վառում էին, այստեղ թխում էին, այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բոլորը միասին ուտում էին եւ այստեղ բոլորը միասին պառկում էին։ Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք խառնուած երեխաների հետ, վազվզում էին, թռչկոտում էին, աղաղակում էին եւ տունը լցնում էին կենդանի աղմուկով։ Այստեղ հաւերը շատ անգամ ներս էին մտնում եւ յատակից քաղում էին փշրանքներ կամ ուրիշ այս տեսակ բաներ, որոնք երեխաների ձեռքից անխնայ ցած էին թափվում։ Մի խօսքով, դա Նոյի տապանն էր, ուր զետեղուած էին ամեն տեսակ կենդանիներ։ Այդ բնակարանին կից էր մի երկրորդը։ Դա առաջինից զանազանվում էր նրանով միայն, որ առջեւի ճակատը բոլորովին բաց էր եւ նայում էր բակին։ Դրան կոչում էին ս ր ա հ եւ ծառայում էր որպէս ամառուայ բնակա-

րան։ Սրահի միջից բացվում էր մի դուռն գլխաւոր սենեակի մէջ, եւ այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախագաւիթը։ Դրանց կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որին կոչում էին օդայ. նրա դռները բացվում էին այն ժամանակ միայն, երբ տանը հիւր էր գալիս, եւ միշտ պահվում էր մաքուր ու զարդարուած։

Զ.

Զը նայելով կեցութեան այդ անշուք եւ պարզ ձեւին, կեանքը այդ նահապետական տան մէջ սահում էր ուրախ եւ լի ամեն բաւականութիւններով։ Աշխատանքը անդադար եռ էր գալիս եւ Աստուծոյ օրհնութիւնը թափվում էր այստեղ իր բարութիւններով։ Ծերունի Խաչօի ամբարները միշտ լիքն էին լինում ցորենով, իւղով, ձէթով եւ գինիով։ Տարուայ բոլոր եղանակներից օգուտ էր քաղում նա. թէ ցուրտ եւ թէ տաք օրուայ համար նա միշտ գործ եւ պարապմունք ունէր։

Ահա լեռների ձիւնը սկսեց հալուել, դաշտերը վաղուց ժպտում են գեղեցիկ կանաչով։ Գարուն է։ Օդը տոգորուած անուշահոտ ջերմութեամբ կեանք է սիրում դէպի ամեն կողմ։ Ձորերի միջից վազում են հարիւրաւոր աղմկալի վտակներ եւ օձապտոյտ ընթացքով տարածվում են հովտի մէջ։ Նորեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին դէպի գործ։ Խաչօի որդիները արդէն պատրաստել են արօրը եւ գութանը։

Արեւը դեռ նոր էր սկսել ծագել. դեռ նոր սարերի ձիւնապատ գագաթները վառվում են վարդագոյն ճառագայթներով։ Ծերունին դառնում է առաւօտեան ժամից, աջ եւ ձախ ամեն հանդիպած մարդուն "ողորմի Աստուած" ասելով։ Նրա որդիները այսօր առաջին անգամ պէտք է դուրս բերեն եզներին եւ գոմէշներին, որոնք ամբողջ ձմեռը ախոռում կերել, գիրացել, հանգստացել են, եւ ամենեւին դրսի լոյսը չեն տեսել։ Մեծ զուարճութիւն է գիւղացու համար այս տեսարանը, եւ այս պատճառով նրանցից շատերը հաւաքուել էին Խաչօի տան դրան մօտ, որ տեսնեն, թէ ինչպէս էին պահուել եւ խնամուել նրա անասունները։

— Աչքդ լոյս, տանուտէր Խաչօ, հարցրեց նրան գիւղացիներից մէկը. — այսօր տղերքը ուզում են "խամից հանե՞լ" գոմէշներին։

— Հա, ժամանակ է, մինչեւ երբ ներսումը պահենք. տէրտէրից հարցրի, ասաց "օրը բարի է". ես էլ կամեցայ, որ այսօր դուրս հանեն, պատասխանեց տանուտէրը, մի առանձին նշանակութիւն տալով քահանայի խօսքերին։

Այս միջոցին ներսից լսուեցան զանգակի ձայներ եւ բազմութիւնը յետ քաշուեցաւ ճանապարհ բաց անելու համար։

— Այդ Զօրան է, լսելի եղաւ ամեն կողմից։

Զօրայ կոչում էին տանուտէրի նշանաւոր գոմէշներից մէկին, որի ճակատը սպիտակ լուսնաձեւ սիսակ ունէր եւ որը հռչակուած էր իր ուժով եւ մեծութեամբ։ Վիթխարի անասունը փռնչալով, մռնչելով, դուրս պրծաւ տան դռնից։ Գետինը դողդողում էր նրա ոտների տակ։ Նա յանկարծ կանգ առեց դրան առջեւի հրապարակի վրայ, եւ գլուխը վեր բարձրացնելով, սկսեց նայել իր շուրջը։ Նոյն միջոցին ծերունի տանուտէրը զարկեց նրա ճակատին մի ամբողջ անեի ձու։ Ձուն փշրուեցաւ եւ դեղնագոյն հեղուկը տարածուեցաւ սպիտակ ճակատի վրայ։ Այդ նրա համար էր, որ չարը խափանուի եւ նրան "աչք

չառնէ»։ Զօրան այդ գործողութիւնից խրտնեցաւ, եւ եղջիւրները թափ տալով, մի սարսափելի թռիչք գործեց եւ յարձակուեցաւ այնտեղ հաւաքուած ամբոխի վրայ։ Նոյն միջոցին վրայ հասան Ծերունու որդիները եւ ահագին մահակներով աշխատում էին յետ դարձնել ամէհի անասունին։ Մարդկային ուժը պատերազմում էր վայրենի ուժի դէմ։ Փարախի մթութիւնից դէպի լոյս աշխարհ դուրս գալով, Զօրայի անսովոր աչքերին ամեն առարկայ անորոշ ձեւով եւ մռայլի մէջ էր տեսնվում։ Նա այժմ մինչեւ անգամ չէր ճանաչում իր տէրերին, որ ամբողջ ձմեռը նրան կերակրել էին եւ որոնց ձեռքերը շատ անգամ խոնարհութեամբ լիզել էր նա իր հանգստութեան ժամանակ։ Կատաղի մոլեգնութեան մէջ յարձակվում էր նա այս կողմ եւ այն կողմ։ Ընդդիմադրութիւնը անհնարին էր։ Ոսաչի վեց որդիները ամեն կողմից հարուածում էին նրան։ Բայց ահագին մահակների հարուածները ընդունում էր նա որպէս մի թեթեւ տաշեղի զարկ։ Ծերունի տանուտէրը, հեռու կանգնած, լի հրճուանքով նայում էր այդ սոսկալի կռիւին, որ կարող էր պատիւ բերել ամենանշանաւոր հռոմէական կրկէսին։ Նրա աչքերի առջեւ հանդիսանում էին երկու չափազանց ուժեր, մէկը իր քաջ որդիների ուժը, միւսը իր վիթխարի անասունի ուժը։ Երկուսն էլ հաւասար նշանակութիւն ունէին նրա համար։ Այդ երկու ուժերից կախումն ունէին նրա տնտեսութեան բոլոր աշխատութիւնները։ Այժմ կռիւը աւելի սաստկացաւ։ Որովհետեւ կարուեցաւ Զօրայի վզի հաստ շղթան, որից քարշ էին տուած մի ահագին գերանի կտոր, որպէս զի արգելէր նրա համարձակ քայլերը։ Գիւղացիները չուաններով վրայ վազեցին, որ կաշկանդեն նրան։ Բայց ամէհի անասունի ամեն մի շարժումը բաւական էր չուանները կտրատելու համար։ Նա յարձակվում էր դէպի ամեն կողմ եւ ամբոխը ճանճերի նման փախչում էր նրա առջեւից։ Այդ զարհուրելի խռովութեան միջոցին կատարուեցաւ մի հրաշալի քաջութիւն։ Ծերունի տանուտէրի միջնակ որդին, որին կոչում էին Ապօ, առիւծի արագութեամբ վրայ վազեց եւ բռնեց Զօրայի պոչից։ Կատաղած անասունը, նկատելով այդ արհամարհական յանդգնութիւնը, շտապեց գլուխը յետ դարձնել, որ իր եղջիւրներով պատժէ անզգամին։ Գործուեցան մի քանի սաստիկ պտոյտներ։ Զօրան աշխատում էր յետ դառնալ, որ հարուածէ իր հակառակորդին, բայց Ապօն նրա պոչից պինդ բռնած, պտոյտվում էր նրա հետ։ Այդ մենամարտութիւնը տեւեց մի քանի րոպէ։ Ամեն կողմից լսելի էին լինում զարհուրանքի ձայներ։ Զայրացած դազանը մռնչում էր եւ գետնի մէջ ակօսներ էր ձգում իր ոտների շարժումներով։ Թանձր փոշին վեր էր բարձրանում եւ երկու կռուողները կորած էին հողեղէն ամպի մէջ։ Նոյն միջոցին վրայ հասան Ապօի եղբայրները եւ շղթաներով կաշկանդեցին Զօրային։ Ամեն կողմից այժմ լսելի եղան ուրախութեան ձայներ։

Ծերունի տանուտէրը մօտեցաւ Ապօին, եւ նրա ճակատը համբուրելով, ասաց.

— Աստուծոյ աչքը թող քո վրայ լինի, որդի, դու իմ երեսը սիսպտակացրիր։

Այս խօսքերով նա կամեցաւ յայտնել, որ Ապօն չը թողեց հօրը ամաչել ժողովրդի առջեւ։ Յետոյ նա մօտեցաւ Զօրային, որպէս իր միւս զաւակին, եւ ձեռքով նրա գլուխը շոյելով, ասաց.

— Զարաճճի, ինչո՞ւ էիր այսպիսի գժութիւն անում։

Բայց Զօրան այժմ հանգիստ էր. նրա աչքերի մռայլը փարատուել էր. նա այժմ ճանաչում էր իր տէրերին, եւ, կարծես, փոշմանել էր իր գժութեան վրայ։ Նրա պարանոցից կրկին կապեցին հաստ շղթան, կրկին շղթայից քարշ տուեցին ահագին գերանի կտորը, որի միւս ծայրը հանում էր գետին եւ անցնում էր անասունի առջեւի երկու ոտների միջից, եւ այնուհետեւ սկսեցին քշել դէպի գետը, որ լուանան, որ զովացնեն նրան սառը ջրի մէջ։

Գիւղացիների բաղմութիւնը դեռ չէր հեռացել Ծերունի Խաչօի տան դռնից, որովհետեւ Զօրայից յետոյ պէտք է դուրս բերէին միւս գոմէշներին, որոնք մինը միւսից աւելի ամեհի էին։ Բայց այս անգամ Ծերունու որդիները աւելի զգուշութիւններ գործ դրեցին եւ մի առանձին անկարգութիւն չը պատահեցաւ։ Նրանք հերթով դուրս էին բերում գեղեցիկ, առողջ, գէր ու պարարտ անասուններին, որոնց իւրաքանչիւրը ամեն մի գիւղատնտեսական հանդիսարանի մէջ կարող էր առաջին մրցանակը ստանալ։ Տանուտէրը հիացմունքով նայում էր նրանց վրայ, եւ փշրում էր նրանց ճակատին կախարդական ձուն, որ ազատ պահէ չար աչքից։ Բացի դրանից, նա տէրտէրին դրել էր տուել մի-մի թիլիսմանական աղօթք, եւ եռանկիւնի ձեւով կանաչադոյն կաշու մէջ կարելով, քարշ էր տուել իր անասունների պարանոցից։ Գիւղացիները տեսնելով, գովում էին Խաչօի որդիներին, որ կարողացել էին այնպէս լաւ պահել իրանց անասուններին։ Հայրը, լսելով իր որդիների գովասանքը, ուրախանում էր։ Այսպէս պէտք է նրանք ամեն օր դուրս բերէին "խամ պահած" անասուններին, մինչեւ մի փոքր ընտելանային, մինչեւ մի փոքր սովորէին դրսի օդին եւ լոյսին, որ այնուհետեւ սկսէին հերկը հերկել։

Է.

Ապրիլ ամիսը բերեց իր հետ աւելի տաք եւ աւելի պայծառ օրեր։ Լեռների վրայ կարմիր, դեղին եւ սպիտակ շուշանները վաղուց արդէն ծաղկել էին, եւ քրդերի աղջիկները քաղելով, փունջեր էին կապում, եւ հայերի գիւղերում մեն ածելով, փոխում էին մի կտոր հացի հետ։ Սունկը, բոխին, ծնեբեկը, մանդիկը, սիբեխը եւ լեռնային զանազան բանջարեղէնները այս տարի այնքան առատ էին, որ մի աւանակի բեռը քրդի կանայքը փոխում էին մի քանի ֆունտ ալիւրի հետ։

Ծերունի Խաչօի որդիները արդէն սկսել էին դաշտում իրանց վարը վարել։ Աշխատութիւնը սկսուել էր ամեն տեղ։ Գիւղի մէջ մի անգործ մարդ չէր կարելի գտնել։ Ամեն ոք զբաղուած էր իր մշակութիւններով։

Առաւօտեան ժամն էր։ Ծերունու տանը թոնիրները վառվում էին. մէկի վրայ դրած էին պղնձէ ահագին կաթսաներ եւ խեցեղէն մեծ-մեծ պտուկներ, կերակուր էին եփում, միւսի մէջ հաց էին թխում։ Հարսները, աղախինները, հաւաքուած թոնիրների շուրջը, ընդհանուր շարժողութեան մէջ էին։ Տունը, լցուած էր կերակուրների անուշ շոգիով, ներկայացնում էր մի հսկայական խոհանոց, որի մէջ, տեսնողը կը մտածէր, թէ պատրաստվում է ճաշ մի ամբողջ բանակ կերակրելու համար։ Եւ իրաւ, բացի Ծերունու ահագին գերդաստանից, նրա սեղանից կերակրվում էին բազմաթիւ հովիւներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում էին նրա տանը։ Դա մի ամբողջ լեգէոն էր։ Ամեն օր վառվում էին նոյն թոնիրները, ամեն օր պատրաստվում էր կերակուրների նոյն քանակութիւնը։ Եւ Ծերունու ժրաջան հարսները մի

լոպէ հանգստութիւն չունէին։ Պէտք էր ամէնի մասին հոգ տանել, պէտք էր ամենին գոհացնել։

Բացի դրանից, կային տնտեսական եւ ուրիշ զանազան հոգսեր։ Ահա այնտեղ, բակում հարսներից մէկը կովերին եւ ոչխարներին է կթում. միւսը փոքրիկ օջախի վրայ կաթ է տաքացնում մանչուն շինելու համար. երրորդը պանիր է մակարդում. չորրորդը հարում է խնոցին կարագ պատրաստելու համար։ Նրանց շուրջը վազվզում են բազմաթիւ երեխաներ եւ խաղում են նորածին գառների ու հորթերի հետ։ Քաղցր է նայել այդ գիւղական բախտաւորութեան վրայ։ Մանուկ եւ գառնուկ, երկուսն էլ աճում են միասին, — երկու հարստութիւններ, որոնցմով ուրախանում է, որոնցմով պարծենում է գիւղացին։

Բակի արեւահայեաց կողմում, պատի տակ, մինը միւսի վրայ, կարգով շարուած են մի քանի հարիւր մեղրի փեթակներ։ Ապրիլեան արեգակը թափում է այսաեղ իր ջերմ ճառագայթները։ Մինչդեռ հարսները միւս կողմում զբաղուած են իրանց գործով, ծերունի Խաչօն այստեղ բաց է անում փեթակների դռնակները։ Ճանճերը ուրախ եւ զուարթ դուրս են թափվում ծակերից, սաւառնում են նրա ալեւոր գլխի շուրջը, պըզպըզում են, վըժվըժում են, թրռթրռում են, եւ օդը թնդում է միլիոնաւոր միջատների ձայնից։ Գտնվում են նրանց մէջ եւ այնպիսի չարաճճիներ, որ կծու համբոյրներ են մատուցանում ծերունու խորշոմած երեսին։ Բայց նա ամենեւին ցաւ չէ զգում, միայն ձեռքով քշելով, ասում է. „Այ, չար սատանայ, ինչ վատութիւն է արել քեզ Խաչօն„։

Նոյն ժամուն Ստեփանիկը հեռու կանգնած, հետաքրքրութեամբ նայում էր հօր աշխատութիւններին։

— Գնա՛, զաւակս, ճանճերը կը կծեն քեզ, զգուշացնում է հայրը։

— Ապա ինչո՞ւ քեզ չեն կծում, հարցնում է որդին։

— Կծում են, բայց ինձ այնքան չեն ցաւեցնում։

— Ինչո՞ւ չեն ցաւեցնում։

— Իմ մարմինը վաղուց սովորել է նրանց խայթոցներին։

— Թող իմն էլ սովորի, ասում է պատանին ժըպտելով։

Ծերունին ծիծաղում է եւ համբուրում է որդուն։

Նոյն միջոցին յայտնուեցաւ գիւղի գզիրը եւ ասաց, որ քուրդ Փաթթահ-բէկը մարդ է ուղարկել, թէ գալու եմ տանուտէրի մօտ հիւր, եւ աւելացրեց, թէ գուցէ շուտով կը գայ նա, որովհետեւ շատ հեռու չէ գտնվում, այլ մերձակայ լեռների վրայ որս է անում։ Կարծես մի սեւ թուզլ անցաւ ծերունու պարզ ճակատի վրայ եւ նրա ուրախ դէմքը նսեմացաւ տխրութեամբ։ Բայց նա զսպելով իր ներքին տհաճութիւնը, պատուիրեց գզիրին, որ դաշտից կանչէ իր որդիներից մի քանիսին, որ սպասաւորութիւն անեն, իսկ ինքը խոտի եւ դարմանի պատրաստութիւն տեսնէ նրանց ձիաների համար։

Փաթթահ-բէկի երթեւեկութիւնը այնպիսի մի սովորական բան էր ծերունի Խաչօի մօտ, որ տանեցիք գիտէին, թէ ինչ պատրաստութիւններ պէտք էին նրան հիւրասիրելու համար։ Այս պատճառով հէնց որ հարսները իմացան, թէ նա գալու է, իսկոյն մի քանի գառներ մորթել տուին, եւ սկսեցին մեծ կաթսաներով փլաւ պատրաստել, որովհետեւ իմանում էին, որքան էլ սակաւ լինէր, գարձեալ բէկը իր հետ մի քսան կամ երեսուն մարդ կ'ունենար։

Փաթթահ-բէկը քրդերի մի ամբողջ ցեղի պետն էր, որոնց ոչխարները արածում էին Օ... գիւղի սահմանակից լեռների վրայ։ Սակաւ չէր պատահում, որ հայ եւ քուրդ հովիւների մէջ ծագում էին կռիւներ, երբ քրդերը կամ ոչխար էին գողանում, եւ կամ անցնելով սահմանից, սկսում էին իրանց հօտերը արածեցնել հայերի արօտների վրայ։ Բայց այդ կռիւները միշտ վերջանում էին առանց ծանր հետեւանքների, որովհետեւ քրդերի ցեղապետ Փաթթահ-բէկը տանուտէր Խաչօի ոչ միայն լաւ բարեկամն էր, բայց եւ քիրվան էր։ Նա կնքահայր էր դարձել տանուտէրի թոռներից մի քանիսին մկրտութեան խորհրդի ժամանակ, իսկ տանուտէրը փոխադարձապէս կնքահայր էր եղել բէկի մի քանի որդիների թլփատութեան ծէսը կատարելու ժամանակ։ Այսպէսով հայ տանուտէրի եւ քուրդ բէկի մէջ կազմուել էր խիստ սերտ յարաբերութիւն։

Բայց ինչո՞ւ նա ասրեց, երբ լսեց բէկի գալուստը։ Խաչօն ժլատ մարդ չէր, որ վախենար նրան իր մի խումբ ծառաների հետ հիւրասիրելուց։ Խաչօի սեղանը հայր Աբրահամի սեղանի նման ամեն մարդու առջեւ բաց էր։ Ամեն օր իրա տանը հաց էին ուտում բազմաթիւ պանդուխտներ եւ օտարականներ։ Խաչօն միշտ մի առանձին բաւականութեամբ էր արտասանում այն խօսքերը, թէ իր կեանքում առանց հիւրի սեղան չէ նստել։ "Հացը, ասում էր նա, Աստուծոյ տուածն է եւ Նրան է պատկանում. Աստուծոյ աղքատները պէտք է կերակրուեն Նրանից"։ Բայց ինչո՞ւ ասրեց նա, երբ լսեց բէկի գալուստը...

Նա լուռ մտածութեան մէջ դուրս եկաւ տանից, այնտեղ դրանը կանգնած, սպասում էր, որ ընդունէ

հիւրին։ Մի քանի գիւղացիներ, տեսնելով տանուտէրին, մօտեցան նրան։

— Ասացին, բէկը գալիս է, խօսեց նրանցից մէկը. — ով գիտէ, ինչ փորացաւ Կունենայ։

— Քուրդը, երբ հայի տունն է գալիս, առանց փորացաւի չի լինում, պատասխանեց տանուտէրը ներքին դժգոհութեամբ։

Բլուրների ետեւից երեւացին նիզակների սուր ծայրերը, եւ մի քանի րոպէից յետոյ յայտնուեցան մի խումբ ձիաւորներ։

— Գալիս են, ասաց գիւղացիներից մէկը։

Տանուտէրի աչքերը հեռուից լաւ չէին տեսնում, նայեց դէպի այն կողմը եւ ոչինչ չը նկատեց։

— Նրանք են, ձայն տուեց մի ուրիշ գիւղացի։

— Տղերք, ասաց տանուտէրը իր մօտ կանգնած գիւղացիներին, դուք այստեղ մնացէք, նրանց ձիաները բռնեցէք, խոտ եւ դարի տուեցէք, մինչեւ մերոնք կը գան դաշտից։

Մօտեցաւ բէկը մի խումբ զանազան տեսակ որսորդական շներով եւ քսանից աւելի ձիաւորներով, որոնք իր հեռու եւ մօտ ազգականներն էին, եւ որոնց թիկնապահների նման իրանից չէր հեռացնում։ Նա այսօր նստած էր մի գեղեցիկ կապտագոյն արաբական նժոյգի վրայ, որի բոլոր ասպազէնը զարդարած էր արծաթով եւ փայլուն ակներով։ Ինքը բէկը քառասուն տարեկան հասակից անցած մի տղամարդ էր, բայց տեսնողը կը մտածէր, թէ երեսուն տարեկան երիտասարդ է, վայելչակազմ, հսկայատիպ եւ այրական դէմքով։ Նրա հագուստը ոտքից ցգլուխ բաղկացած էր բեհեզից, թանգագին կերպասից, ասղնագործած ոսկի թելերով. զէնքները նոյնպէս զարդարած էին ոսկով եւ արծաթով։

Տանուտէրը, տեսնելով նրան, մի քանի քայլ առաջ գնաց եւ կանգնեց խրամի մօտ, որ փորած էր ջուր անցկացնելու համար։ Խրամի վրայ ձգած էր մի կամուրջ, որտեղից պիտի անցկենար բէկը, բայց նա, փոխանակ կամուրջից անցկենալու, խթեց իր ձիու կողքը. ձին փռնչաց, ծռի նման թռաւ ահագին խրամից, եւ մի քանի զարմանալի պտոյտներ գործելով, սիգալով կանգնեց տանուտէրի մօտ։

— Ի՞նչպէս է, հաւանո՞ւմ ես, քաւոր Խաչօ, հարցրեց բէկը, ձեռքով գդուելով նժոյգի սիրուն բաշը, — դու ձիաներ ճանաչում ես. ի՞նչպէս է։

— Աստուած թող հեռու պահի չար աչքից, շատ գեղեցիկ է, ինքը Քօրօղլին էլ չէ ունեցել մի այսպիսի ձի. ուղիղ քեզ արժանի է, պատասխանեց տանուտէրը մօտենալով եւ իր ձեռքը քսելով նժոյգի պարանոցին։ — Ո՞ր տեղից գտար, դու այսպիսի ձի չունէիր։

— Նոր ընծայ եմ ստացել Արզրումի վալիից, պատասխանեց ուրախացած բէկը։ — Վալին այդ նժոյգը իր ղոյդ աչքերու հետ չէր փոխի, բայց ուղարկեց իր բարեկամին. նա այդ ձին ընծայ էր ստացել Հալէբի շէյխից։

— Գեղեցիկ ձի է, կրկնեց տանուտէրը։

Բէկը ոգեւորուած այդ գովասանութիւններով, կրկին խթեց նժոյգի կողքը, նա մի քանի զարմանալի թռիչքներ գործեց, մի քանի ճարպիկ պտոյտներ տուեց տանուտէրի դրան հրապարակի վրայ, եւ այդ բոլոր գործողութիւնների մէջ երեւում էին ազնիւ երիվարի գեղեցիկ յատկութիւնները եւ նրա տանձը կառավարող տղամարդի հմտութիւնը ամէհի ձիաներ զսպելու մէջ։

Յետոյ նա ցած իջաւ, եւ տանձը յանձնելով իր ծառաներից մէկի ձեռքը, պատուիրեց, որ ման ածէ, որովհետեւ ձին բաւական քրտնած էր։

Տանուտէրը իր պատուելի հիւրի ձեռքից բռնած, մտան օդան (հիւրանոցը), որ մինչեւ նրանց գալը, բաւական զարդարած եւ կարգի էր դրած։

Յատակը սփռած էր պարսկական թանգագին գորգերով. պատերի մօտ մինը միւսի վրայ շարուած էին փափուկ բարձեր նստելու եւ թիկն տալու համար, եւ մի գեղեցիկ օթոց յատկապէս պատրաստուած էր բէկի բազմոցի համար։

Այժմ տանուտէրը, հրաւիրելով իր հիւրին նստել, ասաց իրանց երկրում ընդունուած քաղաքավարական ոճով.

— Իմ տունը ձեր տունն է. աչքիս եւ գլխիս վրայ տեղ ունիք. ես ձեր խոնարհ ծառան եմ. որդիքս ձեր սարուկներն են, իսկ կանայքս՝ ձեր աղախինները. բարով եւ հազար բարով էք եկել. ամեն ինչ որ ունեմ, ձեզ "փէշքէշ" է։ Հրամեցէք, հրամեցէք, նստեցէք, խնդրեմ։

Բէկը շնորհակալութիւն յայտնեց, եւ Խաչօի որդիներից մէկը մօտենալով, ոտներից հանեց նրա կարմիր կօշիկները, եւ նա առաջացաւ, նստեց իր համար պատրաստուած բարձի վրայ, որ բռնում էր հիւրանոցի պատուաւոր կողմը։ Նրա մօտ նստեցին, որպէս մերձաւորներ, իր հօրեղբօր որդիներից երկուսը, եւ մի քանի ուրիշ ազգականներ։ Ծառաների մի մասը մնաց օդայի մէջ, եւ ձեռքերները իրանց գօտիներում խրած ատրճանակների վրայ դրած, խոնարհութեամբ կանգնել էին բէկի սպասում։ Իսկ ծառաների միւս մասը դուրս գնաց, հոգ տանելու որսորդական շներին եւ ձիաներին, որ նոյն ժամանակ վայելում էին տանուտէրի մարագի բարիքները։ Թէ բէկը եւ թէ իր ծառաները բոլորը զինուորուած էին սրերով, վահաններով, ատրճանակներով, հրացաններով եւ նի-

զակներով, որոնց իրանցից չը հեռացրին, թէեւ բարեկամի տուն մտան։ Քուրդը թէ իր տնում եւ թէ դրսում, թէ խաղաղութեան ժամանակ եւ թէ կռիւի ժամանակ, զէնքերը իր մարմնից չէ հեռացնում։ Զէնքը քրդի մարմնի անբաժան անդամներից մէկն է։

Յաչօի որդիներից մի քանիսը, որ այդ ժամանակ դարձել էին դաշտից, անդադար դուրս էին գալիս եւ ներս մտնում, կատարելով հօր զանազան պատուէրները։ Բայց նրանց վրայ զէնքեր չը կային։ Սկզբում փոքրիկ նախշուն ֆինջանների մէջ մատուցին սուրճ առանց շաքարի։

— Ո՞ւր է Ստեփանիկը, չէ երեւում, հարցրեց բէկը. — ես սովորել եմ այստեղ գալու ժամանակ սուրճը միշտ նրա ձեռքից ընդունել։

Տանուտէրը, թաղցնելով իր ներքին տհաճութիւնը, հրամայեց, որ կանչեն Ստեփանիկին։

Ներս մտաւ Ստեփանիկը ուրախութեան ժպիտը փայլում էր նրա անմեղ դէմքի վրայ. նա մօտեցաւ բէկին եւ համբուրեց նրա ձեռքը։ (Քրդի ցեղապետները իրանց ձեռքը համբուրել են տալիս։) Բէկը շոյելով նրա մետաքանման մազերը, ասաց.

— Դու գիտե՞ս, թէ ինչ լաւ բան եմ բերել քեզ համար։

— Գիտեմ. պատասխանեց Ստեփանիկը կարմրելով, մի գեղեցիկ այծեամի ձագ է. տարայ խոտ տուեցի, չը կերաւ։

— Տեսնո՞ւմ էք նա արդէն ստացել է իր ընծան, ասաց բէկը, դառնալով դէպի տանուտէրը։

— Գիտէի, որ ինձ համար է, պատասխանեց Ստեփանիկը, — ես էլ տարայ։

— Դէ, հիմա գնա, խաղա՛ քո այծեամի հետ, ասաց բէկը։

Պատանին գլուխ տուեց եւ հեռացաւ։

— Շատ խելօք տղայ է, խօսեց բէկը Ստեփանիկի գնալուց յետոյ։ — Նրեւի, նա դժգոհ է մնում, երբ ամեն անգամ, իմ այստեղ գալու ժամանակ, ինձանից մի ընծայ չէ ստանում։

— Նա մեղ չունի, դուք էք այդպէս սովորացրել, բէկ, պատասխանեց տանուտէրը, ակամայ ծիծաղելով։

— Ա՜խ, ինչ լաւ սարեր են ձեր սարերը, քաւոր Յաչօ, — փոխեց բէկը իր խօսքը. — ամեն քայլում հանդիպում ես որսի. այծեամներ, եղնիկներ, եղջերուներ խումբերով են մտնում դալիս. կաքաւներին եւ վայրենի աղաւնիներին հաշիւ չը կայ։ Այդ այծեամը, որ ստացաւ Ստեփանիկը, իմ բարակները բոլորովին կենդանի բռնեցին։ Բայց մի տեսնէիք, ինչ լաւ բարակներ ունեմ այժմ. մի զոյգ նոր ստացայ Զելանցիների ցեղապետից. փոխարէնը ես մի զոյգ ջորի ուղարկեցի։ Բայց խօսքը մեր մէջը թող մնայ, ջորիները մենք դեռ նոր էինք խլել Մէքքայի պարսիկ ուխտաւորներից։ Բայց բարակները հրաշալի են, մոքից աւելի արագ են թռչում։

Բէկի խօսակցութիւնը ամբողջ ժամանակ վերաբերում էր իր շներին, որսորդութիւններին, որոնց մասին մի առանձին բաւականութեամբ էր խօսում։ Տանուտէր Յաչօին թէեւ ձանձրալի էին այդ "յիմարութիւնները", բայց նա համբերութեամբ լսում էր եւ երբեմն իր կողմից համակրութիւն էր ցոյց տալիս։

Արդէն ճաշի ժամանակ էր։ Ցատակի վրայ տարածեցին սեղանի սփռոցը եւ նրա վրայ շարեցին ահագին ափսեներով փլաւ եւ խորոված ամբողջ գառներ։ Մի

քանի ամանների մէջ դրած էին զանազան տեսակ քաղցր շերբէթներ, կամ մսծուռնից պատրաստած թանապուր, որ խմում էին մեծ շերեփներով։ Ոգելից ըմպելիք չը կային։ Սկսեցին ուտել եւ խմել։

— Դուք ձեր ոչխարները դեռ չէք ուղարկել արօտ, հարցրեց բէկը տանուտէրից։

— Դեռ չենք ուղարկել, պատասխանեց տանուտէրը. — դեռ եղանակի վրայ յոյս չէ կարելի դնել, այդ մեր ապրիլ ամիսը իր վերջին գժուրթիւններն ունի, սպասում եմ, մինչեւ անցկենայ։

— Ջերմ ու ցուրտը Աստուծոյ ձեռքումն է, քաւոր Խաչօ, ինչ որ լինելու է, կը լինի, պատասխանեց բէկը։ — Մեր ոչխարները մի շաբաթից աւել կը լինի, որ տարել են արօտ։ Բայց գիտէք այս տարի որքան շուտ սպառուեցաւ մեր պաշարը. հովիւները քանի օր է, ուտելու հայ չունեն։

Տանուտէրը հասկանալով, թէ ինչ է ուզում ասել բէկը, պատասխանեց.

— Միթէ մեր հայը ձերը չէ՞, հրամայեցէք, որքան ալիւր պէտք է, ես կ'ուղարկեմ։

— Թող շէն ու հաստատ մնայ ձեր տունը, ասաց բէկը. — ի հարկէ այդպէս է. ո՞վ է մեր մէջ ջոկութիւն դնել։ Ինչ որ իմն է՝ — քոնն է. ինչ որ քոնն է՝ — իմն է։ Այդպէս չէ՞, քաւոր Խաչօ։

— Աստուած էլ գիտէ, որ այդպէս է...։ — Ո՞րքան ալիւր ուղարկեմ։

— Առ այժմ մի տան եղան բեռն բաւական է, երբ սպառուի, էլի կը տանենք, ձեր ամբարները խօ պրծնելու չեն։

Տանուտէրը մի ակամայ ժպիտ գործեց իր տխուր դէմքի վրայ, եւ գլուխը շարժեց, որ նշան էր նրա համաձայնութեանը։

Ճաշից յետոյ Ստեփանիկը ձեռքեր լուանալու ջուր բերեց, բոլորը լուացուեցան, եւ ապա պատանին իր ձեռքով սուրճ տուեց։ Բէկը հրամայեց իր սպասում կանգնած ծառաներին, որ գնան դրսում իրանց ընկերների հետ ճաշեն, ուր պատրաստուած էր առանձին սեղան, բակի մէջ տարածուած կապերտների վրայ։ Հիւրանոցում մնացին բէկը, իր մի քանի ազգականները եւ տանուտէր Խաչօն։ Այժմ խօսակցութեան առարկան Արզրումի վալիի ընծայած ձին էր։ Բէկը պատմում էր նժոյգի ցեղական աղնուութիւնը, եւ ասում էր, թէ նրա տոհմային վկայականները հասնում են մինչեւ երեւելի Անթարի ժամանակներին, թէ այդ ձին սերվում էր արաբական ամենաընտիր նժոյգների տոհմից եւ այլն։

— Բայց շատ թանգ պիտի նստի իմ վրայ այդ գեղեցիկ ընծան, վերջացրեց բէկը իր պատմութիւնը։

— Ի՞նչպէս, հարցրեց տանուտէրը։

— Միթէ չե՞ս իմանում, ամենափոքրը՝ պէտք է հարիւր ոսկի պարգեւել վալիի ծառային, որ բերել է այդ ձին։

Տանուտէրը այժմ հասկացաւ բէկի "փորացաւը", թէ ինչ մտքով էր եկել իր տունը։ Բայց որպէս ասում են, "խօսքը կտուր դցելով", պատասխանեց.

— Ի՛նչ կայ, տուեցէք. հարիւր ոսկին շատ չէ մի այսպիսի ձիու համար։

— Քրդին ո՞վ է տուել փող, ասաց բէկը մի փոքր բարկացած ձայնով. — այդ անիծած արծաթը ձեր, հայերիդ, մնա է գտնվում միշտ։

Բէկի մօտ նստած ազգականները, որ բոլոր ժամանակ լուռ էին, խօսակցութեան մէջ մտան։ Նրանցից մէկը ասաց.

— Դուք էլ մի՛թէ փողի դա՞րդ էք քաշում, բէկ,

— քաւոր Յաչօն ի՞նչ է թողել, որ դուք փողի կարօտութիւն ունենաք։

— Աստուած վկայ է, որ այդպէս է, ասաց միւսը։

— Քաւոր Յաչօն շատ լաւ մարդ է, աւելացրեց երրորդը. — նրա հատը բոլոր հայերի մէջ չը կայ։

Ծերունի Յաչօն նկատեց, որ հակառակ իր հաճութեան եւ կամքին, իր վզին դրեցին հարիւր ոսկին, եւ կասկածանքի տեղիք չը տալով, պատասխանեց.

— Ես հազար ոսկու համար եւս բէկի սիրտը չեմ կոտրի։

— Շէն մնայ ձեր տունը, ձայն տուեցին քրդերը։

Տանուտէրը վերկացաւ, եւ դուրս գալով օդայից, իր մօտ կանչեց մեծ որդուն եւ ասաց, որ ծածուկ գնայ յարդանոցում թագցրած ոսկիներից հարիւր հատ բերէ։

— Ինչի՞ համար է, հարցրեց որդին։

— Դու չե՞ս իմանում, որ անօրէնները եկան, կերան, խմեցին, հիմայ պէտք է մի "դիշքիրասի" էլ տանք, պատասխանեց հայրը տխուր ձայնով։

— Աստուած ձեր քօքը (արմատը) կարէ, անիծածներ, ասաց որդին, եւ կթոցը վեր առնելով, դիմեց դէպի յարդանոցը, որպէս թէ գնում է յարդ բերելու։

«Դիշքիրասի» նշանակում է տասմեների վարձ, մի այսպիսի վարձ ստանում էին քրդերը մի ժամանակ, երբ շնորհ էին անում հայի հացը ուտել, կամ նրա տանը հիւր լինել։ Հիւրընկալը պարտաւոր էր վճարել, եթէ չը տար, դուցէ Կենթարկուէր իր հիւրի անդութ դանա-

հարութեանը։ Այժմ թէեւ այդ սովորութիւնը մասամբ վերացել էր, բայց ոսկիներ դարձեալ ստացվում էին, միայն ստանալու եղանակը փոխուել էր եւ աւելի քաղաքավարի ձեւ էր ստացել։

Մինչեւ ծերունու դառնալը, հիւրանոցում քրդերի մէջ անց էր կենում հետեւեալ խօսակցութիւնը.

— Եթէ չը բերէ ծերուկը ոսկիները, ես կը հրամայեմ այս րոպէիս նրա տանը կրակ տան, ասաց բէկը կատաղած կերպով։

— Հարկաւոր չէ, հանգստացնում էր նրան ազգականներից մէկը. — Յաչօն բարի հայ է. հարկաւոր չէ նրան վշտացնել։ Նրա դուռը միշտ բաց է եղել մեր առջեւ, եւ ինչ որ կամեցել ենք, տարել ենք։ Յաչօն լաւ մարդ է, պէտք չէ նրա աղ ու հացը մոռանալ։

Նոյն միջոցին ներս մտաւ ծերունին, եւ ոսկիների քսակը դնելով բէկի առջեւ, ասաց.

— Աստուած է վկայ, որ հոգուս համար էի պահել, որ Երուսաղէմ ուխտ գնամ եւ մուղդուսի դառնամ, բայց ձեր խաթրը չը կոտրեցի, բէկ։

— Սուտ մի խօսիր, քաւոր Յաչօ, շատ ունես, շատ, այդ ես իմանում եմ, պատասխանեց բէկը, վեր առնելով քսակը, եւ առանց համբարելու, իր գրպանը դնելով։

Երեկոյեան զով ժամանակն էր արդէն։ Բէկը հրամայեց ձիաները պատրաստեն, որ ճանապարհ ընկնի։ Սա դուրս եկաւ օդայից եւ բակում տանուտէրի հետ մին էր գալիս, մինչեւ ամեն ինչ կը պատրաստէին։ Նա տեսաւ Ստեփանիկին, որ այծեամի հետ խաղում էր։ Մօտեցաւ նրան։

— Լա՞ւն է, հարցրեց նրանից։

— Լաւն է, բայց այդ մէկ ոտը շները կծել են, վերաւորուել է. — այդ ոչինչ, ես կը բժշկեմ: Խեղճ անասուն, երեւի, ցաւում է, դրա համար ոչինչ չէ ուտում, պատասխանեց պատանին, կապելով այծեամի վէրքը:

— Ստեփանիկ, ես տեսնում եմ, դու անասուններ սիրում ես, դրա համար ես կ'ուղարկեմ քեզ իմ նորահաս քուռակներից մէկը:

— Ձիաներ չեմ սիրում:

— Ապա ի՞նչ ես սիրում:

— Ահա այսպիսի այծեամներ, եղջերուներ, կաքաւներ եմ սիրում:

— Շատ լաւ, դրանից յետոյ իմ որսերից որն կենդանի մնացած կը լինի, քեզ համար կ'ուղարկեմ:

Ծառաները խմացում տուին, թէ ձիաները պատրաստ են:

Բէկը շնորհակալութիւն յայտնելով տանուտէրին, դուրս եկաւ նրա տնից. դրան առջեւ կանգնացրել էին գեղեցիկ նժոյգը: Ինքը Ծերունի Խաչն ձիու սապանգակը բռնելով, նստեցրեց բէկին: Դա պատուի մեծ նշան էր, որով տանուտէրը ցոյց էր տալիս իր ծառայութիւնը դէպի պատուելի հիւրը: Նստելով ձիու վրայ, քուրդ ցեղապետը շարժեց ձեռքի երկայն նիզակը, խաղացրեց ձին, եւ մնաք բարով ասելով տանուտէրին, հեռացաւ: Ծերունին երկար անշարժ կանգնած, նրա ետեւից նայում էր: Նա տեսաւ, թէ որպէս բէկը իր ձին կրկին թռցրեց խրամից, արհամարհելով կամուրջը, որի վրայից անց էին կենում, նրա կարծիքով, թոյլ եւ անշնչ արարածները միայն: Նա տեսաւ, թէ որպէս հեռամուտ եղաւ նա թփերի միջից յայտնուող նապաստակին, եւ արծուի

արագութեամբ նրա ետեւից հասնելով, ցցեց նիզակը խեղճ անասունի կողքին: Այդ բոլորը տեսնում էր նա, մի եւ նոյն ժամանակ նրա գլխում անց էին կենում այսպիսի մտածութիւններ. «Ինչո՞ւ այսպէս է երկրի եւ երկնքի դատաստանը. քուրդը հաց չունի ուտելու, հայը վարում է, ցանում է եւ նրա համար պաշար է պատրաստում... քուրդը գեղեցիկ նժոյգ ընծայ է ստանում, նստում է, զուարճանում է, գետինը դողացնում է իր ոտների տակ, իսկ հայն է տալիս նրա փողը... հայը, որ բացի աւանակից մի ուրիշ անասունի վրայ նստելու իրաւունք չունի„...

Ը.

Նոյն աւուր գիշերային պահուն Ծերունի Խաչի որդիները բոլորը դարձել էին գաշտային աշխատութիւններից: Սրահի մի անկիւնում վառվում էր իւղային ճրագը եւ նրա բեկբեկուող լոյսը տարածում էր իր չորս կողմը աղօտ ճառագայթներ: Տանուտէրը իր որդիների հետ բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը. նրանք լուռ ուտում էին. խօսում էր երբեմն Ծերունի հայրը միայն: Գարնանային թարմ օդը անուշ զովութեամբ թափվում էր սրահի մէջ, եւ հեռուից լսել էր լինում ոչխարների բառաչելու ձայնը, որ դառնում էին արօտից: Թոնրատնում հարսները ընթրիք էին պատրաստում հովիւների եւ մշակների համար: Նրանք դեռ ոչինչ չէին կերել, պէտք է բոլորին կերակրէին, յետոյ իրանք եւս սեղան նստէին աղջիկների հետ: Փոքրիկ մանուկները խաղալուց յոգնած, վաղուց քնած էին, առանց մի բան ուտելու:...

Ընթրիքից յետոյ Ծերունի Խաչի որդիները գնացին իրանց բանին: Նրանք դեռ շատ գործ ունէին կատարելու.

պէտք էր անասուններին նայել, պէտք էր արտը ջրել, որովհետեւ այս գիշեր ջրի հերթը նրանց էր պատկանում. պէտք էր ջրաղացը գնալ ալիւր աղալու համար, մի խօսքով, հաղար ու մէկ գործեր կային:

Սեղանը վեր քաղեցին. Խաչօն դեռ նստած էր, իսկ նրա մեծ որդին, Հայրապետը, որ մնաց հօր մօտ, չիբուխ էր պատրաստում նրա համար: Հօր եւ որդու մէջ տիրում էր խորին լռութիւն: Կարծես այս գիշեր տխրութեան դեւը իր սեւ թեւքերով նստած լինէր այդ խաղաղ ընտանիքի սրտի վրայ:

— Ո՞ւրքան ալիւր տարան քրդերը, հարցրեց հայրը չիբուխը փոքր ինչ ծխելուց յետոյ:

— Ուղիղ տասն եւ երկու բեռն, պատասխանեց որդին վրդովուած ձայնով:

— Ինքը բէկը ախար տասն բեռ խնդրեց:

— Ջուալները իրանց հետ էին բերել, շատ մեծ էին, մինչեւ բերանները լցրին, կարծես, փողը նաղդ էին տուել անիծածները:

— Ո՞ւմ եզներով տարան:

— Մեր եզներով. փառք տուէք Աստծուն, երբ դոնէ եզները կը դարձնեն: Ես վախում եմ, որ եզներին էլ ալիւրի հետ ուտեն:

— Այդպիսի անաղնութիւն չի անի բէկը:

— Քրդին աղնութիւն ո՞վ է տուել: Միթէ քի՞չ է պատահել, որ բեռն էլ տանող անասունի հետ կուլ են տուել: Ես իրաւն ասեմ, այնքան չեմ ցաւում այսօրուայ հարիւր ոսկու համար եւ տասերկու բեռ ալիւրի համար, բայց ինձ այն է նեղացնում, որ ձրի հաց ենք տալիս եւ այդ հացը մեր ձեռքով, մեր անասուններով պէտք է տանենք եւ հասցնենք նրանց տանը, որ վայելեն: Այդ

ինչ Աստուծոյ պատիժ է: Ես չեմ իմանում մինչեւ երբ այդ քրդերը մեզ թալանեն: Գալիս են, տանում են ու տանում են, եւ տարածը յետ չես կարող առնել: Միշտ ուզում են, միշտ ուզում են, ոչ ամօթ ունեն եւ ոչ խղճմտանք: Կարծես, մեզ Աստուած նրանց համար կերակրող է ստեղծել:

— Դու չգի՞ս իմանում, որ այդպէս է, պատասխանեց ծերունին, աւելի թունդ կերպով ծխելով իր չիբուխը, կարծես թէ աշխատում էր նրա ծխով խեղդել սրտի բարկութիւնը: — Ի՞նչ կարող ենք անել, որդի, եթէ մեր կամքով, մեր ձեռքով չը տանք, նրանք զօռով կը տանեն: Այդ էլ լաւ է, որ խնդրելով եւ բարեկամութեան անունով են կողոպտում մեզ:

— Մենք ինքներս ենք սովորցրել նրանց այդ աւազակութիւնը, ասաց որդին. — կարող ենք չը տալ, այն ժամանակ քուրդը ստիպուած կը լինի ինքն ցանել, եւ իր քրտինքով աշխատել իր հացը, բայց մենք սովորեցնում ենք նրանց ծուլութիւն, սովորեցնում ենք մեր հաշուով ապրել:

— Այդ ուղիղ է, պատասխանեց հայրը տխուր ձայնով. — բայց մեզ դժուար է եւ շատ դժուար է միանգամով ոչնչացնել այն, ինչ որ մեր պապերը տնօրինեցին մեզ համար: Մենք քաղում ենք նրանց ցանած յիմարութիւնների դառն պտուղը: Հիմայ լսիր, որդի, ես իմանում եմ, որ քո սրտի մէջ եփ է գալիս ատելութիւնը, ես իմանում եմ, որ սարկութիւնը սասսիկ վշտացնում է քեզ. — բայց դարձեալ հարցնում եմ, ի՞նչ ճար կայ, ի՞նչ կարող ենք անել: Եթէ ինչ որ ուզում են, չը տանք, կը թշնամանան մեզ հետ. մէկ էլ տեսար, ոչխարների ամբողջ հօտը սարից յոխշտակեցին, տարան: Ո՞ւմը կարող ենք գանգատուել. ո՞վ կը լսէ մեր ձայնը: Այն

մարդիկը, որ նշանակուել են չարութիւնը բառնալու եւ արդարութիւնը պաշտպանելու համար, բոլորը աւազակներ են, սկսեալ վալիից, փաշայից, մինչեւ վերջին մուդիրը եւ դայմագամը։ Մի աւազակ մի ուրիշ աւազակի հետ քոյր եւ եղբայրներ են, եւ ինչպէս ասում են՝ "շունը շնից, երկուսն էլ մի անից"։ Դու ինքդ քո աչքով տեսար, որ Արզրումի վալին, փոխանակ շղթաներ ուղարկելու, որ մի այսպիսի երեւելի աւազակապետին, որպէս Փաթթահ-բէկն է, տանեն եւ խեղդեն, — փոխանակ այդ անելու, նրա համար մի գեղեցիկ ձի ընծայ է ուղարկում, մի եղեռնագործի համար, որ մեր ամբողջ դաւառը լցրել է արիւնով եւ արտասուքով։ Երբ որ վալին, երկրի նահանգապետը այսպէս է վարվում, էլ ո՞վ է մնում որ մենք յայտնենք նրան մեր սրտի ցաւը. — մնում է միայն Աստուած, բայց Աստուած էլ մեր ձայնը չէ լսում, երեւի, շատ են մեր մեղքերը...

Որդին ոչինչ չը պատասխանեց, հայրը շարունակեց.

— Մենք հայ ենք. Աստուծոյ անէծքը գրած է մեր ճակատի վրայ. մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք։ Անմիաբանութիւնը, երկպառակութիւնը, նախանձը, թշնամութիւնը եւ հաղար ու մէկ այս տեսակ չարութիւններ շատ ժամանակներից բոյն են դրել մեր հոգու մէջ, — եւ մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը։ Քուրդը մեղաւոր չէ։ Եթէ մեր մէջ միութիւն լինէր, եթէ մեր մէջ սիրտ լինէր, քուրդը, յիմար եւ ծոյլ քուրդը ի՞նչ կարող էր անել։

Նա հրամայեց կրկին վառել չիբուխը, եւ որդին կատարելով հօր ցանկութիւնը, խօսեց.

— Մենք վեց եղբայրներ ենք, հայր, եթէ դու այսօր մի ակնարկութիւն արած լինէիր, մեր վեցը բաւական կը լինէր արտաքսելու մեր տնից Փաթթահ-բէկի մօտ երեսուն ձիաւորներին, եւ նրանք միւս անգամ չէին համարձակուի այսպէս լրբութեամբ ոտք կոխել մեր շէմքի վրայ։

— Այդ ես իմանում եմ, որդի, բայց ի՞նչ շահ։ Դուք կը կռուէիք նրանց հետ, գուցէ մէկին, երկուսին, շատերին կը սպանէիք, բայց էգուց քրդերի ամբողջ ցեղը կը թափուէր մեր տան վրայ, եւ մեղ մեր տան հողի հետ հաւասար կ'անէին։ Ո՞ր հայը կը դար մեղ պաշտպանելու։ Ոչ ոք։ Կարելի է շատերը կ'ուրախանային։ Այդպէս է հայը։ Բայց քուրդը այդպէս չէ։ Եթէ մի ցեղից մէկին սպանում ես, ամբողջ ցեղը վրէժխնդիր է լինում նրա արեան համար, որովհետեւ քրդերի մէջ միութիւն կայ. ցեղի մէկ անդամի արիւնը ամբողջ ցեղին է պատկանում, կարծես թէ բոլորը մի ընտանիքի զաւակներ լինէին։ Բայց մեր մէջ կա՞յ այսպիսի միութիւն։ Ամեն մարդ իր գլխի դարդն է քաշում, ամեն մարդ իր անձի համար է մտածում. ուրիշին ինչ լինում է, թող լինի. նրան ինչ հոգ, երբ ինքը հանգիստ է, երբ իր մաղին չեն դիպչում։ Բայց չեն իմանում տխմարները, որ "մէկը ամենի համար է, իսկ ամենը մէկի համար"։

Ծերունի Խաչօն կարդացած մարդ չէր, բայց կեանքը, փորձը, աշխարհը շատ բաներ սովորեցրել էին նրան։ Բնական խելքը զարգացել էր կեանքի փոթորիկների մէջ, այս պատճառով նրա դատողութիւնների մէջ երբեմն դտնվում էին այնպիսի ճշմարտութիւններ, որ միայն կարող էին մատչելի լինել այն տեսակ անձերի, որոնք շատ խորին կերպով իմաստասիրել էին մարդկային կենցաղավարութեան պայմանները։ Նա խօսեց.

— Հանգամանքները մեղ այնպիսի դրութեան մէջ են դրել, որ ուրիշ կերպ ղլուխ պահել չենք կարող.

ստիպուած ենք աշխատել, վաստակել եւ մեր աշխատանքով մեր թշնամուն կերակրել։ Ուրիշ ճար չը կայ։ Մենք պէտք է բարեկամութիւն պահպանենք մեզ կողոպտողի հետ։ Փաթթահ-բէկը, իրաւ է, մեզ կողոպտում է, բայց դարձեալ չենք կարող մերժել նրա բարեկամութիւնը, որքան էլ կեղծ լինէր։

— Ինչո՞ւ, հարցրեց որդին։

— Նրա համար որ, մեծ աւազակի հետ բարեկամ լինելով, մարդ ազատվում է փոքր աւազակների ձեռքից։ Դրանք բոլորն միմեանց հետ կապուած են։ Հիմայ օտար քրդերը գիտենալով, որ Փաթթահ-բէկը մեզ հետ լաւ է, էլ մեր ոչխարներին, անասուններին եւ վարուցանքին չեն դիպչում, եւ եթէ մի բան գողանում են, նա գտնում է եւ յետ է դարձնում մեզ։

— Դրանից ինչ շահ. հաշիւը մի եւ նոյնն է դուրս գալիս, պատասխանեց որդին, — Փաթթահ-բէկը մեզ "մի ձու է տալիս, բայց փոխարէնը մի ձի է ստանում"։ Նա չէ թողնում, որ մի ուրիշ քուրդ մեր ոչխարը գողանայ, բայց ինքը, հարկաւորած ժամանակ, հարիւրներով ոսկիներ է առնում մեզանից։ Մենք նրա կաթնատու կովն ենք, պահում է, պաշտպանում է նրա համար միայն, որ ինքը վայելէ մեր կաթը։

— Այդ բոլորը ճշմարիտ է, որդի, ես հասկանում եմ, պատասխանեց հայրը. — բայց պէտք է այն եւս հասկանալ, որ հայը մեր պապերից շատ առաջ սովորել է այդ կերպով իր գլուխը պահել։ Ես, ի հարկէ, չեմ կարդացել, թէ ինչ է գրուած գրքերի մէջ, բայց մի ժամանակ Ուէքիլեանցի վանքում կար մի վարդապետ, նա ինձ պատմում էր, թէ ամեն ժամանակ, երբ մեր երկրի վրայ յարձակուել են թշնամիներ, հայերը փոխանակ սրով

եւ կրակով դուրս գալու նրանց առջեւ, հանդիպել են թշնամուն թանգագին ընծաներով՝ — մատուցարանների մէջ լցրած ոսկիներով։ Նրանք մեզ սովորեցրին փոխանակ պատժելու, կաշառել մեր թշնամիներին։ Նրանք սովորեցրին կայքը տալ գլուխը ազատելու համար։

— Բայց պէտք չէ, որ մենք պապերի սխալը շարունակենք մինչեւ յաւիտեան, կտրեց որդին հօր խօսքը։

— Հին սխալը միանգամով ուղղել շատ դժուարին է. նա կատարուել է հարիւրաւոր տարիների ընթացքում, եւ այսքան տարիներ պէտք են նրան ուղղելու համար։ Եկ դու ժողովրդին հասկացրու, թէ թշնամու հետ այլ կերպ կարելի է վարուել, թէ նա էլ մեզ նման մարդ է, թէ նրա մարմինը երկաթից շինուած չէ, թէ երբ նա զէնքերով գալիս է մեզ կողոպտելու, կարելի է զէնքով պատասխանել նրան. — վերջապէս հազար ու մէկ այս տեսակ քարոզներ կարդա, դու կարծում ես ժողովուրդը կը հասկանա՞յ քեզ։ Նա քեզ խենթի տեղ կը դնէ եւ կը ծիծաղէ քո յիմարութիւնների վրայ։ Բայց այս հասկացողութիւնը նրա մէջ նոր բան չէ, նա ժառանգել է իր պապերից։

Որդին չը պատասխանեց, նա գտնում էր հօր խօսքերի մէջ մի ճշմարտութիւն, որ անհերքելի էր։ Բայց մի եւ նոյն ժամանակ մտածում էր, միթէ չէ՞ կարելի փոխել ժողովրդի նախապաշարմունքը։ Այս պատճառով հարցրեց նա.

— Լաւ, դիցուք թէ մեր պապերը այս ճանապարհով են գնացել եւ մենք էլ հետեւում ենք նրանց օրինակին։ Բայց պէտք չէ՞ փոխել ճանապարհը, երբ տեսնում ենք, որ նա տանում է դէպի կորուստ։ Պէտք չէ՞ հասկացնել ժողովրդին, որ նա մոլորուած է։

— Հարկաւոր է, բայց ո՞վ պէտք է հասկացնէ։ Այդ պէտք է անեն այն մարդիկը, որոնք ընդունել են իրանց վրայ ժողովրդին խրատելու, ճանապարհ ցոյց տալու եւ բան հասկացնելու պարտաւորութիւնը։ Այդ պէտք է անեն մեր տէրտէրները, վարդապետները, բայց նրանք քարոզում են. «եթէ աջ երեսիդ խփելու լինեն, ձախն էլ դարձրու»։ Այդ պէտք է անեն մեր որդիների վարժապետները, բայց մեր ամբողջ գաւառում մի հատ օրինաւոր վարժապետ չը կայ։

— Այդ խօսքերի մէջ քեզ հետ չեմ կարող համաձայնուել, հայր, ասաց որդին, — ապա ինչո՞ւ քուրդը, որ ո՛չ տէրտէր ունի, ո՛չ վարդապետ ունի եւ ո՛չ էլ վարժապետ ունի, բայց իմանում է, թէ մարդը ինչպէս պէտք է վարուի իր նմանների հետ։ Ո՞վ սովորեցրեց նրան, թէ մարդը առանց ղէնքի կոյր հաւի նման է լինում, ով հասնի, գլխին կը տայ։

— Քուրդը տէրտէր, վարդապետ եւ վարժապետ չունի, բայց շէյխ ունի, նրա շէյխը, թէեւ հոգեւոր դրուխ է, բայց ինքն է ղէնք կրում, եւ իր ժողովրդի հետ միասին գնում է յափշտակելու անզէն մարդերի հարստութիւնը։ Նա երբէք չէ քարոզում, թէ այդ բաները մեղք են։ Բայց ի՞նչ են քարոզում մեր տէրտէրները...

Որդին լուռ էր։ Հայրը շարունակեց.

— Այդ բոլոր անբախտութիւնների մէջ մի մխիթարութիւն կայ, այն է, որ որքան էլ դողանում են մեզանից, որքան էլ յափշտակում են, դարձեալ մեր ամբարները լիքն են մնում, բայց քուրդը ուտելու հաց չէ գտնում։

— Գիտէ՞ք, հայր, այն առածը, թէ «գողը իր համար տուն չի կարող շինել, բայց տուն ունեցողի տունը

կը քանդի»։ Քուրդը թէեւ չէ վարում, չէ ցանում, չէ հնձում, իր տանը հաց չէ գտնում, միշտ քաղցած է մնում, — բայց աշխատող հայի հացը ձեռքիցը խլելով, նրան էլ իր նման քաղցած է թողնում։ Դու մեր տունը օրինակ մի բեր, հայր, մտածիր, թէ որքան հայեր կան, որոնք քրդերի պատճառով աղքատ են եւ ուտելու հաց չունեն։

— Այդ իրաւ է, որդի, բայց մի ուրիշ բան էլ կայ, այն էլ պէտք է գիտենալ։ Դու տեսնո՞ւմ ես ոչխարներին, այսքան մորթում են, այսքան փչացնում են, բայց դարձեալ նրանք աճում են, բազմանում են եւ ահագին հօտեր են կազմում։ Իսկ գայլը, թէեւ կեղեքում է, ուտում է ոչխարներին, բայց միշտ քաղցած է մնում, եւ երբէք չէ բազմանում։ Դու տեսնէ՞լ ես գայլերից մի հօտ։ Գայլը գազան է, այսօր յափշտակեց մի ոչխար, կերաւ, կշտացաւ, էգուց չը գիտէ, թէ ինչով պէտք է կերակրուի։ Նա պէտք է միշտ որսայ, բայց որսը ամեն անգամ չէ պատահում։ Որսով ապրողը մի օր կուշտ է լինում, միւս օրը քաղցած։ Քուրդը — գայլ է, իսկ մենք — ոչխար։

Այսպէս էր բացատրում ծերունին իր լեզուով այն բանը, որ գիտնականների լեզուում կոչվում է «կուլտուրական խաղաղ, անարիւն մրցութիւն»...

Որդին պատասխանեց նրան.

— Ես կարծում եմ, հայր, եթէ ոչխարները հովիւներ եւ պահպանողներ չունենային, այսօր գայլերը ոչ մի ոչխար չէին թողնի աշխարհում, եւ դժուար կը լիներ ոչխարներին հօտեր կազմել։ Մենք, իրաւ է, ոչխարներ ենք, բայց առանց հովիւի։ Երբ մեր վիճակը այդպէս է, մնում է մէկ բան միայն գայլերից ազատուելու համար, — որ մենք էլ գայլերի նման ատամներ եւ ճանկեր ունենանք...

Թ.

Արզրումից դէպի Բայազէդ տանող ճանապարհի մի կողմում, որ միակ քարվանի ճանապարհն է Տրապիզոնից Պարսկաստան, մի ձորի մէջ զետեղուած էին քրդերի մի առանձին ցեղի չադրները։ Չադրների բազմութիւնից, որ ծածկել էին մի դեղեցիկ, կանաչազարդ դաշտի մեծ մասը, կարելի էր նախագուշակել ցեղի քանակութեան մեծ թիւը։ Ձիաների երամակներ, ոչխարների հօտեր, կովերի նախիրներ, սիրուած շրջակայ լեռների վրայ, ցոյց էին տալիս, որ այդ հովիւ ժողովուրդը վայելում էր հարստութեան հետ եւ բարօրութիւն։

Վերադառնալով Ծերունի Խաչօի տնից, բոլորովին մութն էր, երբ Փաթթահ-բէկը իր խումբով հասաւ յիշեալ չադրներին, որոնց մէջ բնակուող ցեղի պետը եւ գլուխն էր ինքը։ Մի քանի վրանների առջեւ դեռ վառվում էին գիշերային խարոյկները կամ տաքացնելու եւ կերակուր պատրաստելու համար, եւ սիրում էին իրանց շուրջը դեղեցիկ լուսաւորութիւն։ Երբ բէկի խումբը մօտեցաւ, շները բարձրացրին մի խառնաձայն աղաղակ, եւ ամեն կողմից լսելի եղան գիշերապահ հովիւների խորհրդաւոր ձայները, որով իմացում էին տալիս միմեանց, թէ ձիաւորներ են մօտենում։ Բէկի խումբի միջից պատասխանեցին նոյն տեսակ ձայներով. հովիւները հասկացան միմեանց, եւ այժմ առանց տեսնելու գիտէին, թէ եկողները ովքեր են։ Բէկը իր ձին քշեց ուղիղ դէպի այն վրանը, որ պատրաստուած էր վալեից ընծայ բերող հիւրի համար։ Դա մի թուրք աստիճանաւոր էր, հասակն առած, փորձուած եւ մխուած ամեն տեսակ խարդախութիւնների մէջ։ Նա մի ժամանակ Վանի կողմերում մուդիրի պաշտօն

է վարել եւ փոխուած է եղել չափազանց կաշառակերութեան համար։

— Դուք ինձ բաւական սպասել տուեցիք, բէկ, ասաց մուդիրը տեղից վեր կենալով, երբ բէկը մտաւ նրա վրանի մէջ, — ես միտք ունէի այս երեկոյ ինձք բարով ասել ձեզ։

— Շէյխի գլուխը վկայ, որ դուք շատ անհամբեր մարդ էք, պատասխանեց բէկը ծիծաղելով, — ես զարմանում եմ, թէ դուք ինչպէս էք ինն ամիս համբերել ձեր մօր արգանդում։ Մենք դեռ չենք կշտացել մէկ մէկուց. ինչո՞ւ էք շտապում. չը լինի՞ թէ իմ վրանը ձանձրացրեց ձեզ։

— Ամենեւին ոչ. ինձ շատ քաղցր է ձեր հիւրասիրութիւնը. եթէ ինձ մի օր դրախտը տանէին (որի վրայ մեծ յոյս չունեմ), ես կը ցանկանայի, որ այդ ձեր վրանը լինէր։ Այսուամենայնիւ, ես կը խնդրէի, որ առաւօտեան ինձ ճանապարհ դնէիք։

— Լաւ, լաւ, օսմանլիի խոսքը ես իմանում եմ. սոլորել են հոտած քաղաքներում, փափուկ բարձերի վրայ առաւօտից մինչեւ իրիկուն ձգուել, նարգիլէ ծխել եւ ղահվէ խմել։ Բայց այդ անապատի մէջ ի՞նչ կայ։ Իրաւն ասում, ես ինքս եմ մեղաւոր. ես չը կարողացայ ձեզ զբաղեցնել, որպէս հարկն էր։ Ի՞նչ անեմ, որսորդութիւն չէք սիրում, ձիով մեն դալ չէք սիրում, իսկ մեր սարերում ուրիշ զուարճութիւններ չը կան։

Մուդիրը կրկին գործ դնելով իր թուրքական կոմպլիմենտները, պատասխանեց.

— Ձեր դէմքի լոյսը ինձ համար ամեն զուարճութիւններից բարձր է, ես ինձ միշտ երջանիկ կը համարեմ, որ արժանացայ ձեր տեսութեանը։ Բայց մոռացեցէք, բէկ,

որ ձեր ծառան անկախ մարդ չէ, նրա ժամանակը իրան չէ պատկանում։ Վալին ժամանակ նշանակեց որ տասն օրից աւել չուշանամ։

— Ես կը գրեմ Վալիին, որ ինքս ուշացրի ձեզ. դուք խօ խմանում էք, թէ նա որքան պատուում է իմ խօսքը։

— Այդ ես խմանում եմ, Վալին ձեզ իր երկու աչքերի հետ չի փոխի. ձեր խօսքը նրա մօտ մարգարիտի գին ունի։ Նա ամենի մօտ ասում է, թէ սուլթանը Փաթթահ-բէկի նման քաջ եւ հաւատարիմ ցեղապետ չունի, եւ այդ պատճառով առաջարկել է ձեզ համար մաջիդէի առաջին կարգի շքանշանը։

Բէկը արհամարհական ժպիտ գործեց իր այրական դէմքի վրայ եւ պատասխանեց.

— Ես այդ շքանշան ասած բաները չեմ սիրում, կնիկների զարդարանք են, եւ աւելի ոչինչ։

— Ապա ի՞նչ էք սիրում։

— Ես սիրում եմ ոսկի մաջիդանե՛ր[1]։

— Այդ էլ կը լինի, բէկ, Վալին մեծ շնորհ ունի ձեզ վրայ։ Տեսնո՞ւք, նա նշանակել տուեց ձեզ համար ռոճիկ, որ այժմ ստանում էք արքունի գանձից, որպէս սահմանապահ եւ այս կողմերում խաղաղութիւն պահպանող։ Նա ընդունեց ձեր խնդիրքը, որով ցանկանում էիք, որ այս կողմերում ոչ մի մուդիր եւ գայմագամ չը լինի, այլ բոլոր վարչութիւնները յանձնուեն ձեր կառավարութեանը։ Վերջապէս ինչ որ պահանջել էք, կատարել է նա, եւ մի անգամ եւս ձեր խօսքը գետին չէ ձգել։

[1] Մաջիդիայ եւ շքանշանի եւ դրամի անուն է։

— Ես շնորհակալ եմ Վալիից։

Այդ խօսակցութեան միջոցին բէկի ծառաները վրանի շուրջը պատած, եւ գետնի վրայ նստոտած, զուարճանում էին բոլորովին այլ տեսակ խօսակցութիւններով։ Իւրաքանչիւրը պատմում էր իր կատարած քաջագործութիւնները, թէ քանի մարդ է սպանել, որքան աւազակութիւններ է արել եւ որքան կնիկներ է փախցրել եւ այլն։

— Օսմանը իր գլխի մազերի համբարքով ոչխար է գողացել, ասում էր Օմարը։

— Իսկ դու, Օմար, շատ բարի պտուղ չես, պատասխանում էր նրան Օսմանը, — ես որքան ոչխարներ եմ գողացել, դու այնքան հայի աղջիկներ ես փախցրել։

— Շաբանը հայի աղջիկներ չէ սիրում, ասում է շուտով լաց են լինում, մէջ մտաւ մի ուրիշը։

— Այդ սուտ չէ, խօսեց Շաբանը. — այդ քաջերի սիրտը կարծես շուշայից է շինած, հենց որ դիպչում ես, իսկոյն կոտրվում է։ Բայց մերոնք, Աստուած է վկայ, քարէ սիրտ ունեն, գայլի, գաղանի ճանկը գցիր, էլի չեն լաց լինի։ Ես համբերել չեմ կարող, երբ կնիկները լաց են լինում. կարծես, արտասուքը նրանց է տուած։

(Ի՜նչ բարբարոսական զգացմունք, հայ կնոջ արտասուքը բարկացնում է քրդին)։

— Մի ուրիշ բան էլ կայ, նրանց խօսքը կտրեց մի քուրդ, որ հասակով բոլորից ծեր էր. — այդ անհաւատները երբէք ձեռը չեն վեր առնում իրանց անիծած կրօնից։ Ես, դուք գիտէք, որ երեք հատ պահում եմ, ուղեղն ասեմ, խիստ քիչ անգամ ծեծում եմ նրանց, բայց էլի տեսնում եմ, որ թագուն ինչ որ աղօթքներ են անում։ Բայց մի բան լաւ է, որ նրանք եզան չափ գործ են կատարում, մերոնց նման շատ չեն քնում։

— Բայց սիրուն հարսներ ունի տանուտէր Խաչօն, խօսեց մի երիտասարդ քուրդ առանձին ոգեւորութեամբ. — եթէ այդ հայը մեր բէկի քիրվան չը լինէր, ես նրա հարսներից մէկը կը գողանայի։

Ծառաների խօսակցութիւնը ընդհատուեցաւ շների աղաղակով. հեռուից կրկին լսելի եղաւ գիշերապահ հովիւների խորհրդաւոր ձայնը։ Ծառաներից մի քանիսը, զէնքերը առած, վազեցին դէպի այն կողմը, որտեղից բարձրացաւ աղմուկը։ Մօտենալով, խաւարի միջից նրանք լսեցին հառաչանքներ — "ի սէր Աստուծոյ, մեզ տարէք բէկի մօտ, մենք աղաչանք ունինք"... Շները փոքր էր մնացել, որ գըզգէին այդ ողորմելիներին, եթէ ծառաները շուտով հասած չը լինէին։ Գիշերով անհնարին է մտենալ քրդերի օդաներին (օթեւան, իջեւան) առանց վտանգի հանդիպելու, մէկ էլ տեսար գիշերապահի նիզակը ցցուեցաւ կողքիդ մէջ։

Անծանօթները մի քանի հոգի էին, նրանց բերեցին այն վրանի մօտ, որի մէջ բէկը նստած էր հիւրի հետ։ Վրանի առջեւ կախած լապտերների լուսով երեւաց, որ նրանք վաճառականներ էին եւ բեռ տանող չարվադարներ, որոնց մէկի արիւնաշաղախ գլուխը, միւսի թեւքը, երրորդի մարմնի մի այլ մասը, փաթաթած էին, եւ արիւնը դեռ հոսում էր վէրքերից։

Բէկը լսելով դրսի աղմուկը, կանչեց ծառաներից մէկին եւ հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

— Մի քանի վաճառականներ ձեզ մօտ խնդիրք ունին, ասում են, թէ կողոպտեցին մեր քարվանը։

Ցհաճութեան նման մի բան անցաւ բէկի ուրախ դէմքի վրայ. բայց նա ծածկելով իր ներքին վրդովմունքը, հրամայեց կանչել կողոպտուածներին։

— Զարմանալի բան է, դարձաւ նա դէպի մուդիրը, — "իմ հողի" վրայ երբէք այսպիսի անկարգութիւններ չեն պատահել. հիմա ի՞նչպէս է եղել, որ կողոպտել են դրանց քարվանը։

Բէկը, սովորութիւն ունէր իր յեղի բնակած երկրին իր հողը կոչել, թէեւ այնտեղ մի ափ հող անգամ որ եւ իցէ քրդի չէր պատկանում, այլ բոլորը անհաստատաբնակ բոշաների նման թափառում էին մի տեղից միւս տեղ։

— Աւազակութիւններ ամեն տեղ պատահում են, պատասխանեց մուդիրը հանդարտութեամբ, — երկիրը առանց աւազակի չէ լինում։ Երկնքի մէջ էլ յայտնուեցան սատանաներ։ Արզրումի մէջ օր չէր անցնում, որ վալիի մօտ գանգատաւորներ չը գային։

Բէկը, խրախուսուելով մուդիրի շողոքորթութիւններից, ասաց. — Հաւատացէք, մուդիր, շէյխի գլուխը վկայ լինի, որ ես այս կողմերը այնպէս եմ պահում, որ երկնքի թռչունն էլ հանգիստ չէ կարողանում "իմ հողի" վրայով անցկենալ։ Զարմանում եմ, ո՞ր սատանան պէտք է կողոպտած լինի այդ խեղճերին։

Յայտնուեցան վերաւորուած եւ արիւնաշաղախ վաճառականները։ Նրանցից մէկը, որ փոքր ինչ առողջ էր, առաջացաւ եւ խօսեց.

— Ձեր ոտքերի փոշին համբուրելու ենք եկել, բէկ, վերեւում Աստուն ենք ճանաչում, ներքեւում ձեզ. մարգարէի սիրոյ համար, օգնեցէք մեզ. խեղճ վաճառականներ ենք. մեր քարվանը կողոպտեցին, մեր ընկերներից շատերին սպանեցին, մնացածներին ձեր բարի աչքերի առջեւ տեսնում էք, վիրաւորուած են, շատ չեն ապրի։ Ամենը, ինչ որ ունէինք, տարան ոչինչ չը թողեցին։

Վիրաւորուածները, չը կարողանալով իրանց ոտքի վրայ պահել, նստեցին վրանի առջեւ, առողջները կանգնած մնացին։

— Որտեղ կողոպտեցին ձեզ, հարցրեց բէկը։

— Այստեղ, այստեղից ոչ այնքան հեռու լեռների մէջ կողոպտեցին մեզ. մեր քարվանը դուրս բերեցին ճանապարհից, քշեցին մի խուլ ձորի մէջ, այնտեղ մեզ բոլորին կողոպտեցին եւ ձգեցին մի փոսի մէջ, յետոյ սկսեցին հակերը ցրուել, ինչ որ լաւ բան կար, բոլորը տարան։

— Օրուայ որ ժամն էր։

— Կէսօրին մօտ էր։ Մենք մինչեւ իրիկուն կապուած մնացինք այն փոսի մէջ։ Աստուծոյ ողորմութիւնը հասաւ, մեզանից մէկը քանդեց իր կապերը եւ մեր կապերն էլ արձակեց. թէ չէ պէտք է մնայինք այն փոսի մէջ, եւ սովից մեռնելով, գազանների կերակուր դառնայինք։

— Դուք որտեղացի էք, քարվանը որտեղից էր գալիս եւ ո՞ւր էր գնում, շարունակեց բէկը իր հարց ու փորձը։

— Ձեր ծառաները պարսկաստանցի վաճառականներ են. քարվանը բեռները ընդունեց Տրապիզոնում, որ Պոլսից նաւով էին բերուած. անցանք Արզրումից մինչեւ այստեղ անվտանգ, եւ պէտք է շարունակէինք մեր ճանապարհը, եւ Բայազէդից Պարսկաստան գնայինք, բայց այստեղ այս դժբախտութիւնը պատահեց մեզ։ Մեր քարվանը բեռնաւորած էր ամենաթանգագին ապրանքներով, բայց ոչինչ չը թողեցին, ինչ որ տանելու էին, տարան, մնացածը այրեցին։

— Շէյխի գլուխը վկայ լինի, որ այսպիսի բարբարոսութիւն ես առաջին անգամն եմ տեսնում, դարձաւ բէկը դէպի մուդիրը, որ հետաքրքրութեամբ լսում էր վաճառականների պատմութիւնը։

Դուք կարողացաք ճանաչել աւազակներին, հարցրեց մուդիրը ինքն եւս հարցուփորձի մէջ մտնելով։

— Ի՞նչպէս ճանաչէինք, պատասխանեց խօսող վաճառականը. — բոլոր աւազակների երեսները կապած էին, միայն աչքերներն էին երեւում։ Եւ երբ մեզ բռնեցին, մեր աչքերն էլ կապեցին, յետոյ սկսեցին ապրանքները բաց անել։ Բայց այսքանը տեսանք, որ քրդեր էին։

— Քանի՞ հոգի կը լինէին, դարձեալ հարցրեց մուդիրը։

— Յիսունի չափ։

— Դէպի որ կողմը գնացին։

— Մենք տեսնել չը կարողացանք, ասացի, որ մեր բոլորի աչքերը կապած էին, եւ մեզ ձգել էին մի փոսի մէջ, ձեռներից եւ ոտներից նոյնպէս կապուած։

— Բաւական է, մէջ մտաւ բարկութեամբ բէկը ընդմիջելով մուդիրի հարցուփորձը, — ես բոլորը հասկացայ։

Յետոյ նա դարձաւ դէպի վաճառականները.

— Հիմայ գնացէք եւ հանգստացէք, եթէ աւազակները մեր կողմերի քրդերից լինեն, ես անպատճառ կ'աշխատեմ գտնել նրանց եւ ձեր մի չօփը (շիւղը) չի կորչի։ Իսկ եթէ ուրիշ կողմերից եկած լինեն, այն եւս կարող եմ ցոյց տալ. դուք անհոգ կացէք, ես չեմ ներում որ "իմ հողի" վրայ անիրաւութիւններ գործուեն։

Վաճառականները գլուխ տուեցին բէկին, եւ սկսեցին օրհնել բէկի կեանքը։

— Կրպօ, դարձաւ նա իր ծառաներից մէկին, — տար այդ մարդերին քո վրանը եւ պատուիր, որպէս արժան է պատուել Աստուծոյ հիւրերին. շուտով կանչիր բժշկին,

որ դրանց վէրքերը դարմանէ. քեզ եմ յանձնում, եթէ գանգատուելու լինեն, ձեռքիցս չես պրծնի:

Վաճառականները կրկին օրհնեցին բէկի կեանքը, կրկին գլուխ տուեցին եւ հեռացան:

Նրանց հեռանալուց յետոյ բէկը դարձաւ դէպի իր հիւրը այս խօսքերով.

— Տեսնում էք պատուելի մուդիր, ահա այսպիսի դէպքեր են պատահում, եկ դու հիմա իմացիր, թէ ո՞ր սատանան է տարել դրանց ապրանքները: Ես հաւատացած եմ, որ աւազակները մեր կողմերի քրդերից չեն լինելու: Ես սաստիկ պատժում եմ աւազակներին. իմ երկիւղից ոչ ոք չի համարձակուի այսպիսի բան անել. բայց գալիս են զանազան տեղերից, շատ անգամ Պարսկաստանից, եւ մեր կողմերում աւազակութիւն են անում: Ո՞վ կարող է ճանաչել, երբ պարսիկը քրդի հագուստ է հագնում: Այդ շատ անգամ պատահում է եւ մեզ գլխացաւանք է պատճառում: Այսուամենայնիւ, ես պէտք է աշխատեմ. գուցէ ինձ կը յաջողի բռնել տալ աւազակներին: — Ահմէ, դարձաւ նա իր հօրեղբօր որդուն, որ ամբողջ ժամանակը այնտեղ լուռ նստած էր. — այս րոպէիս կը վերառնես քեզ հետ քսան ձիաւոր մեր քաջերից, նախ քարվանի կողոպտուած տեղը կը գնաս, աւազակների հետքերը կը հետաքննես, եւ շրջակայ հովիւներից հարցուփորձներ կ'անես, մի խօսքով ամէն հնարք դործ կը դնես գտնելու չարագործներին. քեզ խրատներ պէտք չեն, դու այդ բաները լաւ ես իմանում: Ես չեմ ների, որ "իմ հողի" վրայ մարդիկ կողոպտէին. դա իմ անուանը պակասութիւն է բերում:

Ահմէն գլխով ճանապարհ ընկաւ կատարելու բէկի հրամանները:

— Ահմէն հոտառութիւն ունի, եթէ աւազակները շատ հեռու գնացած չը լինեն, անպատճառ կը գտնի, խօսեց բէկը:

— Երեւում է... պատասխանեց մուդիրը խորհրդաւոր ձայնով:

Արդէն գիշերից բաւական անցել էր. բէկը հրամայեց ընթրիք տան, կերան, խմեցին, յետոյ բարի գիշեր եւ հանգստութիւն մաղթելով իր հիւրին, նա իսկ ինքը գնաց իր վրանը քնելու:

Բայց մուդիրը երկար անքուն մնաց եւ ինչ որ բանի վրայ մտածում էր...

Ժ.

Բէկի անձնական վրանը բաղկացած էր երկու մասներից, որոնցից մէկի մէջ զետեղուած էր նրա կանանոցը, իսկ միւս բաժինը նրա ընդունարանն էր: Վրանի կազմուածքը պարզ էր, որպէս առ հասարակ լինում են խաշնարած քրդերի չադրները. նա կարուած էր ամբողջապէս սեւ կապերտից, որ գործուած էր նրա կնիկների եւ աղախինների ձեռքով:

Բէկը մտաւ ընդունարանը եւ հրամայեց իր հետ եկող ծառային, որ վարագոյրները ցած թողնէ ու գնայ: Այստեղ մենակ նստած, կարծես, մէկին սպասում էր նա: Վրանի առաստաղից քարշ ընկած լապտերը ծխրտում էր աղօտ լուսով: Կանանոցի բաժնից ձայն չէր լսվում, երեւի բոլորը քնած էին:

Յայտնուեցաւ Կրպօն, այսինքն նոյն քուրդը, որին յանձնեց բէկը կողոպտուած վաճառականներին հիւրասիրելու:

— Հանգիստ են քո հիւրերը, հարցրեց բէկը, մի խորհրդաւոր ժպիտով նայելով ծառայի երեսին։

— Իմ բարի տիրոջ շնորհիւ հանգիստ են... պատասխանեց խորամանկ քուրդը, — կերան, խմեցին, օրհնեցին քո կեանքը եւ քնեցին. գուցէ երազի մէջ կը տեսնեն, թէ գտնելու են իրանց ապրանքները...

— «Դժոխքից մեռելը յետ չէ դառնում»... ասաց բէկը հեգնութեամբ, — ո՞րտեղ պահեցիք ապրանքները։

— Մեր գիւղում, կաղ Աբի տանը։

— Լաւ բաներ են։

— Աստուած ոչ մի անգամ այսպիսի թալան չէ ձգել մեր ձեռքը, բէկ, — ոսկի, արծաթ, աբրեշումի եւ շալի գործուածներ, մի խօսքով, ինչ որ ուզես, կը գտնես։

— Ձեզ չը տեսա՞ն գիւղը մտնելու ժամանակը։

— Ո՞վ պիտի տեսնէր, գիւղում մարդ չի մնացել, բոլորը իրանց անասունների հետ գնացել են եայլաղ[1]. մնացել են մի քանի հայի ընտանիքներ, նրանք էլ կոյր հաւի նման, հենց որ մութը պատում է, երկիւղից իրանց խրճիթներից դուրս չեն գալիս, փակվում են, գլուխները դնում, քնում են։

— Ո՞րտեղ պահեցիք ապրանքները։

— Աբի տանը, ասացի, այդ հին գայլի տան մէջ հարիւրաւոր ծակեր կան, մէկի մէջ լցրինք, դռները կողպեցինք։ Սատանան էլ չէ կարող գտնել։ Ահա բալանիները բերել եմ հետս, ասաց նա եւ տուեց բէկին երկու բալանիներ։

— Աբին մեր հաւատարիմն է, վնաս չունի, նկատեց բէկը, — առաջին անգամը չէ, որ նա այսպիսի ծառայութիւններ է անում մեզ։

[1] Եայլաղ նշանակում է անասունները արածեցնելու տեղ, արօտատեղ։

Վերջացնելով իր կարգադրութիւնների պատմութիւնը, Կրպօն սկսեց նկարագրել, թէ որպէս յարձակուեցին քարվանի վրայ, որպէս կողոպտեցին, ով ինչ քաջութիւններ գործեց եւ այլն։

Շատ ապրես, Կրպօ, ես քո քաջութիւնները միշտ գնահատել եմ, պատասխանեց բէկը։ — Երբ այդ անպիտանին կը հեռացնենք այստեղից (խօսքը մուդիրի մասին էր), ես կը բաժանեմ կողոպուտը եւ ձեզանից ամեն մէկը կը ստանայ իր արժանաւոր բաժինը։

Կրպօն գլուխ տուեց եւ ոչինչ չը խօսեց։

— Բայց ինձ տանջում է մի միտք, առաջ տարաւ բէկը ծանրութեամբ, — ես կը ցանկանայի, որ այդ գործը չը կատարուէր, քանի որ այդ մարդը այստեղ էր։

— Մուդիրի՞ համար ես ասում։

— Այո՛, մուդիրի համար։

— Մեծ ցաւ չէ, խօսեց Կրպօն ծիծաղելով, — մենք մուդիր էֆէնդիին այստեղից փառքով եւ ընծաներով ճանապարհ կը դնենք, այնպէս որ, նա շատ գոհ կը գնայ մեր մօտից։ Բայց երկու ձիաւոր ետեւից կ'ուղարկենք, դեռ Արզրում չը հասած, գլուխը կը կտրեն եւ մեր տուած ընծաները յետ կը բերեն։ Եւ մուդիր էֆէնդին էլ չէ կարող գնալ վալիի մօտ, որ պատմէ, թէ ինչ տեսաւ այստեղ։ Լաւ եմ մտածել։

Բէկը խոսքն չը պատասխանեց, նա լուռ մտածում էր։

— Սպանութիւնը, ի հարկէ, կը կատարուի մեր երկրի սահմաններից դրսում, Արզրումի մօտակայքում, աւելացրեց Կրպօն, — այն ժամանակ մեղքը մեզանից հեռու կը լինի, ոչ ոք չէ կարող կասկածել մեր մասին։

— Հարկաւոր չէ, պատասխանեց բէկը բոպէական մտածութիւնից յետոյ, — եթէ վալիին տեղեկութիւն

տան, ես նրան ուրիշ կերպով կը գոհացնեմ եւ նա սուս կը կենայ...

Կրպօն, որպէս թէ մի նոր բան միտը բերելով, ձեռքը տարաւ իր լայն ծոցը եւ այնտեղից դուրս բերեց Թաշկինակի մէջ փաթաթած մի ալծաթէ արկղիկ, որը զարդարած էր գեղեցիկ քանդակներով։ Արկղիկը տուեց բէկին, ասելով.

— Այդ բանը չը թողեցի, որ Աբի տանը մնար, փոքր էր, կարող էր կորչել։

Բէկը բաց արեց արկղիկը, նրա մէջ իրանց պատշաճաւոր տեղերում դարսուած էին զանազան տեսակ կանացի զարդեր, — մատանիներ, ապարանջաններ, մանեակներ — բոլորը ոսկուց եւ զարդարած Թանդագին քարերով։

— Դրա տէրը մի հրէայ էր, ասում էր, որ այդ իրեղէնները Պոլսում շինել է տուել մի պարսիկ իշխանի համար, որը այս ձմեռ պէտք է հարսանիք անէր, — խօսեց Կրպօն ծաղրական կերպով։ — Խեղճ հարսը զրկուեցաւ զարդարանքից։ Հրէան շատ էր ճրվճրվում, որ իրեղէնները նրան յետ տան. ես նրան հանգստացրի, որ ձայնը կտրի։

Հանգստացնելը Կրպօի լեզուում սպանելու նշանակութիւն էլ ունէր։

— Հիմայ կարող ես գնալ, Կրպօ, հրամայեց բէկը, — հիւրերիդ լաւ պատիւ տուր։ Առաւօտեան կը մտածենք, թէ ինչ պէտք է անել։

Աւազակապետը գլուխ տուեց եւ հեռացաւ։

Ընթերցողը նկատեց, որ Կրպօն նոյն իսկ աւազակապետն էր, որ վաճառականների քարվանը կողոպտել էր, իսկ այժմ հիւրասիրում էր նրանց։ Եւ աւազակների այդ խումբը պատկանում էր Փաթթահ-բէկին, որի օգնութեանը եւ պաշտպանութեանը դիմել էին կողոպտուած վաճառականները, որպէս տեղային բարեկարգութեանց վրայ հսկողի եւ սահմանապահի։

Կրպօի հեռանալուց յետոյ բէկը դեռ երկար նստած, զննում էր իր առջեւ դրած գեղեցիկ իրեղէնները։ Նա ինքն էլ չէր հասկանում, թէ ինչո՞ւ այն փայլուն գոհարները այնքան դրաւում էին իրան։ «Ես այս արկղիկը կ'ուղարկեմ Արզրումի վալիին. դրանից յարմար ընծայ չեմ կարող գտնել նրա համար», մտածում էր նա։ Յանկարծ նա իր միտքը փոխեց, կարծես, մի նոր արարած պատկերացաւ նրա յիշողութեան մէջ, որ իր համար այս աշխարհի մէջ ամենից բարձր էր։ «Չէ, չէ, այդ գեղեցիկ մանեակը պէտք է զարդարէ «նրա» սիրուն պարանոցը. այդ Թանդագին ապարանջանները «նրա» հիանալի բազուկներին միայն արժանի են. եւ այդ մատանիների համար են ստեղծուած «նրա» հրաշալի մատները», ասում էր նա խորին զգացմունքով։

Վայրենի մարդը սիրոյ կախարդական ազդեցութեան ներքոյ փոխուել, աղնուացել եւ աւելի հասկրելի էր դարձել։ Գազանները աւելի կատաղում են, երբ սկսում են սիրել, բայց մարդը քնքշանում է, եւ դրանով այժմ բէկը որոշվում էր գազաններից։

— Այդ զարդարանքները «նրա» համար, միայն «նրա» համար պէտք է պահեմ...

Իր յափշտակութեան մէջ նա այն աստիճան մոռացել էր ինքն իրան, որ վերջին խօսքերը բոլորովին լսելի ձայնով արտասանեց, եւ բնաւ չէր նկատում, որ մէկը կանանոցի վարագոյրը բարձրացնելով մօտեցաւ նրան, արձանի պէս լուռ կանգնած, հետաքրքրում էր նրա խորին հոգեվայլութիւնները։ Դա նրա կինն էր, մանկահասակ Խուրշիդը, որ

յայտնի էր իր գեղեցկութիւնով։ Բայց մահը միայն կարող էր լինել այնքան դունաթափ, այնքան զայրացած, որպէս այդ նազելի կինն էր այն րոպէում։ Կարծես, մի չար հրեշտակի նման, կանգնած իր ամուսնի եռեւում, պատրաստվում էր մարմնից դուրս քաշել իր տղամարդի հոգին, երբ նա յետ նայեց, տեսաւ նրան եւ սարսափեցաւ։

Մի քանի րոպէ երկու ամուսինները լուռ նայում էին միմեանց վրայ, որպէս երկու մենամարտողներ, որ կշռում են, թէ դէպի որ կողմը պէտք է ուղղել հարուածը։

Բէկի առջեւ դեռ դրած էր արկղիկը իր փայլուն իրեղէններով։ Կինը մի հարեւանցի հայեացք ձգեց նրանց վրայ եւ անցաւ, նստեց վրանի մի կողմում, բարձի վրայ։ Այդ իրեղէնները, որ ամեն կնոջ կարող էին խելքից հանել, մանաւանդ քրդի կնոջը, որ ամեն պապղուն բանով երեխայի նման հրապուրվում է, — այդ գոհարները այժմ երեւում էին նրան որպէս ապակիի կտորտանքներ, որոնց սուր ծայրերը նշտարի նման ծակում էին նրա սիրտը։

Բէկը նկատելով նրա վրդովմունքը, ասաց.

— Ինչո՞ւ ես բարկացած, քեզ համար էլ բաժին կը հանեմ դրանցից։

— Ինձ համար մի պատան է հարկաւոր, ուրիշ բան չեմ ուզում, պատասխանեց կինը դողդոջուն ձայնով։

Լապտերի աղօտ լոյսը ուղղղ թափվում էր նրա դունաթափ երեսի վրայ, որ իր խռովութեան մէջ աւելի գեղեցիկ էր, որպէս զայրացած հրեշտակի դէմքը։

Ի՞նչ է պատահել, Խուրշիդ, հարցրեց բէկը մեղմ ձայնով։ — Չը լինի՞ թէ վատ երազներ ես տեսել։

— Ես երազներ չեմ տեսել, ես իմ աչքի առջեւ տեսնում եմ, թէ ինչ է կատարվում...

Բէկը չէր կարողանում կասկածել, թէ իր եղեռնական վարմունքը եւ իր ձեռքով կատարուող աւազակութիւնները եւ սարսափելի արիւնհեղութիւնները կարող էին վրդովեցնել իր կնոջ։ Որովհետեւ նա գիտէր եւ համոզուած էր, որ Խուրշիդը, որպէս ամեն մի քրդի կին, նրան հանգստութիւն չէր տայ, եթէ իր ամուսին այրը կը դադարէր աւազակութիւններ գործելուց։ Ուրեմն մի ուրիշ պատճառ պէտք է լինէր, որ գրգռել էր նրա բարկութիւնը։

Խուրշիդը բէկի միակ կինն էր, թէեւ որպէս մահմեդական, նրան արգելուած չէր ունենալ մի քանի կնիկներ, բայց քրդերի սակաւակնութեան սովորութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից՝ կար մի այլ պատճառ, որ նա չը կարողացաւ երկրորդ-երրորդ կնիկներ ունենալ։ Խուրշիդը քրդերի շէյխի աղջիկն էր, մի հզօր մարդու, որի հոգեւոր իշխանութիւնը տարածվում էր բոլոր ցեղերի վրայ, — մի մարդու, որի մի խօսքը բաւական էր ամենանշանաւոր ցեղապետին իր պաշտօնից զրկելու։ Եւ բէկը իր բռնած դիրքով պարտական էր այդ մարդուն, որի միակ փեսան էր։ Աւելացնել շէյխի աղջկայ վրայ մի երկրորդ կին, — դա կը լինէր անպատուութիւն Խուրշիդի աղնուատոհմութեան դէմ։ Ահա այդ մտածութիւնները առաջ եկան բէկի մէջ, երբ նա տեսաւ իր կնոջ տխուր-զայրացած դէմքը։

Բէկը այժմ բոլորովին գործնական եւ աշխարհային կէտից էր նայում իր սիրտը լեցնող զգացմունքի վրայ, բայց նրա հոգեբանական կողմը, կարծես թէ, նա մոռացաւ։ Նա այժմ անհնարին էր համարում իր կնոջ սէրը փոխարինել մի ուրիշ սիրով, որովհետեւ նա շէյխի աղջիկն էր։ Բայց երբ նրա աչքերը կրկին հանդիպեցան

իր առջեւ դրած փայլուն իրեղէններին, կրկին նրա երեւակայութեան մէջ պատկերացաւ այն նաղելի արարածը, որի համար մի քանի բոպէ առաջ պատրաստում էր այդ իրեղէնները։

Նա հասկացաւ կնոջ վրդովմունքի պատճառը։ Այժմ նրա սրտին տիրեց մի եւ նոյն վայրենի կատաղութիւնը, որ յատուկ է գազաններին, երբ նրանք սիրահարուած են լինում։

— Խուրշիդ, ասաց նա զգալի ձայնով, ի՞նչ ես պահանջում ինձանից։

— Ես պահանջում եմ, որ լուծուած լինի մեր քաբինը (ամուսնական կապը), ասաց նա հանդարտ կերպով — ես այսուհետեւ քո կինը չեմ լինելու, առաւօտեան ձի կը նստեմ եւ կը գնամ իմ հօր տունը։

— Ինչո՞ւ համար։

— Ես չեմ ների, որ շէյխի աղջկայ տիկնութիւնը բաժանէր մի պիղծ հայ աղջիկ։

— Ես նրան կը պահեմ որպէս քո աղախին։

— Ես աղախիններ շատ ունեմ։

— Ես նրան սիրում եմ։

— Սիրիր, որքան կ'ուզես, բայց այդ սէրը թանգ կը նստի քեզ...

— Ի՞նչ կ'անես։

— Այդ ես գիտեմ...

— Դու ինձ սպառնալիքնե՞ր ես կարդում, անըզգամ... Ես քեզ այս բոպէում ոտքերիս տակը կը փշրեմ մի կաւէ ամանի նման։

— Մի՛ շարժուիր տեղիցդ. տեսնո՞ւմ ես... ասաց կինը ցոյց տալով ձեռքում բռնած փոքրիկ ատրճանակը։

Այժմ նա ոտքի վրայ էր։

Բէկը սարսափեց։ Նա չէր սպասում մի այսպիսի վճռական քայլ իր կնոջ կողմից։ Մտքերի պատերազմը պահեց նրան բոպէական անշարժութեան մէջ, թէեւ նրա ձեռքը դրած էր գօտիում խրած դաշոյնի վրայ։

Այդ միջոցին կանանոցի բաժնից լսելի եղաւ երեխայի լալու ձայն, որ նոր էր զարթնել քնից։ Դա մի խաղաղական ձայն էր, որ կարծես ամոքեց երկու ամուսինների կատաղութիւնը։ Մայրական սէրը յաղթեց կանացի նախանձին եւ նա շտապեց դէպի լացող մանուկը, ասելով այս խօսքերը.

— Ես դարձեալ վրէժխնդիր կը լինեմ։

ԺԱ.

Տանուտէր Խաչօի ամուսինը իր վերջին զաւակի՝ Սաեփանիկի ծնունդից յետոյ վախճանվեցաւ։ Այնուհետեւ Խաչօն չամուսնացաւ, թէեւ նրա հասակում գիւղացին առանց կնոջ չէ մնում։ Տան կառավարութեան մէջ հանգուցեալի տեղը բռնեց նրա մեծ հարսը՝ Սառան, որ յայտնի էր ամբողջ գիւղում որպէս խելացի եւ լաւ տանտիկին։ Ինքը ծերունին շատ անգամ գիմում էր նրա խորհուրդներին եւ տան բոլոր հարսները հպատակում էին նրա հեղինակութեանը։

Մի առաւօտ, երբ տան մէջ բոլորը զբաղուած էին իրանց սովորական անտեսութիւնով, մի աղախին, որ գնացել էր աղբիւրից ջուր բերելու, կուժը ուսին վերադարձաւ, եւ մօտենալով Սառային, ասաց նրա ականջին. "մի քուրդ տղջիկ դրսումը կանչում է քեզ"։

— Կանչիր այստեղ, ասաց Սառան, — տեսնում ես, գործ ունեմ։

— Ներս չէ գալիս, ասում է շատ հարկաւոր խօսելիք ունեմ, պատասխանեց աղախինը։

Սառան դուրս գնաց. աղջիկը կանգնած էր դրան մօտ։ Դա մի բարձրահասակ աղջիկ էր, ցամաք կազմուածքով եւ թուխ ու գրաւիչ դէմքով։

— Մի քիչ հեռու գնանք, տես, այն ծառերի մօտ, այնտեղ մարդիկ մեզ չեն գալիս, ասաց աղջիկը ձեռքը պարզելով դէպի այն կողմը։

Սառան նայելով անծանօթ աղջկայ վառվռուն աչքերին, նրա սրտում ձգեց մի ակամայ կասկած։ Ինչո՞ւ էր այդ վայրենին տանում նրան այն հեռաւոր ծառերի մօտ, ուր մարդիկ չէին մեզ գալիս։ Ի՞նչ գործ ունէր իր հետ։

— Ներս եկ, ասաց Սառան, բռնելով նրա ձեռքից, — գնանք մեր տունը, եթէ ուզում ես, որ քո խօսքերը ուրիշները չը լսեն, մեր տանը ծածուկ տեղեր շատ կան։

Անծանօթը առանց հակառակելու ընդունեց տանտիկնոջ հրաւէրը. Սառան տարաւ նրան դէպի բակի մի կողմը, որ հովանաւորուած էր ուռենի ծառերով։

— Այստեղ կը նստենք, ասաց նա, — դու երեւի ծառեր շատ ես սիրում։

Երանք նստեցին միմեանց մօտ խոտերի վրայ, որ խիտ կերպով աճել էին ածուի եզրում։

— Հիմայ ասա, իմ սիրունիկ, հարցրեց Սառան մտերմաբար բռնելով աղջկայ ձեռքը, — ի՞նչ ունես ասելու ինձ։

— Ջաւօին ուղարկեց քեզ մօտ Խուրշիդ խանումը. դու խօ ճանաչո՞ւմ ես Խուրշիդին. նա Ջաւօի տիկինն է։ Ջաւօն ամեն օր վառք է տալիս Աստծուն, որ այնպիսի լաւ տիկին ունի։ Եւ Ջաւօին չէ ծեծում ու ամեն

անգամ իր հին շորերը տալիս է, ասում է, հագիր, Ջաւօ, դու լաւ աղջիկ ես։ Բայց ո՞վ կ'ասէ, հին շորեր են. տեսնո՞ւմ ես, բոլորը նոր է, բոլորը տիկինն է տուել։ Մի օր հագել է նա, միւս օրը հին է տիկնոջ համար։

Եւ իրաւ, քուրդ աղջիկը բաւական մաքուր, եւ կարելի է ասել, բաւական շքեղ կերպով էր հագնուած։ Բայց նրա անկապ խօսքերից Սառան ոչինչ չը հասկացաւ։ Նա խօսում էր երրորդ դէմքով։ Այսքանը խմացաւ Սառան, որ աղջկան կոչում են Ջաւօ, որ նա տիկին Խուրշիդի աղախինն է, որին ինքը առաջուց ճանաչում էր, որովհետեւ տիկինը իրանց տան բարեկամ Փաթթահբէկի ամուսինն էր։ Բայց թէ ի՞նչ բանի համար էր ուղարկել տիկինը այդ կիսախելք աղախնին իր մօտ, — ահա այդ հարցը հետաքրքրում էր նրան։ Բայց ծանօթ լինելով գռեհիկ քրդուհիների բնաւորութեանը, Սառան թոյլ տուեց նրան իր ձեւով հաղորդել իր այցելութեան նպատակը։

— Քո անունը Ջաւօ է, հա՞, ի՞նչ սիրուն անուն է։

— Մայրս Ջաւահիր էր կանչում, բայց տիկինը Ջաւօ է կանչում, ասում է, Ջաւահիր շատ երկար է։

— Ես էլ քո տիկնոջ նման կանչեմ. — Ջաւօ աղջիկս, ի՞նչ ասաց տիկինը, երբ քեզ ուղարկեց ինձ մօտ։

Բայց աղախինը միշտ շեղվում էր հարցին ուղղակի պատասխանելուց, երեւի, նրա գլխում այնքան խառնուած էին զանազան տարբեր մտածութիւններ, որ նա չէր կարողանում դասաւորել, եւ չը գիտէր, թէ որը պէտք է առաջ ասել եւ որը յետոյ։ Նա պատասխանեց.

— Ջաւօի տիկինը այս գիշեր կռուեց աղայի հետ։ — Դու այդպէս մի մտիկ տուր, Ջաւօն երեխայ չէ, նա շատ սատանայ է։ — Երբ աղան տիկնոջ հետ կռվում

էր, Ջաւօն վարագոյրի ետեւում թաղնուած բոլորը լսում էր։ Ա՛խ, որքան բարկացած էր տիկինը. իր ծամերը փետում էր, շորերը պատռտում էր։ Ափսո՛ս այն շորեր, Ջաւօն էլ չէ կարող հագնել...

Նկատելով որ թեթեւամիտ աղջիկը հագուստի շատ սէր ունի, Սառան ասաց.

— Ջաւօն խօ կարել իմանում է, կը կարկատէ, յետոյ կը հագնէ։

— Կարել, ի՞նչպէս չէ իմանում։ Տեսնո՞ւմ ես այդ մատները, — նա ցոյց տուեց աջ ձեռքի մատները. — տեսնո՞ւմ ես, ա՛խ, քանի՞ անգամ Ջաւօի մայրը ասելով ծակծկել է այդ մատները ու ասել. "գետինը մտնես, կար սովորիր"։

— Տեսնում եմ, որ շնորհալի աղջիկ ես, հիմայ պատմիր, թէ ինչո՞ւ համար էր կռվում աղան տիկնոջ հետ։

— Աղան ասում էր՝ պէտք է մի նոր կնիկ բերեմ. տիկինը ասում էր՝ չէ՛, չը պիտի բերես. — ես ինձ կը խեղդեմ, ասում էր, երբ նոր կնիկ կը բերես։ — Դա մեղք չէ՞. Խուրշիդի նմանը ո՞րտեղ կայ։ Էլ ի՞նչ պէտք է նոր կնիկը։

Սառայի համար փոքր առ փոքր պարզվում էր մթին հանելուկը։

— Խուրշիդի նմանը ոչ մի տեղ չը կայ, պատասխանեց նա, — բայց դու այն ասա՛, Ջաւօ, ի՞նչ նոր կին է ուզում բերել աղան։

— Ջաւօի տիկինը կը մեռնի, երբ աղան նոր կին կը բերէ, եւ Ջաւօն էլ նրանից յետոյ շատ չի ապրի... ասաց աղախինը եւ նրա աչքերը լցուեցին արտասուքով։

— Ախար ո՞ւմը պէտք է բերէ, կրկին հարցրեց Սառան, հաւերժութիւնը հասանելով։

— Դու այն հարցրու, թէ տիկինը ինչ բանի համար ուղարկեց քեզ մօտ Ջաւօին, այն ժամանակ Ջաւօն քեզ կ'ասէ, թէ ումը կը բերէ։

— Լաւ, ի՞նչ բանի համար ուղարկեց։

— Երբ գիշերը կռուեցին, առաւօտը տիկինը ասաց. Ջաւօ, կը գնաս մեր Խաչօ քիրվայի տունը, Սառային շատ բարեւ կ'անես, քէֆը կը հարցնես ու կ'ասես... (Ա՛խ, ես մոռացայ, որ քո քէֆը հարցնէի)։

— Վնաս չունի։ Ի՞նչ ասաց տիկինը։

— Տիկինը ասաց. Սառային կը կանչես մի ծածուկ տեղ ու կ'ասես... (Դրա համար էի քեզ կանչում այն ծառերի տակը, այնտեղ ծածուկ էր)։

— Այստեղ էլ ծածուկ է, մեզ ոչ ոք չէ լսում։ Ի՞նչ ասաւ տիկինը։

— Տիկինը ասաց, որ դուք Ստեփանիկին շուտով հեռացնէք եւ մի ուրիշ երկիր տանէք։ Թէ որ մարդիկ չունէք, ասաց տիկինը, ես մարդիկ կը տամ, որ տանեն, եւ ուր որ ուզում էք, այնտեղ հասցնեն։ Առաւօտը դեռ չէր լուսացել, այդ խօսքերը ասաց տիկինը։ — Երդուիր, ասաց, Ջաւօ, որ բերնումդ կը պահես եւ ուրիշին չես ասի։ Ջաւօն երդուեցաւ։

Յետոյ աղջիկը պատմեց, թէ տիկինը սպառնացաւ, որ կը սպանէ Ջաւօին, եթէ մի ուրիշ մարդու յայտնելու լինի այդ գաղտնիքը եւ աւելացրեց, թէ ինքը շատ է վախենում տիկնոջից, որովհետեւ նա կարող է սպանել, թէ ինքը իր աչքով էր տեսել, որպէս նա մի օր սպանեց սպասաւորներից մէկին, բայց թէ ի՞նչ բանի համար էր, Ջաւօն այդ չի ասի... Բայց խեղճ Սառան չը լսեց վերջին խօսքերից եւ ոչ մէկը։ Ստեփանիկի անունը լսածին պէս, կարծես, կայծակով նրան հարուածեցին, նա սարսափե-

ցաւ, թուլացաւ եւ ուշաթափ գետին պիտի գլորուէր, եթէ քուրդ աղջկայ գլուխ ձեռքը չը բռնէր նրան։ Միամիտ աղջկան թէեւ անհասկանալի էր ողորմելի կնոջ ցաւալի խռովութիւնը, բայց զդաց, որ շատ դառն էր հաղորդած լուրը, եւ սկսեց մխիթարել նրան։

— Թող Սառան դարդ չանի. Ջաւօի տիկինը քանի կենդանի է, չի թողնի, որ աղան այս անից աղջիկ ասնէ։

— Ի՞նչ աղջիկ, հարցրեց Սառան մի փոքր ուշի դալով. — մեր տանը հասած աղջիկ չը կայ։

— Աղան գիտէ, որ Ստեփանիկը աղջիկ է։

Այդ միջոցին Ստեփանիկը բակում կերակրում էր իր այծեամին, որ մի քանի օր առաջ բէկը ընծայել էր նրան։ Արեւի ճառագայթները ընկել էին պատանու գեղեցիկ դէմքի վրայ, եւ հեռուից նկատվում էր նրա վայելչակազմ հասակը։ Սառան ցոյց տուեց աղախնին, ասելով.

— Տեսնում ես, նա է Ստեփանիկը, լաւ մտիկ տուր, նա աղջիկ է։ Ո՞վ է ասել աղային մի այդպիսի սուտ բան։

— Աղային ասել է ձեր քուրդ աղախիններից մէկը՝ Հիլօ հովեւի կինը։ — Տիկինը ասում էր, ես ապանել կը տամ այն անզգամին։

— Հիլօի կինը սուտ է ասել. նա մեր տնից բան գողացաւ, մենք նրան դուրս արեցինք. դրա համար սուտ է ասել։

Սառան նկատեց, որ Ջաւօն թէեւ միամիտ աղջիկ էր, բայց այնքան յիմար չէր, որքան ինքը կարծում էր, բացի դրանից, տեսնելով նրա անկեղծ հաւատարմութիւնը դէպի իր տիկինը, որ առհասարակ յատուկ է կիսավայրենի աղախիններին, — պատուիրեց նրան մի քանի խօսքեր, խնդրելով, որ հաղորդէ իր տիկնոջը։ Նա

ասաց, որ Ջաւօն իր կողմից փոխադարձապէս ողջունէ տիկնոջը եւ հարցնէ նրա քէֆը։ Նա խնդրեց, որ Ջաւօն յայտնէ տիկնոջը Սառայի շնորհակալութիւնը այն տեղեկութիւնների համար, որ այսօր ստացաւ։ Յետոյ Սառան խնդրեց յայտնել տիկնոջը, որ բոլորովին սխալ է կարծել, թէ Ստեփանիկը աղջիկ է, այսուամենայնիւ, քանի որ տիկինը ցանկանում է, որ Ստեփանիկին հեռացնեն այդ երկրից, նրա կամքը կատարուած կը լինի։ Յետոյ աւելացրեց Սառան, թէ ինքը շատ կը ցանկանար մի անգամ գոնէ տեսնուել տիկնոջ հետ, այդ բաների մասին լաւ խորհրդակցելու համար, եւ խնդրում է, որ տիկինը ինքը կարդադրէ թէ ինչ հնարքով կարող էր կատարուել այդ տեսութիւնը, որ բոլորովին դաղտնի մնար։ Վերջացնելով իր յանձնարարութիւնները, Սառան հարցրեց.

— Ի՞մ խելացի Ջաւօ, կարո՞ղ ես այդ բոլորը առանց մոռանալու հաղորդել տիկնոջը։

— Ջաւօն սուր միտք ունի, Ջաւօն չի մոռանայ, պատասխանեց նա, աշակերտի նման մի առ մի կրկնելով Սառայի ասածները, թէեւ մի քանի սխալներ արեց, թէեւ նախադասութիւնները իր եղանակով յետ ու առաջ դարսեց։

Սառան ուղղեց նրա սխալները եւ Ջաւօն մի քանի անգամ կրկնեց իր դասը։

— Հիմայ Ջաւօն այնպէս է ասում, որպէս Սառան է ասում, խօսեց ինքն իրան աղջիկը։ — Ճանապարհին Ջաւօն միշտ կը կրկնէ Սառայի խօսքերը, որ չը մոռանայ։

— Կարող են ուրիշները լսել, նկատեց Սառան։

— Ջաւօն այնքան անխելք չէ, Ջաւօն մտքում կը խօսի։

Աղջիկը նայեց արեգակին, տեսաւ, որ բաւական թեքել էր դէպի երեկոյեան մուտքը։ Նա վերկացաւ,

ասելով, որ այլ եւս ուշանալ կարող չէ, որովհետեւ բաւական երկար ճանապարհ ունի գնալու մինչեւ աղայի վրանները։

— Սպասիր, Ջաւօ, ես քեզ համար մի բան բերեմ, դու լաւ աղջիկ ես։

Սառան դիմեց դէպի սենեակը։ Այդ միջոցին Ստեփանիկը, որ դեռ եւս իր այծեամով էր զբաղուած, տեսնելով մենակ կանգնած աղջկան, մօտեցաւ նրան։

— Դու գնո՞ւմ ես, հարցրեց նրանից։

— Տեսնո՞ւմ ես արեւը, շուտով կը մթնի, պատասխանեց աղջիկը ձեռքը դէպի երկինք տանելով։

— Դու մեր տունը եկար, բայց մի բան չը կերար, ասաց Ստեփանիկը։

— Ա՛խ, Ջաւօն մոռացաւ, որ քաղցած է. Ջաւօն այսօր ոչինչ չի կերել։

— Ես քեզ համար ուտելու բան կը բերեմ։

Քուրդ աղջիկը յափշտակուելով պատանու բարեսրտութեամբ, գրկեց նրան եւ համբուրեց։ Ստեփանիկը վազեց դէպի տունը եւ բերեց նրա համար լաւաշների մէջ փաթաթած մեղը եւ կարագ։

— Հիմայ նատիր ու կեր։

— Ջաւօն ճանապարհին ուտելով կը գնայ։

Նոյն միջոցին յայտնուեցաւ Սառան, բերելով իր հետ մի գեղեցիկ մետաքսեայ քող կարմիր գունով, որ կազմում էր քուրդ կնոջ գլխի ամենաթանգագին զարդը։ Ջաւօն տեսնելով, ուրախութիւնից մոռացաւ ամեն քաղաքավարութիւն, եւ երեխայի նման վրապրծնելով, խլեց Սառայի ձեռքից գեղեցիկ քողը։ Նա սկսեց նոյն լոպէում նրանով փաթթել իր գեղեցիկ գլուխը, եւ որպէս հայելու մէջ նայելով, դարձաւ դէպի Սառան ու Ստեփանիկը, հարցրեց.

— Հիմայ սիրո՞ւն է Ջաւօն։

— Սիրուն է, պատասխանեցին Սառան եւ Ստեփանիկը։

— Դէ՛, համբուրեցէ՛ք Ջաւօին։

Սառան գրկեց եւ համբուրեց նրան։

— Դուն էլ, Ստեփանիկ։

Ստեփանիկն էլ հետեւեց Սառայի օրինակին։

— Հիմայ Ջաւօն էլ ձեզ կը համբուրէ։

Պարզամիտ քուրդ աղջիկը իր անկեղծ համբոյրները մատուցանելէն յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի բէկի վրանները։

ԺԲ.

Ջաւօին ճանապարհ դնելուց յետոյ, Սառան դեռ նոր զգաց քրդուհու հաղորդած տեղեկութիւնների ամենասաստիկ զարհուրանքը։ Ստեփանիկը տակաւին նրա մօտ կանգնած էր, եւ ամենեւին չը գիտէր, թէ որպիսի վիճակ էր սպասում իրան։ Նա իր ձեռքը երեխայի նման դրեց Սառայի ուսին եւ հարցրեց.

— Ինչո՞ւ այդ քրդի աղջիկները այդպէս անխելք են լինում։

— Նրանք անխելք չեն, ղաւակս, պատասխանեց Սառան ծնողական գթով. — միայն կրթվում են ու մեծանում են այնպէս, ինչպէս սարերում աճում են վայրենի անասունները։

— Ինչպէս իմ այծեամը, աւելացրեց Ստեփանիկը։

— Այդ քանի օր է ուտեցնում եմ, խմեցնում եմ, շատ անգամ գրկում եմ, համբուրում եմ, բայց էլի չէ սիրում ինձ, երբ մօտն եմ գնում, փախչում է ինձանից։

Այդ խօսքերը ասելու միջոցին Սառան մի հայեացք ձգեց բարեսիրտ պատանու վրա եւ նրա աչքերը լցուեցան արտասուքով։ Մինչեւ այսօր նա այնպէս քննական աչքով դեռ չէր նայել այդ նազելի դէմքի վրայ, այդ քնքուշ կաղմուածքի վրայ, որ ներկայացնում էր մանկութեան բոլոր գեղեցկութիւնները։ Նա երեսը շուռ տուեց եւ սրբեց արտասուքը, որ պատանին չը նկատէ։

Բայց պատանին դեռ հեռաքրքրում էր քուրդ աղջկանով։

— Նա քաղցած էր, Սառա. ասում էր, որ այսօր ոչինչ չէ կերել. ես մի կաւոր հաց տուեցի մեղրի ու կարագի հետ, խնդրեցի, որ այստեղ նստէ եւ ուտէ։ Բայց նա վեր առեց հացը, տեսայ, ճանապարհին ուտելով գնում էր, երեւի, շտապում էր, Սառա, այդպէս չէ՞։

— Շտապում էր, նա շատ հեռու պիտի գնայ։

— Մինչեւ ո՞ւրտեղ։

— Մինչեւ կապոյտ սարերը։

— Հիմայ խօ կը մթնի, ի՞նչպէս պիտի անցկենայ այնքան լեռներ, այն էլ ոտով, մենակ, առանց ընկերի...

— Սառա, ի՞նչպէս չէ վախենում նա։

— Չէ վախենում. նրանք այդպէս սովորել են. գայլի ձագը ի՞նչ բանից պիտի վախենայ...

Այդ միջոցին կանչեցին Սառային եւ նրանց խօսակցութիւնը ընդհատուեցաւ։

Խեղճ կինը ամբողջ օրը անցկացրեց դառն մտատանջութիւնների մէջ։ Նա արբած կամ ուշքումիտքը ցրուած մարդու նման, չը գիտէր թէ ինչ էր անում. իր ուզած իրեղէնը վեր առնելու տեղ մի ուրիշ բան էր վեր առնում, իր կամեցած կողմը գնալու փոխարէն՝ մի այլ տեղ էր գնում. անդադար սխալվում էր, անդադար

հոգուց էր հանում նա։ Ամբողջ օրը անցկացրեց տենդային անհանգստութեան մէջ։ Մօրից որբ մնալով Ստեփանիկը, նրա սիրելին էր, նրա կուրծքի վրայ եւ նրա ձեռքի տակ էր մեծացել։ Այժմ սպառնում էր նրան մի ցաւալի վիճակ։ Ո՞ւմը ասէր, ի՞նչպէս յայտնէր այն բոլորը, ինչ որ լսեց այսօր քուրդ աղախնից։ Նա գիտէր եւ համոզուած էր, որ Ստեփանիկի ծերունի հայրը, լսելով բէկի դիտաւորութիւնները, չը պիտի կարողանար դիմանալ այդ ցաւին։ Ծերունին առանց դրան եւս սրտումը մի անբժշկելի վէրք ունէր... Միւս կողմից, Սառան մտածում էր, որ թաղցնելը անհնարին եւ մինչեւ անգամ վնասակար է. պէտք էր կանխապէս հոգ տանել գալոց անբախտութեան առաջը առնելու համար։ Բայց ո՞ւմը յայտնել։

Այդ մտածութիւններով նա անցկացրեց ամբողջ օրը եւ տակաւին մի վճռական եզրակացութեան չը հասաւ։ Երբ գիշերը նա առանձնացաւ իր ամուսնի՝ Հայրապետի հետ, վերջինը հարցրեց.

— Սառա, դու այսօր ինչ որ մի ուրիշ տեսակ ես երեւում ինձ. ի՞նչ է պատահել, խօ հիւանդ չես։

— Գլուխս մի քիչ ցաւում է. այդ ոչինչ, կ'անցնէ, պատասխանեց կինը, չը կամենալով սարսափեցնել իր տղամարդին մի ծանր հարուածով։

— Մի քիչ քացախ քսիր ճակատիդ։

— Ամեն բան փորձեցի...

Փոքր առ փոքր նախապատրաստելով իր ամուսնին, Սառան մտածում էր հաղորդել այն օրուայ տեղեկութիւնները. բայց չը գիտէր, թէ որպէս պէտք էր սկսել, մինչեւ ինքը Հայրապետը առիթ տուեց, հարցնելով.

— Այսօր մի քրդի աղջիկ էր եկել մեր տունը, ո՞վ էր նա։

— Փաթթահ-բէկի կնոջ՝ Խուրշիդի աղախինն էր։

— Ամեն անգամ, երբ այդ անիրաւը կամ նրա մարդիկը մեր տունն են գալիս, խօսեց Հայրապետը դառն կերպով, — ես միշտ սպասում եմ մի չար բան։ Ախ, երբ կը լինի, որ այդ անպիտանների ոտքը մեր շէմքից կտրուի...

— Բայց մինչեւ այսօր նրանցից կրած վնասները պէտք է Աստուծոյ բարութիւնը համարել... պատասխանեց կինը խորհրդաւոր ձայնով։

Հայրապետը գունաթափուեցաւ։ Սառան նկատելով այդ, ասաց.

— Բոլոր անբախտութիւնները մարդու համար են... ինչ ցաւ, որ Աստուած ուղարկում է, մենք պէտք է տանենք համբերութիւնով...

Խեղճ մարդիկ, ամեն մի անբախտութեան մէջ մխիթարութիւն են գտնում, Աստծուն եւ միայն Աստծուն վերաբերելով այն բոլոր տառապանքները, որ կրում են այս աշխարհում։ Կարծես թէ Աստուած անբախտութիւնների հեղինակ լինէր։

— Ի՞նչ կայ, հարցրեց Հայրապետը սարսափելով. — ի՞նչ է պատահել։

Սառան սկսեց պատմել ինչ որ լսել էր քուրդ աղախնից։ Նրա պատմութեան ժամանակ խեղճ Հայրապետի դէմքը ամեն տեսակ գոյներ եւ ամեն տեսակ արտայայտութիւն ընդունեց։ Նրա հոգեկան կրքերը փոփոխակի կերպով յաջորդում էին մինը միւսին, եւ երեսի վրայ կարելի էր նշմարել երբեմն սոսկում, երբեմն դառն ատելութիւն, երբեմն կատաղի բարկութիւն եւ երբեմն տխուր ափսոսանք...

— Ես այդ վաղուց սպասում էի... խօսեց նա առժամանակեայ խռովութիւնից յետոյ։ — Խեղճ հայր, նա կը մեռնի, երբ կը լսէ այդ բոլորը...

— Ես ամբողջ օրը դրա վրայ էի մտածում, ասաց Սառան. — նա կը մեռնի, անպատճառ կը մեռնի։

Երկու ամուսինների մէջ տիրեց լռութիւն. երկուսն էլ այն խորհրդածութեան մէջ էին, թէ ինչ պէտք էր անել։

— Հօրս յայտնել հարկաւոր չէ, ընդհատեց Հայրապետը տիրող լռութիւնը։

— Բայց եղբայրներից չէ կարելի ծածուկ պահել, ասաց նրան Սառան։

— Եղբայրներիս ես կը յայտնեմ։

— Ուրեմն ժամանակ կորցնելու չէ, հէնց այս գիշեր յայտնիր, շտապեցնում էր Սառան. — ամեն մի րոպէ թանդ է մեզ համար, ինչ որ անելու էք, շուտով արեցէք, ո՞վ գիտէ, էգուց ինչ կը պատահի։

Հայրապետի եղբայրներից մի քանիսը տանն էին, իսկ մի քանիսը դեռ չէին վերադարձել դաշտից։ Նա վերկացաւ, պատուիրեց իր կնոջը, որ հարսներից ծածուկ պահէ իր տեղեկութիւնները, մինչեւ եղբայրների հետ խորհուրդ կ'անէին։ Նա առեց իր հետ տանը գտնուածներին եւ միասին դուրս գնացին։ Շանապարհին յայտնեց նրանց, թէ մի առանձին խօսելիք ունի, միայն պէտք է բոլոր եղբայրները մի տեղ հաւաքուէին։ Նա ընտրեց խորհրդի համար մի խուլ տեղ, իրանց ջրաղացի փոքրիկ անտառում, որովհետեւ տանը կարող էին խանգարել նրանց, եւ գուցէ հայրը պատահմամբ կը խառնուէր խօսակցութեան մէջ։

Երբ բոլորը հաւաքուեցան, Հայրապետը յայտնեց նրանց ինչ որ լսել էր իր կնոջից։ Ինքն ըստ ինքեան

հասկանալի է այն դառն տպաւորութիւնը, որ գործեց եղբայրների վրայ հաղորդած լուրը։ Բոլորը քարացածի նման մնացին իրանց տեղում։ Ոչ մէկը չը դուաւ մի բառ անգամ խօսելու։ Նրանց դրութիւնը նմանում էր այն տեսարանին, երբ ամառնային զով երեկոյեան պահուն, ճնճղուկների հաղարաւոր բազմութիւնը, կուշտ, ուրախ, օրական աշխատանքից յետոյ հաւաքուած ծառերի ոստերի վրայ, ճրվլվլում են, չրիչրկում են եւ ամբողջ անտառը լցնում են մի կենդանի աղմուկով։ Յանկարծ նրանց մօտից սլանում է բազէն եւ ամբողջ խօրը միանգամից լռում է...

Այս տպաւորութիւնը գործեց վեց եղբայրների վրայ, երբ նրանք լսեցին Փաթթահ-բէկի անունը եւ նրա չար դիտաւորութիւնը։

Ահա քրդի բարեկամութիւնը, խօսեց եղբայրներից մէկը. — բէկը մեր երեխաների կնքահայրն է. նա էլ է մուտանում մեր տնում կերած աղ ու հացը։

— Ի՞նչ բարեկամութիւն կարող է լինել դայլի եւ ոչխարի մէջ, աղուէսի եւ հաւի մէջ, խօսեց Հայրապետը զայրացած ձայնով։ — Բայց մենք ոչխարից էլ վատ ենք, հաւից էլ վատ ենք... ոչխարը գոնէ եղջիւրներ ունէ, երբեմն նրանցով կռվում է. հաւը սուր եղունգներ ունէ, երբեմն նրանցով ծեւատում է... իսկ մենք մեզ պաշտպանելու համար ոչինչ չունենք... Մենք մարդկութեան կեղտն ենք, նրա կղկղանքն ենք, որ պէտք է մաքրել, ոչնչացնել, որ մարդկութիւնը չապականուի...

Այդ խօսքերը այնպիսի մի մաղձային դառնութեամբ արտասանեց նա, որ եղբայրները սարսափեցան։

— Ի՞նչ ենք մենք, շարունակեց նա առաջին եռանակով. — ժիր եւ գործունեայ մշակներ... եւ դրանով պարծենում ենք... բայց էշը, ձին, եզը, գոմէշը մեզանից աւելի ուժեղ են եւ մեզանից աւելի շատ են բանում... մենք բանուոր անասուններ ենք եւ աւելի ոչինչ... Քրդի նիզակը աւելի մեծ գործ է կատարում, քան թէ մեր աշխատասէր արօրը եւ գութանը... Մենք վաստակում ենք, նրանք ուտում են... մենք գեղեցիկ աղջիկներ ենք հասցնում, նրանք են վայելում մեր աղջիկների սէրը... Ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լաւ է, մեզ համար չէ... մեզ համար են պահուած բոլոր ազնուութիւնները, որովհետեւ մի լաւ բանի արժանաւորութիւն չունենք...

— Քանի օր առաջ, շարունակեց նա, — մի այսպիսի խօսակցութիւն ունէի հօրս հետ. հայրս աշխատում էր ինձ համոզել, թէ մեր դրութիւնը այնքան աննախանձելի չէ, որքան մենք կարծում ենք, եւ ցոյց էր տալիս մեր օդի մէջ կանգնած հարստութիւնը, որին բաւական են մի խումբ քրդեր, մի արշաւանք, — եւ ահա բոլորը ոչնչացաւ։ Հիմայ էկ, դու նրան ասա, թէ տնից դուրս քարշելու, տանելու են քո սիրելի զաւակը, եւ դու աչքերդ բաց-բաց պիտի նայես, եւ մի խօսք անգամ ասելու համարձակութիւն չը պիտի ունենաս... — Ա՞յդ էլ լաւ դրութիւն է։ Այդպիսի դրութեան կարող է համբերել հայը միայն, անամօթ, անպատիւ հայը միայն... Ե՛կ, դու գնա, վագրի որջից դուրս քաշիր նրա ձագը, նա իսկոյն քեզ իր բոյնի առջեւ պատառ-պատառ կ'անէ։ — Այսպէս է եւ քուրդը։ Բայց մենք ինչ ենք... մենք ոչինչ ենք...

Հայրապետի խօսքերը այն աստիճան բարկութեամբ վառեցին իր եղբայրներից մի քանիսի սիրտը, որ նրանք միաձայն վճռեցին ընդդիմանալ, մեռնել եւ չը տալ Ստեփանիկին քրդի ձեռքը։

— Այդ ոչինչ նպատակի չի հասցնի, պատասխանեց խոհեմ եւ բաղմափորձ Հայրապետը, — մենք կը մեռնենք, բայց Ստեփանիկին դարձեալ կը տանեն...

— Գոնէ մեռնելուց յետոյ մենք չենք տեսնի մեր քրոջ անպատուութիւնը եւ հանգիստ կը լինենք մեր գերեզմանում... մէջ մտաւ եղբայրներից մէկը, Ապօն։

Բայց միւս կողմից յայտնուեցան հակառակորդներ։

— Մենք պիտի մեռնենք, այն էլ մի աղջկայ համար, ու մեր երեխաներին անտէր պիտի թողնենք, դա ի՞նչ խելք է, խօսեց եղբայրներից մէկը, որին կոչում էին Օհան։ — Ես իմ ձեռները լուանում եմ այդ գործից. մէկ քոյր ունենք, թող չը լինի, դա մեծ ցաւ չէ. ինչո՞ւ մենք մեր գլուխը պէտք է մահի տանք նրա համար։

Եղբայրներից մի ուրիշը, որին կանչում էին Յակօ, աւելի շահաւոր եւ աւելի գործնական կէտից նայելով Ստեփանիկի վիճակի վրայ, սկսեց պաշտպանել Օհանի կարծիքը, ասելով.

— Ես դրա մէջ ոչինչ անբախտութիւն չեմ տեսնում. մի կողմից շատ լաւ է, երբ մենք Փաթթահ-բէկի նման փեսայ կ'ունենանք, այն ժամանակ բոլոր հայերը մեզանից կը վախենան։ — Օրինակ ձեզ, աւելացրեց նա, մեր դրացի Մըկօն, նա ի՞նչ մարդ է, տանը ուտելու հաց չունի, բայց որովհետեւ նրա աղջիկը մի քրդի կին է, դրա համար մենք ամենքս Մըկօից վախենում ենք, հետը խօսել չենք կարողանում, հէնց որ մի բան ասենք, Մըկօն կը սովորեցնէ քուրդ փեսային եւ քուրդը մի գիշեր կը գայ մեզ մեր տանը մէջ կը մորթէ։ Լաւ չէ՞ մի այդպիսի փեսայ ունենալ։

Այդ խօսքերը գրգռեցին Ապօի բարկութիւնը, որ առաջարկում էր ընդդիմանալ, եւ մինչեւ անգամ մահ

յանձն առնել, եւ պաշտպանել իրանց քրոջ պատիւը։ Նա ասաց.

— Յիսուս Քրիստոսը վկայ, դու խելքդ կորցրել ես, Յակօ, այդ ինչեր ես խօսում, գիժն էլ այդպէս չի խօսի։ Մենք պէտք է մեր լոյս հաւատը կորցնենք, մեր քոյրը անօրէն եւ անհաւատ քրդի ձեռքը պէտք է տանք, նրա համար միայն, որ հայերը մեզանից կը վախենան եւ մեղ կը պատուեն... Թող չը լինի այսպիսի պատիւը։ Բայց գիտե՞ս, որ երեսից կարելի է պատուեն, բայց սրտում ամեն մարդ կ'անիծէ մեզ։ Ո՞վ է սիրում Մըկօին, որ աղջիկը քրդի տուաւ։ Այդ ուրիշ բան է, որ նրանից վախենում են. շնից էլ, գայլից էլ շատերը վախենում են...

Եղբայրներից մէկը, որ բոլոր ժամանակը լուռ էր, իր յատուկ կրօնական փիլիսոփայութեամբ, սկսեց հակառակել Ապօին, առաջ բերելով այն փաստերը, թէ չէ կարելի փոխել Աստուծոյ կարգադրութիւնները, ինչ որ լինելու է, կը լինի. — Թէ Աստուած քուրդին քուրդ է ստեղծել, հային՝ հայ, քուրդին զէնք է տուել, հային՝ բահ. թէ մէկը միւսի տեղը բռնել չէ կարող, թէ այդ բոլոր բաները Աստուծոյ ձեռքումն են, եւ վերջացրեց իր խօսքերը հետեւեալ օրինակով.

— Ագռաւը շատ կը ցանկանար սիրամարգի փետուրներ ունենալ, բայց ո՞վ կը տայ։ Աստուած մէկին այսպէս է ստեղծել, միւսին այնպէս։

Ապօն պատասխանեց նրան.

— Դուն մոռանում ես, եղբայր, որ ագռաւը եւ սիրամարգը զանազան թռչուններ են. բայց քուրդը եւ հայը երկուսն էլ մարդիկ են։ Քուրդը մօրից զէնքով չէ ծնվում. նա ծնվում է նոյնպէս մերկ, նոյնպէս թոյլ,

որպէս հայը։ Ինչո՞ւ ես դու ամեն բան Աստուծոյ վրէն դնում. միթէ Նա՞ է քրդի ձեռքը ղէնք տուել, որ դայ մեզ կոտորէ, որ դայ մեր աղջիկները մեր տնից քարշէ ու տանէ. միթէ Նա՞ է մեզ այսպէս խեղճ եւ վախկոտ շինել։ Աստուած այդ բաների մէջ չէ խառնվում. Նա մեզ խելք է տուել, որ ընտրենք՝ ինչ որ լաւ է, ինչ որ օգտաւէտ է։ Եթէ դու կը դնաս այս բոպէիս քեզ այդ գետը կը դցես, Աստուած երբէք քո ձեռքից չէ բռնի, որ արգելէ, դու ինքդ ես քեզ կորցնում...

Հայրապետը, երէց եղբայրը, խորին լռութեամբ լսում էր վիճաբանութիւնները։ Նա պատրաստ էր վեր կենալ եւ Ապօի ճակատը համբուրել, բայց չը կամեցաւ վիրաւորել միւս եղբայրներին։

— Ցեանում էք, ասաց նա ծանր կերպով. — մենք վեց եղբայրներ ենք հաւաքուած այստեղ, բայց միմեանց չենք հասկանում եւ միմեանց հետ չենք միաբանվում։ Բայց ո՞ւրքան դժուար է միաբանել մի ժողովուրդ եւ մի ամբողջ ազգ... Քանի որ մենք այսպէս կը լինենք, մեր վիճակը միշտ այսպէս կը մնայ... Մեր դլխին կը տան, մեր երեսին կը թքեն, մեր կինը, մեր աղջի՛կը, մեր ապրանքը, մեր հողը մեր ձեռքից կը խլեն... եւ մենք ստիպուած կը լինենք համբերել ամեն տեսակ անպատուութիւնների, ամեն տեսակ չարչարանքների, եւ մի ողորմելի գրաստի նման պէտք է մեր թշնամու համար աշխատենք, որ նա գոհ եւ բախտաւոր ապրի։ Իսկ մենք պիտի փառք տանք Աստծուն, որ գոնէ խնայում է մեր կեանքին, գոնէ թոյլ են տալիս մի չնչին գեռունի նման քարշ գալ երկրի վրայ...

Խորին տխրութեամբ վերջացնելով իր խօսքերը, Հայրապետը առաջարկեց, որ Ստեփանիկին հեռացնեն

իրանց տնից եւ առժամանակ պահեն Ս. Յովհաննու վանքում, մինչեւ հնար կը գտնեն այնտեղից տանել, ռուսաց սահմանը անցկացնել, եւ այնտեղ ռուսաց հողի վրայ ազատուած կը լինի։

Օհանը եւ Յակօն չը համաձայնուեցան մինչեւ անգամ այդ առաջարկութեանը, ասելով, թէ դա կը լինէր մի ուրիշ տեսակ ընդդիմադրութիւն բէկի կամքին։ — Թաղցնելով մեր քրոջը, ասացին նրանք, մենք պատճառ կը տանք բէկի բարկութեանը եւ հետեւապէս նրա վրէժխնդրութեանը։

Նրանք առաջարկում էին թողնել Ստեփանիկին տանը, դարձեալ կրկնելով մի եւ նոյն խօսքերը, թէ Աստուած ինչ որ կամեցել է, այն կը լինի, թէ Աստուծոյ դրածը մարդ չէ կարող ջնջել եւ այլն...

Մի քանիսը պահանջում էին յայտնել իրանց հօրը, եւ նա որպէս տան մեծը եւ ընտանիքի գլխաւորը, որպէս կը կամենայ, թող այնպէս կարգադրէ։ Այսպէս վիճաբանութիւնը երկարում էր եւ ոչ մի հետեւանքի չէին հասնում։

Յանկարծ խորհրդի մէջ խառնուեցաւ բուն, բօթաբեր եւ զզուելի բուն։ Ծառերի միջից լսելի եղաւ նրա չարագուշակ ձայնը։ Բոլորը սարսափեցան։

— Լսեցէ՛ք, մենք ուղիղ էինք ասում, ձայն տուեցին Օհանը եւ Յակօն, — ահա բուն եւս հաստատում է մեր խօսքը, վերջը վատ կը լինի, եթէ Ստեփանիկին հեռացնենք տնից։

Միայն Հայրապետն եւ Ապօն մնացին հաստատ իրանց համոզմունքի վրայ։ Խորհուրդը վերջացաւ անորոշ կերպով, առանց մի վճռական եզրակացութեան հասնելու։

ԺԳ.

Բայց ինչ հանելուկ էր այդ. Ստեփանիկը առաջ տղայ, իսկ այժմ աղջիկ։

Պարզենք այդ հանելուկը։ Բայց նրա բանալին թաղնուած է մի փոքրիկ եւ տխուր պատմութեան մէջ։

Ծերունի Խաչօի տան բակի մի խուլ կողմում, հովանաւորուած չորս կաղամախի ծառերով, գտանվում էր մի դերեզման։ Ո՛չ խաչ, ո՛չ տապանաքար եւ ո՛չ մի տառ անգամ չը կար նրա վրայ։ Դա մի փոքրիկ քառակուսի թումբ էր, ծեփած դաճով, որ փոքր ինչ բարձրացած էր գետնի մակերեւոյթից։ Շատ անգամ, գիշերային լռութեան պահուն, կարելի էր տեսնել ծերունուն, տարածուած այդ անշուք հողաբամբարանի մօտ, թափում էր իր աչքերից յորդ արտասուքներ։ Ցանեցիք նոյնպէս մի առանձին տխրութեամբ էին անցկենում այդ դերեզմանի մօտից, որ կարծես թէ ամփոփում էր իր մէջ ամբողջ գերդաստանի ուրախութիւնը։ Ո՞վ էր թաղուած այնտեղ։

Ծերունի Խաչօն ունէր մի աղջիկ Սօնայ անունով. նա իր դէմքով շատ նման էր Ստեփանիկին։ Երբ Սօնան տասն եւ վեց տարեկան դարձաւ, ամեն կողմից խնդրում էին նրա ձեռքը, ոչ միայն նրա համար, որ Սօնան մի հարուստ ընտանիքի զաւակն էր, այլ առաւել այն պատճառով, որ Սօնան շատ սիրուն էր։ Հայրը երկար տարուբերվում էր փեսաների ընտրութեան մէջ, չը դիտէր որին տալ։ Բայց մի ցաւալի անցք վերջ տուեց Սօնայի բախտաւորութեանը։ Մի անգամ գնաց նա դաշտը բանջար քաղելու, այլ եւս չը վերադարձաւ։ Շատ զրոյցներ եղան նրա կորստեան մասին. ոմանք ասում էին, թէ գետումը խեղդուել է. ոմանք ասում էին, թէ

գազանները գիշատել են. ոմանք սնահաւատութեամբ հաստատում էին, թէ չարքերը գողացել են, եւ ոմանք ասում էին, թէ քրդերը յափշտակել են։ — Ո՞րն էր ուղիղ, դժուար էր որոշել։ Շատ որոնեցին, շատ այս կողմ այն կողմը ընկան, բայց ոչինչ չօգնեց, եւ կորած աղջկայ մասին ոչինչ տեղեկութիւն ստանալ չը կարողացան, թէեւ նրա հայրը խոստացել էր լաւ վարձատրութիւն, ով որ ճիշտ լուր կը բերէ։

Անցան մի քանի շաբաթներ։

Մի օր յայտնուեցաւ Խաչօի տանը մի քուրդ, բերելով իր հետ ջորու վրայ բարձած մի դագաղ։ Նրա մէջը դրած էր Սօնայի մարմինը։

Քրդի պատմութիւնից երեւայ, որ անբախտ աղջկան դաշտից առեւանգել էր մի քուրդ ազնուական, որը թէեւ իր տոհմով այնքան երեւելի չէր, բայց իր ցեղի մէջ յայտնի էր, որպէս մի նշանաւոր եղեռնագործ։ Սօնան ուրիշ հնարք չը գտնելով այդ ատելի մարդու ձեռքից ազատուելու համար, իր գլխի արախչինի վրայ կարած ոսկի դրամներից[1] մի քանիսը տալիս է մի պառաւ քրդուհու, խնդրելով իր համար թոյն գտնել։ Քրդուհին կաշառուած ոսկիներից, կատարում է նրա խնդիրքը։ Սօնան մեռնում է թոյնից։ Քրդերը նրա մարմինը չեն ընդունում իրանց գերեզմանատան մէջ, որովհետեւ հանդուցեալը մինչեւ իր վերջին շունչը ասում էր. "Ես քրիստոնեայ եմ. հաւատս չեմ փոխի"։ Մարմինը մնում է անթաղ։ Այդ հանգամանքից օգուտ է քաղում մի

[1] Արաչկերտի եւ առհասարակ տաճկական Հայաստանի գիւղացի աղջիկների գլուխը ծածկուած է լինում մի տեսակ արախչինով, որ ամբողջապէս զարդարած է դրամներով. հարուստներինը ոսկով, իսկ աղքատներինը արծաթով։

քուրդ, եւ իմանալով ում աղջիկն է նա, վեր է առնում նրա մարմինը եւ բերում հօր տունը, յոյս ունենալով, որ մի բան կը ստանայ։

Ոչ սակաւ մոլեռանդութեամբ վարվում է անբախտի դիակի հետ եւ հայ եկեղեցականութիւնը։ Պատճառ բերելով, թէ նա ինքնասպան է եղել, անօրէնի ձեռքումն է մեռել, չէ խոստովանուել, չէ հաղորդուել եւ այլն, — տէրտէրները թոյլ չեն տալիս նրան թաղել հայոց գերեզմանատունում[1]։ Ահա այդ էր պատճառը, որ նրա գերեզմանը գտնվում էր հայրական տան մէջ։ Այն որ հալածեց իր միջից եկեղեցին, ընդունեց իր մէջ ընտանիքը...

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ այդ անբախտութիւնը ինչ դառնութիւն կը բերէր Խաչօի դերդաստանի վրայ։ Բայց նա ունեցաւ եւ ուրիշ ցաւալի հետեւանքներ։ Սօնայի մայրը, Ռեհանը, Ստեփանիկի ծնունդից յետոյ, չը կարողանալով տանել իր դստեր այս օրինակ վախճանի դառն կսկիծը, օրըստօրէ հալուեցաւ, մաշուեցաւ եւ վերջապէս մեռաւ։ Եւ նոյն իսկ Ստեփանիկի վեճակի վրայ այդ անցքը ունեցաւ իր առանձին ազդեցութիւնը։ Ստեփանիկը իսկապէս աղջիկ էր, թէեւ տղայի անունով եւ տղայի հագուստով պահուած։ Նրա մկրտութեան անունը Հալայ էր։ Բայց ի՞նչ նպատակով նրան այսպէս ծպտեալ կերպով էին մեծացնում։

Սօնայի մահը մի այնպիսի ցաւալի տպաւորութիւն թողեց հօր վրայ, որ Ստեփանիկի ծնուելուց յետոյ, նա մի առանձին սնահաւատութեամբ նախագուշակում էր նոյնպիսի մի վախճան եւ այդ աղջկայ համար։ Նրա կաս-

[1] Այդ մոլեռանդութիւնը ինձ պատահել է տեսնել շատ տեղերում. զարմանալին այն է, որ ամբոխը այս կէտի մէջ նոյնպէս համաձայնվում է կղերի կարծիքին։

կածանքը անտեղի չէր, մանաւանդ իր երկրի վերաբերութեամբ, ուր իր աչքով տեսել էր հարիւրաւոր օրինակներ, ուր կոյս աղջիկների յափշտակութիւնը մահմետականներից համարեա սովորական էր դարձել։ Այդ պատճառով հայրը մտածեց Ստեփանիկին իբրեւ տղայ ներկայացնել եւ տղայի անունով պահել, մինչեւ նրա չափահաս լինելը։ Հօր դիտաւորութեան համաձայն էր եւ թշուառ մայրը, որ շուտով վախճանուեցաւ, եւ չը կարողացաւ սնուցանել իր զաւակին։ Խաչօի ընտանիքի մէջ այդ խորհուրդը պահվում էր որպէս դաղտնիք ամենայն զգուշութեամբ։ Օտարներից այն դաղտնիքը գիտէին երեք հոգի միայն՝ գիւղի քահանան, կնքահայրը եւ տատմէրը, որ վաղուց մեռած էր։

Հալան — մենք այսուհետեւ երբեմն իր իսկական անունով պէտք է կոչենք Ստեփանիկին — այժմ տասն եւ վեց տարեկան էր. մի հասակ, որի մէջ մտնելուց յետոյ գիւղացի աղջկան երկար տանը չեն պահում։ Հայրը մտածում էր նրան մարդու տալ։ Բայց դժուարութիւնը նրանումն էր, որ Հալան իբրեւ տղայ ճանաչուած լինելով, ի հարկէ, ոչ ոք չէր խնդրելու նրա ձեռքը։ Բացի դրանից, հայրը ցանկանում էր, որ իր փեսան մի օտար երկրացի լինի, որ առնէ, տանէ եւ հեռացնէ իր աղջկան, որպէս զի իր երկրում, իր ծանօթների մէջ չը յայտնուի հօր դործ դրած խորամանկութիւնը Հալայի պահպանութեան մասին, թէեւ այդ երկրում դա մի սովորական բան էր։ Բայց ո՞րտեղից պէտք էր գտնել այդ պայմաններին յարմար մի մարդ Հալայի համար։

Հայրը աչք ունէր մի պարոնի վրայ, որ իրան կոչում էր Թոմաս էֆէնդի, — մի շատախօս, խաբեբայ, կարճլիկ, կլորիկ մարդ, բացի մարդից ամեն բանի նման

էր։ Ոլտեղացի էր նա, յայտնի չէր. բայց իր ասելով, պոլսեցի էր եւ այնտեղ ամիրայ ազգականներ ունէր։ Լալայի եղբայրները սաստիկ ատում էին այդ հրեշին, ոչ թէ այն պատճառով, որ նա չափազանց պլանդակ դէմք ունէր, այլ առաւել նրա համար, որ սաստիկ ժանտ եւ անգութ մարդ էր։ Նա բոլորովին իրան հեռու էր պահում հայ հասարակութիւնից, խօսում էր միշտ թուրքերէն, եւ միշտ ընկած էր մուդիրների, գայմագամների եւ քուրդ բէկերի մօտ։ Նրանց անունով գիւղացի հայերին սպառնալիքներ էր կարդում եւ նրանց անունով պարծենում էր։ Թոմաս էֆէնդին ալքունի մուլթէզիմ էր, այսինքն ալքունի հարկերի եւ հասոյթների կապալառու։

Մուլթէզիմը նոյն նշանակութիւնը ունի գիւղացու համար, որպէս հոգեհան հրեշտակը, դեւը, սատանան մի անհաւատի համար, — եւ որպէս այն բաները, որոնցից դողում է, սարսափում է գիւղացին։ Բայց ինչ բանից աւելի վախենում է գիւղացին, նրան աւելի եւ յարգում է։ Եթէ սատանան յայտնուէր գիւղացիների մէջ, նրան այնքան չէին ատի, կը սկսէին շողոքորթել։ Մարդը միշտ այսպէս վարուել է եւ վարվում է։ Մարդը իր ռամկութեան հասակում բարի եւ չար ոգիներին հաւասար կերպով էր պաշտում. երկուսին էլ զոհ էր մատուցանում։ Զարմանալին այն է, որ չարը համեմատաբար աւելի շատ զոհեր էր ընդունում։ «Բարին մերն է, մտածում էր ռամիկը, բայց չարին պէտք է գոհացնել, որ չարութիւն չը գործէ»...

Այս դատողութիւնները ի նկատի առնելով, կարելի է հեշտ բացատրել, թէ ինչու Թոմաս էֆէնդին ընդունուած էր Ծերունի Խաչօի ընտանիքի մէջ, որպէս այս տան պատուաւոր ծանօթներից մէկը։ Տանուտէր Խաչօն,

որպէս ժողովրդից ընտրուած գիւղի գլխաւորը, որպէս պաշտօնական անձն, միշտ յարաբերութիւններ ունէր կապալառուի հետ, թէ տուրքերի, թէ հարկերի եւ թէ գիւղացոյ մշակութիւնների տասանորդի պատճառով։ Եւ այս աւիթով էֆէնդին երթեւեկութիւն ունէր Խաչօի տանը, դալիս էր, շատ անգամ շաբաթներով մնում էր այնտեղ եւ հաւաքում էր իր կապալառութեան վերաբերեալ արդիւնքները։ Տանուտէրի «օգան» այս տեսակ հիւրերի համար մի կատարեալ պանդոկ է գիւղերում։ Գայմագամը, մուդիրը, մուլթէզիմը, «հոգեւոր պտուղ», հաւաքող վարդապետը, վերջին զափթիան եւ մինչեւ անգամ վերջին մուրացկանը, — բոլորը այն տեղ են վազում։ Այդ հասարակութիւնը իրանց յատկութիւններով շատ են զանազանվում միմեանցից...

Ջրաղացի անտառում, Ծերունի Խաչօի որդիների գիշերային տանջող խորհրդի առաւօտն էր, երբ յայտնուեցաւ Թոմաս էֆէնդին Օ... գիւղում, իր հետ բերելով երկու զափթիաներ, որոնք միշտ անբաժան էին լինում նրանից։ Նա եկել էր ոչխարների եւ այլ անասունների հարկերը նշանակելու, որովհետեւ արդէն գարուն էր եւ գիւղացիները պէտք էր իրանց անասունները «եայլաղ» (արօտատեղ) տանէին արածացնելու եւ ամառուայ օրթերից հեռու պահելու համար։ Վերջացնելով իր գործը, Թոմաս էֆէնդին տանուտէր Խաչօի հետ դիմում էին դէպի նրա առնը։ Սուլթանը երբէք այն հպարտութեամբ չէ անցնում Կ. Պոլսի փողոցներով, երբ գնում է Այա-Սոֆիայի մզկիթը իր ուրբաթ աւուր աղօթքը մատուցանելու, որպէս այդ փոքրիկ մարդը անց էր կենում Օ... գիւղի փողոցներով։ Տմրլիկ փորը դուրս դցած, քթիթը դէպի վեր բարձրացրած, նա անդադար նայում էր այս

եւ այն կողմը, տեսնելու, թէ որքան գիւղացիներ գլուխ են տալիս նրան։ Նա այսօր հագած ունէր մի տեսակ մունդիր, բազմաթիւ դեղին կոճակներով, եւ հաւատացնում էր, թէ վեզիրն է ուղարկել նրա համար։

Մտնելով տանուտէրի օդան, նա առանց սպասելու, հրամայեց, որ սուրճ տան, եւ ինքը կարգադրեց, թէ ինչ պէտք էր պատրաստել ճաշի համար։ Արքունի կապալառուն ինչ տուն որ մտնում է, իրան տան տէր է համարում. եթէ տանեցիք չը կատարեն նրա հաճոյքները, նա խստիւ պահանջել գիտէ...

Երբ նստեցին, Ծերունի Խաչն ասաց նրան.

— Դուք, էֆէնդի, ի զուր այսօր ծեծել տուեցիք այն խեղճ գիւղացուն։

— Սխալվում էք, տանուտէր, պատասխանեց նա իր կատուի ձայնով. — գիւղացուն պէտք է ծեծել եւ շատ ծեծել. "էշին մինչեւ չը ծեծես, բեռը չի տանի"։

— Բայց գիւղացին մեղ չունէր։

— Այդ մի եւ նոյն է, մեղ ունէր, թէ չունէր։ Այսօր մեղ չունէր, էգուց կարող է ունենալ։ Դու չե՞ս լսել Նասրադին խօջայի առակը. նրա էշերից մէկը կապը կտրեց ու փախաւ, նա փոխանակ փախչող էշի ետեւից վազելու, որ նրան բռնէ ու պատժէ, եկաւ, սկսեց ծեծել միւս էշին, որ իր կապը չէր կտրել եւ իր տեղումը հանգիստ կանգնած էր։ Նրան ասացին, թէ այդ խեղճը ի՞նչ մեղ ունի, որ ծեծում ես։ Խօջան պատասխանեց. — դուք չէք իմանում, եթէ դա իր կապը կտրելու լինի, ինչպէս կը փախչի։

— Բայց ինձ յայտնի է, որ գիւղացին սուտ չէր խօսում, ես գիտեմ, որ նրա ոչխարների մեծ մասը քրդերը տարան, ասաց Ծերունին, դարձեալ համոզելով,

թէ հանգիստ եւ անմեղ էշին պէտք չէր պատժել յանցաւորի փոխարէն։

— Այդ ես էլ գիտեմ, տանուտէր, որ նրա ոչխարների մի մասը քրդերը գողացել են, պատասխանեց կապալառու էֆէնդին ծանրութեամբ։ — Բայց եթէ ընդունելու լինեմ այսպիսի հաշիւներ, "ջուրը կը գայ, ջրաղացը կը տանէ" եւ ես այն ժամանակ իմ գրպանից պէտք է վճարեմ արքունի հարկը։ Անցեալ տարուայ ցուցակում այդ գիւղացու անունով 100 ոչխար է գրուած, ես հարիւրի հարկը կը պահանջեմ. բայց եթէ նրանցից մի 50 կամ 60 հատ քրդերը գողացել են, ես ի՞նչով եմ մեղաւոր. քրդերը ամեն օր գողանում են, եթէ մարդ են, թող թոյլ չը տան, որ գողանան։

— Պէտք է խղճմտանքով խօսել, էֆէնդի, պատասխանեց նրան տանուտէրը. — իրաւունք ունէք պահանջել գիւղացու այն ոչխարների հարկը միայն, որքան նա պատրաստ ունի իր ձեռքում. — կորածի, մեռածի եւ կողոպտուածի համար նա պարտաւոր չէ հարկ վճարել։

— Ես ի՞նչով կարող եմ ստուգել, թէ գողացել են, պատասխանեց կապալառուն բարկացած ձայնով. — գիւղացին կարող է թագցնել իր ոչխարները եւ ինձ ասել, կորել են, գողացել են, մեռել են, ինչ գիտեմ, հազար ու մէկ այս տեսակ պատճառներ կարող է բերել։

Տանուտէրը ոչինչ չը խօսեց։

— Բայց դուք չէք տեսել այդ նոր ֆիրմանը, որ սուլթանը ուղարկել է ինձ, եթէ գիտենայիք նրա մէջ ինչ է գրուած, այսպէս չէիք խօսի, տանուտէր։

Եւ նա դուրս բերեց իր ծոցից մի մեծ ծրար, հանեց նրա միջից թղթերի մի փաթոթ, եւ զգուշութեամբ

մինը միւսի ետեւից բաց անելով, վերջապէս դուրս բերեց մի ահագին կարմիր թերթ, խոշոր եւ զանազան ձեւի տառերով ապուած։

— Ա՛ռ, կարդա՛, տուեց նա տանուտէրի ձեռքը։

Տանուտէրը զարմացած նայում էր խոշոր տառերի վրայ (ինչ որ մեծ է, ինչ որ խոշոր է ռամկի համար զարմանալի է) եւ եթէ նա թուրքերէն կարդալ գիտենար, կը հասկանար, որ այդ ահագին կարմիր թերթը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ թատրոնական աֆիշայ, որ տպուած էր մի գերասանուհու բենեֆիսի համար։

Բայց Թոմաս էֆէնդին նկատեց նրան.

— Տանուտէր, այսպէս անքաղաքավարի կերպով չեն վարվում սուլթանի ֆիրմանի հետ. երբ ֆիրմանը ձեռք են առնում, նախ համբուրում են եւ ապա սկսում են կարդալ։

Ծերունին համբուրեց եւ խոնարհութեամբ յետ տուեց ֆիրմանը։

— Հազար անգամ ասում ես գիւղացիներին, թէ հիմայ հրամանը այսպէս է, թէ հարկերը աւելացել են, դարձեալ չեն հասկանում, դարձեալ իրանց գիտցածն են ասում, խօսեց կապալառուն մի առանձին վրդովմունքով։ — Ես էլ մարդ եմ, համբերութիւնս հատնում է, սկսում եմ ծեծել։ Ախար էշը, որ էշ է, մի անգամ ցեխումը խրվում է, միւս անգամ եթէ վեղն էլ կարես, այնտեղից չի անց կենայ։ Բայց այդ գիւղացիները էշի խելք էլ չունեն։ (Թոմաս էֆէնդին սովորութիւն ունէր իր օրինակները եւ համեմատութիւնները միշտ էշերի կեանքից վեր առնել)։ — Լսիր, մի բան պատմեմ, տանուտէր Խաչո, դու իւ իմանում ես, որ Ալաշկերտի շատ գիւղերը իմ ձեռքումն են. մի անգամ մի գիւղացի հունձը հնձել էր, կալը կասել էր եւ ցորենի մաքուր

շեղջը կիտել էր կալումը. ինձ կանչեց, որ չափել տամ եւ տասանորդը վեր առնեմ. ես պահանջեցի, որ տասանորդի փոխարէն ղուտ փող տայ։ Նա պատասխանեց, թէ փող չի կարող տալ, եւ աւելացրեց, թէ դուք ցորեան ստանալու իրաւունք ունէք եւ ձեզ պատկանող ցորեանը ստացէք։ (Ես երբէք համբերել կարող չեմ, երբ էշ գիւղացին իրաւունքի վրայ է խօսում)։ — Մոքումս ասացի, ես քո հէրը կանիծեմ եւ քեզ ցոյց կը տամ թէ ինչ բան է իրաւունքը։ Կալի ցորեանը չը չափեցի եւ թողեցի այնպէս մնաց։ Անձրեւները եկան եւ ցորենը խոնաւութիւնից ծլեց, այրուեցաւ, փտեց եւ ոչնչացաւ։ Այն ժամանակ գնացի եւ ասացի, թէ ես իրաւունքից չեմ անց կենայ, տուր ցորեանը։ Բայց ո՞րտեղից պիտի տար, ցորեանը դարձել էր մի բորբոսած մոխրի կոյտ։ — Հիմայ տասանորդի փոխարէն փող տուր, ասացի նրան։ Փող չունէր, մի լաւ ծեծ տուեցի, հրամայեցի եղները ծախեցին եւ փողը ստացայ։ Հիմայ այն գիւղացին այնքան փափկացել էր, որ ձուի բեռը կը տանէ եւ մի հատ էլ չի կոտրի։ Ինձ տեսնելիս, մի վերստ հեռաւորութեամբ կանգնում է եւ գլուխ է խոնարհեցնում։ — Այսպէս պէտք է վարուել մարդերի հետ։

— Դա խղճմտանք է, հարցրեց Ծերունի Խաչոն այնքան ցած ձայնով, որ կարծես, վախենում էր եւ չէր ուզում, որ իր ձայնը լսուի։

— Ի՞նչ ասել է խղճմտանք, պատասխանեց կապալառուն արհամարհական կերպով. — կառավարութիւնը ուրիշ բան է, խղճմտանքը ուրիշ բան։ Դու թէեւ քառասուն տարի այս գիւղի կառավարիչն ես, բայց դեռ չես հասկացել, թէ որպէս պէտք է կառավարել։ Դու իւ լսեցիր Նասրադին խօջայի առակը էշերի վերաբերութեամբ,

բայց ես քեզ մի ուրիշ օրինակ էլ կը բերեմ. Տեսնում ես, մի փաշա նշանակուել է մի գաւառի կառավարիչ. հէնց որ նա անցնում է իր պաշտօնի գլուխը, իսկոյն բռնել է տալիս մի քանի հանդիպուած մարդիկ, որպէս յանցաւորներ, բանտարկում է եւ մինչեւ անգամ գլխատել է տալիս: Գուցէ այն մարդիկը ամենեւին յանցաւոր չէին, բայց փաշային պէտք էր մի քանի մարդիկ ոչնչացնել ժողովուրդը վախեցնելու համար: Ահա ի՞նչ է նշանակում կառավարութիւն: Ժողովուրդը միշտ պէտք է երկիւղի մէջ պահել: Եթէ ես այն գիւղացու կալի հետ այնպէս չը վարուէի, եթէ նրա ցորեանը չոչնչացնէի, միւս գիւղացիներն էլ ինձ մարդու տեղ չէին դնի, եւ ես այնուհետեւ չէի կարող ուզածս առնել:

Թոմաս էֆէնդին այնպէս հասարակ կերպով էր խօսում իր վարմունքների մասին, որպէս քուրդը պարծենալով պատմում է իր գործած աւազակութիւնները: Ի՞նչ զանազանութիւն կար այդ հայի եւ Փաթթահ-բէկի մէջ: — Այն զանազանութիւնը միայն, որ մէկը ցած եւ խորամանկ հարստահարիչ էր, իսկ միւսը — քաջ եւ մեծահոգի աւազակ:

Ահա այդ երկու անձինքներից մէկի հետ պիտի կապուէր Թշուառ Լալայի վիճակը: Բայց նրանից ոչ ոք չէ հարցնում, թէ ումն է սիրում նա...

ԺԴ.

Թոմաս էֆէնդին դեռ մի քանի օր մնալու էր Ծերունի Խաչի տանը. նա իր գործերը Օ... գիւղում բոլորովին չէր վերջացրել:

Ծերունի Խաչի տանը ամեն տարի մի քանի անգամ յայտնվում էր մի ուրիշ հիւր եւս. դա մի երիտասարդ

էր Արարատայ գաւառից, որ գնում էր Խաչից ոչխարներ, եղներ, բուրդ, պանիր, իւղ եւ տանում էր Ալէքսանդրապոլի կամ Երեւանի կողմերում ծախելու: Իսկ փոխարէնը նա բերում էր այնպիսի վաճառքներ, որ այս կողմերում չը կային, օրինակ, հագուստի համար զանազան տեսակ գործուածներ, չէթ, կտաւ, մահուդ, թէյ, շաքար, կօֆէ եւ այլ զանազան մանրուքներ: Քաղաքներից հեռու գտնուած գիւղերի համար, որպէս էր Օ... գիւղը, մեծ կարեւորութիւն ունեն այս տեսակ մանր վաճառականները: Նրանք տալիս են գիւղացուն այն, ինչ որ պէտք է նրա համար, եւ փոխարէնը առնում են այն, ինչ որ գիւղացին ինքը հեռու տեղեր տանելու եւ վաճառելու համար շատ արգելքներ ունի, մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր քարվանի բանուկ ճանապարհներ չը կային, եւ աւազակների երկիւղից յարաբերութիւնները համարեա կտրուած էին:

Ամեն անգամ, երբ յայտնվում էր այդ երիտասարդը, մեծ ուրախութիւն էր պատճառում Ծերունի Խաչի տանը: Նա այն աստիճան ընտանեցած էր, որ բոլորը վարվում էին նրա հետ, որպէս իրանց գերդաստանի անդամներից մէկի հետ: Մտնելով Օ... գիւղը, նա իր փոքրիկ քարվանը, որ բաղկացած էր մի քանի բեռնակիր գրաստներից, ուղիղ քշում էր դէպի Ծերունու տունը, բեռները ցած էր բերում եւ այնտեղ շաբաթներով մնում էր, մինչեւ իր առեւտուրը վերջացնելով, կրկին ճանապարհ էր ընկնում:

Թոմաս էֆէնդու դալուց մի օր յետոյ յայտնուեցաւ երիտասարդը, նա հանդիպեց կապալառուին Խաչի տան դրանը, երբ իր բեռները ցած էր բերում ձիաներից:

— Ա՛հ, դու այստե՞ղ ես, ասաց երիտասարդը մօտենալով էֆէնդուն, եւ անդադար երեսը խաչակնքելով: —

Ա՛խ, սատանայի երես տեսայ, էլ այս անգամ իմ գործը չի յաջողուի... յանուն Հօր եւ Որդւոյ...

Լիֆէնդին խիստ ախորժակով ծիծաղելով, բռնեց երիտասարդի ձեռքը, եւ ուղիղ նրա երեսին նայելով ասաց.

— Խենթ ես, խենթ, ես հաղար անգամ ասել եմ, որ դու խենթ ես: — Լաւ, դու այն ասա, ռօմ բերի՞լ ես ինձ համար:

Մի քիչ զահրումար եմ բերել, որ խմես, եւ այդ եղեռնագիւղացիները քո ձեռքից ազատուեն, պատասխանեց երիտասարդը նոյնպէս ծիծաղելով:

Այնտեղ հաւաքուած էին մի քանի գիւղացիներ, որոնք օգնում էին երիտասարդին բեռները ձիերից ցած բերելով եւ ներս տանելով: Լիֆէնդին նկատեց, որ անպատշաճ էր խենթի հետ գիւղացիների առջեւ այստեսակ կատակներ անել, շուտով հեռացաւ, ասելով, որ գիւղում գործեր ունի, եւ աւելացրեց, թէ ճաշը միասին կ'ուտեն:

— Քեզ հետ հաց ուտելը մեղք է, ասաց նրան երիտասարդը:

— Ախար էշի պոչը ոչ կ'երկարի եւ ոչ էլ կը կարճանայ, — քո խելքն էլ այդպէս է, պատասխանեց կապալառուն: — "Էշին Երուսաղէմ էլ տանես, էլի էշ կը մնայ", երբէք մուղդուսի չի դառնայ, աւելացրեց նա:

— Ախ, երբ որ դու սկսեցիր քո էշավարի տառակները, էլ վերջ չը կայ, ասաց երիտասարդը եւ երեսը շուռ տուեց:

Լիֆէնդին հեռացաւ:

Արդէն ծերունի Խաչօի տան մէջ մեծից մինչեւ փոքրը լսել էին, որ Վարդանը եկել է — այսպէս էր երիտասարդի անունը, — եւ անհամբերութեամբ սպասում էին, մինչեւ նա իր բեռները կը բացանէր: Ով

ասես նրան մի բան չէր պատուիրել բերելու իր համար: Նա բեռները տարաւ եւ դարսեց տան սրահի մէջ, եւ ահա վրայ թափուեցաւ Խաչօի տան ամբողջ բանակը: Մէկը հարցնում էր. "բերեցի՞ր իմ պատուիրած կօշիկները". միւսը հարցնում էր. "բերեցի՞ր իմ պատուիրած դլխարկը" — մի խօսքով, ամեն կողմից մի ձայն էր լսվում, եւ ամեն կողմից պահանջումներ էին անում, եւ մինչեւ անգամ փոքրիկ երեխաներն, նրա փէշերից բռնած, զանազան բաներ էին պահանջում եւ հանգստութիւն չէին տալիս:

— Բերել եմ, բերել եմ, պատասխանում էր երիտասարդը, — ամենիդ ուզածը բերել եմ:

— Դէ տուր, դէ տուր, ձայն էին տալիս ամեն կողմից:

— Տօ սատանի լակոտներ, ասում էր երիտասարդը, — թողէք մի հանգստանամ, յետոյ բեռներս բաց կ'անեմ, ինչ որ ուզում էք, կը տամ:

— Հիմայ, հիմայ, կրկնում էին ամեն կողմից:

Տանեցիք այնքան սովորել էին Վարդանին, որ այլ եւս ուշադրութիւն չը դարձրին նրա վրայ, եւ սկսեցին իրանք բաց անել հակերը: Երբ կապերը եւ փաթոթները արձակեցին, այնուհետեւ բոլորը վրայ թափուած, սկսեցին խլել պահանջած իրեղէնները: Երիտասարդը հեռու կանգնած, բարեսրտութեամբ նայում էր նրանց ուրախութեան վրայ, եւ ծիծաղելով ասում էր.

— Ա՛յ, ձեր տունը չը քանդուի, քրդերն էլ այդպէս չեն թալանում վաճառականի ապրանքները:

Բայց միայն մէկը, որ մօտ չեկաւ նրա հակերին, դա Ստեփանիկը կամ այժմեան Լալան էր: Նա հեռու կանգնած, նայում էր եւ երբեմն ժպտում էր:

Երիտասարդը մօտեցաւ նրան եւ հարցրեց.

— Դու ինչո՞ւ մի բան չես վեր առնում։

— Ի՞նչ վեր առնեմ... պատասխանեց նա կարմրելով։

Եւ իրաւ, ի՞նչ վեր առնէր նա։ Նրա կեղծ եւ ծպտեալ տղայութիւնը վաղուց արդէն ձանձրացրել էր նրան, իսկ աղջկայ պատկանող մի բան նա վեր առնել կարող չէր։ Վարդանը հասկացաւ նրա միտքը եւ հազիւ լսելի ձայնով ասաց.

— Ես քեզ համար մի լաւ բան եմ բերել։

— Ի՞նչ բան, հարցրեց աղջիկը նոյնպէս մեղմ ձայնով։

— Ցեռոյ կը տամ, բայց ոչ ոք պէտք է չը տեսնէ...

Լալան կրկին ժպտաց եւ հեռացաւ։

Վարդանը քսան եւ հինգ տարեկան երիտասարդ էր, բարձրահասակ, ամուր կազմուածքով եւ դէմքի խոշոր գծագրութեամբ, որ չէր կարելի ասել, թէ գեղեցիկ էր։ Նրա մեծ, սեւորակ աչքերը աւելի աւազակային արտայայտութիւն ունէին, իսկ փոքր ինչ ուռած շրթունքի վրայ միշտ կարելի էր նշմարել մի դառն հեգնութիւն։ Նրա շարժուածքի համարձակութիւնը եւ ճարպիկութիւնները գործի մէջ իսկոյն ցոյց էին տալիս մի չափազանց մարմնական ուժ։ Իսկապէս ոլոռեղայի էր նա, կամ ի՞նչ տեսակ անցեալ էր ունեցել, — այս կողմերում ոչ ոք չը գիտէր։ Միայն նրա մասին խօսվում էին շատ բաներ, որ լաւ վկայութիւն չէին տալիս նրա վարքի մասին։ Նրան համարում էին մի «թոկից փախած» մարդ, որ կեանքի ամեն մթին խորշերում մտել ու դուրս է եկել։ Մի ժամանակ նա մի

վանքում էր եղել, որպէս սարկաւագ եւ միաբան. մի ժամանակ վարժապետ է եղել. բայց թէ ի՞նչ պատճառով թողեց վանքը եւ դպրոցը, — յայտնի չէր։ Միայն նրա վանքային եւ դպրոցական կեանքից պատմվում էին այնպիսի անեկդոտներ, որ յատկանիշ էին մի տարապայման բնաւորութեան։

Բայց ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ Վարդանը յայտնի էր այս կողմերում, որպէս մի նշանաւոր մաքսախոյս (կանտրաբանդիստ)։ Նա ունէր այդ պարապմունքին յարմար բոլոր պայմանները՝ արիութիւն, ճարպկութիւն եւ սատանայական խելք։ Մշտապէս վտանգների եւ արկածների հետ պատերազմելով, նա սեպհականել էր իրան երկաթի հաստատամտութիւն աներկիւղ քաջասրտութեան հետ։

Կար մի ուրիշ բան եւս։ Ոչ միայն Թոմաս էֆէնդին Վարդանին խենթ էր համարում, բայց, թէ Օ... գիւղում եւ թէ նրա շրջակայքում նա ճանաչուած էր մականունով «խենթ»։ Ի՞նչ բանի մէջ էր նրա խենթութիւնը։ Վարդանը յիմար տղայ չէր. նա շատ կարդացել էր, նա շատ բազմակողմանի գիտութիւններ ունէր։ Նա բաւական ճանաչում էր կեանքը եւ գիտէր մարդկանց կենցաղավարութեան պայմանները։ Նա, չը նայելով իր երիտասարդ հասակին, շատ փորձուած էր եւ շատ տանջանքներ էր կրել մարդերից։ Ուրեմն ի՞նչ բանի մէջ էր նրա խենթութիւնը. — Նրանում միայն, որ Վարդանը կեղծել չը գիտէր, նա մարդիկների նախապաշարմունքներին դէմ էր գնում։ Վարդանը խիստ բացարձակ սիրտ ունէր, եւ ամենի երեսին կ'ասէր, ինչ վատ բան նկատելու լինէր։ Նա մինչեւ անգամ չէր թաքցնում իր սեպհական սխալները, բոլորը պատմում էր, եւ մարդիկ այստեսակ-

ներին միշտ խենթ են համարում։ Նրանք պահանջում են, որ մարդը դրսից ուրիշ կերպարանք ունենար, իսկ ներսից ուրիշ, եւ սաստիկ ատում են ճշմարտախօսին։

Հին իմաստասէրներից եւ մարգարէներից շատերը, եւ մինչեւ անգամ երեւելի Պահլուլը եւ Նասրադին խօջան խենթեր էին համարվում, թէեւ նրանց խենթութիւնների մէջ մի առանձին իմաստութիւն կար։ Բայց Վարդանը ոչ իմաստասէր էր եւ ոչ մարգարէ, միայն նրա դատողութիւնները, հասկացողութիւնը, մտածութեան ձեւը եւ օտարոտի վարմունքը ռամկի աչքում խորթ եւ խիստ տարաւպայման էին երեւում։

Յոստանալով Լալային, թէ «մի լաւ բան է բերել նրա համար», եւ յայտնելով, թէ այդ բանը միայն գաղտնապէս կարող է յանձնել նրան, — այս դէպքում Վարդանը իր սովորութեան համեմատ աչքաբաց լինել չը կարողացաւ։ Կարծես, մի առանձին զգացմունք հարկադրում էր նրան ծածկամիտ լինել։ կարծես, նրա սրտում թաղնուած էր մի նուիրական բան, որ պէտք է անմատչելի մնար օտարներից։ Նա առիթ էր որոնում հանդիպել Ստեփանիկին, եւ հանդիպել, որքան կարելի է, մի ծածուկ տեղում։ Առիթը ինքը իրան տեղի ունեցաւ։

Ես բոլորովին մոռացայ միանգամ գոնէ նկարագրել Ծերունի Յաչօի տան բակի դիրքը։ Նրա ընդարձակութեան մեծ մասը ծածկուած էր խիտ ծառերով եւ զանազան տեսակ թփերով։ Ցունկերը այն աստիճան աճել էին, որ մի քանի քայլ հեռաւորութեան վրայ մարդուն անկարելի էր տեսնել։ Իր ապրանքները, որտեղ պէտք էր, տեղաւորելուց յետոյ, Վարդանը առանձնացաւ պարտէզի մէջ։ Այնտեղ, այն հովանաւոր ծառերի

ստուերի ներքոյ կամենում էր հանգստութիւն գտնել։ Նրա սիրտը սաստիկ տանջվում էր. նրա հոգին գտնվում էր մի քաղցր խռովութեան մէջ... Այսպիսի բոպէներում, ծառը, ծաղիկը, տերեւների շշնջոցը խօսում են սիրահարուածին աւելի մխիթարական խօսքեր, ինչ որ չէր կարող ասել բանաւոր մարդու լեզուն։ Նա պառկած փափուկ խոտերի վրայ, սաղարթախիտ ոստերի միջից երկար անխորհուրդ կերպով նայում էր դէպի կապուտակ երկինքը, հետաքրքրում էր թէ որպէս սպիտակ ամպերի պատառները շտապով լողում էին օդի մէջ, միանում էին, կուտակվում էին միմեանց վրայ, կազմում էին սեւ թուղթեր։ Դա մրրիկ էր գուշակում... Այսպէս էր եւ Վարդանի սիրտը։ Նրա հոգում թագնուած, անորոշ, անկերպարանք կրքերը, կարծես, մի անգամից միախառնուեցան, եւ ձեւակերպեցին այն սրբազան զգացմունքը, որ հոգեբանների լեզուով կոչվում է սէր...

Վարդանը վաղուց գիտէր, որ Ստեփանիկը աղջիկ է։ Նրան յայտնի էին մինչեւ անգամ այն պատճառները, որ ստիպել էին նրա ծնողներին իրանց զաւակին տղայի հագուստով եւ տղայի անունով մեծացնել։ Այդ իսկ հանգամանքները գրաւեցին զգայուն երիտասարդի ուշադրութիւնը դէպի անբախտ աղջիկը, եւ այդ իսկ հանգամանքները լցրին նրա սիրտը մի հերոսական նախանձով, ազատելու նրան իր անբնական դրութիւնից։ Կարեկցութեան զգացմունքը տեղի տուեց սիրոյ զգացմունքին։ Բայց մինչեւ այն օր այդ զգացմունքը լուռ էր Վարդանի սրտի մէջ։ Մինչեւ այն օրը գոնէ միանգամ չէր ունեցել նրա հետ սիրային բացատրութիւններ, եւ ոչ որ եւ իցէ ցոյցով ակնարկել էր նրան, թէ իրան

յայտնի էր նրա աղջիկ լինելը։ Թէեւ Ստեփանիկը խիստ մտերմաբար ընտելացած էր նրա հետ, թէեւ երբեմն բնութիւնը պահանջում էր իրանը, եւ ծպտեալ օրիորդը, չը նայելով իր բոլոր զգուշութեանը, արտայայտում էր այն խորհրդաւոր յատկանիշները, ինչ որ յատուկ են կնոջ, ինչ որ ծածկել չէ կարող հասակ առած աղջիկը...

Վարդանը երկար պառկած էր պարտէզի մէջ, եւ անհանգստութեամբ անդադար մի կողքից միւսի վրայ էր շուռ գալիս։ Ցանկարծ նրա ականջին դիպաւ խշխշոցի ձայն. յետ նայեց, տեսաւ, որ Ստեփանիկը գալիս էր իր մօտ։ Խեղճ երիտասարդի սիրտը սկսեց դողդողալ. երբէք այնպէս չէր բաբախել այն երկաթէ սիրտը...

Ստեփանիկը մօտեցաւ, եւ փոքր ինչ երկչոտ կերպով մի քանի քայլ հեռաւորութեան վրայ կանգնելով, ասաց.

— Ճաշը պատրաստ է, հայրս կանչում է քեզ։

— ԼիֆէնդիՆ էլ այնտեղ է, հարցրեց Վարդանը, պառկած տեղից վեր կենալով, եւ նստելով մի թումբի վրայ, որ շինած էր որպէս հովանոց եւ շրջապատած էր կանաչ պատատուկներով։

Ստեփանիկը մի արհամարհական խոժոռ գործելով իր սիրուն դէմքի վրայ, պատասխանեց.

— Է՛հ, գրողը տանէ նրան, — այնտեղ է։

— Դու էլ չէս սիրում էֆէնդուն, Ստեփանիկ։

— Նրան ո՞վ է սիրում, որ ես սիրեմ։

Վարդանը մտածեց, որ ամենայարմար ժամանակ էր յանձնել Ստեփանիկին նրա համար բերած ընծան։ Նա խնդրեց նրան, որ մի փոքր սպասէ պարտէզում, մինչեւ ինքը կը գնար եւ կը բերէր։ Նա դիմեց դէպի սրահը, ուր բեռների մէջ դարսուած էին նրա ապրանքները եւ

մի քանի բոպէից յետոյ վերադարձաւ, բերելով իր հետ մի կապոց։ Նա կրկին մտաւ հովանոցի մէջ, հրաւիրելով այնտեղ եւ Ստեփանիկին։

— Հայրս սպասում է քեզ, ասաց Ստեփանիկը։

— Շատ չենք ուշանայ, նստիր ինձ մօտ, Ստեփանիկ, դեռ ճաշի ժամանակ չէ։ Հիմայ ես կը տամ քեզ այն բանը, որ բերել եմ քեզ համար։

Ստեփանիկը ուրախացած նստեց նրա մօտ, իսկ Վարդանը սկսեց բաց անել կապոցը։ Նրա մէջ դրած էր մի փոքրիկ արկղիկ, շինուած սեւ փայտից եւ զարդարած գեղեցիկ նկարներով։ Վարդանը հանեց իր գրպանից բանալին եւ բաց արեց արկղիկը։ Նրա մէջ դարսած էին զանազան կանացի գործիքներ՝ մկրատ, մատնոց, ասղաման եւ այլն, բոլորը արծաթով շինած եւ սիրուն կերպով պատրաստած։ Մի կողմում ամրցրած էր փոքրիկ հայելի, իսկ արկղի յատակում կար նուագարան, որը երիտասարդի լարելով սկսեց ածել։ Ստեփանիկը հիացմունքով նայում էր այդ առարկայի վրայ, եւ նա իր կեանքում առաջին անգամն էր տեսնում մի այդպիսի գեղեցիկ բան։

— Լաւն է, հարցրեց Վարդանը, ուղիղ նրա երեսին նայելով, — առ. քեզ եմ տալիս։

Ստեփանիկը, որ սկզբում այնքան ուրախացաւ Վարդանի ընծայով, յանկարծ տխրեց, կարծես մի բան մտաբերեց նա, կարծես, նրան շատ դժուար լինէր այդ ընծայի ընդունելը։ Նա հրաժարուեցաւ, եւ բոպէական շփոթութիւնից յետոյ պատասխանեց.

— Ես ի՞նչ կանեմ մկրատը, մատնոցը եւ ասղամանը... դրանք աղջկայ բաներ են... ինձ համար մի ուրիշ բան պէտք է բերէիր... ինձ համար տղայի բաներ պէտք է բերէիր... ես խօ աղջիկ չեմ։

Այս խօսքը արտասանեց նա մի այնպիսի դողդողուն ձայնով, որ կարծես թէ այրում էին նրա նուրբ-վարդագոյն շրթունքը։

Վարդանը չէր սպասում Ստեփանիկի կողմից մինչեւ այս աստիճան ծածկամտութիւն. նա բոլորովին շուարած մնաց, եւ չը կարողանալով զսպել իր հոգեկան վրդովմունքը, ասաց.

— Դու էլ աղջիկ ես, Լալայ...

— Ա՛խ, դու իմ անունն էլ իմանում ես... դոչեց օրիորդը եւ ընկաւ նրա կուրծքի վրայ։

Երիտասարդը գրկեց նրան, որ ցած չընկնի։ Եւ Լալան իր սրտի սաստիկ խռովութեան մէջ, մի քանի անգամ մեղմ եւ արտասուախառն կերպով արտասանեց այդ խօսքերը. "Ես աղջիկ եմ... այո՛, աղջիկ եմ... Այդ խոստովանութիւնը առաջին անգամ դուրս պրծաւ նրա այնքան տարի փակուած շրթունքներից մի օտար տղամարդի մօտ, որին սիրում էր եւ իր սէրը մինչեւ այն օր յայտնել չէր համարձակվում...

Բայց երիտասարդը եւ օրիորդը իրանց քաղցր յափշտակութեան մէջ ամենեւին չէին նկատում, որ մի զոյգ աչքեր ծառերի միջից նայում էին նրանց վրայ եւ ուրախանում էին։ Դա Սառան էր, որին կոչեց այստեղ նուագարանի ձայնը։

— "Այժմ Լալան ազատուած է„... ասաց նա իր մտքում եւ հեռացաւ։

Ժ Ե.

Ծերունի Խաչօի օդայի մէջ արդէն պատրաստ էր ճաշի սեղանը։ Տանուտէրը եւ Թոմաս էֆէնդին սպասում էին Վարդանին։ Այնտեղ նստած էին եւ կապալառու երկու զափթիանները, որ կառավարութիւնից առած էին

նրան. — երկու անզգամներ, որ ծառայում էին էֆէնդու ամեն տեսակ չարագործութիւնների մէջ։ Բացի դրանցից օդայի մէջ ոչ ոք չը կար, որովհետեւ Խաչօի որդիները երբէք չէին համարձակուի սեղանակից լինել, երբ ճաշի էին նստած այնպիսի պատուաւոր անձինք։

— Հիմայ կը դայ. այնքան կը հաչի, որ հացներս հառամ կ'անէ, ասաց էֆէնդին, խօսելով Վարդանի վրայ։

— Նա թէեւ երբեմն կծու հանաքներ է անում, բայց խիստ բարի սիրտ ունի, նկատեց տանուտէրը։

— Այդ ես էլ գիտեմ, տանուտէր, որ նրա սիրտը չար չէ, բայց բերնումը օձի թոյն ունի։ Ամեն մարդու հետ չէ կարելի հանաքներ անել։ Ես որ հաղում եմ, մարդիկ դողում են ինձանից։ Պէտք է գիտենալ, թէ ով է Թոմաս էֆէնդին։ Դու խօ տեսա՞ր սուլթանի ֆիրմանը։ Բայց ես քեզ մի ուրիշ բան կ'ասեմ. Արզրումի վալին ինձ միշտ իր ծնկի մօտ էր նստեցնում, տես, եթէ չես հաւատում, դրանցից հարցրու, նա ցոյց տուեց երկու զափթիանների վրայ։

"Աղուէսից վկայ ուզեցին, իր պոչը ցոյց տուեց„։ Այդ երկու խաբեբաները պատրաստի եւ երդուեալ վկաներ էին էֆէնդու ամեն մի ստախօսութիւնների համար։

— Մի՞թէ ես չեմ հաւատում, պատասխանեց տանուտէրը։

Թոմաս էֆէնդին զայրացած էր Վարդանի դէմ ոչ միայն նրա համար, որ երիտասարդի առաւօտեան խօսքերը վիրաւորեցին նրան, այլ ամեն անգամ, երբ նա պատահում էր կապալառուին, սովորութիւն ունէր նրան խայտառակել։

— Ես, ասաց կապալառուն, եթէ ուզենամ մի բոպէում աշխարհը տակնուվրայ կ'անեմ, եւ այդ անպիտանին ցոյց կը տամ, թէ ո՞վ է Թոմաս էֆէնդին։

— Ջահիլ է, խօսեց բարեսիրտ Ծերունին, — Ջահիլ խօսքը կշեռքի մէջ չեն դնում։ Բայց ես դարձեալ կ'ասեմ ձեզ, որ նա այնքան վատ տղայ չէ, որքան դուք կարծում էք։

Այդ միջոցին ներս մտաւ Վարդանը, բոլորովին, գունաթափ, մտայոյզ եւ լուռ։ Թոմաս էֆէնդին, որ լոպէ առաջ այնպէս բարկացած խօսում էր նրա դէմ, ինչպէս ասում են՝ "պոչը քաշեց", եւ իր յատուկ շողոքորթութեամբ ասաց նրան.

— Օրհնած, որքան սպասել տուեցիր ինձ, դու գիտես, որ առանց քեզ մի պատառ հաց անգամ Թոմաս էֆէնդին բերանը չի դնի։

— Ես գիտեմ... պատասխանեց երիտասարդը, եւ առանց նրա վրայ նայելու, գնաց իր տեղը նստեց։

Ճաշի ամբողջ ժամանակը Վարդանը նոյնպէս շատ քիչ խօսեց. խիստ տխուր էր, եւ կարելի էր մտածել, թէ կամ հիւանդ է եւ կամ մի տեղը ցաւում է։ Այդ մշտածիծաղ բնաւորութիւնը այժմ մռայլուել եւ թաղել էր ամպամած երկնքի նման։ Սէրը, որ շատերի մէջ ուրախութիւն եւ բաւականութիւն է ծնեցնում, որ շատերին խելքից հանում է, շատերի սիրտը լեցնում է մի սրբազան զգացմունքով, եւ քաղցրացնում է նրանց կեանքի դառնութիւնները, — սէրը տխրեցրել էր այդ մարդուն։ Նա սեղանի մօտ շատ փոքր կերաւ, բայց չափազանց խմեց, կարծես թէ գինու բաժակներով աշխատում էր հանգցնել իր սրտի կրակը։

Թոմաս էֆէնդին, իր սովորութեան համեմատ, շատախօսում էր։ Ի՞նչեր ասես, չէր պատմում նա իր կեանքից եւ իր անցեալից։ Եւ նրա բոլոր խօսակցութիւնների մէջ երեւում էր, որ Թոմաս էֆէնդին մի նշանաւոր մարդ էր։

Ներսէս պատրիարքը նրան միշտ "որդի" էր կոչում. Խրիմեանին չէր հաւանում, որովհետեւ շատ հասարակ մարդ է եւ իրան թոյլ է տալիս մշեցի եւ վանեցի համալների հետ "մասլահաթներ" անել. Նուբար փաշան իր նամակների մէջ նրան միշտ գրում է "ազնիւ բարեկամ"։ Թէ Բոսֆորի ափերի վրայ նա մի պալատ ունի, որ անգլեացիներին վարձով է տուած. թէ Երուսաղէմի տաճարին նրա պապերը ընծայել են մի մեծ գումար, որի համար ամեն օր Ս. Յակոբայ վանքում պատարագ են մատուցանում իրանց աղգատոհմի համար. թէ իր եւ Օտեանի մէջ սառնութիւն ընկաւ, պատճառն այն էր, որ նա իր աղջիկը ուզում էր տալ, բայց ինքը չուզեց առնել եւ այլն եւ այլն. — հազարումէկ այս տեսակ առակներ էր պատմում նա, բայց Վարդանը համարեա չէր լսում, իսկ միամիտ տանուտէրը հեռաքրքրութեամբ լսում էր եւ զարմանում էր։ "Ո՞րքան բախտաւոր կը լինի իմ Լալան, մտածում էր նա, երբ մի այսպիսի մարդու կինը կը դառնայ, որը Օտեանի աղջիկը չէ առել, որը Բոսֆորի ափերի մօտ պալատ ունի"։

Յետոյ նա սկսեց խօսել պոլիտիկայից։ Այդ այն քաղաքական յուզմունքների ժամանակն էր, որ Բալկանեան թերակղզու վրայ սլաւոնական ժողովուրդը աշխատում էր իր արիւնով ազատութիւն ձեռք բերել. Կ. Պոլսում կոնֆէրենցիա էր կազմուել նրանց վիճակը անօրինելու համար, եւ Միթհադը, այդ երեւելի դիպլոմատիկական ձեռնածուն, հրատարակել էր օսմանլիների սահմանադրութիւնը։ Թոմաս էֆէնդին էլ, գիւղական օդայի մէջ նստած, վճռում էր հայոց ազգի ապագան։

Խօսելով սլաւոնների "խենթութիւնների" վրայ, որ նրանք համարձակուեցան ապստամբուել մի "բարերար" ազգի դէմ, որպէս Թուրքն էր, Թոմաս էֆէնդին սկսեց

սաստիկ յարձակուել հայերի վրայ, յայտնելով, թէ հայերի մէջ էլ գտնվում են այնպիսի "խենթեր", որոնք Թուրքի լուծը ծանր են համարում եւ քաղաքական ազատութեան, ինքնավարութեան վրայ են մտածում: Նա յայտնեց, թէ առանց Թուրքերի հայերը մի կորած ժողովուրդ են, թէ հայերը իրանք իրանց կառավարել չեն կարող:

Այդ ժամանակ միայն Վարդանը չը կարողացաւ համբերել: Նա ասաց.

— Ձեզ նմաններին, որ ծծում էք հայի արիւնը Թուրք կառավարութեան անկարգութիւնների շնորհիւ, — ձեզ նման մուլթէզիմներին, կապալառուներին, ի հարկէ, միշտ օգտակար է Թուրքը եւ նրա անարդար ու անիրաւ իշխանութիւնը: Դուք ջրի պղտորութեան մէջ ձուկ բռնողներ էք. պարզութիւնը ատելի է ձեզ: Դուք խաւար էք սիրում, որովհետեւ գողերը ատում են լոյսը:

— Պարոն, ձայն տուեց կապալառուն, մտածիր, որ քեզ մօտ երկու զափթիաներ են նստած:

— Այդ զափթիաներով դու վախեցրու այն խեղճ եւ ողորմելի գիւղացիներին, որոնք այն ատիճան տխմար են, որ հաւատում են, թէ դու Բասֆօրի վրայ պալատներ ունես, թէ դու Օտեանի աղջիկը չառեցիր, կամ Ս. Յակոբայ տաճարում ամեն օր քո հոգու համար պատարագ են մատուցանում... Անէծք, միայն անէծքի արժանի են ձեզ-պիսիները... Դուք էք հայի տունը քանդողները, սկսեալ գիւղական ենչին սուլթէղիմից, որի ներկայացուցիչն ես դու, մինչեւ Բարձր Դրան այն խոշոր ամիրաները, որոնք իրանց շահերի համար իրանց ազգի շահերը վաճառում են...

Թոմաս էֆէնդին բարկանալ չը գիտէր, այսինք կամենում եմ ասել, որ նա բարկանում էր այն ժամանակ միայն, երբ տեսնում էր, որ իր հակառակորդը իր ատամների

մարդ է, որին կարող է դզդզել, կարող է ուզածին պէս միսը ծամել: Բայց նա Վարդանին վաղուց ճանաչում էր, այս պատճառով, իր անզգոյշ սխալը ուղղելու համար նա աշխատեց բանին կատակի ձեւ տալ, ասելով.

— Տեսնում եմ, որ դէնին շատ թունդ էր. օրհնած, ինչու՞ ես այսքան խմում, երբ խմելու շնորհք չունես:

Վարդանը խէթ աչքով նայեց նրա երեսին եւ ոչինչ չը պատասխանեց: Նրա երեսի վրայ կարելի էր նշմարել զզուանք միայն դէպի այդ ցած շողոքորթը:

Ծերունին նոյնպէս լուռ էր. նա զգում էր Վարդանի խօսքերի ճշմարտութիւնը, բայց մի եւ նոյն ժամանակ չէր հաւանում նրա համարձակութեանը, մտածելով, որ մի պաշտօնական մարդու հետ անվայելուչ էր այսպէս խօսել: Այս պատճառով նա շատ ուրախ եղաւ, երբ ճաշը վերջացաւ, բայց չէր սպասում, որ մի նոր խռովութիւն եւս պիտի ծագէ:

Ճաշելուց յետոյ խոկոյն զահվէ տուեցին, տեղային սովորութեան համեմատ, առանց շաքարի: Թոմաս էֆէնդին պատուիրած էր, որ ամեն անգամ, երբ ինքը այս տանը զահվէ խմելու լինի, պէտք է նրանից յետոյ ծխելու չիբուխը Ստեփանիկը պատրաստէ, — "որովհետեւ Ստեփանիկի ձեռքով պատրաստած չիբուխը աւելի համով է լինում", ասում էր նա: Մի զարմանալի դաղանիք կար այս խեղճ պատանու ճակատագրի մէջ: Փաթթահ-բէկը Խաչօի տանը հիւր եղած ժամանակը պահանջում էր նրա ձեռքից զահվէ ընդունել, ասելով, թէ "շատ համով է լինում", իսկ Թոմաս էֆէնդին նոյն մտքով չիբուխ էր պատրաստել տալիս: Գոնէ քուրդ բէկը գիտէր Ստեփանիկի աղջիկ լինելը եւ սիրում էր նրան, բայց հայ էֆէնդին նոյնպէս գիտէր այդ դաղտնիքը, նոյնպէս սիրում էր նրան, որ նրա ձեռքով պատրաստած չիբուխը համով էր լինում...

Երբ Ստեփանիկը տաճկական երկար չիբուխը ներս բերեց, եւ մոտեցաւ, կամենում էր տալ էֆէնդուն, Վարդանը բոլորովին դժուեցաւ։ Նրան յայտնի էր այդ թուրքական սովորութեան կեղտոտ նշանակութիւնը, այս պատճառով նա խլեց պատանու ձեռքից չիբուխը, եւ դուրս ձգելով օդայի պատուհանից, ասաց նրան.

— Հեռացիր, Ստեփանիկ։

Պատանին շուարած դուրս գնաց։

Կարծես չիբուխը էֆէնդու գլխին զարկեցին. նա կատաղեցաւ։

— Այդպիսի հանաքներ ես չեմ սիրում, ասաց նա, — դու անպատուում ես ինձ։

— Քեզ նման մարդիկ պատուի վրայ խօսելու իրաւունք չունեն։

— Ե՞ս, ես, այս ամբողջ գաւառի մուլթէզիմը, գոռաց կապալառուն։

— Այո՛, դուն, — այս ամբողջ գաւառի աւազակը։

Կապալառուն մի քանի շարժումներ գործեց, ցոյց տալով, թէ ուզում է տեղից վերկենալ։

— Մի՛ շարժուիր, եթէ ոչ, շան նման կը սատկացնեմ, ասաց Վարդանը, ձեռքը տանելով դէպի իր սուրը։

Զափթիաներից մէկը մէջ մտաւ.

— Իզուր էք բարկանում, պարոն, էֆէնդին ձեզ խօ մի վատ բան չասեց։

Վարդանը, առանց նրա վրայ ուշադրութիւն դարձնելու, կրկին դիմեց կապալառուին, ասելով.

— Լաւ, սովորել էք թուրքերի նման ամէն հայի տուն մտնել, նրա սեղանը լափել, նրա դէմին լակել եւ նրա հարսին, աղջկան, ջահել տղային անարժան ծառայութիւններ անել տալ։ Լաւ...

Ծերունի տանուտէրը մնացել էր քարացած, նրա բերանը փակուել էր, իսկ երբեմն երեսը խաչակնքում էր եւ Աստուծոյ անունն էր տալիս, որ չարը խափանուի։

Բայց էֆէնդին որքան պոռոտախօս էր, որքան պարծենկոտ էր եւ որքան փքուած սպառնալիքներ կարդալ գիտէր, այնքան էլ աղուէսի նման երկչոտ էր։ Նկատելով ռուսաստանցի երիտասարդի վայրենի կատաղութիւնը, հասկացաւ, որ նրա հետ չէր կարելի վարուել, որպէս վարվում են Աշչերտի հայ գիւղացու հետ. նա իր մօտ սուր ունէր եւ մոսկովների թագաւորի հպատակն էր։ Այս պատճառով, իր "փասափուսէն„ հաւաքելով, խիստ մեղմ ձայնով ասաց.

— Աստուած էլ գիտէ, որ ես թուրքերի սովորութիւններին չեմ հետեւում։ Դու խղճ ղրպարտում ես ինձ, Վարդան։

Վարդանը պատասխանեց առաջուայ խռովուած ձայնով.

— Ե՞ս եմ ղրպարտում... քեզ, որ թուրքերի մօտ նամազ ես անում, իսկ հայոց եկեղեցու սեղանի վրայ պատարագ ես մատուցել տալիս ռամիկների համակրութիւնը գրաւելու համար... քեզ, որ բոլոր թուրքերի մօտ ասում ես, թէ բոլոր հայերը "գաւուրներ„ են. իսկ հայերի մօտ հայհոյում ես նրանց... քեզ, որ թուրքերի կառավարութեան առջեւ մատնում ես ամէն մի աղնիւ եւ իր ազգի շահերը մտածող հային... քեզ, որ աւազակների հետ ընկերանում ես եւ դատարանների առջեւ սուտ վկայութիւն ես տալիս, թէ հայերը անիրաւացի են բողոքում իրանց հարստահարութիւնների մասին... քեզ, որ տասը տեղ պսակուել ես, կին ես առել, քո կնիկները թողել ես եւ այստեղ կրկին ուզում

ես ամուսնանալ... — Դու չէ՞ս հետեւում Թուրքերի սովորութեանը... Բայց ես կասեմ, ու Թուրքը հազարապատիկ աղնիւ մարդ է, քան թէ քեզ նման հայը, որովհետեւ, դու ոչ հայ ես եւ ոչ Թուրք...

Վերջին խօսքը, թէ էֆէնդին տասը տեղ պսակուել է եւ այստեղ կրկին ուզում է ամուսնանալ, — կայծակի նման հարուածեց խեղճ Ծերունի Խաչօին: Ախար նա իր Հալային ուզում էր տալ այդ մարդուն, որ Կ. Պոլսում ամիրայ ազգականներ ունէր, որ Բոսֆորի ափերի մօտ պալատ ունէր, որ Օտեանի աղջիկը չէր առել... "Ոչ, ոչ, մտածեց նա, Վարդանը զբպարտում է նրան. Թոմաս էֆէնդին խարեբայ մարդ չէ„...

Վարդանը իր սրտի բոլոր մաղձը դուրս Թափելուց յետոյ դուրս գնաց: Նրա բացակայութեան ժամանակ էֆէնդու լեզուն բացուեցաւ:

— Ես անպատճառ կը գրեմ սուլթանին, ասաց նա առանձին նշանակութիւն տալով իր խօսքերին, — ես ռուսաց Թագաւորին էլ կը գրեմ, եւ անպատճառ այդ անպիտանին Սիբիր կորցնել կը տամ... Թոմաս էֆէնդու հետ այս տեսակ հանաքներ անել չէ կարելի... "Էշին մինչեւ չը ծեծես, իր չափը չի ճանաչի„...

Թոմաս էֆէնդին սովորութիւն ունէր միշտ մեծ մարդերի անունով սպառնալիքներ կարդալ, եւ ցոյց տալ Թէ ինքը նրանց հետ յարաբերութիւններ ունի, եւ ինչ որ կամենայ, կարող է կատարել: Ծերունի Խաչօն, Թէեւ յիմար մարդ չէր, բայց այնքան շատ հարուածներ էր կերել այս տեսակ մանր էֆէնդիներից, որ միւս գիւղացիների նման ինքն էլ հաւատում էր, Թէ նրանք ինչ որ կամենան, կարող են կատարել: Այս պատճառով, ·ով էֆէնդու վերջին խօսքերը, Թէ նա Վարդանին

Սիբիր կորցնել կը տայ, վեր կացաւ, եւ կապալառուի ծնկները գրկելով, արտասուքը աչքերում սկսեց աղաչել.

— Ի սէր Աստուծոյ, մի՛ կորցնէք նրան, իմ ալեւոր գլխին բաշխեցէք, դուք գիտէք, որ նա խենթ է...

Էֆէնդին առժամանակեայ մտածութիւնից յետոյ պատասխանեց.

— Քեզ եմ բաշխում, Ծերունի, որովհետեւ քո տան հացը կերել եմ:

Ժ Զ.

Փորձանքը խումբերով է գալիս, երբ կամենում է խաւարացնել եւ խաղաղ ընտանիքի բարօրութիւնը: Ամեն կողմից դժբախտութիւնը սկսել էր պաշարել Ծերունի Խաչօի տունը. ամեն կողմից սպառնում էին նրան զանազան տեսակ վտանգներ:

Վարդանի կռիւը Թոմաս էֆէնդու հետ ծանր տպաւորութիւն գործեց ամբողջ ընտանիքի վրայ: Տանեցիներից ոմանք խօսում էին եւ ծիծաղում էին էֆէնդու երկչոտութեան վրայ եւ գովասանում էին Վարդանին, իսկ ոմանք մեղադրում էին նրան, ասելով, խենթ է եւ իր լեզուն պահել չը գիտէ: Առաւել զայրացած էին Վարդանի դէմ Խաչօի որդիներից մի քանիսը, Օհանը եւ Յակոն: Նրանք ասում էին, Թէ ինչպէս կարելի է կառավարութեան մարդուն այնպէս խայտառակել: Կառավարութեան մարդը ոչ միայն իր պաշտօնակատարութեան ժամանակ, այլ եւ մասնաւոր կեանքի մէջ, նրանց կարծիքով, պաշտօնական նշանակութիւն ունէր, նրան հակառակել անկարելի էր:

Ոչ սակաւ անհանգիստ էր եւ Ծերունի տանուտէրը: Նա Թէեւ չէր մեղադրում Վարդանին, բայց որքան էլ

իրաւացի լինէր նա, այսուամենայնիւ, նրա վարմունքը էֆէնդու վերաբերութեամբ անսպատշաճ էր համարում։ Ծերունի Խաչօն լաւ էր ճանաչում էֆէնդու հոգին. այդ հին չարագործը պիտի աշխատէր վնասել Վարդանին, եւ եթէ վնասել չը կարողանար, նրան շատ հեշտ էր իր վրէժխնդրութիւնը թափել խեղճ ծերունու տան վրայ։ Կապալառուն օրինաւոր պատճառներ ունէր մատնելու տանուտէրին կառավարութեան առջեւ, նրա համար, որ իր տանը ընդունում էր Վարդանի նման նշանաւոր կանտրաբանդիստին։

Միւս կողմից, ծերունի Խաչօն զրկվում էր մի մեծ յոյսից։ Նրա մտատանջութեանը չափ չը կար, սկսեալ այն րոպէից, երբ լսեց Վարդանի բերնից, թէ Թոմաս էֆէնդին մի քանի անգամ ամուսնացած է եղել եւ զանազան տեղերում կնիկներ է թողել։ Այդ մարդու համար էր նշանակել նա իր Հալային, հիմայ նրա բոլոր յոյսերը ոչնչացան։ Բայց ինչո՞վ եւ ո՞րպէս կարելի էր ստուգել, թէ Վարդանը ուղիղ էր ասում։ Թէեւ ծերունին նրան ստախօս չէր համարում, բայց ո՞վ է իմանում, կռիւի մէջ յայտնուած ամեն ճշմարտութիւն կասկածաւոր է թւում։

Իսկ այդ դարշելի եւ անամօթ կապալառուի ինչն էր գրաւում ծերունի Խաչօին, որ ցանկանում էր իր սիրելի աղջկայ բախտը կապել մի այնպիսի խաբեբայի հետ։ Ծերունին գիտէր, որ նա մի անգութ, անխիղճ եւ ցած հարստահարիչ է, թէ նրա համար ոչինչ սուրբ բան չը կար, թէ նա պատրաստ էր իր շահերին ամեն բան զոհել։ — Այսուամենայնիւ, ծերունին ամեն բան մոռանում էր, երբ իր առջեւ տեսնում էր իշխանութիւն։ Նա մի հին նախապաշարմունքով միշտ պատրաստ էր

խոնարհուել մուդիրի առջեւ։ Նրա կարծիքով, արքունի մուլթէզիմի, այդ փոքրիկ պաշտօնական մարդու մունդիրի մէջ ծածկվում, անյայտանում եւ ոչնչանում էին ամեն տեսակ անաղնութիւններ։ Պաշտօնը սրբում էր կեղտերը։

Այս պատճառով ծերունի Խաչօին խիստ հրապուրիչ էր ունենալ էֆէնդու նման մի փեսայ, որ բարձր էր հասարակ ամբոխից, որի առջեւ բոլորը խոնարհվում էին։ Ծերունին որքան էլ պարզ եւ արդարամիտ մարդ լինէր, բայց որպէս տանուտէր, որպէս մի ամբողջ գիւղի գլխաւորը, ունէր իր փոքրիկ փառասիրութիւնները։ Նա դժուար կը համաձայնուէր իր աղջիկը տալ մի հասարակ գիւղացու, մանաւանդ երբ այնպիսի խորհրդաւոր պայմանների մէջ էր պահել եւ մեծացրել նրան։ Թոմաս էֆէնդու ընտրութեան մէջ նա ունէր մի ուրիշ գործնական նպատակ եւս։ Ինքը որպէս տանուտէր, անդադար յարաբերութիւններ ունենալով տեղային կառավարութեան հետ, էֆէնդին կարող էր շատ դժուարութիւնների մէջ օգնել նրան։ Իսկ այժմ նրա յոյսերը միանգամով ոչնչացաւ...

Այդ բոլորի հետ, եթէ նրան յայտնի լինէր, թէ ինչ վիճակ է սպասում իր սիրելի Հալային քուրդ Փաթթահ-բէկի կողմից, այն ժամանակ գուցէ գերեզմանը միայն կարող կը լինէր վերջ դնել խեղճ ծերունու ցաւերին։ Բայց որդիները դեռ նրան ոչինչ չէին յայտնել։ Այդ գաղտնիքի կսկիծը ցեցի նման ուտում եւ մաշում էր նրա որդիների, մանաւանդ Հայրապետի եւ Ապօի սրտերը միայն, որոնք, իրանց եղբայրների հետ ունեցած անցաջող խորհուրդից յետոյ, չը գիտէին, թէ ինչ պէտք էր անել իրանց քրոջ կորուստից ազատ պահելու համար։ Ի՞նչ կը լինէր խեղճ Հալայի վիճակը, երբ քուրդ բէկը կը յափշտակէր, կը տանէր նրան հօր տնից. կարո՞ղ էր նա

մահմեդականի կին լինել, թէ իր քոյր Սօնայի նման իր կեանքի դառնութիւնները կը վերջացնէր անձնասպանութեամբ...

Այդ բոլոր մտատանջութիւնները, այդ բոլոր տխուր թախիծները Լալայի համար էին, բայց նա միայն էր, որ այն ժամանակ իրան ուրախ էր զգում եւ իրան բախտաւոր էր համարում։ Իր սիրած տղամարդի ձեռքից խորհրդաւոր արկղիկը ընդունելուց յետոյ, այժմ, կարծես, նրան այրական հաղուստը այլում լինէր նրա մարմինը։ Նա աղջիկ էր, ցանկանում էր աղջկայ նման հագնուել, ցանկանում էր կին լինել... Նա դեռ զգում էր իր շրթունքի վրայ Վարդանի ջերմ համբոյրները, եւ նրա ականջներին դեռ զարկում էին երիտասարդի քաղցր խօսքերը։ Բայց սկսեալ այն րոպէից, երբ նա իր աչքով տեսաւ Վարդանի յաղթութիւնը էֆէնդու դէմ, մի մարդու դէմ, որի առջեւ դողում էր ամբողջ գաւառը, — Վարդանի նշանակութիւնը աւելի բարձրացաւ օրիորդի աչքում։ Զը գիտեմ ինչո՞ւ կնիկները սիրում են տղամարդի մէջ տեսնել մեծութիւն, դերազանցութիւն եւ զօրութեան անհամեմատ առաւելութիւն։ Նրանք հիանում են, երբ տղամարդի մէջ նկատում են մի յատկութիւն, որ բարձր էր կանացի ուժից։ Վարդանը պաշտելի դարձաւ Լալային, երբ իր զօրութեան ներքոյ ճնշեց, ոչնչացրեց հպարտ կապալառուին, որին Լալան բոլոր սրտով ատում էր։ Լալային շատ անգամ պատահել էր համբերել այդ անամօթի լրբութիւններին, եւ ամեն անգամ, երբ նա իր հօր տունն էր գալիս, նա միշտ աշխատում էր փախչել եւ թագնուել նրանից, բայց հայրը դարձեալ կանչել էր տալիս նրան, որ էֆէնդու համար չիբուխ պատրաստէ, որովհետեւ նրա ձեռքով պատրաստուած չիբուխը համով էր լինում...

Լալան օդայի մէջ տեսած եւ լսած բոլոր բաները պատմեց իր երէց եղբօրը՝ Հայրապետին, թէ որպէս վարուեցաւ Վարդանը էֆէնդու հետ։

— Շատ լաւ է արել, պատասխանեց Հայրապետը, պէտք է սատկացնէր այն գարշելին, սովորել է խեղճ գիւղացիներին տանջել, կարծում է, թէ ամեն մարդ նրանց նման կը լինի։

Լալան պատրաստվում էր իր եղբօր պարանոցին փաթաթուել եւ նրա առջեւ բաց անել իր սիրտը, բոլորը պատմել նրան, թէ ինքը սիրում է, վաղուց սիրում էր Վարդանին, եւ խնդրել, որ նա այդ մասին խօսէ իր հօր հետ։ Բայց Հայրապետը շուտով անցաւ դուրս գնաց, կարծես, մի շատ հարկաւոր գործ դրսում սպասում էր նրան։

Նրա կինը՝ Սառան այսօր պէտք է տեսութիւն ունենար Փաթթահ-բէկի կնոջ՝ Խուրշիդի հետ։ Վաղ առաւօտեան յայտնուեցաւ Ջաւօն եւ ասաց, թէ իր տիկինը ուխտագնացութեան պատրաստվում է գայ Օ... գիւղին մերձաւոր հին մատուռի մէջ մատաղ կտրելու, որովհետեւ նրա փոքրիկ որդին հաղում էր, եւ նշանակել է այնտեղ տեսութիւն Սառայի հետ։ Այդ մատուռը հաւասար կերպով պաշտվում էր թէ քրդերից եւ թէ հայերից։ Սառան շատ ուրախացաւ, երբ տեսաւ, որ Խուրշիդը կատարել է նրա ցանկութիւնը, որովհետեւ նա ինքը առաջուց Ջաւօի միջոցով խնդրել էր այդ տեսութեան մասին։

Բաժանուելով Լալայից, Հայրապետը շտապում էր գնալ, տեսնել, թէ ի՞նչ եղաւ տեսութեան հետեւանքը։ Նա դուրս եկաւ գիւղից, եւ կէս ճանապարհի վրայ նստած, մի ահագին ժայռի հովանու ներքեւ

անհամբերութեամբ սպասում էր Սառային, որ մատուռից պիտի վերադառնար նոյն ճանապարհով։

Խիստ հետաքրքիր տեսարան էր ներկայացնում այն տեղը, ուր նստած էր Հայրապետը։ Դա մի լեռան ոտորոտ էր, որ ծածկուած էր ժայռերի բեկորներով, որոնք ժամանակի խորտակիչ ձեռքով ջարդ ու փշուր եղել եւ թափուել էին ցած։ Նրա շրջակայքը պատած էր վայրենի մացառներով եւ զանազան տեսակ թփերով, որոնց միջից տեղ-տեղ բարձրանում էին ծառեր։ Հայրապետի ուշադրութիւնը գրաւեց մի խնձորենի. նա տեսաւ, որ ժիժքը[1] փաթաթուել էր նրա բունին, վեր էր բարձրացել, եւ ճճելով, գէպի ամեն կողմը տարածել էր իր օձի նման ոլորուն ոստերը։ Նա, կարծես, աշխատում էր իր ծանրութեան ներքոյ ճնշել, խեղդել, մաշել եւ միանգամից կլանել խեղճ խնձորենուն, որի վերին ճիւղերը արդէն գօսացել, տերեւներից զրկուել եւ չորացել էին... Լինում են լոպէներ, որ հասարակ մարդն անգամ փիլիսոփայ է դառնում։ "Ահա մի գեղեցիկ օրինակ, մտածում էր Հայրապետը, ահա մի վայրենի բոյս, որ ինքը չէ գործում, չէ աշխատում, մայր հողի մէջ արմատներ չունի, այլ իր ճանկերի մէջ յափշտակելով մի աւելի քաղաքակրթուած եւ պտղատու բոյսին, ձրի կերակրվում է նրա հաշուով, ադահութեամբ ծծում է նրա հիւթը, եւ վերջապէս սպառելով նրա կենսական ուժերը, սպանում է նրան... Միթէ այդպէս չէ՞ վարվում մեզ հետ քուրդը. միթէ նա էլ մի այսպիսի ժիժք չէ՞, որ ապրում է խեղճ հայի հաշուով։

[1] Ժիժքը պատատուկների կամ պարաղիտների մի տեսակն է. պարաղիտները կերակրվում են օտար բոյսերի հիւթով։

Հայրապետը զգայուն մարդ էր եւ բաւական պարզ հասկացողութիւններ ունէր։ Ո՞րտեղից նա սեպհականեց իրան այդ հասկացողութիւնները։ Ի հարկէ, եթէ նա իր հայրենի աշխարհի հորիզոնից միանգամ եւս ոտքը դուրս դրած չը լինէր, անտարակոյս, կը մեծանար, կը զարգանար նոյն սահմանափակ նախապաշարմունքներով, որպէս էին նրա հայրենակիցները։ Բայց բախտը ուրիշ կերպ տնօրինեց նրա կեանքը։ Նա իր երիտասարդութիւնը անց էր կացրել օտար աշխարհներում։ Դեռ պատանի հասակում Հայրապետը, չը գիտեմ ինչ պատճառով, անբաւականութիւն ունեցաւ հօր հետ, եւ որպէս այդ շատ անգամ պատահում է գաւառներում, թողեց հօր տունը եւ սկսեց թափառել երկրէ երկիր։ Ճակատագիրը նրան ձգեց Կ. Պոլսի մէջ, որ ներկայացնում է Եւրոպայի եւ Ասիայի հանդոյցը։ Այստեղ անցաւ նա կեանքի զանազան շրջաններից, եւ թէեւ մի հիմնաւոր բան չը սովորեցաւ, բայց սեպհականեց շատ լուսաւոր գաղափարներ, որ ծանօթ չեն հասարակ գիւղացուն։

Հայրապետը երկար նստած այն քարաժայռի հովանու ներքոյ, սպասում էր կնոջը։ Արեւը մօտ էր մայր մտնելու եւ նրա վերջին ճառագայթները գեղեցիկ կերպով լուսաւորում էին լեռների գագաթները։

Վերջապէս յայտնուեցաւ Սառան։ Հայրապետը հեռուից նշմարեց նրա պայծառ դէմքը, որով նախադուշակեց, թէ կինը բերում էր ուրախալի լուրեր։

— Տղա՞յ է, թէ աղջիկ, հարցրեց Հայրապետը հեռուից։

— Տղայ է, պատասխանեց կինը ժպտելով, եւ նրատեց ամուսնի մօտ, որովհետեւ շատ յոգնած էր։

Այդ ռամկական հարց ու պատասխանը նշանակում էր, թէ ծնունդը ո՞ր սեռին է պատկանում, այսինքն տեսութեան հետեւանքը ուրախալի՞ է, թէ տխուր. ուրովհետեւ գիւղացու հասկացողութեամբ տղան ուրախութիւն է նշանակում, իսկ աղջիկը տխրութիւն։

Սառան սրբեց ճակատի քրտինքը, մի փոքր շունչ առեց, հանգստացաւ, եւ ապա սկսեց պատմել, թէ ինչ խօսեց եւ ինչ լսեց քուրդ տիկնոջից։ Նրա պատմութեան բովանդակութիւնը այս էր.

Յուրշիդը յայտնել էր, թէ բէկը այժմ շատ չէ մտածում Ստեփանիկի մասին, թէ զբաղուած է այնպիսի ծանր հոգսերով, որ առժամանակ դոնէ նրան մոռանալ են տուել Ստեփանիկի սէրը։ Նա ասել էր, թէ բէկը հրահանգներ է ստացել Արզրումի վալիից եւ այժմ ինչ որ պատրաստութիւններ է տեսնում, — իր ցեղի տղամարդերի անձնահամարն է հաշվում, նրանց զէնքեր է բաժանում, փող է տալիս, որ իրանց համար ձիաներ առնեն, հագուստ պատրաստեն եւ այլն։ — Բայց թէ ի՞նչ ձեռնարկութեան համար են այդ պատրաստութիւնները, ինքը Յուրշիդը չը գիտէ։ Միայն նա դարձեալ խորհուրդ է տալիս, որ Ստեփանիկին կամ մի հեռու տեղ փախցնեն եւ կամ շուտով մի մարդու հետ ամուսնացնեն, որովհետեւ ինքը հաստատ գիտէ, որ բէկը վերջ ի վերջոյ կը կատարէ իր մտադրութիւնը խեղճ աղջկայ մասին։ "Թէեւ, աւելացրել էր տիկինը, ես այդ մասին խօսել եմ իմ հօր հետ, թէեւ իմ հայրը խոստացաւ սանձ դնել բէկի կրքերին, բայց ինքը, Յուրշիդը, շատ չէ հաւատում բէկի խոստմունքներին, եւ գուցէ գործը այն հետեւանքը կ'ունենայ, որ ինքը ստիպուած կը լինի թողնել իր ամուսնի տունը եւ բաժանուել նրանից"։

Հայրապետը խորին ուշադրութեամբ լսում էր Սառայի պատմութիւնը, երբ վերջացրեց, նա ասաց.

— Դրանով վատնդը չէ կարելի անցած համարել։ Այս բոլոր պատմութեան մէջ միայն մի ուրախալի բան կայ, այն է, որ գործը կը յետաձգուի եւ մենք ժամանակ կը վաստակենք Լալայի վիճակը տնօրինելու համար։

— Ես էլ այսպէս եմ մտածում, պատասխանեց Սառան։

— Ուրեմն ինչ պէտք է անել, հարցրեց Հայրապետը։

— Ուրիշ ճար չը կայ, պէտք է Լալային մէկի հետ պսակել։

— Այդ բոլորովին չի աղատի նրան։ Բէկը կարող է պսակուած կինն էլ ամուսնի գրկից դուրս քաշել եւ տանել։

— Պէտք է մի այնպիսի մարդու հետ պսակել, որ Լալային այստեղ չը պահէ, այլ վեր առնէ եւ տանէ մի ուրիշ երկիր, ասաց Սառան։

— Շատ դեղեցիկ միտք է, պատասխանեց Հայրապետը, — բայց ո՞րտեղից կարելի է գտնել մի այսպիսի մարդ։ Դու գիտես, որ մեր գիւղացիներից ոչ մէկը չի յանձն առնի մի այսպիսի ամուսնութիւն, նրա համար որ, կը վախենայ եւ կը մտածէ, եթէ Լալային տանելու լինի մի ուրիշ երկիր, այն ժամանակ բէկը տանը կրակ կը տայ եւ նրա բոլոր ազգականներին սրից կ'անցկացնէ։ Ո՞վ է այն մարդը, որ յանձն առնէ այս տեսակ զոհաբերութիւններ։

— Մարդը պատրաստ է, պատասխանեց Սառան ուրախ ձայնով։

— Ո՞վ է։

— Վարդանը։

Հայրապետի տխուր դէմքը ընդունեց խիստ ուրախ արտայայտութիւն, երբ Սառան սկսեց պատմել նրան,

իր այն օրուայ տեսածը տան պարտէզի ծառերի մէջ, թէ ինչպէս Վարդանը եւ Հալան գրկախառնուել էին միմեանց հետ, համբուրվում էին եւ խոստանում էին միմեանց մշտական սէր։

— Այդ լաւ է, ասաց Հայրապետը, — Վարդանը, միայն Վարդանը կարող է ազատել Հալային։

Արեւը արդէն մայր էր մտել։ Երկու ամուսինները վերկացան եւ սկսեցին շտապել դէպի տուն։ Ճանապարհին Հայրապետը մտածում էր այն բանի վրայ, թէ ինչ պատրաստութիւններ է տեսնում բէկը, ինչու համար է նա զէնքեր բաժանում։ Մի թէ այդ մի սարսափելի ձեռնարկութեան նախապատրաստութիւն չէր...

ԺԷ.

Բոլորովին մութն էր, երբ Հայրապետը եւ Սառան վերադարձան տուն։ Նրանք իմացան, որ Թոմաս էֆէնդին Վարդանի հետ ունեցած անբաւականութիւնից յետոյ դժգոհութեամբ հեռացել էր իրանց տնից, եւ ծերունի Խաչօն այդ մասին շատ անհանդիստ էր, վախենալով, մի գուցէ կապալառուն իրանց համար մի չար որոգայթ լարէ։

Բայց Վարդանը, չը նայելով իր դիւրաբորբոք եւ դիւրագրգիռ բնաւորութեանը, այնքան անքաղաքավարի չէր, որ ի զուր տեղը անպատուէր մէկին։ Նա համարում էր էֆէնդուն մի գարշելի մարդ, որ Թուրք կառավարութեան ներկայացուցիչների ձեռքում գործիք դարձած, ծծում էր իր համազգիների արիւնը, հալստահարում էր եւ աղքատացնում էր նրանց։ Բացի դրանից, նրան յայտնի էր կապալառուի անցեալը։ Այդ մոլաշրջիկ խաբեբան մի եւ նոյն պաշտօնով եղել էր Հայաստանի շատ

կողմերում, եւ իրաւ, շատ տեղերում պսակուել էր, կնիկները թողել էր եւ շատ տեղերում խելքից հանել էր անմեղ աղջիկներին։ Այժմ մի եւ նոյն կեղտոտ նպատակներն ունէր եւ Հալայի վերաբերութեամբ, եւ օգուտ քաղելով նրա հօր միամտութիւնից, կամենում էր մի զզուելի դեր խաղալ։ Այդ, ի հարկէ, տանել չէր կարող Վարդանը. մանաւանդ մի աղջկայ վերաբերութեամբ, որին ինքը սիրում էր։

Բայց էֆէնդու շուտափոյթ կերպով ծերունի Խաչօի տնից հեռանալու պատճառը միայն այն չէր, որ նա անբաւականութիւն ունեցաւ Վարդանի հետ եւ չը կամեցաւ միւս անգամ տեսնել նրա երեսը։ Էֆէնդին բաւական համբերող էր դէպի վերաւորանքներ. նա վաղուց սովորել էր լռութեամբ տանել դրանից աւելի խիստ անարգանքներ։ Բայց նա այսօր մի առանձին սուրհանդակի ձեռքով թուղթ ստացաւ, որով հրամայում էին նրան հաւաքել իր ձեռքի տակ գտնուած ալքունի ցորեանները եւ գարիները առանձին ամբարներում, եւ բնաւ չը ծախել, որովհետեւ կառավարութեանը պէտք էին։ Կարծես, մի բան գաղտնի կերպով պատրաստվում էր. այստեղ՝ — պաշար, իսկ այնտեղ, Փաթթահ-բէկի բանակի մէջ՝ — զէնքեր...

Երբ տանը հիւր կար, ծերունի Խաչօն միշտ օդայի մէջ էր անցկացնում եւ իր հիւրի մօտից չէր հեռանում։ Վարդանին իսկապէս հիւրի տեղ չէին դնում. նա տան տղայ էր։ Բայց Թոմաս էֆէնդու գնալուց յետոյ նրա տանը յայտնուեցաւ մի նոր հիւր։ Դա մի երիտասարդ էր նիհար եւ դունաթափ դէմքով, եւ թոյլ, աւելի քնքոյշ կազմուածքով, — մի երիտասարդ, որի արտաքին կերպարանքը մտածել էր տալիս, թէ երկար տարիներ մաշուել եւ թառամել էր դպրոցների նստարանի վրայ։

Ի՞նչ կոչում եւ ի՞նչ պարապմունքի մարդ էր դա, յայտնի չէր, միայն այսքանը յայտնի էր, որ պոլսեցի է, հայ է, եւ Ծերունի Խաչօն պարտ էր համարում յարգել մայրաքաղաքից եկած հային։ Բայի ճանապարհորդական խուրջինից նա իր հետ ուրիշ ոչինչ չունէր, եւ կիսամաշ եւրոպական հագուստը ցոյց էր տալիս, որ աղքատ մէկը պէտք է լինի։ Նրա բերող չարվադարը ձգեց նրան գիւղի մէջ եւ հեռացաւ։ Նա մնն էր գալիս, որ իր համար գիշերելու օթեւան գտնէ, երբ հանդիպեց Վարդանին։ Ասում են, պաեերի մէջ մի գաղտնի ճանապարհ կայ։ Այդ երկու երիտասարդները կարճ խօսակցութիւնից յետոյ մտերմացան, եւ որպէս մի գաղտնի աղանդի պատկանող երկու անդամներ, առանց նախապէս միմեանց հետ ծանօթ լինելու, եղբայրական ձեռք մեկնեցին միմեանց։ Վարդանը նրան վեր առաւ եւ բերեց Ծերունի Խաչօի տունը։

Նոր հիւրը իրան կոչում էր Միքայէլ Դուդուկջեան։ Որպէս տաճկաստանցոց բոլոր տոհմանունները առած են լինում հօր կամ պապի արհեստից, պարոնի հայրն էլ դուդուկներ է շինելիս եղել, այսինքն մի տեսակ շուլիներ, որ երեխաները ածում են։ Իսկապէս Ծերունի Խաչօին շատ դիւր չեկաւ ոչ նրա տոհմանունը, որ դժուարութեամբ էր արտասանվում, ոչ նրա հիւանդոտ եւ դունաթափ դէմքը, ոչ նրա անհանգիստ աչքերը իրանց տենդային փայլով, եւ ոչ էլ նրա մթին ու ծածկամիտ բնաւորութիւնը, որ իսկոյն կասկած էր յարուցանում։ Բայց Վարդանը ծածուկ ասել էր Ծերունուն, թէ "լաւ տղայ է, երբ ճանաչես, կը սիրես դրան"։

Մտնելով Ծերունի Խաչօի տունը, անծանօթ հիւրը միայն մի բան հարցրեց Վարդանից.

— Կարելի՞ է հաւատալ դրանց...

— Կարելի է... պատասխանեց Վարդանը։

Երբ օդայի մէջ ճրագը վառուեցաւ, գիւղական սովորութեան համեմատ, իսկոյն ընթրիք տուեցին։ Այս գիշեր սեղանակից էին Ծերունի հօր հետ նրա բոլոր վեց որդիները, որովհետեւ Թոմաս էֆէնդին այնտեղ չէր, եւ մի ուրիշ բարձրաստիճան հիւր չը կար, որի պատճառով որդիները համարձակութիւն չունենային սեղան նստելու։ Վարդանը տան տղայ էր համարվում, իսկ նոր հիւրի վրայ նայում էին որպէս մի մարդու վրայ, որ այնքանով եւս զոհ պէտք է լինէր, որ այս գիշեր կուշտ փորով հաց էր ուտելու։

Ընթրիքի ժամանակ խիստ տխուր անցաւ։ Վարդանը եւ նոր հիւրը համարեա չէին խօսում։ Իսկ Ծերունին նոյնպէս խիստ հազիւ անդամ խօսք էր փոխում իր որդիների հետ։ Սեղանակիցների սրտերը լցուած էին զանազան տեսակ, միմեանցից տարբեր ցաւերով։

Ծերունին կապալառուի վրայ էր մտածում, թէ նա դժգոհութեամբ հեռացաւ իր տնից։ Հայրապետը զբաղուած էր քուրդ բէկով եւ Լալայի վիճակով. կրկին միտքն էր բերում Սասայի պատմութիւնը եւ մտածում էր, թէ ի՞նչ պէտք է անել։ Ծերունու միւս որդիները մտածում էին իրանց մշակութիւնների վրայ, թէ առաւօտեան ո՞վ ի՞նչ գործ պէտք է կատարէ։ Վարդանի գլխի մէջ պտրտվում էր Լալայի գեղեցիկ ուրուականը։ Իսկ նոր հիւրը, Աստուած գիտէ, թէ ինչ բանի վրայ էր մտածում...

Երբ սեղանը հաւաքեցին, Ստեփանիկը բերեց իբրիքը եւ լագանը, իր ձեռքով ջուր ածեց, եւ տեղային սովորութեան համեմատ, նրանք լուացին իրանց ձեռքերը, գոհացան եւ փառք տուին Աստծուն։ Ծերունին սկսեց

ծխել իր երկայն չիբուխը, իսկ պ. Դուդուկջեանը հանեց իր ծոցից մի գեղեցիկ պօրտֆիդար, որ ամենուին չէր համապատասխանում նրա հնամաշ հագուստին, եւ դուրս բերելով նրա միջից մի թանդագին սիգար, երկար եղունգներովը ծայրը կտրեց, եւ սկսեց ծխել: Փոքրիկ սենեակը լցուեցաւ հաւանեան ծխախոտի անուշհոտութեամբ: Երեւում էր, որ այդ մարդը մի ժամանակ ղուրկ չէ եղել կեանքի վայելչութիւններից, իսկ այժմ հանգամանքները ձգել էին նրան մի տարօրինակ կեանքի մէջ:

Ընթրիքից յետոյ խօսակցութեան առարկան Թոմաս էֆէնդին էր: Վարդանը մանաւորապէս պատմել էր պ. Դուդուկջեանին այդ մարդու մասին, եւ այդ պատճառով խօսակցութեան առարկան նրան բաւական ծանօթ էր: Ծերունի Մաչօն խիստ քաղաքավարի կերպով նկատեց Վարդանին, թէ նրա այն օրուայ վարմունքը էֆէնդու հետ անխոհեմ էր:

— Ես, ասաց նա, — դու դիտես, որ քեզ չեմ ջոկում իմ այս եօթն որդիներից, նա ցոյց տուեց վեց որդու վրայ, որ նստած էին եւ Ստեփանիկի վրայ, որ կանգնած էր:

Ծերունին սովորութիւն ունէր միշտ եօթն որդիների անունով խօսել եւ նրանց անունով երդուել, Ստեփանիկին եւս նրանց հետ հաշուելով, բայց չը գիտէր, որ Վարդանին վազուց յայտնի էր Ստեփանիկի աղջիկ լինելը:

— Այս եօթը որդիներիս արեւը թող վկայ լինի, եթէ սուտ լինեմ ասելու, շարունակեց նա — դու էլ իմ որդին ես, իմ տունը քո տունն է, գալիս ես, գնում ես, եւ որքան սիրտդ ուզում է, մնում ես: Իմ դուռը քո առջեւ միշտ բաց է: Բայց պէտք է գիտենաս, որ այստեղ ուրիշ երկիրների նման չէ, այստեղ Թոմաս էֆէնդու նման մարդիկը՝ մեծ մարդիկ են, շատ մեծ մարդիկ... նրանք ինչ որ կամենան, կարող են կատարել: Այս պատճառով, նրանց պէտք է ակամայ յարգել եւ երբեմն նրանց խօսքերի ու արարմունքների մասին պէտք է լռել... Ի՞նչ կարող ենք անել: "Մի չարագործի ձեռք, ասում է առակը, եթէ չես կարող կտրել, պէտք է համբուրես եւ գլխիդ վրայ դնես„: Էֆէնդին, կարելի է, քեզ մի վնաս չը կարողանայ հասցնել, որովհետեւ այստեղացի չես, բայց մենք քո փոխարէն պիտի տուժենք նրա հասցրած վնասը: Դու խօ լսե՞լ ես Թուրքի առածը. "Էշից վախեցաւ եւ սկսեց փալանին ծեծել„...

Ծերունու խօսքերը կրկին հաւաքեցին խենթի ի-ծանները[1]: Նա պատասխանեց.

— Թուրքերի վերաբերութեամբ մեր կողմի հայերը մի լաւ առած ունեն, ասում են՝ "Թուրքին մինչեւ չը ծեծես, բարեկամ չի դառնայ„: Ես Թոմաս էֆէնդուն Թուրքերից չեմ զանազանում, եւ շատ ցաւում են, թէ ինչո՞ւ նրան մի լաւ չը ծեծեցի, թէեւ նրա բարեկամութիւնը ինձ շատ հաճելի չէր կարող լինել:

Ծերունու երեսի խորշոմները աւելի կնճռուեցան, երեւում էր պատասխանը նրան դիւր չեկաւ: Իսկ Ստեփանիկի դէմքի վրայ փայլեց մի պայծառ ժպիտ, որը չէր կարող չը նկատել Վարդանը: Նա դեռ կանգնած էր ոտքի վրայ, եւ որպէս տան փոքրիկը, սպասաւորութիւն էր անում: Վարդանը հիացմունքով նայեց նրա վրայ, մի եւ նոյն ժամանակ նրա մտքից անցան այս խօսքերը. "ահա միակ արպատը այս տան մէջ, որ համակրում է ինձ...

[1] Ի-ծաններ փոխաբերական մտքով դեւի կամ չար ոգիների նշանակութիւն ունի ռամիկ ժողովրդի լեզուում:

որովհետեւ նա միայն է, որ զգացել է այդ գալշելի մարդու լրբութիւնը»...

— Դուք ինքներդ թոյլ էք տալիս այս տեսակ ցած, անբարոյական, անիրաւ մարդերին բռնանալ ձեզ վրայ, շարունակեց Վարդանը աւելի տաք կերպով. — որովհետեւ նրանց բոլոր չարագործութիւնների առջեւ աչքներդ փակած, համբուրում էք: Ես հասկանում եմ, երբ թուրքը, քուրդը հային հարստահարում է, ճնշում է, եւ նրա կենսական բոլոր ուժերը խլելով նրանից, մահացնում է: — Ես այդ հասկանում եմ, եւ մինչեւ անգամ բնական եմ համարում, որովհետեւ նրանք դարերով այսպէս վարուել են հայի հետ եւ նոյն կերպով շարունակում են: Այդ դարձել է թուրքի եւ քուրդի համար մի տեսակ կենսական պահանջ, առանց որին նրանք հազիւ թէ կարող են ապրել: Բայց երբ որ հայը վարվում է իր համազգիների հետ աւելի վատթար, քան թէ թուրքը եւ քուրդը, այդ եղեռնագործութեան դժուար է համբերել: Ես այս խօսքերը էֆէնդու երեսին ասեցի, եւ նա մի բառ եւս չը դտաւ պատասխանելու:

— Ես դրանից վատը կ'ասէի նրան, խօսակցութեան մէջ մտաւ Հայրապետը, — բայց հայրս միշտ մեզ խրատում է, թէ պէտք է լուռ մնալ, թէ պէտք է զգուշ լինել... մի օր ազատութիւն կը լինի մեզ... պէտք է համբերել... չը գիտեմ, մինչեւ երբ պէտք է համբերել...

— Մինչեւ Յիսուս Քրիստոսի գալուստը... հեգնօրէն պատասխանեց Վարդանը: — Բայց, ափսոս, մինչեւ այն ժամանակը աշխարհի երեսին մի հայ էլ չի մնայ, որ իր ազատութիւնը տեսնէ. բոլորը քուրդ կամ թուրք դարձած կը լինեն...

— «Համբերութիւնը կեանք է»... խօսեց Ծերունին քարոզի ոճով: — Մեր տէրտէրները, մեր վարդապետները միշտ այդ են քարոզում մեզ: Ախար մի օր կը լինի, որ Աստուած կը մտաբերէ իր կորուսեալ ոչխարներին... Պէտք է համբերել, զաւակներս... «Համբերութիւնը կեանք է»...

— Համբերութիւնը մահ է... պատասխանեց պ. Դուդուկջեանը, որ մինչեւ այն ժամանակ չէր խօսում եւ լուռ լսում էր նրանց վիճաբանութիւնը: Երիտասարդի գունատ դէմքը այժմ բոլորովին դեղնեց եւ նրա նուրբ, նոյնպէս գունատ ափի շրթունքը սկսեց դողդողալ:

— Համբերութիւնը մահ է... կրկնեց նա վրդովուած ձայնով, — դերեզմանի մէջ միայն մարդը սովորում է համբերող լինել...: Մի այսպիսի հրէական համբերութիւնը, որ ունենք մենք, տանում է դէպի անդառնալի կորուստը: Հրէաները շատ համբերեցին, աշխարհի բոլոր հալածանքներին դիմացան, սպասելով, թէ կը յայտնուի մի Մեսիա, որ կը վերանորոգէ սուրբ Երուսաղէմը եւ կը վերականգնէ Իսրայէլի հին փառքը... եւ մինչեւ այսօր սպասում են.. Բայց մենք մի այսպիսի ակնկալութիւն եւս չունենք, չը գիտեմ, էլ ի՞նչ բանի ենք սպասում...

— Մեր տէրտէրները, մեր վարդապետները համբերութիւն են քարոզում... շարունակեց նա առաջուայ մաղձոտ ձայնով: — Ախար նրանք քանդեցին մեր տունը եւ այս ստրկական վիճակին հասցրին մեզ: Եթէ կայ մի բան, որ կարող է փրկել հարստահարուած եւ ճնշուած ժողովուրդներին, դա է՝ — բողոքը, ինչ կերպով եւ յայտնուելու լինէր նա: Դժգոհութիւնը, ատելությունը եւ իր վիճակից մի աւելի բարեբախտ վիճակի ցանկանալը՝ — ահա այն փրկարար շարժառիթները, որ կարող են մեզ

ազատել ստրկութիւնից։ Բայց համբերութեան մէջ խեղդվում են, մահանում են այս տեսակ բարձր ձգտումները...

Ծերունին ոչինչ չը պատասխանեց։ Վարդանը եւ Հայրապետը բռնեցին երիտասարդի ձեռքը եւ բարեկամաբար սեղմեցին։ Ծերունու միւս որդիները ոչինչ չը հասկացան եւ իրանց մտքում ասացին — ահա մի ուրիշ խենթ եւս...

Ծերունին հրամայեց հիւրերի համար քնելու տեղ պատրաստեն, իսկ ինքը որդիների հետ, բարի գիշեր մաղթելով, հեռացան։ Ցան հարսներից մէկը, երեսը կապած, եկաւ անկողինները պատրաստեց։

Օդայի մէջ ճրագը դեռ վառվում էր։ Երկու հիւրերը իրանց անկողիններում երկար անքուն մնացին։ Պարոն Դուդուկջեանը կրկին վառեց իր կիսատ մնացած սիդարը եւ սկսեց ծխել։ Վարդանը նկատեց նրան.

— Բարեկամ, ձեր լեզուն անհասկանալի է. դուք հաղիւ թէ կարող կը լինէք այստեղ մի գործ շինել... Ժողովրդի հետ խօսելու համար պէտք է հարիւրաւոր առակներ եւ առածներ գիտենալ... Քրիստոս իր առակներով աւելի գործ շինեց, քան թէ բարձր վերացական քարոզներով։

— Այո՛, ես չը սովորեցի ժողովրդի լեզուն... պատասխանեց պ. Դուդուկջեան եւ լռեց։

ԺԸ.

Օդայի մէջ իւղային կրակը դեռ վառվում էր, տարածելով իր շուրջը ազօտ լոյս։ Վարդանը երկար մնաց անքուն։ Այն գիշերուայ խօսակցութիւնները գրգռել էին նրա ուղեղը։ Նա յիշում էր ծերունու որդիների սառ-

նասրտութիւնը դէպի իր եւ Նորեկ հիւրի "քարոզները"։ Նա զարմանում էր, որ այնպէս կասկածանքով էին նայում այդ ոգելից եւ ազնիւ երիտասարդի վրայ։ Միւս կողմից, նրա սիրտը խռովում էր երկու սէր, որոնք շատ չէին տարբերվում միմեանցից իրանց բնաւորութիւնով. — մէկը, հարստահարուած գիւղացու սէրը, միւսը, Լալայի սէրը, որ նոյնպէս բարոյական հարստահարութեան ենթակայ էր...

Նա աչք ձգեց, տեսաւ, որ Նորեկ երիտասարդը քնած էր։ Ճրագի ազօտ լուսով նկարվում էր նրա գունատի եւ մաշուած դէմքը, որի սուր դծերի մէջ արտայայտվում էր մի հաստատուն բնաւորութիւն։ Նրա քունը անհանգիստ էր։ Ցերդային զառանցութեան մէջ տանջվում էր նա։ Երբեմն նրա ցամաք շրթունքը շարժվում էին, եւ լսելի էին լինում խառն, կցկտուր խօսքեր, Ֆրանսերէն եւ հայերէն լեզուով.

"Գիւղացիներ... հասաւ ժամը... ձեր արիւնով պիտի գնէք... ձեր աղատութիւնը... ներկան... ապագան... մեզ է պատկանում... ցոյց տուեցէք... քաջեր... որ թուրքի... երկաթի գաւազանը... բոլորովին չէ մահացրել... ձեր մէջ կեանքը... եւ... աղատութեան... զգացմունքը...։ Կրակի... եւ... սրի մէջ... պիտի գտնենք... մեր... փրկութիւնը...։ Դէպ առաջ... քաջեր...

— Խե՛ղճ, ասաց Վարդանը գլուխը շարժելով։ — Երեւի շատ գրքեր է կարդացել... Հայ գիւղացու ողորմելի օդայի մէջ իրա Փարիզի բարրիկադների վրայ է երեւակայում եւ ճառ է խօսում... խե՛ղճ...

Այդ միջոցին Վարդանի ականջին զարկեց երգի մեղմիկ ձայն, որ տխուր հնչիւններով լսելի էր լինում

գիշերային լռութեան մէջ։ Նա ճանաչեց նաղելի ձայնը եւ դուրս եկաւ օդայից։

Ծերունի Խաչօի տանը մի երկրորդ արարած եւս այն գիշեր արթուն էր. նա իր անկողնի մէջ անհանգիստ կերպով այս կողմ եւ այն կողմ էր շուռ գալիս։ Նրա շուրջը, սրահի մէջ, այր եւ կին բոլորը ծանր քնով խռնփում էին։ Մշակի յոգնած եւ վաստակեալ անդամները գիշերուայ արթնութիւն չը գիտեն։

Միայն Հալան հանգիստ լինել կարող չէր։ Նա հաղնուեցաւ եւ կամաց դուրս եկաւ սրահից։ Կատուն այնպէս զգոյշ, այնպէս հեղեկ կերպով չէր կարող փոխել իր քայլերը, որպէս այդ մանկահասակ աղջիկը, անցնելով սրահի միջից, յայտնուեցաւ բակում։ Շունը նրան հեռուից տեսնելով, սկսեց հաչել։ "Սուս,, շշնջաց նա հազիւ լսելի ձայնով։ Շունը լռեց։ Խաղաղ գարնանային գիշեր էր։ Օդի ղովութիւնը մրսեցնելու չափ ցուրտ էր. բայց նա աւելի կաղդուրեց օրիորդին, աւելի հովացրեց նրա բորբոքուած դէմքը։ Նա անցաւ դէպի պարտէզ եւ մտաւ ծառերի մէջ։ Այստեղ խաւարը աւելի թանձր էր. այստեղ նրան չէին տեսնի։ Նա նստեց թաւիշեայ խոտերի վրայ, եւ ձեռքը ծնօտին դրած, սկսեց նայել դէպի երկինքը։ Լուսինը չէր երեւում. "Որտեղ է նա, մտածում էր օրիորդը, երեւի, քնած է„։ Նրա շուրջը տիրում էր խորին լռութիւն։ Ծառերի վրայ մի տերեւ անգամ չէր շարժվում։ Բոլորը հանգստանում էին, թէ քամին, որ շատ անգամ օրօրում էր այդ ծառերի ճիւղերը, եւ թէ գետը, որի աղմկալի հոսանքի ձայնը նա միշտ լսել էր գիշերային լռութեան ժամանակ։ Բոլորը հանգստանում էին, միայն ինքը անհանգիստ էր, միայն ինքը արթուն էր։

Նա յիշեց մի երգ, որ սովորել էր պառաւ տատից. եւ բոլորովին ակամայ կերպով դուրս թռան նրա սեղմուած շրթունքի միջից սիրելի երգի անուշ հնչիւնները.

"Քնած է լուսնեակը երկնքի խորքում,
Քնած է թռչնակը իր փափուկ բընում,
Քնած է քամին, տերեւը չէ շարժվում,
Քնած է գետը, ձայնը չէ լսվում։

Մայրիկ, ինչու՞ ես քնել չեմ կարում,
Ուզում եմ քնել, աչքս չէ փակվում.
Մայրի՛կ, այս ի՞նչ է, որ ինձ տանջում է,
Այս ի՞նչ կրակ է, որ սիրտս այրում է„։

Վերջացնելով երգը, նա գլուխը ցած թողեց ծունկերի վրայ, եւ երկու ձեռքով բռնելով իր բորբոքուած երեսը սկսեց դառն կերպով լաց լինել։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա սիրուն աչքերից։ Ինչու՞ էր լաց լինում։ — Ինքն էլ չը գիտէր։ Արդեօք նրա՞ համար, որ միտը բերեց իր սիրելի մօրը, որին չէր տեսել, որի բերնից մի անուշ խօսք անգամ չէր լսել։ Էլ ինչու՞ էր լաց լինում։ Այդ ի՞նչ անբացատրելի զգացմունք էր, որ խռովում էր նրա կուսական անմեղ սիրտը։

Բայց արտասուքը փոքր ինչ հանգստացրեց նրան։ Նա գլուխը վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը, եւ նրա աչքը ընկաւ չորս կաղամախիների հովանու տակ հանգըստացած գերեզմանի վրայ, որ շատ հեռու չէր իր նստած տեղից։ Դա իր քրոջ Սօնայի գերեզմանն էր, որին թէեւ չէր տեսել, բայց նրա ցաւալի պատմութիւնը հազար անգամ լսել էր։ Հանգուցեալը նահատակի նշանակութիւն էր ստացել ռամիկ ամբոխի մէջ, եւ նրա գերեզմանի

մօտ շատ անգամ բերում էին հիւանդներ։ Ծերունի հօր պատուիրելով, նրա վրայ ամեն կիւրակէ մուտ գիշեր վառվում էր մի իւղային ճրագ։ Այս գիշեր ճրագը տակաւին ծխրտում էր, պլպլում էր եւ լուսաւորում էր գերեզմանի դաճով պատած սպիտակ մակերեւոյթը։ Լալան սարսափով նայում էր նրա վրայ։ Քրոջ ցաւալի պատմութիւնը նրա բորբոքուած երեւակայութեան մէջ իրականութիւն ստացաւ։ Նա այժմ տեսնում էր գերեզմանի փոխարէն մի քրդի սեւ չադր, լեռների մի խուլ ձորի մէջ կազմուած։ Նրա մէջ նստած էր Սօնան զարհուրելի-յուսահատ դէմքով։ Նա իր ձեռքում բռնած ունէր թոյնի բաժակը, մօտեցնում էր շրթունքին եւ յետ էր տանում։ Երկար նա մնաքառում էր կեանքի եւ մահուան դէմ։ Ահա, մօտենում էր չադրին քուրդ աղջուականը՝ Սօնայի յափշտակողը։ Սօնան տեսաւ նրան. կրկին մօտեցրեց իր շրթունքին թունալից բաժակը, խաչակնքեց եւ խմաւ...

Տեսարանը փոխուեցաւ։

Լալայի աչքի առջեւ դրած էր դարձեալ Սօնայի սպիտակ գերեզմանը։

Այժմ նրա երեւակայութեան մէջ պատկերացաւ երկու ուրիշ անձինք. մէկը, Թոմաս էֆէնդին իր խոլամանկ եւ գարշելի դէմքով, միւսը, քուրդ Փաթթահբէկը իր վայրենի եւ գազանային դէմքով։ Նա բոլոր մարմնով դողաց։ Արդեօք գիտէ՞ր, արդեօք յայտնի՞ էր նրան, թէ ինչ փոս են փորում այդ երկու մարդիկը իր համար։ — Նա ոչինչ չը գիտէր. նա միայն զգում էր...

— Չէ, բացականչեց նա սոսկալի ձայնով, — ես Սօնայի մօտ չեմ գնայ... ես վախենում եմ գերեզմանից...

Այդ միջոցին մի ձեռք հեզիկ կերպով դրուեցաւ նրա ուսի վրայ, եւ լսելի եղաւ նրա անունը։

— Լալայ...

Օրիորդը ոչինչ չը լսեց։

— Լալայ... կրկնուեցաւ ձայնը, — ես չեմ թողնի, որ դու Սօնայի մօտ գնաս... ես կ'աղատեմ քեզ...

Նա յետ նայեց, տեսաւ, իր մօտ կանգնած էր Վարդանը։

— Հա. աղատիր ինձ... խօսեց նա, դեռ առանց սթափուելու իր առաջին խռովութիւնից. — աղատիր, տար մի ուրիշ երկիր, այստեղ վատ է... այստեղ շատ վատ է...

Երիտասարդը նստեց նրա մօտ։

Նրանք մի քանի րոպէ մնացին լուռ. խօսք չէին գտնում խօսելու։ Լալան տակաւին խորին յափշտակութեան մէջ, մտաբերում էր այն սոսկալի տեսիլքը, որ այնքան վախեցրեց նրան։ Վարդանը մտածում էր, թէ ինչո՞ւ այդ անմեղ, անփորձ աղջիկը աղաչում էր հեռացնել իրան հայրենի աշխարհից, ուր նա այնքան սիրուած էր ընտանիքից. ինչո՞ւ յանկանում էր նա մի ուրիշ, հեռու երկիր գնալ։ Մի՞թէ սէրը, սիրած տղամարդի սէրը ձգել էր նրան այս ցնորքների մէջ։ Բայց սէրը դեռ եւս նրա համար մի անորոշ եւ մթին զգացմունք էր։ Երիտասարդը հարցրեց.

— Ի՞նչով վատ է այդ երկիրը։

— Վատ է, շատ վատ է, պատասխանեց նա տրխրութեամբ լի ձայնով. — տեսնո՞ւմ ես այդ գերեզմանը։

Նա ցոյց տուեց Սօնայի գերեզմանը։

— Գիտե՞ս ով է դրած նրա մէջ։

— Գիտեմ...

— Գիտե՞ս, ինչպէս մեռաւ նա։

— Գիտեմ...

— Ես չեմ ուզում Սօնայի պէս մեռնել, Վարդան, ես վախենում եմ թոյնից... վախենում եմ դերեզմանից...

Կրկին խեղճ աղջկայ աչքերը լցուեցան արտասուքով։

— Ինչո՞ւ ես կարծում, Լալայ, թէ դու էլ Սօնայի պէս բախտ կ'ունենաս, հարցրեց երիտասարդը նրա ձեռքից բռնելով։ — Այդ մի ցաւալի դէպք էր, որ ամէն աղջկայ հետ չէ պատահում։ Ինչո՞ւ ես դու մտածում, որ մի եւ նոյնը կարող է քեզ պատահել։

— Ես այդ միշտ մտածում էի... միշտ սպասում էի... հէնց այն օրից, երբ սկսեցի հասկանալ թէ ինչու են ինձ տղայի հագուստով պահում... Այստեղ աղջիկ լինելը Աստուծոյ պատիժն է... մի յանցանք է... մանաւանդ սիրուն աղջիկ լինելը... Լսիր, Վարդան, ես մի ծանօթ աղջիկ ունէի, որին շատ սիրում էի, նա շատ լաւ աղջիկ էր եւ մեր դրացին էր։ Մայրը ամէն օր ծեծում էր նրան, թէ ինչու նա սիրուն ծնուեց, թէ ինչու նա օրըստօրէ գեղեցկանում էր։ «Դու, ասում էր մայրը, մեր գլխին մի պատուհաս կը բերես»... եւ Նարգիսը լաց էր լինում. — այդպէս էր նրա անունը։ Մայրը չէր թողնում Նարգիսին, որ նա իր երեսը լուանայ, որ մազերը սանդրէ եւ միշտ պատառոտած հագուստով էր պահում։ Վերջը քրդերը տարան Նարգիսին։ Քանի օր առաջ ես տեսայ նրան, ա՜խ, որքան տգեղացել էր... այժմ նա սիրուն չէր... Ասում էր, Ստեփանիկ, շատ վատ է քրդին կին լինելը... եւ լաց էր լինում...

Լալան ինքն էլ սկսեց լաց լինել։ Երբ մի փոքր հանգստացաւ, հարցրեց.

— Վարդան, դու ինձ այստեղից կը տանես, այնպէս չէ՞։

— Կը տանեմ, միամիտ կայ։

— Շուտ տար, կ'ուզես, հէնց հիմայ տար, ես կը գամ քեզ հետ, ուր որ տանելու լինես։

— Մի քանի օր սպասիր, Լալայ, մինչեւ հօրդ հետ կը խօսեմ։

Այսպէս նստած, նրանք երկար եւ երկար խօսում էին գիշերային մթութեան մէջ, մինչեւ տխրութեան զգացմունքը տեղի տուեց սիրոյ բերկրութեան զգացմունքին։

ԺԹ.

Միւս առաւօտ Վարդանը զարթնեց շատ ուշ, որովհետեւ գիշերի մեծ մասը անց էր կացրել անքուն։ Մի գաղտնի ուրախութիւն փայլում էր նրա փոքր ինչ գունաթափ դէմքի վրայ։ Նա տեսաւ, որ Պ. Դուդուկջեանը օդայում չէ, միայն մի անկիւնում դրած էր նրա ճանապարհորդական խուրջինը։ Ո՞ւր էր գնացել այդ մարդը։ Վարդանը հէնց առաջին օրից նկատեց, որ պարոնը մի անփորձ երիտասարդ էր, որին պէտք էր պահպանել եւ աչքից հեռու չը թողնել։

Ծերունու տանը ամէն ոք զբաղուած էր իր սովորական գործով։ Խաչօի որդիները գնացել էին իրանց դաշտային մշակութիւնները հոգալու։ Ինքը Ծերունի հայրը դուրս էր եկել որ տեսնէ, թէ ինչ են շինում որդիները։ Հարսները զբաղուած էին տնային տնտեսութիւնով։ Ոչ ոք անգործ չէր։ Միայն Հայրապետը մնացել էր տանը։ Նա յարմար ժամանակ համարեց մտնել Վարդանի մօտ, մտածելով, գուցէ նրանից մի բացատրութիւն կը լսէ

Հալալի մասին եւ առիթ կ'ունենայ քրոջ մասին խօսելու։ Նրա միւս եղբայրները, բացի Ապօից, այլ եւս Հալալի մասին չէին մտածում, եւ համարեա մոռացել էին, թէ ինչ վանդ է սպառնում նրան քուրդ բէկից։ Նրանք թողել էին Հալալին իր բախտին, կրկնելով այն ճակատագրական խօսքը, թէ ինչ որ Աստուած կամեցել է, այն կը լինի։ Հայրը դեռ ոչինչ լսած չէր։ Նա մտածում էր սառուցել Թոմաս էֆէնդու անցեալը, որին համարում էր իր Հալալի ապագայ փեսան։

Երբ Հայրապետը մտաւ օդան, Վարդանը հարցրեց նրանից.

— Ո՞ւր է գնացել իմ նոր ընկերը։

Հայրապետը հասկանալով, որ Պ. Դաւդուկջեանի մասին է հարցնում, պատասխանեց.

— Զարմանալի մարդ է այդ քո նոր ընկերը, վաղ առաւօտեան դեռ արեւը չը ծագած, վեր կացաւ, երկայն կօշիկները հագաւ, առանց լուացուելու, առանց սանդրուելու, եւ առանց նախաճաշիկ ուտելու, իր ծանր գաւազանը վեր առեց, եւ անից դուրս գնաց։ Մենք հարցրինք, ո՞ւր ես գնում. նա ոչինչ չը պատասխանեց, դուխը շարժեց եւ հեռացաւ։

— Ո՞ւր գնաց, հարցրեց Վարդանը անհամբերութեամբ։

— Չը գիտեմ, միայն ես դիւղի մէջ տեսայ, նա հանդիպեց մի կիսամերկ եւ ոտաբոբիկ աղջկայ, որ գնում էր գետից ջուր բերելու. "Ինչո՞ւ ես այսպէս հագնուել", հարցրեց նա աղջկանից, քո հասակում անվայելուչ է այսպէս հագնուել"։ Աղջիկը պատասխանեց, թէ մի ծնողները աղքատ մարդիկ են։ Նա հանեց իր քսակից մի ոսկի եւ տուեց աղքատ աղջկան։ Ես կարծում եմ, Վարդան, այդ վերջին դրամն էր, որ նա ունէր։

— Կարելի էր, պատասխանեց Վարդանը մտայուղութեան մէջ, — բայց յետոյ ո՞ւր գնաց։

— Յետոյ մօտեցաւ նա մի խումբ գիւղացիների, որ նոր էին դուրս եկել ժամից, եւ հաւաքուած եկեղեցու դրանը, խօսում էին հարկերի բաժանման վրայ։ Նա խօսակցութեան մէջ մտաւ եւ սկսեց բացատրել գիւղացիներին, թէ նրանք վճարում են կառավարութեանը աւելի քան պէտք է վճարել, բայց իրանց հասարակական գործերի մասին ամենեւին հոգ չեն տանում։ Խօսում էր աղջկանց եւ տղայոց դպրոցների մասին, որոնցից զուրկ են մեր գիւղացիները. խօսում էր ինչ-որ ընկերութեան մասին, որ կարող էր բարւոքել գիւղացու տնտեսական վիճակը. խօսում էր ինչ-որ հասարակաց դրամարկղի մասին, որտեղից գիւղացին կարող էր էժան տոկոսով փող վեր առնել կարօտութեան ժամանակ, — ոմ է իմանում, հազար ու մէկ այս տեսակ բաների վրայ էր խօսում։

— Ի՞նչ պատասխանեցին գիւղացիները, հարցրեց Վարդանը հետաքրքրուելով։

— Գիւղացիները ծիծաղեցին, հռհռացին եւ ոչինչ չը պատասխանեցին։ Մէկը նրանցից ասաց իր ընկերին՝ "այդ մարդը խենթ է"։

— Փա՜ռք Աստուծոյ, խենթը մենակ ես չեմ եղել, ասաց Վարդանը ծիծաղելով, — ես կարծում էի, մենակ ինձ են խենթ համարում։ — Յետո՞յ։

— Յետոյ գիւղացիներից մէկը հրաւիրեց նրան մընել իր հետ ղահուէտունը մի բաժակ արաղ խմելու։ Նա ընդունեց հրաւէրը։ Այնտեղ գտնվում էր բոլորովին հարբած մի բազմութիւն։ Նա ինքը շատ փոքր խմեց, բայց վճարեց բոլորի համար։ Այնտեղ եւս սկսեց

քարոզները գիւղացու բարօրութեան մասին եւ սկսեց բացատրել նրա թշուառութեան պատճառները։ Նա խօսում էր տաք եւ ոգեւորուած կերպով։ Ես առաջին անգամ զգում էի իմ մէջ, թէ ինչ մեծ ներգործութիւն ունի խօսքի ուժը։ Բայց գիւղացիները արհամարհանքով լսում էին նրան։ Մէկը հարցրեց նրանցից, թէ "ինչ պաշտօն, ինչ աստիճան ունիս„. երբ պատասխան ստացաւ, թէ ծառայութեան մէջ չէ գտնվում, խիստ ըբաբար ասաց նրան. "էլ ինչ ես դուրս տալիս„...

— Այո՛, այդ հասարակութեան վրայ ազդելու համար անպատճառ պէտք է կամ մուդիր, կամ գայմագամ եւ կամ Թոմաս Էֆէնդու նման մուլթէզիմ լինել։ Հասարակ գիտնականը ի՞նչ նշանակութիւն ունի նրանց աչքում... խօսեց Վարդանը խորին տխրութեամբ։

— Պատմիր, Հայրապետ, շատ հետաքրքիր է։

— Ես, շարունակեց Հայրապետը, բռնեցի նրա ձեռքից եւ համբերեա զօրով դուրս բերեցի ղահուէտանից, վախենում էի, որ անկարգութիւն կը պատահի։ Դրսում նա ինձ ասաց. "այսպիսի տեղերում աւելի հեշտ է ճանաչել ժողովրդին. հարբած դրութեան մէջ նա բացում է իր սիրտը„... Մենք շարունակեցինք գնալ գիւղի միջով։ Նրա ուսից քարշ էր ընկած մի կաշեայ պայուսակ, որ լիքն էր ղանազան փոքրիկ տետրակներով։ Նա այդ տետրակները բաժանում էր հանդիպած գիւղացիներին. ոմանք չէին ընդունում, ասելով, թէ կարդալ չը գիտեն, իսկ ոմանք ընդունում էին, որոնք նոյնպէս կարդալ չը գիտէին։ Այս վերջիններին մէկից ես հարցրի, թէ ինչ պիտի անես, որ առնում ես։ Նա պատասխանեց. "Թուղթ է, կը տանեմ տանը պէտք կը գայ. մայրս բռնօթի (քթախոտ) կը փաթաթէ մէջը„։

Վարդանի դէմքը աւելի տխուր արտայայտութիւն ընդունեց, կարծես, մի ներքին ցաւ սկսեց տանջել նրան։

— Դու ունե՞ս այդ տետրակներից, հարցրեց նա։

— Ունեմ, երկու հատ ես վեր առայ։

Վարդանը թերթեց տետրակները, մի փոքր կարդաց, եւ ասաց վրդովուած ձայնով.

— Այսպիսի տետրակների տարածելը տգէտ ժողովրդի մէջ յիմարութիւն է... — Յետոյ ո՞ւր գնաց նա։

— Ինձ հետ միասին դուրս եկաւ գիւղից, խնդրեց, որ ես նրան մենակ թողնեմ։ Ես բաժանուեցայ։ Նա բռնեց առաջին հանդիպած ճանապարհը եւ սկսեց դիմել դէպի մի ուրիշ գիւղ, որ հեռուից երեւում էր։ Ես երկար կանգնած, նրա ետեւից նայում էի, նա այնպէս շտապում էր, կարծես, այնտեղ սպասում էին նրան։ Ես կարող եմ երդուել, որ նա ինքն էլ չը գիտէր, թէ ո՞ւր է գնում. անդադար մոլորվում էր, անդադար ճանապարհից դուրս էր գալիս։

Վերջին խօսքերը Հայրապետը արտասանեց փոքր ինչ ծաղրական կերպով։

— Նա, սիրելի Հայրապետ, ասաց Վարդանը, — ձեր ձորի ոլոր-մոլոր ճանապարհին կարող է ծանօթ չը լինել, բայց կեանքի ճանապարհի մէջ, հաւատացնում եմ քեզ, նա մի հմուտ ուղեցոյց է։

— Ես էլ մի այսպիսի բան նկատում եմ նրա մէջ, պատասխանեց Հայրապետը զղջալով իր անտեղի ծաղրածութեան վրայ, — երեւում է, որ շատ է կարդացել։

— Բացի կարդալը նա խիստ բարի, ազնիւ մարդ է։

Հայրապետին այժմ շատ չէր հետաքրքրում անծանօթ երիտասարդը. նա ուզում էր որոնում խօսելու իր քրոջ մասին։ Սառայի պատմութիւնից յետոյ, թէ Վար-

դանը եւ Լալան սիրում են միմեանց, նա միշտ սպասում էր, թէ Վարդանը վերջապէս կը յայտնէ իր սէրը, որովհետեւ Հայրապետից աւելի մտերիմ մարդ չունէր նա այս տան մէջ։ Բայց Վարդանը այժմ, կարծես, մոռացել է Լալային, եւ լսելով Հայրապետի խօսքերը Պ. Դուդուկջեանի մասին, նա սաստիկ մտատանջութեան մէջ ընկաւ։ Նա վերկացաւ, կամենում էր դուրս գալ օդայից։

— Ո՞ւր ես գնում, հարցրեց Հայրապետը։

— Գնում եմ պտռտելու Պ. Դուդուկջեանին, ասաց նա, — դու իզուր բաց թողեցիր նրան, Հայրապետ, նա շատ անփորձ տղայ է։

Երկուսը միասին դուրս եկան օդայից։

— Անցնենք ախոռատունը, ասաց Վարդանը, — քանի օր է չեմ տեսել ձիերին։

Նրանք սկսեցին դիմել դէպի ախոռատունը։ Բակում Վարդանը պատահեց Լալային, որ նստած պարտիզի միջով հոսող վտակի ափի մօտ, լուացվում էր։ Երեւի, նա էլ նոր էր զարթնել քնից։

— Բարի լոյս, Ստեփանիկ, կոչեց հեռուից Վարդանը։

Լալան ոչինչ չը պատասխանեց, միայն գլխի շարժումով ընդունեց նրա ողջոյնը եւ խորհրդաւոր կերպով ժպտեցաւ։

Ախոռատան մէջ կապած էին Վարդանի երեք ուժեղ ձիանները, որոնցից մէկը իրանն էր, իսկ միւս երկուսի վրայ նստում էին նրա երկու ծառաները՝ Սաքօն եւ Եղոն, — երկու հսկայ տղամարդիկ, որ միշտ անբաժան ուղեկիցներ էին Վարդանի հետ։

— Սաքօ, ասաց նա ծառաներից մէկին, այսօր ձիանները նալել կը տաս եւ ամեն ինչ կը պատրաստես ճանապարհի համար, մենք երկար չենք մնալու այստեղ։

Յետոյ նա մօտեցաւ ձիաներին, ձեռքը քսեց նրանց գեղեցիկ պարանոցի վրայ, եւ լուռ նայում էր, կարծես, կամենալով դիտենալ, թէ բաւական հանդստացել են, կարող են մի քանի օրուայ ճանապարհը մի դիշերուայ մէջ անցկենալ։

Յետոյ նա հրամայեց ձիաներից մէկը թամքել, որը շուտով պատրաստեցին, նստեց, Հայրապետից հարցնելով.

— Ո՞ր կողմը գնաց Պ. Դուդուկջեանը։

Հայրապետը ցոյց տուեց նրան գնացած տեղը, եւ Վարդանը քշեց ձին դէպի այն կողմը։

Նրա հեռանալուց յետոյ Հայրապետը ընկաւ տխուր մտածութիւնների մէջ. "ինչո՞ւ է նալել տալիս Վարդանը իր ձիաները, այս ի՞նչ ճանապարհի պատրաստութիւն է, մթթէ նա պիտի թողնէ եւ գնայ առանց Լալայի մասին մի բան խօսելու, առանց նրան բախտաւորացնելու, եւ վերջապէս ինչո՞ւ նա այնպէս սաստիկ հոգածութեան մէջ ընկաւ, երբ լսեց Պ. Դուդուկջեանի "երեխայական„ վարմունքը, — այս մտածութիւնները այն աստիճան պաշարեցին նրան, որ բոլորովին շուարած մնաց։

Վարդանին ճանապարհ դնելուց յետոյ, երբ Հայրապետը վերադառնում էր տուն, նրան պատահեց իր կինը՝ Սառան, որ կաթի ահագին ամանը ձեռքում, դալիս էր փարախից։

— Ոչինչ չասա՞ց քեզ Վարդանը, հարցրեց Սառան կանգնելով, եւ կաթի ամանը դնելով գետին։

— Չասաց, պատասխանեց Հայրապետը տխուր ձայնով, — նա այժմ բաւական ծածկամիտ է դարձել...

— Ես ամեն բան գիտեմ, խօսեց Սառան ուրախութեամբ, — նստիր, կը պատմեմ քեզ։

Այլ եւ կին նստեցին մի կամնասայլի վրայ, որ ձգուած էր բակի մէջ։

Սառան պատմեց, թէ Լալան բոլորը խոստովանեց նրան, թէ այս գիշեր, երբ տանեցիք քնած էին, նա պարտէզում գաղտնի տեսութիւն է ունեցել Վարդանի հետ։ Լալան չը թագցրեց այդ տեսութեան եւ ոչ մի մանրամասնութիւնը։ Վերջը Վարդանը ասել է Լալային, թէ կը խօսէ նրա հօր հետ, եթէ հայրը չը համաձայնուի Լալային իրան տալ, կը փախցնէ եւ այնպէս կը տանէ։

— Ուրեմն դրա համար հրամայեց ծառաներին պատրաստել ձիաները, խօսեց Հայրապետը, մատը կծելով։

— Ի՞նչ կայ, թող փախցնէ, թող տանէ, աւելի լաւ, պատասխանեց Սառան, — եթէ նա չը տանէ, անօրէն քուրդը խօ կը տանէ։

— Ես ընդդէմ չեմ... պատասխանեց Հայրապետը, — բայց...

Խեղճ մարդիկ, ուրիշ ժամանակ իրանց աղջկան կը նահատակէին, կը սպանէին, եթէ գիտենային, որ նա գաղտնի տեսութիւններ է անում մի տղամարդի հետ, որ դեռ իր ամուսին չէ։ Իսկ այժմ ակամայ խոնարհվում էին դառն հանգամանքների առջեւ...

Ի.

Վարդանը ամբողջ օրը ձիով մեն եկաւ, անցաւ մի քանի գիւղեր, ամեն տեղ որոնելով Պ. Դուդուկջեանին։ Նրա հարցուփորձին պատասխանում էին, թէ, այո, տեսել են մի երիտասարդ երկայն կօշիկներով, եւրոպական հագուստով, լայնեզերեայ սեւ գլխարկով, ահագին գաւազանը ձեռին եւ տեսարակներով լի պայուսակը կշտից քաշած։ Եւ ամեն բերնից լսվում էր մի եւ նոյն կարծիքը, թէ նա խենթ էր։

Երեկոյեան Վարդանը վերադարձաւ Ծերունի Խաչօի տունը առանց գտնելու Թափառաշրջիկ երիտասարդին։

Ծերունի Խաչօի հովիւներից մէկը պատմեց Վարդանին, թէ նա տեսաւ երիտասարդին հարեւան գիւղում, եւ թուրք գիւղացիք հաւաքուած, նրան ծեծում էին. ինքը ճանաչեց, որ ծեծուողը իր աղայի հիւրն էր եւ աղատեց կատաղած գիւղացիների ձեռքից։

— "Ես մի այսպիսի բան սպասում էի,... ասաց Վարդանը ինքը իրան, եւ դառնալով դէպի հովիւը հարցրեց.

— Ինչո՞ւ համար էին ծեծում։

— Ես չը հասկացայ, պատասխանեց հովիւը, — ուզում էի նրան աւանակի վրայ դնել, եւ տուն բերել, բայց չընդունեց, ասաց, ես իմ ոտով կարող եմ գալ։ Ի՞նչ կը դայ, ոսկորների մէջ մի հատ էլ ողջ չի մնացել։

Այդ լուրը շատ տխրեցրեց Վարդանին. նա գիտէր, թէ ինչ բան է թուրք գիւղացու մուշտին, մանաւանդ երբ գործ է դրվում խեղճ հայի մարմնի վրայ։

— Ո՞րտեղ թագցրիր նրան, հարցրեց հովիւից։

— Կէս ճանապարհի վրայ։ Օրօրուելով գալիս էր։

Դեռ օդայի մէջ ճրագը նոր էին վառել, երբ յանկարծ յայտնուեցաւ Պ. Դուդուկջեանը, յոգնած եւ ոտքից ցդլուխ ցեխոտուած։ Վարդանը սպասում էր, որ նա իսկոյն կը սկսէ պատմել գիւղացիների կոպիտ վարմունքը իր հետ, բայց այդ մասին նա ոչինչ չը խօսեց, միայն նրա դէմքի վրայ նկարուած էր սաստիկ յուսահատութիւն դառն ատելութեան հետ։

Նա անցաւ, եւ թեք ընկնելով, պառկեց օդայի մի կողմում, թեւքը դնելով բարձի վրայ։

— Դուք կարո՞ղ էք տալ ինձ մի փոքր ծխախոտ, խնդրեց նա Վարդանից։ — Իմը սպառուել է։

— Իսկոյն, պատասխանեց Վարդանը եւ ծխախոտի տուփը տուեց նրան։

Նա դողդոջուն ձեռքով շինեց մի պապիրոս եւ սկսեց ծխել։

— Կատարեալ սֆինքս է, կատարեալ հանելուկ է այդ ժողովուրդը, խօսեց նա ինքն իրան, — հա՛ մտածիր, հա՛ քննիր, դարձեալ չես կարող ճանաչել։ Նա կամ պատմութիւն չունի, կամ պատմութեան մի տպել, մի այլանդակ արտադրութիւնն է...

Նա լռեց, անդադար թողնելով իր բերնից պապիրոսի թանձր ծուխը։ Կարծես, նրա հետ աշխատում էր ցրուել սրտի վրայ ծանրացած թախծութիւնը։

Վարդանը նոյնպէս լուռ էր։ Եւ խորին կարեկցութեամբ նայում էր այդ եռանդով լի երիտասարդի վրայ, որ երեւում էր նրան, որպէս մի անփորձ թիթեռնիկ, որ խաղում է ճրագի հետ եւ իր անզօր թեւիկների շարժումով աշխատում է հանգցնել նրա բոցերը։..

Նոյն միջոցին ներս մտաւ Ծերունի Խաչօն եւ քանի րոպէից յետոյ, ամեն գիշերուայ սովորութեան համեմատ, հաւաքուեցան նրա որդիները։ Թէեւ արեւի մանելուց դեռ մի ժամ էր անցել, բայց ընթրիքը շուտ տուեցին, որովհետեւ, իբրեւ մշակ մարդիկ, նրանք պէտք է շուտ ուտէին, շուտ քնէին եւ առաւօտեան վաղ վեր կենային։

Ընթրիքի ժամանակ պ. Դուդուկջեանը բաւական խմեց եւ նրա սրտի տխուր արամադրութիւնը փոքր ինչ ուրախ կերպարանք ստացաւ։ Նա մինչեւ անգամ երգեց

«Տէր, կեցո՛ Դու զՀայս» Թաղիադեանցի նշանաւոր երգը։ Նրա սեղանը հաւաքեցին, նա դարձաւ Ծերունի Խաչօին, ասելով.

— Հրամայեցէք օդայի դռները փակեն եւ մեզ չը խանգարեն, ես մի առանձին խօսելիք ունեմ։

Ծերունին զարմացաւ, թէ ի՞նչ առանձին խօսելիք պիտի ունենայ, եւ ասաց որդիներից մէկին, որ դռները փակեն։ Բոլորը լռութեամբ սպասում էին նրա խօսքին։

— Շուտով կը հրատարակուի պատերազմ ռուսների եւ թուրքերի մէջ։ — Գիտէ՞ք այդ բանը, հարցրեց նա։

— Մենք ոչինչ չենք լսել այդ մասին, պատասխանեցին նրան Ծերունին եւ իր որդիները։

— Ես գիտեմ, ասաց Վարդանը, — մեր կողմերում ռուսները սաստիկ պատրաստութիւններ են տեսնում։

Այդ լուրը կայծակի նման հարուածեց խեղճ Ծերունուն։ Նա իր կեանքում մի քանի անգամ տեսել էր ռուսների եւ թուրքերի մէջ եղած պատերազմները եւ դեռ չէր մոռացել նրանց սարսափելի հետեւանքները հայերի վերաբերութեամբ։ Իսկ Հայրապետը այժմ հասկացաւ քուրդ տիկնոջ մի քանի օր առաջ Սառային հաղորդած խօսքերի դաղտնիքը, թէ ի՞նչ նպատակի համար էր պատրաստում Փաթթահ-բէկը իր հեծելազօրքը։

— Այո՛, պատերազմ կը լինի, խօսեց Վարդանը մի առանձին հեգնութեամբ. — «Ձին եւ ջորին պիտի կռուեն, իսկ մէջտեղում էշը կը սատկի»...

— Այդպէս է, ասաց Ծերունու մեծ որդին՝ Հայրապետը, մեր կողմերի հայերը կը տրորուեն, կ'ոչնչանան պատերազմի փոթորիկի մէջ։

— Այդ ես էլ գիտեմ..., պատասխանեց Ծերունին եւ նրա ձայնը խեղդուեցաւ սրտի կսկիծից։

— Լսեցէք, ասաց պ. Դուդուկջեանը։ — Նա աշխատում էր այս գիշեր իր խօսքերը աւելի ռամկացնել եւ նրանց աւելի հասկանալի ձեւ տալ։ — Այս պատերազմը մինչեւ այսօր Թուրքերի եւ ռուսների մէջ եղած միւս պատերազմների նման չէ, դա բոլորովին ուրիշ միտք եւ ուրիշ նպատակ ունի։ Դուք լրագիրներ չէք կարդում, ի հարկէ, չէք կարող դիտենալ, թէ այժմ ինչ է գործվում աշխարհի մի ուրիշ մասում, որին կոչում են Բալկանեան թերակղզի։ Այնտեղ նոյնպէս կան քրիստոնեայ ազգեր, որոնք այստեղի հայերի նման դարերով տանջվում էին Թուրքերի բարբարոսութիւններից։ Բայց նրանք հայերի նման համբերել չը կարողացան, ապստամբուեցան, եւ ահա մի տարուց աւելի է, որ կռւում են Թուրքերի հետ նրանց լծից ազատուելու համար։ Յաղթեցին, յաղթուեցան, սարսափելի զոհաբերութիւններ արեցին, վերջը ռուսները մէջ մտան, եւ քրիստոնէից ազատութեան անունով, նրանց պաշտպան հանդիսացան։ Կ. Պոլսում եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները ժողով կազմեցին, որ այդ ճնշուած քրիստոնեայ ազգերին մի քանի արտօնութիւններ, մի քանի իրաւունքներ տային, բայց համաձայնութիւն չը կայացաւ եւ խորհուրդը մնաց առանց հետեւանքի։ Այժմ ռուսները կամենում են սրի ուժով ընդունել տալ Թուրքերին այն, ինչ որ նրանք չը համաձայնուեցան ընդունել իրանց հպատակ քրիստոնեաների ազատութեան մասին։

Այդ անցքերի պատմութիւնը, թէեւ այն ժամանակ աշխարհի ամենախուլ անկիւններում անգամ տարածուել էր, բայց հայ գիւղացիների համար բոլորովին նորութիւն էր. նրանք ոչինչ չէին լսել, եւ այդ պատճառով զարմացած լսում էին պ. Դուդուկջեանի խօսքերը։ Նրանք

այսքան միայն լսել էին, թէ Թուրքերը ինչ-որ պատերազմ ունեն, բայց թէ ո՞ւմ հետ է եւ ի՞նչ բանի համար է պատերազմը, — այդ մասին տեղեկութիւն չունէին։ Եւ Թուրքերի պատերազմ ունենալը յայտնի էր նրանց այն առիթով միայն, որ հարկերը խստութեամբ պահանջում էին եւ աւելի շատ էին առնում քան թէ առաջ, անզգաստ կրկնելով, թէ "հիմայ տէրութիւնը պատերազմ ունի, պէտք է օգնէք"։

— Ռուսների այժմեան պատերազմը Թիւրքիայի հպատակ քրիստոնեաների ազատութեան համար է, շարունակեց պ. Դուդուկջեանը։ — Բայց պէտք է գիտենաք, որ Թիւրքիայի աւելի տանջուած, աւելի հարստահարուած քրիստոնեայ հպատակը հայն է։ Այդ դուք ինքներդ լաւ էք իմանում, որովհետեւ ձեր անձի վրայ փորձել էք Թուրքի ամեն տեսակ բարբարոսութիւնները։ Ուրեմն ժամանակ է, որ հայերն էլ մտածեն իրանց հանդստութեան համար։

— Մենք ի՞նչ պիտի մտածենք, պատասխանեց ծերունի Յաչն, — դուք ինքներդ ասում էք, թէ ռուսները պատերազմելու են քրիստոնեաների ազատութեան համար. Աստուած յաջողութիւն տայ, նրանք կը գան եւ մեզ էլ կ'ազատեն։

— Այդ իրաւ է, միայն մի բան կայ, մէջ մտաւ Վարդանը, — ասում են, "մինչեւ տղան լաց չի լինի, մայրն էլ ծիծ չի տայ"։ Հայերը իրանց լռութիւնով, իրանց համբերութիւնով եւ իրանց մեծայոյս սպասելով ոչինչ չեն ստանայ։ Հայերը պէտք է բողոքեն։

— Այո՛, պէտք է բողոքեն, կրկնեց պ. Դուդուկջեանը, — եւ այդ բողոքը պէտք է յայտնուի նոյն ձեւով, որպէս յայտնեցին միւս քրիստոնեայ ազգերը։

— Ուզում էք ասել, թէ հայերն էլ պէտք է կռուեն... Նրա խօսքը կտրեց Ծերունին։

— Այո՛, այդ եմ ուզում ասել։ Հիմայ աշխարհի կարգն այդպէս է, եւ միշտ այդպէս է եղել, ով որ զէնք գործածել չը գիտէ, ով որ արիւն թափելու եւ մարդիկ կոտորելու ընդունակութիւն չունի, նրան ասում են՝ դու ազատ լինելու իրաւունք չունես։ Ուրեմն, եթէ հայերը ցանկանում են մի բան ստանալ եւ ազատ լինել, պէտք է ցոյց տան, թէ իրանք եւս զուրկ չեն քաջութիւնից, թէ իրանք եւս սպանել գիտեն։ Եւ այժմ ամենայարմար ժամանակն է։

Ծերունին մի դառն ժպիտ գործեց իր խորշոմած դէմքի վրայ պատասխանելով.

— Օրհնած, ինչո՞վ պէտք է ցոյց տան, թէ քաջութիւն ունեն, սպանել գիտեն։ Թուրքերը հայերի մօտ մի դանակ անգամ չեն թողել, որ հարկաւորած ժամանակ մի հաւի վիզ կտրեն։

Պ. Դուդուկջեանը դժուարացաւ պատասխանել։ Վարդանը ասաց.

— Զէնքեր, որքան կամենում էք, ես կը տամ ձեզ, միայն կռուողներ լինէին։ Ձեզ յայտնի է իմ պարապմունքը, ես կանտրաբանտիստ եմ, ինձ ծանօթ են բոլոր անցքերը, բոլոր գաղտնի ճանապարհները այստեղ զէնքեր անցկացնելու համար։

— Միայն զէնքը բաւական չէ, խօսեց խոհեմ Ծերունին, — դուք կարող էք տալ այստեղի հայերին այն սիրտը, այն քաջութիւնը, որ ունեն միւս քրիստոնեայ ազգերը, որոնք այժմ պատերազմում են իրանց ազատութեան համար։ Զէնքը ի՞նչ գործ կարող է կատարել մի ստրկացած ժողովրդի ձեռքում։

— Հեշտ չէ այսպէս դատել ժողովրդի վրայ, տատնուտէր Խաչո, խօսեց պ. Դուդուկջեանը, — մեր ժողովուրդը բոլորովին չէ կորցրել ո՛չ իր սիրտը, ո՛չ քաջութիւնը եւ ո՛չ ազատութեան զգացմունքը։ Մի շարժառիթ, մի յարմար ժամանակ պէտք է, որ դրանք յայտնուեն նրա մէջ։ Այժմ ամենայարմար ժամանակն է։ Ռուսները պիտի պատերազմեն Թուքերի հետ, թող հայերն էլ մի կողմից գլուխ բարձրացնեն։ Ես հաւատացած եմ, որ ռուսները ամեն կերպով կ'օգնեն մեզ։

Ծերունի Խաչոի որդիները բոլորովին լուռ էին եւ ոչինչ չէին խօսում։ Նրանցից մէկը, որ կոչվում էր Յակօ, որն իր եղբայրների հետ մի շաբաթ առաջ ունեցած խորհրդի մէջ յայտնեց այն միտքը, թէ լաւ է, որ իրանց քոյր Հալան քուրդ բէկի կինը լինի, որովհետեւ դրանով կը վայելեն իրանց հզօր փեսայի պաշտպանութիւնը, — այդ Յակօն, որ խորին տհաճութեամբ լսում էր իր հօր եւ նրա երիտասարդ հիւրերի խօսքերը, դարձաւ դէպի պ. Դուդուկջեանը, ասելով.

— Նղբայր քեզանից արեան հոտ է գալիս, մենք ո՛չ քո չարն ենք ուզում, ո՛չ քո բարին. էդուց առաւօտեան շուտ վեր կաց, բանը-մանդ հաւաքիր, եւ հեռացիր մեր անից, թէ չէ մեր գլխին մի պատուհաս կը բերես...

Ծերունի Խաչոն սաստեց որդուն, որ լռէ, եւ ինքը դառնալով պ. Դուդուկջեանին ասաց.

— Դուք մի նեղացէք իմ որդու խօսքերից. նա չը գիտէ, թէ ինչ է խօսում։ Լսեցէք ինձ, ես ոչ կարդացել եմ եւ ոչ էլ իմանում եմ, թէ ուրիշ երկիրներում ուրիշ ազգեր ինչ են շինում։ Բայց որպէս երկրագործ մարդ, ես մի բան գիտեմ. մենք՝ գիւղացիներս մինչեւ հողը չենք վարում, չենք փափկացնում եւ չենք պատ-

բաստում, մեր սերմը չենք ցանում. որովհետեւ գիտենք, որ սերմը չի կանաչի, արմատ չի ձգի. միայն կը ծլի եւ ինքը իրան կը չորանայ։ Այս բանը Քրիստոսն էլ է ասում իր սուրբ Աւետարանի մէջ, ես շատ անգամ եմ լսել եկեղեցում։ Հիմայ, որդի, հողը պատրաստ չէ։ Ուզում եմ ասել, ժողովուրդը պատրաստ չէ։ Պէտք էր քսան, երեսուն եւ գուցէ յիսուն տարի առաջ պատրաստել հողը։ Երբ այս նախապատրաստութիւնները կատարուած կը լինէին, այժմ ձեր սերմերը բարեբեր երկրի վրայ կ'ընկնէին, կը բուսնէին, կը կանաչէին, կ'աճէին, կը հասունանային եւ մէկին հարիւր եւ մէկին հազար պտուղ կը տային։ Ախար մի օրուայ մէջ բան չի դառնայ։ Ախար մենք գիտենք, որ ցանքի վրայից մի քանի եղանակներ են անցկենում, մի քանի եւ ցուրտ եղանակներ, մինչեւ հունձքը հասունանում է։ Մենք գիտենք, որ ցանքը համբերում է եղանակների զանազան տեսակ խստութիւններին, երբեմն փոթորիկը նրան հանգստութիւն չէ տալիս, երբեմն կարկուտը ծեծում է եւ երբեմն ձիւնը սառցնում է, իսկ երբեմն արեգակի կենսատու ճառագայթները նրան ջերմացնում են, — մի խօսքով, ցանքը հազար ու մէկ փորձանքների միջից անցնելով, վերջապէս պսակում է երկրագործի բաղձանքը... Այսպէս էլ ժողովրդի սրտի մէջ սերմնուած ցանքի վրայից պէտք է անցկենան ժամանակներ, մի քանի խաղաղ եւ փոթորկալից ժամանակներ, մինչեւ հունձը կը հասունանար...

— Շատ գեղեցիկ օրինակ է, պատասխանեց պ. Դուդուկջեանը, — ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ։ Բայց մի ուրիշ բան կայ, այն եւս պէտք է ի նկատի ունենալ։ Ես այժմ ձեզ հետ պէտք է ձեր ձեւով՝ երկրագործի եւ անասնապահի լեզուով խօսեմ, այդ լեզուն

աւելի հասկանալի կը լինի ձեզ։ — Թողեցէք մի անգամ ձեր ցանքը առանց քաղհան[1] անելու, եւ կը տեսնէք, որ վայրենի խոտերը կ'աճեն, կը բազմանան, կը խեղդեն նրանց եւ իրանք կը բռնեն նրանց տեղը։ Ձեր սերմնած բոյսերը կ'ոչնչանան։ Դա մի տեսակ կռիւ չէ՞, որով աւելի զօրեղը սպանում է անզօրին։ Բոլոր բոյսերի մէջ նկատվում է այդ կռիւը, այդ պատերազմը, որով մինը միւսին աշխատում է ճնշել, ոչնչացնել, որ կարողանայ պահպանել իր գոյութիւնը։ Եւ որն որ կռուելու, մաքառելու եւ մրցելու ընդունակութիւն չունի, նա զըրկվում է կեանքից։ Այդ ընդունակութիւնը ուրիշ խօսքով կոչվում է ա ն ձ ն ա պ ա շ տ պ ա ն ո ւ թ ի ւ ն։ Անձնապաշտպանութեան վարժապետը ինքը բնութիւնն է։ — Բնութիւնը բոլոր էակներին, որոնք աճելու եւ բազմանալու ունակութիւն ունեն, տուել է իրանց նմանների հետ կռուելու ընդունակութիւն, մէկին շատ, միւսին սակաւ։ Ծառերը, խոտերը, անասունները եւ մարդիկ եւս ունեն այդ ընդունակութիւնը։ Միայն քարերը, փայտերը, մեռած մարմինները մնում են անշարժ եւ իրանց անձը պաշտպանել չը դիտեն, որովհետեւ նրանք կեանք չունեն։ Բայց ուր կեանք կայ, այնտեղ կայ եւ այդ բնական կռիւը։ Դա կեանքի կռիւ է, որի մէջ ամեն մի էակ ոչ միայն աշխատում է պահպանել իր գոյութիւնը, այլ աշխատում է եւ ոչնչացնել իր թշնամիներին, որպէս զի, իր աճելութիւնը ապահով եւ անարգել կերպով կատարուի...

— Այժմ, կարծեմ, դուք հասկանում էք իմ միտքը, շարունակեց նա։ — Բնութեան մէջ ինչ որ կատարվում է բոյսերի եւ անասունների կեանքում, նոյնը

---

[1] Քաղհան անել նշանակում է ցանքի միջից աւելորդ եւ վնասակար խոտաբոյսերը արմատախիլ անել։

կատարվում է եւ մարդկային կեանքում։ Այստեղ եւս հանդիսանում է նոյն կռիւը, միայն աւելի սաստիկ եւ աւելի բաղմատեսակ կերպով։ Ազգերի կրթութեան եւ ընդունակութեան համեմատ փոփոխվում են նրանց անձնապաշտպանութեան զէնքերը։ (Զէնքեր ասելով, ես ի նկատի չունեմ միայն սուրը եւ հրացանը, — արհեստը, գիտութիւնը նոյնպէս զէնքեր են, որոնցմով մի ժողովուրդը աշխատում է անտեսապէս մղել մի այլ ժողովրդի հետ)։ Աւելի անքաղաքակիրթ եւ վայրենի ազգերի մէջ այդ կռիւը կատարվում է միայն Փիզիքական ուժով՝ — սրով։ Այդ զէնքերով քրդերը եւ Թուրքերը կռւում են մեզ հետ։ Անձնապաշտպանութեան օրէնքները պահանջում են պատասխանել թշնամուն նոյն զէնքով, ինչ զէնքով որ նա ճնշում է եւ մահացնում է մեզ։ Ցիմարութիւն կը լինէր 'իմ կողմից աւելին պահանջել, — պահանջել այն, որին ընդունակ չէ մեր ժողովուրդը։ Ես ցանկութիւն չունեմ ասելու, թէ մենք պէտք է սուր վեր առնենք քրդերին եւ Թուրքերին ոչնչացնելու համար, որ մեր հայրերից մեզ ժեսացած հողի վրայ մենք միայն բնակէինք։ — Ես ասում եմ, որ պէտք է սովորենք անձնապաշտպանութիւն, որպէս զի քրդերը եւ Թուրքերը մեզ չոչնչացնեն։ Այդ երկու մտքերի մէջ մեծ տարբերութիւն կայ։

Ծերունի Մաչօն կարեց պ. Դուդուկջեանի խօսքը, ասելով.

— Ես հասկանում եմ, բոլորը հասկանում եմ, ինչ որ ասում էք դուք, բայց դարձեալ պիտի կրկնեմ նոյն խօսքը, որ մի բոպէ առաջ ասացի. — միանգամով, մի օրուայ մէջ մի այսպիսի մեծ փոփոխութիւն չէ կարող կատարուել, որ մեր ժողովուրդը թողնէ իր սարկական

բնաւորութիւնը եւ հասկանայ, թէ ինչ բան է անձնապաշտպանութիւնը։ Դուք, պրոլեցիքդ, պէտք է վաղ սկսէիք այդ գործը. դուք պէտք է շատ տարիներ առաջ մեզ սովորեցնէիք, թէ ինչ բան է անձնապաշտպանութիւնը, եւ այսօր, քրիստոնեաների այժմեան պատերազմների ժամանակ, ձեր ցանած սերմերը ցանկալի պտուղ կը տային։ Դուք չը նախապատրաստեցիք մեզ։ Դուք ամբողջ ժամանակներ Պոլսում լուռ նստեցիք, եւ այսօր եկել մեզ ասում էք, թէ սուր վեր առէք քրդի եւ Թուրքի դէմ, ձեր անձը պաշտպանեցէք։ Ո՞ւմ կարող էք հասկացնել, թէ դա կարելի բան է։

— Դուք իրաւ էք ասում, մենք, պրոլեցիքս ծոյլ եւ անհոգ դանուեցանք, մենք չը նախապատրաստեցինք ձեզ, պատասխանեց պ. Դուդուկջեանը անխռով կերպով։ — Բայց ես չեմ խօսում այն բանի վրայ, որ այստեղ հայերը կորցրել են իրանց մարդկային բարձր, ազնիւ եւ վսեմ ձգտումները, — դրանք այնպիսի յատկութիւններ են, որ պահանջում են մի որոշ չափով կրթութիւն եւ զարգացում, եւ որոնց մատակարարելը մեր պրոլեցիներիս պարտքն էր։ Ես խօսում եմ անձնապաշտպանութեան վրայ, դրա համար մեծ ուսում եւ կրթութիւն պէտք չէ։ Անձնապաշտպանութեան զգացմունքը, որպէս քանի բոպէ առաջ բացատրեցի, այնքան բնական է, որ յատուկ է մինչեւ անգամ բոյսերին, անասուններին եւ վայրենի մարդիկներին։ Մթթէ հայը անասուններից էլ ստոր է, մթթէ նա այն աստիճան մեռած է, որ քարի եւ փայտի նման ոչինչ զգացմունք չունի...

ԻԸ.

Ծերունի Խաչօի իր որդիների հետ հեռանալուց յետոյ, Վարդանը եւ պ. Դուդուկջեանը մնացին օդայի մէջ մենակ։

— Իրաւ որ, հողը պատրաստ չէ... նկատեց Վարդանը, նայելով պոլսեցու բոլորովին դեղնած եւ տխրամած դէմքի վրայ։

— Ո՞վ է մեղաւոր, հարցրեց պ. Դուդուկջեանը եւ նոյն րոպէում կարծես, նրա սրտի մի մասը խորտակուեցաւ ներքին վրդովմունքից։ Ծերունին շատ խելօք է, եւ աւելի խելօք քան թէ մեղ նման յիմար թուղթ մրոտողները։ Նա բաւական ճիշտ նկատեց, թէ մեր՝ պոլսեցիներիս գործն էր վաղօրօք պատրաստել ժողովուրդը։ Բայց ի՞նչ արեցինք մենք։ — Ոչինչ... Մենք ամենեւին նախապատրաստութեան հոգ չը տարանք, որովհետեւ մեղ չէր հետաքրքրում իրական Հայաստանը իր սարսափելի թշուառութիւններովը։ Մենք շլացած էինք պատմական Հայաստանի անցեալ փառքովը միայն։ Մենք այժմեան Հայաստանը ամենեւին չէինք ճանաչում, եւ ոչ մտածում էինք ճանաչել։ Մենք ճանաչում էինք նրան մի քանի հին պատմագիրներից, եւ երեւակայում էինք, թէ տիտանների այդ երկրում տակաւին Տիգրաններ, Արտաշեսներ, Վահագներ, Վարդաններ եւ Ներսէս մեծեր են բնակվում։ Մենք երեւակայում էինք նրա բազմամարդ քաղաքները, որոնց մէջ արհեստը եւ վաճառականութիւնը հայ մարդու ձեռքում ծաղկելով, շնորհում էին նրան երկրի նիւթական հարստութիւնը։ Մենք երեւակայում էինք նրա շէն գիւղերը, նրա մշակուած դաշտերը, որ լցնում էին հայ երկրագործի շտեմարանները Աստուծոյ բոլոր բարիքներով։ Մենք հաւատացած էինք, թէ երկրի ազգաբնակութեան մեծամասնութիւնը բաղկացած է հայերից, որ ապրում են իրանց հայրենի հողի վրայ բախտաւոր ու խաղաղ կեանքով։ — Բայց չը գիտէինք, թէ ամբողջ հայաբնակ գաւառներ դատարկուել են հայերից, կամ չքաւորութիւնից սպառուելով եւ կամ բռնի մահմեդականութիւն ընդունելով։ Չը գիտէինք, որ կենդանի հայ մարդու տեղ կը գտնենք կամ շարժուն դիակներ եւ կամ ընդարձակ գերեզմանատներ։ Չը գիտէինք, որ կրօնը, մեր կարծիքով՝ այդ ազգային հաստատութեան նեցուկը, խորտակուել է, եւ նրա տեղ մնացել են հոյակապ վանքերի եւ եկեղեցիների աւերակներ միայն։ Չը գիտէինք, որ լեղուն, ազգային այդ սրբազան ժառանգութիւնը, կորել է հայ մարդու բերնից, եւ այսօր խօսում է նա կամ քրդերէն եւ կամ Թուրքերէն։ Չը գիտէինք, որ այժմեան քաջ քրդերի մեծ մասը, որոնք հայի համար Աստուծոյ պատիժ եւ պատուհաս են դարձել, մի յիսուն կամ հարիւր տարի առաջ մեր արիւնակից եղբայրներն էին, մեր լեղուով էին խօսում եւ մեր եկեղեցում էին աղօթում։ — Մի խօսքով, մենք ոչինչ չը գիտէինք, մենք այժմեան Հայաստանի մասին խիստ անորոշ եւ խիստ մթին տեղեկութիւններ ունէինք, եւ տակաւին յայտնի չէր մեղ, թէ հայերից մնացած այժմեան ցիր ու ցան փշրանքները, դառն հանգամանքների պատճառով, սարկուութեան ծանր լծի տակ, այն աստիճան այլանդակուել են, որ կորցնելով իրանց լաւ յատկութիւնները, սեպհականել են մի ցած, փոքրոգի, երկչոտ եւ նենգամիտ բնաւորութիւն...

Վարդանը հետաքրքրութեամբ լսում էր. Պ. Դուդուկջեանը շարունակեց.

— Բայց մեր ձեռքումն էին հաւաքուած բոլոր ուժերը, մենք կարող էինք մեծ գործ կատարել։ Մեզ մօտ էր պատրիարքը, ժողովրդի գլուխը, որ բնաւ մարմնի վրայ չէր մոռածում։ Մեզ մօտ էր ազգային երեսփոխանական ժողովը, որ զբաղուած էր ինտրիգաներով եւ ընչին հարցերով։ Մեզ մօտ էր ուսեալ երիտասարդութիւնը, որ թնդեցնում էր Բոսֆորի ափերը ազգային սահմանադրութեան տարեդարձի երգերով, եւ բնաւ չէր մոռածում, որ նոյն բոպէում Հայաստանում արիւն եւ արտասուք էր հոսում։ Մեզ մօտ էր տպագրութիւնը, որ ամենուին ուշադրութիւն չէր դարձնում, թէ ինչ վիճակի մէջ է ապրում հայը հայրենի հողի վրայ, եւ միշտ զբաղուած էր օտարների կեանքով։ Մեզ մօտ էին դպրոցները, որ չը տուեցին Հայաստանին ոչ մի վարժապետ։ Մեզ մօտ էր թատրոնը, որ մի անգամ գոնէ դուրս չը բերեց իր բեմի վրայ Հայաստանցու թշուառ պատկերը, եւ կերակրում էր հասարակութիւնը ֆրանսիական խոհանոցի աղտեղութիւններով։ Մեզ մօտ էին ազգի պետերը, որ շողոքորթում էին Դրան կամայականութիւնները եւ իրանց համար փառք էին դիզում։ Մեզ մօտ էր նիւթական ուժը — արծաթը, — որ ամիրաների պալատներն էր միայն զարդարում եւ Հայաստանցու բարօրութեան համար մի փարայ անգամ չէր ծախսվում։ — Մի խօսքով մենք մեր ձեռքում բռնած ունէինք ազգի յառաջդիմութեան ղեկը, կարծես, մի չար մոքով նրան մոլորեցնելու եւ դէպի կորուստ տանելու համար...

— Ես, առաջ տարաւ նա, — իմ եւ իմ մի քանի համախոհների դիտաւորութիւնը կատարեալ գոնքիշոտութիւն եմ համարում։ Ի՞նչ կարելի է ասասել։ Ամբողջ ժամանակներ նստել Պոլսում բոլորովին անգործ,

չը հետաքրքրել Հայաստանի կեանքը, չուսումնասիրել երկիրը, չը ծանօթանալ ժողովրդի դէպքերի եւ պահանջների հետ, չը նախապատրաստել նրան մի լաւ ապագայի համար, — եւ յանկարծ յայտնուել նրա մէջ, նրա ձեռքը դէնք տալ, որ կռուէ իր անձնապաշտպանութեան համար, — դա հաղիւ թէ կարող էր ընդունելութիւն գտնել։ Այսուամենայնիւ, ես չեմ վհատում, իմ հաւատը բնաւ չէ խախտվում, ես եւ դուցէ իմ բոլոր համախոհներս կ'ընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կը բացանէ մեր հետեւողների առջեւ. նրանք կ'անցնեն մեր դիակների վրայով...

Վերջին խօսքերը լսելու ժամանակ Վարդանը չը կարողացաւ զսպել իր սրտի զեղմունքը, նա գրկեց պ. Դուդուկջեանին եւ համբուրեց նրան ասելով.

— Այսպիսի գործը, այո, զոհ է պահանջում... փառք եւ պատիւ նրան, ով որ կը լինի առաջին զոհը...

Գիշերի կէսից անցել էր արդէն։ Օդայի մէջ քնելու անկողինները վաղուց պատրաստ էին։ Բայց երկու երիտասարդները երկար մնացին անքուն։ Պ. Դուդուկջեանը կրիտիկական անխնայ քննադատութեամբ խօսում էր ապարդիւն Կ. Պոլսի ցնորամիտ երիտասարդութեան վրայ, խօսում էր եկեղեցականների վրայ, ասելով. «Եթէ այդ երկրում գտնուած վանքերի եւ եկեղեցիների տասնից մէկ մասի փոխարէն օրինաւոր դպրոցներ լինէին, այժմ Հայաստանը փրկուած կը լինէր»։

Ցանկարծ օդայի դուռը մեղմիկ կերպով զարկեցին։ Վարդանը գնաց եւ բաց արեց։ Ցայտնուեցան Հայրապետը եւ Ալօն, երկու եղբայրները, որ որոշվում էին Ծերունի Յաչօի միւս որդիներից իրանց բոլոր յատկութիւններով։

— Մենք այսպէս տարաժամ կերպով եկանք ձեզ մօտ, որ չը նկատեն մեզ, ասաց Հայրապետը իր եղբօր հետ նստելով։ — Երեւի անհանգստացրինք ձեզ։

— Ամենեւին, պատասխանեց Վարդանը, — մենք քնել չը կարողացանք, դեռ խօսում էինք։ Երեւի, ձեր տանը բոլորը քնած են։

— Բոլորը, պատասխանեց Ապօն, — միայն հայրս անքուն էր եւ իր անկողնի մէջ անդադար հազում էր։ Երբ նա հազում է, կը նշանակէ, մի բանի վրայ մտածում է։

Վարդանը եւ պ. Դուդուկջեանը իսկոյն նկատեցին, որ երկու եղբայրների այդ անագան պահուն իրանց մօտ գալը առանց նպատակի չէր լինելու, եւ սպասում էին, մինչեւ նրանք կը յայտնէին իրանց խորհուրդը։

— Մենք մեր հօր եւ միւս եղբայրների մօտ ոչինչ խօսել չը կարողացանք, ասաց Հայրապետը լուրջ կերպով, — եւ այս պատճառով շտապեցինք ձեզ յայտնել, որ մենք բոլորովին համակրում ենք ձեր մտքերին եւ ամեն կերպով պատրաստ ենք ծառայելու ձեր նպատակներին, ինչ գործում որ յարմար կը համարէք։

Պ. Դուդուկջեանի սառն դէմքի վրայ փայլեց ուրախութեան պայծառ մի նշոյլ։ Դա միսիոնարի ուրախութիւն էր, երբ երկու հաւատացեալ է ձեռք բերում եւ մտածում է, թէ իր հօտը արդէն կազմուած է, թէ այդ երկուսը սկիզբը կը դնեն հազարների։

— Բոլորովին սխալ է մտածել, խօսեց Հայրապետը, — թէ այսաեղի հայերը հոգւով, սրտով եւ ամեն բարձր ձգտումներով մեռած են։ Բայց մի բան կայ, որ հայերի ընդհանուր թերութիւն է։ Ամեն մի հայ, առանձին վեր առած, զգուշ է, մտածող է, անվստահ է եւ սեպհա-

կան կամք չունի։ Նա միշտ սպասում է օրինակի, որ ուրիշը սկսէ, իսկ ինքն նրան հետեւի։ Օրինակը, մանաւանդ յաջողուած գործի օրինակը, նրա վրայ մեծ ազդեցութիւն է գործում։ Այս դէպքում հայը մի քանի պայմաններ միշտ աչքի առջեւ ունի։ Նա բնաւ չէ հետաքրքրվում, թէ ինչպէս են ապրում, ինչ եղանակով են գործում օտար երկիրներում։ Ուզում եմ ասել, որ հայը օտարներից օրինակ չէ վեր առնում, այլ սպասում է, որ օրինակը տար նրան իր նման մի հայ։ — Ուրեմն մենք առաջին օրինակը կը տանք, եւ ես հաւատացած եմ, որ մեզ կը հետեւեն շատերը։ Ես լաւ եմ ճանաչում մեր ժողովուրդը։ Նա այնքան շատ տանջուել է, որ հէնց այս րոպէիս պատրաստ է թուրքի, քրդի միսը ուտել եւ արիւնը խմել, եթէ մի հնար կը գտնէ։ Նա սրտում սաստիկ ատելութիւն ունի, միայն այդ ատելութիւնը թագնուած է։

Վարդանը եւ պ. Դուդուկջեանը ուրախութեամբ լսում էին Հայրապետի ասածները։ Նրա մէջ խօսում էր ժողովրդի ձայնը։

— Շրջանիկ է այն ժողովուրդը, որ ատել գիտէ, բացականչեց պոլսեցի երիտասարդը մի առանձին ոգեւորութեամբ։ — Նա, որ ատել չը գիտէ, զուրկ է մնում եւ սիրոյ զգացմունքից...

— Իմ հայրը ասում էր, թէ հողը պատրաստ չէ, խօսեց Հայրապետը։ — Նա իսկապէս խելացի մարդ է, նրա սրտում կան շատ ծածկուած բարի խորհուրդներ։ Բայց նրա խելացի խրատները, նրա զգուշաւորութիւնը հասնում է մինչեւ յանցաւորութեան։ Նա իր համբերութեամբ թմրեցրել է մեզ եւ պահել է քարացած անշարժութեան մէջ։ Մեր դրութեան մէջ, իմ կարծի-

քով, համարձակութիւնը, անձնավստահութիւնը եւ մինչեւ խենթութեան հասած յանդգնութիւնը աւելի գործ է կատարում, քան թէ իմաստունների լուրջ եւ խոհեմ մտածութիւնները։

— Այո՛, «մինչեւ խելացին կը մտածէ, խենթը գետից անց կը կենայ»... պատասխանեց Վարդանը ծիծաղելով։

— Այդ շատ ճիշտ է, նկատեց Պ. Դուդուկջեանը։ — Խելացիների խելքը շատ անգամ խաբում է իրանց եւ խաբուածները այն ժամանակ միայն հասկանում են՝ թէ յիմարուել են, երբ գժերը իրանց գործը արդէն աւարտած են լինում... Մի ժամանակ Կ.Պոլսի մեր խելացիները մտածում էին, թէ հայերի համար աւելի նպաստաւոր է Թուրքաց անկիրթ եւ անկարգ կառավարութիւնը, քան թէ մի բարեկարգ եւ քաղաքակրթուած կառավարութիւն։ Մտածում էին, թէ մի քաղաքակրթուած կառավարութիւն իր կուլտուրական բարձր զգացումով կարող էր կլանել եւ ոչնչացնել հայերին. — մինչդեռ խելացի հայերը, օգուտ քաղելով Թուրքի յիմարութիւններից, դոյութեան կռուի մէջ կարող էին մրցել նրա հետ, կարող էին յաղթող հանդիսանալ։ Այդ ենթադրութիւնը թէօրիայի կէտից ուղիղ է։ Բայց ամենաճիշտ փիլիսոփայական թէօրիան երբեմն կեանքի փորձի մէջ յայտնվում է սխալ։ Պատմութիւնը իր առանձին զարտուղութիւններն ունի։ Եթէ մի քաղաքակրթուած մեծ ազգութիւն կարող է կլանել փոքր ազգութիւնները, նոյնը կարող է կատարել եւ մի անքաղաքակիրթ մեծ ազգութիւն իր մանր հպատակ ազգութիւնների վերաբերութեամբ։ Տարբերութիւնը միայն գործ դրած միջոցների եւ հնարների մէջն է. — մէկը սպանում է

բարբարոսական միջոցներով, միւսը՝ — կուլտուրայի միջոցներով։

— Ես աւելի պարզ կը խօսեմ, շարունակեց Պ. Դուդուկջեանը։ — Մեզանից ոչ ոք մինչեւ այսօր չէր հասկացել Թուրք կառավարութեան գաղտնի քաղաքագիտութիւնը հայերի վերաբերութեամբ։ Մեզանից ամեն մէկը երեւակայական կարճատեսութեամբ կրկնում էր, թէ «մեր ապագան Թուրքիայումն է»։ Մենք նայում էինք կատարուող ղեղծումների, անկարգութիւնների եւ բարբարոսութիւնների արտաքին մակերեւոյթի վրայ, բայց թէ ո՞ւրիսի գժոխային մեքենայութիւն էր թագնուած նրանց տակին, — այդ մենք չէինք տեսնում։ Մենք միայն տեսնում էինք հարստահարութիւններ, սպանութիւններ, բռնի կրօնափոխութիւններ եւ զանազան տեսակ չարագործութիւններ, որ կատարում էին մեր հարեւան բարբարոս ցեղերը։ — Այդ բոլորը մենք առօրեայ եւ պատահական էինք համարում, եւ չը գիտէինք, որ յիշեալ անկարգութիւններին մի գաղտնի քաջալերող կայ, չը գիտէինք, որ այդ բոլորը կատարվում է բարձր աստիճանաւորների թելադրութեամբ։ Մենք մեղադրում էինք կառավարութիւնը այն մտքով միայն, որ նա թոյլ է, որ նա անհոգ է, որ նա իր անզգամ հպատակները զսպել չը գիտէ։ Բայց չէինք հասկանում, որ կառավարութեան պաշտօնեաները իրանք այդ բարբարոսներին դրդում էին հայերի դէմ, քրիստոնեայ տարրը ոչնչացնելու համար։ Ինչո՞ւ, կը հարցնէք ինձ։

— Թուրքիան շատ լաւ է հասկացել, եթէ նա մի օր կը ազատուի իր եւրոպական եւ ասիական նահանգներից, — այդ կորստի պատճառը լինելու են տեղային քրիստոնեայ ազգաբնակութիւնները։ Նա հասկացել է, որ

քրիստոնեայ հպատակների գոյութիւնը իր պետութեան մէջ ամէն անգամ պէտք է առիթ տայ քրիստոնեայ թագաւորներին միջամտելու Թիւրքիայի գործերի մէջ եւ բարձրացնել մի նոր արեւելեան հարց։ Իր նահանգները չը կորցնելու համար, քրիստոնեայ թագաւորների միջամտութիւնից ազատելու համար, Թուրքը ստիպուած է ոչնչացնել քրիստոնեաներին։ — Քրիստոնեաների պատճառով նա իր եւրոպական նահանգներից շատերը կորցրեց եւ մնացածը կորցնելու վրայ է։ Իսկ ասիական երկիրներից իր ամբողջութիւնը պահպանել է միայն Փոքր Ասիան։ Այստեղ գլխաւոր քրիստոնեայ ազգութիւնը, որ սպառնում է պետութեան այդ մասնի անջատմանը — են հայերը։ Ուրեմն եւրոպական տէրութիւնների ձայնը կտրելու համար, պէտք է ցոյց տալ նրանց, որ Հայաստանում հայ չը կայ։ Այդ սպանութեան գործի մէջ Թիւրքիան ընտրել է ամենայարմար դահիճներ՝ — քրդերին եւ չէրքէզներին։

— Եթէ հաւաքելու լինենք վերջին 20—30—50 տարիների ընթացքում կատարուած փաստերը, կը համոզուենք, որ այդ բոլորը ճշմարիտ է։ Կը համոզուենք, որ հայերի վերաբերութեամբ գործուած հարստահարութիւնները, ճնշումները, հալածանքները, յափշտակութիւնները, մի խօսքով բոլոր բարբարոսութիւնները պատահական երեւոյթներ չեն։ — Կը համոզուենք, որ այդ բոլորի մէջ թաղնուած է մի նախապէս մտածուած, կարգադրուած հիմք եւ նպատակ, որ ծառայում են հայկական տարրը հետզհետէ տկարացնելու, սպառելու եւ վերջապէս ոչնչացնելու համար։ Ես կը յիշեմ մի քանի փաստեր միայն։ Հայերին անձնապաշտպանութեան բոլոր հնարներից զրկելու համար, խլեցին նրանց ձեռքից զէնքը, կապեցին, կաշկանդեցին նրանց ձեռքերը, իսկ

հայերի թշնամիների ձեռքում զէնք տուեցին։ Ցեղոյ տեսան, որ այդ բաւական չէ հայերին տկարացնելու համար, տեսան, որ այդ տարրը, որպէս մի աշխատասէր եւ անտեսագէտ ժողովուրդ, կարողանում է մրցել իր հակառակորդների հետ, կարողանում է իր գոյութիւնը պահպանել իր նիւթական զօրութիւնով՝ — իր հարստութիւնով։ Ուրեմն պէտք է ամեն հնարք գործ դնել, որ նա աղքատանայ, ուրեմն պէտք է անտեսապէս մահացնել նրան։ Հարկերը ծանրացրին, շրջաբերութեան մէջ եղած արժէթղթերը ոչնչացրին (առանց նախապէս յայտարարելու ժողովրդին), մի խօսքով զանազան տեսակ ֆինանսական խարդախութիւններ գործ դրեցին, որպէս զի ժողովրդի ձեռքում գտնուած դրամը իր արժէքը կորցնի եւ հարկերը վճարելու անկարող լինի, — որպէս զի առիթ ունենան նրա տնտեսութեան ամենաանհրաժեշտ պարագայքը հարկերի փոխարէն վճարել տալու, նրան երկրագործութեան աշխատութիւններից զրկելու համար։ Այդ միջոցները դարձեալ չը կարողացան լրացնել Թիւրքիայի նպատակը։ Ժողովուրդը տոկուն էր. եթէ իր հայրենի երկրում վաստակ չէր գտնում, պանդխտանում էր դէպի օտար աշխարհ, այնտեղ փող էր վաստակում, եւ բերում, լցնում էր գանձարանը։ Ուրեմն ինչ պէտք էր անել։ Թիւրքիան մտածեց միանգամից ցամաքացնել հայ ժողովրդի ապրուստի աղբիւրները. նա հնարեց իր կալուածական ամենախորամանկ օրէնքները, եւ հայերը զրկուեցան կալուածատէրութեան իրաւունքից։ Հայերի ձեռքում գտնուած հողերը անցան քուրդ դէրէբէյների չէրքէզների, մուֆթիների, զադիների եւ զանազան վայրենի էշիրաթների ձեռքը։ — Դրանք տէր դարձան, իսկ հայը, աշխատասէր եւ արդիւնաբերող հայը, դարձաւ

այդ բարբարոսների հողերը մշակող ստրուկը եւ ճորտը։ Հայաստանում հայերի եւ մահմեդականների մէջ եղած այժմեան անթիւ եւ անհամար կալուածական վէճերը ու դատերը կամ ճնում են կառավարութեան կողմից առանց ուշադրութեան, կամ եթէ վճռում են, վճիռը կայանում է անպատճառ յօգուտ մահմեդականին։ Հազարաւոր օրինակներ կան այդ մասին։ Եւ այդ վճիռների մէկի քննութիւնը բաւական է ապացուցանելու համար, թէ կառավարութիւնը չէ ցանկանում, որ հայի ձեռքում հող մնայ, այլ ցանկանում է, որ նա զրկուի իր պապերի ժառանգութիւնից, որպէս զի դրանով կարողանայ աւելի սաստկացնել հայերի գաղթականութիւնը, եւ Հայաստանը դատարկելով հայերից, նրանց տեղը լցնեն քրդերով եւ չէրքէզներով։

— Այժմ տեսնում էք, շարունակեց Պ. Դուդուկջեանը, — որ այդ բոլոր չարագործութիւնների մէջ մի ներքին կապ կայ, մի գաղտնի եւ դժոխային նպատակ կայ։ Ես աւելորդ եմ համարում խօսել մասնաւոր երեւոյթների վրայ, եւ ցոյց տալ, որ տեղական իշխանութեան պաշտօնեաները շատ անգամ աշխատել են սրհեստական կերպով սով պատճառել հայաբնակ գաւառներում, որպէս զի քրդերի եւ չէրքէզների սրից ազատ մնացած հայերին կոտորեն քաղցածութիւնով։ Դա հրէշաւոր մի սպանութիւն է, որին ընդունակ է անգութ, անողորմ թուրքը միայն։ Մաշել ժողովուրդը աղքատութիւնով, տնտեսապէս սնանկացնել նրան, զրկել ապրուստի բոլոր միջոցներից, — ահա գլխաւոր զէնքերը, որոնցմով թուրքը աշխատում է այժմ ոչնչացնել հայ տարրը։ Նա գիտէ, որ ուրիշ զէնքով դժուար է մահացնել մի ժողովուրդ, որի զօրութիւնը կայանում է իր աշխատասի-

բութեան եւ նիւթական կարողութեան մէջ։ Զէյթունի հայերը վարուցանքի տեղ չունեն. նրանց ապրուստի եւ արդիւնաբերութեան գլխաւոր աղբիւրները են երկաթի հանքերը, որ բովադրծում են նրանք, պատրաստում են զանազան տեսակ գործիքներ, կամ այնպէս անպատրաստ տանում են մերձաւոր գաւառները, եւ վաճառելով, փոխարէնը գնում են ինչ որ իրանց պէտք է։ Թուրքիան մի քանի անգամ փորձ փորձեց խլել զէյթունցիների ձեռքից այդ հանքերը, միայն քաջ լեռնականների սաստիկ ընդդիմադրութիւնը կարողացաւ փրկել իրանց ապրուստի գլխաւոր հարստութիւնը։ Վանայ հրդեհը այդ տեսակ մեքենայութիւնների մի ճշգրիտ օրինակ կարող է համարուել։ Հայերը այս քաղաքում բաւական հարստացած էին. մի գիշերուայ մէջ նրանց բոլոր խանութները կրակի մատնեցին։ Զը նայելով հայերի անդադար բողոքներին, տեղական իշխանութիւնը մինչեւ անգամ քննութիւն սկսել չը կամեցաւ, որ յայտնուեն չարագործները։ Որովհետեւ ինքն իր վրայ քննութիւն սկսել չէր ցանկանում...

— Մեզ մինչեւ այսօր զարմացնում էր այն միտքը, թէ ինչու Թուրքիան այնքան շողոքորթում է քրդերի եւ չէրքէզների ցեղապետներին, շողոքորթում է նրանց հոգեւոր գլուխներին կամ շէյխերին, որոնք իրանց անկարգութիւններով ոչ սակաւ հոգսեր են պատճառում կառավարութեանը։ Դրանք շատ անգամ հարկեր չեն վճարում, շատ անգամ ահագին խումբերով ասպատակում են այս եւ այն գաւառները։ Մի՞թէ, մտածում էինք մենք, եթէ իշխանութիւնը ցանկանայ, չէ կարող զսպել այդ աւազակներին։ Հիմայ հասկանում ենք, որ Թուրքիային պէտք էր իր ձեռքում ունենալ այսպիսի գործիքներ։ Նպատակը՝ — բացայայտ է...

Պ. Դուդուկջեանը, կարծես, աշխատում էր այս գիշեր դուրս թափել բոլոր դառնութիւնները, որ ծանրացած էին նրա սրտի վրայ: Տառապեալ ժողովրդի ցաւը, նրա անբախտ վիճակը, նրա տխուր ապագան, որ նկարվում էր նրա աչքի առջեւ իր սեւ գոյներով, այդ բոլորը լցրել էին նրա հոգին մի արդար վրդովմունքով:

— Հանգամանքները, կեանքի պայմանները, ասաց նա, ստիպեցնում են մարդուն իր նմանների հետ վարուել այնպէս, որպէս վարվում են օտարները իր հետ — չարին չարով պատասխանել: Ուրիշ հնար չը կայ: Բոլոր արարածների մէջ մարդը միայն է, որ գազաններից աւելի անգութ եւ աւելի անիրաւ կերպով է վարվում իր նմանների հետ: Գազանը գոնէ միանգամից մահացնում է եւ հանգստացնում է իր զոհին: Բայց մարդը յաջորդաբար է վարվում: Նա տանջում է, ճնշում է, բարոյապէս եւ մտաւորապէս մաշում է, եւ իր զոհի կենսական բոլոր ուժերը սակաւ առ սակաւ սպառելով, այնպէս է սպանում: Դա մի սարսափելի սպանութիւն է: Այսպիսի սպանութիւն գործելու ընդունակ է մարդը միայն: Այսպիսի սպանութիւններ կատարվում են ոչ միայն մասնաւոր անհատների վերաբերութեամբ, այլ ամբողջ ազգերի վերաբերութեամբ եւս: Մի այսպիսի սպանութիւն սպառնում է մեզ: Մի՞թէ սոյն նպատակով չեն վարվում մեզ հետ թուրքերը, քրդերը եւ չերքէզները: Մի՞թէ սոյն պատճառներից չէ, որ այսօր Հայաստանը մեծ մասամբ դատարկուել է հայերից:

Պ. Դուդուկջեանի երկար բացատրութիւնների միջոցին Վարդանը լսում էր խորին համակրութեամբ: Նա մի դառն, հեգնական ժպիտով պատասխանեց.

— Հայոց ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է. նրան սպանելը, եթէ չասեմ անհնարին, կարող եմ ասել, որ շատ դժուարին է: Նա այն բազմագլխեան առասպելական վիշապն է, որ կոչվում է Հիդրայ, որի իւրաքանչիւր ջախջախուած եւ կտրուած գլխի տեղ բուսնում է մի նորը եւ աւելի զօրաւորը: Դարերի ընթացքում, համաշխարհական դարբնոցի սալի վրայ, հայը այն աստիճան ծեծուեցաւ, տաշուեցաւ եւ կոփուեցաւ, որ ստացաւ երկաթի ամրութիւն: Նրան ջախջախելը շատ հեշտ չէ. նա չափազանց տոկուն է... Հայը տարաւ, հայը համբերեց ամենամեծ մենգօլների բարբարոսութիւններին, որոնց համեմատութեամբ Թուրքիայի այժմեան մենգօլական սերունդը պէտք է ճանաչել համարել: Հայի երկրի վրայով անցան Մանգուլխանի, Լէնկ-Թէմուրի, Չինգիսխանի, Հուլաւունի եւ դրանց նման մարդկային հրէշների արիւնարբու հրոսակները: Նրանք անցան հեղեղների եւ փոթորիկների նման, ջարդեցին, ջարդուեցան, եւ վերջապէս անհետացան, բայց հայը դարձեալ մնաց: Այժմեան մենգօլական Թուրքիան, աշխատելով սպանել արդիւնաբերող եւ տէրութեան գանձարանը լցնող հայերին, անգիտակցաբար սպանում է ինքն իրան: Նրա այժմեան ֆինանսական սնանկութիւնը այդ սպանութեան հետեւանքն է: Վաղեմի Թուրքիան աւելի լաւ էր հասկացել հայ տարրի օգտաւէտութիւնը իր պետութեան հաստատութեան համար: Նա ոչ միայն առանձին հոգ էր տանում աշխատասէր հայ գիւղացու հանգստութեան համար, այլ պետութեան գանձային ամբողջ կառավարութիւնը յանձնել էր հայ դրամատէրների ձեռքը, եւ մեր սառաֆները ոչ սակաւ անգամ ազատում էին պետութիւնը ֆինանսական ամենադժուարին ճգնաժամի ժամանակ:

Առաւօտը մօտ էր լուսանալու, տակաւին խօսում էին մեր տաք գլուխ խորհողները։ Յետոյ նրանք սկսեցին խօսել ինչ-որ պատրաստութիւնների եւ կարգադրութիւնների մասին։ Երբ խորհուրդը աւարտուած էր, Պ. Դուդուկչեանը հանեց իր ծոցից երեք այցատոմս, եւ տալով իր բարեկամներին, ասաց.

— Ես բոլորովին հաւատում եմ ձեզ. այժմ դուք կարող էք դիտենալ իմ ով լինելը եւ իմ իսկական անունը։

Այցատոմսերի վրայ Ֆրանսիական դեղեցիկ տառերով տպուած էր Լ. Սալման։

Պ. Լեւոն Սալմանի հայրը՝ Թորոս Զէլէբին[1] մահմեականութիւն ընդունած հայ կաթոլիկ էր։ Թէ ինչ հանգամանքների պատճառով նա փոխեց իր կրօնը, դա մի երկար պատմութիւն է։ Մենք այսքանը միայն կ'ասենք, որ Թորոսին մեղադրեցին մի թուրք օրիորդի հետ յարաբերութիւններ ունենալու մէջ, եւ նա սպանումից ազատ մնալու համար ստիպուեցաւ մահմեականութիւն ընդունել եւ ամուսնանալ դեղեցիկ Ֆաթիմայի հետ, — այսպէս էր օրիորդի անունը։ Լեւոնի ծնունդից յետոյ Ֆաթիման վախճանուեցաւ եւ փոքրիկ երեխան մնայ հօր խնամատարութեան ներքոյ, որին սաստիկ տանջում էր այն միտքը, որ իր զաւակը կը կրթուի եւ կը մեծանայ իրան ատելի դարձած մի օտար կրօնի մէջ։ Սալմանը (մահմեականացած Թորոս Զէլէբին) թողեց իր հայրենիքը՝ Անդուրիան եւ տեղափոխուեցաւ Կ. Պոլիս։ Այստեղ ոչ ոք չէր ճանաչում նրան։ Նա իր զաւակը յանձնեց Փրերների միաբանութեանը, իսկ ինքը անհետացաւ։ Փոքրիկ Լեւոնը մեծացաւ կաթոլիկների մի կուսանոցի մէջ, եւ յետոյ

[1] Զէլէբի կոչում են Թուրքերը հայ եւ յոյն վաճառականներին։

12 տարեկան հասակում տարուեցաւ Իտալիա։ Իր սկզբնական ուսումը ստացաւ նա կղերի ձեռքից։ Նա անցկացրեց մի քանի տարի Վենետիկի Ս. Ղազարի վանքում, եւ այստեղից հեռանալով, մտաւ Վիէննայի Մխիթարեանների վանքը, բայց ոչ մի տեղ հիմնաւոր դիտութիւն չը սովորեցաւ։ Վերջապէս մի կնոջ սէրը դուրս քաշեց նրան վանքային մթնոլորտից եւ ձգեց Փարիզի քաօսի մէջ։ Այստեղ նա սկզբում անց էր կացնում զուարճութիւններով լի դատարկ կեանք, անդադար անցկենալով մի կուսակցութիւնից դէպի միւսը, եւ մտնելով զանազան ընկերութիւնների մէջ, միայն խօսելու, բայց ոչ գործ շինելու համար։ Իսկ երբ սպառուեցան սիրուհու փողերը, այնուհետեւ աղքատութիւնը ստիպեց նրան ձեռք զարկել լուրջ աշխատանքի, դրում էր լրագրական զանազան յօդուածներ արեւելքի վերաբերութեամբ եւ նրանով ապրում էր։ Բայց երբ յարուցուեցաւ վերջին արեւելեան հարցը, նա թողեց Փարիզը, թողեց իր սիրուհին եւ դիմեց դէպի Կ. Պոլիս։

ԻԲ.

Պ. Սալմանի Բագրեւանդի դաւառում յայտնուելուց դեռ մի ամիս առաջ, արզրումցի հաջի Միսաք անունով ջորեպանը բեռնաւորեց իր քարվանը եւ ճանապարհ ընկաւ դէպի Արզրում։ "Հաջի" մականունը ստացել էր նա այն պատճառով, որ երկու անգամ Ս. Երուսաղէմ ուխտ էր գնացել, եւ եթէ Աստուած արժանի անէր, մի անգամ եւս գնալու նպատակ ունէր, որ խորհրդական թիւը լրանար։ Առհասարակ Միսաքը բարի քրիստոնեայ էր, եւ նրա ջերմեռանդութիւնը հասնում էր մինչեւ անահաւատութեան։

Ճանապարհների վրայ բոլոր քաղաքներում, բոլոր գիւղերում եւ բոլոր իջեւաններում ճանաչում էին հաջի Միսաքին։ Քսան տարուց աւելի կը լինէր, որ այդ մարդը իր ջորիներով պտտում էր Փոքր Ասիայի եւ Հայաստանի մէջ, ու ծանրութիւններ էր տեղափոխում։ Հաջի Միսաքը մի հաստ ու պինդ մարդ էր, միջակ հասակով եւ սաստիկ արագաշարժ։ Նրա դէմքի գծագրութիւնը անհնարին էր ճշտապէս որոշել, որովհետեւ ամբողջապէս ծածկուած էր խիտ մազերով, որոնց միջից երեւում էր ահագին հայկական քիթը եւ բոցավառ աչքերը միայն, որոնց խորութեան մէջ միշտ կարելի էր նկատել նրա բարեսրտութեան պայծառ արտայայտութիւնը։

Ամեն տեղից երբ անց էր կենում հաջի Միսաքի քարվանը, միշտ ընդհանուր ուրախութիւն էր պատճառում։ Ո՞վ ասես, նրանից մի բան չէր սպասում ստանալ. վաճառականը ապրանք էր սպասում, կինը իր պանդուխտ ամուսնից նամակ էր սպասում, ճանապարհների վրայ գտնուող մանր եւ խոշոր ասոիճանաւորները կամ պաշտօնատարները այս եւ այն իրեղէններն էին սպասում ուտելու, խմելու եւ հագնելու համար։ Շատ անգամ պանդուխտ, հիւանդ, ճանապարհների վրայ նուաղած ու ընկած հայ գաղթականը սպասում էր, որ հաջի Միսաքի քարվանը կանցնի, եւ իրան մարդասիրաբար վեր առնելով, կը տանէ եւ ցանկացած տեղը կը հասցնէ։ Հաջի Միսաքի կամակատարութիւնը եւ նրա պատրաստականութիւնը ամեն մարդու օգնելու մէջ, նրան սիրելի էին արել իր բոլոր ծանօթներին։ — "Հաջի Միսաք, վերադարձին ինձ համար մի քանի հօխայ թամբաքու բեր"։ — "Հաջի Միսաք, զահուէս պրծել է, զահուէ բեր"։ — "Հաջի Միսաք, այս զէյթունի իւղը հասցրու մեր տունը", — այսպիսի պատուէրներ նա կատարում էր առանց մի փարայ ընդունելու եւ մինչեւ անգամ իր գրպանից ծախսելով։ Այս պատճառով ճանապարհների վարչութիւնները շատ խիստ չէին վարվում հաջի Միսաքի հետ. մաքսատներից նրա քարվանը անցնում էր ամենայն ապահովութեամբ եւ աստիճանաւորները չէին նեղացնում նրան։

Բեռնակիրը, եւ մանաւանդ ճանաչուած բեռնակիրը, մեծ հաւատարմութիւն ունի արեւելքում։ Նրան յանձնում են ամենաթանգագին ապրանքների հակեր, նրան յանձնում են տոպրակներով լի ոսկի եւ արծաթ, առանց որ եւ իցէ թղթերի կամ պաշտօնական գրագրութիւնների, եւ նա իր ստացած աւանդները տանում է եւ անկորուստ հասցնում է պատկանած տեղը։

Ամեն քաղաքում գիտէին, թէ երբ կը յայտնուի հաջի Միսաքը։ Նրա քարվանի ընթացքը այնքան կանոնաւոր էր, եթէ մի արտաքոյ կարգի դէպք պատահելու չը լինէր, նա մի ժամ եւս յետ չէր ընկնի սովորական օրից։ Բայց այս անգամ հաջի Միսաքի քարվանը բաւական դանդաղ էր ընթանում։ Զը նայելով նրա վեր առած հակերի փոքրիկ ծաւալին, նրանք բաւական ծանր էին երեւում։ Հակերի մեծ մասը քառանկիւնի, երկայնաձեւ արկղիկներ էին երկաթի կապանքներով ամրացրած, եւ որոնց վրայ անգլիական տառերով գրոշմուած էին "Պերսիա" եւ "Թեհրան" բառերը։ Քարվանը ըստ մեծի մասին ուղեւորվում էր գիշերով։ Հաջի Միսաքը ասում էր, որ նա չէ ցանկանում ցերեկուայ տօթերի ժամանակ իր ջորիները յոգնեցնել։

Քարվանի մէջ կար մի երկրորդ անձնաւորութիւն եւս, որ իրան կոչում էր Մէլիք-Մանսուր, դա վաճառական էր, եւ իր ասելով պարսկաստանցի հայ։

Վերջին 20—30 տարիների ընթացքում, պարսից կառավարութիւնը, բաւական մեծ վերանորոգութիւններ անելով զէնքերի փոփոխութեան մէջ, եւ նրանց եւրոպական ձեւի վերածելով, հայերի առջեւ բացուեցաւ վաճառականութեան մի նոր ասպարէզ, որոնք սկսեցին հայթայթել կառավարութեանը պահանջուած զէնքերը: Մէլիք-Մանսուրը այս տեսակ վաճառականներից էր եւ Ջորինների կրած ծանր արկղները նրան էին պատկանում: Մաքսատներում առանձին ուշադրութիւն չէին դարձնում այդ արկղների վրայ, որովհետեւ իբրեւ տրանզիտ ապրանք, պէտք է անցկենային Պարսկաստան: Այս տեսակ ապրանքների փոխադրութիւնը Տրապիզոնի, Արզրումի եւ Բայազէդի ճանապարհով դէպի Պարսկաստան մի նոր բան չէր:

Մէլիք-Մանսուրը կը լինէր 36 տարեկան, նա բաւական համակրական դէմք ունէր, նրա միշտ ուրախ, միշտ ծիծաղկոտ բնաւորութիւնը եւ փոքր ինչ շաղակրատ լեզուն մի առանձին կեանք էին տալիս այդ մարդու անվերջ խօսակցութիւններին հաջի Միսաքի հետ, մանաւանդ երբ նա սկսում էր պատմել իր կեանքի հետաքրքիր արկածները, որ կատարուել էին հեռաւոր աշխարհներում: Քարվանի ճանապարհորդութեան միակերպ ձանձրոյթը փարատելու համար այս տեսակ խօսակցութիւնները անհրաժեշտ են լինում: Աւելի հետաքրքիր էր այդ հայոց "թափառական հրէայի" ձախ ձեռքի երեք մատերի կորուելու պատմութիւնը, որ պատահել էր Հնդկաստանում մի կռուի մէջ, որ նա ունեցել էր վայրենիների հետ:

Մէլիք-Մանսուրը խօսում էր շատ արեւելեան եւ արեւմտեան լեզուներով, եւ իր ամբողջ կեանքում մարդիկների հետ զարկուելով, գիտէր նրանց բոլոր խորամանկութիւնները, գիտէր, թէ ինչպէս պէտք է վարուել մարդու հետ: Եւ այս պատճառով, նա ներսից այն չէր, ինչ որ երեւում էր դրսից: Այսու ամենայնիւ, հաջի Միսաքը մի առանձին յարգանքով էր վերաբերվում դէպի այդ խորհրդաւոր անձնաւորութիւնը, ոչ այն պատճառով միայն, որ ինքը իբրեւ բեռնատար պարտաւոր էր պատուել իր վեր առած բեռների տիրոջը, բայց գտնում էր նրա մէջ մի ուրիշ բան, որ իսկապէս յարգելի էր:

Ամեն մի խան (քարվանսարայ) իջեւանելիս պանդոկապետները խիստ գոհ էին մնում Մէլիք-Մանսուրից. նա բաւական առատաձեռն էր եւ ոսկին շաղ էր տալիս աջուձախ:

— Դուք դրանց փչացնում էք, նկատում էր հաջի Միսաքը. — միւս անգամ մեղ անհնար կը լինի այդ աւազակներից մի բաժակ ջուր խնդրել:

— Վնաս չունի, պատասխանում էր նա ծիծաղելով. — ոսկու փայլը կուրացնում է մարդկանց աչքերը...

Քարվանը անվտանգ անցաւ Արզրումից եւ մի շաբթից յետոյ մտաւ Բայազէդի գաւառը: Այստեղ Մէլիք-Մանսուրի բեռները սկսեցին հետզհետէ փոխուել: Արկղները դիշերով անհետանում էին եւ նրանց փոխարէն ստացվում էին ուրիշ հակեր, բոլորովին այլ տեսակ մթերքներով: Այդ փոփոխութիւնները պատահում էին, երբ քարվանը իջեւանում էր այս եւ այն հայաբնակ գիւղի մէջ: Երբեմն յայտնվում էին Մէլիք-Մանսուրի մօտ մի տեսակ անծանօթ մարդիկ, ինչ-որ անհասկանալի լեզուով խօսում էին նրա հետ եւ անհետանում էին:

Վերջապէս քարվանը մօտեցաւ Տաճկաստանի եւ Պարսկաստանի սահմանին: Նա անցաւ սահմանը եւ ոսք

կոխեց պարսից հողի վրայ։ Բայց մինչեւ այստեղ հասնելը, «Պերսիա» եւ «Թեհրան» մակագրութեամբ արկղներից ոչ մէկը չէր մնացել հաջի Միսաքի ջորիների մէջքի վրայ, եւ ինքը՝ Մէլիք-Մանսուրը՝ կեղծ վաճառականը անհետացել էր...

ԻԳ.

Ծերունի Խաչօի տան մէջ կեանքի սովորական եղանակը, որ ունէր նա վերջին օրերում, բաւական փոփոխութիւն էր ստացել։ Պ. Սալմանը (տանեցիք դեռ նրան Պ. Դուդուկջեան էին կոչում) շատ անգամ տանը չէր գտնվում։ Նա եւ Վարդանը երբեմն հեռանում էին Օ... գիւղից եւ օրերով չէին վերադառնում։ Հայրապետը եւ Ապօն այժմ խիստ մտախոհ եւ ծածկամիտ էին դարձել։ Նրանց միւս եղբայրներին արդէն անտանելի էին դարձել երկու օտարական հիւրերը, որոնց վարմունքը, որոնց «խենթութիւնները», նրանց հաճելի չէին թւում։ Ինքը Ծերունի Խաչօն այժմ զբաղուած էր գիւղային գործերով, որ օրըստօրէ աւելի ծանրանում էին եւ նրան շատ հոգսեր էին պատճառում։ Այս պատճառով տանուտէրի օգան համարեա կորցրել էր իր կենդանութիւնը եւ նրա մէջ մեծ մասամբ դադարել էին գիշերային խօսակցութիւնները, վիճաբանութիւնները եւ անսովոր դատողութիւնները, որ լինում էին առաջ։

Միայն անփոփոխ մնացել էր կանանոցի կեանքը։ Նա իր միակերպութիւնը պահպանել էր դարերով եւ նոյնպէս շարունակվում էր։ Հայ ընտանիքի այդ կորուած, առանձնացած եւ տղամարդի հասարակութիւնից անջատուած բաժինը ոչինչ մասնակցութիւն չունի, թէ ինչ են խօսում, ինչ բանի վրայ են մոռածում տղամարդիկը։

Իրանց տնտեսութիւնից, իրանց տնային հոգսերից դուրս, ոչ մի օտար միտք չէ զբաղեցնում նրանց։ Եւ այս պատճառով օդայի մէջ եղած խորհուրդների մասին նրանք ոչինչ չը գիտէին։ Տանուտէրի օգան, այդ գիւղական կլուբը, դեռ մատչելի չէր կանանց հասարակութեանը։

— Դրանց կանանոցի չորս պատերի մէջ թագնուած այդ ուժերին պէտք է քարշել գործի մէջ, այն ժամանակ, անտարակոյս, յաջողութիւնը մեր կողմը կը լինի... ասում էր շատ անգամ պ. Սալմանը։

— Դեռ վաղ է, պատասխանում էր նրան Վարդանը, — պէտք է նախ եւ առաջ պատրաստել նրանց։

— Ոչինչ վերանորոգութիւն մի ժողովրդի կեանքի մէջ չէ կարելի կատարել առանց կնոջ մասնակցութեան։ Եթէ մեր ժողովուրդը մնացել է անշարժ, դրա գլխաւոր պատճառը այն է, որ կինը չէ մասնակցում հասարակական գործերի մէջ։ Այդ ուժը, այդ կենսատու զօրութիւնը, կանանոցի չորս պատերի մէջ ոչնչանալով, ապարդիւն է դառնում մեզ մօտ։ Եթէ պէտք էր սկսել մեր ժողովրդի կրթութեան գործը, սկիզբը դնելու է անպատճառ կանանց կրթութիւնից։ Ես այս անգամ պտրտեցայ ամբողջ Հայաստանում եւ ամեն տեղ ուշի-ուշով ուսումնասիրում էի հայ կնոջը։ Իմ ստացած տեղեկութիւնները խիստ մխիթարական հետեւանքի են հասցնում։ Որքան տղամարդը թուրքերի ազդեցութեան տակ խարդախուած է, փչացած է, որքան նա կորցրել է իր հայկական ինքնուրոյնութիւնը, — այնքան կինը պահպանուել է իր բարքուվարքի բարոյական անարատութեան մէջ։ Զը կայ չարիք առանց բարիքի։ Կանանոցի չորս պատերի մէջ փակուած կինը, թէեւ դարերով տանջուեցաւ, բթացաւ եւ զրկուեցաւ հասարակական մարդ լինելուց,

— բայց միւս կողմից, նա իր այդ բանտարկութեան մէջ պահպանեց հայութիւնը։ Դա մեծ գործ է։ — Որքան տղամարդը դրսում մահմեդական տարրի ազդեցութեան ներքոյ կորցնում է իր ազգային առանձնութիւնները, այնքան կինը կանանոցի մէջ, հեռու մնալով այդ ազդեցութիւնից, պահպանում էր ազգայնութիւնը։ Այսպիսով անդիտակցաբար պահպանվում էր մի մշտական հաւասարակշռութիւն։ Տղամարդի կորստի տեղը լցնում էր կինը։ Այդ կարելի է տեսնել ամենահասարակ մանրամասնութիւնների մէջ անգամ։ Կնոջ ղզուանքը դէպի մահմեդականութիւնը հասնում է սարսափելի մոլեռանդութեան. ամեն ինչ, որ դուրս է գալիս մահմեդականի ձեռքից, նա պիղծ է համարում. նրա մորթած միսը, նրա մակարդած պանիրը, նրա թխած հացը չէ ուտում։ Բայց տղամարդիկ այսպիսի խորութիւններ չը դիտեն։ Ես լսել եմ հարիւրաւոր պատմութիւններ, որ մահմեդականներից յափշտակուած կինը, աղջիկը կամ վերջապէս փախչում է, կամ եթէ չէ յաջողվում, անձնասպան է լինում։ Բայց տղամարդի վերաբերութեամբ այսպիսակ օրինակներ խիստ սակաւ են։ Կայ մի ուրիշ բան եւս, որ ամենագլխաւորն է. շատ տեղերում, մանաւանդ քաղաքներում, Թուրքերէն լեզուն հայ մարդու բերնում բոլորովին սովորական է դարձել. բայց ես չը տեսայ մի կին, որ Թուրքերէն խօսէր, կամ գոնէ գիտենար այդ լեզուն։ Հայոց լեզուն ընտանիքի մէջ պահպանողը եւ իր զաւակների բերանը դնողը կինն է։ Նա իր հեղինակութիւնը բանեցնում է մինչեւ անգամ օտարների վերաբերութեամբ։ Հայերի տներում ծառայող քրդերը եւ քրդուհիները բոլորը հայերէն են խօսում։ Կինը տուեց մեզ լեզու, ազգութիւն եւ պահպանեց հայ ընտանիքի

բարոյական հիմունքը։ Այժմ նա մի անարատ, չապականուած եւ անմշակ նիւթ է մեր ձեռքում, որից կարելի է հրաշալի բան շինել։

Այսպիսի եւ դրա նման մտածութիւններ վերջին օրերում պ. Սալմանի սովորական խօսակցութեան առարկան էին։ Բայց չը նայելով, որ նա այնքան լաւ կարծիք ունէր հայ կնոջ մասին, Ծերունի Խաչօի տան կնիկները նրան չէին համակրում։ Հասկանալի է, որ նրա ներքին, բարոյական եւ մտաւոր արժանաւորութիւնները նրանք ճանաչել կամ գնահատել անկարող էին. բայց պ. Սալմանը իր արտաքին կեղեւի մէջ նոյնպէս ունէր շատ բան, որ կարող էին գրաւել ամեն մի կնոջ ուշադրութիւնը։ Բայց կինը զարդացման զանազան աստիճանի եւ ժողովրդի զանազան դասերի մէջ տարբեր ճաշակներ ունի տղամարդի արժանաւորութիւնները գնահատելու եւ նրան սիրելու վերաբերութեամբ։ Այս պատճառով, շատ զարմանալի չէր, որ Ծերունի Խաչօի հարսները Վարդանին աւելի բարձր էին դասում պ. Սալմանից։

Միանգամ, յետ-կէսաւուր հանգստի ժամանակ, սրահի մէջ նստած էին հարսները, եւ իւրաքանչիւրը զբաղուած էր իր ձեռագործով. մէկը սանդերքի վրայ բուրդ էր գզում, միւսը իլիկով մանում էր գզած բուրդը, երրորդը ոստայնի վրայ գործում էր մի գեղեցիկ գունաւոր գորգ, չորրորդը իր երեխաների համար շորեր էր կարում, մի խօսքով, ամեն մէկը իր առանձին գործը ունէր։ Խօսակցութեան առարկան պ. Սալմանն էր։

— Սառա, հարցրեց նրա տեղերկինը՝ մանկահասակ Փարիշանը, — այդ մարդը մեր գիւղում ի՞նչ պիտի շինէ։

— Ասում են, ուզում է վարժատուն բաց անել, պատասխանեց Սառան։

— Նա խօ տիրացու չէ, ասաց Փարիշանը, որի կարծիքով վարժապետը պէտք է անպատճառ տիրացու լինէր։

— Տիրացու է, Ստանպոլի տիրացու է, կրկնեց Սառան։

— Ապա ինչո՞ւ ժամ չէ գնում, շարական չէ ասում։

Սառան ուրիշ պատասխան չը գտաւ, եւ առանց մտածելու ասաց.

— Դա էլ այդպիսի տիրացու է։

Մէջ մտաւ Ապօի կինը՝ գեղեցիկ Մարօն.

— Մարդս ասում էր, որ աղջիկներ էլ պիտի կարդացնէ։

Մարօի խօսքը բարձրացրեց ընդհանուր ծիծաղ։

— Աղջիկը ի՞նչ կ'անէ կարդալը, աղջիկը խօ տէր-տէր կամ վարդապետ չի դառնալու, պատասխանեցին Մարօին։

Հարսներից մէկը դարձաւ դէպի փոքրիկ Նազլուն, ասելով.

— Լսո՞ւմ ես, Նազլու, դրանից յետոյ պիտի դնաս վարժատուն եւ այբ-բեն սովորես։

Նազլուն Հայրապետի աղջիկն էր, նա բաւական համարձակ կերպով պատասխանեց.

— Ի՞նչ կայ, կը սովորեմ, յետոյ ժամ կը գնամ, ժամի շապիկ կը հագնեմ ու տղերքի նման "փոխ" կ'ասեմ։

— Հողը գլխիդ, էդ էր պակաս, պատասխանեցին խեղճ աղջկան։

Փարիշանը, որ այդ խօսակցութեանը առիթ տուեց, մի նոր հարց եւս առաջարկեց.

— Տիրացու Սիմոնը կարդացնում է մեր երեխերքին, էլ ի՞նչ կ'անենք ուրիշ վարժապետը։ Այդ մարդը խօ նրանից շատ չէ՞ իմանում։

— Ի հարկէ, շատ չէ իմանում, պատասխանեց Սառան, — տիրացու Սիմոնը շատ է կարդացել, բայց նա մէկ պակասութիւն ունի, որ հարբում է ու երեխերքին ծեծում է։ Ցիշո՞ւմ ես մեր հարեւան Կասպարի տղային, այնքան ծեծ էր կերել, որ շալակած տուն բերեցին եւ խեղճ տղան երկու օրից յետոյ մեռաւ։

— Տիրացու Սիմոնը ինչո՞վ էր մեղաւոր, առանց ծեծի երեխան ի՞նչ կը սովորի։

Այս խօսակցութիւնները առանց պատճառի չէին։ Պ. Սալմանը նոյն օրերում բանակցում էր գիւղացիների հետ երկու դպրոցներ բացանելու, մէկը աղջիկների համար, միւսը տղաների համար։ Նա խոստանում էր, թէ ինքը վարժապետներ բերել կը տայ եւ նրանց զաւակները կը սովորեն բոլորովին ձրի եւ մինչեւ անգամ դրքերը եւ այլ ուսումնական պարագայքը կը ստանան առանց փողի։ Բայց ինչ որ ձրի է, գիւղացու համար կասկածաւոր է։ Այդ պատճառով մեծ աշխատութիւն պէտք էր գիւղացիներին համոզելու համար, որոնց առաւելապէս բարկացնում էր օրիորդաց դպրոցը։ Ժողովուրդը սովորած լինելով կրթութիւնը տէրտէրների եւ տիրացուների ձեռքից ընդունել, ոչ միայն օտարոտի եւ խորթ էր համարում, այլ մինչեւ անգամ մեղք էր համարում իր զաւակների դաստիարակութիւնը մի այնպիսի մարդու ձեռք յանձնել, որ ժամ չէր գնում, որ շարական չէր ասում, որ, ինչպէս լսում էին, պաս էլ չէր պահում։

Ծերունի Խաչօն, որ միւս բոլոր խորհուրդների մէջ հակառակ էր պ. Սալմանին, դպրոցների վերաբերու-

թեամբ համաձայնուեցաւ նրա հետ։ Որպէս գիւղի տանուտէրը եւ գլխաւորը, նա կարողացաւ համոզել գիւղացիներին, եւ պ. Սալմանին տուեցին մի կտոր դեռին, որի վրայ նա յարմար էր համարում դպրոցների շէնք կառուցանել։ Գործը արդէն սկսուած էր. հիմքը փորուած էր։ Ցանկարծ մի փոթորիկ բարձրացաւ եւ մի առաւօտ տեսան, որ գիւղացիները գիշերով հաւաքուել եւ հիմքը հողով լցրել էին։ Այն օրը գիւղացիներից ոչ ոք չեկաւ բանելու, չը նայելով, որ պ. Սալմանը օրեկան վարձը աւելացրեց։

Ի՞նչ էր պատահել։

Որպէս վերեւում կանանց խօսակցութիւնից նկատեցինք, այդ գիւղում կար Սիմոն անունով մի տիրացու, որը մի եւ նոյն ժամանակ վարժապետութիւն էր անում. այսինքն՝ ձմեռը հաւաքում էր երեխաներին մի դոմի մէջ, սաղմոս, ժամագիրք եւ դրանց նման գրքեր էր կարդացնում, բայց գարունքին, երբ գիւղական աշխատութիւնները սկսվում էին, իր աշակերտներին արձակում էր, որոնք մինչեւ աշնան վերջը դպրոցի երես չը տեսնելով, ինչ որ սովորել էին, բոլորովին մոռանում էին։ Այդ տիրացու Սիմոնը գիւղի ծխատէր քահանայի՝ տէր Մարուքի փեսան էր, մի յարաժամ արբեցող, բայց մի եւ նոյն ժամանակ սաստիկ խռովարար մարդ էր նա։ Նոր դպրոցների շինութիւնը նա իր շահերին վնասակար գտաւ եւ զրգռեց իր աներոջը խափանել գործը։

Մի խօսք բաւական էր գիւղացիների մոլեռանդութիւնը բորբոքելու եւ գործը խափանելու համար։ Քահանան եկեղեցում պ. Սալմանի մասին, իր քարոզի մէջ, յայտնեց ժողովրդին, որ այդ մարդը "Ֆարմասոն" է, հայոց Աստծուն չէ պաշտում եւ բոլոր երեխերքին հաւատքից կը հանէ։ Նա աւելացրեց, որ աղջիկներին կարդացնելը մեղք է, որ Սողոմոն իմաստունը եւ Յովհաննէս Մկրտիչը կնիկներին անիծել են, որովհետեւ մի կին Յովհաննէս Մկրտչի գլուխը կտրել տուեց։ Յետոյ սուրբ գրքից շատ փաստեր բերեց, որ Սամսոն մարգարէի (?) մահուան պատճառն էլ մի կին դարձաւ, Ադամին էլ Եւան խաբեց եւ դրախտից դուրս գցել տուաւ, մի խօսքով, իր քարոզի մէջ զանազան այս տեսակ վկայութիւններ բերելով, տէր հայրը հաստատեց, որ աղջիկներին կարդացնելը վտանգաւոր է, որովհետեւ նրանք շատ բան կը սովորեն եւ սատանայ կը դառնան։

Բայց տիրացու Սիմոնը մեծ հեղինակութիւն ունէր գիւղի կանանց հասարակութեան մէջ. նրանց համար զանազան կախարդական թղթեր էր գրում, հմայում էր, գուշակութիւններ էր անում, եւ այսպիսով գրաւել էր նրանց համակրութիւնը։ Կնիկները աւելի զրգռեցին իրանց ամուսիններին, որ տիրացուին օգնեն, որ նրա հացը չը կտրուի։

Քահանան եւ տիրացու Սիմոնը իրանց յարուցած խռովութիւնների մէջ մեծ օժանդակութիւն գտան Թոմաս էֆէնդուց, որը սաստիկ հակառակ էր դպրոց, դպրութիւն եւ ուսում կոչուած բաներին։ Բացի դրանից, տիրացուն նրա անվարձ գրագիրն էր, գրում էր կապալառուի հաշիւները, եւ հունձի ժամանակ նրա զափթիաների հետ գիւղից գիւղ ման էր գալիս եւ հաւաքում էր գիւղացիների մշակութեան բերքի տասանորդները։

Այդ բոլորը մեծ հոգսեր պատճառեցին բարեսիրտ Ծերունի Ղաչօին, բայց բնաւ չը կարողացան խախտել պ. Սալմանի հաստատամտութիւնը։ Երեկոյեան տուն դառնալով, նա ասաց Վարդանին.

— Ես այդ անպիտանների հետ միսիոնարի պէս պիտի վարուեմ։ Միսիոնարը ինչ ժողովրդի մէջ որ մտնում է, նրա առաջին հակառակորդները լինում են կարդացողները եւ հոգեւորականները։ Բայց մի եւ նոյն ժամանակ նրա առաջին հետեւողները դառնում են նոյն մարդիկը, որ սկզբում հակառակում էին։ Միսիոնարը յանձնում է նրանց զանազան գործեր, լաւ եւս է ասել՝ ոչինչ գործ չէ յանձնում, միայն ռոճիկներ է տալիս։ Այսպիսով նոր աղանդը հալածող Պօղոսները դառնում են նրա ամենամոլեռանդ պաշտպանները։

— Այդ իրաւ է, պատասխանեց Վարդանը, — ինչ ես ուզում անել։

— Պէտք է գործնական լինել, ասաց պ. Սալմանը մի առանձին անձնավստահութեամբ, — պէտք է հասկանալ, թէ ինչով են դրաւվում մարդիկ։ Ինձ հետաքրքիր է գիտենալ, թէ այդ յիմար տիրացուն որքան շահ ունէր իր աշակերտներից. ես կ'առաջարկեմ նրան կրկնապատիկը ստանալ ինձանից եւ իմ դպրոցներում մի պաշտօն վարել, այսինքն ոչինչ գործ չը կատարել։ Հաւատացած եմ, որ այս առաջարկութիւնից յետոյ, առաւօտեան ինքն կը գայ, բահը եւ բրիչը կը վեր առնի եւ իմ բանւորների հետ կը սկսէ աշխատել դպրոցների շէնքը կառուցանելու համար։

— Ես էլ այսպէս եմ կարծում, պատասխանեց Վարդանը, — բայց տէրտէրի բերանին էլ պէտք է մի փոքր իւղ քսել։

— Այդ էլ կ'անեմ։

Զը նայելով այնօր պատահած անախորժութիւններին, պ. Սալմանը սովորականից աւելի ուրախ էր։ Գործի սկզբնաւորութեան անաջողութիւնները բորբոքել էին նրա եռանդը, իսկ ապագայի պայծառ յոյսերը լցրել էին նրա սիրտը մի անսահման բերկրութեամբ։

— Գիտէ՞ս, Վարդան, որքան բախտաւոր, որքան ընդարձակ ապագայ է խոստանում մեզ դպրոցը։ Նա կը տայ մեզ բոլորը ինչ որ մենք ցանկանում ենք։ Նա, միայն նա կը բուժէ մեր դարեւոր վէրքերը եւ կը պատրաստէ նոր սերունդ մի առողջ եւ թարմ կեանքի համար։ Մեր նախորդների դարեւոր անգործութիւնը թողեց մեզ համար, իրաւ է, շատ աշխատանք։ Նրանք կանխապէս չը հեշտացրին մեր այժմեան հոդերը. — բայց փոյթ չէ։ Ցակաւին կարելի է յոյս ունենալ, որ ապագան մեզ է պատկանում։ Միայն հաստատուն եւ տոկուն աշխատանք պէտք է։ Իմ կարծիքով, բաւական չէ միայն կրթել միտքը, ալնուացնել հոգին, պէտք է կրթել եւ մարմինը։ Դու ինքդ, Վարդան, նկատած կը լինես, թէ այստեղի մանուկները մինչեւ որ աստիճան դանդաղկոտ են, մինչեւ որ աստիճան ծանրաշարժ են։ Պէտք է ամրացնել նրանց մկանները, պէտք է կազդուրել նրանց ջղերը։ Այս կէտից, մարմնամարզութիւնը մեր դպրոցների մէջ պէտք է ընդունէ նպատակայարմար ձեւ եւ կերպարանք. նա պէտք է քաջութիւն ազդէ մեր մանուկների մէջ եւ պէտք է ամրացնէ նրանց թուլացած սրտերը...

— Ես քեզ մի ուրախալի բան պիտի պատմեմ, Վարդան, — այսօր տեսութիւն ունեցայ մի քանի քրդերի հետ, խօսում էի նրանց դպրոցի եւ կրթութեան օգտաւէտութեան մասին։ Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրանք ցոյց տուին ամեն տեսակ պատրաստականութիւն, յայտնելով, թէ սիրով կը յանձնեն իրանց որդիները հայոց դպրոցներում, երբ ուսումը այդքան լաւ բան է։ Նրանց խօսակցութիւնից երեւում էր, թէ իրանք

էլ շատ գոհ չէն, որ իրենց որդիները աւազակներ են լինում։ Եւ իրաւ, այդ ժողովուրդը ինչով է մեղաւոր, որ մնացել է վայրենի, որ իր ապրուստը որոնում է աւազակութեան եւ մարդասպանութեան մէջ։ Մեղաւորը մենք ենք, որ մինչեւ այսօր չաշխատեցինք կրթել նրանց։ Մեր սեպհական շահերը պահանջում էին անել այդ։ Եթէ ցանկանում ենք ազատ մնալ գաղանների կատաղութիւնից, պէտք է աշխատենք ընտանեցնել, պէտք է աշխատենք նրանց վարժեցնել աւելի խաղաղ եւ աւելի քաղաքակրթուած կեանքին։ Թուրքիան հոգ չէ տանում քրդերի կրթութեան մասին, եւ այդ շատ հասկանալի է, որովհետեւ քրդի վայրենութիւնը աւելի նպաստաւոր է նրան։ Բայց մենք պէտք է հոգ տանենք, որովհետեւ ճնասը մեզ է հասնում։ Մենք չենք դպչի նրանց կրօնին, մենք միայն կը կրթենք նրանց։ Այնուհետեւ "ջուրը իր բնական ճանապարհը կը գտնէ„...

ԻԴ.

Թուրքաց կառավարութեան կողմից պատերազմական պատրաստութիւնների նշանները արդէն նկատելի կերպով երեւում էին։ Եւ այդ կարելի էր տեսնել առաւելապէս Բագրեւանդի գաւառում, որ շատ հեռու չէր ռուսաց սահմանից։ Գիւղացիներից խստութեամբ հաւաքում էին ոչ միայն ներկայ տարուայ հարկերը, այլ եւ պահանջում էին հին ապառիկներ եւ մի քանի ապագայ տարիների հարկերը միասին։ Ժողովրդի հառաչանքներին եւ դժգոհութեանը չափ չը կար։ Ով որ փողով վճարել չէր կարողանում, բռնութեամբ վաճառել էին տալիս նրա տան կայքը, անասունները, եւ մինչեւ անգամ չէին խնայում եզներին ու գոմէշներին, որոնք անհրաժեշտ էին գիւղացու

երկրագործութեանը, որոնք ծառայում էին նրա վարը վարելու եւ. ծանրութիւնները տեղափոխելու համար։ Այդ բաւական չէր գիւղացիների վրայ պարտք էին դնում պատրաստել այսքան հազար հօխայ բաքսիմատ, եւ կամ խլում էին տներից իրանց ուտեստի համար պատրաստած բոլոր պաշարեղէնները, որպէս էին՝ ձաւար, կորկոտ, ըիշթայ[1], իւղ, պանիր, բրինձ եւ այլն։ Գիւղացիների բոլոր արտասուքի, լացի եւ աղաղակների պատասխանը լինում էր այն, թէ "տէրութիւնը պատերազմ ունի„...

Յիշեալ անկարգութիւնները բաց արին Թոմաս էֆէնդու առջեւ գործունէութեան մի նոր եւ ընդարձակ ասպարէզ։ Որպէս արքունի մուլթէզիմ, նա յանձն էր առել հաւաքել հարկերը եւ հայթայթել զօրքերի համար պատրաստուելիք պաշարի մի մասը։ Թոմաս էֆէնդու առջեւը դրած էր մի լայնատարած հունձք, ուր նրա սուր մանգաղը եռանդով գործում էր... Այժմ փոխանակ երկու զափթիաների, նա ստացել էր իշխանութիւնից բ ո ւ յ ր ո ւ լ թ ո ւ (открытый листъ) պահելու իր մօտ որքան պէտք լինի զափթիաներ։

Եւ այդ բոլոր զբաղմունքները հանում էին հայերին միայն, որովհետեւ մահմեդականները պատրաստվում էին մանակցել պատերազմին եւ նրանցից ուրիշ ոչինչ չէր պահանջվում։

Բայց նրանից, որ հայ գիւղացիները կողոպտվում էին եւ իրանց 10—20 տարիների ընթացքում ձեռք բերած կայքերից միանգամայն զրկվում էին, — բացի այդ դառն չքաւորութիւնից, նրանց ատրել էր մի ընդհանուր սարսափ, նրանց սպառնում էր մի ընդհանուր եւ

[1] Ըիշթայ վերմիշելի նման պատրաստած մի խմորեղէն է։

աւելի սոսկալի անբախտութիւն։ Մահմետական տարրի մէջ նկատվում էր մի գաղանային կատաղութիւն դէպի քրիստոնեաները, դէպի բոլոր «գաւուրները»։ Ամենի բերնից լսելի էր լինում այն դժոխային բառը՝ «ջհաթ»։ Մոլլաները, մուֆթիները, ղադիները եւ շէյխերը բորբոքում էին խառնիճաղանճ ամբոխի մոլեռանդութիւնը, գրգռում էին նրան, քարոզելով, թէ պատերազմը կրօնական է, թէ Ստամբօլումը շուտով պիտի բարձրացնեն «սանջակ շէրիֆը», եւ շուտով կը հրատարակուի սրբազան պատերազմը, եւ ամբողջ իսլամը պէտք է սուր բարձրացնէ քրիստոնեաների դէմ...

Այդ բոլորը մեծ հոգսեր պատճառեցին պ. Սալմանին, որին լաւ յայտնի էր այդ կատաղի շարժումների նշանակութիւնը եւ նրանց սարսափելի հետեւանքը տեղային հայերի վերաբերութեամբ։

— Շուտով կը կրկնուեն այստեղ Բոլգարիայի կոտորածները, ասաց նա մի առաւօտ Վարդանին, — պէտք է շտապենք նախապատրաստել ժողովուրդը անձնապաշտպանութեան համար։

— Ես էլ մի այսպիսի բարբարոսութեան հոտը զգում եմ... պատասխանեց Վարդանը։

Այսպէս խօսելով, նրանք դուրս եկան ծերունի Ղաչօի անից եւ դիմում էին դէպի տէր-Մարուքի տունը, որի հետ միտք ունէին վերջացնել դպրոցների վերաբերութեամբ մի քանի օր առաջ կարգադրուած խորհուրդը, այսինքն, որպէս Վարդանը ասաց, ուզում էին տէրտէրի «բերնին մի փոքր իւղ քսել», որ նա լռէ, նրա փեսայ աիրացու Սիմոնին վարձել այժմ որպէս հսկող բանւորների վրայ, իսկ ապագայի համար խոստանալ մի պաշտօն նոր բացուելիք դպրոցների համար։

Նրանց ականջին զարկեց մի ձայն. գիւղի միջով անց էր կենում մի անծանօթ չարչի, եւ իր վաճառքների անունները մի առ մի կարդալով, գնողներ էր հրաւիրում։

— Սիրուն աղջիկներ, կարմիր հարսներ, ինձ բերեցէք ձեր փարաները, ես կը տամ ձեզ լաւ ասեղներ, գոյն-գոյն թելեր, ոսկի մատանոցներ։

Չարչին մի վիթխարի մարդ էր, ոտքից ցգլուխ հագնուած ցնցոտիների մէջ։ Նրա վաճառքների ահագին արկղը, որ կրած ունէր թիկունքի վրայ, համեմատելով նրա մարմնի մեծութեանը, նոյն ապաւորութիւնն էր գործում, որպէս մի փոքրիկ մաղ քարշ ընկած լինէր ուղտի կողքից։ Չարչին ձախ ոտքից սաստիկ կաղում էր. եւ ամեն անգամ, երբ օրօրվում էր նա դէպի ձախ կողմը, կարելի էր մտածել, որ իսկոյն ցած կը դլորուի այդ գոլիաթը, բայց ձեռքի ահագին դաւազանը նեցուկ տալով, պահպանում էր իր իրական հաւասարակշռութիւնը։

Պ. Սալմանը, լսելով նրա ձայնը, կարծես, մի էլեքտրական ցնցում զգաց իր սրտի մէջ, կարծես, աշխարհի բոլոր բերկրութիւնները միանգամից լցրել էին նրա հոգին։ Ի՞նչ կապ կար պ. Սալմանի եւ այդ թափառականի մէջ։ Չարչին դեռ շարունակում էր եղանակել իր վաճառքների անունները եւ ծանր անհաւասար քայլերով անցնում էր գիւղի նեղ փողոցների միջով։ Պ. Սալմանը անցաւ նրա մօտից եւ երկու օտարականների հայեացքները հանդիպեցին միմեանց։ Նրանց մէջ ամենեւին խօսակցութիւն չեղաւ, բայց հաղորդեցին միմեանց շատ բան... Վարդանը ոչինչ չը նկատեց։

— Լաւ ժամանակ է գտել դա էլ իր թելն ու ասեղը ծախելու, խեղճ գիւղացիների մօտ մի փարայ էլ

չի մնացել, ինչով պիտի առնեն, ասաց Վարդանը ծիծաղելով, երբ փոքր ինչ հեռացել էին շարչու մոտից։

— Նրա արկղը, սիրելիս, ձեռնածուների արկղիկի նման երկու յատակ ունի, պատասխանեց պ. Սալմանը, — ստորին յատակի մէջ գտնվում են այնպիսի մթերքներ, որոնց սպառելու այժմ ամենայարմար ժամանակն է...

Վարդանը մի առանձին ուշադրութիւն չը դարձրեց այդ խոհրդաւոր խօսքերի վրայ, նրա միտքը նոյն րոպէում զբաղուած էր մի բոլորովին այլ առարկայով։ Նա մտածում էր Լալայի վրայ։ Իրերի յանկարծակի փոփոխութիւնը, շրջապատող խռովութիւնները սաստիկ անհանգստացնում էին նրան, եւ չը գիտէր, թէ ինչպէս պէտք էր տնօրինել իր Լալայի վիճակը, ո՞տեղ թաղցնել նրան, ի՞նչ անել նրա հետ, երբ ինքը այսօր կամ էգուց ստիպուած կը լինէր ընդունել մի բոլորովին այլ ձեռնարկութիւն...

— Լա՛ւ ասեղներ, գոյն-գոյն թելեր, սիրուն յուլուններ... հեռուից կրկին լսելի եղաւ կաղ շարչու խռպոտ եւ ձգական ձայնը։

Այդ միջոցին գիւղի մէջ հանդիպեցաւ պ. Սալմանին եւ Վարդանին Թոմաս էֆէնդին։ Նրա մօտ կանգնեցրել էին իր գեղեցիկ ձին, որի վրայ պատրաստվում էր նստել։ Նա շրջապատուած էր մի խումբ գիւղացիներով, որոնց ղանազան հրամաններ եւ պատուէրներ էր տալիս։ Տեսնելով պ. Սալմանին եւ Վարդանին, նա բաժանուեցաւ խումբից, եւ իր սովորական գիւական ժպիտը երեսին, գիմեց դէպի երկու երիտասարդները, եւ դեռ չը հասած, ասաց հեռուից.

— Ես ձեզ վաղուց էի յանկանում տեսնել, պ. Դուդուկջեան, (նա դեռ չը գիտէր պ. Սալմանի իսկական

անունը) — ա՛խ, որքան բախտաւոր եմ համարում ինձ, սիրելի հայրենակից, որ առիթ ունեցայ տեսնել ձեզ։ Դուք, երեւի չը գիտէ՞ք, որ ես էլ պոլսեցի եմ։

Պ. Սալմանին ոչ միայն չափազանց զարմանալի, այլ շատ զզուելի թուեցաւ էֆէնդու այս տեսակ շողոքորթութիւնը, որին ամենուին չէր ճանաչում, որի հետ առաջին անգամ էր տեսնվում։ Նա ոչինչ չը պատասխանեց։ Էֆէնդին բռնելով նրա ձեռքը, ասաց.

— Ցոյս ունեմ, որ դուք իրաւունք կը տաք համբուրուել ձեզ հետ, որպէս պոլսեցի, ես թոյլ եմ տալիս այդ խնդրել ձեզանից։ Հայրենիքիս երկար տարիների կարօտը ցանկանում եմ ձեզանից առնել։

Վարդանը, հեռու կանգնած, լուռ նայում էր այդ կոմեդիայի վրայ։ Պ. Սալմանը չը գիտէր, թէ ինչպէս պէտք էր դուս գալ իր նեղ դրութիւնից։ Այժմ էֆէնդին դարձաւ դէպի Վարդանը.

— Մօտ եկ, իմ խենթ բարեկամ, դու գիտես, որ ես երեխայի սիրտ ունեմ, մի բոպէ կը բարկանամ, միւս բոպէում կը մոռանամ բոլորը։ "Քուրդը իր թանին թթու չի ասի„։ Դու էլի՞ ինն ես, թէ լաւ, թէ վատ, ինն ես։ Ես ամեն ինչ մոռացել եմ։ Տուր ինձ ձեռքդ։

Վարդանը հազիւ կարողացաւ զսպել իր բարկութիւնը։ Բայց մտածելով, որ էֆէնդու այդ բարեկամական արտայայտութիւնները առանց մի առանձին նպատակի չէին լինելու, մօտեցաւ նրան եւ ձեռք տուեց։

Նա կրկին դարձաւ դէպի պ. Սալմանը.

— Ես խիստ բարկացած եմ ձեր դէմ, Պ. Դուդուկջեան, ասաց նա իր խօսքերին սուելի լուրջ ձեւ տալով, — լսե՞լ էք Թուրքի առածը՝ "տանուտէրի հետ առաջ տեսնուիր, յետոյ գիւղը կողոպտիր„։ Թոմաս

էֆէնդին այդ երկրում մի մարդ է։ Եթէ դուք սկզբից ինձ հետ խորհուրդ արած լինէիք, ես ձեր բոլոր դիտաւորութիւնը այնպէս կը կարգադրէի, որ այսօր այս անախորժութիւնները չէին պատահի ձեզ։ Ա՛խ, ջահելներ, ջահելներ, լաւ սիրտ ունէք, բայց գործելու եղանակը չէք իմանում։ Ուզեղ չե՞մ ասում։

— Ես, իրաւ, չեմ հասկանում, թէ դուք ի՞նչ բանի վրայ էք խօսում, պատասխանեց Պ. Սալմանը։

Էֆէնդին այնպէս ձեւացրուց, որպէս թէ չը լսեց Պ. Սալմանի խօսքերը եւ երեսը շուռ տալով դէպի գիւղացիների խումբը, որոնք հեռու կանգնած սպասում էին նրան, ասաց.

— Ա՛խ, աւանակներ, աւանակներ, դուք ե՞րբ պիտի խելքի գաք։ — Նա կրկին դառնալով դէպի Պ. Սալմանը, շարունակեց. — Մարդ էլ իր ձեռքով իր աչքի լոյսը կը խաւարացնէ՞. դրանք (գիւղացիները) այդպէս են։ Ես այսօր լսեցի, Ճշմարիտն ասեմ ձեզ, մազերս բիզ-բիզ կանգնեցան։ Մենք աշխատում ենք, որ դրանք դպրոց ունենան, ուսում առնեն, աչքները բացուին, կոյր չը մնան, աշխարհի չարն ու բարին ճանաչեն, բայց դրանք չեն հասկանում, էլի իրանց "էշն են քշում"...

"Մենք աշխատում ենք"... կրկնեց իր մտքում Պ. Սալմանը, բայց ո՞վքեր են այդ "մենք", որ առանձին կերպով շեշտեց Թոմաս էֆէնդին։

Նա շարունակեց.

— Ես հոգով չափ ուրախացայ, երբ լսեցի ձեր դիտաւորութիւնների մասին, Պ. Դուդուկջեան, եւ այս պատճառով դիմեցի ձեզ յայտնելու իմ առանձին շնորհակալութիւնը։ Մեր ժողովուրդը խաւարի մէջն է. պէտք է դուրս բերել նրան դէպի լոյս աշխարհ։ Դպրոցը միայն կը փրկէ նրան։ Մի քանի օր առաջ պատահած անկարգութիւնները թող չը վհատացնեն ձեզ. ամեն բարի գործի սկիզբը դառնութեամբ է լինում։ Դուք իմ մէջ, որպէս ձեր հայրենակցի մէջ, կը գտնէք համակրութիւն եւ ձեռնտուութիւն։ Ընդունեցէք իմ փոքրիկ ծառայութիւնները։ Ես այսօր մի գործով գնում եմ մերձակայ գիւղը. առաւօտեան կը վերադառնամ, եւ ինքս անձամբ կը կանգնեմ, բայց անել կը տամ դպրոցների հիմքը։ Այստեղ ոչ ոք չի գտնուի, որ Թոմաս էֆէնդուն ընդդիմութիւն գործէ։

— Շնորհակալ եմ, էֆէնդի, պատասխանեց Պ. Սալմանը, — դուք այնքան շատ զբաղմունքներ ունէք, որ ես չէի ցանկանայ խլել ձեր թանգագին ժամանակը։

— Այդ ոչինչ, ասաց կապալառուն մի առանձին բաւականութեամբ, — բարի գործի համար ես միշտ ժամանակ ունեմ։

Նա ձեռք տուեց երկու երիտասարդներին եւ հեռացաւ։

— Լիրբ... խաբեբայ... ասաց նրա ետեւից Վարդանը։

— Կարելի է օգուտ քաղել այս տեսակ մարդերից, պատասխանեց Պ. Սալմանը։

— Մի՞թէ հաւատո՞ւմ էք նրա խօսքերին։ Ո՛վ գիտէ, ի՞նչ սատանայական նպատակներ ունի։

Երկու երիտասարդները արդէն հասել էին տէր-Մարուքի տանը եւ ծեծում էին դուռը։

— Սիրուն ասեղներ... գոյն-գոյն թելեր... լաւ յուլուններ... լսելի եղաւ կաղ չարչու ձայնը, որ անց էր կենում միւս փողոցից։

— Վարդան, թողնենք այսօր տէրտէրի մօտ գնալը, ասաց նրան Պ. Սալմանը։

— Ինչո՞ւ, հարցրեց Վարդանը։

— Ինձ պէտք է այդ չարչուց մի քանի բաներ գը-նել...

Վարդանը սկսեց ծիծաղել իր ընկերի անտեղի ցան-կութեան վրայ։

— Եկէք, ուրիշ բան կայ... ասաց նրան Պ. Սալ-մանը, այնպիսի մի եղանակով, որ Վարդանը չէր կարող կասկածել նրա առաջարկութեան կարեւորութեան վրայ։

Երկու երիտասարդները թողեցին տէրտէրի տունը, անցան միւս փողոցը եւ հեռուից սկսեցին հետեւել չարչուն։ Նրա ետեւից ընկած էին մի խումբ գիւղական երեխաներ եւ գոռում էին. — Մեղ մաստաք տուր, մաստաք տուր։ Նա հանեց մի կտոր մաստաք եւ բաժանեց երեխաներին։

— Ես այդ մարդուն մի շաբաթ առաջ տեսայ, այսպէս ման էր գալիս Վանայ գիւղօրայքում, ասաց մի գիւղացի իր մօտ կանգնած հարեւանին։

— Այդ չարչիները ամեն տեղ թափառում են, պատասխանեց հարեւանը, — բայց ինչ սարսափելի դէմք ունի, նայիր, Գրիգոր, ես չեմ ցանկանայ դրան գիշերով տեսնել, կարծես, չար սատանայ լինի։

Կաղ չարչին պատելով բոլոր փողոցները, երբեմն կանչում էին նրան այս եւ այն տունը մի բան գնելու եւ ամբողջ ժամերով պահում էին, իսկ երբեմն հէնց փողոցի վրայ բաց էին անել տալիս նրա արկղը, եւ գիւղացի կնիկները հաւաքուած նրա շուրջը, երկար ու բարակ բաղար էին անում։ Այսպէս, մինչեւ երեկոյ նա հազիւ կարողացաւ վերջացնել իր առեւտուրը, եւ մութը պատել էր արդէն, երբ դուրս եկաւ գիւղից։ Նա թողեց ուղիղ ճանապարհը, որ տանում էր դէպի հարեւան

գիւղը, եւ սկսեց դիմել դէպի մի խրամ, որ բաւական խորն էր ընկած դարնան հեղեղներից, իսկ այժմ ցամաքել էր։ Նրա ընթացքի մէջ այժմ կարելի էր տեսնել մի նոր փոփոխութիւն. քայլերը դանդաղ էին որպէս առաջ, որովհետեւ, ինչպէս երեւում էր, շալակած արկղը սաստիկ ծանր էր։ Բայց այդ մարդը ամենեւին կաղ չէր, թէեւ ցերեկով այնպէս էր ձեւացնում։ Նա սկսեց իջնել խրամի մէջ։ Այնտեղ ցած դրեց իր բեռը, եւ ձախ ձեռքի երկու մատը շրթունքի վրայ դնելով, խորհրդաւոր ձայնով մի քանի անգամ շւացրեց։ (Ձեռքի մնացած մատները կտրած էին)։ Քանի րոպէից յետոյ խրամի մէջ յայտնուեցան Վարդանը եւ Սալմանը։ Վերջինը գրկեց չարչին եւ երկար չէին բաժանվում միմեանցից։

— Հիմայ նստենք, ասաց Պ. Սալմանը, — պատմիր, լա՛ւ առեւտուր ունեցար...

— Շատ լա՛ւ... պատասխանեց չարչին ուրախ ձայնով. — Վասպուրականի մեծ մասը հեղեղեցի իմ վաճառքներով...

— Ի՞նչ հարկէ առանց փողի...

— Առանց փողի... ես իմ վաճառքները ձրի էի բաժանում...

Վարդանը ապշած լսում էր երկու բարեկամների խօսակցութիւնը եւ ոչինչ չէր հասկանում։

— Հիմայ հասկանո՞ւմ ես, ասաց նրան Պ. Սալմանը, — որ իմ բարեկամի արկղը ձեռնածուի արկղեկի նման երկու յատակ ունի։

— Հետաքրքիր է գիտենալ, թէ Ֆօկուսի դլխաւոր յատակի մէջ ի՞նչ էր թաղցրած, հարցրեց Վարդանը։

— Ձէնքեր...

Վարդանը այժմ հասկացաւ չարչու ով եւ ինչ մարդ լինելը, որովհետեւ մի քանի օր առաջ նրա մասին լսել էր Պ. Սալմանից, եւ ինքը նոյնպէս գրկեց նրան։

Այդ մարդը Մելիք-Մանսուրն էր։

ԻԵ.

Ամենամեծ մարդիկն անգամ ունենում են խոշոր թուլութիւններ։ Թոմաս էֆէնդին թէեւ մեծ մարդերի կարգին չէր պատկանում, բայց Ալաշկերտի գաւառում հսկայ էր համարվում։ Առիւծ չը գտնուած տեղում աղուէսն էլ խոշոր գազան է։ Այդ մարդն էլ, որքան գործունեայ, որքան ճարպիկ էր, դարձեալ ունէր իր փոքրիկ թուլութիւնները։ Ամբողջ ցերեկը անցկացնելով իր պաշտօնին վերաբերեալ աշխատութիւններով, գիշերները շատ անգամ լուսացնում էր նա զանազան տեսակ անբարոյական քէֆերով, եւ թուրք պաշտօնատարների մոլութիւններին հետեւելով, արաղ էր խմում, աղջիկներ ու տղաներ էր պար ածում, եւ իրան շրջապատում էր զանազան տեսակ "չալգիներով" (երաժիշտ)։ Ամեն մի գիւղ մտնելիս, ամեն մի գիւղացու խրճթի դռները բաց էին նրա առջեւ։ Ո՞վ կարող էր չընդունել այդ բարձրաստիճան հիւրին։ Ընդհակառակն, գիւղացին պատիւ էր համարում իրան, երբ Թոմաս էֆէնդին ոտք կը կոխէր նրա շէմքի վրայ, թէեւ նրանից չէր շահվում, ուտեցնում էր, խմեցնում էր, — բայց այդ էլ բաւական էր, որ Թոմաս էֆէնդին կը սկսէր այնուհետեւ "բարի աչքով" նայել իր հիւրասիրողի վրայ։

Մի երեկոյ գրշերը մի աղքատ գիւղացու տանը լուր տուեց, թէ էֆէնդին պէտք է հիւր լինի։ Տան տէրը մի քանի գիւղերի միակ արհեստաւորն էր, շինում էր

երկրագործական անօթներ, նորոգում էր վնասուած դուռթաններ, արօրներ, սայլակներ եւ այլն։ Նա ըստ մեծի մասին իր տանը չէր գտնվում, որովհետեւ մեն էր գալիս գիւղից գիւղ եւ իր համար գործ էր պտռում։ Այս երեկոյ նոյնպէս տանը չէր։ Արհեստաւորի կինը պատասխանեց գրշերին, թէ մարդս տանը չէ, ի՞նչպէս կարող եմ ընդունել էֆէնդուն։

— Մարդդ տանը չէ, տունը խօ իր տեղն է, ասաց գրշերը կոշտ կերպով։

Այդ գրշեր կոչուածներն էլ մի առանձին պատիժ են գիւղացու համար։ Դրանք պաշտօնական անձինքների որսորդական շներն են. սաստիկ հոտառութիւն ունեն, եւ խիստ վարժուած են, թէ ինչ ճանապարհներով պէտք էր հետամուտ լինել որսին...

Արհեստաւորի կինը շուարած մնաց եւ խօսք չը գտաւ պատասխանելու գրշերին։

Գրշերը իր հրամանը կատարած համարելով, հեռացաւ, աւելացնելով.

Էֆէնդին կը գայ, երբ ճրագները կը վառուին։

Խեղճ կինը մի քանի րոպէ, որպէս քարացած, կանգնել էր իր խրճթի դրանը, եւ չը գիտէր, թէ ինչ պէտք էր անել։ Նրա տղամարդը տանը չէր, նրան անվայել էր մի օտար եւ անծանօթ հիւր ընդունել իր մօտ։ Նա մտաւ իր դրացի Օհօի խրճիթը եւ խնդրեց նրան, ասելով.

— Եղբայր Օհօ, գրշերը լուր տուեց, թէ էֆէնդին այս գիշեր մեզ մօտ պիտի լինի, մարդս տանը չէ, ի սէր Աստուծոյ, եկէք եւ կառավարեցէք նրան։

— Այս ի՞նչ բան է, պատասխանեց Օհօն բարկանալով, — այս գիւղում էլ ուրիշ տուն չը կա՞ր։

— Չեմ իմանում, ասաց կինը վշտացած ձայնով, — գըզկերը այսպէս պատուիրեց։

Դրացի Օհօն խոստացաւ, որ ինքը կ'ընդունէ հիւրին եւ կնոջը մենակ չի թողնի։

Թոմաս էֆէնդին այնքան ծանօթ էր այս գաւառի հետ, որ ամէն մի գիւղ մտնելիս, շատ լաւ ընտրութիւն անել գիտէր իջեւանների մէջ, թէ ո՞ր տունը աւելի յարմար էր գիշերելու համար։ Նրա ճաշակը այդ մասին բաւական զարգացած էր։ Գլխաւոր պայմանները, որ համապատասխանում էին նրա պահանջներին, դրանք էին որ տան տէրը աղքատ եւ փոքր ինչ յիմար լինէր, եւ եթէ յիմար չէր, պէտք է գոնէ խմելու հետ սէր ունենար (երկու յատկութիւններ, որ շատ չեն զանազանվում միմեանցից) եւ ամենագլխաւորն այն էր, որ պէտք է տան մէջ գտնուէր մի գեղեցիկ կանացի դէմք, որի վրայ նայելը զուարճութիւն պատճառէր նրան։

Բայց այս գիշեր ընտրած իջեւանը մասամբ չէր համապատասխանում էֆէնդու պահանջներին. տան տղամարդը, վարպետ Պետրոսը, մի համեստ եւ աշխատասէր արհեստաւոր էր, ո՛չ յիմար էր եւ ո՛չ խմելու հետ սէր ունէր։ Այսուամենայնիւ, էֆէնդին չէր սխալուած իր ընտրութեան մէջ, որովհետեւ տղամարդը տանը չէր, կինը վատ չէր դէմքով, իսկ նրա հասած քոյրը իր գեղեցկութիւնով գիւղի մէջ առաջին աղջիկն էր համարվում։

Գիւղի խրճիթների մէջ ճրագները վառուեցան։ Արհեստաւորի կինը, Սուսանը, թոնիրի վրայ կերակուր էր պատրաստում։ Արհեստաւորի քոյրը, մանկահասակ Վառվառէն, իւղի մէջ հաւեր էր տապակում։ Դրացի Օհօն

զանազան կարգադրութիւններ էր անում, որ ոչինչ պակաս չը լինի եւ ամէն բան վայելուչ լինի պատուելի հիւրին ընդունելու համար։ Բոլորը պատրաստ էր, երբ յայտնուեցաւ էֆէնդին գըզկերի առաջնորդութեամբ։ Ձափթիաները այս գիշեր նա իր հետ չէր վեր առել, նրանց մի ուրիշ տեղ հիւր էր տուել։

Դրացի Օհօն ընդունեց էֆէնդուն ամենայն խոնարհութեամբ եւ նա ծանր կերպով գնաց, նստեց իր համար պատրաստած օթոցի վրայ։

— Ո՞ւր է վարպետ Պետրոսը, չէ երեւում, հարցրեց էֆէնդին իր շուրջը նայելով, — ես նրան տեսնել էի ուզում, ես նրա հետ շատ հարկաւոր գործ ունէի։

Դրացի Օհօն պատասխանեց, թէ վարպետը գնացել է մերձակայ գիւղը բանելու համար։

— Ափսոս, շատ ափսոս, որ տեսնել չը կարողացայ. ես նրա հետ հարկաւոր գործ ունէի, կրկնեց էֆէնդին, եւ սկսեց բացատրել, թէ թագաւորական զօրքերին պաշար տեղափոխելու համար իրան պէտք են շատ սայլեր, եւ ցանկանում է վարձել մի մշտական հիւսն, որ ճանապարհների վրայ սայլերը փնասուելիս, նորոգէր նրանց, եւ վարպետ Պետրոսից աւելի յարմար մարդ չէր գտնում, եւ կամենում է նրան "մի լաւութիւն" անել, որ նա շահուէր այդ գործից, եւ մի քանի ամիսների համար շարունակ պարապմունք ունենար։

Թէեւ էֆէնդին առաջուց գիտէր, որ վարպետը տանը չէ, թէեւ նրան ամենեւին վարպետը հարկաւոր չէր, որովհետեւ զօրքերի պաշար տեղափոխելու համար նա գիւղացիների սայլերը եւ անասուններն էր գործածում, բոլորովին ձրի, առանց մի փարայ վճարելու, եւ եթէ մի սայլ փնասվում էր, իրանք՝ տէրերն էին շինել

տալիս, — բայց էֆէնդին այս խօսքերը ասելու մէջ առանձին նպատակ ունէր։ Աղքատ արհեստաւորի կինը, Սուսանը, լսելով էֆէնդու խոստմունքները, ուրախացաւ, մտածեց, թէ այդ հիւրից մեծ շահեր կարող են ստանալ, թէեւ նրա ինքնակոչ հիւր լինելը սկզբում այնքան ծանր եւ անախորժ երեւեցաւ իրեն։ Պէտք էր մի յոյսով քաղցրացնել միամիտ տանտիկնոջ սիրտը, — այդ էր հարկաւոր էֆէնդուն։

Էֆէնդին միայն նստած էր։ Դրացի Օհօն դեռ ոտքի վրայ սպասում էր, որ նրանից թոյլտուութիւն ստանայ, որ ինքն էլ նստէ։ Այդ շնորհը ստացաւ նա։ Գրպերը ոտքի վրայ մնաց, սպասաւորութիւն էր անում, որովհետեւ արհեստաւորի տանը ոչ ծառայ կար եւ ոչ չափահաս տղայ. նա մի քանի աշակերտներ ունէր, որոնց իր հետ էր տարել։ Տանտիկինը եւ արհեստաւորի քոյրը չէին երեւում, նրանք առանձնացել էին խրճթի մի կողմում, որ բաժանուած էր հիւրի նստած տեղից ցած տախտակապատով, որի վերին մասը չէր հասնում առաստաղին եւ ծառայում էր որպէս շերմայ։

Բայց նրանք պէտք է իրանց յարգանքը յայտնէին պատուելի հիւրին, այս պատճառով երկուսն էլ, թէ Սուսանը եւ թէ Վառվառէն դուրս եկան իրանց թաքստի տեղից, դիմեցին էֆէնդուն, եւ ձեռքերը սրտերի վրայ դնելով, հեռուից լուռ գլուխ տուեցին։ Այդ նշան էր, թէ "բարով էք եկել"։

— Շատ ապրիք, ասաց էֆէնդին, մի կողմնակի հայեացք ձգելով նրանց վրայ։

Տանտիկնոջ երեսը ծածկած էր քօղով, իսկ մանկահասակ աղջկանը բաց էր։ Նրանք կրկին հեռացան եւ սկսեցին ընթրիքի սեղանը պատրաստել։

Փոքրիկ խրճիթի մէջ տիրում էր խորին լռութիւն. ոչ ոք չէր խօսում, բոլորը սպասում էին որ էֆէնդին խօսէ։

— Դու այժմ ինչով ես պարապվում, հարցրեց նա դրացի Օհօից։

— Անգործ եմ, աղայ, պատասխանեց Օհօն ծոծրակը քորելով, — Աստուած ինձ պատժեց, մի տարուայ մէջ մի քանի անբախտութիւններ պատահեցան. մեծ որդիս "քո չարը տարաւ"... անասուններս "քեզ մատաղ դարձան"... հիմայ արօրս էլ չէ բանում... մնացել եմ անգործ։

— Ափսոս, շատ ափսոս, ասաց էֆէնդին ցաւակցելով, — դու լաւ մարդ ես, Օհօ, ես քեզ ճանաչում եմ, ես չեմ թողնի, որ դու անգործ մնաս, քեզ գործ կը տամ, ինձ հիմայ շատ մարդիկ են հարկաւոր։

Օհօի ուրախութեան չափ չը կար։

— Դուք միայն գործ յանձնեցէք, աղայ, այն ժամանակ կը տեսնէք, թէ Օհօն որպէս լաւ ծառայել գիտէ։

— "Իշը որքան լաւ բանէ, այնքան իր գարին կաւերացնէ"...

— Ի հարկէ, այդպէս է։

Էֆէնդին այն կարգի մարդերից էր, որ պատահած տեղը այն աստիճան կը հպարտանար, կը փքուէր եւ կը բարձրացնէր իրան, որ "դարվազի դռնովը չէր կարող ներս մտնել", իսկ երբեմն այնքան կը փոքրանար, որ ասեղի ծակով անց կը կենար։ Գիւղացու խրճթում, երբեմն նա շատ մտերիմ էր լինում, եւ վարվում էր այնքան ընտանեբար, որպէս մարդիկ վարվում են մի յայտնի տներում, որոնց թշուառ բնակիչներին փողոցում պատահելիս ամաչում են գլուխ տալ...

Պէտք էր մի խոստմունքով կաշառել դրացի Օհօին, նա այստեղ այս գիշեր տան տիրոջ պաշտօն էր կատարում: Եւ միամիտ գիւղացին բոլորովին հաւատալով նրան, յայտնեց իր շնորհակալութիւնը, ասելով.

— Աստուած քեզ երկար կեանք տայ, աղայ, Աստուած ձեր ձեռքը մեր գլխից անպակաս անէ:

Ընթրիքի ժամանակ էր: Յայտնուեցաւ Վառվառէն, լուացուելու պարագայքը ձեռքին բռնած, եւ շնորհալի կերպով դրեց էֆէնդու առջեւ, նա սկսեց լուանալ իր ձեռքերը: Յետոյ տարածեց նա սեղանի սփռոցը, հաց դրեց, եւ կերակուրները, որքան որ պատրաստուած էին, բոլորը միանգամից շարեց սեղանի վրայ, իրանց պատշաճաւոր տեղերում: Այդ բոլոր սպասաւորութիւնների ժամանակ երեւում էր անմեղ աղջկայ անհամարձակութիւնը, խառն երկչոտութեան եւ ամթխածութեան հետ, որ զարդացել էին նրա մէջ փակուած կեանքի եւ օտար տղամարդերի հասարակութեան հետ հաղորդակցութիւն չունենալուց:

— Զաւակս, հարցրեց էֆէնդին մանկահասակ աղջկանից, — քո անունը ի՞նչ է:

Նա կարմրեց, շփոթուեցաւ եւ սկսեց այս կողմը եւ այն կողմը նայել, որ մէկը իր փոխարէն պատասխանէ: Դրացի Օհօն ասաց, թէ անունը Վառվառէ է:

— Ի՞նչ գեղեցիկ անուն է, ճշմարիտ, շա՛տ գեղեցիկ անուն է, կրկնեց էֆէնդին հիացմունքով, — ես էլ մի քոյր ունեմ, այսպէս է կոչվում:

Այժմ Վառվառէի սառն դէմքի վրայ փայլեց ժպիտի նման մի բան, երեւի, նա ուրախացաւ, որ ինքը մի այնպիսի մեծ մարդու քրոջ անունն էր կրում, թէեւ

էֆէնդին ամենեւին քոյր չունէր, բայց պէտք էր Վառվառէին եւս մի բանով ուրախացնել:

Սեղանի վրայ ուտում էին էֆէնդին եւ Օհօն միայն: Կնիկները այս կողմերում տղամարդերի հետ սեղանակից չեն լինում:

— "Անջուր ջրաղացը ալիւր չի աղայ", նկատեց էֆէնդին:

Դրանով նա հասկացրեց, թէ պէտք էր մի բան խմել եւ հրամայեց գըզլերին, որ գնայ, արաղ բերէ: Դրացի Օհօն ներողութիւն խնդրեց, որ այդ մասին չեն մտածել, եւ տանտիկինը, որ չէր խօսում, մի կերպով հասկացրեց, թէ ինքը շուտով բերել կը տայ արաղը:

— Չէ, պատասխանեց էֆէնդին, — այդ իմ սովորութիւնն է, ամեն տան մէջ հաց ուտելիս արաղը եւ գինին պէտք է իմ հաշւով լինեն:

Այդ իրաւ էր, էֆէնդին այս տեսակ աղքատ տներում գըզլերի ձեռքով ինքն էր բերել տալիս խմիչքները, միայն հաշիւը անցնում էր գիւղի ընդհանուր ծախսերի մէջ: Բայց նրա սատանայական խորամանկութիւնը այդ բանի մէջ այն էր, որ խմիչքները ինքը բերել տալով, կարող էր գործ ածել այնքան, որքան իր ցանկութիւնն էր:

Շուտով գըզլերը վերադարձաւ, բերելով իր հետ մի ահագին աման արաղով:

— Հիմայ կարող ես նստել, հրամայեց նրան էֆէնդին, — եւ մեզ սագիութիւն (մատռուակութիւն) անել:

Գըզլերը նստեց ամենից ցած եւ արաղի ահագին ամանը դրեց իր մօտ: Նրան յայտնի էր էֆէնդու սովորական պատուէրը, թէ "երբ մի տուն մտնում ես, եւ ուզում ես, որ ուրախ անցկենայ, պէտք է առաջ տանտիրոջ բամբակը թաց անել". նշանակում

է՝ պէտք է նրա ուղեղը թմրեցնել, պէտք է նրան հարբեցնել։ Այստեղ թէեւ տան տէր չը կար, բայց դրացի Օհօն նրա տեղն էր բռնում։ Այս պատճառով գըզեերը զօռ էր տալիս, յաճախ արաղի բաժակը դէպի Օհօն դարձնելով։

Դրացի Օհօն փոքր ինչ սէր ունէր խմիչքի հետ։ Մանաւանդ նրան պատահած վերջին անբախտութիւններից յետոյ, երբ նրա մեծ որդին մեռաւ, երբ նրա անասունները կոտորուեցան, — Օհօն իր վիշտերը մոռանալու համար բոլորովին անձնատուր եղաւ արաղի։ Նա ընդունած բաժակը մինչեւ վերջին կաթիլը ցամաքեցնում էր։ Մի կողմից արաղի ազդեցութիւնը, միւս կողմից էֆէնդու խոստմունքները, թէ նրան գործ եւ պարապմունք կը տայ, այն աստիճան տաքացրին, այն աստիճան ուրախացրին Օհօին, մինչեւ իրան մոռանալով, նա սկսեց երգել զանազան թուրքերէն երգեր։

— Դրանով բան չի դառնայ, ասաց էֆէնդին, եւ հրամայեց գըզեերին, որ գնայ, "չալկիներին" կանչէ։

"Չալկիները" մի խումբ տեղային հայ երաժիշտներ էին, որ երգում էին եւ ածում էին զանազան ասիական նուագարանների վրայ։ Դրանք անբաժան հետեւում էին էֆէնդուն, ինչ գիւղ որ նա գնում էր, որովհետեւ գիտէին որ էֆէնդին գիշերները առանց "քէֆի" չի անցկացնի, նրան կը զուարճացնեն եւ նրանից փողեր կը ստանան։

Շուտով յայտնուեցան "չալկիները", գլուխ տուեցին եւ շարուեցան սեղանի շուրջը։ Տանտիկինը այժմ ստիպուած էր կերակուրների քանակութիւնը աւելացնել։

Էֆէնդին բարեհաճեց հարցնել "չալկիների" առողջութիւնը։

— Ձեր շնորհիւ ամենքս էլ լաւ ենք, պատասխանեցին նրանք։

Երբ կերան, խմեցին, կշտացան, Վասվասէն կրկին դուրս եկաւ իր թագստի տեղից եւ սկսեց սեղանը հաւաքել։ Բայց արաղի մեծ ամանը անշարժ մնաց իր տեղում։ Նա արդէն մի քանի անգամ դատարկ գինետուն էր գնացել եւ լիքը յետ դարձել։ Բաժակները շարունակ պտտվում էին։ "Չալկիների" գլուխներն էլ տաքացան։

— Հիմայ սկսեցէք, հրամայեց էֆէնդին։

Նրանք սկսեցին։ Փոքրիկ խրճիթը կենդանացաւ ասիական երաժշտութեան խառնաշփոթ եւ աղմկալի հնչիւններով։

Էֆէնդին գտնվում էր իր սրտի ամենաախորժ տրամադրութեան մէջ։

Քանի լոսէից յետոյ արհեստաւոր Պետրոսի խրճթի շուրջը եւ կտուրի վրայ հաւաքուեցան գրացի կնիկները, աղջիկները, եւ սկսեցին երդիկներից ու լուսամուտներից նայել, եւ զուարճանալ նուագածութեան ձայներով։ Ոչինչ այնքան չէ ուրախացնում գիւղացի կնոջը որպէս երաժշտութիւնը, որին նա շատ կարօտ է մնում, միայն ձմեռը հարսանիքների ժամանակ լսելու բախտ ունենալով։

Փոքր առ փոքր "մէջլիսը" տաքացաւ եւ աւելի բաղադրեալ կերպարանք ստացաւ։ Արաղի արբեցութեան եւ "չալկիների" նուագածութեան ձայների հետ միրեց ընդհանուր խառնակութիւնը։ Ինչպէս ասում են՝ "շունը էլ իր տիրոջը չէր ճանաչում"։ Ամեն մարդ գլուխը կորցրել էր։ Միայն էֆէնդին զգաստ էր, միայն նա իրան պահել էր իմանում։ Այդ միջոցին դրսում հաւաքուած կնիկների եւ աղջիկների բազմութիւնը համարձակութիւն ստացաւ, եւ կամաց կամաց ներս մտնելով, նրանք

նստեցին Սուսանի եւ Վառվառէի մօտ, եւ սկսեցին այն-տեղից լսել երաժիշտներին։

— Պար, պար, բացականչեց էֆէնդին ծափ տալով, — պար եմ ուզում։

Այդ միջոցին դրացի Օհօն, որ հազիւ կարողանում էր իրան ոտքի վրայ պահել, վերկացաւ, եւ հանդիսականների միջից բռնելով երկու փոքրիկ աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, բերեց կանգնեցրեց խրճթի մէջտեղում։ Երաժիշտները ածեցին տեղային պարի մի եղանակ։ Փոքրիկ աղջիկները մի փոքր ամաչեցին, մի փոքր կարմրեցան, մի փոքր "չենք կարող,, ասացին, վերջապէս սկսեցին, պարել։

— Շաբաշ, շաբաշ[1] գոռում էին երաժիշտները, աւելի թունդ կերպով ածելով։

Եւ էֆէնդին գնում էր մի-մի արծաթի դրամ պարողների ափի մէջ, նրանք տալիս էին երաժիշտներին։

Պարը, որպէս սովորաբար լինում է, սկսուեցաւ փոքրիկ աղջիկներից եւ հետզհետէ հանդիսացան աւելի հասակաւորները։ Առաջին զոյգը յոգնելուց յետոյ իրանց ձեռքի թաշկինակները ձգեցին ուրիշ երկու աղջկայ վրայ. այդ նշան էր, որ այժմ նրանք պէտք է պարէին։ Այսպէս հերթը հետզհետէ փոխվում էր, եւ ամեն անգամ մէջ էին մտնում մի զոյգ պարողներ։ Էֆէնդին առատութեամբ լցնում էր նրանց բուռը արծաթի "շաբաշներով„, եւ երաժիշտները եռանդով ածում էին։

Հերթը հասաւ Վառվառէին։ Գեղեցիկ աղջիկը գեղեցաղանցեց բոլորից իր շնորհալի պարով. նրա ամեն մէկ

[1] Շաբաշ նշ. այն արծաթը, որ ստանում են պարողները հանդիսականներից եւ յետոյ տալիս են երաժիշտներին։

շարժումների մէջ նշմարվում էր գրացիայ եւ կախարդիչ հրապուրանք։

— Մեր երկրում, խօսեց էֆէնդին, հայերի մէջ մի լաւ սովորութիւն կայ, երբ աղջիկը իր պարը վերջացնում է, մօտենում է տան պատուաւոր հիւրին, չոքում է նրա առջեւ, գլուխը դնում է նրա ծնկի վրայ, եւ այնքան ժամանակ չէ բարձրացնում, մինչեւ նրանից մի լաւ ընծայ չէ ստանում[1]։

— Այդ շատ լաւ սովորութիւն է, ձայն տուեցին երաժիշտներն, — պէտք է այստեղ էլ մտցնել այդ սովորութիւնը։

— Վառվառէ, դու պիտի լինես առաջին օրինակը, ասաց նրան էֆէնդին, — դէ, մօտեցիր, զաւակս։

Վարվառէն ամօթխածութիւնից բոլորովին շփոթեցաւ եւ անշարժ մնաց իր տեղում։ Նա աւելի բարւոք էր համարում, որ գետինը պատռուէ եւ իրան կուլ տայ, քան թէ գլուխը մի օտար մարդու գրկում դնէ։ Բայց ամեն կողմից նրան բօթեցին, քաշքշեցին ասելով, "աղջի, գնա՛, մի ամաչիր, քեզ բան կը տայ„ — եւ վերջապէս նրան տարան էֆէնդու մօտ եւ նա սոխսուեցաւ իր գեղեցիկ գլուխը դնել էֆէնդու ծնկների վրայ։ Էֆէնդին փայփայեց Վառվառէի սիրուն գիսակները եւ դրեց նրա ափի մէջ երկու ոսկի։

Մինչեւ էֆէնդին այսպիսի քէֆերով էր զբաղուած, ներս մտաւ նրա զսպթիաներից մէկը, մօտեցաւ, եւ ականջին ասաց. "այն մարդին, որի համար պատուիրած էիք, գոտանք„։ — "Բռնեցէք, եւ ամենայն զգուշութեամբ

[1] Հայաստանում ոչ մի տեղ չը կայ այսպիսի սովորութիւն. միայն ասիական բօշաների տղաները եւ կնիկները պարելու ժամանակ գործ են ածում այս տեսակ հրապուրիչ ձեւեր հանդիսականներից փող ստանալու համար։

պահեցէք, մինչեւ ես առաւօտեան կարգադրութիւն կ՚անեմ„, հրամայեց էֆէնդին անլսելի ձայնով։

Զափթիան հեռացաւ։

Ի՞նչ մարդու համար էր այդ կարգադրութիւնը, — ոչ ոք չը հասկացաւ։

Արդէն գիշերից բաւականին անցել էր։ Արհեստաւոր Պետրոսի խրճիթը փոքր առ փոքր դատարկուեցաւ։ Նրա ժիշտները հեռացան։ Դրացի Օհօին արբեցութիւնից բոլորովին անզգայ իր տունը տարան։ Բաղմութիւնը ցրուեցաւ։

Արհեստաւորի խրճթի մէջ մնաց միայն պատուելի հիւրը գրզիրի հետ, որը այնքան խմել էր, որ ունեցած մի հատիկ աչքն էլ ոչինչ չէր տեսնում։ Սուսանը անկողին պատրաստեց էֆէնդու համար, ճրագները հանգցրին եւ բոլորը հանգստացան։

Այս գիշեր ի՞նչ էր պատահել, — Աստուած գիտէ։ Բայց առաւօտեան Վառվառէն շատ տխուր էր, եւ արտասուքը խեղճ աղջկայ աչքերից մի քանի օր չէր ցամաքում...

Նոյն գիշերուայ առաւօտեան պահուն, դեռ լոյսը չը բացուած, այս գիւղի մէջ կատարուեցաւ մի ուրիշ ցաւալի անցք. մի երիտասարդի շղթաներով կապած, տարան զինուորական դործակատարի մօտ, որ նոր էր եկել այս կողմերում պատերազմական կարգադրութիւնների համար։

Գիւղացիներից ոչ ոք չը տեսաւ նրան, — միայն Թոմաս էֆէնդին խաւարի միջից, նրա ետեւից նայելով, մի առանձին դիւական հրճուանքով ասում էր իր մտքում. «գնա այսուհետեւ, որքան կարող ես, փչիր քո դ ո ւ դ ո ւ կ ը„...

Այդ երիտասարդը պ. Դուդուկջեանն էր, կամ մեր այժմեան պ. Սալմանը։

Ի Զ.

Ծերունի Խաչօի տան մէջ ամենեւին չը գիտէին թէ ինչ էր պատահել պ. Սալմանի հետ, միայն շատ անհանդիստ էին, որ նա գիշերը չը վերադարձաւ։ Մանաւանդ Վարդանը, Հայրապետը եւ Ապօն խիստ տխուր էին, որովհետեւ զգում էին, որ անպատճառ մի չար դէպք պէտք է պատահած լինի։ Առաւօտեան նրանք երեքը միասին դուրս գնացին, գուցէ մի բան կը լսէին նրա մասին։

Կէսօրին անակնկալ կերպով յայտնուեցաւ Թոմաս էֆէնդին։ Նրա այս տեսակ գալուստը, մենակ, առանց ծառայի, առանց զափթիաների խիստ օտարոտի թուեցաւ ծերունուն։ Նա միշտ ման էր գալիս իր առանձին սվիտայով։ Նա բռնեց ծերունու ձեռքից, մի կողմը տարաւ, որպէս թէ մի գաղտնի խօսելիք ունի նրա հետ։

— Գիտէ՞ս, ասաց նա կիսածաղրական եւ կիսալուրջ եղանակով. — այն «դուդուկ փչողին„ կալանաւորեցին, տարան «ի դոդն Աբրահամու„։

Ծերունին հասկացաւ, թէ ում մասին էր խօսքը, սոսկաց, բոլոր մարմնով դողդողաց, եւ փոքր էր մնում, որ սլիտի գլորուէր դետնի վրայ։

— Սիրտդ պինդ պահիր, դողալու ժամանակ չէ, շարունակեց էֆէնդին, — դեռ ես շատ բան պէտք է լսես։

Նա պատմեց, թէ ինքը տեղեկացաւ, որ անցեալ գիշեր պ. Սալմանը գնացել էր մի գիւղ, այնտեղ մի տան մէջ հաւաքել էր իր շուրջը մի քանի երիտասարդ մշակներ, խօսում էր նրանց հետ «մարդկային անհատական իրաւունքների„ մասին, խօսում էր մշակ մարդու

"աշխատանքի" մասին, թէ խօսում էր "բռնակալութեան" դէմ, խօսում էր ինչ եղանակով մարդիկ ձեռք են բերում "աւելի ազատ եւ աւելի բախտաւոր կեանքը", — ո՞վ է իմանում, զանազան այս տեսակ "խենթութիւնների" վրայ էր խօսում: Ցանկարծ վրայ են հասնում մի քանի ոստիկաններ եւ կալանաւորում են: Կառավարութիւնը վաղուց որոնում էր այդ "խենթին", որովհետեւ նրա մի քանի ընկերները զանազան տեղերում կալանաւորուած էին: Այժմ այդ մուկիկն էլ ընկաւ որոգայթի մէջ: — Թոմաս էֆէնդին ամեն ինչ պատմեց, բայց չը յայտնեց, թէ ինքն էր մատնել պ. Սալմանին:

Նա կրկին գարձաւ դէպի ծերունին.

— Այժմ նոր առակ լուարուք, ասաց նա խիստ գառն ժպիտով, կարծես, աշխատում էր աւելի խոր խոցել ողորմելի ծերունու սիրտը: — Շուտով զարթիանները կը գան քո տան մէջ խուզարկութիւն անելու, ես, որպէս բարեկամ, եկայ քեզ նախապէս զգուշացնելու համար:

Նա մի առանձին կերպով շեշտեց "բարեկամ" բառը: Այսուամենայնիւ, զարթիանների եւ խուզարկութեան անունը լսելով, ծերունին բոլորովին զարհուրեցաւ:

— Դեռ եւս ազատուելու ժամանակ կայ, շարունակեց էֆէնդին աւելի սառն կերպով. դու ինձ միայն այնասա, նրանից խօ մի բան չի՞ մնացել քո տան մէջ:

Որքան սարսափելի լինէր հաղորդած լուրը, ծերունին դարձեալ փոքր ինչ հանգստացաւ, երբ նկատեց, որ էֆէնդու նման "բարեկամը" մի այսպիսի վտանգաւոր լոպէում օգնութեան ձեռք էր մեկնում իրան:

— Մի խուրջին է մնացել, պատասխանեց նա, երկչոտութեամբ իր շուրջը նայելով, մի գուցէ մի ուրիշը լսէ նրա ձայնը:

— Հիմայ եկ, այդ էշը ցեխիցը դուրս հան... խօսեց էֆէնդին ինքն իրան: — Մի խուրջին է մնացել... դա քիչ բան չէ...

Նա դարձաւ դէպի ծերունին, իր սատանայական շիլ աչքերը լայն բացելով:

— Մի րոպէն անգամ թանգ է մեզ համար, շտապիր, գնանք, թագցնենք այդ խուրջինը, քանի որ դեռ չեն յայտնուել զարթիանները:

Ծերունին բոլորովին հաւատալով էֆէնդու անկեղծութեանը, տարաւ նրան օդան, եւ ցոյց տուեց պ. Սալմանի այնտեղ պահուած ճանապարհորդական խուրջինը:

— Դռները կողպեցէք, պատուիրեց էֆէնդին, եւ ինքը բաց անելով խուրջինը, սկսեց քրքրել նրա մէջ եղած իրեղէնները:

Նրա մէջ կային զանազան յանձնարարական նամակներ այլ եւ այլ հասցէներով, կային զանազան մարդկանց անունով փոխանագրեր, որոնցմով պ. Սալմանը կարող էր հարկաւորած ժամանակ փող ստանալ, կային զանազան հրահանգներ, ծրագրներ եւ այլն. կային եւ մի քանի տետրակներ, որ երիտասարդ պրօպագանդիստը բաժանում էր գիւղացիներին, — մի խօսքով, բացի թղթերից ուրիշ ոչինչ չը կար: Էֆէնդին խորին ուշադրութեամբ քննում էր բոլորը եւ խորհրդաւոր կերպով շարժում էր իր գլուխը:

— Եթէ իշխանութեան ձեռքը ընկնելու լինեն, ասաց նա, — այդ թղթերից մէկը բաւական է, որ քեզ, տանուտէր Խաչօ, քո որդիների հետ կախաղան բարձրացնեն, իսկ քո բոլոր հարստութիւնը յարքունիս գրաւեն:

Ծերունին քարացած մնաց եւ ոչինչ պատասխանել չը կարողացաւ: Վերջին խօսքերը ձգեցին նրան մի տեսակ մտաւոր անզգայութեան մէջ:

— Այդ բոլորը պէտք է այրել, ասաց էֆէնդին եւ կրկին թղթերը լցրեց խուրջինի մէջ։

— Ես ոչինչ չեմ հասկանում, իմ գլխում խելք չէ մնացել, պատասխանեց Ծերունին դողդոջուն ձայնով, եւ նրա շիջած աչքերը լցուեցան արտասուքով։

Ցանկարծ միտքը փոխեց էֆէնդին. "ինչո՞ւ այրել, մտածում էր նա. պէտք է լաւ քննել այդ թղթերը. դրանք ինձ պէտք կը գան... ինչո՞ւ ոչնչացնել"։

Նա հարցրեց Ծերունուց.

— Այս տանը մէջ կա՞յ մի այնպիսի գաղտնի տեղ, ուր կարելի լինէր առ ժամանակ թաքցնել այդ խուրջինը։

— Կայ, պատասխանեց Ծերունին։

Նրա տան մէջ կային մի քանի գաղտնի պահարաններ, որոնց մէջ վտանգի ժամանակ թաքցնում էին տան թանգագին իրեղէնները։ Որովհետեւ վտանգը այս երկրում միշտ անպակաս էր, այս պատճառով պահարաններից մի քանիսը լիքն էին, եւ մէկը միայն մնացել էր դատարկ, որ կարելի էր ցոյց տալ էֆէնդուն։

Նրանք վեր առեցին չարագուշակ խուրջինը եւ դիմեցին ներքնատուն, որ ծառայում էր ձէթ, իւղ, գինի եւ ուրիշ այսպիսի մթերքներ պահելու համար։ Ներքնատան յատակը պատած էր սալերով։ Ծերունին մօտեցաւ եւ բարձրացրեց այդ սալերից երկուսը. նրանց տակում յայտնուեցան երկաթի փոքրիկ երկու դուռ, որ հորիզոնական դիրքով փակում էր գաղտնի պահարանի մուտքը։ Ծերունին հանեց իր գրպանից մի բանալի, դրեց իր պատշաճաւոր տեղում, մի քանի անգամ պտտցրուց, եւ երկաթի դուռը ինքն-իրան բարձրացաւ։ Այժմ նրանց առջեւ բաց էր ստորերկրեայ վերապի բերանը։ Նեղ սանդուղքներով նրանք իջան ցած։

Վերապի մթին դատարկութեան մէջ ոչինչ չէր կարելի տեսնել։ Խոնաւ օդը խեղդելու չափ ծանր էր։ Խուրջինը դնելով այնտեղ, նրանք շուտով դուրս եկան։ Ծերունին կրկին կողպեց երկաթի դուռը, կրկին սալերը դրեց իրանց առաջուայ տեղում, եւ այժմ դժուար էր նկատել, որ նրանց տակում կար մի ստորերկրեայ պահարան։

— Ցուր ինձ բանալին, ասաց էֆէնդին, — ես կը պահեմ։ Այժմ դու ինձանից աւելի հաւատարիմ մարդ չունես։

Ծերունին առանց երկար մտածելու բանալին տուեց նրան։ Երկիւղը այն աստիճան պաշարել էր նրան, որ ամէն առաջարկութիւն էֆէնդու կողմից պատրաստ էր ընդունել։

— Ես շատ բաներ ունեմ քեզ հետ խօսելու, տանուտէր Խաչո, բայց ժամանակը կարճ է, դուցէ շուտով կը յայտնուեն խուզարկուները, ասաց նա շտապելով։ — Առ այժմ մի քանի խրատներ կը տամ քեզ, լսիր. ոչ ոք չը պիտի գիտենայ, որ ես քեզ հետ տեսնուել եմ. մեր բոլոր կարգադրութիւնները պէտք է գաղտնի մնան մինչեւ անգամ քո բոլոր տանեցիներից։ Երբ կը յայտնուեն խուզարկուները, դու աշխատիր, որքան կարելի է, աներկիւղ, անվրդով եւ միամիտ ձեւանալ։ Թող որտեղ ուզում են պտռեն, մտնեն, վտանգաւոր բանը մենք արդէն թաքցրինք, ինքը սատանան էլ չի կարող գտնել։ Մի ուրացիր, թէ այն "դուդուկ փչողը" քո տանը եղել է, միայն ասա, որ դու նրան չես ճանաչում, եւ նրա ինչ նպատակով այս կողմերում թափառելը ոչ քեզ եւ ոչ քո որդիներին յայտնի չէ։

Վերջացնելով իր պատուէրները, էֆէնդին դուրս եկաւ ներքնատանից։

— Հիմայ ցոյց տուեցէք ինձ մի ուրիշ ճանապարհ, որ ես հեռանամ, ասաց նա իր շուրջը նայելով։ — Ես պէտք է աշխատեմ, որ ինձ չը տեսնեն այստեղից դուրս գալու ժամանակ։

Ծերունին տարաւ նրան դէպի տան ետեւի դուռը, որ ծառայում էր անասունների երթեւեկութեան համար։

— Այժմ մնացէք բարեաւ, ես կրկին կը վերադառնամ, երբ խուզարկուները եկած եւ իրանց գործողութիւնը վերջացրած կը լինեն։ Ես նրանց մի կերպով կը հանգստացնեմ, միամիտ կաց։

Լֆէնդին հեռացաւ։ Ճանապարհին նա մի քանի անգամ կրկնեց իր մտքում այդ խօսքերը. "հիմայ հոգիդ իմ ձեռքումն է, տանուտէր Խաչօ, ինչ որ ուզեմ, կանեմ„...

Կէսօրից մի ժամ անցել էր։ Վարդանը, Հայրապետը եւ Ապօն տակաւին չէին վերադարձել։ Ծերունու միւս որդիները դաշտումը գործում էին։ Կնիկները զբաղուած էին իրանց տնտեսութիւնով, որովհետեւ դաշտում աշխատողների համար պէտք էր ճաշ ուղարկել։ Գիւղացիները ըստ մեծի մասին ճաշը ուտում են դրսում եւ գիշերը ընթրիքի ժամանակ միայն գալիս են տուն։ Դեռ ոչ ոք չը գիտէր, թէ ինչ էր պատահել։

Ծերունի Խաչօն անհամբերութեամբ սպասում էր խուզարկուներին, որպէս մի դատապարտեալ սպասում է մահուան պատժին, որովհետեւ գիտէ, որ անփախչելի է, գիտէ, որ ազատուելու ոչ մի հնար չունի։ Նա տանեցիներին եղելութեան իսկութիւնը չը յայտնեց, չը կամենալով նախապէս վախեցնել նրանց։

Վերջապէս յայտնուեցաւ մի յիսնապետ, մի խումբ զինթիաների, կաւաշների եւ զինուորների հետ։

Տանեցիները որովհետեւ տեղեկութիւն չունէին, թէ ինչ էր պատահել, այս պատճառով զինուորների գալուստը սկզբում նրանց շատ չը վախացրեց։ Նրանք սովորել էին շատ անգամ ընդունել այսպիսի հիւրեր, որ գալիս էին, օրերով մնում էին, ուտում էին, խմում էին, եւ յետոյ գնում։ Թուրք զինուորների իջեւանելը հայ գիւղացիների տներում, մանաւանդ տանուտէրի օդայի մէջ, մի սովորական բան էր։

— Ինձ հրամայած է այս տան մէջ խուզարկութիւններ անել, ասաց յիսնապետը դառնալով Ծերունի Խաչօին։

— Իմ տունը ձեր առջեւն է, որտեղ կամենում էք, նայեցէք, պատասխանեց Ծերունին, աշխատելով պահպանել իր պրոի խաղաղութիւնը։

Յիսնապետը տան դռները փակել տուեց, ամեն կողմ պահապաններ կանգնեցրուց եւ սկսեց խուզարկութիւնը։ Նախ մտաւ նա օդան, յետոյ միւս սենեակները, ամեն ծակուծուկ նայեց, ամեն իրեղէնները աչքից անցկացրեց եւ ոչ մի կասկածաւոր առարկայ չը գտաւ։ Կնիկները այս տեսնելով, հասկացան, որ մի անսովոր բան պատահած պէտք է լինի, սկսեցին լաց լինել, եւ աղաղակ բարձրացնել։ Ծերունին նրանց սաստեց, որ լռեն, հանգստացնելով, որ վախենալու ոչինչ առիթ չունեն։

Խուզարկութիւնը վերջացնելուց յետոյ յիսնապետը սկսեց իր հարց ու փորձը։

— Այս տանը բնակվո՞ւմ էր մի երիտասարդ Միքայէլ Դուդուկջեան անունով։

— Նա մի քանի գիշեր միայն մնաց այստեղ, պատասխանեց Ծերունին։

— Դուք առաջուց ճանաչո՞ւմ էիք նրան։

— Առաջին անգամն էր, որ տեսայ նրան։

— Ուրեմն ինչո՞ւ ընդունեցիք ձեր տնում։

— Ես այս գիւղի տանուտէրն եմ, Զեզ յայտնի է մեր երկրի սովորութիւնը. տանուտէրի տունը մի տեսակ քարվանսարայ է, մի տեսակ հիւրանոց է, ուր ամեն մի օտարական, ամեն մի անծանօթ մարդ օթեւան է գտնում։ Ի՞նչ կարող եմ գիտենալ, թէ ո՞վ է գալիս կամ ո՞վ է գնում։

— Նա չը թողե՞ց այստեղ մի բան։

— Ոչինչ չը թողեց։

— Դուք չը հասկացաք, թէ ի՞նչ դիտաւորութեամբ էր շրջում նա այս կողմերում։

— Նա մեզ ոչինչ չը յայտնեց։ Այսքանը գիտեմ, որ նա վարժապետ էր։

— Դուք չը գիտէ՞ք, թէ նա ում հետ էր տեսնվում, կամ ում հետ էր խորհրդակցում։

— Վարժապետը ամեն մարդու հետ տեսնվում էր աշակերտներ գտնելու համար։

— Այժմ գիտէք, նա ո՞րտեղ է։

— Չը գիտեմ։

— Կալանաւորած է։

— Աւելի լաւ, եթէ վատ մարդ էր։

Այդ միջոցին զարկեցին տան դրան մուրճը։

— Ոչ ոքի ներս չը թողնել, հրամայեց յինանապետը։

Ծառան յայտնեց, թէ Թոմաս էֆէնդին է։

— Նա կարող է գալ։

Ներս մտաւ էֆէնդին, եւ տեսնելով յինանապետին իր խումբի հետ, իրան բոլորովին զարմացած ձեւացրեց, որպէս թէ ինքը ամենեւին տեղեկութիւն չունի, թէ նրանք ինչու համար են մտել Ծերունու տունը։

— Բարի լինի, ինչ կայ, հարցրեց նա խորհրդաւոր ձայնով։

Յինանապետը յայտնեց նրան իր պաշտօնի նպատակը։ Էֆէնդու կոշտ դէմքի վրայ անցաւ մի կեղծ ժպիտ, եւ նա բռնելով յինանապետի ձեռքից, ասաց.

— Դլխովս երաշխաւոր կը լինեմ, եթէ տանուտէր Խաչօի մօտ մի կասկածաւոր բան գտնուելու լինի։ Դուք չէք ճանաչում, թէ նա որքան բարի եւ լաւ մարդ է։

Նա տարաւ յինանապետին օդան, բայց զափթիաները, կաւաղները եւ զինուորները մնացին դրսում եւ դեռ եւս պահպանում էին տան մուտքերը։

— Տանուտէր, դարձաւ դէպի Ծերունին, — այդ մարդիկը քաղցած կը լինեն, հրամայեցէք, որ ճաշի պատրաստութիւն տեսնեն։ — Արաղը պէտք է առատ լինի, հասկանո՞ւմ ես։

Վերջին խօսքը նա ասաց հայերէն լեզուով։ Տանուտէրը ուրախացած դուրս եկաւ օդայից։ Նա արդէն վտանգը անցած էր համարում։

Բայց ո՛չ, վտանգը տակաւին անցած չէր, Թուրքերը այնպէս հեշտութեամբ Ծերունու օձիքը ձեռքից բաց չէին թողնելու. պէտք է նրան չարչարէին, պէտք է նրան տանջէին, պէտք է ամիսներով բանտերում մաշէին նրան։ Թէեւ Ծերունու տնում չը գտնուեցաւ որ եւ իցէ կասկածաւոր առարկայ, որով կարելի լինէր նրան մեղադրել, թէեւ նրան յանցաւոր համարելու հաստատ փաստ չը կար, — բայց այդ էլ բաւական էր, որ Ծերունի Խաչօն հայ էր, եւ բացի հայի լինելը հարուստ էր... Մի այսպիսի պարարտ որսը Թուրք պաշտօնատարի համար խիստ հրապուրիչ բան է։

Թոմաս էֆէնդին ինքն էր "եփել այդ ապուրը", նա էր մատնել պ. Սալմանին նոր եկած զինուորական գործակատարի մոտ։ Նա էր թելադրել ծերունու տան մէջ խուզարկութիւններ անել, եւ այդ պատճառով նրան հեշտ էր իր ըսրած որոգայթից աղատել խեղճ ծերունուն։ Բայց ոչ, իր սատանայական նպատակին հասնելու համար էֆէնդին դեռ եւս աշխատում էր գործին աւելի բաղադրեալ ձեւ տալ։

Երբ ծերունին օդայից դուրս գնաց ճաշ պատուիրելու, յիսնապետը հարցրեց Թոմասից.

— Էֆէնդի, դուք ի՞նչ էք մտածում, ես կարծում եմ, այդ մարդը անմեղ պէտք է լինի։

— Ձեզ յայտնի է, բէկ, պատասխանեց խորամանկը, — որ Թոմաս էֆէնդին այսպէս հեշտ վճիռ տուող մարդերից չէ։ Ինձ համար տակաւին մթութեան մէջ է գործը։ Ես հաւատացած էի, որ այս տան մէջ կը գտնուի որ եւ իցէ կասկածաւոր առարկայ, կամ որ եւ իցէ պատրաստութիւն, որոնցմով կարելի կը լինէր բացատրել, թէ մինչեւ ո՞ր աստիճան այդ մարդիկը դաւակից են կալանաւորի (պ. Սալմանի) մտքերին, — բայց զարմանում եմ, որ մեզադրանքի համար տակաւին մի հաստատուն փաստ չը յայտնուեցաւ։ Այսու ամենայնիւ, մենք հայերս մի ծածուկ բան ունենք, որին կոչում ենք "խոստովանութիւն", — ես այդ մարդերին պէտք է երկար խոստովանեցնեմ... Ես աւելի կասկած ունեմ ծերունու երկու որդիների եւ մի օտարականի վրայ, որ նոյնպէս հիւր է այս տան մէջ։

— Ի՞նչ օտարական, հարցրեց յիսնապետը։

— Մի ռուսաստանցի երիտասարդ, որ չափազանց վտանգաւոր անձնաւորութիւն է եւ սասսիկ ոխերիմ

թշնամի մեր կառավարութեանը։ Նա այս կողմերում թափառում է վաճառականի պատրուակով, բայց իսկապէս ռուսաց լրտես է։

Նրան կալանաւորել մի փոքր դժուար է, եթէ ռուսաց հպատակ է, պատասխանեց յիսնապետը։

— Պատերազմի ժամանակ լրտեսներին միշտ կարելի է կալանաւորել։ Ձեզ յայտնի է, որ պատերազմը շուտով հրատարակուելու է։

— Ես այդ գիտեմ...

— Այդ երիտասարդի մասին ես արդէն խօսացել եմ նորին գերազանցութեան զինուորական գործակատար՝ փաշայ էֆէնդու հետ, միթէ նա ձեզ ոչինչ չէ՞ պատուիրել։

— Փաշայ էֆէնդին այսքանը միայն պատուիրեց, որ ես կատարեմ ձեր բոլոր կարգադրութիւնները։

— Շատ գեղեցիկ, խօսեց էֆէնդին ուրախ ժպիտով. — ես կը կարգադրեմ ինչ որ պէտք է։ Բայց մի բան էլ կայ, ձեզ յետոյ կ'ասեմ։

— Ես շատ անհամբեր եմ, պատասխանեց թուրք աստիճանաւորը, — ես "յետոյներին" սպասել չեմ կարող։

— Ուրեմն ձեր ականջին կ'ասեմ։

Յիսնապետը մօտեցրեց էֆէնդուն իր ականջը, թէեւ օդայի մէջ բացի այդ երկուսից մի ուրիշ մարդ չը կար, որ նրանց խօսակցութիւնը լսէր։ Էֆէնդին ասաց. "Ծերուկը բաւական հարուստ է, պէտք է նրան կթել"...

Թոմաս էֆէնդին բաւական ծանօթ լինելով թուրք պաշտօնատարների թուլութիւններին, նա շատ լաւ էր իմանում, որ այդ կաշառակեր գաղաններին այնքան չէ հետաքրքրում գործի էութիւնը, կամ նրա բոլոր մանրամասնութիւնների ճիշդ քննութիւնը, — որքան գրաւում

է նրանց այն միտքը, թէ ինչ ձեւ եւ ինչ ընթացք պէտք էր տալ գործին, որ կարելի լինէր մեղադրուածից աւելի փող դուրս բերել։ Թոմաս էֆէնդին աշխատում էր օգուտ քաղել թուլքերի այդ թուլութիւնից եւ իր յօրինած մեքենան իր նպատակին համեմատ պտոյտ տալ։ Այս պատճառով նա շատ ուրախացաւ, երբ նկատեց, որ յինանպետը գրաւուելով իր վերջին խօսքերից, հարցրեց.

— Ուրեմն ինչպէս էք կամենում, որ կարգադրենք գործը։

— Դուք ձեզ հետ բաւական մարդիկ ունէք, պարոն յինանպետ, կը հրամայէք հսկողութեան տակ առնել ծերունուն իր երկու որդիների հետ, որոնցից մէկը կոչվում է Հայրապետ, իսկ միւսը Ապօ։ Բացի դրանցից, կը հրամայէք կալանաւորել ռուսաստանցի լոտեսին, որ կոչվում է Վարդան։

Յինանպետը նշանակեց Ապօի, Հայրապետի եւ Վարդանի անունները։

— Ձեր այսօր կատարած պաշտօնը, շարունակեց էֆէնդին, — լոկ խուզարկութիւն էր, բայց քննութիւնը տակաւին վերջացած չէ։ Ուրեմն դուք պէտք է յիշեալ անձինքներին հսկողութեան տակ առնէք, մինչեւ քննութիւնը կը կատարուի նորին գերազանցութիւն փաշայ էֆէնդու մօտ։

— Հասկանում եմ, պատասխանեց յինանպետը։

— Իսկ ես պէտք է միջնորդի դեր կատարեմ, ինձ ձեւացնելով աւելի պաշտպան մեղադրուածներին նրանցից գաղտնիքներ որսալու համար։ Հասկանո՞ւմ էք։

— Հասկանում եմ... կրկնեց յինանպետը։

ԻԷ.

Մինչ օդայի մէջ Թոմաս էֆէնդին եւ յինանպետը զբաղուած էին իրանց սատանայական կարգադրութիւններով, դրսում զինուորների մէջ անց էր կենում բոլորովին այլ տեսակ խօսակցութիւն։

— Մահմուդ, հարցրեց զափթիաներից մէկը իր ընկերից, — եթէ այս գիշեր այստեղ մնալու լինենք, դուայդ հայի հարսներից որին պիտի ընտրես։

— Ինձ շատ դիւր եկաւ այն կարմրաթշլիկ պստլիկը, պատասխանեց Մահմուդը մի առանձին ախորժակով։

— Բայց իմ խելքը տարաւ այն սեւ աչքերով սիրունիկը, խօսեց առաջինը ոչ պակաս ոգեւորութեամբ։

Զինուորները խուզարկութեան ժամանակ, կանանոցը մտնելիս, երեւի, ուշադրութիւն էին դարձրել ոչ այնքան իրանց խնդրած առարկաների վրայ, որքան ծերունի Խաչօի հարսների վրայ։ Կին եղած տեղը մահմեդականը ամեն բան մոռանում է։

Մի քանիսի ուշադրութիւնը գրաւել էին ծերունու տան հարուստ իրեղէնները։

— Իմ կնիկը գլուխս տարաւ, ասում էր մի ծեր զափթիայ, — ամեն օր հանգստութիւն չէ տալիս, միշտ ասում է՝ մի մեծ պղինձ պիտի առնես կաթ տաքցնելու համար։ Այստեղ մէկը տեսայ, իսկ եւ իսկ նրա ուզածն է, երբ գնալու լինենք, անպատճառ պիտի հետս վեր առնեմ։

Մի մանկահասակ զինուոր ասաց.

— Ես տեսայ մի գեղեցիկ խալիչայ. շատ լաւ է նրա վրայ պառկելը կուշտ ուտելուց եւ խմելուց յետոյ, եւ ծխել սիրուն կնոջ ձեռքով պատրաստուած նարգիլէն։

Ծեր զաւթիան, որ աւելի տնտեսական եւ կրօնական կէտից էր նայում աւարի վրայ, թոյլ տուեց իրան մի նկատողութիւն անել մանկահասակ զինուորին։

— Այս տեսակ խալիչաները աւելի յարմար է գործածել որպէս սաջջադա[1] նամազի համար։

Մի նախանձով եւ նախապաշարմունքներով լի զինուորը ասաց.

— Զարմացք բան է, "գաւուր" լինել եւ այսպիսի սիրուն կնիկներ ունենալ... "գաւուր" լինել եւ այսպիսի հարուստ տուն ունենալ... Մեր տանը մի փալասի կտոր չը կայ, որ երեխաներս գիշերը վրան պառկեն։ "Գաւուրը" պէտք է մի քրքրուած, բարակ գօտի ունենայ կապած մէջքին, որ հագելու ժամանակ տասը տեղից կտրատուի...

Վերջին խօսքը իւրաքանչիւր մահմեդականի բերանի առածն է։ Արեւելքում գօտիի հաստութիւնը եւ նրա շքեղութիւնը հարստութեան եւ փառքի նշան է։ Հայը, գաւուր լինելով, մահմեդականի կարծիքով, պէտք է այն աստիճան աղքատ լինի, որ բոլորովին քրքրուած եւ մաշուած գօտի ունենայ, որպէս զի հագելու միջոցին չը դիմանայ եւ կտրատուի... Հայը սիրուն կնիկներ ունենալու եւս իրաւունք չունի, որովհետեւ "գաւուր" է, որովհետեւ, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լաւ է, պէտք է մահմեդականի սեպհականութիւն լինի...

Զինուորներից մի քանիսը մտել էին Ծերունու տան գեղեցիկ պարտէզի մէջ, եւ որպէս արջը կամ խողը բանջարանոցի մէջ, այնպէս ոտնակոխ էին անում,

[1] Սաջջադա կոչվում է այն սփռոցը, որի վրայ մահմեդականները աղօթք են անում։ Դրա համար ընտրում են ամենագեղեցիկ սփռոցը, երբ աղօթքը տան մէջ է կատարվում։

տրորում էին խնամքով մշակուած գեղեցիկ ծաղիկները, որոնց համար այնքան աշխատել էին տանուտէրի հարսները եւ աղջիկները։ Նրանք բռնում էին ծառերի ճիւղերից, քարշ էին տալիս, կոտրատում էին պտուղները քաղելու համար. հասածները ուտում էին, իսկ տհասները գցում էին հողի մէջ եւ կոխ էին տալիս։ Ծերունի Յաչն այդ տեսաւ հեռուից եւ նրա սիրտը խորին կերպով խոցուեցաւ։ Նա այնքան էր սիրում իր ծառերին, որքան իր զաւակներին։ Նա իր խելացի գլուխը շարժեց եւ նոյն րոպէում նրա մտքից անցաւ պարսկական վաղեմի առածը. "երբ որ զօրապետը խլում է այգեպանից մի խնձոր առանց փողի, այն ժամանակ նրա զօրքերը ամբողջ այգին արմատախիլ կ'անեն"։ Այսպիսի բարբարոսութեան ընդունակ է թուրքը։ Ով որ գութ չունի դէպի կենդանի բոյսերը, նա չի կարող գութ ունենալ եւ դէպի կենդանի մարդիկ։ Թուրքը ծառի պտուղը կ'ուտէ, իսկ ծառը կ'ոչնչացնէ։ Թուրքը մարդու ձեռքի վաստակը կ'առնէ, իսկ նրան կը մահացնէ... Թուրքը որպէս անխնայօրէն սպառեց իր երկրում գտնուած անտառները, նոյնպէս անխնայօրէն ոչնչացրեց իր տէրութեան այլազգի ցեղերը...

Ծերունին նոյն բարբարոսութիւնն էր տեսնում իր տան մէջ, բայց լռում էր։ Նա մտաւ խոհանոցը, ուր կնիկները ճաշ էին պատրաստում։ Յեղճ մարդ, նա արդէն կալանաւորուած էր իր տնում, եւ իր բանի մէջ իր պահապաններին ցոյց էր տալիս հիւրասիրութեան սուրբ պարտքը։

— Այդ ի՞նչ մարդիկ են, ի՞նչ էին պտռում, ինչո՞ւ են քանդում մեր տունը, հարցրեց Սառան արտասուալի աչքերով։

— Աստուած գիտէ... պատասխանեց Ծերունին տխուր կերպով, եւ պատուիրեց, որ ճաշը շուտ տան։

Կնիկները գտնվում էին մի սարսափելի երկիւղի մէջ։ Նրանք քաշուել եւ տուն էին մտել զինուորների աչքից հեռու մնալու համար։ Նրանք հասկանում էին, որ մի տարօրինակ բան պէտք է պատահած լինի, որ Թուրքերը այժմ այնպէս անպատկառ կերպով էին վարվում իրանց տան հետ։ Մինչեւ այն օրը նրանք շատ անգամ տեսել էին այսպիսի հիւրեր, բայց միշտ Ծերունու տան պատիւը պահպանուած էր եղել։

Հայրապետը եւ Ապօն, որոնք առաւօտեան Վարդանի հետ գնացել էին Գ. Սալմանին որոնելու, տակաւին չէին վերադարձել։ Ծերունու միւս որդիները, դաշտում լսելով Թուրքերի անկարգութիւնները, իսկոյն տուն վազեցին։ Նրանք սաստիկ կատաղած էին, ոչ թէ Թուրքերի դէմ, այլ իրանց անմեղ հօր դէմ։ Ստրուկները միշտ տկար կողմի վրայ են յարձակվում։ Նրանք բռնակալի գործած բարբարոսութիւնները բնական են համարում, բայց մեղադրում են իրանց նման ստրուկներին, թէ ինչու նրանք "աղային բարկացրին,,... Այս պատճառով Ծերունու որդիները իրանց հօր դէմ յայտնած նախատինքներին եւ յանդիմանութիւններին չափ չը կար։ Նրանք դատապարտում էին իրանց հօրը, թէ ինչու նա թոյլ տուեց իր տան մէջ այնպիսի վտանգաւոր մարդերին, որպէս էին Վարդանը եւ Սալմանը, եւ պատրաստ էին գնալ եւ յայտնել յիսնապետին բոլորը, ինչ որ իրանք գիտէին, կարծելով, թէ այդ կը թեթեւացնէր իրանց յանցանքը։

— Դու քո ձեռքով քո տունը քանդեցիր, ասում էին նրան որդիները։

— Թող քանդուի... պատասխանեց Ծերունի հայրը լի վրդովմունքով, — երբ այդ տան մէջ ձեզ նման անարժան որդիք են բնակվում... Անէծքի եւ ոչնչութեան արժանի էք դուք, քանի դեռ մեռած է ձեր մէջ անձնասիրութեան, պատուի եւ ազատամտութեան ամեն զգացմունք։ Այն մարդիկը, որոնց դէմ բարկացած էք դուք, նրանք են իմ իսկական որդիներս, եւ ես շատ չեմ ցաւի, եթէ նրանց պատճառով կը կորցնեմ ամեն ինչ, որ ունեմ...

Ծերունու վերջին խօսքերը վերաբերում էին Գ. Սալմանին եւ Վարդանին։ Որդիները աւելի գրգռուեցան։ Հոհեմ հայրը մոռանալով, մի գուցէ որ եւ իցէ յիմարութիւն գործեն, կամ մի անզգոյշ խօսք դուրս թողնեն իրանց բերանից, հանդստացրեց նրանց, ասելով, որ վախենալու ոչինչ առիթ չունեն, որ Թուրք պաշտօնատարների "բերանը միշտ կարելի է ցեխել„ մի քանի ոսկիներով, եւ աւելացրեց, որ Թոմաս էֆէնդին խոստացել է գործ դնել իր բոլոր ջանքերը եւ գալոց վտանգի առաջը առնել։ Որդիները մի փոքր հանդստացան։ Այսպիսիների վրայ միշտ մեծ ազդեցութիւն է գործում խոշոր մարդկանց անունը։ Թոմաս էֆէնդին խոստացել է, ուրեմն նա ամեն բան կարող է կատարել։

Այդ միջոցին օդայի դրանը յայտնուեցաւ Թոմաս էֆէնդին եւ հեռուից ձայն տուեց.

— Տանուտէր Հաչօ, շուտ արա, այդ կծռտողներին պէտք է կերակրել։

— Պատրաստ է, էֆէնդի, պատասխանեց տանուտէրը, — իսկոյն կը տան ճաշը։

Ծերունու որդիները սկսեցին ճաշի սեղանը պատրաստել օդայի մէջ առանձին, իսկ դրսում ծառերի

հովանու տակ առանձին սեղան եւս զինուորների համար։ Այդ վերջինները հետզհետէ անտանելի էին դառնում։ Այդպիսի դէպքերում, հայի տան մէջ, թուրք զինուորը բաւական պահանջող է լինում։ Նրա ճաշակը նրբանում է, նրա ախորժակը բացվում է, եւ նա պահանջում է այն տեսակ կերակուրներ, այն տեսակ խմիչքներ, որոնց անունն է լսել միայն, իսկ իր կեանքում մի անգամ եւս չէ տեսել։ Տան տիրոջ իւրաքանչիւր "չը կան" պատասխանվում է հայհոյանքներով։ Թէեւ այսպիսի անկարգութիւններ չը պատահեցան, բայց դարձեալ Ծերունու որդիները սաստիկ տանջուեցան, մինչեւ կարողացան իրանց անամօթ հիւրերի այս եւ այն պահանջներին բաւականութիւն տալ։

Յիսնապետը եւ Թոմաս էֆէնդին ճաշում էին օդայի մէջ երկուսը միասին։ Ծերունի տանուտէրը նրանց սեղանակից չեղաւ, եւ սպասաւորի նման մնաց ոտքի վրայ, դրանով կամենալով ցոյց տալ իր հիւրերին մի առանձին պատիւ։ Ծերունու որդիները ծառայում էին զինուորների սեղանի շուրջը։ Առժամանակ արաղը եւ տանուտէրի խոհանոցի առատ խորտիկները զբաղեցրին նրանց։ Այդ դէպքից օգուտ քաղելով, Ծերունին մօտեցաւ Սառային եւ ծածուկ ասաց նրան.

— Զաւակս, սա այդ բանալիները եւ տանը ինչ լաւ բան որ կայ, բոլորը թագցրու, դու խօ իմանում ես, թէ ո՞րտեղ պէտք է թագցնել։

— Իմանում եմ... պատասխանեց խեղճ կինը եւ նրա աչքերը լցուեցան արտասուքով։ Այդ նախազգուշութիւնը արդէն նշան էր, որ սպառնում է մի մեծ վտանգ։

— Լսիր, եւ սիրտդ պինդ պահիր, շարունակեց Ծերունին, — մեր տունը շատ անգամ տեսել է այս

տեսակ փորձանքներ։ Աստուծով բոլորը կ'անցի, միայն պէտք է համբերութիւն ունենալ։ Իրեղէնները թագցնելուց յետոյ հարսներին երեխաների հետ կ'ուղարկես իրանց ծնողների տները, իսկ դու Հալային քեզ հետ վեր առնելով, կը գնաս մեր քաւոր Զաքօի տունը, այնտեղ կը մնաք, մինչեւ տեսնենք, թէ ինչով կը վերջանայ այդ փորձանքը։

Ծերունու հարսներից ոմանք Օ... գիւղից էին, իսկ մի քանիսը մերձաւոր գիւղերից, այս պատճառով, նրանց առժամանակ իրանց ծնողների մօտ պատսպարուելը դժուար չէր։ Միայն Սառան հեռու տեղից էր բերուած. նրա ծնողները գտնվում էին Բայազէդում, դրա համար Ծերունին առաջարկեց նրան քաւոր Զաքօի տունը, որի վրայ մեծ հաւատարմութիւն ունէր։

— Մի բան էլ կայ, լսիր, Սառա, շարունակեց Ծերունին, — Հայրապետը, Ապօն եւ Վարդանը առաւօտեան գնացին Պ. Դուդուկջեանին որոնելու. նրանք, երեւի, չը գիտեն, թէ ինչ է պատահել մեզ հետ, տուն կը վերադառնան եւ իրանք էլ կ'ընկնեն փորձանքի մէջ։ Շուտով մի մարդ ուղարկիր, որ գտնէ նրանց եւ ասէ, որ մի տեղում պահուեն եւ սպասեն իմ կարգադրութիւններին։

Վերջին խօսքերը աւելի խոր խոցեցին խեղճ կնոջ սիրտը, ուրեմն իր սիրելի ամուսնին եւս վտանգ էր սպառնում, մտածեց նա, նա ինչո՞վ էր մեղաւոր, նա ի՞նչ էր արել... Բայց Սառան այնքան խելացի էր, որ նրանից ծածուկ չէին կարող մնալ իր ամուսնի մի քանի գիտաւորութիւնները, որոնցից նա միշտ ցաւալի հեռուանքներ էր սպասում։

— Ո՞վ կը գնայ... հարցրեց կինը վշտալի ձայնով եւ նրա բազմահոգ աչքերը կրկին լցուեցան արտասուքով։

Սառայի հարցմունքը անտեղի էր։ Վտանգի ժամանակ երբ եղբայրը եղբօրը ուրանում է, եւ մինչեւ անգամ նրա դէմ թշնամանում է, էլ ուրիշների վրայ ի՞նչ յոյս կարելի է դնել... Սառան իր ականջով լսեց, թէ քանի բոպէ առաջ Հայրապետի եղբայրները որպիսի բարկութեամբ էին խօսում նրա մասին, եւ որքան գրգռուած էին նրա դէմ։

Ծերունին հասկացաւ Սառայի արդար դժգոհութեան պատճառը եւ տխրութեամբ պատասխանեց նրան.

— Ես գիտեմ, որ ոչ ոք չի գնայ... ես գիտեմ, որ վտանգի ժամանակ բոլորը կը հեռանան մեզանից... Բայց Վարդանի երկու ծառաները՝ Սաքօն եւ Եղօն տանն են. դրանք համարձակ մարդիկ են եւ հաւատարիմ։ Շտապիր շուտով հասկացնել նրանց գործի եղելութիւնը, իսկոյն նրանք կը գնան, կը գտնեն Հայրապետին, Ասօին եւ Վարդանին եւ ինչ որ պէտք է՝ կը յայտնեն նրանց։ Բաւական է, որ ասեն թէ Պ. Դուդուկջեանը կալանաւորուած է եւ մեր տան մէջ խուզարկութիւն արին, — մնացածը նրանք կը հասկանան։

Վերջացնելով իր պատուէրները, ծերունին դուրս եկաւ կանանոցից, համոզուած լինելով, որ խոհեմ եւ խելացի Սառան բոլորը կը կարգադրէ իր յանկութեան համեմատ։

Բակում ծերունին նկատեց, որ կառավարութեան, կարգի, օրէնքի եւ արդարութեան ներկայացուցիչները — զինուորները, վայելելով գիւղացու սեղանի առատ բարիքները, խմելով նրա գինին եւ արաղը, այժմ ներկայացնում էին անկարգութեան մի ամբողջ բաբիլոն։ Նա աչքերը խփեց եւ անցաւ։ Նա չը կամեցաւ տեսնել բացարձակ լքութիւն, որ պատժել չէր կարող։

Թուրք ծառայողները շատ չեն հետեւում իրանց կրօնի պատուէրներին, այս պատճառով արաղի գործածութիւնը նրանց մէջ բոլորովին սովորական էր դարձել։ Արգելուած պտուղը քաղցր է լինում։ Մահմետականը խմելու ժամանակ գազան է դառնում. արբեցութեան բերկրանքը նրա մէջ փոխվում է կատաղի մոլեգնութեան։ Եթէ մի պատճառ կար համարել Մուհամէդին մարգարէներից ամենամեծը, այդ բաւական է, որ նա արգելեց մուսուլմաններին խմել ոգելից ըմպելիներ։

Մի եւ նոյն ժամանակ օդայի մէջ խօսակցութիւնը ոչ սակաւ հետաքրքիր էր։ Յինանպետը բաւական խմեց, եւ ճաշից առաջ նրա էֆէնդու հետ ունեցած պաշտօնական խօսակցութիւնը այժմ աւելի մտերմական, աւելի ընկերային ձեւ էր ստացել։

— Քանի կնիկ ունես, հարցրեց յինանպետը։

Էֆէնդին, մի անսովոր ժպիտ գործելով իր այլանդակ դէմքի վրայ, պատասխանեց.

— "Էշից հարցրին քանի՞ կնիկ ունես, — նա ցոյց տուեց ամբողջ նախիրը"։

Երբ էֆէնդին սկսում էր էշերի առածներով արտայայտել իր միտքը, դա արդէն նշան էր, որ նա գտնվում է իր սրտի ամենաուրախ տրամադրութեան մէջ։

— Բայց քրիստոնեաներին, կարծեմ, արգելուած է մեկից աւելի ունենալ, նկատեց յինանպետը։

— Մահմետականներին նոյնպէս արգելուած է գինի եւ արաղ խմելը, իսկ դուք ինձանից աւել խմեցիք, պատասխանեց էֆէնդին, ուրախանալով իր յարմար պատասխանի վրայ։

Այդ միջոցին ներս մտաւ ծերունի Խաչօն, իր ձեռքով բերելով երկու տուփերի մէջ դարսած ռահաթլօխում

եւ Զմիւռնիայի Թուղ, եւ դրեց սեղանի վրայ, ասելով.

— Շաշից յետոյ լաւ է լինում բերանը մի բանով քաղցրացնել:

Նա կրկին շտապով դուրս գնաց օդայից:

— Բաւական բարի մարդ է երեւում այդ ծերուկը, խօսեց յիսնապետը նրա հեռանալուց յետոյ, — ես զարմանում եմ, թէ ի՞նչպէս է թողել դա իր տանը այնպիսի մարդերին, որպէս ռուսաց լրտեսը, կամ որպէս պոլսեցի խռովարարը:

— "Իշի ականջները երկար են լինում, բայց խելքը կարճ", պատասխանեց էֆէնդին իր յատուկ ոճով: — Եթէ կան աշխարհումն յիսար մարդիկ, դրանք այդ "բարի" կոչուածներն են: Այդ ծերուկը նոյն տեսակներից է:

Թուրք յիսնապետը համեմատաբար աւելի ազնիւ զգացմունքի տէր մարդ էր, քան հայ էֆէնդին: Նա ասաց ցաւակցաբար.

— Ես կարծում եմ, որ զինուորական նոր գործակատարը այդ խեղճին լաւ կը կթէ...

— Տարակոյս չը կայ... Անխելք պէտք է համարել այն մարդուն, որ չի աշխատի մի այսպիսի բարեբեր կովից օգուտ քաղել...

— Դու ճանաչում ես նրան, ի՞նչպէս մարդ է, ես առաջին անգամն եմ տեսնում:

— Շատ լաւ եմ ճանաչում, պատասխանեց էֆէնդին գործագէտ մարդու եղանակով. — ես նրան ճանաչում եմ դեռ այն ժամանակից, երբ Տիգրանակերտի գաւառում գայմագամ էր: Տասն տարուց աւելի կողոպտեց, հարստացաւ, յետոյ Պոլիս գնաց եւ այնտեղ փաշայ դարձաւ:

— Ի՞նչպէս մարդ է:

— "Սատկած էշ է պտտում նալերը դուրս քաշելու համար":

Մինչեւ էֆէնդին եւ յիսնապետը զբաղուած էին այս տեսակ խօսակցութիւններով, մինչեւ զինուորները արբեցութեան մռայլութեան մէջ երգում էին, հռհռում էին եւ պար էին գալիս, ծերունու տան կնիկները իրանց երեխաների ձեռքից բռնած, տան ետեւի դռնով դիմում էին դէպի իրանց ծնողների տները: Արտասուքը հեղեղն նման թափվում էր այդ թշուառների աչքերից, որոնց այնպէս էր թւում, թէ դէպի գերութիւն են տարվում, թէ պէտք է միւս անգամ չը տեսնեն այն տունը, ուր այնքան բախտաւոր էին, ուր այնքան սիրուած էին:

Այդ միջոցին Նղոն եւ Սաքոն, երկուսն էլ զինուորուած, դուրս եկան նոյն դռնից, եւ նստելով ձիերի վրայ, հեռացան: Թոմաս էֆէնդին իր բոլոր սատանայական խորամանկութեամբ չը մտածեց կալանաւորել տալ այդ երկու աւազակներին, որոնք Վարդանի թեւ ու թիկունքն էին, որոնք կարող էին խանգարել նրա չար դիտաւորութիւնները...

ԻԸ.

Թոմաս էֆէնդին դեռ մասամբ միայն իրան հասած էր համարում իր նպատակին: Նրա գլխաւոր նպատակը ճնացել էր անկատար: Ստեփանիկի աղջիկ լինելը նա վաղուց գիտէր: Նրան յայտնել էր մկրտող քահանան, տէր-Մարուքը, որ մի օր էֆէնդու մօտ ճաշի հրաւիրուած լինելով, եւ արբեցութեան մէջ իրան կորցնելով, յայտնեց գաղտնիքը, որի մասին ուխտել էր միշտ ծածուկ պահել: Այն օրից Թոմաս էֆէնդին սիրում էր Լալային:

Բայց ինչ բան էր այդ բարոյապէս փչացած մարդու մէջ սէրը. — քաղցի եւ ծարաւի բնական զգացմունք։ Կերաւ, խմեց, կշտացաւ, — եւ ահա կարիքը անցաւ։ Նա գոհ է, երբ կրքերը յագեցած են լինում։ Սիրոյ հոգեկան եւ իդէալական կողմերը անմատչելի էին Թոմաս էֆէնդուն։ Սէրը նրա մէջ լոկ անասնական ցանկութիւն էր։ Նա իր կեանքը թուրքերի հետ անցկացնելով, սեպհականել էր նրանց բոլոր բարոյական յատկութիւնները։ Գեղեցիկ կինը, սիրուն աղջիկը մահմեդականի համար նոյնպիսի զրաւիչ առարկաներ են, որպէս խաղալիկները երեխաների համար։ Երեխան հրապուրվում է, զուարճանում է իր խաղալիկով այնքան ժամանակ միայն, քանի չէ ձանձրացել, երբ ձանձրացաւ, ձեռքի ունեցածը կը կոտրէ, դէն կը դցէ եւ մի ուրիշը կ'ուզէ։

Կինը Թոմաս էֆէնդու համար իր էր, որ սեպհականում էր միայն իր առժամանակեայ զուարճութեան, իր առժամանակեայ բաւականութեան համար, — տեսաւ նրանից աւելի գեղեցիկը, նա պատրաստ էր թողնել առաջինը եւ աշխատել երկրորդը ձեռք բերելու համար։ Նրա վերջին վիճակը ընկել էր Հալայի վրայ։ Բայց ինչո՞ւ այնպիսի անաղնիւ եւ սատանայական ճանապարհներով էր աշխատում հասնել իր նպատակին։ Միթէ չէ՞ր կարող ուղղակի առաջարկութիւն անել նրա հօր եւ խնդրել աղջկայ ձեռքը։

Թոմաս էֆէնդին յաջորդաբար էր վարվում։ Կեանքի բոլոր պէտքերի եւ պահանջների մէջ, նպատակին հասնելու համար, նա իր առանձին գործելու եղանակն ունէր։

Թոմաս էֆէնդին հարստահարիչ էր։ Հարստահարիչը ուղղակի ճանապարհներով չէ դիմում նպատակին։ Նա շրջում է ծուռումուռ շաւիղների մէջ։ Հարստահարիչը

այն տեսակ որսորդներից է, որ որոգայթներ է լարում, ցանցեր է դնում, ծուղակներ է կազմում իր որսը բռնելու համար։ — Բարոյական հարստահարութեան մէջ Թոմաս էֆէնդին նոյն կերպով էր վարվում։ Նա աշխատում էր մի անմեղ աղջկայ սէրը որսալ դիւական խորամանկութիւններով։ Նա աշխատում էր Հալայի հօրը մի այնպիսի անելանելի դրութեան մէջ դնել, որ հակառակ իր կամքին, ստիպուած լինէր իր աղջիկը էֆէնդուն տալ։

Թոմաս էֆէնդին Հալայի վրայ նայում էր, որպէս իր հօր սեպհականութեան վրայ. — որպէս նրա մշակութեան մի բերքի վրայ։ Նա, իբրեւ կապալառու, գիտէր, թէ ինչ միջոցներ պէտք է գործ դնել գիւղացու մշակութեան բերքը ձեռքիցը խլելու համար։ Նա գիտէր, որ մինչեւ գիւղացուն չէս տանջում, չէս չարչարում, եւ նրա բոլոր ընդդիմադրութեան ուժերը նրանից չէս խլում, — նա չէ յօժարվում իր աշխատանքի արդիւնքը, իր ստացուածքը ձեռքից բաց թողնել։ Այդ մտքով Թոմաս էֆէնդին կապեց, կաշկանդեց ծերունի Խաչօին այնպիսի անլուծանելի հանդոյցներով, որ ինքը միայն կարող էր բաց անել։

Մատնելով նրան իր որդիների հետ որպէս քաղաքական յանցաւորներ, որպէս մի խռովարար մարդու դաւակիցներ, որպէս իրանց տնում պատերազմի ժամանակ լրտես պահողներ, — Թոմաս էֆէնդին մի երկրորդ նպատակ եւս ունէր, այն է, դրանով ցոյց տալ թուրք կառավարութեանը իր հաւատարմութիւնը եւ մատուցած մեծ ծառայութիւնը։ Միւս կողմից, ասել ծերունի Խաչօին. "Տես, եթէ Հալային ինձ չը տաս, դու եւ քո որդիներդ կախաղան կը բարձրանաք, քո տունը կրակով կ'այրեն եւ քո հարստութիւնը կը դրաւեն... Նա միայն

կարող եմ փրկել ձեզ եւ իմ վարձատրութիւնը պէտք է լինի գեղեցիկ Հալան„...

Այդ բոլորը կարող էր կատարել չարագործը։ Նա իր ձեռքում ունէր մի փաստ, որ ամենապարզ ապացոյցն էր նրա մտանութիւնների համար. — դա էր Ծերունի Խաչօի տան պահարանի մէջ թաղցրած խուրջինը, որի մէջ պահուած էին Պ. Սալմանի թղթերը։ Իսկ պահարանի երկաթի դրան բանալին էֆէնդին իր գրպանումն ունէր։

Բայց նա դեռ չէր ցանկանում չարութիւնը իր ծայրայեղութեանը հասցնել։ Նա համոզուած էր, որ Հալայի հօր յօժարութիւնը ստանալ դիւրին էր։ Բայց նա տեսնում էր իր առջեւ մի աւելի հզօր ախոյեան — Վարդանին։ Սկսեալ այն օրից, երբ օդայի մէջ Վարդանը խլեց Ստեփանիկի ձեռքից էֆէնդուն մատուցանելու չիբուխը եւ բարկութեամբ դուրս ձգեց լուսամուտից, — սկսեալ այն օրից, երբ Վարդանը Ստեփանիկի պատճառով այնպէս կատաղի կերպով յարձակուեցաւ էֆէնդու վրայ, — այս վերջինը հաւատացած էր, որ Վարդանի եւ Ստեփանիկի մէջ կայ մի ներքին կապ, թէ այդ երկուսը սիրում են միմեանց։ Բացի դրանից, նա գիտէր, որ Վարդանը մեծ համակրութիւն է վայելում ծերունու ընտանիքի մէջ, եւ նրանք մեծ ուրախութեամբ իրանց աղջիկը նրան կնութեան կը տային։ Իսկ եթէ չը յօժարուէին տալ, բաւական էր, որ աղջիկը սիրում էր, եւ Վարդանը, իբրեւ կանտրաբանտիստ, կը վարուէր նրա հետ, որպէս մի արգելուած ապրանքի հետ, այսինքն, մի դիշեր կը վեր առնէր եւ կը փախցնէր։ Եւ այդ կատարելու համար Վարդանը բաւական քաջութիւն եւ համարձակութիւն ունէր։ — Այդ բոլորը մտածում էր էֆէնդին։ Ուրեմն ի՞նչ պէտք էր անել երիտասարդի դիտաւորութիւնները խափանելու համար։ — Պէտք էր նրան մի կերպով այս երկրից հեռացնել, եւ հեռացնել կառավարութեան զինուորների հսկողութեան ներքոյ, որ նա չը կարողանայ Հալային իր հետ տանել։ Այդ էր պատճառը, որ Թոմաս էֆէնդին մատնեց Վարդանին որպէս ռուսաց լրտես։

Բայց ինչո՞ւ նա պատուիրեց կալանաւորել Խաչօի որդիներից երկուսին միայն՝ Հայրապետին եւ Ապօին։ Մթթէ նրան յայտնի էր, թէ այդ երկուսը միաբանուած էին Պ. Սալմանի հետ։ Մի այսպիսի կասկած նա չէր կարող ունենալ, թէ հայ դիւղացին ընդունակ է մտածելու իր ազատութեան համար։ Նա միայն մի բան գիտէր, որ ծերունու միւս որդիները հլու "աւանակներ„ էին, իսկ եթէ կային նրանց մէջ այնպիսիները, որ կարող էին հակառակել Հալային իրան կնութեան տալու ցանկութեանը, — դրանք պէտք է լինէին Հայրապետը եւ Ապօն։ Որովհետեւ էֆէնդին վաղուց նկատած էր այդ երկու եղբայրների մէջ մի սաստիկ հակակրութիւն դէպի ինքը, այդ պատճառով պատուիրեց նրանց եւս կալանաւորել, որ ձայները կտրեն...

Ահա այդ անորոշ դրութեան մէջ էր Հալայի վիճակը։ Երեք հոգի սիրում էին նրան։ Երեքն էլ իրանց յատուկ հնարքներով մտածում էին նրան ձեռք բերել։ Քուրդ Փաթթահ-բէկը, որպէս աներկիւղ եւ յայտնի աւազակ, կամենում էր բացարձակ կերպով յափշտակել իր որսը, որպէս համարձակ արծիւը սլանում է ամպերի միջից եւ յափշտակում է ժայռերի վրայ արածող եղջերուի ձագը։ Իսկ հայ կապալառուն, Թոմաս էֆէնդին, որպէս հարստահարիչ, բօա օձի նման, մտածում էր

գալարել իր թեփուկների մէջ իր զոհին, եւ ճնշել ու խեղդել նրան, որ կարողանայ վերջը կուլ տալ։ Բայց Վարդանը, այդ անձնավստահ եւ յանդուգն կանտրաբանտիստը, ինչպէս ասացինք, մտածում էր փախցնել նրան, եթէ յօժարութեամբ տալու կամք չունենային։ Իսկ որին էր սիրում Հալան, — այդ մենք դիտենք։

Բայց քուրդ բէկը այժմ զբաղուած էր իր զինուորական պատրաստութիւններով, շատ չէր մտածում Հալայի վրայ։ Վարդանը զբաղուած էր Գ. Սալմանով։ Միայն Թոմաս էֆէնդին այնպէս էր սարքել գործը, որ նրան շատ յաջողութիւն էր խոստանում։

Շաշելուց յետոյ յիսնապետը, չափազանց խմած լինելով, անմիջապէս քնեց։ Նրա զինուորները դեռ բռնած էին իրանց պահնորդական դիրքը։ Ծերունու որդիներից Հայրապետը եւ Ապօն տակաւին չէին վերադարձել տուն։ Թոմաս էֆէնդին ամենայարմար ժամանակը համարեց խօսել Հալայի մասին նրա հօր հետ։ Նա թողեց քնած յիսնապետին օդայի մէջ, ինքը դուրս եկաւ։ «Սկսեցի, պէտք է վերջացնել, մտածում էր նա, — էշի վրայ նստելը մէկ ամսթ է, բայց վէր ընկնելը երկու ամսթ»...

Նա դտաւ Ծերունուն տխուր եւ յոգնած. միայնակ նստած էր բակի պատի մօտ, եւ յետ-միջօրէի արեգակով ջերմացնում էր իր սառած անդամները։ Նրա աչքի առջեւ զինուորները լրբաբար հռհռում էին, ծիծաղում էին, զզուելի հանաքներ էին անում։ Նրանք քաշում էին մօտից անցնող քուրդ աղախինների փէշից եւ ստիպում էին, որ իրանց հետ խօսեն, որ իրանց հետ հանաքներ անեն, կամ ծեծում էին ծառաներին, որ այս եւ այն հրամանները կատարեն։ Ծերունի նահապետը տեսնում էր անամսթութիւնը այն տան մէջ, ուր միշտ պահուած

էր եղել ընտանեկան սրբութիւնը, — ուր օտար տղամարդի մի անհամեստ ժպիտն անգամ երբէք անպատիժ չէր մնացել։ Իսկ այժմ տեսնում էր իր աչքի առջեւ մի խումբ անառակներ, որոնք, որպէս սեպհական տան մէջ, զանազան պատուէրներ էին տալիս... «Ի՞նչ վիճակ է այդ, մտածում էր Ծերունին, ինչո՞ւ համար ենք ապրում... ինչո՞ւ դեռնը չէ պատռվում եւ մեզ կուլ չէ տալիս... ինչո՞ւ երկինքը չէ փուլ դալիս ու մեզ տակովը չէ անում... այդ ի՞նչ կեանք է... տեսնել իր աչքի առջեւ անպատուութիւնը եւ լուռ մնալ... Էլ ո՞ւմ համար է պատրաստել Աստուած դժոխքի կրակը... էլ ո՞ւմ համար են երկնքի կայծակները... ինչո՞ւ չեն պատժում անզգամին»... Այսպէս հառաչում էր նա եւ իր արտասուքով լի աչքերը դարձնում էր դէպի երկինքը։ Բայց երկնքից ոչինչ պատասխան չէր լսում...

Նա տեսաւ զինուորներից մի քանիսը տնից դուրս էին բերում զանազան իրեղէններ։ Իսկ Սառան, որ միւս հարսներին ճանապարհ դնելուց յետոյ, դեռ մնացել էր տանը, աշխատում էր խլել զափթիայի ձեռքից ահագին պղնձէ կաթսան։ Բայց նա զարկեց բռունցքով խեղճ կնոջ կուրծքին, եւ կինը ընկաւ դետին... «Իմ տան կայքը իմ աչքի առջեւ բաժանում են, առանց տիրոջ կամքը հարցնելու»... Եւ ինչո՞ւ համար, ինչո՞վ եմ մեղաւոր։ Նրանով, որ ընդունել եմ իմ տան մէջ մի հիւր, որը բողոքում էր, թէ գիւղացու աշխատանքը, գիւղացու սեպհականութիւնը պէտք է ապահոված լինի։ Ինձ պատժում են, թէ ինչո՞ւ ես օթեւան տուել մի այսպիսի մարդուն, որ բռնութեան, անխիղճ հարստահարութեան եւ դաղանային անգթութեան հակառակ էր խօսում։ — Որ քարոզում էր մեզ, թէ պէտք է աշ-

խատենք մեր պապերից մնացած հողի տէրը լինել, թէ մենք ինքներս պէտք է կառավարենք մեր գործերը, թէ պէտք է տշխատենք թօթափել օտարի լուծը... Ո՞վ է մոցնում մեր մէջ այդ մտածութիւնները, եթէ ոչ ինքը՝ բռնութիւնը: Եթէ մեզ հանգիստ թողնէին, եթէ մեր ընտանիքը չանպատուէին, եթէ մեր վաստակը մեր ձեռքից չը խլէին, եթէ մեզ հետ մարդու նման վարուէին եւ անասունի պէս չը տանջէին, — այն ժամանակ մենք գոհ կը լինէինք: — "Աղատասիրութեան հայրը, ասում էր երիտասարդը, բռնութիւնն է, իսկ մայրը — անիրաւութիւնը„: Ես հիմայ եմ հասկանում այդ խօսքերի միտքը: Բռնակալը ինքն է պատրաստում իր համար թշնամիներ... Եթէ թուրքը այսպէս չը վարուէր մեզ հետ, մենք մինչեւ անգամ կը սիրէինք նրան, թող նա մեր մեից եւ արիւնից չը լինէր„:

Այսպէս մտածում էր Ծերունին եւ նրա սիրտը ծովի ալեկոծութեան նման տակն ու վրայ էր լինում: Բայց ի՞նչ կարող էր անել ուժասթափ առիւծը այնքան գայլերին: Նա զգում էր իր վեհակի դառնութիւնը եւ հնարների մասին հոգալու համարձակութիւն չունէր, "Մի ձեռքը ծափ չէ տալիս„, կրկնում էր նա յայտնի առածը: — Եթէ մեր բոլոր գիւղացիները այսպէս մտածէին, այն ժամանակ մեզ մի ճար կը լինէր:

Այս հոգեկան խռովութեան մէջ գտաւ Ծերունուն Թոմաս էֆէնդին, եւ լերբը կամենալով նրա սիրտը աւելի խոր խոցել, հեռուից ասաց.

— Բանը վատ է գնում, շատ վատ, տանուտէր Խաչօ. — "Էշը այնպէս չի խրուել, որ կարելի լինէր ցեխից հանել„...

Ծերունին չը լսեց նրա խօսքերը, միայն հեռուից տեսնելով, կանգնեց ոտքի վրայ:

— Նստիր, ասաց էֆէնդին, ձեռքը բարեկամաբար նրա ուսի վրայ դնելով, ես էլ քեզ մօտ կը նստեմ, դրանից լաւ տեղ չենք գտնի խօսելու համար: Նրանք նստեցին միմեանց մօտ մի կտոր կապերտի վրայ, որ ծառայում էր որպէս օթոց:

— Այդ մարդիկը ե՞րբ պիտի գնան, հարցրեց Ծերունին, ձեռքը պարզելով դէպի զինուորները, որոնք դեռ չէին դադարել իրանց անիրաւ վարմունքից:

— "Գիշին տարան հարսանիք, ասաց այստեղ մեր տանից լաւ է„: — Ո՞ւր պիտի գնան եւ ինչո՞ւ են գնում, ուտելնե՞ր է պակաս, թէ խմելները, պատասխանեց էֆէնդին անհոգ ծիծաղով:

Այս ծիծաղը աւելի վերաւորեց Ծերունու առանց դրան եւս վշտացած սիրտը: Էֆէնդին նկատելով այդ, փոխեց իր խօսքը.

— Դարդ մի արա, տանուտէր Խաչօ, քանի որ Թոմաս էֆէնդին կենդանի է, չի թողնի, որ քո գլխից մի մազ պակսի:

— Էլ ի՞նչպէս չի պակսի... պատասխանեց Ծերունին մի փոքր զայրացած ձայնով, — չե՞ս տեսնում, իմ տունը իմ աչքի առջեւ քանդում են... իմ կայքը իմ աչքի առջեւ բաժանում են... եւ ես արգելելու իրաւունք չունեմ...

Նա կրկին ցոյց տուեց զինուորներին:

— Այդ նրանց սովորութիւնն է: — "Շունը, երբ զասաբխանան կը մտնէ, մի ոսկոր կը վեր առնէ„: — Դու ինքդ լաւ գիտես, տանուտէր Խաչօ, երբ թուրքը հայի տունն է մտնում, ձեռքը դատարկ չէ դուրս գալիս: Բայց բանը դրանումը չէ: Պէտք է փառք տալ Աստծուն, երբ վնասը հասնում է մարդու ոսկրանքին եւ ոչ կեանքին...

Ծերունին ամբողջ մարմնով դողաց։ Նա այժմ այնքան զգայուն էր դարձել, որ իւրաքանչիւր խօսք սաստիկ ներգործում էր նրա վրայ։

— Ի՞նչ կայ, ի՞նչ, բացականչեց նա համբերութիւնից դուրս գալով, — եթէ կայ մի ուրիշ բան, ասա, էլ ի՞նչ ես տանջում ինձ, եթէ մեռնելու եմ, թող շուտ մեռնեմ։

— Կ'ասեմ, բոլորը կ'ասեմ, տանուտէր Ղաչօ, համբերութիւն ունեցիր, պատասխանեց էֆէնդին, այժմ աւելի հանգիստ եւ աւելի լուրջ կերպարանք ընդունելով։

Եւ նա սկսեց պատմել (դարձեալ էշերի կեանքից մի նոր առածի վրայ հիմնելով իր միտքը), թէ "էշը չը պիտի քացի տայ խթանի դէմ", եթէ չէ ցանկանում իր ոտը վերաւորել... Եւ այս առածից այն եզրակացութիւնը դուրս բերեց, թէ հայերը պէտք է զգոյշ լինեն եւ չը հակառակեն Թուրքերին, մանաւանդ այդ պատերազմական օրերում։ Եւ օրինակ բերելով Վանի հրդեհը, նա սկսեց ապացուցանել, թէ մեծ "խենթութիւն" է Թուրքերին անհաւատարիմ լինելը։ Նա բացատրեց թէ ինչպէս Վանում Թուրքերը այրեցին մի քանի հազար հայոց խանութներ եւ կողոպտեցին նրանց ապրանքները։ — Որովհետեւ, ասաց նա, այնտեղ հայերը ռուսների համար լրտեսութիւն էին անում։ Այս բոլորից յետոյ, աւելացրեց նա, թէ այս պատերազմից հայերը ռուսներից ոչինչ օգուտ չը պիտի սպասեն։ Եւ կրկին դառնալով դէպի հաւատարմութեան միտքը, նա ասաց, թէ Թուրքերը այնքան վատ չեն, որքան մենք կարծում ենք, թէ հայերի վիճակը կապուած է Թուրքերի հետ, եւ այս պատճառով ամեն մի ապստամբական խորհուրդ պէտք է "խենթութիւն"

համարել։ Եւ դրա համար էֆէնդին Պ. Սալմանի վարմունքը խելագարութիւն է համարում, եւ ամենուին չի վշտանալ, եթէ նա սաստիկ կը պատժուի. միայն ցաւում է, որ նրա պատճառով մի քանի մարդիկ եւս պէտք է պատժի ենթարկուեն...

— Ի՞նչ մարդիկ, կտրեց Ծերունին նրա խօսքը, գունաթափուելով։

— Դու եւ քո երկու որդիները՝ Հայրապետը եւ Ապօն, եւ քո միւս հիւրը — Վարդանը, պատասխանեց էֆէնդին։

Հարուածը սաստիկ էր, եւ կարող էր միանգամից անդամալուծել ողջամիտ Ծերունուն։ Բայց տանջանքներով լի կեանքը, մշտական վտանգը եւ տառապանքները այն աստիճան մխել էին նրա սիրտը, որ կարողացաւ դիմանալ էֆէնդու բօթալից խօսքերին, եւ պահպանելով իր հանգըստութիւնը հարցրեց.

— Մենք ինչով ենք մեղաւոր։

— Օրհնած, այնպիսի միամիտ հարցմունք ես անում, որ երեխան էլ չի անի։ Կարծես, ինքդ չը գիտես, թէ ինչով էք մեղաւոր, պատասխանեց էֆէնդին դառն հեգնութեամբ։ — Մի բոլորովին առողջ մարդ ինչով է մեղաւոր, որ նրան հիւանդի տեղ են դնում, նրա համար միայն, որ նա դուրս էր եկել ժանտախտով կամ քօլերայով վարակուած մի հասարակութեան միջից եւ կամենում էր մի օտար երկիր գնալ, որ ազատուէր այդ ախտերից։ Բայց նրան սահմանի վրայ բռնում են, կոխում են մի ծակի մէջ եւ այնքան ծուխ ու մուխ են տալիս, որ հոգին դուրս է գալիս...

—Ուրեմն մե՞ղ էլ պէտք է ծակը կոխեն, հարցրեց Ծերունին եւ նրա դէմքի խորշոմների մէջ երեւացին

սարսափելի ցնցումներ, որ նշան էին սաստիկ բարկութեան։

— Այո՛, պատասխանեց էֆէնդին սառնասրտութեամբ։

Բայց նա եկել էր Լալայի մասին առաջարկութիւն անելու, նրա ձեռքը խնդրելու եւ իր սէրը յայտնելու։ Ինչո՞ւ բոլորը մոռացաւ նա. ինչո՞ւ այսպէս տանջում էր ողորմելի հօրը։ Թոմաս էֆէնդին, ինչպէս վերեւը ասացինք, աշխատում էր Ծերունի տանուտէրին այնպիսի մի անելանելի դրութեան մէջ դնել եւ այնպիսի մի համոզման բերել, որ ստիպուած լինի մտածել, թէ իրանց փրկութիւնը միայն էֆէնդիով կը լինի եւ Լալան պէտք է ղոհուի այդ փրկութեան համար։ Որովհետեւ էֆէնդին գիտէր, որ Ծերունին հեշտութեամբ չի յօժարուի աղջիկը իրան կնութեան տալ, մանաւանդ այն խօսքերից յետոյ, որ նա լսեց Վարդանից, թէ էֆէնդին զանազան երկրներում կնիկներ է թողել, եւ ինքը անկարող եղաւ հերքելու այդ ճշմարտութիւնը։

Բայց էֆէնդին նկատելով, որ ինքը չափը անցաւ, պէտք չէր այս աստիճան յուսահատցնել Ծերունուն, սկսեց նրան մխիթարել ասելով.

— Ձեզ մի քանի օր բանտարկուած կը պահեն, իրաւ է, բայց այդ միայն ձեւի համար կը լինի։ Թոմաս էֆէնդին գործը այնպէս է սարքել, որ ձեզ վնաս չի հասնի։

Ծերունին ոչինչ չը պատասխանեց։ Նա տեսնում էր մեծ զանազանութիւն էֆէնդու առաւօտեան եւ այժմեան խօսակցութեան մէջ։ Նրա սրտում ծագեց մի մթին կասկած...

ԻԹ.

Վարդանը, Հայրապետը եւ Ապօն, առաւօտեան տնից դուրս գալուց յետոյ, ամենեւին տեղեկութիւն չունէին, թէ իրանց բացակայութեան ժամանակ ինչ էր պատահել այնտեղ։ Նրանք դեռ չը գիտէին ոչ Թոմաս էֆէնդու կատարած սատանայական կարգադրութիւնները, ոչ յիսնապետի խուզարկութիւնները եւ ոչ էլ զինուորների արած անկարգութիւնները։

Նրանք անցան մի քանի գիւղեր, որոնցում էին Պ. Սալմանին, ամեն տեղ հարց ու փորձ էին անում նրա մասին, եւ վերջապէս մտան այն գիւղը, գտան այն տունը, ուր նա անց էր կացրել վերջին գիշերը։ Տան տէրը բարի մարդ էր երեւում, նա պատմեց, որ ինքը չը գիտէ, թէ ինչ է պատահել խեղճ երիտասարդի հետ, միայն մինչեւ կէս գիշեր, նա նստած գիւղի "Ջահիլների" հետ, ինչ-որ բաների վրայ խօսում էր։ Երբ "Ջահիլները" հեռացան, նա մնաց մենակ. նրան հայ տուեցին, անկողին տուեցին, նա պառկեց օդայի մէջ։ Վաղառաւօտեան տեսան, որ երիտասարդը այնտեղ չը կար. ուր էր գնացել, չը գիտեն։

Վարդանը իր ընկերների հետ մտան այն սենեակը, ուր գիշերել էր երիտասարդը։ Այնտեղ գտան, յատակի վրայ ձգած, մի թղթի կտոր, որի վրայ մատիտով շտապ ձեռքով գրած էր մի տող միայն՝ "Ես կալանաւորուեցայ", եւ երկու գլխատառեր՝ Լ. Ս.։

Վարդանը կարդաց, եւ թուղթը տալով Հայրապետին, ասաց.

— Ես այդ սպասում էի...

Երեքն էլ մնացին քարացած։ Անցքը սարսափելի տպաւորութիւն գործեց նրանց վրայ։ Երկու մեծ կորուստ

իսկոյն պատկերացաւ նրանց աչքի առջեւ. մէկը, որ բարի ցանկութիւններով լի մի երիտասարդ զոհ գնաց իր անփորձութիւններին, միւսը, որ նրա կալանաւորութիւնը գուցէ երեւան կը հանէր եւ կ'ոչնչացնէր այն խորհուրդը, որի իրագործելու համար նրանք ուխտել էին ամեն տեսակ զոհաբերութիւն։

Տան տէրը զարմացած նայում էր այդ երեք մարդու վրայ, թէ ինչո՞ւ այն թղթի կտորը այնքան տխրութիւն պատճառեց նրանց։ Նրանք ոչինչ չը յայտնեցին եւ դուրս եկան։

Արդէն երեկոյ էր դարձել։ Անասունների նախիրը, բառանչելով, թռչկոտելով, դառնում էր արօտից, բարձրացնելով փոշու թանձր մառախուղ։ Գիւղացիները նոյնպէս ուրախ, ծիծաղելով, միմեանց հետ հանաքներ անելով, տուն էին դառնում դաշտային աշխատութիւններից։ Նրանցից ոչ ոք չէր հետաքրքրվում, ոչ ոք չէր մտածում այն բանի վրայ, թէ այս գիւղի մէջ, նախընթաց գիշերում կատարուել էին երկու չարագործութիւններ, — մի երիտասարդ կալանաւորուած էր եւ մի աղջիկ անպատուած էր... երկուսն էլ մի եւ նոյն մարդու ձեռքով, որ հայ անուն է կրում, եւ հայոց ամբոխից յարգանք է վայելում...

— Գիւղացին, ասաց Վարդանը իր ընկերներին, — մի տեսակ երեխայ է, միայն հասակը առած։ Տեսնում ես, երեխան գլորվում է, ընկնում է գետին, գլուխը դիպչում է պատին, նա այնքան ժամանակ լաց է լինում, որքան զգում է ցաւը, իսկ երբ ցաւը անցաւ, նա բոլորը մոռանում է, որպէս թէ ոչինչ չէր պատահել, եւ կրկին սկսում է խաղը, կրկին սկսում է իր ծիծաղը...

— Շատ դժուար է այսպիսի մեծ երեխաների հետ գործ ունենալը... աւելացրեց նա։ — Դարերով մի եւ նոյն հարուածներն են ուտում, մի եւ նոյն պատին են դիպցնում իրանց գլուխները, մի եւ նոյն ցեխի մէջն են գլորվում, բայց ոչինչ չեն զգում, — այսօրուայ պատահածը վաղը մոռանում են... Դարձեալ ուրախ, դարձեալ անհոգ գործում են, աշխատում են, ամենեւին չը մտածելով, թէ ո՞ւմ համար են աշխատում, կամ ուրախ լինելու ի՞նչ բան ունեն։

— Թոմաս էֆէնդին, առաջ տարաւ նա, — շատ լաւ է ճանաչել այդ ժողովրդին, կոչելով նրանց "էշեր", իսկ նրանց մասին մտածողներին — "խենթեր"... Չկ դու պատմիր այդ գիւղացիներին, թէ այն երիտասարդը, որ գիշերը ձեզ այնքան խելացի խօսքերով բացատրում էր մարդու անհատական իրաւունքը, խօսում էր, թէ ի՞նչ բան է աշխատանքը եւ ինչո՞վ կարող է ապահովուած լինել, — այժմ այն երիտասարդը կալանաւորուած է, գուցէ էգուց նրան կախաղան կը բարձրացնեն, — եւ դու բոլորից կը լսես մի եւ նոյն խօսքերը, թէ "նա խենթ էր"...

— Բայց ես մի բան եմ մտածում, փոխեց Վարդանը իր խօսքը, — Պ. Սալմանի մատնութեան մէջ պէտք է խառն լինի Թոմաս էֆէնդու մատը։

— Ես էլ այսպէս եմ մտածում, պատասխանեց Հայրապետը։

— Պէտք է ստուգել, ասաց Վարդանը։

Արդէն սկսել էր մթնել։ Ծերունիները եւ պառաւները դուրս էին գալիս երեկոյեան ժամից։ Վարդանը իր ընկերների հետ շտապում էին հեռանալ այդ գիւղից։

— Լաւ ասեղներ... գոյն-գոյն թելեր... սիրուն յուլուններ... լսելի եղաւ կաղ չարչու ծանօթ ձայնը։

Նա գալիս էր փողոցի հակառակ կողմից, նոյնպէս օրօրվելով, նոյնպէս կաղալով, որպէս տեսել էր Վար-

դանը մի քանի օր առաջ եւ ուսի վրայ շալակած ունէր ահագին արկղը, իսկ ձեռքին բռնած ունէր հաստ մահակը, որ Հերքուլէսի լախտի նմանութիւնն ունէր։ Տեսնելով Վարդանին իր ընկերների հետ, նա ասաց.

— Լաւ պարոններ, մի բան գնեցէք, երեկոյեան ժամն է, էժան կը տամ։

— Ի՞նչ ունես, հարցրեց Վարդանը մօտենալով նրան։

— Ամեն բան ունեմ... պատասխանեց չարչին եւ արկղը դրեց գետին։

Վարդանը, իբր թէ նայում էր նրա իրեղէնները, աննկատելի կերպով սողացրուց չարչու ձեռքը այն թղթի կտորը, որ գրել էր Պ. Սալմանը, եւ որ քանի լոպէ առաջ գտնուեցաւ գիւղացու օդայի մէջ, ուր կալանաւորել էին նրան։ Չարչին խիստ ճարպիկ կերպով նայեց թղթի վրայ, եւ հազիւ լսելի ձայնով պատասխանեց.

— Այո, ես գիտեմ...

— Ի՞նչ պէտք է արած...

— Կը տեսնուենք եւ կը խօսենք...

— Ո՞րտեղ...

— Հեռացէք, ես ձեզ կը գտնեմ...

Խօսակցութիւնը անցաւ բոլորովին աննկատելի կերպով։ Հայրապետը եւ Ապօն, որ այնտեղ կանգնած էին, ոչինչ չը լսեցին։

Չարչին կրկին շալակեց իր արկղը եւ սկսեց դիմել դէպի մի գիւղացու տուն, ինքն իրան խօսելով. — Այսօր բաւական վաճառեցի, այժմ պէտք է հանգստանալ...

Վարդանը իր ընկերների հետ շարունակեցին իրանց ճանապարհը։ Գիւղական խրճիթներում արդէն սկսել էին ճրագներ երեւալ։

Նրանք անցան արհեստաւոր Պետրոսի դռնից, այնտեղ կանգնած էր դրացի Օհօն։ Հայ գիւղացիները, երբ նկատում են երեկոյեան տարաժամ պահուն մի օտարական անցնում էր իրանց դռնից, թէ ծանօթ լինէր եւ թէ անծանօթ, սովորութիւն ունեն հրաւիրել նրան, ասելով. "հիւր եղէք"։ Այդ հրաւէրը նրանք շատ գիւղացիներից լսեցին, եւ "շնորհակալ ենք" ասելով հեռացան։ Բայց վարպետ Պետրոսի դրան առջեւ նրանք կանգնեցին, ոչ այն պատճառով, որ դրացի Օհօն հրաւիրեց նրանց հիւր լինել, այլ արհեստաւորի տնից լսեցին մի օտարոտի ձայն, կարծես, մէկը օգնութիւն էր կանչում։ Նրանք իսկոյն ներս մտան։ Ձայնը լսվում էր անասունների ախոռատնից, ուր բոլորովին մութն էր։ Ապօն շտապով խլեց ճրագը, որ վառվում էր խրճիթում, եւ երեքն էլ մտան ախոռատունը։ Նրանց աչքի առջեւ հանդիսացաւ մի այսպիսի պատկեր. մի մանկահասակ աղջիկ, թոկի ծայրը վզովն անցկացրած, կախուած էր ախոռի առաստաղից. մի կին նրա ոտները գրկած, վեր էր բարձրացնում աղջկան, որ թոկը չը խեղդէ։ "Թող տուր, թո՛ղ տուր"... կրկնում էր աղջիկը նուազած ձայնով։ — "Վառվառէ"... կոչում էր կինը ցաւալի ձայնով։

Նրանք շուտով կտրեցին թոկը եւ կիսաշունչ աղջկան ցած բերեցին իր ձեռքով պատրաստած կախաղանից։ Եթէ մի լոպէ ուշացել էին, ամեն բան վերջացած կը լինէր, որովհետեւ կնոջ ձեռքերը արդէն սկսել էին թուլանալ եւ նրա մէջ այնքան ուժ չէր մնացել, որ կարողանար աղջկան աղատել։

Վառվառէին գրկած բերեցին խրճիթը։ Նա տակաւին ուշքի չէր եկել։ Նա պառկած էր անկողնի մէջ, որ իսկոյն պատրաստեցին նրա համար։ Նրա փոքր ինչ

կապտած դէմքի վրայ երբեմն երեւում էին ցնցումներ, եւ նրա սեղմուած շրթունքից լսելի էին լինում մի եւ նոյն խօսքերը "թող տուր„... Սուսանը լաց էր լինում եւ անիծում էր մէկին, որի անունը չէր յիշում: Խեղճ կինը մի քանի անգամ մօտեցաւ աղջկան, գրկեց նրա գեղեցիկ գլուխը, ասելով. "Վարվառէ ջան, դու ինչո՞ւ էիր սպանում քեզ... դու ինչո՞վ էիր մեղաւոր... թող Աստուած պատժէ անզգամին„...

Վարդանը իր ընկերների հետ հասկացան որ մանկահասակ աղջկայ վարմունքի մէջ թաղնուած էր մի գաղտնիք: Բայց գաղտնիքը լուծել դժուար եղաւ, որովհետեւ Սուսանը ոչինչ չը յայտնեց նրանց, եւ տան մէջ, բացի նրանցից եւ երկու փոքրիկ երեխաներից, ուրիշ ոչ ոք չը կար: Հայրապետը ծանօթ էր այդ ընտանիքի տղամարդի հետ: Սուսանի ամուսինը՝ վարպետ Պետրոսը շատ անգամ գալիս էր Ծերունի Խաչօի տունը եւ նորոգում էր նրա երկրագործական անօթները: Բայց նրա կնոջը Հայրապետը առաջին անգամն էր տեսնում: Եւ եթէ շատ անգամ եւս տեսած լինէր, եւ մինչեւ անգամ ծանօթ լինէր, դարձեալ գիւղացու կինը օտար մարդու հետ համարձակ չէր խօսում: Նա միայն օրհնեց եւ շնորհակալութիւն յայտնեց, որ օգնեցին իրան, եւ խնդրեց, որ իր ամուսնին կանչել տան:

— Ո՞րտեղ է նա, հարցրեց Հայրապետը:

— Այս մօտիկ գիւղում, պատասխանեց կինը, — գնացել է բանելու:

Նրանք կամենում էին դուրս գալ, որ մի մարդ գտնեն, ուղարկեն վարպետ Պետրոսին կանչելու: Նոյն միջոցին Վառվառէն աչքերը բաց արաւ եւ ջուր խնդրեց: Սուսանը իսկոյն ջուր տուեց, որից բաւական խմեց

նա: Աղջկայ կապտագոյն դէմքը այժմ դունաթափուել էր եւ աչքերի մէջ երեւում էր կարմրութիւն, որը առաջ էր եկել արեան բորբոքումից: Նա կրկին իր գլուխը դրեց բարձի վրայ եւ վերմակը քաշեց երեսին: Վերմակի տակից լսելի էր լինում նրա խուլ հեկեկանքը... Լացի այդ տխուր եւ դառն ձայնը, որքան եւ սրտաճմլիկ լինէր, այսուամենայնիւ, ուրախացրեց Վարդանին եւ նրա ընկերներին: Նրանք այժմ մոռացուում էին, որ աղջկայ կեանքը ազատուած է:

Դրսում նրանք գտան մի տղայ, որին մի քանի սեւ փող տալով, ուղարկեցին վարպետ Պետրոսին կանչելու: Դրացի Օհօն դեռ կանգնած էր իր դրան մօտ: Նա կրկին հրաւիրեց Վարդանին իր ընկերների հետ, որ հիւր լինեն, ասելով.

— Հէրօրհնածներ, ո՞ւր էք գնում այդ մութ գիշերին:

— Ախ, թէ դիտենայիք, երէկ գիշեր ինչ քէֆ ունէինք, աւելացրեց նա, — այս գիշեր էլ մի բան կը սարքենք:

— Ի՞նչ քէֆ, հարցրեց Հայրապետը:

Դրացի Օհօն խիստ ոգեւորուած կերպով սկսեց պատմել, թէ Թոմաս էֆէնդին հիւր էր վարպետ Պետրոսի տանը, ինքն եւս այնտեղ կանչուած էր. "չալկիները„ ածում էին, աղջիկները պար էին գալիս, շատ կերան, շատ խմեցին եւ շատ ուրախութիւններ արեցին, եւ վերջացրեց իր պատմութիւնը այս խօսքերով.

— Աստուած վկայ, շատ լաւ մարդ է այդ Թոմաս էֆէնդին, այնքան արաղ բերել տուեց, որ կարելի էր լողանալ մէջը:

— Եւ ձեր ամենիդ հարբեցրուց, այնպէս չէ՞: հարցրեց Վարդանը:

— Հէրօրհնած, այնքան խմելուց յետոյ ոմ չի հարբի, պատասխանեց Օհօն ծիծաղելով, — քէֆն էլ հարբելու մէջն է։

— Տան տէրը տա՞ննէր։

— Ես էլի տան տիրոջ տեղը բռնել։

— Բայց դու հարբելուց յետոյ էֆէնդին բռնեց քո տեղը... այնպէս չէ՞։

— Ես ոչինչ չը հասկացայ, ինձ շալակած մեր տունն էին բերել։

Թողնելով Օհօին, նրանք հեռացան։

Շանապարհին, Վարդանը ասաց Հայրապետին.

— Ես այժմ հասկանում եմ, թէ այն խեղճ աղջիկը ի՞նչ պատճառով էր իրան խեղդում...

— Իսկ այժմ հասկանում եմ, թէ ոմ պէտք է մատնած լինի Պ. Սալմանին... խօսեց Հայրապետը։

— Կասկած չը կայ, խօսեց Վարդանը, — որ Թոմաս էֆէնդին մատնած կը լինի։ Նա այն աստիճան խորամանկ մարդ է, որ անկարելի է նկատած չը լիներ Պ. Սալմանի դիտաւորութիւնները, եւ թուրք կառավարութեանը մի ծառայութիւն անելու մտքով, նրան մատնած չը լիներ։ Եւ գիշերը ինքն եւս այս գիւղում գտնուելով, շատ հասկանալի է որ նրան բռնել տուած կը լիներ։ Եթէ մենք ճանաչում ենք էֆէնդու հոգին, այս բոլորը այնպիսի ճշմարտութիւններ են, որ տարակուսելու պատճառ չը կայ։

Երեք ընկերների մէջ տիրեց լռութիւն։ Նրանք բաւական դանդաղ քայլերով շարունակում էին ճանապարհը։ Ուրաքանչիւրը կենտրոնացած էր իր մէջ եւ մտածում էր, թէ ինչ հնարքով կարելի էր երիտասարդի կեանքը ազատել։

— Բոլորը ինչ որ ասացիր ուղիղ է, Վարդան, ընդհատեց Հայրապետը տիրող լռութիւնը, — հիմայ ի՞նչ պէտք է անել։

— Ես բաւական ծանօթ եմ թուրք աստիճանաւորների թոյլ կողմերի հետ, թէ որքան անհոգ են, որքան անճիշտ են, եւ որքան զանցառու են իրանց պարտականութիւնների մէջ, պատասխանեց Վարդանը։ — Եւ այս պատճառով, մտածում եմ, որ ինձ շատ հեշտ կը լինի ազատել Պ. Սալմանին։ Ես ունեմ երկու ծառաներ, որոնց քաջութիւնը ձեզ լաւ յայտնի է. մեր ձիաները պատրաստ են. հէնց այս գիշեր կը նստենք եւ կը գնանք. ուր եւ տարած լինեն, մենք կարող ենք գտնել նրան. եւ եթէ ուրիշ միջոցով հնար չը լինի ազատել, դործ կը դնենք մեր ուժը, թուրք պահապանների երկչոտութիւնը ինձ վաղուց յայտնի է։

— Մենք էլ պատրաստ ենք քեզ հետ դալ, պատասխանեցին Հայրապետը եւ Ապօն։ — Մենք չենք թողնի, որ դու մենակ գնաս։

— Ձեր ինձ հետ դալը ոչ միայն աւելորդ է, այլ մինչեւ անդամ վտանդաւոր է, պատասխանեց Վարդանը։ Եւ յիշելով չարչու խօսքերը, մտածեց փոքր ինչ սպասել նրան, եւ ասաց իր ընկերներին. — Նստենք այստեղ, այսպէս շտապ գնալով, դժուար է խօսել կամ մտածել։

Կարծես, նա յոգնած էր, կարծես, վերջը եւ տրխրութիւնը ճնշել էին նրան իրանց ծանրութեան ներքոյ։ Եւ նրա սրտի մէջ յուզվում էր մի տեսակ ալեկոծութիւն, որ սկսել էր փոքր առ փոքր սաստկանալ...

Նրանք դուրս եկան ճանապարհից, քաշուեցան մի կողմը եւ նստեցին մի տաղաւարի մէջ, որ շինուած էր սեխանոցի մօտ։ Մշակներից ոչ ոք չէր մնացել սեխանոցը

պահպանելու համար, որովհետեւ դեռ պտուղը հասած չէր եւ գողերից երկիւղ չը կար։ Երկրագործի տաղաւարը մի լաւ մենարան է յոգնած ճանապարհորդի համար. այնտեղ կը գտնէ նա պատսպարան թէ ցերեկուայ տօթի դէմ եւ թէ յորդ անձրեւների դէմ, որ այս կողմերում շատ են պատահում։

Գիշերը բաւական պարզ էր, թէեւ լուսին չը կար։ Հեռուից նշմարվում էին Օ... գիւղի խրճիթների ճրագները եւ երբեմն լսելի էին լինում շների խուլ, զգուշարար ձայները։

Վարդանը շարունակեց ընդհատուած խօսակցութիւնը։ Նա կրկնեց, թէ պէտք է ամեն հնարք գործ դնել Պ. Սալմանին իր կալանաւորութիւնից ազատելու համար, որ անպատճառ կը վերջանայ մահուան պատիժով։ Բայց ինքը Հայրապետի եւ Ապօի այս գործում մասնակցելը վտանգաւոր է համարում, գլխաւորապէս այն պատճառով, որ մի այսպիսի ձեռնարկութիւն կարող էր կամ յաջողուել եւ կամ չը յաջողուել. — երկու դէպքում եւս Հայրապետը եւ Ապօն ազատ չէին մնալու Թուրքերի վրէժխնդրութիւնից։ Որովհետեւ այս գործը, ասաց նա, գուցէ առանց արեան եւ առանց կռիւի չէ վերջանայ, գուցէ սպանութիւններ կը լինեն, եւ եթէ Հայրապետը եւ Ապօն մասնակցեն, այն ժամանակ որպէս տեղացիներ, անպատիժ չեն մնայ, եւ բացի իրանցից, կը պատժուեն այլ եւ նրանց ազգականները ու ծերունի Խաչօի ամբողջ ընտանիքը։ Բայց իր, Վարդանի, համար այսպիսի երկիւղներ չը կան։ Ինքը, որպէս ուրիշ տէրութեան հպատակ, որպէս օտարական, կարող է իր դիտաւորութիւնները կատարել եւ այնուհետեւ թողնել ու հեռանալ այս երկրից. նրան ոչ ոք չէ կարող

գտնել, մանաւանդ պատերազմական այդ խառն ժամանակներում։

Լսելով Վարդանի, որպէս զանազան յանդուգն ձեռնարկութիւնների մէջ փորձուած մարդու, երկար բացատրութիւնները, Հայրապետը եւ Ապօն պատասխանեցին.

— Մենք մեր հագուստները կը փոխենք եւ ոչ ոք չէ կարող ճանաչել մեզ։

— Մի եւ նոյն է, ինչ որ անելու լինէք, դարձեալ կը յայտնուի։ Այստեղ պակաս չեն Թոմաս էֆէնդու նման մարդիկ, որ ձեզ մատնեն։ Այստեղի հայերը, եթէ մի առիթով կարող են շահել Թուրքի համակրութիւնը, չեն խնայի, թէեւ նրանով ՀԱՍՍԵԼՈՒ եւս լինեն իրանց ազգայիններին։ — Հայը, աւելի քան օտարները, ինքն է իր թշնամին...

Վերջին խօսքերը արտասանեց նա խորին վրդովմունքով։ Այն օրուայ անցքերի տխուր տպաւորութիւնները սաստիկ դրգռել էին նրա ջղերը։ Մի կողմից իր յարգած երիտասարդի կալանաւորութիւնը, միւս կողմից ժողովրդի անտարբեր սառնասրտութիւնը. մի կողմից թշուառ Վառվառէի անցքը, միւս կողմից Թոմաս էֆէնդու չարագործութիւնները, սաստիկ զայրացրել էին նրա սիրտը, թէեւ այդ գարշելի մարդու ծերունի Խաչօի տան մէջ կատարած վերջին աւուր բանսարկութիւնները նրան դեռ յայտնի չէին։ Այդ մտատանջութիւնների եւ յուզմունքի մէջ նա համարեա մոռացել էր Լալային, այն նազելի էակին, որ նրա սրտում առաջին տեղն էր բռնում։ Ցանկարծ աղջկայ տխուր եւ աղաչաւոր պատկերը երեւեցաւ նրան, եւ կարծես, ասում լինէր. "ո՞ւր ես գնում. ինձ ինչո՞ւ ես թողնում. գնո՞ւմ ես ազատելու քո սիրած ընկերի կեանքը. ես էլ քո սիրելին եմ. ախար դու ինձ խօսք

տուեցիր, որ կը տանես, կը հեռացնես այս երկրից. ախար այստեղ վատ է, ես վախենում եմ, շատ եմ վախենում քրդերից»...

Վարդանի սրտում ծագեց զգացմունքների մի սաստիկ պատերազմը։ Երկու էակներ կանգնած էին նրա առջեւ. մէկը՝ սիրած աղջիկը, միւսը՝ սիրած ընկերը։ Երկուսն էլ կարօտ էին օգնութեան, երկուսի կեանքն էլ վտանգի մէջ էր։

Քուրդ բէկից Լալային սպառնացող դժբախտութիւնը դեռ Վարդանին պարզապէս յայտնի չէր։ Բայց նա գիտէր, թէ Թոմաս էֆէնդին որպիսի թակարդներ է լարում նրա առջեւ։ Նա գիտէր, որ այդ անբարոյական նպատակին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն դնել սովոր չէ։

Փոքրիկ տաղաւարի մէջ տիրեց առժամանակեայ լռութիւն։ Նոյնպիսի մի մտածութիւն այն րոպէում զբաղեցնում էր Հայրապետին։ Նրան յայտնի էր Լալայի եւ Վարդանի սէրը. նա իր քոյրը նշանակել էր այդ երիտասարդի համար։ Այժմ Վարդանը գնում էր, գնում էր իր ընկերին ազատելու համար։ Կամ կը սպանուէր եւ կամ կը խլէր նրան Թուրքերի ձեռքից։ Երկու դէպքում եւս նա կը կորցնէր Լալային։ Գուցէ մինչեւ նրա վերադարձը քուրդ բէկը յափշտակած եւ տարած կը լինէր Լալային։ Եւ Վարդանը, երեւի, չը գիտէր այդ, եւ չէր էլ կարող գիտենալ, որովհետեւ նրան դեռ չէին յայտնել քուրդ բէկի դիտաւորութիւնները։ Ինչո՞ւ այդ բոլորը չասել Վարդանին։ Բայց ի՞նչպէս ասել։ Վարդանը մինչեւ այն օր Ծերունի Խաչօի ընտանիքից ոչ ոքի դեռ չէր յայտնել, թէ սիրում է Լալային եւ ցանկանում է, որ նա իր կինը լինի։ Այդ դաղտնիքը գիտէր Սառան միայն,

այն եւս պատահմամբ։ Իրերի յանկարծակի մինը միւսի ետեւից փոփոխութիւնը ժամանակ չը տուեց Վարդանին իր սիրտը բաց անելու։ Այժմ մի նոր եւ վտանգաւոր ձեռնարկութիւն բոլորովին բաժանում էր նրան Լալայից։ Այժմ միանգամից ոչնչանում էին Հայրապետի յոյսերը, թէ Վարդանը կ'ազատէր իր քրոջը, եւ կը վերառնէր, կը տանէր մի հեռու երկիր, ուր քուրդ բռնակալի ձեռքը այլ եւս չէր հասնի։

Միւս կողմից, պ. Սալմանի կորուստը ոչ սակաւ տանջում էր Հայրապետին։ Նա այդ անձնանուէր երիտասարդին սիրեց, համակրեց աւելի քան թէ Վարդանը։ Այժմ թողնել նրան Թուրքերի ձեռքում, որ բանտերի խաւարի մէջ մաշեն, տրորեն եւ սպանեն նրան, — այդ նոյնպէս անգթութիւն կը լինէր։ Եւ այդ անգթութիւնը աւելի խիստ եւ աւելի դառն էր թուում Հայրապետին, զլխաւորապէս այն պատճառով, որ ինքը պէտք է առիթ տար Վարդանին յետ մնալու իր ձեռնարկութիւնից, որ ինքը պէտք է խափանէր նրա բարի նպատակը պ. Սալմանին ազատելու համար, երբ յայտնելու լինէր, թէ որպիսի վիճակ է սպասում իր քրոջը քուրդ բէկի կողմից։

Իրերի այսպիսի խճճուած եւ խառնաշփոթ դրութիւնը ձգել էր թէ Վարդանին եւ թէ Հայրապետին նոյնպիսի խառն մտածութիւնների մէջ։ Թէ Լալան եւ թէ կալանաւորուած երիտասարդը շուտափոյթ օգնութիւն էին պահանջում։ Բայց դէպի ո՞րը պէտք էր դիմել առաջ, — այդ հարցը դժուարացնում էր նրանց։

Բայց ի՞նչ էր մտածում այն րոպէում Ապօն, այդ շինական ընտանիքի չը փչացած եւ քաջասիրտ որդին։ — Նա խիստպէս ոչինչ չէր մտածում։ Նա այն տեսակ մարդերից էր, որին դէպի որ կողմը քաշելու լինէին,

այն կողմը կը գնար, այն պայմանով միայն, որ դէպի վատ կողմը գնալու հակամտութիւն չունէր։ Ապօն մի լաւ եւ յաջողակ գործիք էր կրակի միջից բաներ դուրս հանելու համար. գործածութիւնը կախուած էր տիրոջ հմտութիւնից։

Վարդանի խոստովանութեամբ փոքր ինչ պարզուեցաւ գործը։ Վարդանը, առանց մի կէտ թաքցնելու, յայտնեց երկու եղբայրներին իր սէրը դէպի նրանց քոյրը։ Յայտնեց, թէ ինքը խօսք է տուել Լալային, որ կը փախցնէ նրան եւ ստացել է աղջկայ յօժարութիւնը։ Ասաց, թէ ինքը մի այդպիսի օտարոտի դիտաւորութիւնը ստիպուած է կատարել նրա համար միայն, որ յոյս չունի, որ Լալայի հայրը կը համաձայնուէր աղջիկը իրան կնութեան տալու. որովհետեւ նա նկատել է եւ համոզուած է, որ Ծերունի Խաչօն աչք ունի Թոմաս էֆէնդու վրայ, եւ մտածում է նրան փեսայացնել։

— Այդ մարդու մասին աւելորդ է խօսել, շարունակեց նա, — որովհետեւ դուք երկուսդ էլ նրան բաւական ճանաչում էք, եւ ճանաչեցիք առաւելապէս այսօր։ — Թոմաս էֆէնդուն աղջիկ տալը մի եւ նոյն է, որպէս զցել նրան դայլի կամ շան բերանը։

— Բայց ինձ տանջում է մէկ միտք, յառաջ տարաւ նա. — ես, որպէս ձեզ յայտնեցի, պէտք է գնամ պ. Սալմանի ետեւից, այդ ձեռնարկութիւնից յետ կանգնել ամենեւին չեմ կարող։ Յանկութիւնը դէպի մի այսպիսի բարեկամը եւ ընկերը ծանր պարտք է դնում ինձ վրայ։ Բացի դրանից, ես ինձ մասամբ պատճառ եմ համարում, որ նա ընկաւ այդ փորձանքի մէջ. — ես նրան խրախուսեցի, ես նրան յորդորեցի, ես աւելի վառեցի այն կրակը, որ բորբոքուած էր նրա սրտի մէջ։

Դրանցով ես շտապեցրի նրա անկումը, ուրեմն պէտք է աշխատեմ ազատել նրան։

— Միւս կողմից յառաջ տարաւ նա, — իմ առջեւ դրած է մի ահագին արդելք. չը գիտեմ, թէ ինչ պէտք է անել, արդեօք կարո՞ղ եմ թողնել Լալային։ Գուցէ այսօր կամ էգուց էֆէնդին բանը այնպէս կը սարքէ, որ Լալան այդ հրէշի կինը կը լինի։ — Ի՞նչ կը լինի այնուհետեւ խեղճ Լալայի վիճակը։

Հայրապետը պատասխանեց, թէ Լալան բոլորը պատմել էր իր կնոջը՝ Սառային եւ կինը հաղորդել էր իրան, եւ ինքը վաղուց գիտէր նրանց հոգեկան յարաբերութիւնները։ Եւ ինքը, եւ գուցէ իր բոլոր եղբայրները շատ ուրախ կը լինէին, եթէ Վարդանը կը շտապէր օր առաջ փախցնել եւ տանել Լալային։

— Ոչ թէ էֆէնդու պատճառով, աւելացրեց նա, — բայց կայ մի ուրիշ եւ աւելի անհրաժեշտ պատճառ, որ ստիպում է շուտով հեռացնել Լալային մեր երկրից...

— Ուրիշ ի՞նչ պատճառ կայ, հարցրեց Վարդանը, եւ նրա աչքերը վառուեցան սրտի բարկութիւնից։

Հայրապետը մանրամասնօրէն պատմեց քուրդ բէկի դիտաւորութիւնը, պատմեց նրա տիկնոջ՝ Խուրշիդի ընդդիմադրութիւնը իր ամուսնի կեանքի դէմ. պատմեց, թէ ինչ միջոցով Խուրշիդը յայտնեց Սառային բէկի նպատակը եւ խորհուրդ տուեց հեռացնել Լալային այդ երկրից, — մի խօսքով, Հայրապետը ասաց այն ամենը, ինչ որ մինչեւ այն օր կատարուել էր Լալայի վերաբերութեամբ, եւ ինչ որ դեռ Վարդանին անյայտ էր։

Խորին դառնութեամբ լսում էր Վարդանը Հայրապետի պատմութիւնը եւ նրա խօսքերը թունաւոր նետերի նման ծակոտում էին խեղճ երիտասարդի սիրտը։

— Եւ դուք այդ ամենը գիտէիք եւ ծածկում էիք ինձանից, ասաց նա սաստիկ վրդովմունքով, — եւ դուք սպասում էիք, մինչեւ քուրդը գայ, եւ օր-ցերեկով ձեր քոյրը հօր տնից յափշտակէ ու տանէ, եւ դուք աչքերդ բաց-բաց մոռիկ տայիք, թէ որպէս են անպատվում ձեզ...

Այժմ Վարդանը հասկանում էր Լալայի այն տըխուր եւ յուսահատական խօսքերի իմաստը, որ մինչեւ այն օր ճնայել էր իր համար առանց բացատրութեան, — հասկանում էր, թէ ինչո՞ւ Լալան այն մութ գիշերային պահուն, երբ առաջին անգամ հանդիպեցաւ իր հետ, իր հօր տան պարտէզի մէջ, երբ պէտք էր համբոյրներով քաղցրացնել առանձնութեան ժամերը, երբ պէտք էր սիրոյ եւ անսահման երջանկութեան վրայ խօսել, — նա իր գեղեցիկ աչքերից արտասուք էր թափում, եւ օրհասական խռովութեան մէջ ասում էր այդ խօսքերը. "Ես Սնայի մօտ չեմ գնայ... ես վախենում եմ դերեզմանից... վախենում եմ քրդերից... ազատիր ինձ եւ տար մի ուրիշ երկիր"... Ուրեմն նա գիտէր, թէ ինչ դառն վիճակ է սպասում իրան, եւ խորին ցաւակցութեամբ պատմում էր իր ընկերուհու Եարգիսի անցքը, թէ որպէս յափշտակեցին, թէ որպէս տարան նրան քրդերը, եւ որպէս անբախտ ու տխուր էր այժմ Նարգիսը...

Լինում են բոպէներ, որ մարդը թշուառութեան, վտանգի եւ դառն պատահմունքների ամենասաստիկ հարուածների տակ աւելի քաջանում է, աւելի տոկուն, անխորտակելի սիրտ է ստանում եւ աւելի հանդգնանում է։ Նա սկսում է այնուհետեւ արհամարհել չար բախտի հարուածները, երբ նրանք հասնում են մի յայտնի աստիճանի, որից աւելին սպասել չէր կարելի։

Նոյն դրութեան մէջն էր գտնվում այժմ Վարդանը։ Նա այլ եւս չէր մաքառում մտքերի, զգացմունքների եւ հոգեկան տանջանքի խռովութեան հետ։ Նա այժմ հանգիստ էր։ Ամեն ինչ միանգամով վճռուեցաւ նրա մէջ։ Այժմ նա գիտէր, թէ ինչ պէտք էր անել։ — Ընկերի սէրը յաղթեց կնոջ սէրին։ — Ընկերի կորստեան մէջ սպանվում է գաղափարը, հարստահարուած եւ թշուառ գիւղացու ազատութեան գաղափարը, որի մէջ բովանդակվում էր ոչ միայն Լալայի, այլ շատ հազարաւոր կնիկների պատիւը եւ փրկութիւնը։ Ինչո՞ւ միայն Լալայի համար հոգալ. ինչո՞ւ թողնել ընդհանուրը եւ մասնաւորի ետեւից ընկնել... մտածում էր նա։

— Այս բոլորից յետոյ, խօսեց Վարդանը, — ես պէտք է կրկնեմ ձեզ մի եւ նոյնը, ինչ որ ասացի մի քանի րոպէ առաջ։ Ես պէտք է գնամ պ. Սալմանի ետեւից, եւ պէտք է աշխատեմ, ինչ հնարքով եւ լինի, ազատել նրա կեանքը։ Իսկ Լալային, ի հարկէ, նոյնպէս անհոգ թողնելու չէ. նրա մասին եւս պէտք է մի կարգադրութիւն անել։ Ահա իմ խորհուրդը, լսեցէք...

— Ոչինչ կարգադրութիւն պէտք չէ... լսելի եղաւ մի ձայն եւ տաղաւարի ետեւից յայտնուեցաւ կաղ չարչու հսկայական կերպարանքը։

Վարդանը, տեսնելով նրան, մի առանձին ուրախութիւն զգաց, բայց Հայրապետի եւ Ապօի վրայ խիստ անտխորժ տպաւորութիւն գործեց, երբ տեսան, որ այդ թափառականը գաղտնի լսում էր իրանց խօսակցութիւնը։ Այդ օտարոտի մարդու մասին նրանք դեռ ոչինչ չը գիտէին, բայց երբ նկատեցին, որ Վարդանը խիստ մտերմաբար բռնեց նրա ձեռքից եւ նստեցրուց իր մօտ, այն ժամանակ երկու եղբայրները փոքր ինչ հանգստացան, մա-

նաւանդ երբ Վարդանը յայտնեց նրանց, ասելով. — Մի կասկածէք, մեղանից է...

Բայց Մէլիք-Մանսուրը այժմ այն չէր, որպէս տեսել էին նրան մի քանի ժամ առաջ թափառական չարչու ցնցոտիների մէջ: Ինքը՝ Վարդանը հազիւ կարողացաւ ճանաչել նրան իր այժմեան նոր կերպարանափոխութեան մէջ: Նա կրում էր լաչերի ազգային համազգեստ եւ կատարելապէս զինուած էր:

— Ես ձեզ մօտ երկար մնալ չեմ կարող, ասաց նա շտապելով. — ձեզ յայտնի է, որ մեր "դուդուկ-ջին" ընկաւ ծուղակի մէջ, պէտք է ազատել նրան:

— Մենք էլ հէնց այդ մասին էինք խօսում, պատասխանեց Վարդանը:

— Դուք նրա մասին միամիտ կացէք, նա էգուց կամ միւս օրը աղատուած կը լինի, ասաց նա կանգնելով: — Դուք միայն շարունակեցէք մեր ընդհանուր գործը: Առ այժմ բարի գիշեր:

— Դուք մենա՞կ էք գնում:

— Ոչ, իմ ընկերները այնտեղ սպասում են:

Նա ձեռքը պարզեց դէպի լեռան կողմը, ուր գիշերային խաւարի միջից աղօտ կերպով երեւում էին մի խումբ ձիաւորներ:

— Ովքեր են նրանք, հարցրեց Վարդանը:

— Մի քանի լեռնցի երիտասարդներ: — Ցտեսութիւն:

Վարդանը կամենում էր մի քանի բաներ եւս հարցնել, բայց նա հեռացել էր արդէն:

Հայրապետը եւ Ապօն բոլորովին ապշած մնացին: Նրանք դեռ չը գիտէին այդ դաղտնածածուկ անձնաւորութեան ո՞վ կամ ինչ տեսակ մարդ լինելը: Վարդանը հարցրեց ինչ տեղեկութիւններ որ ունէր նրա մասին, եւ երկու եղբայրները այժմ համոզուած էին, որ այդ հնարագէտ մարդը կարող էր ազատել պ. Սալմանին:

Նրանք վերկացան եւ սկսեցին դիմել դէպի տուն: Բայց Սաքօն եւ Եղօն՝ Վարդանի երկու ծառաները, — որոնք ծերունի Խաչօի խորհրդով ուղարկուած էին, որ Վարդանին եւ իր որդիներին զգուշացնեն, որպէս զի նրանք տուն չը վերադառնան, — Վարդանի այդ հաւատարիմ արբանեակները, թէեւ ամբողջ օրը որոնեցին նրանց, բայց գտնել չը կարողացան, որ յայտնէին, թէ ինչ էր սպասում նրանց ծերունի Խաչօի տան մէջ:

— Եղօ, ասաց նրան իր ընկեր Սաքօն, — բանը վատ է, մենք պէտք է աշխատենք չը բռնուել, որ եթէ աղային մի բան պատահելու լինի, կարողանանք վրատալ:

— Ես էլ այսպէս եմ մտածում, պատասխանեց Եղօն:

Երկու ընկերները վճռեցին հեռուից հսկել Վարդանի վրայ եւ իրանց հեռու պահել ծերունու տնից:

Լ.

Գիշերից բաւական անցել էր, երբ Վարդանը, Հայրապետը եւ Ապօն վերադարձան տուն: Նրանք դեռ չը գիտէին, թէ իրանց բացակայութեան ժամանակ ինչ էր պատահել տան մէջ: Բոլորովին անկասկած կերպով ներս մտան եւ խկցին նրանց ետեւից դուռը փակուեցաւ: Երկու պահապան զինուորներ կանգնած էին այնտեղ: Ցիսնապետը իր անկարգ խումբով օդայի մէջն էր: Մի քանի անդգամ զափթիաներ թափառում էին տան բակում, եւ որսորդական շների նման, հոտ քաշելով, որոնում էին մի բան ձեռք ձգել:

Տան հարսներին տարել էին դրացիների եւ ծնողների մոտ։ Այսպիսի դէպքերում, երբ մի տան վրայ մեղադրանք է դրվում եւ նա գտնվում է զինուորների հսկողութեան ներքոյ, կնիկներին հեռացնում են տնից։

Տեսնելով այդ բոլորը, Վարդանը իր ընկերների հետ դարձեալ առաջին սնդամից չը հասկացան, թէ ինչ էր նշանակում այդ խառնիճաղանճ ամբոխը։ Որովհետեւ տանուտէրի օդայում, որպէս ամեն մի հայ գիւղացու տան մէջ, զինուորների խումբերով օթեւանելը՝ այդ երկրում մի սովորական բան էր։ Եւ ամեն անգամ, երբ գիւղացին այս տեսակ հիւրեր է ընդունում, միշտ ստիպուած է իր հարսին, կնոջը եւ աղջկան, իր հիւրի կրքերից աղատ պահելու համար, գիշերը դրացու տունը ուղարկել, եթէ հիւրը այնքան բարի կը լինէր, եւ իր սուրը տան տիրոջ կոկորդի վրայ դնելով, չէր բռնադատի նրան, որ կնոջը տանը պահէ իրան հիւրասիրելու եւ ծառայութիւն անելու համար։

Հայրապետի եղբայրներից մէկը, հանդիպելով նրան, զայրացած կերպով ասաց.

— Տեսա՞ր, այն "պամպուլիկը" ի՞նչ ցին բերից մեր գլխին... հիմայ եկ, դիւանի պատասխանը տուր... Ես հէնց առաջին օրը, այն լակոտի վզակոթին տալով, դուրս կ'անէի մեր տնից, բայց դու սատանայի նման հակառակ եղար, եւ չը թողեցիր... հիմայ եկ, պատասխան տուր...

Հայրապետը ոչինչ չը խօսեց, նա հասկացաւ, որ եղբօր հայհոյանքները վերաբերում են պ. Սալմանին։ Նա հասկացաւ տխուր եղելութիւնը...

— Մեր տղայ, մենք էլ ընկանք ծուղակի մէջ... ասաց նրան Վարդանը ծիծաղելով։ — Այդ էր պակաս...

Իսկոյն մի քանի զափթիաներ մօտեցան, եւ նրանց բռնելով, տարան օդան, յիսնապետի մօտ։ Թոմաս էֆէնդին այնտեղ չէր։ Նա իր կարգադրութիւնները կատարելուց յետոյ, հեռացել էր, եւ այս գիշեր, որպէս հիւր, գտնվում էր գիւղի քահանայի տանը։ Օդայի մէջ, բացի ծերունի Խաչիից եւ յիսնապետից, ուրիշ մարդ չը կար։ Միայն մի քանի զինուորներ կանգնած էին դրանը։ Վարդանը, ներս մտնելով անցաւ եւ նստեց տանուտէրի մօտ, առանց սպասելու, որ թուրք աստիճանաւորը նրան թոյլ տար նստելու։ Հայրապետը եւ Ապօն մնացին ոտի վրայ։

Վարդանի վարմունքը յիսնապետին ծանր երեւեցաւ եւ նա բաւական սրհամարհական կերպով հարցրեց նրանից.

— Դուք ո՞ր տեղացի էք, հայ։

"Հայ" բառը գործ դրեց նախատական մտքով։

— Ռուսաստանցի, պատասխանեց Վարդանը զսպելով իր վրդովմունքը։

— Ի՞նչ գործով էք եկել այստեղ։

— Առեւտուր եմ անում այս կողմերում։

— Անցագիր ունէ՞ք։

— Ունէի, բայց կորցրել եմ։

— Այդ հեշտ է ստուգել. դուք միայն ասացէք, թէ սահմանապլխի ո՞ր մաքսատնից եւ երբ անցաք, մենք կը հարցնենք. այնտեղ ձեր անցագրի համարը եւ անունը գրուած կը լինի։

— Ես կանտրաբանտիստ եմ. այս արհեստով պարապող մարդիկ մաքսատան չեն մտնում։ Այն էլ կ'ասեմ, որ ես հէնց առաջուց անցագիր չունէի։

— Այդ դուցէ ձեզ կը ներուէր, եթէ դուք միայն կանտրաբանտիստ լինէիք, բայց դուք մեղադրվում էք մի ուրիշ յանցանքով եւս։

— Ինչով։

— Դուք լուռ էք։

— Ուղիղ է... երեւի, Թոմաս էֆէնդին է հաղորդել ձեզ... իսկապէս նա շատ ճշմարտախօս մարդ է... ասաց Վարդանը հեգնական եղանակով։

Այդ մի եւ նոյն է, թէ ո՞վ է հաղորդել, պատասխանեց յինանպետը, պահպանելով պաշտօնական մարդու սառնասրտութիւնը. — կասկածաւոր մարդիկ, մանաւանդ այս պատերազմական ժամանակներում, մենք մեր երկրում չենք թողնում։ Ձեզ այս գիշեր կը պահեն այստեղ եւ առաւօտեան կը տանեն զինուորական դործակատարի մօտ. նա կը կարդադրէ ձեր վիճակը։

— Ուրեմն ի՞նչ հարկ կար այդ բոլոր հարցուփորձերը անելու, երբ իմ վիճակը զինուորական դործակատարի մօտ պէտք է վճռուի։ Դուք կարող էիք հէնց սկզբից կալանաւորել ինձ եւ աւելի ոչինչ։ Բայց ձեր սովորութիւնն է։ Այստեղ վերջին զափթիան անգամ, երբ ուղարկվում է մի յանցաւորի ետեւից, նա կատարում է այն բոլորը, ինչ որ պէտք է անէր բարձր դատարանը։

Յինանպետը թէեւ վերաւորուեցաւ, բայց ոչինչ չը պատասխանեց։ Նա կանչեց չորս զափթիաներ եւ հրամայեց, որ տանեն եւ պահեն Վարդանին։ Նա ամենուին ընդդիմադրութիւն դործ չը դրեց եւ թոյլ տուեց, որ կալանաւորեն իրան։

Վարդանին տանելուց յետոյ յինանպետը դարձաւ դէպի Հայրապետը եւ Ապօն։

— Դրանցից ոչինչ հարցնել պէտք չէ, հրամայեց նա, — դրանց յանցանքը յայտնի է. տարէք, զգուշութեամբ պահեցէք։

Ծերունի Խաչօն խորին թմրութեան մէջ, որպէս մի կիսաքուն եւ կիսարթուն մարդ, կարծես, երազի մէջ

տեսնում էր այդ բոլորը։ Ինչո՞ւ էֆէնդին խաբեց իրան։ Մի՞թէ այդ բոլորը ձեւի համար էր կատարվում, որպէս հաւատացնում էր էֆէնդին։

Վարդանին, Հայրապետին եւ Ապօին տարան եւ կողպեցին մի շինուածքի մէջ, որ ծառայում էր որպէս ցորենի ամբար։ Նրա յատակը եւ պատերը կառուցուած էին քարից, կրով ամուր կպցրած միմեանց հետ, որ մկները չը կարողանան ծակել եւ ցորեանը փչացնել. լուսամուտները նեղ էին եւ պատած ցանցատեսակ երկաթով, որ արգելում էին թռչունների ներս մտնելը։ Այս շինուածքը ամեն յարմարութիւն ունէր այս գիշեր բաւական ամուր բանտի փոխարէն ծառայելու։ Մի անկիւնում վառվում էր իւղային ճրագ եւ տարածում էր իր լոյսը ամբարի խաւար կամարների մէջ։

Հայրապետը եւ Ապօն լուռ էին, նրանց դէմքի վրայ նկարուած էր խորին յուսահատական տխրութիւն դառն զարհուրանքի հետ։ Նրանց յայտնի էր թուլք աստիճանաւորների անգթութիւնը, որ մի ամենաչնչին յանցանք պատճառ բռնելով, եւ շատ անգամ մեղադրութիւնները իրանք հեղինակելով, եւ արդարին յանցանքի մէջ զբսպարտելով, — միշտ պատրաստ էին կեղեքել, մաշել եւ ոչնչացնել անմեղներին, մանաւանդ երբ նրանք հայ էին եւ փոքր ի շատէ ունեւոր մարդիկ էին։ Իսկ այժմ յանցաւոր համարուելու համար բաւական ապացոյցներ կային։ Բայց ո՞րպէս յայտնուեցան, ո՞վ պէտք է մատնած լինէր։ — Այդ մասին նրանք մի որոշ կարծիք կազմել չէին կարողանում։

Վարդանը, կարծես, հանդիստ էր։ Նրա հանգստութիւնը նմանում էր մրրկածուփ ծովի խաղաղութեանը, որ տիրում է ալեկոծութիւնից յետոյ։

— Ես ձեզ մի առակով կը բացատրեմ բոլորը, ասաց նա իր բանտակիցներին. Անտառի ծառերը լուր տարան իրանց թագաւորին, ասելով, թէ յայտնուել է մի գործիք, որ մեզ անխնայ կոտորում է: — "Ի՞նչպէս է կոչվում այդ գործիքը", հարցրեց թագաւորը: — "Ցապար", պատասխանեցին ծառերը: — "Ի՞նչպէս է կազմուած նա", հարցրեց թագաւորը: — "Գլուխը երկաթից է, բայց կոթը փայտից", պատասխանեցին ծառերը: — "Դա շատ վտանգաւոր գործիք է", պատասխանեց թագաւորը, երբ կ ո թ ը մեզանից է...

— Կոթը մեզանից է... կրկնեց Վարդանը, շեշտելով առաջին բառը: — Մեզ հարստահարող, մեզ տանջող, մեզ ստրկացնող, մեզ ոչնչացնող եւ մեր տունը քանդող գործիքի կոթը մեզանից՝ հայերից է: Թոմաս էֆէնդիները, սկսեալ գիւղական մուլթէզիմից մինչեւ Բարձր Դրան հայ ամիրան, այս տեսակ կոթեր են թշնամիների ձեռքում: Հայոց պատմութեան մէջ երբէք պակաս չեն եղել այս չար եւ վնասակար կոթերը: Ուր կը տեսնէք հայրենիքը եւ ազգը օտարի ձեռքը մատնելը, — այնտեղ խառն է եղել հայի մատը: Ուր կը տեսնէք հայ թագաւորի գահընկէցութիւնը եւ նրա գաւազանը օտարի ձեռքը յանձնելը, — այնտեղ խառն է եղել հայի մատը: Ուր կը տեսնէք հայ թագաւորի դէպի աքսոր մատնութիւն եւ նրա մայրաքաղաքի դռները թշնամու առջեւ բաց անելը, — այնտեղ խառն է եղել հայի մատը: Ուր կը տեսնէք հայրենի հողը հայի արիւնով ներկուած, նրա բնակութիւնները կրակով ոչնչացրած եւ նրա զաւակները գերի տարուած, — այնտեղ խառն է եղել հայի մատը: Ուր կը տեսնէք կրօնի, ազգութեան եւ սուրբ եկեղեցու դաւաճանութիւն, — այնտեղ խառն է եղել

հայի մատը: Մի խօսքով, ամեն թշուառութիւնների մէջ, ամեն հալածանքների մէջ, եւ մեր թշնամիներից կրած ամեն տեսակ եղեռնագործութիւնների եւ բարբարոսութիւնների մէջ միշտ գործել է հայի տապարը: Հայը ինքն է փորել իր ազգային շինուածքի հիմքը, եւ ինքն իր ձեռքովն է կործանել իր սուրբ եւ նուիրական հաստատութիւնները... Ինչո՞ւ ենք մեղադրում օտարներին:

Այսօն եւ Հայրապետը խորին տխրութեամբ լսում էին Վարդանի խօսքերը, վերջինը հարցրեց.

— Ուրեմն մեր բոլոր յոյսերը ոչնչացա՞ն... ուրեմն մեր շինուածքը դեռ իր հիմքի մէջ, դեռ կատար չը հասած, կործանուեցաւ...

— Ես, կարծես, մարգարէի հոգւով նախագուշակում էի, որ այսպէս կը վերջանայ, եւ մի ուրիշ վախճան սպասելը՝ յիմարութիւն կը լինէր, պատասխանեց Վարդանը: — Ինքը՝ Պ. Սալմանը նոյնպէս երկբայութեան մէջ էր, եւ հազիւ հաւատում էր իր սկսած գործին: Ես բառ առ բառ յիշում եմ նրա յուսահատական խօսքերը, երբ մի անգամ այդ եռանդով լի երիտասարդը ասում էր ինձ. — "Երբ որ եւ իցէ ժողովրդական շարժման դաղափարը մի քանի անհատների երեւակայութեան ցնորք է միայն, եւ տակաւին չէ ընդհանրացել, չէ տարրացել ամբոխի գոնէ մի մասի մէջ, — մի հարուածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինքը ոչնչացրած կը լինեն: Բայց ամբոխը ուրիշ բան է. ամբոխի մէջ միտքը սպանել անհնարին է":

— "Մենք, ասում էր նա, այժմ միայն սերմնացանի պաշտօն պիտի կատարենք, բայց ոչ հնձողի: Հունձքը պիտի թողնենք ապագայ սերունդին": — Եւ այդ էր պատճառը, որ վերջին օրերում նա ձեռնարկեց կա-

ռուցանել աւելի հաստատուն, աւելի նպատակայարմար հիմնարկութիւններ, որպէս էին դպրոցները։ Պ. Սալմանի գործունէութիւնը ապստամբական նպատակ չունէր. նա կրում էր աւելի յեղափոխական բնաւորութիւն, որ յետոյ ստացաւ բոլորովին նախապատրաստական կերպարանք։ Մի անգամ դիմեց նա ինձ մի առանձին ուրախ ժպիտով, որ երբէք չէի նկատել նրա միշտ սառն դէմքի վրայ. "Վարդան. ասաց նա, մենք որ յանձն ենք առել ժողովուրդ կրթելու գործը, դեռ եւս ինքներս անկիրթ ենք, դեռ եւս շատ բան պիտի սովորենք նոյն իսկ ժողովրդից։ Ժողովուրդը մի մեծ վարժապետ է։ Նրա մի հատիկ առածի մէջ անհուն փիլիսոփայութիւն կայ։ Լսիր, ասաց նա, թէ ինչպէս է ժողովուրդը արտայայտում իր յարաբերութեան պայմանները թուրքերի հետ. "շան հետ հաշտ եղիր, բայց փայտը ձեռքիցդ բաց մի՛ թող"։ Եւ արդարեւ, այդ առածի մէջ բովանդակւում են գլխաւոր պայմանները, թէ ո՞րպէս պէտք էր վարուել մահմեդականների հետ։ Նրանք կծոտողներ են, նրանց ատամներից չը վերաւորուելու համար, պէտք է միշտ փայտը ձեռքում պատրաստ ունենալ։ Եւ այդ էր պատճառը, որ Պ. Սալմանը աշխատում էր զինուորել ժողովուրդը եւ նրան պաշտպանողական դիրքի մէջ դնել։

Հայրապետը եւ Ասլան խորին ուշադրութեամբ լսում էին։ Նրանք, կարծես, մոռացել էին իրանց սեպհական ցաւը, մոռացել էին այն դառն վիճակը, որ առաւօտեան սպասում էր իրանց, եւ այժմ մտածում էին մի ընդհանուր ցաւի վրայ։ Նրանք շատ անգամ լսել էին Պ. Սալմանից նոյնպիսի մտքեր, բայց մինչեւ այնօր այնպէս սարդ չէին ըմբռնում նրանց իմաստը, որպէս այժմ։

Բանը, կարծես, ոգեւորել էր Վարդանին։ Նա խօսում էր առանց լռելու։ Նա իր կեանքում շատ անգամ բանտ էր մտել եւ դուրս եկել, բայց բանտը միշտ տխուր տպաւորութիւն էր թողել նրա վրայ։ Իսկ այժմ զգում էր մի տեսակ բաւականութիւն։ Նա նմանում էր մի դատապարտեալի, որ մահուան սիւնի վրայ, խորին արհամարհանքով նայում է դէպի անարդար աշխարհը եւ ծիծաղում է չար մարդերի թերթեւամտութեան վրայ, իր մտքի մէջ ասելով. "ահա ձեր բոլոր ուժը, դրանից աւել էլ ի՞նչ կարող էք անել... դուք սպանում էք իմ մարմինը, բայց չէք կարող սպանել իմ սերմնած մտքերը"...

— "Շան հետ հաշտ եղիր, բայց փայտը ձեռքիցդ բաց մի՛ թող"... յառաջ ասաւ Վարդանը։ — Այդ ուղիղ է։ Կենսական պայմանների այդ դրութիւնը ծնում է հրէշներ՝ — ինձ նման հրէշներ... Դուք, բարեկամներ, երեւի, դեռ այնքան չէք ճանաչել ինձ, որպէս եմ ես խակապէս։ Բայց որովհետեւ, դուցէ այդ վերջին դիշերը կը լինի, որ կարող եմ խօսել ձեզ հետ, ուրեմն լսեցէք։ Ես այն մարդերից եմ, որ շատ վաղ սովորեցի չարը չարով վճարել։ Իմ ձեռքերը շատ անգամ շաղախուած են եղել արիւնով, բայց ոչ երբէք մի անմեղ արիւնով։ Ես մի ժամանակ կրօնաւոր էի եւ Հին Կտակարանից այսքանը միայն սովորեցայ՝ "ակն ընդ ական"։ Երբ կարդացի, որ Մովսէսը, Եհովայի մարգարէն, աղգասիրութիւնից դրդուած սպանեց հրէային հալածող եգիպտացուն եւ նրա մարմինը ծածկեց Նեղոսի աւազների մէջ, — իմ սիրտը լցուեցաւ մի անսահման ատելութեամբ դէպի այն ազգերը, որ նոյնպէս հալածում են հայերին։ Երբ կարդացի, որ Մովսէսը, Եհովայի մարգարէն, ամբողջ ցեղեր

ոչնչացրեց, մինչեւ կարողացաւ ուխտեալ երկիրը մաքրել օտարներից եւ Իսրայէլի որդիներին բնակեցնել նրանց տեղը, — ես մտածեցի, թէ նոյնպէս պէտք է վարուել թուլքերի, քրդերի եւ չէրքեզների հետ, որոնք բռնացել են մեր հայրերից մեզ մնացած ժառանգութեան վրայ: Դա բնութեան մի եւ նոյն օրէնքն է, որ Պ. Սալմանը բացատրում էր բոյսերի օրինակով: Բոյսերի մի տեսակը ճնշում է, խեղդում է, ոչնչացնում է մի ուրիշ տեսակին, եւ ինքը բռնում է նրա տեղը: Եթէ չենք ցանկանում, որ գոյութեան այդ կռիւի մէջ ոչնչանանք, պէտք է ընդդիմադրութեան ուժ եւ ընդունակութիւն ունենանք. եւ այդ յատկութիւնը կոչվում է անձնապաշտպանութիւն: Պ. Սալմանի գլխաւոր նպատակը այն էր, որ ժողովրդի մէջ զարգացնի այդ յատկութիւնը:

— Ես վաղօրոք սեպհականեցի այդ յատկութիւնը: Գուցէ բարոյագէտը կ'անուանէ ինձ անբարոյական, եղեռնագործ, գազան, գուցէ քահանան մեղաւոր կը համարէ ինձ, — բայց փոյթ չէ, ես պէտք է վարուեմ այնպէս, ինչ որ պահանջում է կեանքը: Իսկ երբ մարդիկ կը դադարեն չար լինելուց, երբ խաղաղութիւնը եւ քրիստոնէական եղբայրսիրութիւնը կը թագաւորեն աշխարհի վրայ, — ես պատրաստ եմ լինել ամենաբարին եւ համբուրուել իմ թշնամիների հետ...

Այսպէս դեռ երկար խօսում էին նրանք, մինչեւ ճրագի մէջ վառուած եղը սպառուեցաւ, մի քանի բոպի պլպլաց, ծխրտաց եւ ապա հանգաւ: Բանտի մէջ տիրեց մթին խաւարը:

ԼԱ.

Մի եւ նոյն գեշերը, երբ Վարդանը, Հայրապետը եւ Ապօն բանտի մէջ փիլիսոփայութիւններ էին անում, խորհում էին դժբախտ հայրենիքի դժբախտ ժողովրդի մասին, — Թոմաս էֆէնդին գտնվում էր գիւղի քահանայի՝ տէր-Մարուքի տան մէջ, եւ ընթրիքից յետոյ ուրախ, զուարթ, շատախօսում էր եւ հանաքներ էր անում տէրտէրի հետ:

Դա մի եւ նոյն տէրտէրն էր, որ այնքան հոգսեր պատճառեց Պ. Սալմանին, իսկ այժմ լսելով նրա կորուստը, ցաւում էր, ոչ այն պատճառով, որ ասպարէզից պիտի անհետանար մի նշանաւոր գործիչ, այլ առհասարակ հայի կորուստը ցաւալի էր նրա համար: Ցէր հայրը չար մարդ չէր, եւ եթէ նա ընդդիմութիւն էր գործում, կամենում էր խանգարել Պ. Սալմանի դպրոցների գործը, — այդ դարձեալ նրա բարի ցանկութիւններից էր առաջ գալիս, որովհետեւ վնասակար էր համարում:

Նա մի ժամանակ հասարակ գիւղացի էր, փոքր ի շատէ գրել-կարդալ սովորել էր իր մանկութեան ժամանակ Ս. Յովհաննու վանքում: Գիւղատնտեսութեան մէջ նրան չը յաջողուեցաւ, աղքատացաւ եւ գնաց օտար երկիր բախտ որոնելու: Պանդխտութեան մէջ նոյնպէս չը յաջողուեցաւ նրան. մի ժամանակ Վան քաղաքում ղահվէջի էր. գործերը վատ գնացին, վնասուեցաւ, եւ առանց մի փարայ վաստակելու, վերադարձաւ իր հայրենիքը: Այստեղ ապրուստի մի ուրիշ միջոց չը գտնելով, տէրտէր դարձաւ:

Այն գիշեր քահանայի տանը հրաւիրուած էր եւ գիւղի մանկավարժը, երեւելի տիրացու Սիմոնը, որ տէր հոր փեսան էր: Այդ մարդը մեծ կարծիք ունէր իր

գիտութեան վրայ (գիւղացիներն եւս նոյն կարծիքն ունէին նրա մասին) եւ առաւելապէս հպարտանում էր նրանով, որ տէր հօր փեսան էր։

Խօսակցութեան առարկան այն օր Ծերունի Խաչօի տան մէջ պատահած անցքերն էին, որ մեծ սարսափ էին գցել բոլոր գիւղացիների վրայ, առաւելապէս անհանգստացնում էին տէր հօրը։

— "Հէշը կը դատի, ձին կ'ուտի", տէր հայր, շարունակեց էֆէնդին ընդհատուած խօսակցութիւնը, — աշխարհի կարգը միշտ այդպէս է եղել եւ այդպէս էլ կը շարունակուի։ Այն որ Աստուած է կարգադրել, մարդը չէ կարող փոխել։ Աստուած մէկին աղայ է ստեղծել, միւսին մշակ։ Մէկը կը դատէ, միւսը կ'ուտէ։ Հայը սովորել է աշխատանքին, քուրդը եւ Թուրքը սովորել են ուտելուն։ Եթէ աշխատողը չը լինի, ուտողը չէ կարող ապրել։ Եթէ ուտողը չը լինի, աշխատողը չէ կարող ապրել։ Թուրքերը մեզ պահում են իրանց սրով, մենք էլ պէտք է պահենք նրանց մեր աշխատանքով։ Աստուած Թուրքի ձեռքում սուր է տուել, իսկ հայի ձեռքում — բահ։ Մէկը միւսի տեղը չի կարող բռնել։

— Այդ իրաւ է, պատասխանեց քահանան, երեսը խաչակնքելով, — Տէրն մեր Յիսուս Քրիստոս սուրբ Աւետարանի մէջ հէնց այդպէս է ասում, որ առանց Աստուծոյ կամքին տերեւն էլ ծառից ցած չէ ընկնում. առանց Նրա կամքին մի մաղ էլ մարդու գլխի վրայ չէ սիպտակում. — բոլորը Նրա ձեռքումն է։

— Այդպէս է, ճշմարիտ է... հաստատեց եւ տիրացու Սիմոնը, նոյնպէս երեսը խաչակնքելով։

Յետոյ նրանք սկսեցին խօսել գիւղացիների, պատերազմի պատճառով աւելի սաստկացած, հարստահարութիւնների վրայ։ Տէրտէրը, բոլորովին իր անձնական շահերի կէտից նայելով կատարուող յափշտակութիւնների վրայ, գանգատվում էր, ասելով, թէ կառավարութեան հարկերը այն աստիճան ծանրացել են, որ բոլորովին սպառում են գիւղացիների արդիւնաբերութիւնը, եւ եթէ մի բան մնում է, այն էլ քրդերն են տանում, — այդ պատճառով ինքը շատ վատ է վարձատրվում, շատ անգամ պակ, ալրտութիւն եւ թաղում է կատարում, առանց մի փարայ ստանալու։ Գիւղացիները խոստանում են, թէ յետոյ կը վճարեն, բայց, կամ չեն կարողանում տալ, կամ խաբում են, եւ դրա համար տէրտէրը այժմ գիւղի մէջ շատ ապառիկներ ունի, վճռել է այսուհետեւ չը կնքել, չը պսակել, եւ չը թաղել, մինչեւ վարձը սկզբում վճարելու չը լինեն, որովհետեւ ինքն էլ մարդ է եւ ապրել է ուզում։

— Տէր հայր, պատասխանեց էֆէնդին գործադէտ մարդու եղանակով, — գիւղացուն դուք այնքան չէք ճանաչում, որքան ես եմ ճանաչում։ "Աստուած գիւղացուն մի հոգի է տուել, այն էլ չի կարողանում առնել", բայց երբ հոգեհան հրեշտակը սուրը ձեռին կանգնում է նրա գլխին, այն ժամանակն է տալիս հոգին։ Դրանից պէտք է մենք օրինակ վերցնենք։ Գիւղացին առանց այն "օրհնեալ փայտը" տեսնելու, փող չի տայ։ Դուք ձեր ապառիկների հաշիւը պատրաստեցէք, թուղթը յանձնեցէք ինձ, ես կը տամ իմ զափթիաներից մէկին, նա կը հաւաքէ։ Ես չեմ թողնի, որ ձեր մի փարան էլ կորչի։

— Օրհնեալ եղերուք, Աստուած ձեզ երկար կեանս պարգեւեսցէ, պատասխանեց քահանան, — հաշիւը այժմ էլ պատրաստ է։

— Կարդացէք տեսնեմ ո՞ւրքան է։

Տէրտէրը դուրս բերաւ ծոցից մի թերթ թուղթ, կեղտոտ, խուղճուած, դեղնած, եւ երկար տարիներ նրա ծոցում պահուելով, բոլորովին քրքրուած եւ իր վաղեմի գոյնը կորցրած։ — Դա նրա հաշուագիրքն էր։ Թերթի չորս երեսների վրայ, խոշոր տառերով, ծուռումուռ տողերով գրուած էին տէր հօր ապառիկները։ Նա թուղթը մօտեցրուց աչքերին, փորձ փորձեց կարդալ, բայց կարդալ չը կարողանալով, թերթը տուեց վարժապետին ասելով.

— Առ, տիրացու Սիմոն, դու կարդա, իմ աչքերը չեն ջոկում։

Տիրացու Սիմոնը առեց հաշիւը, մի քանի անգամ հաղաց, ծոծրակը քորեց, ուղղուեցաւ, եւ թերթը մօտեցնելով աչքերին սկսեց կարդալ այնպիսի մի ճառական եղանակով, որ կարծես, կոնդակ էր կարդում։

— "Զօլսի Մկօի աղջիկը կնքեցի, փողը մնաց 5 ղուրուշ, աղջիկը մեկ շաբթից յետոյ մեռաւ, թաղեցի, փողը մնաց 7 ղուրուշ։ Խլօի տղան պսակեցի, փողը մնաց 10 ղուրուշ. ստացայ 30 խուրձ խոտ. փողը կանէ 3 ղուրուշ։ Փանօի կնիկը հիւանդ էր, գնացի նրա տունը, երեք գլուխ բժշկական աւետարան կարդացի, փողը մնաց 3 ղուրուշ։ Սագօի տղան խաչը ջրից հանեց. Բարսօն 30 ղուրուշ էր տալիս, որ ինքը հանէ. էս Սագօին խաթր արեցի, 20 ղուրուշով բարիշեցայ, փողը մնաց 20 ղուրուշ. ասաց կալի ժամանակը ցորեան կը տամ, գնացի, ուզեցի, չը տուեց. գրողին էլ վկայ է,,...

Եւ այսպէս, մինը միւսի հետեւից գրուած էր մի ահագին պատմութիւն։ Դա իսկապէս հաշիւ չէր, այլ տէր

հօր քահանայական գործունէութեան մի քանի տարուայ ժամանակագրութիւնն էր, թէեւ խառնափնթոր կերպով նկարագրուած, բայց բովանդակում էր իր մէջ բաւական փաստեր, թէ ինչով է զբաղվում գիւղական տէրտէրը։

— Օրինաւոր հաշիւ է, ասաց էֆէնդին, ընդհատելով եւ չը կարողանալով համբերել, մինչեւ տիրացուն կը վերջացներ բոլորի "ընթերցանութիւնը,,։ — Դուք, տէր հայր, յանձնեցէք այդ թուղթը ինձ, ես բոլորը հաւաքել կը տամ։ Ե...շէնի գիւղացիներն էլ վանքի "պտուղը„ ուշացնում էին, իր ժամանակին չէին տալիս, վարդապետը մի նամակ գրեց ինձ, ես բոլորը մի օրուայ մէջ հաւաքել տուեցի, յետոյ վանքից օրհնութեան գիր ստացայ։

Տէրտէրը այնքան բնական էր համարում այս միջոցով իր ապառիկները հաւաքելը, որ ոչ միայն համաձայնուեցաւ էֆէնդու առաջարկութեան, այլ կրկին շնորհակալութիւն յայտնեց եւ կրկին սկսեց օրհնել նրա թանդագին կեանքը։

Բայց ինչո՞ւ էֆէնդին յանձն առեց կատարել այս ծառայութիւնը։ Նա այն տեսակ մարդերից էր, որ առանց նպատակի, առանց իր սեպհական շահերի, ոչ ոքին լաւութիւն չէր անի։ Այժմ ի՞նչն ստիպեց նրան այնքան բարի լինել, որ մինչեւ անգամ խոստացաւ հաւաքուած գումարից տասանորդ չը վերցնել, որ սովորաբար ստացվում էր, երբ որ եւ իցէ գումար վճարվում էր կառավարութեան պաշտօնեաների հրամանով։

— Հայր Աբրահամի օրհնութիւնը թող ձեզ վրայ լինի, զօրանաք, ասաց քահանան, լսելով էֆէնդու վերջին խոստմունքը։

Ապառիկների մի այսպիսի ցուցակ էլ տիրայու Սիմոնի ծոցումն էր պահուած. նա էլ իր աշակերտներից ստանալիքներ ունէր, եւ մտածում էր հաշիւը ներկայացնել էֆէնդուն: Բայց տէրտէրը նրա ականջին ասաց. "Թող իմը հաւաքուի, քոնը յետոյ":

Տէր Մարուքի ընտանիքը շատ փոքր էր թւով. նրա միակ որդին վախճանուեցաւ, թողնելով իր կինը այրի երկու փոքրիկ երեխաների հետ: Հարսը ամուսնի մահից յետոյ էլ մարդու չը գնաց, մնաց քահանայի տանը եւ խնամք էր տանում իր որբիկներին: Ինքը տէր հայրը վաղուց զրկուած էր իր տիրուհուց եւ բոլորովին ամուրի կեանք էր վարում:

Այդ դիշեր հարսը, հիւրերին ընթրիք տալուց յետոյ, զբաղուած էր իր զաւակով, որ սաստիկ հիւանդ էր: Նստած նրա մահճի մօտ, ողորմելի կինը խորին տխրութեամբ նայում էր հիւանդի երեսին, շոշափում էր նրա ջերմ թաթիկները եւ լսում էր նրա ծանր շնչառութիւնը: Այդ զաւակի մէջ նա գտնում էր պատկերը այն տղամարդի, որին սիրում էր. այդ զաւակի մէջ գտնում էր դժբախտ մայրը իր մխիթարութիւնը կորցրած ամուսնի մահից յետոյ: Նա համարեա չէր լսում, եւ ուշադրութիւն եւս չէր դարձնում, թէ ինչ է խօսվում տան մէջ. այլ միանգամայն գութ եւ գորով դարձած, աչքի առջեւ իր հիւանդ մանուկին էր միայն տեսնում:

Բայց տէրտէրը, ուրախացած էֆէնդու խոստմունքներով, կամեցաւ իրանց ուրախութիւնը աւելի կատարեալ անել, եւ հրամայեց հարսին քնել արաղէ շիշը, որ արդէն դատարկուած էր, բացի դրանից "մաղայ"[1] պատրաստել: Թէեւ ընթրիքը վերջացած էր, բայց տեղային սովորութեան համեմատ, յարգելի հիւրին մի առանձին պատիւ տրուած կը լինէր, եթէ խմելը կը շարունակուէր:

Հարսը այն աստիճան շփոթուած էր, որ քահանան երկու անգամ կրկնեց իր հրամանը, մինչեւ նա կարողացաւ հասկանալ, թէ ինչ էր ուզում տէրտէրը: Արաղ կարելի էր գտնել. նա շիշը լցրեց. այդ պաշարը միշտ անպակաս էր լինում տէր հօր տնից: Բայց ինչով պատրաստել "մաղան": Տանը քաղցրեղէն չը կար: Ցայտնել այդ մասին՝ մինչեւ անգամ ամօթ էր: Հայ մարդու տանը հիւրի համար ամեն բան պէտք է գտնուի: Նա մտածեց գնալ եւ հարեւանից փոխ առնել:

Դրսում սաստիկ մութն էր եւ անձրեւը հեղեղի նման թափվում էր երկնքից: Ծերունի կինը դուրս եկաւ բակը, անցաւ ցեխի միջից, բարձրացաւ կտուրի վրայ, որ այնտեղից իջնէ հարեւանի տունը: Այդ միջոցում նա լսեց, որ հարեւանի դուռը սաստիկ ծեծում էին, եւ դրսից թուրքերէն լեզուով սպառնալիքներ էին կարդում, հրամայելով, որ բաց անեն. իսկ ներսից երգումներով պատասխանում էին, թէ այստեղ չեն պահուած նրանք, որոնց պտռում էք... Բայց ռումն էին պտռում. ինչ թուրքեր էին դրանք, որ դիշերային այդ տարաժամ պահուն աշխատում էին ներս խուժել մի հայի տուն:

Զուլօն — այսպէս էր տէրտէրի հարսի անունը — լսելով փողոցի աղմուկը, սաստիկ վախեցաւ, եւ երկիւղից ոչ կարողացաւ հարեւանի տունը գնալ եւ ոչ իրանց տունը վերադառնալ, այլ շուարած եւ անշարժ մնաց կտուրի վրայ: Նոյն րոպէում նրա ականջին հասաւ

[1] Մաղայ նշ. դեսսերտ, պատրաստուած չոր միգեղէններից:

խօսակցութեան հաղիւ լսելի շշնջոց. կարծես, խօսողները բարձրանում էին հարեւանի տան սանդուղքներից եւ չը գիտէին թէ ո՞ր կողմը պէտք էր փախչել:

— Կամաց, Ստեփանիկ...

— Ո՞ւր գնամ, Սառա...

Զուլօն ճանաչեց նրանց: Նրա երկիւղը փարատուեցաւ, նա այժմ բոլորովին այրական սիրտ ստացաւ, երբ տեսաւ, որ այդ ողորմելիները օգնութեան կարօտ էին: Նրան արդէն յայտնի էր Ծերունի Մաչօի տան այնօրուայ ցաւալի անցքը: Նա գիտէր, որ նրա գերդաստանի կնիկները այն գիշեր գիւղի զանազան տներում թաքնվում էին: Իսկ այժմ պտտում էին նրանց, եւ ի՞նչ նպատակով, — այդ եւս հասկացաւ Զուլօն... Ուրեմն փողոցում գտնվող եւ հարեւանի դուռը ծեծող թուրքերը, ոչ այլ ոք էին, եթէ ոչ Ծերունի Մաչօի որդիներին կալանաւորող զինուորներից մի քանիսը:

Սառան եւ Ստեփանիկը այժմ գտնվում էին տէր հօր կտուրի վրայ, եւ որսորդներից հալածուած եղջերուի նման, ամեն կողմից պաշարուած, մոլորուած, չը գիտէին թէ դէպի ո՞ր կողմը պէտք է փախչել: Անձրեւը վերեւից թափվում էր: Գիւղացիների դռները փակ, եւ իրանք քնած էին: Գիշերը կէսից վաղուց անցել էր արդէն:

Այդ միջոցին փայլատակեց կայծակը եւ նրա վայրկենական լուսաւորութեան յաջորդեց որոտման սարսափելի դղրդիւնը: Կայծակի լուսով նկարուեցաւ Զուլօի անորոշ կերպարանքը: Ստեփանիկը, տեսնելով նրան, կարծեց, թէ թուրքերից մէկը արդէն բարձրացել է կտուրի վրայ: Նա երկիւղից թուլացաւ եւ ընկաւ Սառայի կուրծքի վրայ: Զուլօն մօտեցաւ նրանց:

— Ես եմ, մի՛ վախեցէք, ասաց նա:

— Ա՜խ, Զուլօ, դուն ես, ասաց Սառան դողդողալով, — ի սէր Աստուծոյ, մեզ մի տեղ, հիմայ կը բռնեն մեզ... հիմայ կը տանեն մեզ...

Զուլօն մնաց շուարած. ո՞րտեղ տանել նրանց, ո՞րտեղ թաքցնել նրանց. իրանց տանը կասկածաւոր հիւրեր կային, եւ տէրտէրը հաղիւ թէ կ'ընդունէր այս տեսակ փախստականներին: Այսուամենայնիւ, մտածում էր Զուլօն, պէտք էր օգնել այդ ողորմելիներին: Նրան յայտնի էր բոլոր անպատուութիւնը, եթէ նրանք թուրքերի ձեռքը կ'ընկնէին: Միւս կողմից, նրան սպառնում էր մի ծանր պատասխանատուութիւն, եթէ ինքը թաքստի տեղ կը տար այդ յանցաւորներին, որոնց յանցանքը նրա մէջն էր միայն, որ կին էին... Այդ բոլորը իմանում էր Զուլօն: Բայց կարեկցութիւնը նրա մէջ գերակշռեց երկիւղի եւ վարանման զգացմունքին, իսկ մօտալուտ վտանգը ծնեց նրա գլխում փրկութեան մի միջոց:

— Գնանք, ասաց նա, բռնելով Ստեփանիկի ձեռքից, եւ Սառային օգնելով, երկուսը միասին գրկեցին խեղճ աղջկան, որ տակաւին ուշեղնացութեան մէջ էր:

Նրանք սկսեցին ցած իջնել կտուրից: Այդ միջոցին լսելի եղաւ մի սաստիկ շառաչիւն, որ իսկոյն խլացաւ անձրեւի եւ փոթորկի խառվութեան մէջ: Դա հարեւանի դրան ձայնն էր, որ խորտակեցին թուրքերը:

Տէրտէրի տանը կից էր մարագը. բակից մի փոքրիկ դուռ բացվում էր նրա մէջ. Զուլօն տարաւ փախստականներին այստեղ: Սառան եւ Ստեփանիկը թաղնուեցան խոտերի մէջ:

— Ես էլի կը գամ ձեզ մօտ, ասաց Զուլօն, եւ մարագի դուռը կողպելով, հեռացաւ:

Անձրեւի ձայնից թէ՛ տէրտէրը եւ թէ՛ նրա հիւրերը չը լսեցին, թէ ի՞նչ է կատարվում դրսում: Իսկ Զուլօն

վերադառնալով, նրանց ոչինչ չը յայտնեց։ Նա միայն մօտեցաւ տէրտէրին եւ նրա ականջին ասաց, թէ հարեւանի տանը բոլորը քնած էին, եւ ոչինչ փոխ առնել չը կարողացաւ «մաղայ» պատրաստելու համար։

Ես մի բան կը գտնեմ, խօսեց տէրտէրը, եւ վերկենալով, մօտեցաւ պահարանին, սկսեց քրքրել այնտեղ դրուած իրեղէնները։

Էֆէնդին օգուտ քաղելով քահանայի բացակայութիւնից, դարձաւ դէպի Զուլօն եւ կամաց ասաց նրան.

— Դու ինքդ «մաղայ» ես... «մաղան» էլ ի՞նչ կ'անենք...

Տիրացու Սիմօնը այնքան խմած էր, որ ոչինչ չը լսեց։ Իսկ Զուլօն վշտացած էֆէնդու ակնարկութիւնից, պատասխանեց նրան.

— Լիրբ...

Հայ կինը ամեն նեղութեան համբերող է, ամեն վերաւորանքի առջեւ լուռ է, բայց երբ դիպչում են նրա պատուին, այն ժամանակ նա անհամբեր է դառնում։ Զուլօն վրդովուած գնաց եւ նստեց իր հիւանդ զաւակի մօտ, որ այժմ զարթել էր քնից։ Երեխան հանդիստ էր, եւ տեսնելով մօրը իր մօտ, ասաց նրան.

— Մայրիկ, Թորոսին ծեծիր, իմ ճաները խլում է։

Թորոսը հիւանդի մեծ եղբայրն է. երեւի երաշի մէջ խլել էր նրա ճաները։ Մայրը հանգստացրուց, ասելով.

— Տէս, աչքիս լոյս, Թորոսը ճաներդ տուեց, տէս, այստեղ է։

Մայրը հանեց բարձի տակից երեխայի խաղալիկները եւ տուեց նրա ձեռքը։ Երեխան սկսեց իր թոյլ ձեռքերով խաղալ նրանց հետ։ Մայրը նայում էր նրա վրայ եւ

ուրախանում էր։ Նա մոռացաւ էֆէնդուց կրած վերաւորանքը, նա մոռացաւ ամեն բան, որովհետեւ զաւակը այժմ լաւ էր զգում իրան։ Բայց մի նոր անախորժութիւն կրկին վշտացրեց խեղճ մօրը։ Տէրտէրը երկար պտռելով պահարանի մէջ իր թագցրած բանը չը գտաւ եւ Զուլօից հարցրեց, թէ այնտեղ մի կտոր շաքար ունէր պահած, իսկ այժմ չէ երեւում։ Հարսը պատասխանեց թէ ինքն է վեր առել. քանի օր առաջ նրանով շերբէթ պատրաստեց հիւանդի համար, որովհետեւ սաստիկ տաքութիւն ունէր եւ պէտք էր մի զովացուցիչ բան խմացնել։

— Թող զահրումար խմէր, թող լեղի խմէր... գոչեց նա բարկացած ձայնով։ — Դու չէի՞ր խմանում, որ շաքարը հիւրի համար էր, հիմայ ի՞նչ անենք։

Զուլօն ոչինչ չը պատասխանեց եւ լուռ արտասուքը սկսեց թափուել նրա տխուր աչքերից։

Տէր Մարուքը իսկապէս չարամիտ մարդ չէր, նա մինչեւ անգամ բարի էր, բայց բարութիւնը տգէտների մէջ երբեմն անդիտակցաբար չարութեան է փոխվում։ Բայի դրանից, նրա պաշտօնը նրան փոքր ինչ խստասիրտ էր շինել։ Տէրտէրները, բժիշկները եւ դահիճները, որոնք խիստ յաճախ գործ ունեն մեռելների հետ, շատ չեն խնայում կեանքին։ Այս պատճառով, իր թոռնիկի հիւանդութիւնը տէր հօր այնքան չէր հետաքրքրում, որքան գրաւում էր նրան հիւրասիրութեան բաղձանքը, էֆէնդու նման մի մարդուն գոհացնելը, մանաւանդ որ նա խոստանում էր հաւաքել տալ տէր հօր բոլոր ապառիկները։

— Մայրիկ, ինչո՞ւ ես լացում, ասաց հիւանդը կարեկցաբար նրա երեսին նայելով, — մի լաց, ես հիմայ լաւ եմ։

Մայրը մոռացաւ իր բոլոր վիշտը եւ սրբեց աչքերի արտասուքը։ Ոչինչ այնքան մխիթարական չէ, որքան սիրելի զաւակի մի քաղցր խօսքը, մի անմեղ թոթովանքը։ Այժմ Զուլֆն մոռացում էր Սառայի եւ Ստեփանիկի մասին, մոռացում էր, ի՞նչ կը լինի, եթէ թուրքերը յանկարծ ներս կը թափուեն, կ՚որոնեն եւ կը գտնեն նրանց։ Բայց անտանելի հիւրերը տակաւին շարունակում էին իրանց արբեցութիւնը. նա սպասում էր, որ վերջացնեն, որ քնեն, որպէս զի ինքը կարողանայ գնալ Սառայի եւ Ստեփանիկի մօտ։

Բայց պէտք էր գոնէ գիտենալ թէ ինչով վերջացաւ հարեւանի տնում։ Զուլֆն համբերել չը կարողացաւ. այդ միտքը սաստիկ անհանգստացնում էր նրան։ Նա մի բան պատճառ որոնելով, վեր կացաւ, մտաւ մի փոքրիկ սենեակ, որին կոչում էին "գաղտիկ" եւ ծառայում էր որպէս պահարան։ Այս սենեակից պատի միջով մի նեղ ծակ բացվում էր ուղիղ հարեւանի տան մէջ։ Այսպիսի ծակեր գիւղի համարեա բոլոր տների մէջ կային եւ վտանգի ժամանակ ծառայում էին որպէս գաղտնի հաղորդակցութեան խողովակներ։ Հարեւանի տանը մի բան պատահելիս, ծակից ձայն էին տալիս եւ լսում էր միւս հարեւանը։ Աւելի մերձաւոր կամ բարեկամ տների մէջ այս ծակերը այնքան լայն էին, որ նրանց միջով կարելի էր տալ եւ առնել փոքրիկ իրեղէններ։ Շատ անգամ վառած ճրագ էին տալիս միմեանց, երբ հարեւանի տանը լուցկի չը կար։

Զուլֆն կանգնած էր ծակի առջեւ, տեսնում էր տան մի մասը եւ լսում էր հեռեւեալ ձայները.

— Ոչ կոտորենք ձեզ, թէ ցոյց չը տաք... ի՞նչ եղան... մեզ ասացին, որ այստեղ են... դուք թագցրիք... տուեցէ՛ք... շուտ արէ՛ք... թէ չէ, ձեր կնիկ-

ները կը տանենք... այս սպառնալիքներն էին կարդում թուրքերը։

Հարեւան Զաքօն նրանց ոտքերի առջեւ ընկած աղաչում էր եւ պաղատում էր, ասելով.

— Աստուած, երկինք, գետինք թող վկայ լինեն, որ այստեղ չեն... մի սպանէք ինձ... ահա իմ առնը ձեր առջեւն է... ինչ որ ուզում էք, արեցէք...

Այս տեսարանը ներկայացնում էր մի եւ նոյն անցքը որ հին ժամանակներում պատահեցաւ Սոդոմի մէջ, երբ քաղաքի սրիկաները մօտեցան Ղովտի տանը եւ պահանջում էին նրանից, որ տայ իրանց ձեռքը իր հիւրերին։ Իսկ բարեսիրտ նահապետը աղաչում էր նրանց, որ հանգիստ թողնեն իր հիւրերին եւ առաջարկում էր իր աղջիկներին... Բայց Իսրայէլի Ս. Հովան խստասիրտ էր եւ վրէժխնդիր, նա պատժեց մարդկային չարութիւնը. կրակով եւ ծծումբով այրեց այդ անբարոյական քաղաքը։ Իսկ Հայաստանի Աստուածը տեսնում էր չարութիւնը, աւելի վատթար քան թէ Սոդոմի մէջ, եւ անպատիժ էր թողնում չարագործին։

Զուլֆն ամբողջ մարմնով դողդողալով, դեռ նայում էր եւ ականջ էր դնում։ Նա լսեց մի շառաչիւն եւ տեսաւ, որ հարեւան Զաքօն գլորուեցաւ եւ ընկաւ յատակի վրայ... ճրագը հանգցրին։ Զուլֆն այժմ էլ ոչինչ չէր տեսնում, միայն լսում էր խառնաձայն աղաղակներ. "Ամա՛ն... վա՛յ... թո՛ղ, տուր... մի սպանիր... ես կը մեռնեմ... ո՞ւր ես տանում"...

Դրանք հարեւան Զաքօի տան կնիկների եւ աղջիկների հառաչանքներն էին...

— "Լռիր, անզգամ"... լինում էր այդ հառաչանքների պատասխանը։

ԼԲ.

Վերադառնալով իր տեղը, Զուլֆն գտաւ հիւրերին մի եւ նոյն դրութեան մէջ։ Դեռ խմում էին։ Տէրտէրը տաղ էր ասում, իսկ տիրացու Սիմոնը ձայնակցում էր նրան, էֆէնդին էլ կամաց-կամաց քնթի տակից մռմռում էր։ Նրանց ուրախութեանը չափ չը կար։ Ի՞նչ հոգ, թէ հարեւանի տանը ինչ էր կատարվում։ Զուլֆն մտածեց յայտնել նրանց, գուցէ մի օգնութիւն կը հասցնէին, եւ մօտենալով տէրտէրին, նրա ականջին ասաց, թէ ինչ տեսաւ Զաքօի տանը։ Միայն նա թադցրեց, թէ Սառան եւ Ստեփանիկը պահուած են իրանց տնում։ Մի անբացատրելի բնազդական զգացմունք փականք էր դրել Զուլֆի լեզուի վրայ լռել այդ մասին։

Նա հայ կնոջ սովորութեան համեմատ հիւրերի հետ չէր խօսում եւ տէրտէրին հաղորդածը այնքան համառօտ եւ անլսելի ձայնով կատարուեցաւ, որ միւսները ոչինչ չը հասկացան։ Միայն տեսնելով քահանայի այլայլուած դէմքը եւ այն անհանգստութիւնը, որ պատճառեց նրա մէջ հարսի խօսակցութիւնը, հիւրերը անհամբերութեամբ հարցրին.

— Ի՞նչ է պատահել։

— Գաղաննէր, գաղաննէր.. գոչեց քահանան ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, — տասերկու առաքելոց եւ երեք հարիւր վաթսուն ու վեց հայրապետաց անէծքը թող ձեզ վրայ լինի, նզովեալ արմատներ...

— Ի՞նչ է պատահել, կրկնեց էֆէնդին։

Տէրտէրը պատմեց ինչ որ հաղորդել էր նրան Զուլֆն եւ խնդրեց էֆէնդուց օգնել թշուառներին։

Կան մարդիկ, որոնք վտանգի, դժբախտութեան ժամանակ եւ ուրիշներին հասած նեղութեան ժամանակ,

փոխանակ փրկութեան հնարների վրայ մտածելու, փոխանակ շուտափոյթ օգնութեան ձեռք մեկնելու, սկսում են քննադատել դժբախտութեան պատճառները, եւ իրանց խիղճը հանգստացած են համարում, երբ մեղադրանքի մի նշոյլ են գտնում։ Ի հարկէ, այդ դատաստանը կատարվում է իւրաքանչիւրը մարդու հասկացողութեան համեմատ։ Էֆէնդին ոչ միայն անիրաւ եւ անբարոյական չէր համարում պատահած անցքը, այլ արդարացնում էր նրան, որպէս հետեւանք, որի պատճառը իր կարծիքով դատապարտելի էր։ Այս մտքով նա հարցրեց.

— Ասեցէք, տէր հայր, դիւժն էլ այդ բանը կ'անէր, ինչ որ տանուտէր Յաչօն արեց, իր մօտ պահելով այնպիսի կասկածաւոր մարդիկ, որոնք գիւղացիներին խելքից հանելով, զանազան յիմարութիւններ էին քարոզում։

— Յիմարութիւն է, շատ յիմարութիւն, պատասխանեց քահանան. — բայց խեղճ գիւղացիները ինչով են մեղաւոր, որ մի քանի խենթերի պատճառով թուրքերը բոլորին էլ կրակի մէջ են գցում։ Մեր հարեւան Զաքօն շատ ողորմելի մարդ է. նա այնքան երկչոտ է, որ մինչեւ անգամ իր շուաքից էլ վախենում է. նրան ինչքա՞ն են չարչարում. նրա ընտանիքը ինչքա՞ն են բռնաբարում, այդ ի՞նչ անգթութիւն է։

— "Դալար ծառն էլ չորի հետ խառնուած այրվում է„... աշխարհի կարգը այդպէս է, տէր հայր, ո՞վ է ջոկում թացը չորից... պատասխանեց էֆէնդին, ինքն էլ զարմանալով իր բազմախմաստ խօսքի վրայ։ — Երբ Աստուած պատուհաս է ուղարկում մարդերին պատժելու համար, արդար երեխային մեղաւոր ծերի հետ գերեզման է տանում, չարն ու բարին խառնվում են միմեանց հետ... Այսպէս է լինում եւ կառավարութիւնների

վրէժխնդրութիւնը, երբ պէտք էր պատժել մի հասարակութիւն։ Գիւղացիներին վնաս կը հասնի... ասում եմ ձեզ, տէր հայր, բոլոր գիւղացիներին...

Քահանան պատասխանելու մի խօսք եւս չը գտաւ։ Էֆէնդու բերած ապացոյցը շատ զօրաւոր էր։ Խօլերայի կամ ժանտախտի ժամանակ, երբ մարդիկ պատժվում են իրանց մեղքերի համար, միթէ արդարների եւ մեղաւորների մէջ խտրութիւն է դրվում, — չորն էլ թացի հետ այրվում է... Այդպէս էր մտածում տէրտէրը։ Նա մինչեւ անգամ մոռացաւ հարեւան Զաքօին, եւ Էֆէնդու վերջին խօսքերը յիշեցրին նրան մի բան, որ աւելի մօտ էր նրա սրտին։ Նա ասաց.

— Եթէ բոլոր գիւղացիների տները այնպէս կը թաքնեն, որպէս այսօր կողոպտում էին Ծերունի Խաչօի տունը, իմ ապառիկները խօ կը կորչեն...

— Այդ մասին դուք անհոգ կացէք, տէր հայր, պատասխանեց Էֆէնդին, — ես էգուց բոլորը հաւաքել կը տամ։ Բայց դուք այն ասացէք, տէր հայր, Խաչօն ինքը մեղաւոր չէ՞, որ այսպէս պատժվում է։

Խաչօի այն օրուայ անցքը իր վրայ դարձրեց բոլոր գիւղացիների ուշադրութիւնը, թէեւ գործի մանրամասնութիւնը ոչ ոքին յայտնի չէր, այսուամենայնիւ, բոլորը մեղադրում էին նրան։ "Հային ի՞նչ սաղ կը գայ զէնքը", ասում էին նրանք, "եթէ կրակը տալու լինես երեխայի ձեռքը, առաջ իր մատը կ'այրէ"... Քահանայի կարծիքը շատ չէր տարբերվում այս տեսակ մտածութիւնից։ Նա Էֆէնդու հարցին պատասխանեց.

— Ես մի բան գիտեմ, որդի, երբ Ջհուդները սրոք եւ բրոք եկան Տէրն մեր Յիսուս Քրիստոսին բռնելու, Պետրոս առաքեալը սուրը քաշեց, ղարկեց եւ քահանայապետի Ծառայ Մաղքոսի ականջը կտրեց։ Այն ժամանակ Տէրն մեր Յիսուս Քրիստոս սաստեց Պետրոսին, ասելով, որ սուրը իր տեղը դնէ, որովհետեւ սուր բանեցնողը սրով կը կործանուի։ Այս խրատը մենք պէտք է չը մոռանանք, եթէ ուզում ենք քրիստոնէական հաւատի դէմ չը մեղանչել։

— Փառաւորուիս, տէր հայր, լաւ ես հասկացել, ասաց Էֆէնդին, — իսկ այն տեսակները կարդացի՞ք։

— Կարդացի. մի հատ ընկել էր տիրացու Սիմոնի ձեռքը, բերեց ինձ մօտ, միասին կարդում ենք, կարդում ենք, ոչինչ չենք հասկանում։ Ասում եմ, օրհնածներ, գրում էք, օրինաւոր բան գրեցէք, որ համ հոգու, որ համ մարմնի շահ լինի, որ մարդ կարդայ, իր մեղքերը զղջայ. այս տեսակ ծռտի-պռտի բաներից ի՞նչ օգուտ։ — Տիրացու Սիմոն, դրուստ չէ՞մ ասում, դու էլ խօ կարդացիր։

— Ես չը հաւանեցի, պատասխանեց մանկավարժը, որ առիթ ունեցաւ իր գիտութիւնը ցոյց տալու, — բոլորը սատանայական բաներ էին։ Եթէ Այսմաւուրքից կամ հարանց վարքից գրէին, ժողովուրդը կը կարդար եւ կը խրատուէր։ — Բայց ես ուրախ եմ, որ Վարդանը պատժուեցաւ, շատ հպարտ տղայ էր։ Մի անգամ մտնում է իմ դպրոցը, ասում է. ի՞նչ ձեր գործն է կրթութիւնը, դուք երեխաներին փչացնում էք, գնացէք իշաներ արածացրէք։ Այդ ասելու խօսք է. կարծես, ինքը ինձանից շատ է կարդացել։

— "Հշի քայլին աւելի է ցաւեցնում, քան թէ ձիունը" — խօսեց Էֆէնդին։ — Այդ Վարդանը ինձ էլ շատ անգամ վերաւորել է։

Այսպէս տէրտէրը, մանկավարժ տիրացուն եւ երկրի պաշտօնական մարդը, իւրաքանչիւրը իր դատողութիւններն

էր յայտնում ցաւալի անցքերի մասին, եւ նրանցից ոչ ոք չէր մտածում, թէ ինչ էր կատարվում Հարեւան Զաքօի տանը։ Նրանցից ոչ ոք չէր ցաւակցում, թէ ինչ դրութեան մէջ էր այս դիշեր տանուտէր Յուսէֆի ընտանիքը։ Այդ մարդը, որի բարբարոսութիւններին այնքան պարտական էին գիւղացիները, այժմ բոլորի բարկութեանը առարկայ դարձաւ, որովհետեւ նրա վարմունքը գիւղացիների կարծիքով դատապարտելի էր։ Ամէն մարդ պաշարուած էր մի ողբասփռելի սոսկումով եւ սպասում էր մի դառն եւ զարհուրելի վախճանի։ Միայն Թոմաս էֆէնդին, այդ բոլոր չարագործութիւնների հեղինակը, ուրախ էր եւ մի առանձին դիւական հրճուանքով մեծ բաւականութիւն էր գտնում սրտի մէջ, տեսնելով, որ իր ցանած սերմերը խոստանում էին տալ ցանկացած պտուղները։

— Կրկնում եմ, ասաց նա գործի տեղեակ մարդու եղանակով, — որ շատ կը վնասուեն գիւղացիները։ Ժամանակը վատ է. ամէն տեղ պատերազմի պատրաստութիւններ են տեսնվում, այդ խառն միջոցներում այդպիսի ցոյցերը սաստիկ պատժվում են կառավարութիւնից։

Պատերազմի անունը լսելիս, տէրտէրը սարսափուեցաւ, ոչ այն պատճառով, որ պատերազմը զանազան նեղութիւններ եւ չքաւորութիւններ էր սպառնում գիւղացիներին, այլ նա կրկին մտաբերեց իր ապառիկները։

Եթէ պատերազմը սկսուի, ասաց նա, — գիւղացիներից այնքան տուլքեր կը պահանջեն, որ դժուար կը լինի հաւաքել իմ ապառիկները։

Դուք անհոգ կացէք, տէր հայր, պատասխանեց էֆէնդին, — ես չեմ թողնի, որ ձեր ապառիկները մինչեւ պատերազմի սկսուելը։

Այդ միջոցին տիրացու Սիմոնը մտեցաւ տէր հօրականջին եւ կրկին յիշեց նրա իր աշակերտներից ստացնելիք ապառիկների մասին, եւ կրկին պատասխան ստացաւ, որ համբերէ։ Ում ինչ տեղը ցաւում է, նրա վրայ էլ խօսում է։ Ծէրտէրին եւ տիրացուին հետաքրքրող հարցը այժմ նրանց ապառիկներն էին։

— "Ինչը թէեւ ինքը մի բան չէ, բայց նրա մազը մախմուր է սրբում"[1], ասաց էֆէնդին, — դուք խօ խմանում է.ք, տէր հայր, այդ առածը։ Գիւղացին էլ այդպէս է։ Նա ինքը թէեւ հագին պատառոտած շորեր ունի, բորիկ ոտներով է մեն գալիս, բայց աղաների հագած մախմուրը նրա քրտինքի գնովն է առնվում։ Նա թէեւ քաղցած է մնում, շատ անգամ պատառ հաց չէ գտնում, բայց աղաների սեղանը նա է զարդարում ամէն տեսակ բարիքներով։ Իսկ դուք, տէր հայր, երեւում է, չը գիտէք գիւղացիներից օգուտ քաղել, եթէ գիտենայիք, այսքան ապառիկներ չէիք ունենայ, եւ այս դիշեր մեզ առանց "մազայի" չէիք խմացնի։

Վերջին խօսքերը ազդեցին քահանայի վրայ եւ նա առանձին դառնասրտութեամբ պատասխանեց.

— Ի՞նչ անեմ, էֆէնդի, մեր՝ տէրտէրներիս՝ ձեռքերը կապուած են, մեզ՝ ձեզ նման փայտ չէ տուած, որ ծեծենք, որ գիւղացին վախենայ։ Մեր վէնքը շատ թոյլ է... Ի՞նչ անեմ... Ուզիրն ասեմ, շատ անգամ սիրտս լցվում է, չեմ համբերում, սկսում եմ անիծել... բայց գիւղացիները այժմ այնքան թերահաւատ են դարձել, որ անէծքից էլ չեն վախենում... էլ ուրիշ

[1] Այդ առածը թուրքական է, արեւելքում մահմետականների մէջ խոզի մազը պիղծ համարուելով, հագուստ կամ մի ուրիշ բան մաքրելու համար վրձինները պատրաստում են էշի մազերից։

ինչ զէնք ունենք։ Բայց նրանք էլ մեղք չունեն. քրդերը նրանց մօտ ի՞նչ են թողել, որ մենք կարողանանք մի բան պահանջել։ Ա՛խ, անիծուին այդ քրդերը, եթէ նրանք չը լինէին, ես այսքան ապառիկներ չէի ունենալ։ Հիմայ որ պատերազմը սկսուի, քրդերը բոլորովին կը կատաղեն...

— «Հշը խօ էշ է, բայց ջորին աւելի դէշ է», պատասխանեց էֆէնդին իր սովորական ձեւով. — քրդերը ջորու նման չար են, որովհետեւ անհարազատ են։

Ջորիների համեմատութիւնը քրդերի հետ, ոչ միայն էֆէնդու, այլ առհասարակ հայերի կարծիքով, այն նշանակութիւնն ունի, որ քրդերը անիրաւ եւ չարագործ են նրա համար միայն, որ ջորու նման անհարազատ եւ խառնածին են։ Անհարազատների վարքի մասին միշտ վատ համարում ունի մեր ժողովուրդը։ Բայց ինչ որ ճշմարիտ է, այն է, որ քրդերը խառնուելով հայերի հետ, թէեւ մի կողմից կորցրին իրանց ազգային բուն տիպը, բայց միւս կողմից ստեղծեցին մի նոր եւ աղնիւ ցեղ։ Դարերով ընտրելով հայոց պատանիների եւ աղջիկների ամենագեղեցիկները եւ վայելչահասակները (քուրդը բարձրահասակ կինը շատ է սիրում) նրանք գեղեցկացրին իրանց ցեղը։ Որի ընդհակառակն, հայերը կորցնելով իրանց միջից ընտիր մասը, հետզհետէ տգեղացան, հետզհետէ այլանդակուեցան։ Ով որ լաւ հետազօտել է Թուլքաց Հայաստանի քրդերի եւ հայերի ընդհանուր գործը, նրանց մէջ մեծ նմանութիւն կը գտնէ, որովհետեւ քրդերը ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ հայերից յառաջ եկած մի նոր ցեղ։

Գիշերից բաւական անցել էր արդէն։ Զուլօն, հեռու նստած էր հիւանդ մանուկի մօտ, տխրութեամբ

էր լսում հիւրերի խօսակցութիւնը, որ նրա համար խիստ ձանձրալի էր։ Նա անհամբերութեամբ սպասում էր, որ նրանք վերջացնեն, վերկենան քնեն, որպէս զի ինքը կարողանայ գնալ Սառայի եւ Ստեփանիկի մօտ տեսնելու, թէ ի՞նչ դրութեան մէջ են նրանք։

Բայց էֆէնդին դեռ եւս քնելու նպատակ չունէր. նա տէրտէրի հետ բաւական խօսելիքներ ունէր, միայն տիրացու Սիմոնի ներկայութիւնը արգելք էր լինում։ Այս պատճառով ակնարկեց նա, թէ ցանկանում է քնել, որովհետեւ առաւօտեան շուտ պիտի վերկենայ, եւ կարեւոր գործեր ունի։ Տիրացուն բարի գիշեր մաղթելով, հեռացաւ։ Նրա դնալուց յետոյ տէրտէրը ասաց.

— Նօթը վարդապետից աւել գիտէ թշուառականը, ափսոս, մի քիչ խմելու հետ սէր ունի. տեսաք, ինչպէս լաւ կարդաց իմ ապառիկների հաշիւը։

— Տիրացու Սիմոնի՞ համար է՞ք ասում, հարցրեց էֆէնդին, — այո՛, շատ լաւ կարդաց։

Բայց էֆէնդուն չէր հետաքրքրում ոչ տիրացու Սիմոնը եւ ոչ էլ նրա ունեցած բարձր գիտութիւնը։ Նա առիթ էր որոնում խօսելու մի առարկայի մասին, որի համար յատկապէս այս գիշեր եկել էր տէրտէրի տունը։

Այդ միջոցին քահանան կամեցաւ հանել կիսամաշ վերարկուն, որովհետեւ մասամբ խմելուց եւ մասամբ տան տաքութիւնից բաւական շոգ էր զգում։ Անզգուշութիւնից վերարկուի թեւքը պատռուեցաւ։ Էֆէնդին ասաց նրան.

— Տէր հայր, վերարկուդ շատ է հնացել, ինչո՞ւ նորը չես կարել տալիս։

— Օրհնած, ինչո՞վ կարել տամ, դուք խօ տեսաք իմ ապառիկները։ — Այդ վերարկուն էլ լուսահոգի Կարապետ էֆէնդունն էր, նա մեռաւ, ինձ տուեցին

որպէս "կողպուա„. եօթն տարի է, որ հաղնում եմ։ Ներանից յետոյ, իմ մեղքից, հարուստներից ոչ ոք չի մեռել, որ վերարկուս նորոգէի...

— Ես քեզ համար մի լաւը կարել կը տամ, դուք լաւ քահանայ էք, ասաց էֆէնդին, — հագէք եւ միշտ օրհնեցէք ինձ։

— Երեք հարիւր վաթսուն ու վեց հայրապետաց օրհնութիւնը թող ձեզ վրայ լինի, որդի, ասաց քահանան եւ սկսեց "պահպանիչ„ կարդալ։

— Բայց մի ուրիշ խնդիրք էլ ունեմ, էֆէնդի, աւելացրեց նա, — դուք որ կաք, մեր թաղն ու պարծանքն էք. մենք ուրախանում ենք եւ ամեն օր փառք ենք տալիս Աստծուն, որ հայերից էլ ձեզ նման աղաներ կան, որոնք մուդիրի, գայմագամի եւ փաշայի մօտ համարձակ նիստուկայ ունեն եւ ամեն բան կարող են խօսել։ Ի սէր ազգի եւ ի սէր մեր սուրբ հաւատի աղաչում եմ ձեզ, մի՛ թողէք տանուտէր Խաչօին եւ ընտանիքը անօրէնների ձեռքում. դուք որ կամենաք, կարող էք նրանց ազատել. խեղճ են, հայ քրիստոնեայ են, օգնեցէք նրանց։ Ինչ էլ որ լինի նրանց յանցանքը, մենք պարտաւոր ենք ծածկել, նրա համար որ, մեր մեջ եւ մեր արիւնից են։ Ես էլ չեմ հաւանում նրանց գործածը, բայց "ով իցէ, որ ոչ մեղցէ„...

Քահանայի խօսքերը, թէեւ մի առանձին տպաւորութիւն չունեցան էֆէնդու սրտի վրայ, բայց նրան պատճառ տուեցին յայտնելու այն, ինչ որ վաղուց առիթ էր որոնում ասել տէրտէրին։

Էֆէնդին պատասխանեց, թէ ինքը պատրաստ է եւ կարող է ազատել տանուտէրի ընտանիքին հասած դժբախտութիւնից, եւ չի թողնի, որ նրա գլխից մի մազ

անգամ պակասի, եթէ տանուտէրը իր կողմից կը կատարէ էֆէնդու խնդիրքը։ Եւ յիշեցնելով քահանային նրա մի տարի առաջ հաղորդած գաղտնիքը Հալայի մասին, էֆէնդին ասաց, որ այնօրից սիրում է այդ աղջկան, եւ կը ցանկանար, որ նա իր կինը լինէր։ Եթէ տանուտէրը կը կատարէ այդ ցանկութիւնը, էֆէնդին պատրաստ էր օգնել նրան։ Բայց հակառակ դէպքում, նա ստիպուած էր թոյլ տալ, որ իշխանութիւնը վարուէր օրէնքի եւ արդարութեան համեմատ, որ անտարակոյս կը վերջանար տանուտէրի ամբողջ ընտանիքի բնաջինջ լինելով եւ նրա հարստութեան յաղթունիս դրաւուելով։ Եւ յիշելով քահանայի, որպէս հասարակաց հօր պարտաւորութիւնները, էֆէնդին խնդրեց տէրտէրից, որ նա յանձն առնէ դիմել ծերունի Խաչօին եւ նրա հետ խօսել այդ մասին, քանի որ դեռ ուշ չէր, քանի որ դեռ կարելի էր գործը ուղղել եւ գալոց չարիքների առաջը առնել։

— Կարդս թող վկայ լինի, ասաց տէրտէրը մի առանձին ուրախութեամբ, — ես էգուց առաւօտեան կը գնամ տանուտէրի մօտ եւ բոլորը կարգի կը դնեմ, որպէս ձեր կամքն է։ Խաչօն պէտք է փառք տայ Աստծուն եւ մի քանի մատաղներ թող կտրէ սրբերին, երբ ձեզ նման մարդը ցանկանում է նրա փեսան լինել։

Էֆէնդու դէմքի վրայ երեւաց մի խորամանկ ժպիտ, եւ կատակի ձեւով պատասխանեց.

— Երբ կը կատարէք այդ բոլորը, այն ժամանակ ձեր հին վերարկուն կը նորոգուի...

— Իսկ իմ ապառիկները...

— Այդ մասին անհոգ կացէք...

ԼԳ.

Դառն եւ սոսկալի գիշերը անցաւ։ Առաւօտեան Ծերունի Յաչօի տունը նմանում էր այն սգաւոր տներին, որտեղից մի քանի մեռելներ միանգամից պէտք է դէպի գերեզման տարուէին։

Առաջ դուրս բերին Վարդանին։ Նա հանգիստ էր. նրա դէմքը չէր արտայայտում խռովութեան մի նշոյլ անգամ. կարծես, նրա հետ ոչինչ չէր պատահել. միայն շղթաների վրայ կարելի էր նկատել մի արհամարհական հեգնութիւն, որ արտասանում էին՝ «ի՞նչ են ուզում անել այդ յիմարները»... Հինգ զինուորներ պատրաստուած էին Վարդանին տանելու փաշայ էֆէնդու մօտ։ Նրը որ նրանք նատեցրին ձիու վրայ եւ կամենում էին ոտները ձիու փորի տակով շղթայել, նա առանց ընդդիմադրութեան թոյլ տուեց, թէեւ դա մի սարսափելի տանջանք էր՝ անշարժ կապուած լինել ձիու մէջքի վրայ։ — Այդ աւելորդ է, նկատեց նա, — եթէ ես ցանկանամ փախչել, ձեր շղթաները չեն օգնի... Զինուորները ուշադրութիւն չը դարձրին եւ կապեցին։ Դրանով եւս չը բաւականանալով, կապեցին եւ թեւքերը ետեւի կողմից մէջքի վրայ, եւ պարանի ծայրերը երկու ձիաւոր զինուորներ բռնած, պատրաստուեցան տանել։ Բացի երկու զինուորներից, կարգուած էին եւ երեք պահապաններ։

Թէեւ ռամիկ ամբոխը հետաքրքրվում է այս տեսակ տեսարաններով, բայց գիւղացիներից ոչ ոք չը յայտնուեցաւ տեսնելու, թէ ինչպէս են աքսորում Վարդանին, այն մարդուն, որ այնքան աշխատել էր, որ այնքան գործել էր նրանց համար... Բոլորը այժմ խորշում էին Ծերունու տնից, որպէս ժանտախտով վարակուած մի բնակարանից։

Կանանցից ոչ ոք չէր մնացել տանը. բոլորը թագնուած էին զանազան տեղերում։ Հայրապետը եւ Ապօն բանտումն էին. Վարդանից յետոյ հերթը հասնելու էր նրանց։ Յաչօի միւս որդիները, որ ազատ էին, ցոյց չը տուեցին իրանց։ Միայն Ծերունի հայրը դուրս եկաւ ճանապարհ դնելու Վարդանին։ Վերջին դժբախտութիւններից յետոյ խեղճ մարդը բոլորովին սպանուած էր։ Դառն հալածանքը, բռնի անարգութիւնը եւ գաղանային անգթութիւնը խսպառ մաշել էին նրան։ Նա մօտեցաւ, գրկեց Վարդանին եւ արտի սաստիկ շարժմունքից մի բառ անգամ չը գտաւ յայտնելու իր ցաւակցութիւնը։ Մի քանի կաթիլ արտասուք ասեցին շատ բան, ինչ որ չէր կարող ասել լեզուն։

— Սիրտդ պինդ պահիր, Ծերունի հայր, պատասխանեց նրան Վարդանը անխռով ձայնով. — ով որ ջրի մէջն է մտնում, թրջուելուց երկիւղ չը պիտի ունենայ... Մնացէք բարեաւ։

Զինուորները ոչինչ չը հասկացան, եւ Վարդանի ձին իրանց առջեւը դցած, սկսեցին տանել։ Ծերունին երկար նայում էր նրանց ետեւից, մինչեւ այնքան հեռացան, որ բոլորովին անյայտացան։

Նա խորասուզուած տխուր մտածութիւնների մէջ, վերադարձաւ տուն։ Ինչո՞ւ Վարդանին միայն տարան. ինչո՞ւ Հայրապետին եւ Ապօին թողեցին. ինչո՞ւ իրան եւս չէին կալանաւորում, այլ պահում էին ազատ, թէեւ հսկողութեան ներքոյ. դրանց մէջ ի՞նչ գաղանիք կար։ Այդ հարցերը անհանգստացնում էին նրան։ Ծերունուն դեռ յայտնի չէր Թոմաս էֆէնդու ծրագրի բուն բովանդակութիւնը։ Նա այնպէս էր կարգադրել գործը, եթէ Ծերունին չընդունէր նրա առաջարկութիւնը Լալայի վե-

բաբերութեամբ, այն ժամանակ միայն իր վրէժխնդրութեան լիակատար դառնութիւնը պիտի թափէր խեղճ Ծերունու ընտանիքի վրայ։ Նա Վարդանին աքսորել տուեց, նա պ. Սալմանին մատնեց, որովհետեւ զրանց վտանգաւոր էր համարում իր պաշտած թուրք կառավարութեանը։ Բայց Ծերունի Խաչօի եւ նրա որդիների մասին այս տեսակ կասկած չունէր. նրանց խառնեց մեղադրութեան գործի մէջ այն մտքով միայն, որ մի մեծ եւ ծանր դժուարութեան մէջ դնելով նրանց, առիթ ունենայ ինքը պաշտպան եւ ազատիչ հանդիսանալ, եւ դրանով պարտաւորացնելով նրանց, յետոյ իրաւունք ունենայ որպէս վարձատրութիւն՝ փոխարէնը խնդրել Հալայի ձեռքը։ Ահա որպիսի վաճառականական մտախոհութիւններ դրդեցին էֆէնդուն գործել մի մեծ չարութիւն, որի թշուառ հետեւանքը իր բոլոր սատանայական խելքով նախատեսել չը կարողացաւ։

Բայց Թոմաս էֆէնդին այս առաւօտ չը յայտնուեցաւ։ Ծերունին ցանկանում էր տեսնել նրան, ցանկանում էր լսել նրա վճռական խօսքը, թէ ինչով կը վերջանայ այս բոլորը։ Նա դեռ հաւատում էր էֆէնդու խոստմունքներին, նա դեռ յիշում էր այն խօսքը՝ «տանուտէր Խաչօ, չեմ թողնի, որ քո գլխից մի մազ անգամ պակսի»...

Էֆէնդու փոխարէն յայտնուեցաւ տէր Մարուքը — նրա պատգամաւորը, որ խոստացել էր առաւօտեան գնալ տանուտէրի մօտ եւ խօսել Հալայի մասին։ Դժբախտութեան բոպէներում քահանայի ներկայութիւնը թէեւ մխիթարութիւն է պատճառում, բայց Ծերունու վրայ խիստ անախորժ տպաւորութիւն գործեց։ Նա քահանաների մասին մի առանձին նախապաշարմունք ունէր եւ

նրանց երեսը տեսնելը միշտ համարում էր մի անաջողութեան նախազգացութիւն։ Բայց տէր Հայրը զգուշութեամբ մի կողմը տարաւ նրան, յայտնելով, թէ կարեւոր խօսելիք ունի, եւ այդ փոքր ինչ հանգստացրեց Ծերունուն։ Երկուսը միասին նստեցին պարտէզի մի խուլ կողմում, ծառերի հովանու տակ։

Տէր Հօր դեսպանախօսութեան յառաջաբանը եղաւ մի շարք մխիթարական խօսքեր, մի շարք խրատներ, որ իր ձեւով քարոզում էր նա եւ հաստատում էր սուրբ գրքից բերած օրինակներով։ Նա Յոբ երանելիի չարչարանքները յիշելով, ասում էր, թէ Աստուած շատ անգամ իր ծառաների հաւատը փորձելու համար, դցում է նրանց զանազան տեսակ նեղութիւնների մէջ, միայն պէտք է համբերող լինել, պէտք է չը յուսահատուել, որովհետեւ Նա վերջը կը փրկէ իր հաւատացեալներին անօրէնի չարութիւնից եւ յաւիտենական փառքի կ'արժանացնէ եւ այլն։

Վերջացնելով իր խրատները, տէր Հայրը մօտեցաւ բուն առարկային, որի մասին խօսելու համար եկած էր։ Եւ հարանախօսութեան մէջ բանակցող միջնորդների սովորական եղանակով, նա նոյնպէս իր առաջարկութիւնը սկսեց մի առակով.

— «Մի թագաւորի որդի, ասաց նա, գնացել էր որսի. գիշերը վրահասնելով, չը կարողացաւ վերադառնալ եւ մնաց անտառի մէջ մի հովիւի խրճիթում։ Հովիւի հիւրասիրութիւնից շատ գոհ մնաց նա, բայց առաւել գրաւեց նրա սիրտը հովիւի գեղեցիկ աղջիկը։ Միւս օրը թագաւորի որդին դարձաւ իր պալատը, յայտնեց հօրը, թէ ցանկանում է հովիւի դստեր հետ ամուսնանալ։ Հայրը խենթի տեղ դրեց որդուն եւ սաստիկ բարկացաւ

նրա վրայ։ Բայց երկար ընդդիմութիւնից յետոյ երբ տեսաւ, որ անկարելի է որդուն համոզել, իր նախարարներից մէկին ուղարկեց, որ գնայ Հովիւի հետ հարսնախօսութիւն անէ։ Նախարարը յետ դարձաւ, պատասխան բերեց, թէ Հովիւը չընդունեց իր աղջիկը Թագաւորի որդուն տալ։ Թագաւորը զարմացաւ եւ ուղարկեց մի այլ նախարար աւելի բարձր աստիճանով, քան թէ առաջինը։ Սա էլ նոյն պատասխանը բերաւ։ Յետոյ Թագաւորը ուղարկեց իր առաջին վէզիրին, նա էլ մերժում ստացաւ։ Վերջապէս Թագաւորը ճարահատուելով, ինքը անձամբ գնաց եւ միւսների նման դատարկ վերադարձաւ. Հովիւը նրան եւս մերժեց։ Թագաւորը զարմացաւ, կանչեց իր մեծամեծներին, նրանց հետ խորհուրդ արաւ։ Սրանցից մէկը, որ աւելի փորձուած եւ խելացի մարդ էր, խորհուրդ տուեց Թագաւորին ուղարկել Հովիւի մօտ իր նման մի Հովիւ, ասելով, թէ Հովիւը կը հասկանայ Հովիւի լեզուն եւ կարող կը լինի համոզել նրան։ Ընտրեցին Թագաւորի Հովիւներից մէկին եւ ուղարկեցին։ Հովիւը առանց պատրաստութեան, առանց փառաւոր շքեղութեան, առեց իր հովուական ցուպը եւ ոտքով սկսեց դիմել դէպի աղջկայ հօր խրճիթը։ Հայրը սիրով ընդունեց նրան, միասին ճաշեցին, կերան, խմեցին, ուրախացան, վերջը Հովիւը յայտնեց Թագաւորի խնդիրքը, ասելով. — Ինչո՞ւ դու չուզեցիր աղջիկդ տալ Թագաւորի որդուն։ Հայրը պատասխանեց. — Օրհնած, ես էլ մի մարդ եմ, իմ անձնասիրութիւնը ունեմ, Թագաւորը ինչ ուղարկեց ինձ մօտ քեզ նման մի օրինաւոր մարդ, որ ես իմ աղջիկը նրա որդուն կնութեան տայի։

Վերջացնելով իր առակը, տէր հայրը աւելացրեց. — Ես էլ Հովիւ եմ, դու էլ Հովիւ ես, տանուտէր Խաչօ, որովհետեւ մենք երկուսս էլ ոչխարների փոխարէն ժողովուրդ ենք կառավարում։ Ես գիւղի քաղաքէն ժողովուրդ ենք կառավարում։ Ես գիւղի քաղ հանան եմ, դու գիւղի տանուտէրը, եւ եկել եմ քեզ մօտ նոյնպիսի մի առաջարկութիւնով, որպէս Հովիւը Հովիւի մօտ։

— Ի՞նչ առաջարկութիւն, հարցրեց Ծերունին տրհաճութեամբ, որին խիստ ծանր էր իր սրտի մի այնպիսի տխուր տրամադրութեան ժամանակ լսել քահանայի անտեղի խօսքերը։

Տէր հայրը պատասխանեց, թէ Աստուած կամեցել է Ծերունու այժմեան նեղութեան մէջ մխիթարել նրան եւ փրկութեան դուռը բաց անել նրա առջեւ։ Թոմաս եւ փրկութեան դուռը բաց անել նրա առջեւ։ Թոմաս էֆէնդին խնդրում է Հալայի ձեռքը եւ խոստանում է աղաւոել Ծերունուն իր տան վրայ հասած փորձանքից։ — Պէտք է փառք տալ Աստծուն, որ էֆէնդու նման մարդը բարեկամութեան եւ օգնութեան ձեռք է մեկնում։

Քահանան որքան ճարպիկ կերպով տարաւ իր բանախօսութիւնը, այսուամենայնիւ, սպասած աջողութեանը չը հասաւ։ Գուցէ մի ուրիշ ժամանակ եւ ուրիշ հանգամանքների մէջ նրա խօսքերը համակրութիւն կը գտնէին, որովհետեւ ինքը Ծերունի Խաչօն վաղուց մտածում էր իր աղջիկը էֆէնդուն տալ։ Բայց այժմ հանգամանքները տարբեր կերպարանք էին ստացել։ — Այժմ, երբ նրա երկու որդիները բանտի մէջ էին, երբ ինքը պահապանների հսկողութեան ներքոյ էր, երբ նրա տան կնիկները անպաշտպան թագնուած էին օտարների մօտ, երբ իր երկու բարեկամները՝ Վարդանը եւ Պ։ Սալմանը մատնուեցան իշխանութեան ձեռքը, երբ իր տան կայքը իր աչքի առջեւ թալանում էին, — մի այսպիսի ժամանակ նրան յայտնում էին չարագործի առաջարկու-

թիւնը, որ ինքն էր պատրաստել յիշեալ դժբախտու-
թիւնները։ Ծերունու մինչեւ այն րոպէն փակուած աչքերը
միանգամից բացուեցան։ Նա տեսաւ իր առջեւ անդունդը,
որ փորել էր էֆէնդու խորամանկ ձեռքը։ Նա յիշեց
Վարդանի խօսքերը, որ էֆէնդին զանազան տեղերում
խաբէութեամբ ամուսնացել է եւ թողել է իր կնիկները։
Մինթէ նոյն խաբէութիւնները նա դործ չէր դնում եւ
Լալայի վերաբերութեամբ։ Նա մտաբերեց էֆէնդու վար-
մունքը, որ սկզբից մինչեւ վերջը ունէր մի ներքին դաղտնի
կապ, որ ներկայացնում էր մի շարք խորամանկ դործողու-
թիւններ, որոնց բոլորը թեքվում էին դէպի այն
նպատակը, որ նա հնար դտնէ Լալային որսալու։ Էֆէնդին
առաջինը եղաւ, որ յայտնեց նրան Պ. Սալմանի կալանաւո-
րելը։ Ո՞րտեղից դիտէր նա. մինչդեռ այդ կատարուել էր
ծածուկ, դիշերային մթութեան մէջ, եւ ամբողջ դա-
ւառում դիւղացիներից ոչ ոքին յայտնի չէր։ Էֆէնդին
առաջինը եղաւ, որ լուր տուեց, թէ նրա տանը խուզարկու-
թիւն պէտք է լինի, եւ իրան բարեկամ ու մտերիմ
ձեւացնելով, կարողացաւ խաբել Ծերունուն, կարողացաւ
Պ. Սալմանի թղթերը ձեռք բերել, եւ փակելով Ծե-
րունու տան դաղտնի պահարանի մէջ, բալանին պահեց
իր մօտը։ Ի՞նչ մտքով։ Մինթէ նա չէր կարող թղթերը
իր հետ տանել եւ ոչնչացնել։ Բայց թողեց Ծերունու
տան մէջ, որ հարկաւորած ժամանակ բայ անէ դաղտնի
պահարանը եւ թղթերը ոստիկանութեան ձեռքը տալով,
ասէ ահա ձեզ ապացոյց այդ մարդիկների դաւակցութեան։
Ամբողջ անցեալը մի առ մի պատկերացաւ Ծերունու աչքի
առջեւ, եւ նա սարսափելով նկատեց, որ ինքը խաբուած
է։ Եւ այս պատճառով բաւական դառնութեամբ պա-
տասխանեց քահանային.

— Ծէր հայր, ձեր առակը բաւական անյարմար էր
ձեր ընդունած միջնորդութեան, բայց Թոմաս էֆէնդին
եթէ իսկապէս թագաւոր լինէր, ես դարձեալ այդ շանը
աղջիկ չէի տալ։ Թող ինչ լինելու է լինի։ Ես իմ տան
քանդուելը եւ իմ ամբողջ ընտանիքի կուորածը աւելի
բարւոք կը համարեմ, քան թէ ազատութիւն դտնել այն
չարագործի ձեռքով, որ բոլորը ինքը պատրաստեց մեզ
համար։ Ես այդ հասկանում եմ... ես բոլորը հասկանում
եմ... նա խաբեց ինձ... բայց դրանից յետոյ պլ եւս
խաբել չէ կարող....

Քահանային անհասկանալի էին թուում տանուտէրի
թէ բարկութիւնը եւ թէ նրա մթին խօսքերը, որով-
հետեւ բուն իրողութիւնից տեղեկութիւն չունէր։ Եւ
տանուտէրը հարկաւոր չը համարեց նրա հետ երկար
բացատրութիւնների մէջ մտնել, մանաւանդ երբ մտածեց,
որ նա Ստեփանիկի կնքահայրն էր եւ նրա աղջիկ
լինելը, բացի քահանայից մի օտար մարդ չը դիտէր,
ուրեմն ոմ պէտք է յայտնած լինէր էֆէնդուն այդ
դաղտնիքը, եթէ ոչ ինքը քահանան։

Նա համարեա դժդոհութեամբ հեռացաւ Ծերունու
տնից, իր մտքում ասելով. "Աստուած առաջ մարդու
խելքը դլխից կ'առնէ, յետոյ հարստութիւնը"...

Էֆէնդին տէրտէրի տան մէջ անհամբերութեամբ
սպասում էր նրան։ Նրբ վերադարձաւ քահանան, նա
իսկոյն հարցրեց.

— Ի՞նչ լուր բերեցիք։

— Զը դիտեմ, ինչ ասեմ, պատասխանեց քահանան
շուարած կերպով. — այդ մարդը ցնորուած է։

— Մերժե՞ց։

— Այո։

— Ես այդ սպասում էի։

Կարծես, ամբողջ երկինքը փուլ եկաւ էֆէնդու գլխի վրայ եւ ճնշեց նրան իր սարսափելի ծանրութեան ներքոյ։ Նրա աչքերի առջեւը սեւացաւ, դողդողաց, եւ ընկաւ դետին։ Երկար այնպէս անմռունչ ընկած էր, եւ երբեմն անդիտակցաբար ձեռքը տանում էր դէպի ճակատը, ծեծում էր գլուխը եւ փետում էր իր մազերը, ասելով. "Հիմայ ի՞նչ անեմ... ա՛խ, ի՞նչ անեմ„...

Ամբողջ տիեզերքի մէջ չը կայ մի բան, որ այնպէս խոնարհեցնէր մարդերին, որպէս սէրը։ Մարդկութեան ամենասարսափելի հրէշները, որ դղրդում են աշխարհները, որ ներկում են արիւնով երկիրները, որ ահ ու դողի մէջ են պահում ազգերը, — խոնարհվում են, ծունկ են չոքում սիրած կնոջ առջեւ. այստեղ միայն նրանք մարդ են եւ հանդիսանում են մարդկային բոլոր թուլութիւններով։

Թոմաս էֆէնդին այժմ սիրում էր Լալային, սիրում էր ճշմարիտ եւ ջերմ սիրով։ Նրա բոլոր վայրենի եւ դազանային անգթութիւնները հալվում, մաշվում էին, ոչնչանում էին այդ սիրոյ առջեւ։ Դեւը երբ սիրում է, հրեշտակ է դառնում։ Իսկ էֆէնդին սիրելով, սկսեց զղջալ։

Նա իր կեանքում երբէք չէր սիրել. եւ դրանով կարելի է բացատրել նրա բնաւորութեան այն սեւ կողմերը, որ կեանքի մէջ ոչինչ սուրբ բան չը կար նրա համար։ Աշխարհային գործերի մէջ որքան խորամիտ էր նա, որքան ճիշտ հաշուող էր, եւ նպատակին հասնելու համար որքան սատանայական վարպետութիւն ունէր, — այնքան հոգեկան շարժումների մէջ անզգայ էր։ Լալայի սէրը վառեց հանդած սիրտը, եւ կսթեցրուց այնտեղ այն հրեղէն շողը, որ խաւար մռքի մէջ լոյս է

փայլեցնում։ Նա նայեց իր գործողութիւնների վրայ եւ սոսկաց։ "Այդ ի՞նչ արեցի ես„... մրմնջում էր նա, եւ դարձեալ փետում էր իր մազերը։

Մինչեւ այն բոպէն նա չէր հասկանում իր եղեռնագործութեան ահաւորութիւնը, մինչեւ այն բոպէն նա կարծում էր, թէ նպատակի համար ամեն միջոց կարելի է գործ դնել։ Բայց այժմ զգում էր, թէ ինչ մեծ չարիք գործեց ինքը։ Սկզբում նա մտածեց մի փոքրիկ խաղ խաղալ ծերունու հետ, եւ երեխայի նման առնելով իր ձեռքը կրակի մի փոքր կայծ, դրանով կամենում էր վախեցնել նրան, որ կատարէ, ինչ որ ինքը կը պահանջէ։ Ցանկարծ այդ կայծից առաջ եկաւ մի ահագին հրդեհ, որ հանգցնել ինքը անկարող էր։ — "Ա՛խ, այդ ի՞նչ արեցի ես„... դարձեալ բացականչեց նա։

Քահանան ահուդողով նայում էր էֆէնդու տանջանքների վրայ եւ կարծում էր, թէ նա հոգեվարքի մէջ է գտնվում։ Եւ իրաւ, նա թուլացած, ընկած էր, եւ մարմնի վրայ երբեմն երեւում էին տենդային ցնցումներ, իսկ շրթունքը սարսափելի կերպով դողդողում էին։ Երկար այդ դրութեան մէջ չարչարվում էր նա, մինչեւ աչքերը բաց արեց, եւ դառնալով քահանային, ասաց.

— Ինչ որ ասաց ծերունի Խաչն, բոլորը ճշմարիտ է, տէր հայր. — ես անարժան եմ նրա աղջկան։ Ի՞նչ կապ կարող է լինել մի ինձ նման եղեռնագործի եւ մի անմեղ հրեշտակի մէջ։ Անիծիր ինձ, տէր հայր, ես անէծքի եմ միայն արժանի...

Նա դարձեալ ընկաւ ուշեղնացութեան մէջ։ Քահանան կարծեց, թէ մեռաւ նա։

— Ա՛խ, իմ ապառիկները... կոչեց նա, — կորան իմ ապառիկները...

ԼԴ.

Դառնանք դէպի մեր պատմութեան սկիզբը։

Այժմ ընթերցողը, կարծեմ, ճանաչում է, թէ ով էր այն երիտասարդը, որ Բայազէտի բերդի սարսափելի պաշարման ժամանակ ընդունեց բերդապահ Շտօկվիչի ձեռքից նամակը, եւ իրան խենթ ձեւացնելով, մտաւ պաշարող քիւրդերի մէջ, անվտանգ անցաւ թշնամու բանակից, եւ մի քանի օրից յետոյ նամակը հասցրուց գեներալ Տէր-Ղուկասովին։ Ընթերցողը նոյնպէս յիշում է, որ երիտասարդը, չընդունելով գեներալի առաջարկութիւնը՝ մնալ իր մօտ, թիկնապահի պաշտօն վարել, փառքի եւ աստիճանի տէր լինել, — թողեց ռուսաց բանակը եւ շտապեց մէկի կեանքը վտանգից ազատելու համար։

Այդ երիտասարդը Վարդանն էր։ Տեսնենք, ուր գնաց նա։

Հեծնելով իր ձին, որ խլել էր մի քրդից, որին ապանեց ձորի մէջ, Վարդանը սկսեց դիմել ուղիղ դէպի Աշկերտի դաւառը։ Այնտեղ գտնվում էին նրա հոգու ամենամօտ առարկաները։ Այնտեղ էր Ծերունի Խաչի ընտանիքը, որի մէջ անցուցել էր այնքան շատ բախտաւոր ժամանակներ. այնտեղ էր գեղեցիկ Հալան, որին տուել էր իր ամբողջ սիրտը. այնտեղ էին իր սիրելի ընկերները, որոնց հետ ուխտել էր անձնազոհութիւն մի սուրբ գործի համար, — բոլորը այնտեղ էր, ինչ որ Վարդանի համար պաշտելի էր, ինչ որ նրա համար նուիրական էր...

Բայց ինչ վիճակի մէջ թողեց Վարդանը այդ բոլորին, երբ ինքը շղթայակապ տարուեցաւ Թուրքաց զինուորական գործակատարի մօտ։ — Ծերունի Խաչն իր որդիների հետ բանտարկուած էին. նրա ընտանիքը

ցրիւ էր եկած եւ իւրաքանչիւրը մի տեղում թաղնուած էր. Հալայի բախտը կախուած էր երկու որսորդների՝ Թոմաս էֆէնդու եւ քուրդ բէկի գազանային մրցութիւնից. Պ. Սալմանը կալանաւորուած էր. Մէլիք-Մանսուրը իր խումբով գնաց նրան ազատելու. յաջողեցաւ արդեօք, թէ ոչ, այդ մասին ոչինչ չը գիտէր Վարդանը։

Բոլորին թողեց նա մի թշուառ, օրհասական դրութեան մէջ։ Այն օրից անցել էր մի եւ կէս ամիս, եւ նրանց մասին ոչինչ տեղեկութիւն չունէր։ Այդ մի եւ կէս ամսուայ մէջ որքան փոփոխութիւններ եղան, որքան անցքեր անցան։ Ռուսները պատերազմ հրատարակեցին Թուրքերի դէմ։ Գեներալ Տէր-Ղուկասովի յաղթական զօրքերը տիրեցին Բայազէտի եւ Աշկերտի ամբողջ գաւառները եւ մօտեցան Էրզրումին։ Ճնշուած, հարստահարուած հայ ժողովուրդը, անցնելով ռուսաց իշխանութեան ներքոյ, սկսեց աղատ շունչ քաշել։ Ցանկարծ պատերազմի բախտը փոխուեցաւ։ Գեներալ Տէր-Ղուկասովը ստիպուեցաւ թողնել իր սիրած երկիրները եւ վերադառնալ ռուսաց սահմանի վրայ։ Եւ նրա ապրիլի 18-ին տիրած Բայազէտը յունիսի 27-ին կրկին անցաւ Թուրքերի ձեռքը։

Վերջին անցքերից Վարդանը տեղեկութիւն չունէր։ Նա չը գիտէր, թէ գեներալ Տէր-Ղուկասովի զօրքերի տեղատուութեան ժամանակ ինչեր պատահեցան։ Նա չը գիտէր ալաշկերտցոց թշուառ դաղթականութիւնը եւ այդ դաղթականութիւնը առաջ բերող տխուր պատճառները։

Անցքերը ամենակարճ ժամանակի մէջ զարմանալի փոփոխութիւն ստացան։

Վարդանը, երկու եւ կէս ամիս առաջ, շղթայակապ, թուրք զինուորներով շրջապատուած, Ծերունի Խաչի

տնից տարուեցաւ Թուրքաց զինուորական գործակատարի մօտ։ Դեռ չը հասցրած, ճանապարհին վրայ հասան Վարդանի երկու ծառաները՝ Սաքօն ու Նղօն եւ մի յանդուգն կռուից յետոյ կարողացան ազատել իրանց տիրոջը։ Նոյն կռուի մէջ վէրք ստացաւ Վարդանը եւ համարեա իր ծառաների ձեռքի վրայ տարուեցաւ ռուսաց հողի վրայ, Սուրմալու գաւառը հայոց մի գիւղի մէջ։ Հազիւ մի փոքր առողջացել էր նա, որպէս կամաւոր մտաւ հայոց միլիցիայի մէջ։ Նոյն ծառայութիւնը յանձն առեցին եւ նրա երկու ծառաները՝ Սաքօն ու Նղօն։ Դրանք Բայազէդի պաշարման ժամանակ երկուսն էլ սպանուեցան։ Բայց ի՞նչ հնարքով դուրս եկաւ Վարդանը բերդից, — այդ մենք գիտենք։

Այժմ տխուր եւ միայնակ մտաւ նա այն հովիտը, ուր գտնվում էր Օ... գիւղը։ Ի՞նչ տեսարան էր ներկայացնում այդ հովիտը մի քանի շաբաթ առաջ։ Ո՞րքան կենդանի եւ գեղեցիկ էին այնտեղի դաշտերը, ձորերը եւ կանաչապատ լեռները։ Հովիտի ամբողջ տարածութիւնը, պատած հասունացած հունձքի արտերով, ծփում էր, ալեկոծվում էր ոսկեգէն ծովի նման։ Լեռների կուրծքի վրայ, մրջնի նման ցրուած, արածում էին անասունների հօտերը։ Անուշ եւ քաղցր մեղեդիներով լսելի էր լինում անհոգ հովիւի սրինգի ձայնը։ Հարուստ բնութիւնը եւ աշխատասէր մարդը, ձեռք ձեռքի տուած, արտադրում էին երկրի հրաշալիքը։ Իսկ այժմ, — այժմ ամեն ինչ փոխուել էր։ Այժմ հովտի ամբողջ տարածութիւնը ներկայացնում էր մի սգաւոր անապատ։ Կրակը հրդեհել էր եւ լափել էր հունձքի բոլոր արտերը, ծածկելով դաշտերի անհուն մակերեւոյթը սեւ մոխրով։ Ո՞վ էր գործել այդ չարութիւնը. ո՞վ էր ոչնչացրել մշակ մարդու

արդիւնաբերութիւնը, որի վրայ թափուել էր այնքան շատ քրտինք եւ աշխատութիւն։ Վարդանը դժուարանում էր հասկանալ։ Նա աչք էր դարձնում մի ժամանակ գեղեցիկ եւ մարդաշատ գիւղերի վրայ. դրանք նոյնպէս ներկայացնում էին մի-մի մոխրի կոյտեր, այստեղ եւս կրակը եւ հրդեհը թողել էին իրանց կործանիչ հետքերը։ Կեանքը դադարել էր ամեն տեղ. դաշտերից չէր լսվում երկրագործի ուրախ երգը. արօտամարդերի վրայ անասուններ չէին արածում. ամեն ինչ լռել էր, ամեն ինչ դտնվում էր խուլ մեռելութեան մէջ։ Կարծես ապականութեան կործանիչ դեւը դեռ նոր անցել էր այդ թշուառ երկրի վրայով, ոչնչացրել էր բոլորը, որ ստեղծել էր մարդու աշխատասէր ձեռքը։ Ի՞նչ էր պատահել...

Ցուլիսի արեգակը սաստիկ այրում էր։ Կէսօրից բաւական անցել էր, երբ Վարդանը մտաւ Օ... գիւղը։ Նա նմանում էր այն լեգենդական բնակութիւններին, որ չար կախարդի անէծքով միանգամից աւերակ էին դարձել։ Տները, ուր մի ժամանակ կեանք էր շնչում, ուր մարդիկ էին ապրում, այժմ դարձել էին նրանց գերեզմանը։ Ամեն ինչ թաղուած էր տխուր եւ այլանդակ փլատակների տակ։ Վարդանը ուշակորոյս խելագարի նման անցնում էր իր ծանօթ փողոցներով։ Տեղ-տեղ նա տեսնում էր մարդկային մարմնի մնացորդներ։ Անշուշտ այստեղ կատարուել էր մի սարսափելի կատաստրոֆայ, մի աղետալի անցք։ Նա անցաւ եկեղեցու մօտից. Աստուածոյ տունը ոչինչով չէր որոշվում իր շուրջը գտնուած աւերակներից։

Նա մօտեցաւ Ծերունի Խաչօի ամրոցին։ Շրջապատի պատերն էին մնացել միայն, այն եւս տեղ-տեղ

քանդուած։ Ներս մտաւ։ Նրա առջեւ բացուեցաւ մի ցաւալի տեսարան։ Ցան պարտէզը բոլորովին մերկացել էր ծառերից, այն գեղեցիկ եւ ստուերախիտ ծառերից, որոնց հովանու տակ անցուցել էր նա այնքան քաղցրիկ ժամեր նաղելի Լալայի հետ։ Այժմ ո՞ւրտեղ էր նա... Նրա համար էր եկած Վարդանը... Նրան էր որոնում այդ տխուր աւերակների մէջ... Մի՞թէ յափշտակեց, տարա՞ւ նրան քուրդ բէկը... Թէ ընկաւ նա տաճիկ զինուորի ձեռքը... Վարդանին ափրեց մի տեսակ սոսկում, մի տեսակ քարացնող սարսուռ, երբ յանկարծ բացուեցաւ նրա առջեւ սարսափելի իրականութիւնը։ Ներկայի մարդը, կարծես, միանգամից փշրուեցաւ մի դառն եւ ամենածանր հարուածի ներքոյ։ Արիւնը սաստիկ հոսանքով զարկեց նրա գլխին, եւ լուսաւոր աշխարհը մթնեց նրա առջեւ։ Նա այլ եւս ոչինչ չէր տեսնում. նա այլ եւս ոչինչ չէր զգում։ Նա իր մարմինը մէքենաբար ցած թողեց մի թումբի վրայ եւ երկար գլուխը երկու ձեռքով բռնած, գտնվում էր խորին-տենդային ապշութեան մէջ։ Ցանկարծ նրան երեւութացաւ նաղելի պատկերը, նոյնպէս տխուր, նոյնպէս յուսահատ եւ նոյնպէս արտասուալից աչքերով, որպէս տեսել էր նրան այն վերջին գիշերուայ լռութեան մէջ, երբ նա իր աղաչաւոր թեւքերը փաթաթած սիրած երիտասարդի պարանոցին, ասում էր նրան. "տա՛ր ինձ... հեռացրո՛ւ այդ երկրից... ես վախենում եմ քրդերից„... Ինչո՞ւ չը տարաւ նրան Վարդանը, ինչո՞ւ թողեց նրան Վարդանը... Վարդանը այժմ այդ խորհել չէր կարող. շուարման մէջ կաշկանդվում է, դադարում է միտքը։

Բայց ո՞րքան դառն յիշողութիւններ զարթեցնում էին նրա մէջ այդ տխուր աւերակները։ Շատ ժամանակ

չէր անցնել, որ նրանք շէն ու հաստատուն էին, շատ ժամանակ չէր անցել, որ նրանց մէջ բնակվում էր մի հոյակապ ընտանիք լի եւ խաղաղական կեանքով։ Ի՞նչ եղաւ, ո՞ւր էր այժմ այդ ընտանիքը։ Նա աչք ձգեց կանանոցի վրայ, որի ծխից եւ մուխից մրոտած չորս պատերն էին միայն մնացել. առաստաղը իջած էր։ Այստեղ ծերունու բազմաթիւ հարսները, աղջիկները եւ թոռները, ամբողջ օրը մի կենդանի շարժողութեան մէջ, վժվժում էին, գործում էին, աշխատում էին, եւ միշտ ուրախ էին, որովհետեւ ապրուստի կարօտութիւն չունէին։ Այժմ այլ եւս չէր լսվում ո՛չ երեխաների աղմուկը եւ ո՛չ էլ հոգատար մայրերի զգուշաւոր ձայնը։ Նա իր հայեացքը դարձրեց ծերունի Յաչօի օդայի վրայ, որ բոլորովին կործանուած էր։ Նա յիշեց այն աղմկալի գիշերները, երբ ինքը Պ. Սալմանի, տանուտէրի եւ նրա որդիների հետ, այդ օդայի մէջ, ջերմ ոգեւորութեամբ վիճում էին, խորհում էին, եւ հարիւրաւոր ծրագիրներ էին պատրաստում թշուառ ժողովրդին իր ներկայ տառապանքներից ազատելու, եւ նրան մի բախտաւոր կեանք ստեղծելու համար։ Իսկ այժմ բոլորը ոչնչացած էր տեսնում, թէ խորհողներին եւ թէ խորհուրդը...

Ահա այնտեղից մարդիկ են երեւում։ Մինչեւ այն րոպէն ամբողջ գաւառում ոչ մի մարդկային արարած չը տեսաւ Վարդանը։ Աւերակների մէջ մարդիկ էին երեւում։ Այդ բաւական ուրախացրուց Վարդանին։ Նա մոտեցաւ։ Մի քանի ողորմելի քրդեր, բրիչները ձեռք առած, փորում էին տան փլատակների հողակոյտերը։ Վարդանը ճանաչեց նրանց։ Դրանք ծերունի Յաչօի հովիւներն էին իրանց կնիկների եւ երեխաների հետ։ Ցղամարդիկը փորում էին հողը, իսկ կնիկները նրանց

մէջ իրեղէններ էին որոնում։ Հրդեհից կործանուած տան մէջ դեռ շատ բաներ մնացել էին հողի տակ առանց այրուելու։

— Աստուած ուժ տայ, ասաց Վարդանը ողջունելով այն ձեւով, որպէս ողջունում են բանուորներին։

— Բարով եկար, պատասխանեցին նրան։

— Ի՞նչ էք պտռում։

— Ձեր բարի աչքերով տեսնում էք, պատասխանեցին քրդերը, շարունակելով իրանց գործը։

Վարդանը դառնալով քրդերից մէկին, հարցրեց.

— Ճանաչո՞ւմ ես ինձ, Խլօ։

— Ի՞նչպէս չը ճանաչել քեզ, աղա, դու մեր տիրոջ՝ տանուտէր Խաչօի բարեկամն էիր, շատ անգամ այս տանը ապրանք էիր բերում ծախելու, եւ ամեն անգամ չէիր մոռանում քո ծառայ Խլօի երեխաներին մի բան բաշխել։ — Տէ՛ս, այդ էլ քո տուածն է, նա ցոյց տուեց իր կնոջ հագուստը, որ կարուած էր կարմիր զօլաւոր չթից։

Վարդանը սկսեց հարցնել, թէ ինչ պատահեց այս տանը հետ, ինչո՞ւ այս գիւղը այսպէս աւերակ դարձաւ, ի՞նչ եղան նրա բնակիչները։

Հովիւը բրիչը դրեց գետնին, սրբեց ճակատի քրտինքը եւ նստեց, կարծես, նրա պատմութեան համար բաւական հանգստութիւն պէտք էր։

— Թո՛ղ մեր թշնամիներին էլ չը պատահի այն, ինչ որ պատահեցաւ այս տան հետ, ասաց նա ցաւալի ձայնով։ — Մենք, իրաւն ասեմ, չը գիտենք բոլորը. մենք այստեղ չէինք. մենք ոչխարները տարել էինք սարը արածացնելու։ Երբ մութը պատեց, հօտը քշում էինք դէպի գիւղը. (այն գիշեր իմ կինը մի վատ երազ էր տեսել, ես միշտ սպասում էի, որ մի չար բան պիտի պատահի)։ Դեռ գիւղին չը հասած, յանկարծ յարձակուեցան մի խումբ քրդեր եւ սկսեցին թալանել հօտը։ Ես իմ ընկերների հետ վազեցինք դէպի գիւղը օգնութիւն կանչելու։ Տեսանք կրակը բռնել էր բոլոր գիւղը եւ ամեն կողմից վառվում էր։ Տեսանք՝ քրդերով լցված էր ամեն տեղ։ Շտապեցինք դէպի այդ տունը, տեսանք, նոյնպէս վառվում էր. ոչ մի կողմից հնար չը կար ներս մտնելու։

— Ի՞նչ եղան տանեցիք։

— Թող մեր որդիների գլխին գայ, եթէ նրանց մի բան պատահած լինի։ Տանուտէր Խաչօն Հայրապետի եւ Ապօի հետ տանը չէին։ Նրանց դեռ շատ օրեր առաջ տարել էին դատաւորի մօտ։ Ասում են, որ բանտումն էին։ Կնիկներից նոյնպէս տանը ոչ ոք չը կար։ Տանը մնացել էին ծերունու միւս որդիները. նրանց հետ ինչ պատահեց, — մեղ յայտնի չէ։ Մենք եկանք եւ տունը կրակի մէջ տեսանք։

— Մեր աէրը՝ ծերունի Խաչօն բարի մարդ էր, շարունակեց հովիւը, — նա այնքան վախենում էր Աստուծուց, որ մինչեմ էլ կոիւ չէր տայ։ Ամենքը այս տան մէջ բարի էին, ճանճերին էլ չէին վշտացնում։ Մեղ պահում էին իրանց որդիների պէս։ Բայց թո՛ղ անիծուեն էշիրաթները[1]. ամեն ինչ տակնուվրայ արեցին... ամեն բան փչացրին...

— Ի՞նչ պատահեց գիւղացիների հետ։

---

[1] Էշիրաթ կոչվում են վայրենի, վրանաբնակ քրդերը, որոնք լաւ համարում չունեն իրանց հաստատաբնակ ցեղակիցների մօտ, որովհետեւ այս վերջիններիս հետ վարվում են նոյնպէս բարբարոսաբար, որպէս օտարների հետ։

— Գիւղացիների մէկ մասը կոտորեցին, մէկ մասը գերի տարան, շատերն էլ փախան եւ ազատուեցան։

"Ջրի մէջ խեղդուող մարդուն ջրից բռնուելն էլ մեծ մխիթարութիւն է„։ Հովհի պատմութիւնը որքան ցաւալի եւ որքան դառն լինէր, այսուամենայնիւ, աղդեց Վարդանի մէջ յոյսի մի փոքրիկ նշոյլ։ — Դեռ ամեն ինչ կորած չէ... մտածեց նա։ Վարդանին յայտնի էր, որ Ծերունի Խաչօն իր երկու որդիների՝ Հայրապետի եւ Ապօի հետ պէտք է բանտարկուած լինէին. բանտը կարող էր պատսպարան լինել նրանց քրդերի բարբարոսութիւնից զերծ մնալու, եթէ նոյն իսկ բանտի մէջ նրանց սպանած չը լինէին։ Նրան յայտնի էր նոյնպէս, երբ խուզարկուները հսկողութեան ներքոյ առին Ծերունի Խաչօի տունը, նա հեռացրեց իր տնից կանանց սեռը, որոնք անշուշտ պէտք է ծածկուած լինէին բարեկամների եւ ազգականների մօտ, եւ Հալային անտարակոյս իրանց հետ տարած կը լինէին, եւ այսպէսով ազատ կը մնային Ծերունու տանը հասած աղէտալի դժբախտութիւնից։ Բայց ի՞նչ կը լինէր նրանց վիճակը, եթէ մի եւ նոյն դժբախտութիւնը պատահած լինէր եւ այն տների հետ, ուր պատսպարուած էին նրանք...

Հովհի խօսքերի մէջ մի մխիթարական կէտ եւս կար. "գիւղացիների մէկ մասը կոտորեցին. մէկ մասը գերի տարան. շատերն էլ փախան եւ ազատուեցան„, ասաց նա։ Գուցէ այդ փախչողների թուում լինէր Խաչօի ընտանիքը, մտածում էր Վարդանը, գուցէ Հալան եւս նրանց մէջ լինէր։ Բայց ո՞ւր գնացին, ո՞րտեղ փախան, այդ հարցերը սկսեցին տանջել Վարդանին։ Հովհիները մի որոշ բացատրութիւն տալ չը կարողացան։ Անցքերը պատահել էին գիշերով եւ այնքան յանկարծակի կերպով,

որ ամեն ինչ թաղնուած էր խաւարի եւ մթութեան մէջ։ Բայց Վարդանը իր դալու ժամանակ նկատեց, որ Աշչիերտի ամբողջ դաւառը դատարկուած էր հայերից։ Անկարելի էր, որ բոլորին կոտորած կամ գերի տարած լինէին, ուրեմն, պէտք է տեղի ունեցած լինէր մի սարսափելի գաղթականութիւն, — դէպի ո՞ր կողմը, դէպի ո՞ր երկիրը...

Լ.

Հեռանալով Ծերունի Խաչօի տան աւերակներից, Վարդանը չը գիտէր ո՞ւր գնալ։ Հովհիներից ստացած տեղեկութիւնները այն աստիճան անորոշ եւ մթին էին, որ նա դժուարանում էր մի վճռական քայլ անել։

Երեկոյեան ժամն էր արդէն. արեւը թեքվում էր դէպի իր գիշերային մուտքը։ Վարդանի աչքի առջեւ դրած էին մի եւ նոյն տխուր եւ տրտում տեսարանները. — աւերակ, անմարդաբնակ գիւղեր, մշակութիւնից զրկուած դաշտեր, եւ աւելի ոչինչ։ Մթթէ այդ ամբողջ դաւառում մի հատ հայ չէ՞ մնացել, մտածում էր նա։ Ցանկարծ դատարկ անապատի մէջ երեւաց մի մարդկային կերպարանք։ Նա դանդաղ եւ անհաւասար շարժումներով բարձրանում էր դէպի լեռան զառիվերը, երբեմն կանգ առնելով, երբեմն իր շուրջը նայելով եւ երբեմն քարերից բռնելով, որ ցած չը գլորուի։ Այսպէս հասաւ նա մինչեւ սեպացած քարաժայռի գագաթը, որ կախ էր ընկած անդունդի վրայ։ Արեւի վերջալուսով նկարուած էր նրա փոքրիկ մարմնի գծագրութիւնը, որ անշարժ արձանի նման, քարաժայռի գագաթից նայում էր դէպի լայնատարած հովիտը, ուր մի քանի օրուայ մէջ կատարվել էին այնքան շատ եղեռնագործութիւններ, այնքան շատ

աւերումներ։ Երկար այնպէս նայում էր նա, եւ կարծես, մտածում էր մի բան վճռել, որը խիստ ծանր էր նրան։ Վարդանի ուշադրութիւնը չէր կարող չը գրաւել այդ երեւոյթը, որ նախագուշակում էր մի տարօրինակ վախճան։ Նա իր ձիու սանձը քաշեց եւ սկսեց հեռուից նայել։

Վարդանը տեսաւ, որ քարաժայռի գլխին արձանացած մարմինը մի քանի յուսահատական շարժումներ գործեց, կրկին նայեց դէպի լայնատարած հովտի աւերակները, յետոյ աչքերը ձեռքերով բռնելով, իրան ցած գցեց քարաժայռի բարձրութիւնից դէպի իր առջեւ բացուած անդունդը։ Փոքրիկ մարմինը գնդակի նման գլորուելով, երբեմն քարերին զարկուելով, արագութեամբ պոռոյտվում էր, առանց մի տեղ կանգ առնելու։ Վարդանը ձին առաջ քշեց, մի բոպէում հասաւ լեռան ստորոտը, օգնութիւն հասցնելու։ Մարմինը դեռ գլորվում էր, բայց նա բոլորովին չը հասաւ մինչեւ անդունդը։ Ժայռերի պատառուածքից բուսած թուփերը բռնեցին նրան։ Վարդանը այժմ ուրախ էր, նա յոյս ունէր ազատել անձնասպանի կեանքը։ Նա վեր նայեց, տեսաւ, որ մարմինը գտնվում էր աւելի քան յիսուն ոտնաչափ բարձրութեան վրայ, եւ անշարժ բռնուած էր թուփերի մէջ։ Ի՞նչպէս ցած բերել նրան, — այդ եղաւ երիտասարդի հոգածութեան առարկան։

Նա ցած իջաւ ձիուց եւ սկսեց հետազօտել պարսպի նման վեր բարձրացած քարաժայռի մակերեւոյթը, որոնելով մի ճանապարհ, որ մատչելի լինէր թուփերին։ Ոչ մի կողմից ելք չը կար։ Մարմինը տակաւին անշարժ գտնվում էր իր տեղում, առանց կենդանութեան մի նշոյլ անգամ ցոյց տալու։ Արդեօք ի՞նչն էր ստիպել այդ թշուառին

անձնասպանութիւն գործել։ Վարդանի տխուր շրջապատը այժմ այն աստիճան խորհրդաւոր նշանակութիւն էր ստացել նրա համար, որ իւրաքանչիւր ինչին առարկայի մէջ անգամ դաղտնիքներ էր տեսնում։

Նա նկատեց, որ առանց իր կեանքը վտանգի ենթարկելու անկարելի էր ազատել թշուառին, որը դուցէ դեռ մեռած չէր, որին դուցէ դեռ կարելի կը լինէր օգնել։ Կարեկցութեան զգացմունքը նրան մոռանալ տուեց իր անձը եւ յանձն առեց մի վտանգաւոր ձեռնարկութիւն։ Նա նկատեց, որ ժայռի կուրծքի վրայ բուսած թփերից, կամ ցցուած քարերից բռնելով, կարելի էր վեր բարձրանալ, եթէ նրանք այնքան ամուր էին, որ կարողանային պահել իր մարմնի ծանրութիւնը։ Վարդանը օձի դիւրաթեքութիւն եւ կատուի արագաշարժութիւն ունէր։ Նա ձեռքը տարաւ, բռնեց առաջին սեպացած քարից, եւ ճանկրտելով սկսեց վեր բարձրանալ։ Մի քանի արշին հազիւ էր բարձրացել դեռնի մակերեւոյթից, յանկարծ ձեռքի բռնած քարի կտորը պոկուեցաւ եւ ինքը ցած գլորուեցաւ։ "Այստեղից յարմար չէ", մտածեց նա, առանց ուշադրութիւն դարձնելու իր ձեռքերի վրայ, որոնք քսուելով քարերի սուր ժանիքներին, քերթուեցան եւ արիւնը դուրս ցայտեց վէրքերից։

Վարդանը այն տեսակ բնաւորութիւններից էր, որ դժուարութիւնները աւելի բորբոքում էին նրա եռանդը, եւ կարծես, վերաւորում էին նրա անձնասիրութիւնը, թէ ինչո՞ւ յաղթել չէր կարողանում։ Նա շտապում էր։ Արեգակը մտնելու վրայ էր։ Մի քանի բոպէից յետոյ խաւարը կը թանձրանար եւ արգելք կը դնէր նրա յաջողութեանը։ Նրա գլխում ծագեց մի միտք։ Նա առեց երկայն պարանը, որ կապած ունէր ձիու թամբին։

Դա նրա զէնքերից մէկն էր եւ ծայրին կապուած էր կապարեայ մի ձուաչափ գնդակ։ Նա գնդակը վեր նետեց եւ պարանի ծայրը ամուր կերպով փաթաթուեցաւ մի ծառի ճիւղից, որ հեռու չէր անձնասպանի ընկած տեղից։ Բռնելով պարանի միւս ծայրից, նա սկսեց սարդի արագութեամբ վեր բարձրանալ, եւ մի քանի վայրկեանի մէջ գտնվում էր անշնչացած դիակի մօտ։ Նա գրկեց դիակը, եւ ո՛րքան մեծ եղաւ նրա զարհուրանքը, երբ նկատեց, որ իր գրկում գտնվում էր Թոմաս էֆէնդին։ Մի րոպէում բարկութիւնը, զզուանքը, ատելութիւնը եւ վրէժխնդրութեան կատաղի զգացմունքը փոփոխակի կերպով պաշարեցին նրա սիրտը։ Նա պատրաստ էր այդ գարշելի մարմինը կրկին ցած գլորել ժայռի բարձրութիւնից անդունդի մէջ, որ ճնացած ոսկորներն էլ ջախջախուէին, որ նա գաղանների ու դիշակեր թռչունների կերակուր դառնար։ Բայց մի՞թէ կարելի էր այսպէս անգթութեամբ վարուել անշնչացած մարմնի հետ. — այդ հեռու էր Վարդանի մեծահոգութիւնից։ Նա զգուշութեամբ դիակը պարանով ցած թողեց եւ ինքն էլ նրա ետեւից վայր իջաւ։

Վարդանի առաջին հոգսը եղաւ ստուգել՝ արդեօք նա մեռած էր, թէ տակաւին կենդանի էր։ Ոսկորները մի քանի տեղ ջարդուած էին, գլուխը եւ երեսը քարերին զարկուելով, քերթուել, այլանդակուել եւ արիւնով շաղախուած էին, բայց շնչառութիւնը դադարած չէր, երեւում էր, որ ուշագնացութեան մէջ է գտնվում։ Այդ չարագործը, որ այնքան վշտեր էր պատճառել Վարդանին, որ հազարաւոր տների կործանման եւ մի ամբողջ դաւառի ամայութեան պատճառ էր դարձել, իր այժմեան ողորմելի դրութեան մէջ շարժեց Վարդանի

գութը։ Գուցէ աւելի բարեբախտ վիճակի մէջ, եթէ էֆէնդին նրա ձեռքը ընկնելու լինէր, Վարդանը կը սպանէր նրան, բայց այժմ նրա առջեւ դրած էր մի դիակ, որին պէտք էր խղճալ, որը օգնութեան էր կարօտ։

Վարդանը շատ գործ էր ունեցել վերաւորների հետ եւ ինքը շատ անգամ վէրք էր ստացել, եւ այդ մասին հարկաւորելիք սպեղանիները նա միշտ իր հետ էր մեն ածում։ Նրա առաջին հոգսը եղաւ փաթաթել էֆէնդու գլխի եւ երեսի վէրքերը, եւ դադարեցնել արեան հոսումը։ Գիշերային խաւարը պատել էր արդէն. երկինքը ծածկուած էր սեւ թուղթերով. սաստիկ քամին եւ որոտը դուշակում էին մօտալուտ մրրիկ։ Վարդանը մտածում էր այժմ մի օթեւան գտնել։ Նա վեր առեց դիակը, կապեց ձիու վրայ, բայց չը գիտէր դէպի ո՞ր կողմը դիմել։ Մերձակայ հայոց բազմաթիւ գիւղերում մի հայ անգամ չէր մնացել։

Վարդանը մտաբերեց, որ այն տեղից ոչ այնքան հեռու պէտք է գտնուէր քրդերի մի գիւղ. սկսեց դիմել դէպի այն կողմը, իր ետեւից քարշելով ձիու երասանակը, որի վրայ կապած էր վիրաւորը։ Այժմ երիտասարդը աղօտ կերպով հասկանում էր, թէ ի՞նչ պէտք է հարկադրած լինէր էֆէնդուն, որ նա անձնասպանութեամբ աշխատում էր հանգստացնել իր խղճի խայթը։ Մի՞թէ զղջացել էր նա, որ այնքան արեան, արտասուքի եւ այնքան աւերմունքների պատճառ դարձաւ...

Վարդանի յիշողութիւնը չը խաբեց նրան. խաւարի միջից նշմարեց լոյսի նշոյները. գիւղը պէտք է այն տեղ լինէր, բայց դեռ բաւական հեռու էր։ Անձրեւը այժմ աւելի սաստիկ սկսեց աղալ. նա հանեց իր վերարկուն, որի մէջ փաթաթուած էր, եւ նրանով խնամքով

ծածկեց էֆէնդու մարմինը։ Գիշերից բաւական անցել էր, երբ նա հասաւ գիւղի մօտ։ Ցները, որպէս առհասարակ լինում են քրդերի գիւղերում, գետնափոր խրճիթներ էին։ Վարդանը մօտեցաւ առաջին հանդիպած տանը, ձեռքը մեկնեց դէպի դուռը, տեսաւ, որ բաց էր։

— Ահա մի բախտաւոր ժողովուրդ, որ գողերից երկիւղ չունի եւ քնում է առանց իր տան դուռը կողպելու, մտածեց նա։

Խրճիթում ճրագ չէր երեւում. տանեցիք պառկած էին։ Վարդանը սկսեց բաղխել դուռը։ Քանի լոպէից յետոյ ներսից լսելի եղաւ կանացի ձայն.

— Ո՞վ ես։

— Աստուծոյ հիւր եմ։

Հիւրի անունը բաւական էր, որ նրանց ներս թողնէին։ Կինը խսկոյն ճրագ վառեց եւ ընդունեց նրանց։ Երեւում էր, որ նա հանուած եւ քնած էր, որովհետեւ հագին միայն կարմիր շապիկ ունէր, որ իջնում էր մինչեւ մերկ սրունքները։ Կնիկը օգնեց Վարդանին, երկուսը միասին ներս տարան էֆէնդուն եւ պառկեցրին օթոցի վրայ։

— Հիւանդ է։

— Ոչ, վիրաւորուած է։

Մանկահասակ կինը խսկոյն բերեց մի փոքրիկ արկղիկ, որի մէջ կային զանազան տեսակ սպեղանիներ եւ մի քանի, կոպիտ կերպով պատրաստուած, վիրաբուժական գործիքներ։

— Ես մեր տան բժիշկն եմ, ասաց նա բաց անելով արկղիկը, — երբ ամուսինս կռիւի մէջ վէրք է ստանում, ես եմ դարմանում նրան։ Առաջ սկեսուրս էր բժշկում, հիմայ նա պառաւել է. ես նրանից սովորեցայ։

Վարդանը որքան մեծ հաւատ ունէր քրդերի վիրաբուժական հատութիւնների մասին, դարձեալ շնորհակալութիւն յայտնեց, թէ ինքն էլ փոքր ինչ հասկանում է այդ արհեստը, եւ առաջուց հոգացել է վիրաւորի մասին ինչ որ պէտք էր։

Այդ պատասխանը թէեւ փոքր ինչ դիպաւ մանկահասակ կնոջ սրտին, որ ցանկանում էր ցոյց տալ իր շնորհքը, այսուամենայնիւ, նա հանդստացաւ, երբ տեսաւ, որ հիւանդի վէրքերը փաթաթուած էին։

— Այժմ պէտք է ձեր ձիուն խնամք տանել, խեղճը մնաց դրսում։

— Դուք նեղութիւն մի կրէք, ասաց երիտասարդը, — միայն ինձ ցոյց տուեցէք, թէ որտեղ պէտք է կապել։

Մանկահասակ կինը առեց ճրագը, առաջնորդեց հիւրին եւ բակի մէջ ցոյց տուեց մի տեղ։ Վարդանը նայեց իր շուրջը, տեսաւ, բակը շրջապատած էր խիստ ցածրիկ ցանկապատով։

— Այստեղ երկիւղ չը կայ, հարցրեց նա։

— Ի՞նչ երկիւղ, պատասխանեց կինը ծիծաղելով, — գողը գողն անից բան չի տանի։

— Նրանի՞ ձեղ, ասաց Վարդանը իր մտքում։

Վարդանը աչք ածեց իր շուրջը, տեսաւ, որ խրճիթի մէջ բացի մանկահասակ կնոջից եւ մի քանի երեխաներից, որ պառկած էին յատակի վրայ, ուրիշ ոչ ոք չը կար։ Բայց նրանց ոտնաձայնը զարթեցրուց պառաւ սկեսուրին, որ մնացել էր աննկատելի։ Նա գլուխը բարձրացրուց, նստեց իր անկողնի մէջ, հարցնելով.

— Սարօ, դո՞ւն ես, — երկա՞ր, որդիս։

— Սարօն չէ, պատասխանեց մանկահասակ կինը, մտեռնալով — հիւր է։

Պառաւը լսելով, որ որդին չէ, գլուխը կրկին դրեց բարձի վրայ եւ խսկոյն քնեց։

— Աչքերը չէ ջոկում, կարծում է, որ որդին է վերադարձել, — իմ ամուսինը։

— Ո՞ւրտեղ է ձեր ամուսինը, հարցրեց Վարդանը հետաքրքրուելով։

— Բայազէդի մօտ. գնացել է կռուելու. մեր գիւղում մի տղամարդ չես գտնի. բոլորը այնտեղ են։ Ես էլ երկու օր է, որ եկել եմ. գնացել էի աւար բերելու։

— Շա՞տ բերեցիք։

— Քիչ չէր, Աստուծոյ տուածից պէտք է գոհ լինել, թէ շատ լինի եւ թէ քիչ։

— Ազա՜տ դուստր ազատ ժողովրդի, մտածեց Վարդանը, — որքան կեանք, որքան պարզութիւն կայ քո մէջ։ Դու ինչո՞վ ես մեղաւոր, որ քեզ սովորեցրին նայել աւարի վրայ, որպէս մի արդար վաստակի վրայ։ Եթէ դու կրթուած լինէիր կեանքի այլ պայմանների մէջ, քո այդ հարուստ ձիրքերով կը լինէիր մարդկութեան հրաշալիքը։

Վարդանը այժմ դարձաւ դէպի վերաւոր էֆէնդին. մարմինը շոշափեց, բոլորովին տաք էր. շնչառութիւնը այժմ աւելի կանոնաւոր էր. միայն երբեմն արձակում էր խուլ հառաչանքներ։ Քրդուհին կրկին սկսեց թախանձել, թէ ցանկանում է նայել վերաւորին։ Վարդանը թոյլ տուեց. նա գիտէր, որ վերաբուժութեան արհեստը շատ առաջ է գնացել քրդերի մէջ, որոնց համար վէրքը եւ արիւնը սովորական դէպքեր են, եւ նրանց բժշկութիւնը կենսական անհրաժեշտութիւններից մէկն է։

— Երկիւղ չը կայ, ասաց քրդուհին վերջացնելով իր գործողութիւնը, — վէրքերը աննշան են, բայց ոսկորների մէջ ջարդուածներ կան, երեւում է, որ հիւանդը մի տեղից պէտք է ցած ընկած լինի։

Վարդանը ոչինչ չը պատասխանեց։

— Այժմ ձեզ համար պէտք է ուտելու մի բան պատրաստել։

Երիտասարդը այժմ միայն զգաց, որ քաղցած է, որ ամբողջ օրը ոչինչ չէր կերել։ Բայց լինում են բոպէներ, որ մարդը թէեւ քաղցած է զգում, բայց ուտելու ախորժակ չունի։ Նա այդ դրութեան մէջ էր. վեշտը եւ սրտի ցաւը կշտացրել էին նրան։

— Ոչինչ պատրաստութիւն պէտք չէ, պատասխանեց նա, — ինձ միայն տուեցէք մի կտոր հաց եւ պանիր։

Վարդանի համեստ պահանջը վերաւորեց քրդուհու հիւրասիրական զգացմունքը, որ ցանկանում էր նրա համար մի տաք կերակուր պատրաստել։

— Մի խնայեցէք մեզ, ասաց նա ժպտելով, — մենք այժմ այնպէս աղքատ չենք, որպէս առաջ։

— Այո՛, Բայազէդը հարստացրեց ձեզ...

— Բացի Բայազէդից, մենք այստեղ լաւ հունձ ունեցանք... Անցեալ տարի հիւանդութիւնը մեր բոլոր անասունները կոտորեց, մնացինք առանց կտոր հացի, բայց այս տարի Աստուած փոխարէնը տուեց։ Այս տեղի բոլոր հայերը դաղթեցին, գնացին եւ իրանց հարստութեան մեծ մասը թողեցին քրդերին։

— Ո՞ւր գնացին։

— Չեմ իմանում. բայց այնքան շտապով եւ այնքան յանկարծ եղաւ նրանց դաղթականութիւնը, որ

ժամանակ չունեցան ամեն բան իրանց հետ վեր առնել, աշխատում էին շուտով փախչել, որ Թուրքերը չը կոտորեն նրանց։

— Ազատուեցա՞ն։

— Մնացածներից շատերին կոտորեցին։

Սարսափելի իրականութիւնը փոքր առ փոքր պարզվում էր Վարդանի համար։ Անշուշտ կասարուել էր հայերի մի ընդհանուր դաղթականութիւն այս գաւառից։ Բայց դէպի ո՞ր կողմը եւ ի՞նչ պատճառով, — քրդուհին նրան որոշ բացատրութիւններ տալ չը կարողացաւ։ Վարդանը ընկաւ դառն մտածութիւնների մէջ։ Նա բոլորովին մոռացաւ իր քաղցածութիւնը, եւ մինչեւ անգամ չէր նկատում գեղեցիկ քրդուհուն, որ իսկոյն օջախի մէջ կրակ վառեց եւ սկսեց նրա համար ճուաձեղ պատրաստել։

Ուրիշ ժամանակ, սրտի աւելի ուրախ տրամադրութեան մէջ, որ եւ իցէ երիտասարդ չէր կարող առանց հիացմունքի նայել գեղեցիկ կնոջ դալար հասակի վրայ, որ իր պարզ շապիկի մէջ դարձեալ սքանչելի էր։ Գիշերային անկողնից նոր վերկացած լինելով, գլխին քող չունէր նա, միայն թանձր եւ թուխ գիսակներ պսակի ձեւով կապած ունէր սիրուն ճակատի վրայ։ Այսպիսի գլուխ այսպիսի հարուստ մազերով, այսպիսի դէմք այսպիսի փայլուն աչերով, կարող էին ունենալ լեռնային կիսամերկ յաւերժահարսունքը միայն, որոնք աղբիւրների յստակութեան մէջ են տեսնում իրանց գեղեցկութիւնը։

Լ.Զ.

Գիշերը անցել էր կէսից։ Քրդի փոքրիկ խրճիթի մէջ ճրագը դեռ վառվում էր։ Պարզ, նահապետական ընտանիքը քնած էր. բոլորը մի եւ նոյն չորս պատերի մէջ։ Մի կողմում պառաւ սկեսուրը իր անկողնի մէջ խումիում էր. նրա մօտ պառկած էին երեխաները եւ ցերեկուայ անհանգստութիւնից խառն երազներ էին տեսնում, եւ քնի քաղցրութեան մէջ անդադար խօսում էին ու ժպտում։ Իր զաւակների շաղքում պառկած էր մայրը։ Լեռնային ազատ եւ պարզամիտ աղջիկը բոլորովին բնական էր համարում անծանօթ հիւրի աչքի առջեւ անկողին մտնել։ Խրճթի տաքութիւնից նա վերմակը մի կողմն էր ձգել եւ կիսով չափ երեւում էր նրա գեղագրական կուրծքը, որ պօղած էր գլխի խիտ ծամերով։ Նրա քունը հանգիստ էր, որպէս անմեղ այծեամի քունը։

— Այժմ հասկանում եմ, թէ ինչո՞ւ մարդկութեան առաջին զոյգը բոլորովին մերկ էր ապրում, մտածում էր Վարդանը. — նրանք սկսեցին ծածկուել այն ժամանակ, երբ զգացին, թէ ինչ բան է մեղքը։ Այդ ժողովուրդը դեռ չը գիտէ, թէ ինչ բան է մեղքը, եւ այդ պատճառով նրան անծանօթ է այն գաղափարը, որ աշխարհային լեզուով կոչվում է ամօթ, պատկառանք եւ պատշաճաւորութիւն։ Ահա մի գեղեցիկ ժողովուրդ իր սկզբնական պարզութեան մէջ, դրանից կարելի է հրաշալի բան շինել։ Վայրենի տունկը, երբ պատուաստվում է մշակուած եւ աւելի քաղաքակրթուած տունկի հետ, հիանալի պտուղներ է տալիս։ Ի՞նչ կը լինէր, էթէ այդ առողջ եւ կենդանի տարրը խառնուէր հայերի հետ...

Բոլորը քնած էին. Վարդանը միայն արթուն էր։ Այսպէս երկար նստած էր նա, եւ տխուր ու խառն մտածութիւնները անկապ կերպով ամբոխվում էին նրա սրտի մէջ։ Երբեմն նա իր բորբոքուած երեւակայութեան մէջ նկարագրում էր ալաշկերացոց աղէտալի դաղթականութիւնը։ "Փոփոխական ծառը արմատ չէ տարածում մայր հողի մէջ եւ գօսանում է"։ Այդ ազգը իր պատմութեան ամբողջ ընթացքում մաշուեցաւ, գօսացաւ եւ մեծ մասամբ ոչնչացաւ իր անմիտ դաղթականութեան թափառումների մէջ եւ տակաւին խելքի չեկաւ։ — Ահա մի նոր դաղթականութիւն եւս։ Եւ շատ բնական է։ Մի ծառ, որ խորին եւ հաստատուն կերպով արմատ չէ ձգել մայր հողի մէջ, չէ կարող դիմանալ աշխարհի փոթորիկներին. — փչեց քամին, կատաղի մրրիկը նրան դուրս կը խլէ արմատից եւ կը ձգէ կորստեան անդունդի մէջ... Երբեմն նրա երեւակայութեան մէջ պատկերանում էր Գ. Սալմանի եռանդոտ դէմքը, կարծես, լսում լինէր ոգելից երիտասարդի գեղեցիկ խօսքերը, նա խօսում էր առանց լռելու, քաղցր եւ անընդհատ կերպով. թէեւ երբեմն խակ մտքեր էր յայտնում, բայց բոլորը հաստատ հաւատքով, բոլորը ջերմ սրտից բղխած։ Երբեմն մտաբերում էր նա Մելիք-Մանսուրին, այդ կոշտ, արկածախնդիր մարդուն, որ միշտ մի առանձին բաւականութիւն էր գտնում կեանքի վտանգաւոր եւ փոթորկալից աղմուկների մէջ։ Երբեմն նա մտաբերում էր Ծերունի Խաչոին, այդ առաքինի նահապետին, որ ունէր այնքան սէր եւ գութ դէպի իր կառավարութեան յանձնուած ժողովուրդը, որը պատրաստ էր ընդունել ամեն զոհաբերութիւն, դէթ մի թշուառի աչքերից արտասուքը սրբուած լինէր։ Երբեմն մտաբերում էր նրա որդիներին, որոնցից

ոմանք ստրկութեան դառն լծի տակ կորցրել էին ամեն զգացմունք դէպի անհատական ազատութիւն եւ դէպի կեանքի աւելի բարեբախտ պայմանները, իսկ ոմանք բոլոր էին յայտնում տիրող անկարգութիւնների, անարդարութեան եւ բռնակալութեան դէմ։ — Այդ բոլոր խորհրդածութիւնների մէջ նրա միտքը դեգերվում էր, պտըտվում էր, եւ անցնելով անհուն մթութիւնների միջից, վերջապէս կանգ էր առնում մի կէտի վրայ, որից այն կողմը չէր անցնում. այդ կէտը Հալան էր։

Այժմ նրա ուշադրութիւնը գրաւեց Էֆէնդին։ Նրա ընչաւութիւնը հետզհետէ ծանրանում էր, ձեռքերը անդադար շարժվում էին եւ սեղմուած շրթունքների միջից լսելի էին լինում անորոշ խօսքեր խուլ հառաչանքների հետ։ Նա գտնվում էր տենդային զառանցութեան մէջ։ Վարդանը լսում էր նրան, բայց ոչինչ չէր հասկանում։ Երեւում էր, որ նա տանջվում էր հոգեկան սաստիկ պատերազմի մէջ։ Այդ տեւեց մի քանի րոպէ, յետոյ փոքր առ փոքր սկսեց հանգստանալ։ Այդ միջոցին գլուխը վեր բարձրացրեց, ուղղուեցաւ, նստեց անկողնի մէջ, աչքերը բաց արաւ, եւ մի վայրենի հայեացք ձգելով իր շուրջը, կրկին գլուխը դրեց բարձի վրայ եւ կրկին փակեց աչքերը։

— Աղ, եթէ այստեղ մի հայ լինէր... լսելի եղաւ նրա խորին նուաղած ձայնը։

— Կայ, պատասխանեց Վարդանը մօտենալով։

— Տուր ինձ ձեռքդ։

Վարդանը զգուանքով յետ քաշուեցաւ։

— Այժմ ազատ եմ ես... ով բերեց ինձ այստեղ... ինչու այսպէս շուտ դուրս բերեցին ինձ դժոխքից... այնտեղ լաւ էր, այնտեղ շատ լաւ էր։ Կրակի ալիքների

մէջ, որպէս մի հեղէն ովկիանում ծփում էի ես... Հաղարդլխանի վիշապները իրանց սառը գրկի մէջ ճնշում էին, խեղդում էին ինձ... Հիմայ էլ տեսնում եմ նրանց, ահա այնտեղ հեռաւոր բոցերի մէջ գալարվում են, լեռների նման կուտակվում են միմեանց վրայ... Ո՛րքան քաղցր է եղեռնագործին այդ հրէշների ճանկերի մէջ տանջուել, գիշատուել, բայց բողոքելու համարձակութիւն չունենալ, եւ իրան արժանի համարել աւելի սարսափելի չարչարանքների...

Նա կրկին բաց արեց իր պղտորուած աչքերը, նայեց Վարդանի վրայ, բայց չը ճանաչեց, եւ դառնալով նրան շարունակեց.

— Ինձ վիճակուած էր, բարեկամ, ամենասոսկալի մասը Արդարադատի գեհենի մէջ. եւ դրանով ես պարծենում եմ... Այս աշխարհում ես չը կարողացայ բարձր տեղ բռնել, իսկ այնտեղ այդ յաջողուեցաւ ինձ... Ոչ ոք ինձ հետ մրցութիւն անել չը կարողացաւ: Ես տեսայ Վասակին, Մեհրուժանին, Վեստ Սարգսին, Կայէնին եւ այլ դրանց նման չարագործներին, — նրանք նախանձվում էին իմ փառքին... Ա՜խ, որքան մեծ բաւականութիւն է հրեղէն ալիքների մէջ ըղալ, զգալ նրա զարհուրելի ջերմութիւնը, այրուել, խորովել եւ երբէք մոխիր չը դառնալ... Այդ շատ լաւ է, որ վախճան չունի. — յաւիտենականութեան մէջ ամեն ինչ լաւ է...

Թէ որպիսի երեւակայական ցնորքների արտադրութիւն էին այդ խօսքերը, Վարդանին դժուար չէր հասկանալ: Բայց նա այդ խօսքերի մէջ նկատում էր ղղջացած սրտի ապաշխարանքը: Այդ պատճառով նա մոռացաւ իր բոլոր ատելութիւնը դէպի այդ թշուառ մարդը, եւ բռնելով նրա ձեռքից, ասաց.

— Զգաստացէք էֆէնդի, դուք շուտով կ՚առողջանաք. վէրքերը այնքան վտանգաւոր չեն:

— Ես լսում եմ մի ծանօթ ձայն:

— Վարդանի ձայնը:

Նա ամբողջ մարմնով դողաց, եւ հեռացնելով իրանից Վարդանի ձեռքը, գոչեց.

— Հեռացրէք ինձանից ձեր ձեռքը, ես կարող եմ պղծել նրան, հեռացէք ինձանից, ես կարող եմ թունաւորել ձեզ... Վարդան, ես ճանաչում եմ ձեզ, դուք բարի, մի եւ նոյն ժամանակ անողորմ սիրտ ունէք: Գործ դրեցէք ձեր բոլոր անդթութիւնը եւ հէնց այս բոպէում սպանեցէք ինձ. դրանով մեծ բարերարութիւն արած կը լինէք ինձ. ձգեցէք իմ դիակը Ալաշկերտի անասատների մէջ, որ ես ինքս ամոյի դարձրի. թող գազանները գիշատեն նրան: Կամ եթէ այնքան բարի կը լինէք, ձգեցէք իմ դիակը մի փոսի մէջ եւ ծածկեցէք հողով. այնտեղից ես ճանապարհ կը գտնեմ դէպի անդունդը, դէպի անշէջ հրոյ եւ տանջանքների յաւիտենական կայարանը: Բայց, ոչ, ոչ, ես Հայաստանի հողին արժանի չեմ, իմ գարշելի դիակը կը պղծէ նրա սրբութիւնը...

— Զգաստացէք, էֆէնդի, կրկնեց Վարդանը, — դուք չէք մեռնի. ես ամեն խնամք դործ կը դնեմ, որ դուք կենդանի մնաք:

— Ես կարծում էի, թէ ինձ հեշտ կը լինի մեռնել եւ աչքերս յաւիտեան փակել դործած չարութիւններս չը տեսնելու համար: Բայց ոչ, երկնային Վրէժխնդիրը աւելի զօրաւոր է քան ինչին մարդը: Նա ինձ թողեց, որ դեռ եւս երկար տեսնեմ այն երկիրները, որոնց աւերիչներին առաջնորդ դարձայ, որ դեռ եւս երկար տեսնեմ թշուառ շինականների խրճիթները, որ ես

դատարկեցի բնակիչներից, — տեսնել եւ տանջուել խղճի դառն խայթից, դա սարսափելի տանջանք է... Ես ամբողջ գաւառների սպանման գործիք դարձայ, բայց իմ անձս սպանել չը կարողացայ:

Վերջին խօսքերը արտասանեց նա խորին մաղձային դառնութեամբ, որ արտայայտում էր նրա բարոյական տանջանքը, թէ որ աստիճան ձանձրացել էր կեանքից եւ ցանկանում էր հանգստութիւն գտնել դերեզմանի մռայլութեան մէջ:

Այդ միջոցին զարթնեց տանտիկինը:

— Ձեր հիւանդը անհանգիստ է երեւում, ասաց նա, — չէ՞ք ցանկանայ մի բան:

— Ոչինչ պէտք չէ. նա ջերմի մէջ է, կարելի է շուտով կ'անցնի...

Քրդուհին մօտեցաւ հիւանդին, եւ ուշադրութեամբ նայելով նրա վրայ, հարցրուց.

— Ես ճանաչում եմ այդ մարդուն. դա Թոմաս էֆէնդին չէ՞:

— Նա ինքն է:

— Խեղճ, քանի օր առաջ տեսայ բոբիկ, գլուխը բաց եւ պատառոտած շորերով թափառում էր մեր կողմերում: Երբ մարդիկ մօտենում էին, ճչում էր, աղաղակներ էր բարձրացնում ու փախչում: Ասում էին, ցնորուած է:

Վարդանը նոր մտաբերեց, որ էֆէնդուն հանդիպեց նոյն դրութեան մէջ, որպէս նկարագրում էր նրան քուրդ կինը: Նրա մէջ երեւում էին ցնորուածի բոլոր նշանները, դեռ այն ժամանակ, քանի որ նա իրան դեռ ցած չէր գլորել ժայռի բարձրութիւնից: Բայց ինչո՞ւ խելագարուեցաւ նա. միթէ էֆէնդու նման մի փչացած

բնաւորութեան մէջ կարող էր բարոյական տանջանքը այն աստիճան հարուած պատճառել:

— Պատմում էին, թէ էֆէնդին սիրելիս է եղել մի աղջկայ, եւ ալաշկերտցոց դաղթականութեան ժամանակ կորել է աղջիկը. ասում էին, որ անյայտ մարդիկ գողացել են աղջկան:

— Ի՞նչ մարդիկ... ի՞նչ աղջիկ... գոչեց Վարդանը խռովեալ ձայնով եւ նրա դէմքը ընդունեց զարհուրելի արտայայտութիւն:

— Ձեմ իմանում, այդպէս էին ասում:

Վարդանի հարցը աւելորդ էր. նա առաջ եկաւ ակամայ հետաքրքրութիւնից, որ պատահում է յուսահատ մարդերի հետ: Վարդանը գիտէր, թէ ո՞վ էր էֆէնդու ցնորքի առարկան, այժմ նրան կորցրել էր... այժմ նրան գողացել էին... — դրանով ոչնչանում էին Վարդանի մնացած յոյսի նշոյլները, թողնելով նրա հանգած սրտի մէջ տխուր յիշողութիւնների այրուած մոխիրը միայն:

Գիշերը աննկատելի կերպով անցել էր. առաւօտեան լոյսը սկսել էր բացուել. դրսից լսելի էր լինում թռչունների ուրախ երգը. փոթորկալից եւ անձրեւային գիշերին յաջորդել էր ամառնային վարդակարմիր առաւօտը:

Ցանկալի խրճթի դռնից ուրախութեամբ ներս վազեց մի աղջիկ. երեւում էր, որ նա հեռու տեղից էր գալիս, որովհետեւ ոտքից ցգլուխ թրջուած էր եւ երկայն հագուստի ստորին մասերը թաթախուած էին ցեխի մէջ:

— Զաւ... կոչեց տանտիկինը եւ գրկեց նրան:

— Քոյրս... կոչեց աղջիկը եւ իր կարմրած թշերը մօտեցրուց նրա շրթունքին:

Վարդանը, կարծես, առժամանակ մոռացաւ իր ցաւը եւ սկսեց նայել երկու քոյրերի ջերմ դրկախառնութեան վրայ։ Եկուորը մի բարձրահասակ աղջիկ էր, ցամաք կազմուածքով եւ բաւական գեղեցիկ դէմքով։ Նա կրում էր իր քրոջ սեւ, վառվռուն աչքերը, որոնք ուրախութիւնից աւելի անհանդիստ եւ աւելի շարժուն էին այժմ։ Նրա թէ դէմքը եւ թէ անունը ծանօթ էին երեւում Վարդանին, բայց թէ ո՞րտեղ եւ ե՞րբ էր տեսել նրան, — դժուարանում էր յիշել։

— Գիտե՞ս ինչ կայ, խօսեց գեղեցիկ աղջիկը, — Զաւօն դրանից յետոյ քեզ մօտ կը մնայ, շատ ժամանակ քեզ մօտ կը մնայ. տիկինը արձակեց Զաւօին։

Որքան ուրախալի լինէին այդ խօսքերը, որքան քաղցր լինէր երէց քրոջը Զաւօին երկար ժամանակ իր մօտ տեսնելը, այսուամենայնիւ, նա բոլորովին շփոթուեցաւ, երբ լսեց, թէ տիկինը արձակել է նրան։ Ի՞նչ պատճառով պէտք է արձակած լինէր, քանի որ առաջ խիստ դժուարութեամբ էր հեռացնում Զաւօին, երբ նա ցանկանում էր երբեմն իր քրոջը տեսութեան գնալ։

— Ի՞նչ է պատահել։

— Մի վախիր, չար՝ ոչինչ չէ պատահել։

Եւ Զաւօն սկսեց պատմել, թէ տիկինը առժամանակ միայն արձակեց, որ բնակուի իր քրոջ մօտ մինչեւ կրկին կանչել կը տայ։ Տիկինը Զաւօին փող տուեց, հագուստներ բաշխեց, շատ-շատ լաւ բաներ ընծայեց, եւ բոլորը Զաւօն բերեց իր հետ։

— Տե՛ս, բոլորը ցոյց կը տամ քեզ։

Նա սկսեց բաց անել իր հետ բերած կապոցը, որ ցոյց տայ իր ստացած ընծաները։ Բայց երէց քոյրը չը բաւականացաւ Զաւօի տուած բացատրութիւններից, կրկին հարցրուց.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ արձակեց քեզ։

— Զաւօն յետոյ կը պատմէ, դա շատ երկար է, այնքան երկար, որքան Լէյլիի եւ Մաջնունի հէքեաթը։ Յետոյ նա յայտնեց, թէ ինքը խիստ յոգնած է, ամբողջ դիշերը ճանապարհ է եկել, անիծուած անձրեւը շատ տանջեց նրան, եւ այժմ սաստիկ քաղցած է զգում. խնդրեց քրոջը որ իրան քիչ կաթ տայ խմելու։ Քոյրը շտապով առեց կովկիթը, վազեց փարախը, որ կովը կթէ եւ քրոջ համար թարմ կաթ բերէ։

Զաւօն այժմ միայն նկատեց, որ տանը հիւր կայ եւ նրա կրակոտ աչքերը հանդիպեցան Վարդանի հետաքրքրութիւնով լցուած աչքերին։

— Նաղելի Զաւօ, դու Խուրշիդի աղախինն ես, — այնպէս չէ՞։

— Ուղիղ այդպէս է։

— Փաթթահ-բէկի տիկնոջը։

— Հէնց նրա։

Վարդանը դտաւ խառնաշփոթ թելի ծայրը եւ դիտմամբ հարցրեց.

— Բէկը մի երկրորդ կին էլ ունէ՞, — այն հայ աղջկան։

— Կ'ունենար, եթէ Զաւօն սատանայի նման չը դողանար նրան։

— Հայ աղջկա՞ն։

— Հայ աղջկան՝ — Լալային, Ստեփանիկին, — նա երկու անուն ունի։

Վարդանի սիրտը սկսեց ուրախութիւնից բաբախել։

— Զաւօն ո՞ւր տարաւ գողացած աղջկան։

— Զաւօն տարաւ իր տիկնոջ մօտ եւ տիկինը ծածուկ ուղարկեց նրան ռուսաց սահմանը։

Վարդանի դէմքը պայծառացաւ մի անկարագրելի բերկրութեամբ, եւ մոռանալով իրան, դրկեց Զաւօին եւ չը գիտէր ինչ կերպով յայտնել իր անհուն շնորհակալութիւնը։

— Համբուրիր Զաւօին, — Զաւօն ազատեց նրան։

— Զաւօն իմ քոյրս է, ասաց Վարդանը եւ եղբայրաբար համբուրեց նրան։

Ներս մտաւ երէց քոյրը, բերելով փրփրադէղ կաթնի ամանը։ Զաւօն առեց նրա ձեռքից եւ միանգամով մինչեւ կէսը խմեց։ Տաք կաթը կազդուրեց նրա յոգնութիւնը եւ քաղցը։

— Հիմայ պատմիր, ասաց նրան երէց քոյրը։

Զաւօն իր յատուկ ձեւով սկսեց պատմել, թէ իր տիկնոջ ամուսինը՝ Փաթթահ-բէկը վաղուց սիրում էր մի հայ աղջկայ, որը Օ... գիւղի տանուտէր Յաչօի աղջիկն էր։ (Տանուտէրը ծանօթ էր բոլոր հարեւան քրդերին)։ Տիկինը չէր ցանկանում, որ հայ աղջիկը բէկի կին լինի, որովհետեւ նա գեղեցիկ էր եւ կարող էր միանգամայն գրաւել բէկի սիրտը։ Նախանձից եւ խանդոտութիւնից դրդուած, տիկինը ամէն կերպով աշխատում էր, որ արգելէ այդ ասուսնութիւնը։ Բայց բէկը սաստիկ ընդդիմանում էր նրան։ Եւ երբ բէկը դարձաւ Բայազէդի կռիւից, պատրաստվում էր գնալ բերել հայ աղջկան, այն ժամանակ տիկինը Զաւօին իր հաւատարիմ սպասաւորներից երկուսի հետ առաջուց ուղարկեց Օ... գիւղը, որ գնան, եւ դեռ բէկը այնտեղ չը հասած, դողանան եւ մի ուրիշ երկիր տանեն Լալային (այսպէս էր նրա անունը)։ Զաւօն գտաւ Լալային նոյն գիւղի քահանայի տան մէջ, իր եղբօր կնոջ՝ Սառայի հետ թագնուած։ Սառան վաղուց գիտէր բէկի նպատակը, եւ երբ Զաւօն պատմեց

նրան Յուրշեղի դիտաւորութիւնը, նա ուրախութեամբ ընդունեց Լալային վերը առնել եւ գիշերով մեր սպասաւորների հետ փախչել Օ... գիւղից։ Նրանք տարան Լալային ռուսաց երկիրը, եւ բէկը մնաց "վայ կարդալով" եւ "իր դլխին տալով"։ Տիկինը սկսեց ծածուկ ծիծաղել եւ ուրախանալ, որ խլեց նրանից գեղեցիկ Լալային։ Մեր սպասաւորները մի քանի օրից յետոյ դարձան եւ լուր բերեցին, թէ անվտանգ տեղ հասցրին աղջկան։ Իսկ Զաւօին տիկինը ասաց, որ գնայ առժամանակ իր քրոջ մօտ մնայ, մինչեւ բէկի բարկութիւնը անցնի։

Զաւօի պատմութիւնը այն աստիճան գրաւել էր իր քրոջը եւ մանաւանդ Վարդանին, որ նրանցից ոչ ոք չը նկատեց, որ հիւանդը նոյնպէս ուշադրութեամբ լսում էր։ Երբ Զաւօն վերջացրեց, լսելի եղաւ նրա ձայնը.

— Հիմա կարող եմ հանգիստ մեռնել. Լալան ազատուած է...

Վարդանը մօտեցաւ եւ բռնեց նրա տատանուող դլուխը, որ դողդողաց եւ ընկաւ բարձի վրայ։

— "Սոված էշը գարու հոտն առաւ, մինչեւ գարին բերելը, հոգին տուաւ"...

Այդ եղաւ էֆէնդու վերջին խօսքը։ Քրդուհին եւ իր քոյրը նոյնպէս մօտեցան հիւանդին։

— Նա մեռաւ, ասաց Վարդանը։

— Յեղձ, կրկնեցին երկու քոյրերը։

ԼԷ.

Ցուլեսի արեգակը սաստիկ այրում էր. կարծես, մթնոլորտի ամբողջ տարածութիւնը լցուած լինէր հրեղէն ասեղներով, որոնք կայծերի փոշու նման շողշողում էին,

կիզում էին եւ մեղմ ալիքներով սփռվում էին դէպի ամէն կողմ։ Ցօթը անտանելի էր։ Թռչունները յոգնած, թուլացած, ծածկուել էին ծառերի թաւուտներում, որոնց վրայ մի տերեւ անգամ չէր շարժվում մեռած քամուց։ Միայն ճանճերը, մոծակները եւ մանր միկրոսկոպական մժեղները անամոթաբար ասպարէզ էին մտել, եւ միլիոնաւոր խումբերով վժվժում էին, ծվծվում էին, շնչառութեան հետ մտնում էին մարդու բերանը, քիթը, ականջները, կամ իրանց թունաւոր խայթոցներով աւելի էին այրում մարդու մարմնի բաց տեղերը, քան թէ արեգակի հրեղէն ճառագայթները։

Ծերունի Վաղարշապատը այդ ժամանակ ներկայացնում էր մի տարօրինակ տեսարան։

Որ կողմը եւ նայում էիր, ամէն տեղ ամբոխուած էր մի սարսափելի բազմութիւն։ Կին եւ աղջիկ, ծեր եւ երեխայ, — բոլորը կիսամերկ, բոլորը աղքատ, — թափուած էին այնտեղ։ Փողոցները լի էր մուրացկաններով։ Էջմիածնայ վանքի պարսպի շուրջը եւ ներսը, Ներսէսի ըճի շրջակայ ծառերի հովանու տակ, մինչեւ Գայիանէի վանքը, մինչեւ նոյն կաթողիկոսից անկարկուած անառուի վերջը, ուր կար մի կտոր ստուեր, որ կարող էր պահպանել արեւի կիզող ճառագայթներից, — ամէն տեղ կարելի էր տեսնել նոյն թշուառ եւ ողորմելի բազմութիւնը։ — Դրանք ալաշկերտցի դաղթականներն էին։

Երեք հազար ընտանիք, թողնելով իրանց հայրենիքը, թողնելով իրանց տունը, տեղը եւ բոլոր հարստութիւնը, թուրքերի սրից եւ կրակից ազատուելու համար փախել, ապաստան էին գտել այստեղ։ Վաղարշապատում չը կար մի տուն, ուր 10—20 ընտանիք այդ թշուառներից միմեանց վրայ ածուած չը լինէին։ Անասունների ախոռ-

ները, մարագները եւ բակերը լիքն էին նրանցով։ Բաւական չէր, որ պէտք էր կերակրել այդ ահագին բազմութիւնը, այլ պէտք էր եւ դարմանել եւ բժշկել նրանց։ Թողնելով Ալաշկերտի հովասուն լեռնադաշտերը, այդ անբախտ ժողովուրդը յուլիսի դժոխային տօթերի ժամանակ յանկարծ ընկել էր Արարատի մէջ, ենթարկուելով զանազան տեսակ հիւանդութիւնների։

Կէսօր էր. ամառնային միջօրէի այն ժամը, երբ գիւղացու աշխատութիւնը դադարում է դաշտերում, մշակ մարդը եւ երկրագործական անասունները քաշվում են մի հովանաւոր տեղ հանգստանալու համար։ Աւելի բախտաւոր ապարածները առատ ճաշից յետոյ քնած են լինում իրանց կոկիկ սենեակներում։ Օրուայ այդ ժամին, բազմաթիւ ալաշկերտցի աղքատների թուում, որ դռնից դուռը ընկած մուրացկանութիւն էին անում, իր վրայ առանձին ուշադրութիւն էր դարձնում առաւելապէս մէկը։ Դա մի մանկահասակ աղջիկ էր, որի տարիքը 16-ից աւելի չը պիտի լինէին։ Սիհար եւ մաշուած դէմքը, որ կորցնելով իր բնական գոյնը, ստացել էր մի տեսակ դալկային դեղնութիւն, նայողի վրայ այն ազդեցութիւնն էր անում, որպէս թառամած վարդը, որ մօտ էր իր յաւալի վախճանին։ Սեւորակ աչքերի մէջ նկարուած էր խորին տխրութիւն։ Գունատ շրթունքը ցոյց էին տալիս, որ նա դեռ ոչ բոլորովին առողջացել էր իրան մաշող հիւանդութիւնից։ Այդ սգաւոր դէմքը, որ մի ժամանակ իր գեղեցկութեամբ պէտք է սքանչելի եղած լինէր, իր այժմեան նիհարութեան մէջ դարձեալ համակրական եւ կախարդիչ էր։

Կարծես թշուառութեան դեւը կամեցել էր մի չար կատակ խաղալ այդ նաղելի արարածի հետ, եւ պարուելով նրան իր քրքրուած ցնցոտիների մէջ, աշխատել էր այլան-

դակել եւ նսեմացնել գեղեցիկ ու պատկառելին։ Բայց դրանով աւելի գրաւիչ եւ աւելի կարեկցութեան արժանի էր շինել նրան։ Հնամաշ եւ պատառոտած հագուստը հազիւ սքօղում էր կիսամերկ մարմինը, երեւում էր, որ այդ հագուստի ամեն մի կտորը նա մի բարերար ձեռքից պէտք է ստացած լինէր, որովհետեւ թէ՛ իրանց ձեւերով եւ թէ՛ գոյներով տարբերվում էին միմեանցից. բացի դրանից, մի կտորը լայն էր, միւսը չափազանց նեղ, մէկը սովորականից կարճ էր, միւսը շատ երկայն։

Նա դանդաղ դողդոջուն քայլերով գնում էր գիւղի փողոցների մէկի միջով. բոբիկ ոտները դժուարութեամբ էր կոխում արեգակի ճարագայթներից տաքացած գետնի վրայ, որ շեկացած երկաթի նման այրում էր։ Նա իր հետ մանր էր ածում երկու փոքրիկ երեխաներ, որոնք երկու հրեշտակների նման քարշ էին ընկած նրա ձեռքերից։ Երկար նա գնում էր, եւ գլուխը ծռած, լուռ ու մունջ կանգնում էր տների դռների մօտ, եւ առանց համարձակուելու ներս մտնել, ժամերով սպասում էր, մինչեւ տանտերերից մէկը նրա վրայ ուշադրութիւն կը դարձնէր եւ մի կտոր հաց կը տար։ Երեւում էր, որ նրա հպարտ շրթունքը չէին սովորած ողորմութիւն խնդրելու, երեւում էր, որ նա սնուել եւ մեծացել էր աւելի բարեբախտ վիճակի մէջ, իսկ այժմ տխուր հանգամանքների պատճառով ընկած էր մի տարօրինակ կեանքի մէջ։ Ընկճուած անձնասիրութիւնը, սեպհական արժանաւորութեան վիրաւորանքը, վաղեմի փառքի կորուստը, բարոյական տանջանքը, — բոլորը միախառնուելով, լցրել էին նրա սիրտը աննկարագրելի դառնութեամբ, որ աւելի էր մաշում եւ տրորում նրան, քան թէ այն ցաւը, որ արդէն սկսել էր սպանել նրա մարմինը։

Նա դեռ անցնում էր մի դռնից միւս դուռը, բայց նրա վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում։ Վերջապէս նա զսպելով իր ամօթխածութիւնը, ոտքը ներս դրեց մի տան շէմքից, եւ հանդիպելով տանտիկնոջը, երկչոտ ձայնով ասաց.

— Մի կտոր հաց...

Այդ ձայնի մէջ կային բոլոր հնչիւնները, որ արտայայտում էին վշտալի սրտի դառն եւ ցաւալի զգացմունքները։

Տանտիկինը կոպիտ ձայնով պատասխանեց.

— Կոտորուէք դուք, ո՞ր մէկիդ տանք...

Աղջիկը նայեց իր շուրջը, տեսաւ, իրաւ, իր նման շատերը լցուած էին այնտեղ։ Նա պատրաստ էր խսկոյն հեռանալ, բայց նրան պահեց մի միտք։ Նա իր մասին չէր մտածում, թէեւ քաղցած էր, բայց մտածում էր այն երկու փոքրիկ երեխաների վրայ, որ ոչինչ չէին կերել, մտածում էր նրանց հիւանդ մօր վրայ, որ անօթի պառկած էր։

Նա արտասուքը սրբեց եւ կամենում էր կրկնել իր աղաչանքը։ Այդ միջոցին փոքրիկ շնիկը դուրս պրծաւ դրան տակից եւ իր սուր ատամներով քարշ ընկաւ խեղճ աղջկայ փէշերից։ Նա սարսափելով դուրս փախաւ, իր հագուստի մի մասը թողնելով շան բերանում։ Երկու փոքրիկները ցաւալի ճիչ բարձրացրին եւ փոքր էր մնում, որ պրտաճաք լինէին։

Նա կապկապելով իր հագուստի ծուէնները, այժմ սկսեց դիմել դէպի վանքը։ Երկու փոքրիկ երեխաները ուրախութիւնից մոռացան իրանց լացը եւ երկիւղը, երբ ճանապարհի վրայ ընկած տեսան մի կտոր ձմերուկի կեղեւ։ Երեխաներից մէկը վազեց, վեր առաւ կեղեւը, եւ իր փէշերով հողն ու փոշին սրբելով, սկսեց կրծել։ Միւս երեխան աշխատում էր խլել նրա ձեռքից, ասելով. — ինձ

էլ տուր, ես էլ քաղցած եմ։ Երկուսի մէջ առաջ եկաւ մի փոքրիկ կռիւ։ Մանկահասակ աղջիկը հանդստացրեց նրանց, եւ բաժանելով կեղեւը, երկուսին էլ հաւասար մասը տուեց։

Այդ միջոցին շտապով անցնում էր նրանց մօտից մի երիտասարդ։ Նա տեսնելով աղջկան երկու փոքրիկ երեխաների հետ, ճանաչեց նրանց, եւ մօտեցաւ։

— Դու դեռ ոչ բոլորովին առողջ ես, ասաց նա, — ես պատուիրեցի քեզ դուրս չը գալ, դու դարձեալ ման ես գալիս։

Աղջիկը շփոթուեցաւ եւ չը գիտէր ինչ պատասխանել։ Նա, իրաւ, առողջ չէր, նա այնքան տկար էր, որ հազիւ կարողանում էր իրան ոտքի վրայ պահել։ Երիտասարդը նկատեց երկու երեխաներին, որոնք դեռ կրծում էին ձմերուկի կեղեւը։ Նա խլեց կեղեւը, եւ մի կողմը ձգելով ասաց.

— Ի՞նչպէս կարելի է ուտել այդ։

Երեխաները աւելի համարձակ գտնուեցան, քան շփոթուած աղջիկը, եւ արտասուքը աչքերում պատասխանեցին.

— Քաղցած ենք։

— Մի՞թէ վանքում ձեզ չեն կերակրում, դարձաւ երիտասարդը դէպի աղջիկը։

Մանկահասակ աղջիկը փոխանակ հարցին պատասխանելու, իր գեղեցիկ, նուաղած աչքերը դէպի գետին ուղղելով, մեծ դժուարութեամբ ասաց.

— Եթէ կարելի էր, մեզ համար մի ուրիշ տեղ ճարէիք, եւ մենք դուրս դայինք վանքից։

— Երեւի, այն անպիտան վարդապետը ձեզ վա՞տ է նայում։

Աղջիկը ոչինչ չը պատասխանեց, եւ շարունակելով նայել դէպի ցած, կարծես, չէր ցանկանում իր բազմախնամ հայեացքը դարձնել դէպի հետաքրքիր երիտասարդը, զգուշանալով, որ նա իր դէմքը չը գուշակէր այն, ինչ որ ինքը ակամայ ստիպուած էր թագցնել սրտում։

— Հասկանում եմ... պատասխանեց երիտասարդը խորին վրդովմունքով։ Հիմայ գնա՛, այդ շոգին լաւ չէ ման դալ, դու հիւանդ ես, կարող ես բոլորովին տկարացնել քեզ, մէկ ժամից յետոյ ձեզ մօտ կը լինեմ, եւ ամեն ինչ կը կարգադրեմ, որ լաւ հոգ տանեն ձեզ։ — Ի՞նչպէս է եղբօրդ կինը։

— Էլի այնպէս է, այս գիշեր աւելի անհանգիստ էր, պատասխանեց աղջիկը տխուր ձայնով։ Եւ այժմ իր ամօթխած աչքերը դարձնելով դէպի երիտասարդը, հարցրեց.

— Դուք մեզ չէք թողնի վանքում, այնպէս չէ՞, պարոն։

— Լաւ, ես ձեզ համար մի ուրիշ բնակարան կը ճարեմ, ասաց երիտասարդը եւ շտապով հեռացաւ, իր մտքում կրկնելով. «խեղճ արարած, ի՜նչ շուտ ճանաչեց ձեզ վանքը»...

Երիտասարդը բժիշկ էր, մի հարուստ վաղարշապատցի կալուածատիրոջ որդի։ Նա նոր էր աւարտել իր ուսումը Ս. Պետերբուրգի համալսարանում, եւ որպէս նոր օրդէնի մէջ մտած ասպետ, ընկել էր աշխարհ, արկածներ էր որոնում, իր արհեստին վերաբերեալ հերոսութիւնները ցոյց տալու համար։ Աշաշկերտցի գաղթականները, իրանց բազմաթիւ հիւանդներով, բաց արին նրա առջեւ գործունէութեան մի ընդարձակ ասպարէզ։ Թարմ, բարի ցանկութիւններով լի երիտասարդի անխոնջ

եռանդը մեծ բաւականութիւն էր գտնում այդ թշուառներին օգնելու գործում։ Նրա մէջ միացած էին արհեստը բժշկի առաքինութեան հետ։ Նա ոչ միայն անվարձ այցելութիւններ էր անում եւ ձրի դեղեր էր բաժանում հիւանդներին, այլ հոգ էր տանում եւ նրանց բնակարաններին եւ լաւ կերակրուելու մասին։ Այդ էր պատճառը, որ մանկահասակ աղջիկը այնպէս մտերմաբար դիմեց նրան, աղաչելով, որ իրանց համար մի այլ կացարան տնօրինելու հոգ տանէ։

Բժշկի հեռանալուց յետոյ աղջիկը շարունակեց իր ճանապարհը դէպի վանքը։ Օրօրուելով, տատանուելով, նա հազիւ կարողանում էր փոխել իւր քայլերը։ Մի քանի անգամ կանգ առեց, մի քանի տեղ նստեց, մինչեւ յոգնութիւնը անցնի։ Վանքի հանդէպ գտնուող գինետներից նրան կանչեցին, խոստանալով, թէ փող կը տան։ "Այդ մարդիկը աւելի վատ են, քան թէ քրդերը„... ասաց նա իր մտքում եւ կանգնելով, շարունակեց իր ճանապարհը։

Նա անցաւ պարտէզը, անցաւ վանքի գլխաւոր մուտքի մօտից, պտոյտ տուեց պարսպի արեւմտեան կողմով եւ դուրս եկաւ այն դրան մօտ, որ տանում է դէպի լեռը եւ անտառը։ Այս դռնով նա մտաւ Ղազարապատ։ Վանքի այդ մասը տօն օրերում ծառայում է որպէս հիւրանոց բազմաթիւ ուխտաւորների համար, իսկ այժմ լցուած էր ալաշկերտցի հիւանդներով։ Նա մտաւ ներքին յարկի խուցերից մէկի մէջ։ Այդ խոնաւ խորշի մէջ, զրկուած օդից եւ լոյսից, կարմիր աղիւսներով պատած յատակի վրայ, պառկած էր մի կին։ Ո՛չ մահիճ ունէր նա եւ ո՛չ մահճակալ. տակին ձգած ունէր մի խուրձ յարդ, իսկ վրան ծածկած ունէր մի փալասի կտոր։ Երկու երեխաները վազեցին եւ գրկեցին հիւանդ մօրը,

եւ սկսեցին համբուրել նրա ոսկորացած ձեռքերը։ Բայց նա չը պատասխանեց սիրելի զաւակների գգուանքին, որովհետեւ այդ բոպէում քնած էր, աւելի ճիշդ ասած, գտնվում էր մի տեսակ անզգայութեան մէջ։

Մանկահասակ աղջիկը նկատեց երկու փոքրիկ երեխաներին, որ չանհանգստացնեն հիւանդ մօրը, այլ գնան դուրսը խաղալու։ Նրանք հնազանդութեամբ դուրս եկան, եւ նստելով խուցի դրան մօտ, սկսեցին հողով, խճերով եւ չօփերով իրանց համար փոքրիկ տնակներ շինել, եւ նրանցով զուարճանալ։ Իսկ ինքը՝ աղջիկը պառկեց մերկ յատակի վրայ, եւ թեւքը բարձի փոխարէն նեցուկ տալով գեղեցիկ գլխին, արտասուքով լի աչքերը դարձրուց դէպի հիւանդը, եւ սկսեց նայել նրա վրայ։ Նա այնքան յոգնած էր, այնքան թուլացած էր եւ այնքան հոգեպէս տանջուած էր, որ ցանկանում էր մի փոքր քնել, մի փոքր հանգստանալ, բայց ակամայ արտասուքը խեղդում էր նրան, վշտալի աչքերը փակել կարող՝ չէր։ Նա այդ աչքերը կը ցանկանար յաւիտեան փակել եւ չը տեսնել լոյս աշխարհը, որ այժմ խաւար էր նրա համար։ Ի՞նչ դժբախտութիւններ ասես, չը կրեց նա, ի՞նչ չարչարանքներ չը համբերեց նա։ Նա կորցրեց հայր, եղբայրներ, հարուստ տուն, ազգականներ, — բոլորը, բոլորը ինչ որ թանգ էր նրա համար, ինչ որ սիրելի էր նրան։ Իսկ այժմ օտար երկրում, անտէր, անպաշտպան, յանձնուած դառն ճակատագրի կամքին, թափառում էր նա դռնից դուռ։ Իր միակ նեցուկը, իր միակ պաշտպանը, որի վրայ յոյս էր դրել նա, այժմ հիւանդ էր. գուցէ այսօր, գուցէ վաղը կը մեռնէր նա, ի՞նչ կը լինէր այնուհետեւ իր վիճակը, ո՞վ կը պահէր անբախտ մօր անբախտ զաւակներին։ Գոնէ ինքը առողջ լինէր, գոնէ կարողանար

աշխատել, այն ժամանակ ամեն բան կ'անէր, ամեն տեսակ ծանր աշխատութիւն յանձն կ'առնէր եւ կը պահէր որբիկներին։ Բայց ինքը նոյնպէս ուժից ընկած, նոյնպէս թոյլ եւ տկար, օրըստօրէ հալուելով եւ մաշուելով, սպասում էր իր ընձալի օրհասին, որ ուշանում էր մօտենալ իրան։ — Այս տխուր մտածութիւնների մէջ ալեկոծվում էր թշուառ աղջիկը եւ արտասուքի ջերմ կաթիլները գլորվում էին նրա գունաթափ երեսի վրայ, երբ դրսից մի ձիչ բարձրացաւ եւ մի կոպիտ ձայն աւելի խռովեց նրա անհանգստութիւնը։

Երկու երեխաները խուցի դրան մօտ փոքրիկ տնակներ էին շինում եւ զուարճանում էին։ Այդ միջոցին անցաւ նրանց մօտից մի հասակաւոր աբեղայ սեւ վեղարով, սեւ փարաջայով եւ սեւ դէմքով. — սպիտակ նրա մէջ ոչինչ չը կար։ — Տեսնելով երկու փոքրիկներին, նա կատաղի կերպով գոռաց.

— Ներս կորէք, լակոտներ, ինչո՞ւ էք փչացնում գետինը։

Երեխաները ուշ շարժուեցան, եւ աբեղան յարձակուելով նրանց վրայ քիչ էր մնում, որ պիտի երկուսին էլ ջարդուփշուր անէր իր ոտների տակ, եթէ նրանք աղաղակելով ներս չը վազէին խուցը։ Զաւակների աղաղակը ուշի բերեց անզգայացած մօրը։ Նա դրկեց երկուսին էլ, սկսեց հանգստացնել, առանց գիտենալու նրանց լացի պատճառը։ Այդ միջոցին խուցի շէմքի վրայ երեւաց աբեղայի դաժան կերպարանքը։

— Այս րոպէիս դուրս կորէք այստեղից, գոչեց նա բարկացոտ ձայնով, — քանի օր է ասում եմ, որ ձեզ համար տեղ ճարէք եւ հեռանաք այստեղից, դուք էլի մնում էք։

Ո՞ւմն էր ասում այդ խօսքերը, հիւանդ մայրը ոչինչ չէր լսում, նա միայն դրկած ունէր իր զաւակներին, որոնց, կարծես, առաջին անգամն էր տեսնում։ Երկու ամբողջ օր գտնվում էր նա խորին ուշաթափութեան մէջ. այժմ սիրելի զաւակների ձայնը արթնացրեց նրան։ Ո՞ւմ հետ էր խօսում աբեղան։ Այս խուցի մէջ ոչ ոք նրան լսել եւ հասկանալ կարող չէր։ Մանկահասակ աղջիկը նրա ձայնից սոսկաց, սարսափեցաւ եւ միանգամայն կորցրեց իրան։ Իսկ փոքրիկ երեխաները երկիւղից ծածկուել էին անբախտ մօր դրկում եւ դողդողում էին։

Աբեղայի բարկութիւնը ընդհատեց մի այլ ձայն.

— Այդ ի՞նչ շանթեր ես արձակում, հայր սուրբ։

— Բարով, պարոն բժշկապետ, ի՞նչպէս էք, լա՞ւ էք, ի՞նչպէս է ձեր քէֆը, ասաց աբեղան ժպտելով, եւ աւելի խաղաղ կերպարանք ընդունելով։

— Իմ քէֆը հալա թող մի կողմը կենայ, պատասխանեց բժշկապետը ուղիղ հայր սուրբի աչքերի մէջ նայելով, — դու այն ասա, էլ ի՞նչ ֆանդեր ունես, հայր սուրբ, ինչո՞ւ էլը նեղացնում այդ խեղճերին։

— Քո արեւը վկայ, ոչինչ ֆանդեր չը կայ. ես միայն ասում էի, որ իրանց համար տեղ ճարեն եւ հեռանան այստեղից։ Քեզ յայտնի է, որ կարգադրել են երկու օրից աւել չը պահել դաղթականներին վանքում։ Ամեն օր նոր դաղթականներ են գալիս. պէտք է հները գնան, որ նորերը նրանց տեղը բռնեն։

— Ո՞ւր գնան, դու տեսնում ես, որ մեռնում են։

— Ես ի՞նչ անեմ, ինձ այսպէս է հրամայուած։

Հայր սուրբը վանքի հիւրընկալն էր, մի խեղկատակ եւ շաղակրատ աբեղայ, որի հետ ամեն մարդ թոյլ էր տալիս իրան հանդգնել անել, առաւելապէս պարոն բժշ-

կապետը, որ մի առանձին հաճութիւն ունէր պարսաւել կղերին։

— Այդ խօսքերով ինձ չես խաբի, ասաց նա, — դրուստն ասա, հայը սուրբ, ինչ փորացաւ ունես։ Աղջկայ աչքերում լոյս կայ, հա՞։

— Է՛հ, թող տուր, հերօրհնած, ինչե՞ր ես խօսում։

— Կոտորուէ՛ք դուք, կոտորուէ՛ք... ասաց բժշկապետը եւ մտաւ խուցի մէջ։

Բժշկապետի այցելութիւնը մի առանձին մխիթարութիւն ազդեց թշուառ ընտանիքին, երբ նա հարկաւորած դեղերը եւ պատուէրները տալուց յետոյ, յայտնեց, թէ ինքը կարգադրել է, որ շուտով նրանց կը տեղափոխեն մի առանձին բնակարան, ուր կը դտնեն նրանք ամեն յարմարութիւններ թէ կացութեան եւ թէ ապրուստի համար։

— Միայն շուտ, եթէ կարելի է, շատ շուտ, խնդրեց հիւանդ մայրը շնորհակալութեամբ լի ձայնով։

— Անհոգ կայէք. մի քանի րոպէից յետոյ կը տանեն ձեզ, պատասխանեց բժշկապետը եւ դուրս եկաւ, վանքի մէջ գտնուող միւս հիւանդներին նայելու համար։

— Հալա՛, տեսնում ե՞ս, զաւակս, դարձաւ հիւանդը դէպի մանկահասակ աղջիկը, որ աչքերը բռնած հեկեկում էր, — Աստուած դժբախտութեան ամենադառն րոպէներում դարձեալ չէ մոռանում թշուառներին եւ ուղարկում է իր հրեշտակը նրանց մխիթարելու համար։ Մի լաց, զաւակս, փոթորկալից եւ խաւար դիշերին յաջորդում է լուսապայծառ առաւօտը։ Կը գայ մի օր, որ դու կրկին կը գտնես քո ուրախութիւնը...

— Այդ բոլորից յետո՞ յ, սիրելի Սառա, պատասխանեց Հալան դառն արտասուքով, — այդ բոլորից յետոյ ինձ միւսմ է մեռնել միայն...

Խուցի դռնից ներս մտան երկու մարդ. Սառայի եւ Հալայի խօսակցութիւնը ընդհատուեցաւ։ Եկուորները պարոն բժշկապետի ծառաներն էին, որոնք բերում էին իրանց հետ հաց եւ կերակուրներ, բացի դրանցից մի կապոցի մէջ նրանք բերել էին կանացի հագուստներ Հալայի եւ Սառայի համար, այլ եւ երեխաների հագուստներ երկու փոքրիկների համար։ Սառան եւ Հալան չը մոռեցան կերակուրներին, նրանք ուտելու ախորժակ չունէին, բայց երկու փոքրիկները վրայ պրծան եւ սկսեցին ագահութեամբ ուտել։ Ծառաները դրսում սպասեցին, մինչեւ վերջացաւ ճաշը։

Հալան ինքն հագնուեցաւ եւ նոյնպէս փոխեց Սառայի ցնցոտիները, հագնուեցան եւ երկու կիսամերկ փոքրիկները, այնուհետեւ կերպարանափոխուած ընտանիքը դուրս եկաւ վանքի ապականուած մթնոլորտից, եւ սկսեց դիմել դէպի բժշկապետի պատրաստած բնակարանը։

ԼԸ.

"Հուսաւորչի քամին" բարձրացաւ եւ ցերեկուայ դժոխային տօթը տեղի տուեց երեկոյեան զովութեանը։ Այդ բարերար քամին ոչ միայն Վաղարշապատի, այլ ամբողջ Արարատեան գաւառի կենսատու ոգին է, որ ամառնային օրերում շարունակ փչում է ամեն երեկոյ։ Եւ զուր չէ ասում ժողովրդական աւանդութիւնը, որ մեր Լուսաւորիչ հայրը նրան սահմանեց իր ժողովուրդը հիւանդութիւնից ազատ պահելու համար։

Վանքի աբեղաները կէսաւուր հանգիստ քնից յետոյ, դուրս էին եկել իրանց որջերից եւ զոյգ-զոյգ զբօսնում էին Ներսէսի լճի շուրջը, գեղեցիկ ճեմելիքների մէջ, որ հովանաւորուած էին ծառերի խիտ կամարների ներքոյ։

Իսկոյն աչքի էր զարկում, որ զբօսնող հայրերը չէին կազմում խումբեր, այլ բաժանուած էին առանձնացած զոյգերի, կամ բոլորովին միայնակ էին մեն գալիս։ Դրանք նմանում էին այն արարածներին, որոնք իրանց հեռու են պահում ընկերական կեանքից, այն պատճառով միայն, որ վախենում են միմեանց մօտենալ։ Կասկածը, անվստահանութիւնը, անհաւատարմութիւնը առանձնացրել էին նրանց, — եւ այդ կոչվում է վանական եղբայրութիւն։

Լեռը գանվում էր մի արհեստական բարձրաւանդակի վրայ, որ կառուցուած էր կոփածոյ քարերից։ Նրա ստորոտից մինչեւ Գայիանէի վանքը տարածուած էր հին գերեզմանատուն։ Մի քանի տեղ փորում էին նոր գերեզմաններ, մի քանի տեղ հողով ծածկում էին արդէն փոսերի մէջ դրած մարմինները։ Թիերը եւ բրիչները գործում էին։ Քահանան փրփրթալով, աղօթքներ կարդալով, ճիշդ ասած՝ ոչինչ չը կարդալով, մի գերեզմանից դէպի միւսն էր վազում եւ կատարում էր թաղման խորհուրդը։ Այդ բոլորը գործվում էր խորին լռութեան մէջ։ Ոչ բարեկամի լացը, ոչ ազգականի պատասուքը չէին առաջնորդում հանգուցեալներին դէպի սգիների աշխարհը, կարծես, նրանք շատ ուրախ էին, որ թշուառ մարդիկ, ազատուելով տաժանական կեանքից, գերեզմանի մէջ վերջապէս պէտք է հանգստութիւն գտնէին։ Թաղում էին ալաշկերտցի գաղթականներին։

— Որքան շատ մեռնում են, ասաց աբեղաներից մէկը իր հետ մեն եկող ընկերին։

— Մի եւ նոյն է, պատասխանեց ընկերը սառնասրտութեամբ, — այնտեղ քրդերը եւ թուրքերը պէտք է կոտորէին, այստեղ գոնէ իրանց մահով են մեռնում։ — Բայց մենք հեռացանք հարցից, շարունակեց նա ընդ-

հատուած խօսակցութիւնը, — կրկնում եմ քեզ, որ նրան պէտք չէ հաւատալ։ Նա մօտենում է մեզ, իբրեւ բարեկամ եւ մտերիմ է ձեւացնում, համակրութիւն է ցոյց տալիս, եւ ուրիշ հազարումէկ ցիններ է հանում, բայց այդ բոլորը կեղծ է, նա այսպիսով աշխատում է մեզանից գաղտնիքներ որսալ եւ յայտնել, ուր որ հարկն է։ Նա լրտես է, կատարեալ լրտես։ Եւ այդ պատճառով նա այնքան լաւ ընդունուած է «ի վերին Երուսաղէմի մէջ»։ Շատ հաւանական է, որպէս ինքը յոյս ունի, շուտով եպիսկոպոս կը դառնայ եւ մի հարուստ թեմի առաջնորդ կը լինի։

— Բոլորը, ինչ որ ասեցիր, ուղիղ է, բայց վերջին երկուսը չի ստանայ։ «Զորրորդը» խոստանալու համար խիստ առատաձեռն է, բայց կատարելու մէջ չափազանց ժլատ։ Կամենում են միայն առժամանակ այդ տխմարի գլուխը թափ տալ, որքան իրանց պէտք է, յետոյ պոչը կը կարեն եւ բաց կը թողնեն, նրա պաշտօնը աւելի յարմար մէկին յանձնելով։ — Տես, երկու նոր մեռելներ եւս հիմայ բերեցին...

— Թող տուր, թէ Աստուած կը սիրես, այդ քո մեռելները, — բայց նա այն տեսակ աղուէսներից չէ, որ շուտ խաբուի։

— «Յսելացի աղուէսը երկու ոտքից էլ թաղաքի մէջ է ընկնում»։

— Կամաց, թող անցնեն...

Շեմելիքի հակառակ կողմից յայտնուեցան երկու ուրիշ աբեղաներ, որոնք մօտենալով առաջիններին, նոյնպէս դադարեցրին իրանց խօսակցութիւնը։ Դրանք երկուսն էլ սինօդի անդամներ էին։ Նրբ փոքր ինչ հեռացան, դարձեալ շարունակեցին խօսակցութիւնը։

— Ճաշուրդը հիմայ պէտք է նշանակել տալ. այժմ ամենայարմար ժամանակն է։

— Ինչու։

— Նրա համար որ, մեզ յայտնի է, թէ այդ եկեղեցական կալուածքները ովքեր են կապալով վեր առնում։ Պարոնները՝ Ն... Մ... եւ Ղ... որոնք միշտ այդ կալուածների կապալառուներ են եղել, այժմ իրանց առանձին գործերով գնացել են մեկը Ալէքսանդրապոլ, միւսը Իգդիր, երրորդը սատանան գիտէ, թէ որ ջհանանամը։ Դրանց բացակայութիւնից մենք կարող ենք օգուտ քաղել։ Եթէ ճաշուրդը այժմ նշանակել կը տանք, շատ պարզ է, որ կապալը կը մնայ Սաթայէլեանի վրայ, որը իր անունով կը վեր առնի, ի հարկէ, մեզ հետ գաղտնի ընկերութեամբ։

— Բայց, որքան ինձ յայտնի է, պ. Սաթայէլեանը այնքան պատրաստի փող չունի, որ կարողանայ գրաւական ներկայացնել։

— Այդ ես էլ գիտեմ, բայց դրանով գործը չի խանգարուի, գրաւականը մենք կը տանք, նա իր կողմից կը ներկայացնէ։

— Դու պատրաստի փող ունե՞ս։

— Տօկօսաբեր արժէթղթեր ունեմ։

— Մի եւ նոյն է։ Ուրեմն էգուց ժողովի մէջ ճաշուրդի հարցը կը բարձրացնենք։ Բայց ես վախենում եմ, որ "վերեւից" կը խառնեն գործը։

— Ձեն կարող, միթէ այդ "հոսոնները" իրանք մի եւ նոյնը չե՞ն անում, ինչ բանի վրայ որ մտածում ենք մենք։ Եթէ "փոքր գեւը" մատը կը խառնի, ես նրա սկանջին մի բան կ'ասեմ, եւ իսկոյն կը լռէ։

Այսպէս ոմանք միաբանութեան մէջ կատարուող ինտրիգաների վրայ էին խօսում, ոմանք իրանց գաղտնի սպեկուլացիաների վրայ էին խօսում, բայց ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, թէ ինչ է կատարվում իր շուրջը, ոչ ոք չէր մտածում այն բանի վրայ, թէ ինչպէս ալաշկերտցին, զրկուած բնիկ երկրից, պանդուխտ, անտէր եւ անխնամ, ճանճերի նման կոտորվում էին։ Ոչ ոք չէր հետաքրքրվում այն հարցով, թէ ինչ էր եղել այդ թշուառների գաղթականութեան պատճառը կամ ինչ կը լինի նրանց վախճանը մի օտար, անծանօթ երկրում։

Մի քանի աբեղաներ, հաւաքուած միասին, իրանց ամենօրեայ երեկոյեան սովորութեան համեմատ, նստել էին անտառում, գեղեցիկ պարսկական խալիչաների վրայ եւ թէյ էին վայելում։ Մանկահասակ փոքրաւորները, նրանցից սակաւ ինչ հեռու, միմեանց հետ քրթմնջալով, ծիծաղելով եւ հանաքներ անելով, կարգի էին դնում թէյի ահագին պատրաստութիւնը։ Այնտեղ կար սեր, կարագ, սպիտակ հաց, ռօմ եւ ամեն ինչ։ Երեկոյեան զովը եւ անտառի մաքուր օդը բաց էին արել սուրբ հայրերի ախորժակը։ Նրանք խմում էին, ուտում էին, ուրախանում էին, առանց մտածելու, որ նոյն անտառի ծառերի տակ, խոնաւ գետնի վրայ, այժմ ընկած էին հարիւրաւոր քաղցած ընտանիքներ։

— Այդ ռօմը շատ լաւն է, ինչ գեղեցիկ հոտ ունի, ո՞րտեղից ստացաք, հայր սուրբ, հարցրեց աբեղաներից մէկը խորին զմայլութեան մէջ ճաշակելով ռօմով խառնած թէյի բաժակը։

— Ո՞րտեղից ստացայ... կրկնեց հայր սուրբը, որի խցից բերուել էր անուշահոտ ըմպելին, — դու չե՞ս իմա-

նում, որ իմ խուցը այն ուխտատեղիներից է, ուր մատաղը իր ոտքովն է գալիս...[1]:

— Իմանում եմ... լաւ է այսպիսի ձգողական զօրութիւն ունենալ:

Արեւը մտել էր արդէն: Անտառի մէջ մռայլը հետզհետէ թանձրանում էր, թէեւ ոսկէզօծ ամպերը տակաւին վառվում էին արեգակի վերջին ճառագայթներից: "Լուսաւորչի քամին" փոքր ինչ մեղմացել էր եւ ծառերի տերեւները հազիւ շարժվում էին մի խուլ, կախարդական սօսափիւնով: Անտառի խորին լռութիւնը երբեմն ընդհատվում էր տխուր հառաչանքներով: Գիշերը մօտենում էր: Խաւարի մէջ աւելի շուտ զարթնում են դառն յիշողութիւնները: Բայօթեայ, գեսնատապած, մերկ եւ անօթի ալաշկերտային, մի սարսափելի երազից սթափուած մարդու նման, դեռ նոր սկսել էր զգալ իր վիճակի դառնութիւնը: Նա մտածում էր, որ հարստութիւն ունէր, իսկ այժմ սոխպուած է մուրացկանութեամբ ապրել: Նա մտածում էր, որ տուն եւ օթեւան ունէր, իսկ այժմ բաց երկնքի տակ է ապրում: Նա մտածում էր, որ զաւակներ ունէր, իսկ այժմ չը կան նրանք. որտեղ կորան, ով տարաւ, ինչ եղան, — ինքն էլ չը գիտէր: Բոլորը կորաւ մի խառնաշփոթ եւ սոսկալի խռովութեան մէջ, երբ մայրը որդուն մոռացել էր, երբ եղբայրը մոռացել էր իր քրոջը, երբ տղամարդը կորցրել էր ամուսնին, — երբ ամեն մարդ, հալածուած թուրքի սրից եւ հրից, աշխատում էր իր գլուխը միայն ազատել: —

[1] Ամայի եւ ժողովրդից մոռացուած տեղերում գտնուած կիսաւեր մատուռների եւ վանքերի մասին աւանդութիւններ կան, որ նրանց տօնի օրերում վայրենի անասունները իրանց յօժարութեամբ գալիս են նրանց դուռը, եւ անապատի հովիւները բռնելով մատաղ են անում:

Ամեն մարդ սրտումը անդարմանելի վէրք ունէր, ամեն մարդ կորցրել էր մի բան, որ նրա համար աշխարհի բոլոր բաներից թանգագին եւ անփոխարինելի էր: Այս էր պատճառը, որ ամբողջ Վաղարշապատը այս գիշեր թնդում էր դաղթականների հառաչանքներով, որոնք կատարում էին մի ընդհանուր սուգ, սուգ, որի համար մխիթարութիւն չը կար...

Այդ միջոցին մի պարթեւանձնեայ տղամարդ, անցնելով անտառի ծառերի միջով, հետաքրքիր աչքերով նայում է դաղթականների վրայ, մօտենում էր նրանց, խօսեցնում էր եւ դարձեալ շարունակում էր իր ընթացքը: Ցխուր, մռայլոյ կերպարանքը այդ տղամարդի, երեսի այրական արտայայտութիւնը, համարձակ եւ անձնավստահ շարժմունքը ակամայ ուշադրութիւն էին դարձնում իր վրայ: Նա դուրս եկաւ անտառից, անցաւ Գայիանէի վանքը եւ կանգնեց գերեզմանատան մօտ: Այստեղ դեռ աշխատանքը չէր վերջացել... դեռ թաղում էին...

Նրա ականջին զարկեց երգի ձայն.

"Բուլբուլն է հագեր ի յոտին կօշիկ,
Զվարդն կը փնտռէ սիրով, անուշիկ"...

— Կոտորուէք դուք, ասաց իր մտքում անծանօթ տղամարդը եւ շարունակեց ճանապարհը:

Երգի ձայնը լսվում էր անտառի խորքից, ուր այժմ աբեղաները, ռօմից ստացած ոգեւորութիւնից յետոյ, կատարում էին իրանց գիշերային արշաւանքները:

Անծանօթ տղամարդը մօտեցաւ ըճին: Այստեղ նոյնպէս մի քանի աբեղաներ սեւ ուրուականների նման դեռ զբօսնում էին: Բայց մէկը նստած էր անշարժ, միայնակ, որպէս առանձնացած սգաւոր, որ իր մխիթարութիւնը

գտնում է այն դրութեան մէջ, երբ ոչ ոք չէ հարցնում նրանից մի բան, եւ երբ ոչ ոք չէ դիպչում նրա սրտի վէրքերին։ Արեւից այրուած, մռայլոտ դէմքը եւ հնամաշ հագուստը ցոյց էին տալիս, որ այդ աբեղան պէտք է պանդուխտ եւ աղքատ լինի։ Վանքի քնքոյշ եւ կոկիկ հագնուած միաբաններից ոչ ոք չէր մօտենում նրան, կարծես, վախենում էին պղծուել նրա հագուստներից, թէեւ այդ պարզ, հովուական հագուստների մէջ ծածկուած էր մի մարմին, որ կրում էր իր մէջ դեղեցիկ եւ ազնիւ յատկութիւններ։ Անծանօթ տղամարդը կիսախաւարի միջից նկատելով անծանօթ աբեղային, մօտեցաւ նրան։

— Աղ, Յովհաննէս հայր սուրբ, դուք էք։

— Աղ, Վարդան, գոչեց աբեղան եւ գրկեց նրան։

Աբեղան սուրբ Յովհաննու վանքի վանահայր եւ մի եւ նոյն ժամանակ Աշչիերտի առաջնորդն էր, որ գաղթականների հետ եկել էր ռուսաց հողի վրայ, չը կամենալով բաժանուել իր ժողովրդից։

Վարդապետը եւ Վարդանը նստեցին մի քարի վրայ, որ ճի մօտ ծառայում էր որպէս նստարան։

— Ե՞րբ եկար, հարցրեց վարդապետը։

— Այսօր, հէնց այս ժամիս, պատասխանեց Վարդանը իր շուրջը նայելով, որ նրան չը լսեն։

— Ոչ ոքի՞ չը տեսար։

— Դեռ ոչ ոքի։ — Այդ խառնիճաղանճ բազմութեան մէջ ո՞ւմը կարելի է գտնել։ Ես շատ կը ցանկանայի տեսնել Մէլիք-Մանսուրին, լսեցի, որ նա էլ գաղթականների մէջն է։

— Ես նրան տեսայ երկու օր առաջ, պատասխանեց վարդապետը, — այժմ պէտք է Երեւանում լինի. կարծում եմ, այնտեղ պէտք է տեսնուէր մի քանի պարոնների

հետ, որոնք մտածում են մի մասնաժողով կազմել գաղթականների վիճակի համար հոգ տանելու։

— Թիֆլիսում արդէն կազմուել է մասնաժողով։

— Երեւանինը պէտք է նրա մի ճիւղը լինի։

— Այստեղ ի՞նչպէս են գնում գործերը։

— Շատ վատ, պատասխանեց վարդապետը տխուր ձայնով, — մի ամբողջ շաբաթ է, որ այստեղ վէրընկած եմ. Ղազարապատի մի անկիւնում տեղ են տուել. ոչ ոք ինձ վրայ չի նայում, ոչ ոք չի էլ ուզում հարցնել, թէ ի՞նչ եւ որպիսի՞ դառն հանգամանքներ բերեցին մեզ այստեղ։ Ինձ խոստացան, թէ կը տանեն վերհարանը եւ այնտեղ հարցմունքներ կ'անեն։ Բայց դժբախտաբար այսպէս օրերը անցնում են։ Ստիպուեցայ գրաւոր կերպով ներկայացնել թշուառ ժողովրդի գաղթականութեան բոլոր պատմութիւնը, եւ յոյս ունէի, որ դրանից յետոյ կը կանչեն ինձ եւ բերանացի բացատրութիւններ կը պահանջեն։ Այդ փորձը նոյնպէս մնաց ապարդիւն։ Մի՞թէ կարելի է մինչեւ այս աստիճան սառնասիրտ եւ մինչեւ այս աստիճան անգութ լինել։ Ես ցուցակը ունեմ, որ 3000 ընտանիքից մինչեւ այսօր 1500 հոգի մեռել են, որը հիւանդութիւնից, որը քաղցածութիւնից։ Մնացածները, անտարակոյս, նոյնպէս կը մեռնեն, եթէ նրանց վիճակը այսպէս կը շարունակուի։

Վերջին տեղեկութիւնները որքան եւ ցաւալի լինէին, այսուամենայնիւ, մի առանձին տպաւորութիւն չը գործեցին Վարդանի սրտի վրայ. նա այդ բոլորը շատ բնական էր համարում. նա առաջուց գիտէր այս տեսակ գաղթականութիւնների կորստաբեր հետեւանքները։

— Բոլոր գաղթականները այստե՞ղ՝ Վաղարշապատում են միայն դետեղուած, հարցրեց նա։

— Ոչ, Ղզիրից եկան Վաղարշապատ եւ այստեղից տարածվում են դէպի ամեն կողմեր։ Այժմ Սուրմալու գաւառից սկսած, գաղթականները ցրուած են մինչեւ Նոր-Բայազէդ, մինչեւ Հին-Նախիջեւան. ամեն տեղ, ամեն գիւղերում կարելի է գտնել նրանց։

— Ժողովուրդը ի՞նչպէս է վերաբերվում դէպի իր պանդուխտ եղբայրները։

— Ժողովուրդը խիստ մարդասիրաբար է վարվում. օթեւան է տալիս, կերակրում է, հագուստ է տալիս, եւ չէ խնայում, ինչ բանով որ կարող է օգնել։ Պէտք է ասած, որ այստեղի ժողովուրդը ինքն էլ սաստիկ կարօտութեան մէջ է, պատերազմի տատճառով այժմ ամեն ինչ թանդացել է։ Բայց գաղթականներին աւելի բժշկական օգնութիւններ են հարկաւոր, քան թէ հայ. զանազան հիւանդութիւններ անխնայ կոտորում են։

Գիշերային մութը բոլորովին պատել էր վանքի շրջակայքը։ Աբեղաները քաշուել էին իրանց խուցերը. բայց խորհրդաւոր երգի ձայնը կրկին լսելի եղաւ անտառի խորքից.

"Բուլբուլն է հագել ի յոտին կօշիկ,
Զվարդն կը փնտռէ սիրով, անուշիկ"...

— Դու այժմ ո՞ւր պիտի գնաս, հարցրեց վարդապետը Վարդանից, ոտքի կանգնելով։

— Ինքս էլ չը գիտեմ...

— Գնանք ինձ մօտ։

— Ես չէի ցանկանայ, որ այստեղ ինձ տեսնէին։

— Վանքում այժմ քեզ ոչ ոք չէ կարող ճանաչել։

ԼԹ.

Յովհաննէս հայր սուրբի կացարանը գտնվում էր Ղազարապատի վերին յարկի սենեակներից մէկի մէջ։ Վարդանը իր ամբողջ մարմնի մէջ մի ցուրտ դող զգաց, երբ միւս անգամ ոտ կոխեց վանքի շեմքի վրայ։ Տասն տարուց աւելի կը լինէր, որ նա հեռացել էր այստեղից։ Այժմ տխուր հանգամանքները կրկին բերեցին նրան այստեղ։ Ինչքա՜ն աշխարհից անջատուած, եւ իրանց անձը աղօթքի եւ ճգնութեան նուիրած հասարակութեան այդ մենարանը այնպէս անախորժ տպաւորութիւն գործեց անբախտ երիտասարդի վրայ։ Նա յիշեց իր մանկութիւնը, այն յիմարութիւններով լի եւ դատարկ մանկութիւնը, որ անցուցել էր այնտեղ։ Նա յիշեց այն մթին անցեալը, որի վրայ կրկին նայելը զզուանք եւ սոսկում էր ազդում նրա մէջ։

Վարդանի ակամայ խռովութիւնը չէր կարող չը նշմարել Յովհաննէս հայր սուրբը, նա կարեկցաբար հարցրեց.

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ այսպէս լուռ ես։

— Ոչինչ, երբեմն ինձ հետ պատահում են անտեղի մտայուզութիւններ...

Փոքրիկ սենեակի մէջ կար մի մահճակալ, որի վրայ նստած էին հայր սուրբը իր հիւրի հետ. միւս կողմում դրած էր մի սեղան հասարակ փայտից, որի վրայ վառվում էր ճրագուի մոմը. իսկ նրա մօտ փոքրիկ սամովարը եռի էր դալիս։ Հայր սուրբը իր ձեռքով ածեց երկու բաժակ թէյ, մէկը տուեց Վարդանին, միւսը սկսեց ինքը խմել։ Տաք ըմպելին կազդուրեց երիտասարդի դրգռուած ջղերը։

Երկար երկու կողմից եւս տիրում էր մի տաղտկալի լռութիւն։ Խօսակցութիւնը չէր պատուաստվում, մինչեւ նա դարձաւ այն առարկային, որ երկուսի սրտին եւս խիստ մօտ էր։

— Այստեղ ի՞նչպէս են նայում "գործի" վրայ, հարցրեց Վարդանը։

— Մի կարճ պատմութիւնից դու կարող ես հասկանալ բոլորը, պատասխանեց հայը սուրբը։ — Այստեղ եկած էր մի տաճկաստանցի վարդապետ եպիսկոպոս ձեռնադրուելու համար (նա դեռ այստեղ է, գուցէ կը հանդիպես նրան)։ Առաջին օրերում, երբ դեռ նոր էր եկել, խօսելով Թիւրքիայի հայերի մասին, ամենասարսափելի գոյներով նկարագրում էր նրանց դրութիւնը, պատմում էր քրդերի բարբարոսութիւնները, պատմում էր Թուրքերի հարստահարութիւնները եւ հաղարումէկ փաստեր էր բերում, թէ որպիսի եղեռնագործութիւններ են կատարվում Հայաստանում։ Նրա խօսքերին անկարելի էր հաւատ չընծայել, որովհետեւ բոլորը, ինչ որ ասում էր, հաստատում էր անհերքելի ապացոյցներով։ Բայց հէնց որ այդ մարդը տեսնուեցաւ "հոսոսների" հետ, այնուհետեւ լեզուն փոխեց։ Այնուհետեւ սկսեց գովասանել Թուրքերի մարդասիրութիւնը, պաշտպանել նրանց արդարութիւնը եւ հիանալ նրանց ազնուութեան ու մեծահոգութեան վրայ։ Ի՞նչ անէր խեղճը, եթէ լեզուն չը փոխէր, եթէ իր խղճի եւ համոզմունքի դէմ չը ջատագովէր այն, որ իր համար դարշելի էր եւ ատելի, — գուցէ չէր ստանայ ցանկացած եպիսկոպոսութիւնը։ Մի ուրիշ օրինակ եւս. մի այլ տաճկաստանցի վարդապետ, որի վանքը կողոպտուած էր քրդերից, եկել էր այստեղ պաշտպանութիւն խնդրելու։ Այդ ողորմելին աւելի ցաւալի կերպով նկարագրում էր իր ժողովրդի կրած նեղութիւնները թէ կառավարութեան պաշտօնեաներից եւ թէ քուրդ դերեբեյներից։ Երբ նրա խօսքերը հասան "հոսոսներին", ոչ միայն ուշադրութիւն չը դարձրին վարդապետի խնդրի վրայ, որի համար նա եկած էր, այլ հրամայեցին դուրս անել վանքից։ Թշուառականը ստիպուեցաւ նոյնպէս փոխել իր լեզուն, եւ այնուհետեւ պատուաւոր ընդունելութիւն գտաւ, — մոռացաւ իր վանքը, մոռացաւ իր ժողովուրդը եւ միւս անգամ չը յիշեց քրդերից կրած հարստահարութիւնները։ Ես աւելին կ'ասեմ, այդ վարդապետը աւելի եւս հաճոյանալու համար, մի տօնախմբութեան օրում, սկսեց խմել սուլթանի կենացը, նոյն իսկ ժամանակ, երբ Բայազէդում եւ Ալաշկերտի մէջ Թուրքերը կոտորում էին հայերին։ — Այդ բոլորից յետոյ, կարծեմ, շատ պարզ է, թէ այստեղ որպէս են նայում "գործի" վրայ։

Վարդանը չէր հաւատում իր ականջներին, նրան թուում էր, թէ այդ բոլորը լսում է երազի մէջ։ Նա երեւակայել չէր կարող այս աստիճան անգթութիւն, որ հասնում էր սարսափելի դաւաճանութեան։ Ազգի սոսկալի ճգնաժամի րոպէում, երբ նրա կեանքը, երբ նրա ապագան կախուած էր մի մազից, որ կարող էր կտրուել, եւ ձգել նրան յաւիտենական անդունդի մէջ, — մի այսպիսի աղէտալի րոպէում, երբ ամբողջ ազգի աչքը դարձրած էր դէպի փրկութեան Արարատը, — նա, ազգը, հանդիսում էր իր ծնողի սառնասրտութեանը, եւ գտնում էր նրան թեքուած իր թշնամու, իր սպանողի կողմը...։

— Բոլորը մի եւ նոյն համոզմունքի են, հարցրեց Վարդանը խռովեալ ձայնով։

— Ոչ, "հոսոսները" միայն։ Դրանք Թուրքի կառավարութեան մէջ տեսնում են ամեն ինչ արդար եւ իրաւացի։ Եւ եթէ հայերը բողոքում են, կամ դժգոհութիւններ են յայտնում, — բոլորը սուտ է եւ զրպարտութիւն։

— Շատ հասկանալի է, դրանք եւս մի տեսակ Թոմաս էֆէնդիներ են. Թուրքի անկարգութիւնները միշտ նպաստաւոր են Թոմաս էֆէնդիներին։ Բայց դոնէ թող օրինակ առնէին Ներսէս պատրիարքից, Խրիմեանից եւ Նարբէից, որոնք հայոց պատմութեան մէջ պաշտելի անուն պիտի թողնեն։

— Դու խիստ միամտաբար ես խօսում, բարեկամ, պատասխանեց հայր սուրբը, — հաւատացնում եմ քեզ, եթէ հնար ունենան, հէնց այսօր կ'ոչնչացնեն Ներսէսի բոլոր գործողութիւնները, դուցէ աշխատում էլ են... — Այստեղ ճգնում են հաւատացնել, թէ Ներսէսը եւ իր արբանեակները, բոլորը շարլատաններ են, թէ նրանք խաբում են ազգին, թէ նրանք հայի համար չեն մտածում եւ (մտածելու էլ առիթ չը կայ), թէ նրանք եւրոպական այլ եւ այլ պետութիւնների ներկայացուցիչների ձեռքում անարդ գործիքներ են, որ աշխատում են նրանց քաղաքական շահերի համար, որպէս զի, խեղճ Թիւրքիայի վզին աւելի մեղքեր փաթաթեն։ Այստեղ ծիծաղում են նրանց թեթեւամտութեան վրայ, որոնք Ներսէսի "ձեռնածութիւններից" մի լաւ բան են սպասում։ Այստեղ ասում են, թէ Թուրքից մի նոր բան պահանջելը կատարեալ լրբութիւն կը լինէր հայերի կողմից, թէ Թուրքը տուել է հայ ժողովուրդին ինչ որ պէտք է, որից աւելին նա արժանի չէ։ Եւ եթէ մի բան թերի է մնացել, ասում են, Թուրքը այնքան բարի է, որ ինքը կը բարեհաճի շնորհել, — էլ ի՞նչ հարկ կայ ձանձրացնել ողորմած կառավարութեանը։

— Մի՞թէ ամբողջ միաբանութիւնը այդ սոսկալի արամադրութեան մէջ է գտնվում, գոչեց երիտասարդը բարկութեամբ։

Հայր սուրբը իսկոյն չը պատասխանեց, սենեակից դուրս եկաւ, նայեց դէպի դրսի խաւարի մէջ, եւ ներս մտնելով, նստեց իր առաջուայ տեղը, եւ բաւական մեղմ ձայնով ասաց.

— Մենք բաւական անզգոյշ ենք խօսում, այստեղ պատերն էլ ականջ ունեն, վանքի հիւրընկալը կենում է հարեւան սենեակում, սատանայի հոտառութիւն ունի, եթէ մի բան լսեց, առաւօտեան խաբարը կը տանէ...

— Ես հարցրի առհասարակ միաբանութեան տրամադրութիւնը, կրկնեց Վարդանը, առանց ուշադրութիւն դարձնելու հայր սուրբի վերջին խօսքերի վրայ։

— "Հոսոմները" միայն բացառութիւն են կազմում, թէ չէ, ամբողջ միաբանութիւնը թուրքամոլ է։ Նրանց մէջ կան ալնիւ մարդիկ ալնիւ ցանկութիւններով, եւ դուցէ պատրաստ կը լինեն ամեն զոհաբերութիւն յանձն առնել Թիւրքիայի հայի արտասուքը սրբելու համար, եթէ...

— Եթէ "հոսոմները" թոյլ կը տան։

— Այո։ Ի՞նչ անեն խեղճերը. նրանք այն աստիճան կաշկանդուած են, խօսելու անգամ իրաւունք չունեն, ո՞ւր մնաց գործելու։ Այստեղ կայ մի Մանկունի, մի կատարեալ հրէշ, որ իր ծանրութեան ներքոյ ճնշում է, խեղդում է բոլորին։

— Ես դարձեալ չեմ հասկանում, այս ի՞նչ դժոխային քաղաքականութիւն է՝ տեսնել մի ամբողջ ժողովուրդ Թիւրքիայի բռնակալութեան ներքոյ ճնշուած, որ մօտ է ոչնչանալու, — եւ դարձեալ պաշտպանել ոչնչացնողին։

— Ինձ համար էլ կատարեալ հանելուկ է այդ, ես էլ չեմ հասկանում, պատասխանեց հայր սուրբը շուարած կերպով։

— Բայց ինչով են բացատրում ալաշկերտցոց գաղ-թականութիւնը կամ Բայազէդի հայերի կոտորածը։ — Ինչով են բացատրում Վանի հրդեհը։

— Թուրքին արդարացնելու համար նրանք միշտ պատրաստի եւ սերտած բառեր ունեն իրանց բերանում։ Մեղքը գցում են հայերի վրայ, ասելով, թէ հայերը մի անհանգիստ, դժգոհ եւ անշնորհակալ ժողովուրդ են։ Ասում են, "գայլը մեղաւոր չէ, երբ գառը նրան բար-կացնում է"։ Եւ ալաշկերտցոց գաղթականութեան մէջ տեսնում են՝ ոչ թէ Թուրքի եւ քրդի սուրը եւ հուրը, որ ստիպեցին մի ամբողջ ժողովրդի թողնել իր հայրենիքը, — այլ աշխատում են ցոյց տալ մի գաղտնի եւ զօրեղ ձեռք, որ դուրս քաշեց Թշուառ ժողովրդին իր հայրենիքից։ Թէ որքան սխալ է այդ, քեզ աւելի պէտք է հասկանալի լինի, Վարդան, դու խօ սկզբից մինչեւ վերջը "գործի" միջումն ես եղել...

— Այս բոլորից յետոյ, ինձ դարձեալ անհասկանալի է, թէ դու ի՞նչ յոյսերով ես այստեղ մնում, հայր սուրբ, — ասա, խնդրեմ, ի՞նչ պաշտպանութիւն կամ ի՞նչ օգնութիւն կարելի է գտնել դրանցից։

— Ոչինչ, ես ինքս էլ համոզուած եմ — ոչինչ։ Բայց ի՞նչ ճար ունեմ, ո՞ւմը դիմեմ, ո՞ւր գնամ, մնացել եմ շուարած։

— Դիմեցէք հայ հասարակութեանը։

Հայր սուրբը ոչինչ չը պատասխանեց եւ բոպէական մտածութիւնից յետոյ ասաց, կարծես, ինքն իր հետ խօսելով.

— Այժմ դժուար է բոլորը պարզել... բայց կը գայ մի օր, երբ ժամանակը կը մերկացնէ խայտառակ իրակա-նութիւնը...

Կարծես, արիւնի հետ դուրս բղխեցան այդ խօսքերը անբախտ աբեղայի սրտից։ Նա այն աստիճան յուսահա-տուած էր, այն աստիճան զայրացած էր, որ իրան զսպել չը կարողացաւ։ Եւ ի՞նչ հարկ կար Վարդանի մօտ ծած-կամիտ լինել։ Վարդանը օտար մարդ չէր նրա համար։ Վարդանի հետ նա գործել էր. Վարդանի հետ շատ խորհուրդի մէջ մասնակից էր եղել։

Խօսակցութիւնը կրկին դարձաւ գաղթականների վրայ։ Ալաշկերտցոց առաջնորդը պատմում էր իր վտարանդի ժողովրդի թշուառութիւնները, նկարագրում էր, թէ որպիսի տառապանքներ են կրում նրանք, առաջարկում էր միջոցներ, որոնցմով կարելի կը լինէր պահպանել նրանց կատարելապէս ոչնչանալուց։

— Ինձ շատ զարմացնում է, որ այդքան ահագին թուով հիւանդներ կան գաղթականների մէջ, կտրեց երիտասարդը հայր սուրբի խօսքը — այդ հաշուով կէսից աւելին հիւանդ է։ Ընչից առաջ եկաւ այդ։

— Եթէ լսելու լինես գաղթականութեան սարսափելի մանրամասնութիւնները, կը զարմանաս, որ այդ թշուառ-ները դեռ ես կարողացել են կենդանի մնալ։ Դա մի հրաշք է, կատարեալ հրաշք։ Բայց ինձ մօտ ոչ այնքան յիշողութիւն է մնացել եւ ոչ այնքան լեզուի զօրութիւն, որ կարողանամ բոլորը պատմել քեզ։ Ես միայն կը տամ մի քանի մասնաւոր տեղեկութիւններ։

— Բայազէդի պաշարումից յետոյ, որի մանրամասնու-թիւնները քեզ յայտնի են, գեներալ Տէր-Ղուկասովը ստիպուեցաւ յետ քաշել ռուսաց զօրքերը։ Այդ միջոցին նա կատարեց երկու մեծ քաջագործութիւններ։ Մի կողմից իր փոքրաթիւ գունդերով նա պէտք է պատերազմէր Թուրքերի բազմաթիւ զօրքերի հետ (ի հարկէ, նահանջման

գիրք բռնելով), միւս կողմից, նա պէտք է ազատէր Ալաշկերտի եւ Բայազէդի գաւառների հայ բնակիչներին թուրքերի կոտորածից։ Այդ երկուսն էլ ռազմագիտական մեծ ճարպիկութիւնների կարօտ էին, որոնց մէջ գեներալը ցոյց տուեց իր հանճարը։ Նա այնքան ժամանակ կարողացաւ բռնել թուրք զօրքերի սարսափելի հոսանքի առաջը, որ մինչեւ նրանց հասնելը, հայերը շտապեցին գաղթել։ Բայց ժամանակը խիստ նեղ էր եւ ժողովուրդը բոլորովին անպատրաստ էր գաղթականութեան համար։ Ցանկարծ լուր տուեցին, թէ ռուսաց զօրքերը պէտք է թողնեն այդ երկիրը, գաղթեցէք, փախէք այդ երկրից, եթէ մնալու լինէք, թուրքերը կը կոտորեն ձեզ։ Այդ լուրը կայծակի արագութեամբ անցաւ բոլոր գաւառների մէջ։ Սարսափը եւ տագնապը տիրեցին ժողովրդին։ Թշնամին կանգնած էր նրա գլխին։ Այլ եւս հեղդալ կամ յապաղել անկարելի էր. պէտք էր թողնել սիրելի հայրենիքը։ Ինձ դժուար է նկարագրել այն սոսկալի գիշերը, երբ ժողովուրդը բաժանվում էր իր տնային օջախից։ Մի զարհուրելի խառվութիւն, մի աղետալի իրարանցում տիրել էր ամբոխի վրայ։ Մի գիշերուայ ընթացքում պէտք է գաղթէին։ Անասունների մեծ մասը մնացին դաշտումը, տէրերը ժամանակ չունեցան բերելու։ Հայրը չը սպասեց որդուն, որը տնից բացակայ էր։ Նրբայրը մոռացաւ եղբօրը։ Ցների կարասիքը եւ ծանրութիւնները կամ մնացին իրանց տեղերում, կամ տէրերը կրակ տուեցին եւ այրեցին։ Մայրերը շալակեցին փոքրիկներին, իսկ հայրերը, բեռնաւորուած մի քանի անհրաժեշտ իրեղէններով, բռնեցին իրանց որդիների ձեռքից եւ դուրս եկան։ Խիստ սակաւ ընտանիքներ սայլեր ունէին, որովհետեւ սայլերը տարել էին պատերազմական մթերքներ տեղափոխելու։ Սպասելու ժամանակ չը կար, որովհետեւ թշնամին ետեւից հալածում էր։ Ով մնաց, զոհուեցաւ բարբարոսի անգթութեանը։ Ով եկաւ, կարծեց, թէ ազատուեցաւ։ Բայց այստեղ եւս հանդիպեցան նոր դժբախտութիւնների, որ աւելի անողորմ են քան թէ քուրդ եւ թուրքը, — ինչպէս են քաղցածութիւնը եւ հիւանդութիւնը։

— Եւ այդ հիւանդութիւնը հետեւանք էր այն դառն չարչարանքների, որ կրեց ժողովուրդը իր գաղթականութեան ժամանակ։ Ամբողջ շաբաթների ճանապարհը նա պիտի անցնէր մի քանի օրուայ մէջ, առանց հանգըստանալու եւ առանց մի տեղ կանգ առնելու։ Կին, աղջիկ, երեխայ, ծեր եւ մանուկ, բոլորը գալիս էին ոտով. խիստ սակաւները գրաստ ունէին։ Շատերը նուաղեցան, թուլացան եւ մնացին կէս ճանապարհի վրայ։ Ո՞վ էր ուշադրութիւն դարձնում աղդականի, բարեկամի, մինչեւ անգամ սիրելի զաւակի վրայ։ Ամենին տիրել էր մի ընդհանուր խառվութիւն. ամեն մարդ կորցրել էր թէ սիրտը եւ թէ զգայմունքը։ Աւելացրէք դրա վրայ քաղցը, ծարաւը եւ օտար երկրի անսովոր կլիման, եւ դուք հիւանդութիւնը շատ բնական կը գտնէք։ Թշնամուն չը հանդիպելու համար մեզ բերեցին այնպիսի սատանայական եւ լեռնային ճանապարհներով, որ շատ դժուար էր կնիկների եւ երեխաների համար անցկենալ։ Եւ այդ էր պատճառը, որ մի քառորդ մասը գաղթականների մնացին ճանապարհների վրայ եւ բոլորովին ոչնչացան։ Կարճ ասած, Շահ-Ապասի Սպահան տարած հայ գերիների պատմութիւնը, որը այնքան սարսափելի գոյներով նկարագրում են մեր մատենագիրները, այս գաղթականութեան հետ համեմատելով, մի շատ հասարակ դէպք պէտք է համարել։

Հայր սուրբի ցաւալի պատմութեան ժամանակ Վարդանի միտքը զբաղուած էր բոլորովին այլ առարկայով. նա համարեա չէր լսում նրան. — նա մտածում էր իր սիրելի Լալայի մասին։ Ախար նա էլ այդ գաղթականների մէջ պէտք է լինէր, նա էլ պէտք է ենթարկուած լինէր նոյն աղէտներին։ Թէեւ Զաւօն պատմել էր նրան, թէ քուրդ բէկի կնոջ՝ Խուրշիդի կարգադրութեամբ Լալան տարուեցաւ ռուսաց երկիրը, բայց նրա ծառաները խօ չէին կարող անցնել ռուսաց սահմանից, որովհետեւ իրանք քուրդ էին եւ թշնամի պետութեան հպատակ։ Ուրեմն, Լալային իր եղբօր կնոջ Սառայի հետ պէտք է թողած լինէին գաղթականների խմբի մէջ։ Բայց ի՞նչպէս գտնել նրանց, արդեօք կենդանի՞ են, — այդ հարցերը սկսեցին տանջել անբախտ երիտասարդին։

— Հայր սուրբ, դու ոչինչ չը գիտէ՞ս Ծերունի Խաչօի ընտանիքի մասին, հարցրեց նա, իմ կարծիքով, նրանք եւս պէտք է գաղթականների մէջ լինեն, ո՞րտեղ կարելի է գտնել նրանց։

— Գտնել փոքր ինչ դժուար է ձեզ համար, որովհետեւ գաղթականները զանազան տեղերում ցրուած են։ Բայց նրանց հետ եկել են իրանց քահանաները եւ տանուտէրները, ես յանձնել եմ այս վերջիններին կազմել իրանց ժողովրդի անուանական վիճակագրութիւնը, թէ որքան թուով ո՞րտեղ են բնակվում, որպէս զի, նրանց դարմանելու համար հոգածութիւն լինի։ Այդ ցուցակներից հեշտ կը լինի գտնել, թէ գաղթականների ո՞ր խումբի մէջն է գտնվում Ծերունի Խաչօի ընտանիքը։

— Ե՞րբ կը բերեն ցուցակները։

— Դուցէ վաղը, կամ միւս օրը, ճիշտը չը գիտեմ։

Այդ «վաղը» կամ «միւս օրը» մի անսահմանութիւն էր խեղճ Վարդանի համար, այս պատճառով նա այն գիշեր անցկացրեց անտանելի տանջանքների մէջ։

Խ.

Վանքի զանգակների մեղմ եւ չափաւոր հնչիւնները ծանուցին առաւօտեան ժամը։ Աւելի բախտաւոր աբեղաները դեռ քնած էին փափուկ սենեակներում, իսկ աւելի անբախտ աբեղաները շտապեցին Աստուծոյ տաճարը աղօթելու համար։

Յովհաննէս հայր սուրբը այս առաւօտ խիստ վաղ զարթնեց, եւ թողնելով Վարդանին քնած, ինքը դուրս եկաւ կացարանից։ Նա չէր գնում աղօթելու, այլ սովորութիւն ունէր ամեն առաւօտ այցելել Վաղարշապատում գտնուած գաղթականներին, եւ տեսնել, թէ ինչ դրութեան մէջ են նրանք։ Այս առաւօտ տեսած թշուառութիւնները այն աստիճան սիրտ կտրատող էին, որ նա այլ եւս ուժ չունեցաւ բոլոր անբախտներին այցելութիւն անելու։ Ամեն տեղ նկատում էր սարսափելի տեսարաններ, ամբողջ ընտանիքը հիւանդ, անխնամ, ընկած էին այս եւ այն ախոռատան անմաքրութիւնների մէջ, գոնէ մէկը առողջ չէր մնացել, որ միւսներին հոգ տաներ։

Ծխուր յուսահատութեան մէջ դառնում էր նա դէպի վանքը, եւ մտքին դրած ունէր, այսօր, ինչ հնարքով եւ լինի, մտնել վեհարանը եւ մահամերձ ժողովրդի համար շուտափոյթ օգնութիւն խնդրել։ Այդ միջոցին անցաւ նրա մօտից մի ֆայտոն, նստողը, տեսնելով աբեղային հրամայեց կանգնել։

— Լաւ խարար, ասաց նա մտենալով. — Երեւանի նահանգապետը հաստատեց գաղթականներին օգնելու հա-

մար կաղմուած մասնաժողովը, անդամներ ընտրուեցան բաւական հաւատարիմ անձինք։ Թիֆլիսից նոյնպէս ուրախալի լուրեր ստացուեցան, այնտեղի մասնաժողովը եռանդով գործում է. խոստանում են շուտով փողեր եւ բժշկական դարմաններ ուղարկել։

— Ուրախալի է, պատասխանեց աբեղան։ — Այստեղ էլ մտածում են հրամաններ գրել հոգեւոր իշխանութեան գործակալներին նուիրատուութիւններ հաւաքելու։

— Ո՞րտեղից պիտի գրեն։

Աբեղան ձեռքը պարզեց դէպի վանքը։ Երիտասարդը, սկսեց ծիծաղել։

— Այդ ոչինչ նշանակութիւն չի կարող ունենալ, պատասխանեց նա, — նրանց հաւաքածը ալաշկերտցու փորը չի մտնի...

Եկուորը Մէլիք-Մանսուրն էր։

— Դու ինձ ուրախացրիր բերած լուրովդ, ասաց աբեղան. — ես էլ քեզ պիտի ուրախացնեմ։

— Ինչով։

— Վարդանը այստեղ է։ — Իմ սենեակում։

— Որա՞, ո՞րտեղից դուրս ընկաւ այդ ատտանան. ես չէի հաւատում, որ միւս աշխարհից մարդիկ կարող են վերադառնալ։ — Գնանք։

Երկուսն էլ սկսեցին դիմել դէպի վանքը։

Շտապարհին Մէլիք-Մանսուրը հարցրեց աբեղայից.

— Դու լաւ ճանաչո՞ւմ ես Վարդանին։

— Հինգ տարուց աւել կը լինի, որ ես նրա հետ ծանօթ եմ։ Մեր կողմերում նա յայտնի է որպէս մի քաջ կանտրաբանդիստ։ Բայց երկար ժամանակ ոչ ոք չը կարողացաւ հասկանալ, որ նրա պարապմունքը շահասի-

բական նպատակ չունի։ Նա միայն դէնքեր էր տեղափոխում եւ շատ անգամ ձրի բաժանում էր գիւղացիներին. եւ եթէ պատահում էր երբեմն ապրանքներ բերել, այդ անում էր նա իր բուն վաճառքի հետքերը թաղցնելու համար։ Նպատակը շատ բարի էր, բայց տխուր հանգամանքները բոլորը ապարդիւն արեցին...

— Ես մի քանի անգամ միայն կարողացայ տեսնել նրան, պատասխանեց Մէլիք-Մանսուրը, — բայց մինչեւ այսօր ոչ մի մարդ իմ համակրութիւնը այն աստիճան չէ գրաւած, որպէս այդ եռանդոտ երիտասարդը։ Ես տեսայ, որքան քաջ, որքան անգութ է նա արիւնոտ գործերում, այնքան աւելի ազնիւ, բարի եւ հաւատարիմ է բարեկամութեան մէջ։

— Բացի դրանից, Վարդանը նշանաւոր է եւ իր սատանայական խելքով. նա իր կեանքում կատարել է շատ բան, որքան հազիւ կարող էր կատարել մի լաւ գործիչ հարիւր տարուայ ընթացքում։ Միայն նա խիստ համեստ է իր գործունէութեան մէջ եւ սիրում է միշտ ծածկուել հասարակ մարդու կեղեւի մէջ։

Վարդանը, առաւօտեան զարթնելով, գտաւ իրան հայր սուրբի սենեակի մէջ մենակ։ Արեգակի ճառագայթները ներս էին ծագել խուցի նեղ լուսամուտներից եւ լցրել էին նրան խիստ պայծառ լուսով։ Բայց տաքացած օդը խեղդելու չափ անտանելի էր։ Նա սօսեցաւ լուսամուտներից մէկին եւ բաց արեց. դրսի թարմ եւ հովասուն օդը ախորժ հոսանքով զարկեց նրա բորբոքուած երեսին։ Բայց մի բան, կարծես, ծանրացել էր նրա սրտի վրայ, մի բան դարձեալ խեղդում էր նրան։ Մի փոքր սպասեց, մինչեւ իր հիւրընկալը կը վերադառնար։ Բայց ուշացաւ նա. Վարդանը այժմ խիստ անհամբեր էր

դարձել, նա դուրս եկաւ մի փոքր ազատ օդ շնչելու։ Եւ որովհետեւ չէր ցանկանում, որ վանքում տեսնէին կամ ճանաչէին նրան, այս պատճառով ետեւի դռնից դուրս եկաւ դէպի լճի կողմերը։ Այնտեղ դտաւ մի ծերունի եպիսկոպոս, որին իսկոյն ճանաչեց։ — Դա վանքի նշանաւոր հնութիւններից մէկն էր։

— Բարով, պապի։

Ամբողջ միաբանութիւնը նրան "պապի" էր կոչում։ Պապին նստած էր ամառնային արեգակի այրող ճառագայթների հանդէպ եւ տաքացնում էր իր սառած անդամները։ Նա նմանում էր հնդկական ֆագիրներին, որոնք չեն լուացվում, չեն սանրվում, եղունգները չեն կտրում եւ լաւ չեն հագնվում, որովհետեւ մեղք են համարում։ Լսելով երիտասարդի ձայնը, նա ձեռքը դրեց ճակատի վրայ, որ աչքերից արգելէ լոյսի ուղիղ ճառագայթները, եւ վեր նայելով, ասաց.

— Զայնդ ծանօթ է դալիս, որդի, բայց աչքերս չեն ջոկում, թէ դու ով ես, որդի։

— Ես Վարդանն եմ։

— Շատ ապրիս, որդի, եկ, համբուրեմ քեզ.— որքան մեծացել ես, որդի։

Վարդանը թոյլ տուեց իրան համբուրել։

— Նստիր, որդի, այստեղ, ինձ մօտ, — ահա այսպէս լաւ է։ — Ի՞նչ լաւ ազգ ես դարձել, որդի։ — Միտդ դալիս է, որ կատուի նման մնում էիր իմ խուցը եւ միրդ էիր գողանում։ Այն ժամանակ պստիկ էիր, շատ պստիկ։

— Միտս դալիս է, պապի, պատասխանեց Վարդանը խորին հառաչանքով. — ես գողութիւնը այստեղ սովորեցայ...

— Ո՞վ չէ գողանում, հիմայ ամենքը գողանում են։ Արդարութիւնը ծիծեռնակի կաթն է դարձել, ոչ մի տեղ չես դտնի։ Երկու օր չը կայ, որ անիծուածները իմ խուցէն գողացան մի քանի հարիւր բուբլի։ Հոգուս համար էլ պահել։ Ի՞նչպէս դտան. — ես չեմ հասկանում. սատանան էլ չէր կարող դտնել։ Դրել էի առաստաղի տախտակամածի ետեւը։ — Բայց սատանաները դրանցից պէտք է դաս առնեն... Ա՛խ, նզովեալներ, նզովեալներ...

Պապի սենեակից փողոց գողանալը այնպիսի մի սովորական բան էր, որ շատ չէր կարող հետաքրքրել Վարդանին։ Այդ մօտ հարիւր տարեկան ծերունին իր ամբողջ կեանքում ոչինչ չէր ծախսել, եւ ձեռք ընկածը հաւաքելու ու պահելու սովորութիւն ունէր։ Երբ նրա դանձը հարիւրների կամ հազարների կը հասնէր, յանկարծ մի աներեւոյթ ձեռք կը յափշտակէր եւ կը տանէր բոլորը։ Բայց վերջին ժամանակներում յաճախ կրկնուող գողութիւնները պապին բաւական վարպետ շինեցին։ Նա իր սենեակում հարիւրաւոր ծակուծուկ ունէր, եւ փողերի ամեն մի մասը մի ծակում էր պահում։ Եւ այս պատճառով, երբեք չէր պատահում, որ նրա դանձը մի անգամով յափշտակուէր, թէեւ ինքը սովորութիւն ունէր երդուել եւ հաւատացնել, թէ բոլորը տարան։

Պապին խիստ տիպական ժլատներից էր. եւ Վարդանը ճանաչում էր նրան իր մանկութեան ժամանակից, նրա ժլատութիւնը միաբանութեան մէջ լեգենդական նշանակութիւն էր ստացել։ Պապին համարվում էր հարուստ արեղաներից մէկը, այն զանազանութեամբ միայն, որ ուրիշները իրանց հարստութիւնը դիզել էին աւելի մթին ճանապարհներով, իսկ պապին սաստիկ խնայողութեամբ։

— Փող շատ ես սիրում, պապի, ինչ պիտի անես այսքան փողը։

— Էհ, որդի, "աղուէս կայ, որ ուղտ է կուլ տալիս, բայց գայլն անունն է խայտառակ"։ — Հիմայ ոչ էլ սիրում փողը, հիմայ փողն բաղար է, բոլորը փողի համար են աշխատում։

Նա դողդոջուն ձեռքով ծոցից հանեց քթախոտի տուփը, բայց արաւ, տեսաւ, որ դատարկ էր։ Գուցէ հարիւր անգամ նա այսօր բաց էր արել այդ դժբախտ տուփը եւ ամեն անգամ տեսել էր, որ դատարկ է, բայց դարձեալ չէր հաւատում իր աչքերին, եւ կարծում էր, թէ գուցէ մի հրաշքով լցուած կը լինի։

— Անիծուի Սիմոն վարժապետը, — դու խո ճանաչում ես նրան, — քսան կոպէկ տուեցի, թանկքայէ ղուրիս էլ տուեցի, որ տանէ քաղաքից բուրնօթի առնէ, տարաւ, համ փողը կերաւ, համ ղուրին։ — Դու բուրնօթի չունէս, Վարդան։

— Ես չեմ գործ ածում, պապի։

Պապիի բախտին փոքր ինչ հեռու ընկած էր մի կիսաքարշ պապիրոս։ Նա տեսաւ, եւ վերկենալով, մօտեցաւ, վերառեց պապիրոսի կտորը, եւ թղթէ փաթոթը պատառելով, մի կողմը դցեց, այնուհետեւ սեւացած ծխախոտը փշրեց ափի մէջ, դողդոջուն մատներով մանրեց, եւ կծու փոշին քաշեց պնչածակերի մէջ։

— Միթէ այդպէս են պահում քեզ, պապի, որ բուրնօթու փող էլ չեն տալիս։

— Էհ, որդի, աշխարհս փոխուել է, ուր են Ներսէս Վեհափառի ժամանակները։ Այն ժամանակ սէր կար, միաբանութիւն կար. այն ժամանակ մեծ կար, փոքր կար։ Իսկ հիմայ ամեն բան տակնուվրայ է եղել։ Ով որ

ճարտար սուտեր խօսել գիտէ, ով որ խելացի կերպով խաբել գիտէ, նա է առաջ ընկնում։ Մեր նմանների ուրախին ոչ է նայում։ "Հիմայ նոր հաւեր են եկել, ու երկաթէ ձուաներ ածում"։

Պապին Ներսէսի ամենաջերմ պաշտողներից մէկն էր. այդ յաւիտենական յիշատակի արժանի կաթողիկոսի անունը նրա լեզուում սրբութեան նշանակութիւն ունէր։ Ամեն մի զեղծում տեսնելու ժամանակ, երբ նրա սիրտը վշտանում էր, նա միշտ սովորութիւն ունէր յիշել Ներսէսի ժամանակները, որ նրա համար Էջմիածնի ոսկեդարն էր։

Պապին այժմ մի առանձին հոգեզմայլութեամբ դարձեալ յիշեց ոսկեդարը։ Նա ցոյց էր տալիս գեղեցիկ լեռը, բացատրում էր, թէ ինչ նպատակի համար էր շինել տուել այն մեծ մարդը այդ գեղեցիկ լեռը։ Ցոյց էր տալիս լճի մօտ մի աւերակ, որ պէտք է թղթի գործարան լինէր, որ վանքը ուրիշ տեղից թուղթ բերել չը տար, իսկ այժմ այնտեղ վանքի գիւղացիները իշաներ էին կապում։ Ցոյց էր տալիս լճի հանդէպ մի ուրիշ աւերակ, որ պէտք է մետաքսի գործարան լինէր, որի համար անկել տուեց Վեհափառը անտառի մի ահագին մասը, որ բաղկանում էր թթենիներից։ Ցիշելով անտառը, նա չը կարողացաւ իր արտասուքը զսպել, եւ պատմեց, թէ Վեհափառը իր տնկել տուած ծառերը այնքան էր սիրում, որքան հայրը կը սիրէ իր զաւակներին։ Երբ գնում էր անտառը, միշտ մի փոքրիկ կարոց իր մօտ ունէր եւ իր ձեռքով կտրատում էր ծառերի աւելորդ ճիւղերը։ Եւ նա բոլոր ծառերը ճանաչում էր, եւ գիտէր, թէ տարուայ մէջ որը որքան է մեծացել։ Այդ տեսնելով Վեհափառը ուրախանում էր, որպէս հայրը,

նայելով իր մանուկի աճող հասակին ուրախանում էր եւ այլն։

Վարդանը նկատելով, որ այդ պատմութիւնը շատ երկար կը ձգուի, կամենում էր հեռանալ։

— Ականջդ մօտ բեր, Վարդան, ասաց պապին։

Վարդանը ականջը մօտ տարաւ եւ լսեց հետեւեալ խօսքերը.

— «Շուտ հեռացիր այստեղից, որդի, քեզ վրայ խորթ աչքով են նայում»։

— Ինձ այստեղ դեռ ոչ ոք չի տեսել, պապի։

— Բաւական է, որ մէկը տեսել է։ — Ես վատ բաներ լսեցի քո մասին։

— Ձեր ականջները խօ լաւ չեն լսում, պապի, ի՞նչպէս լսեցիք։

— Պապիի ականջները այն ժամանակ միայն վատ են լսում, երբ խօսքը իրան ձեռնտու չէ, բայց պէտքական խօսքը նա իսկոյն լսում է։

Վարդանը ծիծաղեց եւ հեռացաւ։

Պապին նրա ետեւից կանչեց.

— Լսիր, Վարդան, եթէ քաղաքը գնալու լինիս, չը մոռանաս ինձ համար մի քիչ բուրնօթի ուղարկել։ Դու խօ տեսար, որ տուփս դարդակ էր։

Այդ միջոցին յայտնուեցան Մէլիք-Մանսուրը Յովհաննէս հայր սուրբի հետ։

— Ի՞նչ էիր խօսում պապիի հետ, հարցրեց վերջինը։

— Նա միակ ազնիւ մարդն է այստեղ, պատասխանեց Վարդանը, եւ դառնալով Մէլիք-Մանսուրին, ասաց.

— Ես կը ցանկանայի ձեզ հետ առանձին խօսել, դուք ունէք այստեղ որ եւ լսէ ծանօթ տուն։

— Ունեմ։

Վարդանը ոչ թէ պապիի խօսքերից կասկածի մէջ ընկաւ, այլ առհասարակ աշխատում էր իրան հեռու պահել վանքից։ Բացի դրանից, նա անհանգիստ էր Լալայի մասին, պէտք էր գտնել նրան, պէտք էր մի տեղեկութիւն ստանալ նրա մասին։ Նա խնդրեց Յովհաննէս հայր սուրբից, որ նա հաղորդէ իրան, եթէ որ եւ լսէ տեղեկութիւն ստանալու կը լինի քահանաներից։

— Ես լաւ ստացայ, որ այսօր մինչեւ ճաշը կը դան քահանաները եւ ցուցակները կը բերեն, ասաց հայր սուրբը, — անմիջապէս քեզ իմաց կը տամ։

— Գիտէք մեր տեղը, հարցրեց Մէլիք-Մանսուրը։

— Գիտեմ։

— Ուրեմն գնանք, Վարդան։

Այդ միջոցին հրապարակի վրայ երեւաց մի փոքրիկ խումբ, որ դանդաղ կերպով շարժվում էր դէպի գերեզմանատունը։ Մի քանի ալաշկերտցիներ տանում էին մի դագաղ։ Քահանայ չը կար, որովհետեւ քահանային կարող էին պատրաստ գտնել գերեզմանատանը։ Նա այնտեղից չէր հեռանում, ի նկատի ունենալով, որ ամեն րոպէ նոր դագաղներ կարող էին բերուել։ Մի կին, յենած երկու ուրիշ կանանց թեւքերի վրայ, գնում էին դագաղի հետ։ Նա լաց էր լինում, եւ ոչ արտասուք էր երեւում նրա ցամաքած աչքերում։ Նա գտանվում էր մի տեսակ սարսափելի շուարման մէջ, որ յատուկ է հոգու այն տրամադրութեան, երբ բոլոր զգացմունքները խորտակվում են մի ծանր եւ անակնկալ հարուածի ներքոյ։ Երեւում էր որ այդ կինը հանդուցեալի մօտ ազգականը պէտք է լինի։ Նրա փէշերից քարշ էին ընկած

երկու փոքրիկ երեխաներ. դրանք լաց էին լինում։ Վաղարշապատցիներից ոչ ոք չէր գնում դագաղի հետ, բացի մեզ ծանօթ բժշկապետից, որ որոշվում էր այդ աղքատ կիսամերկ խումբի մէջ։

Վարդանը եւ Մէլիք-Մանսուրը հեռուից տեսան այդ թշուառ յուղարկաւորութիւնը, բայց ուշադրութիւն չը դարձրին։ Ամեն օր, ամեն րոպէ հանդիպում էին այսպիսի տեսարանների, որոնք արդէն սովորական երեւոյթների կարգն էին անցել։

ԽԱ.

Վարդանը, տեսնելով Մէլիք-Մանսուրին, կարծես, առժամանակ մոռացաւ դառն ցաւը, որ այնքան սաստիկ կերպով մաշում էր նրա սիրտը։ Բայի դրանից, Յովհաննէս հայր սուրբի տուած յոյսը, թէ դաղթականների հետ եկած քահանաներից եւ տանուտէրներից կարելի է տեղեկանալ Ծերունի Խաչօի ընտանիքի ո՛րտեղ լինելու մասին, — ուրախալի յոյսը բաւական հանգստացրել էր նրան։ Նա մտածում էր, թէ այդ տեղեկութիւններով կարող է գտնել Հալային, եւ իր սիրով կը թեթեւացնէ նրա պանդխտութեան տառապանքները։

Բայց այդ՝ սիրա խոցոտող կսկիծների առժամանակեայ բթութիւն էր միայն, երբ վշտերը գուլանում են, եւ սրտի վէրքերին սիրում է բոպէական թմրութիւն։

Ցունը, ուր տանում էր նրան Մէլիք-Մանսուրը, գտնվում էր Վաղարշապատի հին փողոցներից մէկի մէջ։ Շինուածքները թէեւ մանր էին եւ խիստ աղքատ, բայց որպէս առհասարակ Վաղարշապատի տները, ունէին ընդարձակ բակեր, որ հովանաւորուած էին պտղատու ծառերով։

— Դու շատ գոհ չես լինի, ասաց ճանապարհին Մէլիք-Մանսուրը, — եթէ գիտենաս, թէ ո՛րտեղ եմ տանում քեզ։

— Ինձ համար մի եւ նոյն է, պատասխանեց Վարդանը անփոյթ կերպով։ — Ես միայն յանկանում էի մի քանի տեղեկութիւններ ստանալ պ. Սալմանի մասին։ Այնտեղ իսկ մեզ խանգարող չի լինի։

— Ոչ ոք։

Փոքրիկ դրան մուրճը զարկեցին, մի պառաւ կին բաց արեց դուռը։ Նրանք ներս մտան եւ դուռը կրկին փակուեցաւ նրանց ետեւից։

— Ա՛յ նանի, քեզ համար մի նոր հիւր եմ բերել, ասաց Մէլիք-Մանսուրը։

Պառաւը մի խորամանկ հայեացք ձգելով Վարդանի երեսին, պատասխանեց.

— Աչքիս վրան...

— Դէ շուտ, նանի, մեզ համար մի շէշ դինի, սաստիկ ծարաւ ենք, ասաց Մէլիք-Մանսուրը։ Եւ մօտենալով, աւելացրեց. — Հոգիդ կը հանեմ, եթէ մի ուրիշ մարդ ներս ես թողել։

Պառաւը խորհրդաւոր կերպով գլուխը շարժեց եւ հեռացաւ։

Երկու երիտասարդները մտան մի փոքրիկ, բայց բաւական մաքուր սենեակ, որ կահաւորած էր կիսաասիական եւ կիսաեւրոպական ճաշակով, եւ նստան փոքրիկ սեղանի մօտ, միմեանց հանդէպ։ Քանի րոպէից յետոյ մի մանկահասակ կին յուշիկ քայլերով ներս մտաւ եւ լռութեամբ դրեց սեղանի վրայ մի շէշ դինի, երկու բաժակի հետ, եւ նոյնպէս լռութեամբ հեռացաւ։ Նրա գլխի հայկական պաճուճանքը բոլորովին քօղարկել էր դէմքը, երեւում

էին միայն զոյգ սեւորակ աչքերը աղեղնաձեւ յօնքերի հետ։ Բայց ինչ որ երեւում էր, այդ էլ բաւական էր փոքր ի շատէ հասկացողութիւն կազմելու նրա գեղեցկութեան մասին։

Մէլիք-Մանսուրը բաժակները լցնելով, մէկը ինքը խմելով, միւսը Վարդանին տալով, ասաց.

— Ես միշտ ուրախ եմ, որ մեր վանքերը շինուած են ըստ մեծի մասին մարդկային բնակութիւնից հեռու, լեռների, ձորերի եւ անապատների մէջ։ Ոչ մի տեղ չը կան այնքան սրիկայ եւ անբարոյական պատանիներ, որքան Վաղարշապատում։ Ոչ մի տեղ չը կան այնքան թեթեւ վարքի տէր կնիկներ, որքան այստեղ։ Ահա այդ գեղեցիկ կինը, որ այնպէս համեստ եւ ամօթխած կերպով ներս մտաւ եւ իսկոյն հեռացաւ, մի աբեղայի սիրուհի է։ Վանքը, ես մտածում էի, գոնէ պահպանում է կրօնական ջերմեռանդութիւնը, բայց այստեղ մարդիկ ոչինչ չեն հաւատում։ Աբեղաների վարքը պատճառում է ժողովրդի մէջ գայթակղութիւն եւ թերահաւատութիւն։ Այստեղ արդէն սկսուել է բորբոքուել բողոքականութիւնը։ Անցնելով փողոցներից, ի հարկէ, դու տեսար բաւական գեղեցիկ տներ, եթէ քննելու լինես, թէ ովքեր են նրանց տէրերը, կը տեսնես, որ համարեա բոլորը աբեղաների հեռու կամ մերձաւոր ազգականներ են, որոնք առաջ աղքատ են եղել եւ յետոյ վանքի շնորհիւ հարստացել են։ Ես, իրաւն ասեմ, տանել չեմ կարողանում, երբ նկատում եմ, որ այստեղ հարիւր հազարներ են վատնվում, երբ այժմ մեր ամեն մի կոպէկը մեծ արժէք ունի մեզ համար։ Հազարումէկ պէտքեր ունենք, ամենի համար փող է պահանջվում։ Կ. Պոլսում ազգային մնդուկը դատարկ է։ Պատրիարքը գռօշ չունի իր ամենաանհրաժեշտ ծախ-

քերը լցուցանելու համար։ Բայց նրա վրայ այժմ ծանրացած են այնպիսի գործեր, որոնց յապաղումը, որոնց յետաձգութիւնը յաւիտենական կորուստ պիտի համարուի ազգի համար։ Այսուամենայնիւ, ես չեմ նկատում Կ. Պոլսի պատրիարքարանի եւ հայոց Մայր Աթոռի մէջ համերաշխութեան մի նշոյլ անգամ։ Մանկունին Կ. Պոլսում քսան եւ հինգ հազար կորցրեց կօնսուլիտների մէջ, եւ որպէս լսում եմ, երեսուն հազար այս մօտ օրերում ուղարկուած է, սատանան գիտէ, ինչ դժոխային նպատակների համար, բայց հայոց պատրիարքը, մեր միակ գործունեայ մարդը, գռօշ չունի...

— Այդ գինին փոքր ինչ թթուած է երեւում, ընդմիջեց Վարդանը։

— Դու չէի՞ր լսում ինձ, գոչեց Մէլիք-Մանսուրը վշտացած ձայնով։

— Լսեցի, պատրիարքը գռօշ չունի...

— Այսպէս չէ կարելի խօսել...

— Ի՞նչ խօսել, ես միայն մի բան գիտեմ, — ինչ ազգ, որ յոյսը դրել է միայն եկեղեցականների վրայ, նրա կործանման սկիզբը մօտ է վախճանին։

Մանկահասակ կինը կրկին ներս մտաւ, յուշիկ քայլերով մօտեցաւ սեղանին եւ դրեց նրա վրայ մատուցարանի մէջ դարսած նախաճաշիկը։ Այս անգամ երեսի քօղի ծալքը, որից առաջ երեւում էին աչքերը եւ յօնքերը միայն, — այս անգամ բաւական յետ էր քաշուած, եւ դուրս էին նայում նրա վարդագոյն նուրբ շրթունքը։

— Մեզ համար մի ուրիշ շիշ գինի եւս, միայն դրանից չը լինի, ասաց Մէլիք-Մանսուրը։

Կինը դարձեալ անխօս հեռացաւ։

— Ես զարմանում եմ, որ դու մի այսպիսի իջեւան ընտրեցիր քեզ համար, հարցրեց Վարդանը։

— Եթէ ուզում ես լաւ ճանաչել աբեղային, բարեկամացիր նրա սիրուհու հետ, պատասխանեց Մէլիք-Մանսուրը ծիծաղելով։ — Բացի դրանից, այստեղ ամեն գիշեր հաւաքվում է մի հասարակութիւն, որոնք ինձ բաւական հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում։

— Ի հարկէ, գլխաւորապէս վանքի վրայ, աւելացրուց Վարդանը հեգնական կերպով։ — Բայց թողնենք առժամակ վանքը եւ խօսենք մեր գործի վրայ։ Ես կը ցանկանայի քեզանից տեղեկանալ, թէ ինչ վախճան ունեցաւ Պ. Սալմանը, եւ ինչո՞ւ պատահեցան իմ բացակայութեան ժամանակ։ Ես դեռ ոչինչ չը գիտեմ, թէեւ Յովհաննէս հայր սուրբը հաղորդեց շատ բան, բայց ինչ որ պէտք էր ինձ, նա ինքն էլ չը գիտէր։

Կարծես մի սեւ թուղթ անցաւ Մէլիք-Մանսուրի ուրախ դէմքի վրայ եւ նրա կապտագոյն շրթունքը սկսեցին դողդողալ, երբ յանկարծ յիշեց տխուր անցեալը, որ առժամանակ մոռացութեան էր տուել։ Նա վեր առաւ իր առջեւ դրած լիքը բաժակը եւ միանգամով խմեց։

— Կը պատմեմ, ասաց նա խռովեալ ձայնով, — քեզ պէտք է գիտենալ եւ բոլորը գիտենալ, թէեւ այդ չի ուրախացնի քեզ։ — Պ. Սալմանը կալանաւորուեցաւ գիշերը. ես այդ իմացայ նոյն գիշերուայ առաւօտը։ Մատնիչը գործը այնպէս էր սարքել, որ մինչեւ անգամ տան տէրը ոչինչ չէր հասկացել, ուր նա այն գիշեր իջեւանել էր։ Ինձ յայտնեց երիտասարդի ծանօթներից մէկը, որ պատահմամբ տեսել էր նրան տանելիս։ Իմ առաջին հոգսը եղաւ հաւաքել մեր մտերիմներից մի քանի

ձիաւորներ եւ յարձակում գործել։ Գուցէ կը յաջողուէր մեզ ազատել նրան, եթէ ճանապարհին կը հանդիպէինք։ Բայց նրան տարել էին ուրիշ ճանապարհով, որի մասին մենք դժբախտաբար չը մտածեցինք։ Ինձ հետ կային քսանից աւելի ձիաւորներ, որոնք պատրաստ էին ամեն տեսակ գործողութեան։ Երկար հարցուփորձից յետոյ ես կարողացայ գտնել այն գիւղաքաղաքը միայն, ուր այն ժամանակ գտնվում էր զինուորական գործակատար փաշան, որի մօտ տարել էին խեղճ երիտասարդին։ Ցեղեկացայ, որ սպասում էին պէս խեղդել էին։ Ինձ չը յաջողուեցաւ մինչեւ անգամ գտնել անբախտ երիտասարդի մարմինը։ Թէ որպիսի բարբարոսութեամբ էին վարուել նրա դիակի հետ, — այդ կարող են անել միայն դաղանները։ Միայն այդ եղեռնագործութիւնը լցրեց իմ սիրտը կատաղի վրէժխնդրութեամբ եւ անմեղ զոհի արիւնով կնքուեցաւ այն ուխտը, որի համար երդուել էինք մենք։

— Պ. Սալմանից յետոյ, որպէս քեզ յայտնի է, կալանաւորուեցան Ծերունի Խաչօն իր երկու որդիների՝ Հայրապետի եւ Ապօի հետ։ Դրանց անմիջապէս չը սպանեցին, այլ պահում էին բանտում, սաստիկ հսկողութեան ներքոյ։ Որպէս երեւում է, աշխատում էին հարուստ տանուտէրի պահած բոլոր ոսկիները առնել եւ յետոյ սպանել։ Բայց խեղճերը երկար չը կարողացան դիմանալ անտանելի չարչարանքներին, եւ երեքն էլ մեռան բանտի մէջ։

— Այդ բոլորից յետոյ ես հասկացայ, թէ ինչ վիճակ էր սպասում Օ... գիւղին եւ անձամբ դիմեցի Իսմայիլ փաշայի մօտ, որին յանձնուած էր Բայազէտի կողմերի գործերի հրամանատարութիւնը։ Նա բաւական խելացի մարդ է, եւ վստահութիւն ունէի, թէ իմ

տեսակցութիւնը ապարդիւն չի մնայ։ Ես ամենեւին չը թագցրի նրանից այն պատրաստութիւնները, որ կատարուել էին իմ եւ իմ ընկերների ձեռքով։ Ես յայտնեցի, թէ ժողովրդին բաժանուած են, այո՛, մի նշանաւոր քանակութեամբ զէնքեր։ Բայց այդ պատրաստութիւնը, ասացի, ոչ թէ ապստամբութեան նպատակ ունէ, որպէս սխալ հասկացրել են ձեզ, այլ — անձնապաշտպանութեան։ Մահմեդական ամբոխի այդ կատաղի մոլեգնութեան ժամանակ, որ վառել էր նրա մէջ իսլամի հոգեւորականութիւնը, ասացի նրան, — կարող է բոլորովին զոհ գնալ քրիստոնեայ տարրը, եթէ նրան միջոց չը տրուի պաշտպանուելու։ Այդ անհրաժեշտութեան մասին, աւելացրի, ինքը կառավարութիւնը պէտք է նախապէս հոգ տանէր, եթէ չէ ցանկանում, որ այստեղ նոյնպէս կրկնուէին Բոլգարիայի սխուր անցքերը, որոնք Թիւրքիային մեծ պատասխանատուութեան տակ ձգեցին։ Ուրեմն, կառավարութիւնը պէտք է շատ զոհ լինի, որ մենք նրա հոգսերը թեթեւացրինք, — կատարեցինք այն, ինչ որ նրա պարտքն էր անելու, մենք քրիստոնեաների ձեռքը զէնք տուեցինք, մահմեդականների մոլեռանդութիւնից պաշտպանուելու համար։

— Ղորամանկ փաշան մեծ հանկարութիւն ցոյց տուեց, խոստացաւ, որ ինքն էլ ամեն հնար գործ կը դնէ, որ հայերին վնաս չը հասնի, խոստացաւ, որ նրանց թէ կայքի եւ թէ կեանքի ապահովութեան համար պէտք եղած բոլոր միջոցները առանց յետաձգութեան կարգադրուած կը լինեն։ Այդ ժամանակ ռուսաց զօրքերը յետ էին դառնում։ Եւ լսւում էր, թէ հայերը ցանկանում են ռուսաց զօրքերի հետ գաղթել։ Փաշան յանձնեց ինձ համոզել ժողովրդին, որ իրանց տեղից չը

շարժուեն։ Ես ուրախութեամբ յանձն առայ։ Բայց ինձ ճանապարհ դնելին յետոյ, հէնց ինքը ծածուկ հրաման տուեց քուրդ Փաթթահ-բէկին, որ իր արիւնարբու հրոսակներով եկաւ եւ Օ... գիւղը կրակ տուեց, այրեց եւ բնակիչների մեծ մասը կոտորեց։ Այդ անցքը սարսափ ձգեց ամբողջ դաւառի վրայ եւ աւելի խստացրեց գաղթականութիւնը։ Թէ՛ իմ եւ թէ՛ համախոհներիս բոլոր ջանքերը ի զուր անցան երկիւղով պաշարուած ժողովրդին պահել իր հայրենի հողի վրայ։ Օրինակը արդէն աչքի առջեւ էր։ Այնուհետեւ, եթէ երկնքից հրեշտակի ձայն եւս լսէին, դարձեալ չէին հաւատայ, թէ Օ... գիւղի պատուհասը չէր հասնի բոլոր ժողովրդին։

— Բայց նենգաւոր փաշայի խաբելը, ինձ աւելի համոզեց այն կանխակալ կարծիքի մէջ, թէ Թուրք պաշտօնատարները կողմնակի կամ ուղղակի միջոցներով, իրանք են նպաստում քրիստոնեայ տարրի ոչնչանալուն եւ Հայաստանի հայերից դատարկուելուն։

— Իմ եւ համախոհներիս բոլորը ջանքերը կարողացան ժողովրդի միայն մի մասը պահել հայրենի հողի վրայ, — բայց շատ աննշան մասը։ Այն ժամանակ Իսմայիլ փաշան թոյլ տուեց Թուրքաց Թշնամի ռուսաց կողմը դիմող հայերի վրէժը մնացած հայերի վրայ թափել։ Այդ միջոցին քրդերը գործ դրեցին իրանց բոլոր անգթութիւնները, եւ զանազան տեղերում սկսուեցաւ սարսափելի կոտորածը...

— Ես մինչեւ այսօր համոզուած եմ, եւ եթէ ժողովուրդը տեղից չը շարժուէր, կարող էր պաշտպանուել։ Թուրքաց կանոնաւոր զօրքերը, շատ հասկանալի է, որ չէին յարձակուի հնազանդ եւ խաղաղ ժողովրդի վրայ։ Տեղային իշխանութիւնը մինչեւ այդ ասաիճան ակներեւ

բարբարոսութիւն չէր անի, մանաւանդ, որ այդ ժամանակ Ալաշկերտի եւ Բայազէդի կողմերում լեռն էին անգլիական ագէնտներ եւ եւրոպական լրագրների թղթակիցներ։ Տեղային իշխանութիւնը կ'անէր այն, ինչ որ արեց։ — Այսինքն՝ ծածուկ քրդերին կը գրգռէր հայերի դէմ եւ ինքը մատների միջից կը նայէր գործող բարբարոսութիւնների վրայ։ Բայց քրդերի դէմ պաշտպանուելը շատ դժուար չէր լինի։ Մի փոքրիկ, բայց խիստ նշանաւոր դէպք կ'ապացուցանէ, որ իմ ենթադրութիւնը սխալ չէ։ Ես համառօտ կերպով կը պատմեմ քեզ։

— Գաղթականութիւնից յետոյ, երբ ռուսաց զօրքերը բոլորովին թողեցին Բայազէդի եւ Ալաշկերտի գաւառները, այսինքն, երբ այդ երկրները կրկին անցան Թուրքաց ձեռքը, — այն ժամանակ, որպէս պատուեցի, քրդերը սկսեցին կողոպտել, կոտորել եւ տանջել մնացած հայերին։ Այդ միջոցին մի քանի հարիւր ընտանիք թողեցին իրանց բնակութիւնները եւ ամրացան լեռների մէջ։ Երեւակայեցէք, մի քանի հազար քրդեր, մի քանի շաբաթ շարունակ կռւում էին այդ մի բուռն քաջերի հետ, որոնք ոչ միայն յանձն չառեցին անձնատուր լինել, այլ մի քանի յաջող յարձակումներ գործելով, կարողացան խլել թշնամուց հարուստ աւար եւ պատերազմական պատրաստութիւններ։ Իմ սիրտը եւ այս րոպէիս թնդում է մի անսահման ուրախութեամբ, երբ մտաբերում եմ այն անմոռանալի օրերը։ Կռւում էին ոչ միայն երիտասարդները, այլ եւ ծերերը, այլ եւ կնիկները։ Ես այժմ համոզուած եմ, որ ստրկութիւնը չէ կարող խլել մի ժողովրդի քաջութիւնը, որ նախնիքը թափել էին նրա երակների մէջ։ Ստրկութիւնը կարող է միայն ժամանակաւորապէս ճնշել եւ խեղդել քաջալնական ոգին,

բայց սպանել — ոչ։ Զարկեց յաջող ժամը, նա կրկին կը զարթնի իր վաղեմի ուժով եւ աւելի սաստիկ զօրութեամբ։ Ես այդ տեսայ իմ աչքով։ Եւ միակ ուրախալի երեւոյթը, որ վերջին աղէտների մէջ կարող է մխիթարել մեզ, — այդ է։

Վարդանի մռայլուած դէմքը փոքր ինչ պայծառացաւ եւ նա իր տխուր աչքերը ուղղեց դէպի վեր, կարծես, աղօթում էր, կարծես, փառք էր տալիս Վերին Նախախնամութեանը։

— Ինչով վերջացաւ, հարցրեց նա։

— Երկար պատմելը անմատչելի լեռների մէջ, թէեւ շատ դժուար էր, բայց դարձեալ կարելի էր, եթէ մենք գործ ունենայինք միայն քրդերի հետ։ Բայց շուտով պաշարեցին մեզ կանոնաւոր զօրքեր։ Այդ վերջիններին նոյնպէս կարելի էր ընդդիմադրել. մեր կողմն էր մի անընկճելի զօրութիւն, — Հայաստանի լեռները, որ այնքան խնամքով պահում են իրանց մէջ ապաստանողներին։ Բայց պաշարի եւ ուտեստի պակասութիւնը վրայ հասաւ, որպէս մի թշնամի, որին յաղթել անկարելի էր։ Թէեւ երբեմն գիշերով մերայինք իջնում էին լեռներից, եւ յարձակուելով քրդերի մերձակայ գիւղերի վրայ, պաշար էին բերում, բայց այդ խիստ սակաւ անգամ յաջողվում էր, աւելի այն պատճառով, որ քրդերի գիւղերը դատարկ էին եւ բնակիչները իրանց անասունների հետ գնացել էին հեռաւոր արօտատեղիներ։ Ի հարկէ, մեր այդ դրութիւնը երկար շարունակուել չէր կարող, երբ մեր շրջակայքում էր մնացել ոչ մի հայաբնակ գիւղ, որտեղից կարողանայինք օժանդակութիւն գտնել, գոնէ պաշարի կողմից։ Բայց թշնամին հետզհետէ մօտենում էր։ Այդ ժամանակ մերայինք կատարեցին մի հրաշալի քաջագործ-

ծութիւն։ Մի գիշեր պատառելով պաշարող շղթան, անցան թշնամու ահագին բանակից։ Երեւակայեցէք, որ դրանք կռուող տղամարդիկ չէին միայն, որոնց հետ լինէր մի այս տեսակ յանդուգն ձեռնարկութիւն, այլ իրանց հետ ունէին ամբողջ ընտանիքներ, կին, աղջիկ եւ երեխաներ։

— Ցեռոյ ռիբ գնացին, հարցրեց անհամբերութեամբ Վարդանը։

— Անցան Թուրքաց սահմանից եւ գնացին Պարսկաստան։ Բայց ճանապարհին ոչ սակաւ վտանգների դէմ ստիպուած էին պատերազմել։

— Ուրեմն դու Պարսկաստանից եկար այստեղ։

— Այո, Պարսկաստանից։

— Այժմ դու ինչ դիտաւորութիւն ունես այստեղ, հարցրեց Վարդանը։

— Ես միայն մէկ դիտաւորութիւն ունեմ, եւ կարծեմ, դու էլ կը համաձայնուես ինձ հետ, պատասխանեց Մէլիք-Մանսուրը, աւելի լուրջ դէմք ընդունելով. — Պէտք է աշխատել, որ այստեղ եկած դաղթականների կեանքը պահպանուի եւ նրանք խսպառ չոչնչանան քաղցածութիւնից եւ հիւանդութիւնից։ Ես հաւատացած եմ, որ ռուսները կը հաւաքեն իրանց ուժերը եւ կրկին կը տիրեն թողած երկրները։ Այն ժամանակ այն կողմերում խաղաղութիւն կը տիրէ, եւ այն ժամանակ պէտք է աշխատել, որ ալաշկերտցիք եւ բայազէդցիք վերադառնան իրանց հայրենիքը։ Եթէ ոչ, Հայաստանի ապագայի համար մեծ դժբախտութիւն կը լինի, եթէ այդ երկու սահմանակից գաւառները, որպէս են Ալաշկերտը եւ Բայազէդը, բոլորովին կը դատարկուեն հայերից եւ նրանց տեղը կը բռնեն վայրենի քրդերը։

— Դու կարծում ես, որ այդ գաւառները միշտ ռուսաց ձեռքը կը մնան։

— Դիցուք թէ պատերազմից յետոյ, երբ խաղաղութեան դաշինք կը կապուի, այդ գաւառները կրկին կ'անցնեն Թուրքաց ձեռքը։ Բայց այն ժամանակ հանգամանքները կը փոխուեն, եւ միւս անգամ չեն կրկնուի այժմեան անկարգութիւնները. — Ջարդուած Թուրքը խելքը գլուխը կը հաւաքէ... Ես դեռ մի ուրիշ յոյս էլ ունեմ...

Այդ միջոցին ներս մտաւ պառաւը, յայտնեց, թէ մի օտարական քահանայ խնդրում է տեսնուել։ Վարդանը մտածելով, թէ դա Յովհաննէս հայր սուրբի խոստացած քահանաներից մէկը պէտք է լինի, հրամայեց ներս թողնել։

Յայտնուեցաւ Օ... գիւղի քահանայ Տէր-Մարուքը։

ԽԲ.

Նախաճաշիկը վերջացել էր եւ մի քանի շեշ գինի դատակուել էր, երբ յայտնուեցաւ քահանան։ Վարդանին խիստ ծանր էր թուում միւսանգամ հանդիպել այդ մարդուն, որ Օ... գիւղում այնքան անախորժութիւններ եւ այնքան հոգսեր էր պատճառել թէ՛ իրան եւ թէ՛ իր բարեկամ պ. Սալմանին։ Բայց հանգամանքները ակամայ հաշտեցնում են մարդուն հին թշնամու հետ։ Քահանայի ողորմելի դրութիւնը, նուաղած կերպարանքը, մաշուած եւ քրքրուած հագուստը, որ աւելի նմանեցնում էին նրան մի մուրացկանի, քան թէ Աստուծոյ տաճարի սպասաւորի, — խեղճ մարդու այդ բոլոր թշուառութիւնները մոռանալ տուեցին Վարդանին հին ատելութիւնը։ Բայի դրանից, այդ մարդու բերանից պիտի լսէր Վարդանը տե-

ղեկութիւններ այն ընտանիքի մասին, որի վիճակը իրան սասակիկ հետաքրքրում էր։

— Ձեզ Յովհաննէս հայր սուրբը ուղարկեց, հարցրեց Վարդանը քահանայից, ինդրելով նստել։

— Այո՛, Յովհաննէս հայր սուրբը... պատասխանեց նա եւ տեղաւորուեցաւ փոքրիկ սեղանի մօտ, որի վրայ դեռ մնացել էր մի շէշ գինի։

Վարդանը լցրեց բաժակը եւ տուեց քահանային, որը օրհնելով, իսկոյն խմեց։ Ոգելից ըմպելին, կարծես, կազդուրիչ ցող լինէր, որ թափուեցաւ ոսթից թառամած խոտաբոյսերի վրայ։ Քահանայի անշարժ դէմքը փոքր ինչ զուարթացաւ։ Մէլիք-Մանսուրը նկատելով այդ, հարցրեց.

— Կը կամենայիք մի բան ուտել։

— Երէկուանից ոչինչ չեմ կերել, պատասխանեց քահանան այնպիսի մի ողորմելի ձայնով, որ չէր կարելի չը խղճալ։

Նա ձայն տուեց պառաւին նախաճաշիկ բերել տէրտէրի համար։

Վարդանը դժուարանում էր իսկոյն սկսել հարցուփորձը։ Նրա դրութիւնը նմանում էր այն անբախտին, որի բացակայութեան ժամանակ, գողերը մտան տունը, կողոպտեցին եւ տարան բոլորը, ինչ որ ունէր։ Վերադառնալով տուն, գտնում է նրան մերկ ու դատարկ։ Բայց մի տեղում նա թագցրել էր իր գանձը, դեռ յոյս ունի, որ չարագործների ձեռքը այնտեղ հասած չի լինի։ Մօտենում է խորհրդաւոր պահարանին, եւ սիրտը դողդողալով կանգնում է նրա առջեւ, բայց չէ համարձակվում բաց անել, չէ համարձակվում նայել։ Նախապէս պաշարում է նրան մի կանխակալ սոսկում, մտածում է,

— Ի՞նչ կը լինի իր դրութիւնը, եթէ գանձարանը դատարկ կը գտնէ, նա խօ կը զրկուի իր վերջին յոյսից, իր միակ մխիթարութիւնից։

Այդպիսի մի անվճռականութեան մէջ օրօրվում էր, տարուբերվում էր Վարդանը։ Նա դեռ յոյս ունէր, որ կը գտնի Լալային։ Եւ այդ քահանայի մի խօսքիցն էր կախուած նրա բախտը եւ ցմահ անբախտութիւնը։ Արդեօք ունէ՞ր այնքան ուժ եւ այնքան սրտի զօրութիւն, որ կարողանար դիմանալ քահանայի բօթաբեր խօսքին։ Զարհուրելի նախազգացումներ տիրել էին նրա հոգին եւ նա ոչինչ հարցնել չը կարողացաւ, թէեւ շատ ցանկանում էր հարցնել։

Մէլիք-Մանսուրին յայտնի չէին Վարդանի հոգեկան յարաբերութիւնները Լալայի հետ։ Նա մինչեւ անգամ ծանօթ չէր Ծերունի Ղաչոյի ընտանիքի հետ։ Բայց նկատելով իր բարեկամի անհանգստութիւնը, հարցրեց.

— Դու ունէի՞ր մի բան խօսելու տէր հօր հետ, գուցէ ես...

— Ո՛չ, քեզանից ծածուկ ոչինչ չունեմ, ասաց Վարդանը եւ դարձաւ դէպի քահանան.

— Տէր հայր, դու յանձնեցի՞ր Յովհաննէս հայր սուրբին քո ծուխի ցուցակը. — ինձ նոյնպէս հետաքրքիր է գիտենալ, թէ Օ... գիւղից քանի՞ ընտանիքներ կան դաղթականների մէջ եւ ո՞ւրտեղ են բնակվում նրանք։

— Օրհնած, իմ ծուխից ո՞վքեր են մնացել, որ նրանց համար ցուցակ կազմէի, պատասխանեց քահանան այնպիսի մի եղանակով, կարծես, հաւերի վրայ էր խօսում։ Ես մատներով էլ կարող եմ համբարել ինչ որ մնացել է, կամ որտեղ թափառում են այժմ։

Վարդանը ամբողջ մարմնով դողաց։

— Մի՞թէ բոլորին կոտորեցին, հարցրեց նա, գունաթափուելով։

— Եթէ չասեմ բոլորին, դարձեալ պէտք է ասել, որ մարդ չը մնաց։ Ի՞նչ եղան, ես ինքս էլ չը գիտեմ, Աստուած ոչ մի քրիստոնեայի թող չը տայ այն պատուհասը, ինչ որ հասաւ Օ... գիւղին։ Այդ մեր մեղքիցն էր։ Կարծես, Սոդոմ եւ Գոմորի նման երկնքից կրակ ու ծծումբ թափուեցաւ եւ ամեն ինչ լափեց։ Ով որ աղատուեցաւ կրակից, քրդերը կամ դերի տարան կամ կոտորեցին։ Այդ բոլորը պատահեցաւ մեկ գիշերուայ մէջ։ Առաւօտեան ամբողջ գիւղը նմանում էր մի հանգած խարոյկի։ — Կորա՞ն իմ ապառիկները, կորա՞ն... էլ յոյս չը կայ մի բան ստանալու... Թոմաս էֆէնդին, — Աստուած թող հոգին լուսաւորէ, — խոստացաւ, որ կը հաւաքէ իմ ապառիկները, բայց նա էլ ձեր չարը տարաւ... Այսպէս մնայի աղքատ եւ տնանկ, տեսնում էք, ի՞նչ վիճակի մէջ եմ ես... եւ նա ցոյց տուեց իր քրքրուած հագուստը։

Արտասուքը սկսեց թափուել խեղճ քահանայի աչքերից եւ դառն կերպով հեկեկում էր նա։ Արդեօք նա յիշե՞ց իր հարս Զուլֆին եւ նրա հրեշտակի նման երեխաներին, որոնք նոյնպէս չը կային գաղթականների մէջ։ Արդեօք նա յիշե՞ց իր փեսայ սիրայու Սիմոնին եւ նրա կնոջը, որ իր հարազատ աղջիկն էր, որոնք նոյնպէս անհետացել էին ընդհանուր խռովութեան մէջ։ Արդեօք ժողովրդի ցաւն էր տանջում քահանային, որի հովիւն էր ինքը, որի կորուստը այնպէս սառնասրտութեամբ նկարագրեց նա։ — Դրանցից եւ ոչ մէկը չէր տէր հօր արտասուքի պատճառը։ Նա յիշեց միայն իր ապառիկները, որ պիտի ստանար իր ծուխից, իսկ այն ծուխը այժմ չը

կար. ապառիկները կորա՞ն... Բայց այդ դժբախտ ապառիկների մասին, որոնք այնքան հոգսեր էին պատճառել տէր հօրը, Վարդանը ոչինչ չը գիտեր, այդ պատճառով, մի առանձին ուշադրութիւն չը դարձրեց։

Նա այլ եւս չէր համարձակվում հարցուփորձը առաջ տանել, եւ մասամբ ուրախ էր, որ տէր հայրը իր "ապառիկներով" հեռանում էր բուն հարցից։ Նա խմեց իր առջեւ դրած բաժակը, աշխատելով, իր վշտերը ցրուել գինու թմրութեան մէջ։ Բայց գինին աւելի էր բորբոքում այրուած սրտի տանջանքը, որպէս իւղ, որ ածվում է բոցավառ կրակի վրայ։

Վարդանին իր դժուար դրութիւնից ազատեց Մելիք-Մանսուրը։ Նա լսել էր շատ բան Ծերունի Խաչօի ընտանիքի մասին, նրան յայտնի էր այդ հոյակապ ընտանիքի գլխաւորի եւ նրա երկու որդիների ցաւալի մահը, բայց մնացածների մասին ոչինչ չը գիտէր։

— Այդ ընտանիքից ո՞վ մնաց, հարցրեց նա։

— Ոչ ոք, պատասխանեց քահանան սառնասրտութեամբ։ — Ինքը տանուտէրը իր երկու որդիների հետ մեռան բանտի մէջ։ (Այդ պէտք է լաւ գիտենաք)։ Մնացած որդիներին կոտորեցին, հարսներին եւ աղջիկներին դերի տարան...

— Բոլորի՞ն... դոչեց Վարդանը սարսափելով։

Քահանան, նկատելով երիտասարդի սոսկալի դէմքը, այժմ միայն զգաց, թէ իր պատասխանը ո՛րքան անզգոյշ էր։

— Սառան այստեղ է, ասաց նա, — իր երկու երեխաների եւ Լալայի հետ։

Վարդանի ուրախութեանը չափ չը կար։ Նա այժմ նմանում էր մի մարդու, որ սարսափելի նաւաբեկու-

թիւնից յետոյ, տարուբերուելով կատաղի ալիքների մէջ, մաքառում է մահուան եւ օրհասի հետ։ Սպառուած ուժերը այլ եւս չեն օգնում նրան։ Նա աչքերը գոցում է, որ միւս անգամ բաց անէ անդունդի մէջ։ Ցանկարծ զգնում է իրան ցամաքի վրայ։ Ի՞նչպէս յայտնուեցաւ այնտեղ, — ինքն էլ չը գիտէ։ Ալիքների մի սաստիկ յորձանք ձգեցին նրան այնտեղ։

— Այստե՞ղ է Լալան... այստե՞ղ է Սառան... ուրեմն ես կը տեսնեմ նրանց, — փսփսաց քեզ, Աստուած, — գոչեց նա նստած տեղից վեր թռչելով։ — Գնանք, տէր հայր, դու խօ խմանում ես, թէ նրանք որտեղ են բնակվում։ Գնանք, դու էլ, բարեկամ, նա բռնեց Մէլիք-Մանսուրի ձեռքից։

Երկու երիտասարդները քահանայի հետ դուրս գնացին։ Բայց Վարդանի ուրախութիւնը կարճատեւ եղաւ։ Քահանան դեռ չը դիտէր վերջին անբախտութիւնը, որ պատահել էր այդ գաղթականների հետ։

Եթէ Վարդանը այսօր առաւօտեան, վանքից դուրս գալուց յետոյ, փոքր ինչ մօտից տեսնէր այն տխուր յուղարկաւորութիւնը, որ շարժվում էր դէպի գերեզմանատունը, այն ժամանակ նրա համար պարզուած կը լինէր դառն իրականութիւնը։ Բայց երեւում էր, որ ճակատագիրը կամեցել էր աւելի խիստ պատժել նրան, որ նա երբէք չը կարողանար տեսնել սիրած աղջկան...

Սառան եւ Լալան վանքից երկուսն էլ հիւանդ տարուեցան այն կացարանը, որ առաքինի բժշկապետը պատրաստել էր առել նրանց համար։ Բարեսիրտ տանտիկինը, որի խնամատարութեանը յանձնուած էին երկու հիւանդները, մի առանձին դութ ունեցաւ նրանց վրայ, մանաւանդ երբ իմացաւ, որ դրանք մի հարուստ եւ բարեբախտ ընտանիքի զաւակներ էին, եւ աղետալի պատահարները ձգել էին նրանց վերջին թշուառութեան մէջ։

Բարոյապէս տանջուած, ֆիզիկապէս մաշուած եւ բոլորովին ուժաթափ եղած աղջկայ մէջ, հէնց առաջին գիշերը յայտնուեցաւ սաստիկ ջերմ։ Տանտիկինը իսկոյն իմացում տուեց բժշկապետին, որը դալով, գտաւ նրան վտանգաւոր դրութեան մէջ։ "Ցոյս չը կայ", յայտնեց նա տանտիկնոջը, եւ ինքը գիշերի մեծ մասը մնաց հիւանդի մօտ, աշխատելով վերադարձնել սպառուած կեանքը։ Կէս գիշերից յետոյ նա բաւական հանգիստ էր. այս պատճառով հեռացաւ բժիշկը։ Նա մինչեւ անգամ խօսում էր, պատմում էր շատ բաներ իր մօտ նստող տանտիկնոջը։

Բայց առաւօտեան, երբ բժշկապետը եկաւ տեսնելու հիւանդին, նրան արդէն մեռած գտաւ։ Սառան ոչինչ չէր հասկացել, թէեւ մի եւ նոյն սենեակում պառկած էր։ Իսկ երբ հիւանի մուրճի ձայնը դրսից լսելի եղաւ, երբ տեսաւ դագաղը, նա բոլորը հասկացաւ։ Խեղճ կինը մինչեւ անգամ լաց չեղաւ։ Եւ լաց լինել կարող չէր նա։ Արտասուքի համար եւս առողջութիւն պէտք է։ Կարծես, նա ուրախ լինէր, կարծես, նա հէնց այդ էր ցանկանում, որ մեռնի Լալան, որ հանգստանայ նա, որ ազատուի այդ աշխարհից, ուր նրա համար լաւ օր չէր մնացել...

Երբ դագաղը դուրս էին տանում, նա խնդրեց, որ իրան թոյլ տան թաղմանը ներկայ գտնուել։ Եւ չը նայելով բժշկապետի ընդդիմադրութեանը, թէ դրանով բոլորովին կը տկարացնէ եւ կը խանգարէ իր առողջութիւնը, — դարձեալ հնար չեղաւ նրան յետ պահելու։ Կարծես, այդ օտարոտի ցանկութիւնը կրկին վերադարձրել էր նրա սպառուած ուժերը։ Նա իրան բաւական զուարթ

էր զգում եւ գանվում էր կատարեալ ողջամտութեան մէջ։ Երբ դագաղը դրեցին գերեզմանի մէջ, նա ասաց.
— "կը յանկանայի քեզ հետ թաղուել, իմ նազելի Լալայ"... Այդ միջոցին նրա աչքը ընկաւ իր երկու զաւակների վրայ եւ ձայնը խեղդուեցաւ...

Սառային գերեզմանատնից բոլորովին ուշաթափ տուն բերեցին։ Նա նոյն իսկ բոպէին, երբ բժիշկը զբաղուած էր նրան ուշի բերելով, դրան մուրճը զարկեցին։ Ծառան դուռը բաց արեց, տեսաւ, երկու անծանօթ երիտասարդ եւ մի քահանայ կանգնած էին այնտեղ։

— Ո՞ւմն էք ուզում, հարցրեց Ծառան։

— Մեղ ասացին, որ այս տանը կենում են երկու աղաշկերտցիներ, հարցրեց Վարդանը, — մէկը կին, միւսը աղջիկ։

— Այո, կենում են, բայց աղջիկը...

— Ի՞նչ եղաւ։

— Մեռաւ...

Վարդանը շանթահար ծառի նման խորտակուեցաւ եւ ընկաւ Մէլիք-Մանսուրի ուսի վրայ։

ԼՍԳ.

Մութ, խաւարային գիշեր էր։ Շոգիներով լցուած, ամառնային տաք օդը անսիրտ ծանրութեամբ նստում էր մարդու սրտի վրայ։ Գիշերային լռութեան մէջ ոչ մի ձայն, ոչ մի շշունջ չէր լսվում։ Կարծես, ամեն ինչ մեռած լինէր։ Միայն Գայիանէի վանքի գերեզմանատան մի անկիւնից լսվում էին խուլ հառաչանքներ։ Մի երիտասարդ, տարածուած բոլորովին թարմ հողադամբարանի մօտ, դառն կերպով մրմնջում էր։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա տխուր աչքերից եւ

թրջում էր ցամաք հողը։ Երբեմն նա գրկում էր փոքրիկ հողադամբարանը եւ համբուրում էր նրան. երբեմն իր երեսը եւ աչքերը քսում էր նրա խոնաւ մակերեւոյթին։ "Լալա... անբախտ Լալա"... բառերը շատ անգամ հնչվում էին նրա շրթունքից, եւ կարծես, այդ բառերի հետ դուրս էին թռչում նրա սիրտը եւ հոգին։

Այդ երիտասարդը Վարդանն էր։ Երկար թափառումներից յետոյ, նա գտաւ սիրած աղջկայ գերեզմանը միայն։ Էլ ի՞նչ էր մնում նրան։ Կեանքի ալեկոծութիւնների մէջ, անդադար մաքառելով դժուարին անաջողութիւնների դէմ, նա ունէր մի վառ եւ պայծառ աստղ միայն, որի վրայ յառած էր նրա աչքը, որը առաջնորդում էր նրան դէպի փրկութեան նաւահանգիստը։ Իսկ այժմ այդ աստղը նոյնպէս հանգաւ։ Էլ ի՞նչ էր մնում։ — Մնում էր մի խորտակուած եւ վերաւոր սիրտ, որի համար պակաս էր առողջարար բալասանը, որի մի կաթիլը բժշկում էր բոլոր վէրքերը։ Կորուստը անփոխարինելի էր։ Վարդանը երբէք չէր սիրել։ Սառն եւ խստասիրտ երիտասարդը քնքոյշ զգացմունքներ չունէր։ Բայց Լալայի սիրոյ առջեւ, փափուկ մոմի նման, հալուեցաւ նրա բնաւորութեան կոշտութիւնը։ Լալայի սէրը կախարդեց նրան։ Բայց ո՞ւր էր այժմ մխիթարիչ հրեշտակը։ — Այն հողադամբարանի տակ, որ գրկել էր ինքը, որ թրջում էր իր արտասուքներով։ — Այն հողադամբարանի տակ թաղուած էր եւ անբախտ երիտասարդի սիրտը։

Երկար այնպէս տանջվում էր, մորմոքում էր, եւ անմխիթար կսկիծների հետ մաքառում էր նա, մինչեւ մի տեսակ թմրութիւն, որ ո՛չ քուն էր եւ ո՛չ արթնութիւն, տիրեց նրա անդամներին։ Բորբոքուած գլուխը ընկաւ գերեզմանի վրայ եւ աչքերը փակուեցան։

Նրա վառ երեւակայութեան մէջ այժմ սկսեցին ամբոխել խառնափնթոր երազներ։ Ինչո՞ւ ասես, չէր տեսնում նա։ Շրբեմն սարսափելի դժոխային տեսիլներ սոսկում եւ արհաւիրք էին ազդում նրան։ Իսկ երբեմն դեղեցիկ, մխիթարական երեւոյթներ հրապուրում էին նրան։ Կարծես, դարերը մի քանի շրջան առաջ էին գնացել, եւ նա տեսնում էր Հայաստանը, աւերակ եւ անապատ դարձած Հայաստանը, այժմ բոլորովին կերպարանափոխուած, բոլորովին վերանորոգուած։ Այդ ինչ հրաշալի փոփոխութիւն էր։ Մի՞թէ կորած դրախտը կրկին վերադարձել էր այդ երկրի վրայ։ Մի՞թէ կրկին տիրում էին այն ոսկեղէն ժամանակները, երբ չարութիւնը եւ անիրաւութիւնը տակաւին չէին ապականել Աստուծոյ անմեղ աշխարհը։ Բայց ո՛չ, Վարդանի տեսածը այն դրախտը չէր, որ հիմնեց Ծհովան Հայաստանի չորս գետերի ակունքի մօտ, ուր մարդկային առաջին զոյգը ապրում էր կատարեալ անմեղութեան եւ կատարեալ տգիտութեան մէջ։ Այդ այն դրախտը չէր, ուր մարդը չէր գործում, չէր աշխատում եւ չէր արդիւնաբերում, այլ ապրում էր պտուղներով, կերակրվում էր Աստուծոյ ճոխ սեղանից, որ սփռել էր նրա առջեւ հրաշալի բնութիւնը։

Դա մի ուրիշ դրախտ էր, մի դրախտ, որ մարդն է ստեղծում իր համար իր աշխատութիւններով եւ իր արդար վաստակով։ Ուր անմեղութեան տեղ տիրում էր խելացի գիտակցութիւնը, իսկ անհոգ, պարզ նահապետական կեանքի տեղ՝ զարգացած քաղաքակրթութիւնը։

Այժմ, կարծես, կատարուել էր այն ճակատագրական խօսքերի իմաստը, որ ասաց Արարիչը նախաստեղծ մարդուն "քո ճակատի քրտինքով պէտք է վաստակես քո հացը"։ Այժմ մարդը ոչ միայն աշխատում էր, այլ մինչեւ

անգամ հեշտացրել էր աշխատանքը եւ նրա համար շատ քրտինք չէր թափում։ Բայց աշխատում էր իր բարօրութեան համար. նրա վաստակը չէր յափշտակվում անգութ հարստահարչի ձեռքով։

Ահա, Վարդանը տեսնում էր մի գիւղ։ Մի՞թէ դա Ալաշկերտի Օ... գիւղը չէր։ Շրջակայքը նրան ծանօթ էին՝ — նոյն լեռները, նոյն բլուրները, նոյն գետը, նոյն կանաչաղարդ հովիտը — բոլորը նոյն էր։ Դարերի հոսանքը այստեղ ոչինչ չէր աղարտել, միայն կերպարանափոխել էր։ Բայց ո՞րքան փոխուել էր գիւղը։ Այլ եւս չէին տեսնվում այն ողորմելի գետնափոր խրճիթները, որոնք աւելի դազաններին որջի էին նման, քան մարդկանց բնակարաններին։ Այժմ տները քարաշէն էին, սպիտակ որպէս ձիւն, եւ շրջապատուած էին գեղեցիկ պարտէզներով։ Լայն եւ ուղիղ փողոցները հովանաւորուած էին մշտականաչ ծառերով, որոնց մօտով վազում էին բիւրեղի նման յստակ առուակներ։

Առաւօտ էր։

Ցներից խումբերով դուրս էին գալիս գիւղական մանուկները, առոյգ, զուարթ եւ մաքուր հագնուած։ Ցոյց եւ աղջիկ, խառն միմեանց հետ, գրքերը ուսներին շալակած, շտապով դիմում էին դպրոցը։ Վարդանը նայում էր նրանց վրայ եւ հիանում էր։ Ո՛րքան լաւ պահուած էին այդ սիրուն երեխաները, ո՞րքան ուրախ էին նրանք։ Երեւի, դպրոցը եւ վարժապետը չեն վախեցնում նրանց։ Մի՞թէ դրանք այն կիսամերկ եւ հիւանդոտ երեխաներն էին, որոնց տեսել էր Վարդանը։

Վարդանը միայնակ կանգնած էր փողոցի մէջ, զարմացած նայում էր իր շուրջը եւ չը գիտէր դէպի ուր գնալ։ Նրա ականջին զարկեց մի անոյշ ձայն, դա եկեղեցու

զանգակի ձայնն էր։ Երեւի, առաւօտեան ժամը դեռ չէր վերջացել։ Սկսեալ այն օրից, որ նա թողել վանքը եւ հեռացաւ աբեղաների միաբանութիւնից, այդ առաջին անգամն էր, որ Աստուծոյ տան հրաւէրքի ձայնը այնպէս քաղցր կերպով հնչեց նրա ականջներին։ Քարացած սիրտը լցուեցաւ մի սրբազան ջերմեռանդութեամբ, նա դիմեց եկեղեցին, որի շէմքի վրայ տան տարուց աւելի ոտք չէր կոխել։

Նա զարմացաւ։ Այդ ինչ պարզ, այդ ինչ անշուք եկեղեցի էր։ Ո՛չ բեմ, ո՛չ սեղան, ո՛չ զարդարած տաճար, ո՛չ ոսկեզօծ պատկերներ, ո՛չ արծաթեայ խոշոր եւ ո՛չ թանգագին զգեստներ չը կային այնտեղ։ Նա զուրկ էր հայկական եկեղեցու բոլոր շքեղութիւններից։ Մինչեւ անգամ դպիրներ, սարկաւագներ եւ տիրացուներ չէին երեւում։ Երկու պատկերներ միայն տեսաւ այնտեղ. մէկը Յիսուս Քրիստոսի պատկերը, միւսը սուրբ Գրիգոր Լուսաւորչի պատկերը, երկուսն էլ հասարակ սեւ շրջանակի մէջ դրուած։

Ժողովուրդը նստած երկայն նստարանների վրայ այր եւ կին միասին, իւրաքանչիւրը ունէր ձեռքին մի փոքրիկ երգարան։ Քահանան կանգնած ամբիոնի վրայ, սուրբ գիրքը առջեւ դրած, քարոզ էր կարդում։ Նա իր հագուստով չէր զանազանվում հասարակ ժողովրդից։ Նրա քարոզը այնքան պարզ, այնքան հասկանալի էր, որ բոլորը հասկանում էր Վարդանը։ Ինչպէս մի վտակ, բղխած կենդանի եւ մաքուր աղբիւրից, Աստուծոյ խօսքը հոսում էր նրա բերանից։ Նա բացատրում էր սուրբ գրքի այն խօսքի իմաստը, թէ «Ճակատի քրտինքով պէտք է վաստակես քո հացը։» Վարդանը զարմանում էր քահանայի բացատրութիւնների վրայ։ Այդ խօսքի իմաստը

մինչեւ այնօր Վարդանին հասկացրել էին այն մտքով, որ դա մի անէծք էր, որով Աստուած դրոշմեց նախաստեղծ մարդու ճակատը, որ տարածվում էր նրա ամբողջ սերունդի վրայ։ Իսկ այժմ հասկանում էր, որ դա մի խրատ էր, որ խլում է մարդուց ծուլութիւնը եւ պահում է նրան անվաստակելի, աշխատասէր ինքնագործունէութեան մէջ։

Քարոզը վերջացաւ։ Բազմութեան միջից մի հասարակ գիւղացի, եւ քարոզի մտքի համեմատ, յանպատրաստից կարդաց մի աղօթք։ Նա խնդրում էր Աստուծուց, որ շնորհէ իրանց առողջութիւն, խելք եւ զօրութիւն, որ կարողանան գործել, աշխատել եւ պտղիւնաւորել Նրա ստեղծած երկիրը, որ բովանդակում է իր մէջ անսահման բարիքներ։ — «Այդ ի՞նչ աղօթք է, մտածում էր Վարդանը, — այդ ի՞նչ շահասէր են. դրանք հոգու համար ոչինչ չեն խնդրում. մի՞թէ դրանք գերեզմանի միւս կողմում ոչինչ սպասելիք չունեն եւ խնդրում են միայն այն, ինչ որ պահանջում է մարմինը, ինչ որ պահանջում է իրական կեանքը»։

Աղօթքը վերջացաւ։ Բոլոր բազմութիւնը՝ այր եւ կին, ծեր եւ մանուկ, միաձայն սկսեցին երգել մի երգ։ Նրա բովանդակութիւնը առած էր Սաղմոսի հետեւեալ տողերից. «Շատերը ասում էին, թէ ո՞վ ցոյց կը տայ մեզ Տէրի բարութիւնը։ Մեզ վրայ ծագեց Քո երեսի լոյսը, եւ մեր սրտերին ուրախութիւն շնորհեցիր։ Ցորենի, գինիի եւ ձէթի պտուղների առատութիւնով լեցրիր մեզ»։

— «Դարձեալ նոյն նիւթական նպատակը... մտածում էր Վարդանը, — դարձեալ հոգեկան ոչինչ չը կայ... Մշակ մարդը երգում է երկրի առատութիւնները, որ մշակել էր իր ձեռքով, որ շնորհել էր նրան Աս-

տուած։ Զարմանալի է, ինչպէս այդ մարդիկը յարմարացրել են կրօնի վերացականութիւնը իրական կենցաղավարութեան պահանջների եւ պայմանների հետ»...

Բայց ի՞նչ գեղեցիկ երգ էր այդ, որին ներդաշնակում էին երգեհոնի անոյշ հնչիւնները. որքան քաղցր, որքան սքանչելի եղանակով թռչում էր նա հալիւրաւոր մարդկանց բերանից։ Վարդանին այնպէս էր թուում, թէ մարդերի ձայնը, միացած անթիւ սերովբէների մեղեդիների հետ, վերամբառնում էր դէպի Յաւիտենականի աթոռը։ Նա իր կեանքում առաջին անգամն էր լսում մի այսպիսի սրբազան երաժշտութիւն։

Ժամերգութիւնը վերջացաւ։ Ժողովուրդը սկսեց դուրս գալ եկեղեցուց։ Այժմ նոյն ամբիոնի վրայ, որտեղից քահանան քարոզ էր կարդում, կանգնեց վարժապետը, եւ նոյն նստարանների վրայ, ուր ծնողները երգում էին, աղօթում էին, այժմ շարուեցան նրանց զաւակները։ Աղջիկ եւ տղայ, խառն միմեանց հետ սկսեցին լսել վարժապետի դասախօսութիւնը։ — «Մի՞թէ այդ դպրոց է եղել, մտածում էր Վարդանը, — մի՞թէ եկեղեցին միացրել են դպրոցի հետ։ Ահա, այդ ի՞նչ խնայող մարդիկ են, որ չեն կամեցել դպրոցի համար առանձին շէնք կառուցանել։ Այստեղ եւս դպրեալ նիւթականութիւն»։

Բայց վարժապետի դէմքը բաւական ծանօթ էր երեւում Վարդանին։ Մի՞թէ դա տէր Մարուքը չէր։ Երեսի գծագրութիւնը, հասակը եւ մինչեւ անգամ ձայնը նրան շատ նման էին։ Իսկապէս նա էր, թէեւ քահանայ, բայց աշխարհականի հագուստով։ Վարդանը դժուարանում էր իր աչքերին հաւատալ։ Մի՞թէ դա այն մարդն էր, որ այնքան թշնամի էր դպրոցի, որ այնքան հոգսեր եւ ցաւեր պատճառեց Պ. Սալմանին, իսկ այժմ ինքը կառավարում էր մի կանոնաւոր դպրոց։ Մի՞թէ դա նոյն քահանան էր, որ եկեղեցու խորհուրդները փողով էր վաճառում եւ անդադար մտածում էր իր «ապառիկների» վրայ։ Այդ երկբայութիւնները այն սաստիճան պաշարեցին Վարդանին, որ նա չը կարողացաւ զսպել իր հետաքրքրութիւնը, եւ մօտենալով, հարցրեց.

— Տէր հայր, դուք ի՞նչ արեցիք ձեր ապառիկների հետ։

Քահանան յիմարի տեղ դնելով անծանօթ երիտասարդին, խիստ սուր կերպով նայեց նրա երեսին եւ ոչինչ չը պատասխանեց, միայն հասկացրուց թէ շուտով զանգակը կը տան եւ իր դասը վերջացած կը լինի։ Նրա դասը բնական գիտութիւններից էր, այդ նոյնպէս ոչ սակաւ զարմացրուց Վարդանին։ Քահանան, աստուածաբան եւ մի եւ նոյն ժամանակ բնագէտ, — դա, իրաւ, որ զարմանալի էր։

Վարդանը չը սպասեց մինչեւ դասի վերջանալը եւ դուրս եկաւ եկեղեցուց, լաւ եւս է ասել՝ դպրոցի բակը։ Այստեղ նա ոչ մի գերեզման չը տեսաւ, որպէս սովորաբար լինում է հայոց եկեղեցիների բակերում։ Նա զարդարած էր հաղուագիւտ ծառերով եւ ծաղիկներով։ Երկար նա կանգնած նայում էր ճեմելիքների գեղեցկութեանը, մինչեւ գիւղացիներից մէկը տեսնելով, որ նա օտարական է, հրաւիրեց իր տունը նախաճաշիկ անելու։

Նրա տունը այն կոկիկ տներից մէկն էր, որ իր փոքրիկ ծաւալի մէջ բովանդակում է ընդարձակ բաւականութիւններ։ Նա ամբողջապէս կորած էր հովանաւոր ծառերի մէջ։ Կային մի քանի սենեակներ, որ յարմարացրած էին կեանքի զանազան պահանջներին, բոլորը

պարզ, մաքուր, եւ իրանց պատշաճաւոր կարասիներով զարդարուած։ Տան տիրոջ մանկահասակ աղջիկը, շրթունքի միջից մի երգ մեղմիկ կերպով եղանակելով, ուրախ-ուրախ դիմաւորեց հօրը։ Կարծես, տխրութիւնը, վիշտը, կեանքի դառնութիւնները երբէք չէին շօշափել այդ գեղեցիկ արարածի սիրտը։ Նա, հայ կնիկներին յատուկ ամօթխածութեամբ, չը վախեցաւ, չը թաղնուեցաւ անծանօթ հիւրից, այլ շնորհալի կերպով խօսում էր Վարդանի հետ, ծիծաղում էր, կարծես, վաղուց բարեկամ լինէր։ Բայց ոչքան նման էր Լալային։ Այդ զարմանալի նմանութիւնը մի այնպիսի հոգեզմայլութեամբ պաշարեց Վարդանին, որ ցանկանում էր գրկել նրան եւ ասել. "վերջապէս դուք քեզ„...

Նախաճաշիկը արդէն պատրաստ էր սեղանի վրայ։ Տանտիկինը լցրեց ահագին դաւաթներ սուրճով, թանձր սերի հետ, եւ դրեց հիւրի եւ իր ամուսնի առջեւ։ Իսկ մանկահասակ աղջիկը դրեց սեղանի վրայ այն առաւօտ ստացած լրագրի թերթը, եւ ինքնաբաւական ժպիտով ցոյց տուեց մի յօդուածի։ — Ա՜, քո յօդուածը արդէն դուրս է եկել, Լալա, խօսեց հայրը, ակնոցները ուղղելով, թերթը մօտեցնելով աչքերին։

— "Լալա„, գոչեց Վարդանը անկասկելի խռովութեան մէջ։

— "Այդ անունը, պատասխանեց տանուտէրը, խիստ յաճախ է կրկնվում մեր տոհմի մէջ„։

Վարդանը փոքր ինչ հանգստացաւ, բայց դարձեալ չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ նա Լալան չէր։ Եթէ նա Լալան չէր, անտարակոյս, նրա յարութիւն առած ուրուականը պէտք է լինէր։ Ի հարկէ, յարութիւնից յետոյ մարդիկ փոխվում են, ուրիշ տեսակ կրթութիւն եւ ուրիշ տեսակ բնաւորութիւն են ստանում, պահպանելով իրանց իսկական պատկերը։

Բացի գեղեցիկ օրիորդից Վարդանին գրաւում էր այս տան խաղաղ եւ բախտաւոր կեցութիւնը։ Նա սկզբում կարծում էր, թէ այդ մարդիկը գիշեր եւ ցերեկ հանգըստութիւն չունին, աշխատում են եւ միշտ աշխատում են։ Իսկ այժմ տեսնում էր, որ դրանք էլ ունեն իրանց համեստ եւ լի բաւականութիւններով ապրուստը։

— "Գիւղացու երջանկութիւնը, ասաց տանուտէրը, — չէ կայանում այնքան ծանր եւ անդուլ աշխատութիւնների մէջ, որքան գործի գիտենալու եւ նրան հեշտացնելու հնարների մէջ։ Բնութեան մէջ կան շատ ուժեր, որոնց պարգեւել է Աստուած մեզ օգնելու համար, միայն պէտք է ծանօթանալ նրանց հետ, եւ գիտենալ, թէ ի՞նչ միջոցով կարելի է նրանցից օգուտ քաղել„։

— "Այդ իրաւ է, պատասխանեց Վարդանը, — բայց եթէ քրդերը թողնէին գիւղացու վաստակը իր ձեռքում մնար, իմ կարծիքով, նա միշտ բախտաւոր կը լինէր„։

— "Ի՞նչ քրդեր„, հարցրեց տանուտէրը զարմանալով։

— "Այն քրդերը, որ ամեն օր ձեզ կողոպտում է„։

— "Հա՛, քրդերը... պատասխանեց տան տէրը, կարծես դժուարութեամբ յիշելով վաղուց մոռացուած մի ցեղի անուն։ — Մեր երկրի դարերի պատմութեան մէջ կարդացել եմ շատ բան քրդերի մասին, ճշմարիտ է, նրանք կողոպտում էին եւ մինչեւ անգամ կոտորում էին մեր պապերին։ Իսկ այժմ ո՞ւր են այդ բարբարոսները։ Նրանք սպառուեցան, այլ եւս չը կան։ Մի այսպիսի ցեղ չէր կարող դիմանալ քաղաքակրթութեան լոյսին, եւ այս պատճառով լուծուեցաւ, այլասերուեցաւ։ Դեռ անցեալ

դարու սկզբներում նրանք ընդունեցին մեր կրօնը, սկսեցին սովորել մեր դպրոցներում եւ հետզհետէ խառնուելով մեզ հետ, անհետացան։

Վարդանը, լսելով այդ խօսքերը, չէր հաւատում իր ականջներին, նրան երազ էր թուում բոլորը, թէեւ իսկապէս երազի մէջ էր լսում եւ երազի մէջ էր տեսնում։ Տան տէրը շարունակեց.

— Մեր տոհմագրութեան գրքի մէջ գտնում ենք շատ տողեր քրդերի մասին, որ կարծես, արիւնով գրուած լինէին։ Մեր նախապապը, որից սկսուեցաւ մեր տոհմը յայտնի լինել, կոչվում էր Ղաչօ. նա հէնց այս գիւղի տանուտէրն էր. քրդերը նրա ամբողջ ընտանիքը կոտորեցին. ինքը երկու որդիների հետ մեռաւ բանտի մէջ։ Նրա մեծ որդի Հայրապետից մնաց մի արու զաւակ միայն„...

— "Ո՞ր ալաշկերտցոց գաղթականութեան ժամանակ իր մօր՝ Սառայի հետ տարուեցաւ Վաղարշապատ„, ընդհատեց Վարդանը։

— "Այո՛, — այդ արու զաւակից յառաջ եկաւ մեր տոհմը„։

— "Եւ նրա անունը Յովակիմ էր. մի քոյր ունէր, որ կոչվում էր Նաղու. վերջինս մեռաւ իր մօր հետ, եւ որբ մնացած Յովակիմին մի բժիշկ վերցրեց եւ մեծացրուց իր տան մէջ„։

— "Դրանք ո՞ր տեղ ես կարդացել„, հարցրեց տան տէրը, զարմանալով, որ իր տոհմի պատմութիւնը մանրամասն կերպով յայտնի էր հիւրին։

— "Ես չեմ կարդացել, այլ իմ աչքով եմ տեսել, պատասխանեց Վարդանը։ — Այդ բոլորը կատարուեցաւ այն ժամանակ, երբ քրդերը ոչնչացրին այդ գիւղը, ոչնչացրին եւ ամբողջ Ալաշկերտի գաւառը„։

— "Իսկ այդ մօտ երկու հարիւր տարուայ անցք է։ Իսկ դուք ինձ բաւական երիտասարդ էք երեւում, դուք Մաթուսաղայի տարիքը չունէ՞ք, որ կարողանայիք ձեր աչքով տեսնել„, պատասխանեց տան տէրը բարեսիրտ ժպիտով։

Վարդանը ոչինչ չը գտաւ պատասխանելու, նրան էլ այնպէս էր թուում, որ այդ անցքերի վրայից դարեր էին սահել։

Սենեակի լուսամուտներից, ուր նստած էր Վարդանը, շրջապատած իր հիւրընկալի ուրախ ընտանիքով, երեւում էր կանաչաղարդ հովիտը, որ վերջանում էր գեղեցիկ լեռներով։ Լեռները պատած էին խիտ անտառներով, եւ հսկայ ծառերը միախառնուելով երկնքի պարզ կապուտակութեան հետ, ստեղծում էին մի սքանչելի պատկեր։ Վաղարդեան արեգակը թափել էր այնտեղ իր ոսկեղէն ճառագայթները, եւ նրա լուսով, արծաթէ օձերի նման, պտոյտուելով եւ շողշողալով, վազում էին զանազան գետերը, եւ ճեղքելով անց էին կենում հովիտի հարթութեան միջից։ Վարդանը չէր կարողանում աչքերը հեռացնել այդ հրաշալի տեսարանից։ Վայրենի եւ անմշակ բնութիւնը մարդու աշխատասէր ձեռքի տակ այնպիսի գեղեցիկ կերպարանք էր ստացել, որպէս կտաւի կտորը պատկերահանի հրաշակերտ վրձինի տակ։

— "Դուք խօսում էիք քրդերի եւ թուրքերի տխուր ժամանակներից, շարունակեց տան տէրը մի առանձին ուրախութեամբ։ — բայց այն ժամանակներից յետոյ շատ բաներ փոխուեցան։ Տեսնում էք այդ սքանչելի լեռները. մի եւ կէս դար առաջ դրանք բոլորովին մերկ էին, մի փոքրիկ թուփ անգամ չը կար այդ սարերի վրայ։ Այն ժամանակ բարբարոսների ձեռքը, որպէս անգթաբար կոտո-

բում էր մարդերին, այնպէս էլ անխնայ կոտորում էր ծառերին։ Բոլորը սպառուած էր. ժողովուրդը վառելիքի համար գործ էր ածում ալթարը, իսկ շինուածքի համար փայտ չը կար. այդ պատճառով ստիպուած էին բնակուել գետնափոր խորշերի մէջ։ Բայց երբ տիրեցին խաղաղութեան ժամանակները, այնուհետեւ սուերակ գիւղերը լցուեցան բնակիչների բազմութեամբ, իսկ մեր լեռները ծածկուեցան անտառներով։ Այդ բոլորը անկուել է գիւղացիների աշխատասէր ձեռքով։ Տեսնում էք այդ կանաչազարդ հովիտը, առաջ նա մի ցամաք եւ անջուր անապատ էր, մի փոքրիկ գետ միայն ունէր, որը բոլորովին ցամաքում էր ամառնային ամիսներից։ Իսկ այն օրից, երբ անտառները աճեցին, մեր հովիտը սաացաւ ջրի առատութիւն։ Այժմ նա մեր գաւառի պտղաբեր եւ ամենապտղաւանդ երկրներից մէկն է։ Այո, շատ բաներ փոխուեցան... Առաջ այստեղ ճանապարհներ անգամ չը կային, իսկ այժմ ամեն տեղ կը տեսնէք հայելու նման հարթ ճանապարհներ, որ միացնում են մեր երկրի բոլոր քաղաքները. եւ այդ ճանապարհների վրայ պանում են կառքեր, որ տարվում են ոչ թէ անասունների ուժով, այլ շոգու զօրութեամբ։ Մեր երկրի արդիւնաբերութիւնները մենք վաճառահանում ենք հալարաւոր մղոններ հեռու եւ փոխարէնը ստանում ենք՝ ինչ որ մեզ պէտք է»։

Վարդանը զարմացած լսում էր այդ բոլորը, բայց երբ նրա աչքը ընկաւ գեղեցիկ Հալայի երեսին, յայտնի չէ թէ ինչու նրա խելքին եկաւ հարցնել, թէ ո՞ւտեղ է սովորել օրիորդը։

— «Մի շաբաթ հազիւ կը լինի, որ աւարտեց Նոր-Վաղարշակերտի ճեմարանում, իսկ այժմ պատրաստվում է համալսարան մտնել բժշկութիւն սովորելու։ Առողջութիւնը թոյլ է, ես կը ցանկանայի, որ մի քանի ամիս անցկացնէր գիւղում, բայց նրան ոչինչով չէս կարող համոզել»։

— «Իսկ քանի՞ որդի ունիք դուք»։

— «Մեր տոհմը միշտ բազմածին է եղել, մեր նախապապ տանուտէր Յաչօի ընտանիքը բաղկանում էր աւելի քան յիսուն հոգուց, իսկ ես միայն հինգ զաւակներ ունեմ։ Լալան միակ աղջիկ զաւակս է, մնացած չորսը տղամարդիկ են»։

— «Ինչո՞վ են պարապվում»։

— «Մէկը անտառապահ է մի եւ նոյն անտառների, որ տեսնում էք, մէկը պրոֆեսոր է Կարինի համալսարանում, երրորդը գնդապետ է Վանի զօրաբաժնի մէջ, իսկ չորրորդը դեռ սովորում է Նոր-Բազրեւանդի գիւղատնտեսական ուսումնարանում»։

Վարդանին անծանօթ երեւեցաւ քաղաքի անունը եւ հարցրեց.

— «Այս կողմերում ես չեմ յիշում մի այս անունով քաղաք»։

— «Դա հին Բայազէդն է, այժմ այս անունն է կրում։ Մեր քաղաքներից, գիւղերից եւ գաւառներից շատերը փոխել են իրանց անունները, մի քանիսը իրանց վաղեմի պատմական անուններն են կրում, իսկ մի քանիսը նոր անուններ են ստացել»։

Տան տէրը կրկին ձեռքն առաց լրագրի թերթը եւ կարդում էր մի յօդուած, որը, որպէս երեւում էր, սաստիկ անհանգստացնում էր նրան։ Վարդանը հետաքրքրութիւնից շարժուած հարցրեց.

— «Ի՞նչ նորութիւն կայ»։

— «Առանձին ոչինչ... Էգուց քաղաքում պիտի գումարուի երեսփոխանական ընդհանուր ժողով... մի քանի վճռելի հարցեր պէտք է քննութեան ենթարկուեն... չը գիտեմ, ինչո՞վ կը վերջանայ... կուսակցութիւնները սաստիկ յուզուած են երեւում»...

— «Դո՞ւք եւս կը լինէք այնտեղ»:

— «Չեմ կարող չը լինել»:

Խօսակցութիւնից երեւաց, որ Վարդանի հիւրընկալը, այդ հովիտի գիւղացիներից ընտրուած, երեսփոխան էր:

Նախաճաշիկը արդէն վերջացել էր. Վարդանը վերկացաւ, եւ շնորհակալութիւն յայտնելով, կամենում էր հեռանալ:

— «Եթէ դուք կը ցանկանայիք տեսնել մեր գիւղում մի քանի հիմնարկութիւններ, ասաց նրան տան տէրը, — ես սիրով յանձն կ'առնէի առաջնորդել ձեզ»:

— «Շնորհակալ եմ, պարո՛ն», պատասխանեց Վարդանը:

— «Եթէ միւս անգամ կը պատահի ձեզ անցնել մեր գիւղից, խօսեց տանտիկինը, — մեր դռները միշտ բաց կը լինեն ձեր առջեւ»:

— «Շնորհակալ եմ, տիկի՛ն», ասաց Վարդանը գլուխ տալով:

— «Եւ մեր տունը չի՛ ձանձրացնի՛ ձեզ», սուեալյրուց տանտիրոջ գեղեցիկ աղջիկը անկեղծ ժպիտով:

— «Շնորհակալ եմ, օրիորդ», ասաց Վարդանը, աւելի խոնարհ կերպով գլուխ տալով:

Վարդանը դուրս գալուց յետոյ, այժմ նոր սկսեց զգալ իր նեղուած դրութիւնը գիւղական ընտանիքի մէջ: Նա գտնում էր իրան որպէս մի բոլորովին վայրենի, որը աւելի քաղաքակրթուած հասարակութեան մէջ տանջվում է, թէ ինչո՞ւ ինքը անտաշ եւ անկիրթ մնաց, թէ ինչո՞ւ ինքը չէր կարող այնպէս խօսել, այնպէս դատել եւ այնպէս պահել իրան, որպէս միւսները: Այդ ինչ հրաշք էր: Ցանուտէր Խաչօի տոհմը, անցնելով դարերի բովի միջից, զտուել, մաքրուել եւ կերպարանափոխուել էր, ստեղծելով մի նոր եւ ազնիւ սերունդ:

Վարդան եւ իր հիւրընկալը միասին գնում էին գիւղի փողոցով: Նրանց մօտից անցնում էին մաքուր եւ պարզ կերպով հագնուած շինական կնիկները, իւրաքանչիւրը ձեռքին հիւսելով մի բան, եւ նրանց տղամարդիկը գործաւորի հագուստով: Ոչ մէկը անգործ չէր, ամեն մարդ իր զբաղմունքն ունէր: Զարմանում էր Վարդանը տեսնելով, թէ որքան փոխուել էր կեանքը, թէ որքան վայելուչ կերպարանք էր ստացել նա: Առաջուայ գռեհկական կոշտութիւնները այլ եւս չէին երեւում, ամեն տեղ շնչում էր կրթութեան ոգին իր ջերմ, կենագործող զօրութեամբ: Մի բան որ մնացել էր անփոփոխ, դա էր հայկական խօսքը — լեզուն: Բայց որքան մշակուել, որքան կոկուել էր այդ լեզուն, եւ որքան գեղեցիկ դարձուածներով այժմ հնչում էր նա հայ մարդու բերանում:

Վարդանը իր հիւրընկալի հետ այժմ գտնվում էին գիւղից դրսում: Դէպի ամեն կողմը, ուր եւ նայում էր Վարդանը, երեւում էին հարուստ ագարակներ, գեղեցիկ այգիներ, լաւ մշակուած դաշտեր եւ ճոխ արօտամարգեր:

Նրանք անցան մի գործարանի մօտից, որտեղ տախտակներ էին սղոցում: Այստեղ գործում էին գլխաւորապէս մեքենաներ եւ շոգին: Սղոցարանը մատակարարում էր բոլոր գիւղերի եւ մերձակայ քաղաքի համար տախտակներ զանազան ձեւերով եւ զանազան մեծութեամբ:

— «Այդ ո՞ւմն է պատկանում», հարցրեց Վարդանը։

— «Մեր գիւղում, ինչ գործարան որ տեսնելու լինէք, առանձին մարդու սեպհականութիւն չէ, պատասխանեց նրա հիւրընկալը, — գործարանները այստեղ պատկանում են գիւղական համայնքին, ամէն մի գիւղացի մասն ունի նրանց մէջ։ Դերանները ստացվում են մերձակայ անտառներից, որոնք նոյնպէս գիւղացիների սեպհականութիւն են»։

Նրանք անցան սղոցարանից։

— «Ահա այդ ահագին շինուածքը, ցոյց տուեց Վարդանին հիւրընկալը, — դա պանրագործութեան գործարան է. այստեղ պատրաստվում է մեր գաւառի ամենաընտիր պանիրը. դա նոյնպէս պատկանում է գիւղական համայնքին։ Իւրաքանչիւր գիւղացի ներկայացնում է այստեղ իր անասուններից ստացած կաթը, եւ ընդհանուր արդիւնքի բաժանման ժամանակ, նրա համեմատ ստանում է կամ պանիր կամ արծաթ»։

Նրանք գանվում էին այժմ դաշտում։ Հասունացած հունձքը արտերից քաղվում էր, բայց քաղվում էր ոչ թէ գիւղացու մանգաղով կամ գերանդիով, — այստեղ նոյնպէս գործում էր մեքենան, որ մենակ հարիւրաւոր մշակների գործ էր կատարում։ Ահա ի՞նչ էր նշանակում հեշտացնել աշխատութիւնը. — այժմ հասկանում էր Վարդանը։

Նրանք անցան մի ահագին շինութեան մօտից, դա աղօրիք էր։ Այստեղ նոյնպէս հեշտացրած էր աշխատանքը եւ ջրի փոխարէն գործում էր շոգին։ Բաղմաթիւ գիւղերի ցորեանը այս հիմնարկութեան մէջ աղացվում էր, եւ մաքուր, ձիւնի պէս սպիտակ ալիւրը վաճառահանվում էր դէպի օտար երկրներ։ Դա նոյնպէս պատկանում էր գիւղական համայնքին։

Բայց մի բան, որ աւելի զարմացնում էր Վարդանին, այդ այն էր, որ բոլոր գիւղացի բանուորները որտեղ եւ հանդիպում էին նրան, աչքի էին ընկնում իրանց համարձակութեամբ, անձնավստահութեամբ եւ այրական անվեհերութեամբ։ Կարծես, դրանք սնուել եւ մեծացել էին կատարեալ ազատութեան մէջ, կարծես, դրանք երբէք թուրքի ապտակը չէին կերել, կամ քրդի նիզակը մի անգամ գոնէ չէր վախեցրել նրանց։ Նա տեսնում էր, որ այդ աշխատող բազմութիւնը ընդունակ է հարկը պահանջած ժամանակ, թողնել բահը եւ արօրը, եւ նրանց փոխարէն զէնք կրել, եւ նոյնպէս հմուտ, նոյնպէս յաջողակ կերպով գործ ածել։

— «Պատերազմի ժամանակ այդ մարդիկը զինուոր են դառնում, ասաց Վարդանի հիւրընկալը, — աշխատանքը մեծ մասամբ դադարում է, եւ այս պատճառով պատերազմը միշտ կորստաբեր հետեւանքներ է ունենում մեր երկրի համար, թէեւ նա ունենում է եւ իր առանձին օգուտները»...

Անցնելով դաշտերից, նրանք դարձեալ մօտեցան գիւղին։ Նրանց առջեւ դրած էր մի նոր հիմնարկութիւն։ Դա աւելի նման էր այն շէնքերին, որ կառուցուած են լինում օրինակելի ագարակների մէջ։

— «Այդ մեր գիւղատնտեսական դպրոցն է, ասաց Վարդանի հիւրընկալը։ — Այն, որ տեսաք առաւօտեան, տարրական ուսումնարան էր»։

Այս ի՞նչ դպրոց էր, այսպիսի դպրոց Վարդանը երբէք չէր տեսել, թէեւ ինքն էլ մի ժամանակ վարդապետ էր եղել։ Նա բովանդակում էր իր մէջ գիւղային

տնտեսութեան վերաբերեալ բոլոր պարագայքը։ Նրա ահագին շինութեան առջեւ տարածուած էր ընդարձակ ագարակ զանազան բաժանմունքներով, որ միակվում էին աշակերտների եւ աշակերտուհիների ձեռքով։ Աշխարհի համարեա բոլոր բոյսերի, տունկերի եւ ծաղիկների տեսակից կային այնտեղ զանազան օրինակներ։ Այստեղ գիրքը եւ մեռած տառը աւելի չէին զբաղեցնում ուսանողներին։ Ամեն ինչ սովորում էին նրանք բնութեան հրաշալի գրքի մէջ։ Այստեղ որոշեալ ժամերում ուսանողները պարապվում էին մարմնամարզութեամբ եւ զէնք գործ ածելու վարժութիւններով։ "Ահա այսպիսի դպրոցը կը պատրաստէ լաւ երկրագործ եւ լաւ զինուոր", մտածում էր Վարդանը։

Վարդանը շնորհակալութիւն յայտնելով իր հիւրընկալին, բաժանուեցաւ նրանից։ Այժմ ո՞ւր պէտք էր գնալ, ինքն էլ չը գիտէր։ Նա տեսաւ հանրակառքի նման մի բան, որի երկու կողմերի վրայ շարուած էին մարդիկ։ Ինքն էլ նստեց, երբ խմացաւ, որ տանում է դէպի երկաթուղու կայարանը։

Երկաթուղու կայարանում նա գտաւ մեծ բազմութիւն, որ սպասում էին գնացքին։ Ցանկարծ նրա ականջին դիպաւ մի ծանօթ ձայն...

— "Վարդան"...

Վարդանը յետ նայեց, նրա առջեւ կանգնած էր Պ. Սալմանը։ Երկու վաղեմի բարեկամները դրկախառնուեցան։

— "Ահա այդպէս, բարեկամ, խօսեց Պ. Սալմանը չը թողնելով Վարդանի աջը իր ձեռքից, — մենք դարձեալ տեսնվում ենք միմեանց հետ ուղիղ երկու հարիւր տարուց յետոյ... բաւական երկար ժամանակ է...

Դու դեռ նոյնն ես մնացել, Վարդան, դու ամենեւին չես փոխուել... Բայց այս երկու դարերի ընթացքում մեծ փոփոխութիւններ եղան մեր երկրում... Ցիշում ես, Վարդան, մի անգամ քեզ ասում էի, թէ Հայաստանը մարդկութեան տղայական հասակի օրօրոցն է եղել, նրա անմեղութեան ժամանակների դրախտն է եղել, — բայց մի օր կը դառնայ նրա այրական հասակի, նրա զարգացման ժամանակների դրախտը։ Այժմ բոլորը կատարուեցաւ։ Այժմ հայ մարդու ապրուստը խիստ ապահով, ուրախ եւ խաղաղ է հայրենի հողի վրայ։ Բայց եթէ գիտենայիր, թէ որքան աշխատեցինք մենք, մինչեւ նրան այս վիճակին կարողացանք հասցնել... շատ աշխատեցինք... այս երկու հարիւր տարուայ ընթացքում հաղարաւոր փորձանքների միջից անցանք... բազմաթիւ արեան եւ սուտ քրտինքի գնով գնեցինք մեր հանգստութիւնը"...

— "Հիմայ ո՞ւր ես գնում", հարցրեց Վարդանը։

— "Քաղաքը, այնտեղ երեսփոխանական ժողով պիտի դումարուի, ես պատգամաւոր եմ մեր գաւառի կողմից։ — Գնանք միասին, Վարդան, ես պիտի խօսեմ, մեր վիճաբանութիւնները գուցէ կը հեռաքրքրեն քեզ"։

Հնչեց գնացքի վերջին շվշվոցը։ Նրանք մտան վագոնի մէջ։ Գիշեր էր։ Առաւօտեան լոյսը չը բացուած, նրանք հասան քաղաքը։ Դեռ քնած էր գեղեցիկ, աղմկալի քաղաքը։ Փողոցներում երեւում էին միայն բանուորներ, որոնք շտապում էին զանազան ֆաբրիկաներում աշխատելու։

— "Նոյեան Աղաւնու" պանդոկը, հրամայեց Պ. Սալմանը կառապանին։

Կառքը սլանում էր ուղիղ եւ հարթ փողոցների միջով. երկու կողմից բարձրանում էին հոյակապ շինու-

թիւններ զանազան գոյներով։ Վարդանը կարծում էր, թէ պալատների միջով է անցկենում։ Պ. Սալմանը ցոյց էր տալի նրան նշանաւոր տները. — "Ահա այդ համալսարանն է„ — "ահա այդ գիտութիւնների ակադեմիան է„ — "դա հին թագաւորական պալատն է, որ այժմ ծառայում է որպէս մուզէում„ — "դա քաղաքի նշանաւոր թատրոններից մէկն է„ — "դա մի հիւանդանոց է„ — "դրանք այն հերոսների արձաններն են, որ նշանաւոր եղան վերջին յեղափոխութեան ժամանակ„ — "դա մի լրագրի խմբագրատունն է, ուր օրական 150.000 օրինակ է տպվում„ — "դա„...

— "Զինուորանոց չը կայ„, նրա խօսքը կտրեց Վարդանը։

— "Զը կայ, այստեղ ամէն քաղաքացի զինուոր է„։

— "Գեղեցիկ քաղաք... հրաշալի քաղաք„... բացականչեց Վարդանը խորին յափշտակութեան մէջ։

Կառքը կանգնեց "Նոյեան Աղաւնու„ հիւրանոցի առջեւ։ Պ. Սալմանը Վարդանի հետ մտան մի առանձին փոքրիկ սենեակ որ կից էր հասարակաց դահլիճին։ Այստեղ Թոմաս էֆէնդին Մէլիք-Մանասրի հետ սաստիկ վիճում էին։

— "Դա կատարեալ էշի մարտիրոսութիւն կը լինի„, ասում էր Թոմաս էֆէնդին։

— "Իմ կարծիքով, դա ամենաուղիղ ճանապարհն է, որ կը հասցնէ ցանկացած նպատակին„, պատասխանեց Մէլիք-Մանասրը տաքացած կերպով։

— "Այդ ճանապարհը մեզ շատ հեռու կը տանէ եւ ցանկացած նպատակին կը հասնենք գուցէ էշի զատկին„, ասում էր Թոմաս էֆէնդին ծիծաղելով։

— "Ահա Սալմանը, լսենք նրա կարծիքը„, ասացին նրանք, դադարեցնելով վիճաբանութիւնը։

Մեծ եղաւ նրանց զարմացքը, երբ տեսան Վարդանին, որը, կարծես, դեռնից դուրս եկաւ։

— "Դու ո՞րտեղից լոյս ընկար„, հարցրեց Թոմաս էֆէնդին իր յատուկ հեգնական ժպիտով։

— "Մի եւ նոյն երեւոյթը զարմացնում է եւ ինձ„, պատասխանեց Վարդանը նրա ձեռքը սեղմելով. — "ես քո խորտակուած դիակը գտայ Ալաշկերտի լեռների, ստորոտում եւ յետոյ Թաղեցի քրդերի գերեզմանատան մէջ, իսկ այժմ„...

— "Այժմ ես կրկին յարութիւն առայ„, պատասխանեց նա ծիծաղելով։ — Մի՞թէ դու չես հաւատում հոգեփոխութեան վարդապետութեանը։ Իմ Թշուառ հոգին անցաւ ամենաանմաքուր կենդանիների մարմնի միջից. — մի քանի տասնեակ տարիներ դայլի մարմնի մէջ կեղեքում էի, յափշտակում էի, ապրում էի որսերով... մի քանի տասնեակ տարիներ շան մարմնի մէջ հաչում էի, քծնվում էի եւ պատոյտ էի գալիս այն մարդիկների շուրջը, որոնք ինձ հաց էին տալիս... մի քանի տասնեակ տարիներ օձի մարմնի մէջ պրրվում էի գետնի վրայ եւ պատահած ժամանակ խայթում էի... մի քանի տասնեակ տարիներ էշի մարմնի մէջ զբում էի, ականջներիս այնքան քաշեցին, որ գլխումս խելք չը մնաց... վերջապէս իմ Թշուառ հոգին մտաւ առիւծի մարմնի մէջ, այստեղ բաւական մաքրուեցաւ եւ սրբուեցաւ նա։ — Այդ շրջանը կատարեց նա երկու հարիւր տարուայ ընթացքում։ Եգիպտոսի մումիաները հազարաւոր տարիներ մնում են պիրամիդների տակ, անհամբերութեամբ սպասելով հոգիների վերադարձին, բայց իմ հոգին աւելի շուտ կատարեց իր շրջանը„։

— "Եւ ես բախտ ունեցայ կրկին տեսնել կերպարանափոխուած Թոմաս էֆէնդուն", կտրեց Վարդանը նրա խօսքը:

— "Այո: Ձեր տեսած առաջուայ Թոմաս էֆէնդին իր դարու հարազատ զաւակն էր, բայց ժամանակները փոխեցին նրան: Այժմ նա ներկայ սերնդի լաւ ներկայացուցիչներից մէկն է: Բայց ներկայ սերունդը մեծ յառաջադիմութիւն է գործել, սիրելի Վարդան: Յիշում ես, Մէլիք-Մանսուրը մի ժամանակ "լաւ ասելիներ" էր կանչում, եւ թափառում էր Ալաշկերտի գիւղերում, բայց նա այժմ մի առանձին զօրաբաժնի գեներալ է":

Վարդանը զարմաւ գէպի Մէլիք-Մանսուրը եւ պատկառանքով սեղմեց նրա աջը:

— "Մենք ուշանում ենք, պարոններ, նիստը շուտով կը սկսուի", շտապեցնում էր Պ. Սալմանը:

— "Դա մեր կուսակցութեան՝ ազատամիտների պաշտպանն է, ասաց Թոմաս էֆէնդին շշնջալով Վարդանի ականջին, եւ ցոյց տալով Պ. Սալմանին վրայ: — Մի երեւելի ճառ է պատրաստել այսօրուայ ժողովի համար: Ախ, որքան լաւ խօսում է նա"...

— "Ինձ էլ տարէք, պարոններ, ես էլ ցանկանում եմ լսել"... դոչեց Վարդանը ուրախութեամբ:

— "Գնանք"... լսելի եղաւ նրա մօտ մի օտար ձայն:

Վարդանը աչքերը բաց արաւ, զգաց, որ իր տեսածը բոլորը երազ էր: Նրա շուրջը դեռ պատում էր դիշերային խաւարը, եւ նա գտնվում էր անբախտ Հալայի հողագամբարանի մօտ: Բայց այն ինչ օտարոտի ձայն էր, որ զարթեցրուց նրան. այն ո՞վ էր, որ ասաց "գնանք":

Ցանկարծ չորս զօրեղ ձեռքեր յափշտակեցին նրան եւ ամեն ինչ թաղնուեցաւ գիշերային մթութեան մէջ...